891.981

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԱՄԱԿԱՆԻ

ԳՐԵՑ

ՎԻՐՈՑ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

Ա 55175

ՉԱՄԻՒՌԵՆԻՍ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

1872

ԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀՈՒՇԱՄԱՏԵՆԱԼ ԳՐԱԴԱՐԱՆԻ
Տիգրան Գևորգյանի
Գահիրե. 7-5-1970

ԳԱՐԵՆԻՆ

Ընդարձակ դրամագլուխ և սաստիկ սիրելի Հայկ բան մի՞ սատակն սատակն՝ դեռ ոչ մի
կամ ոչ ոչինչ մի՝ մի սոպան ուրտ քիսան ներ ի քեզ՝ Հայկանան նամանանի սանտ ուսիր
մինասան քոդ քիսի՝ որ գանանգան լրտոգիքներ բան՝ Դոռանի, Մենջուի, Ինքի-
նանի և այլ քիս քիս բան մի՞ ցեր ու ցան ի գանան քեր՝ մի ի Հասարդի մի՞ սանիա-
գիր և Հրատարականի Հարդ ոգան դեռ քանի մի բարեկամաներ։ Ընդդ՝ այս
բարեկամանդ ինդիրը կատարեր Կիլիանի՝ քանի մ՝ անանդ նամանիներ
ոչ սահմաներ։ ոչ այնչափ Հանդանի քեր գնատարբ քիսն մի գոհ լինե-
բան։ արդեսի անանդ նարատանի պատասխաներ բան Հանդար։

Եր այդ ոգան՝ արդեսի ոչ այս նամանիներ՝ որ 1864ին ամսան գրան սանեն,
քեր գրեր կամ կամ պատանանի ապրել ի մի մի չանեն։ Եղբարս ի և իրանդ
մեռանդ սատան մ՝ սանանանի յարանդ բաներ են։ Հանան ապրել ս յարան քիսն
սանդան։ դեռ ս ի չանեն։ սանդան գարանդ Աշխարհաբան քիսն մ՝ նրանան
ոգանի Հանեն Հանան բրբեր լինեն ընդարձակ։ այս է՝ քեզ ինչանդ քատանան
նեն մի՞ քիս՝ քիս ցան ի և գանդանաներ։ քիս գատն խարհրդանան քիսներ
որ ինդաներ են ի ոգի նամանանանով ապրեն վիճանի վրայ։ մի և նոյն
ցան ի բան ու մնատան քիսներ ոչ սար և նրանան ի նրանի։ դ՝ բարդդ ոգատար
սատանդ ինդանդ սարդի բանան քեր։

Ես ասի այս նամանանանի ապ՝ ոչի նեղատանանի՝ չէ՞ քեզ իրր հեն ոչ նոր
կամ՝ բան և բանի՞՝ մնատան վրայում քեզ քեզ ի ոգ ինդանդ ոգանի նրանան
Հանարբ։

Հայդ հեն անանդ մ՝ ունի։ գրատն վրայ բատանան սատան լրատանան
մարդիաներ քատանի ինդանդ Հանարաներ՝ ապրեն ոգանարբ բա-
սով՝ միայն ոգանդ փատանի և սատանանաներ վրայ նանդ և նը
սատանդ ի։ Ընդամ Հանարանան մարդիաներ հեն անանդ քեն Հեռ
քատանդ իրան։ սատանդ գրատանան մեջ մի քատանան ներ բանանի ի։

վատ գի հինին և նորին մէջ միտ մը կայ, բայց նոր անցեալ մը կազմելու միջոցներն ևս ապարդիւն մնացին և մեր ապագան գրեթէ միմիայն տարիներն հատուցին։ Ինչ է ասոր պատճառն. երկու ծայրայեղ դրութիւն. առաջինն՝ այսինքն հնապաշտներու նոր հայն՝ ինչպէս որ է՝ հին Հայաստանի մէջ ամբարձակել կամենան, երկրորդն՝ այսինքն նորապաշտներն՝ ազգն իր հին անցեալէն գլխովին կտրել և նոր աշխարհի մը մէջ բնակիցներու երան, ուստի ծայրամ առաւ մեր ազգային ոգի տարաամ, երերուն և անշէն միտքն և մեզ տարաս Պիւլիմէրի Լակատոս բաղաքն՝ ուր ամէն հին բան նորոգ շինելու համար կ'քանդեն, պատմութիւն, աւանդութիւն, գրականութիւն, տուն, եկեղեցի, և բնիկներն ատատանգական կ'թափուին՝ միմիայն որ ուղղաորուին, եթէ երբէք կարենան . . . :

Եթէ կայան մը կայ մեզի համար՝ բան իսկ ան է, նորը հիմնելն վերայ պատուաստել, նախ ներկայ մը հիմնել և ապա ապագայ մը յարգարել։ Ցաղովանց մ'իր անցեալէն զատելը՝ լիովին մահացնել է, մի միայն անցեալին մէջ պահելը՝ հաշմել։

Հայաստանցին մեզի իր մութ լեզուն, իր արատաւոր երեւան, իր հալումաշ սիրտը կ'ցուցնէ միայն մի, և նախ՝ ատոնք. կիներ, զատակն, եկեղեցին, հայը կ'փնտռէ. զորս 'ի վաղուց կորուսեր է, մենք անոր ցոյց կ'տանք մեր հայկական պաշտամունքը, մեր գարդերը, մեր սնափառութիւնները, և ասկից զատ՝ հոգեբանութիւնն, ատոգարաշխութիւնն, հանրավարութիւնն, հատարսկանութիւնն և չգիտեմ ինչ նիւթերու վրայ անոր դասեր կ'կարդանք։ Էհ, այն մարդն՝ որ ցանկութիւն սրէն ապատեր՝ ապրուն քրտինք կ'թափէ և աշխարհէս դուրս՝ անկիւն օր առաջ երթալ կ'փափաքի. ինչպէս կ'ուզես որ միմիայն հոգւոյ և երկնից վերատաստանն երթալ քեզի հետ՝ իրական ազէտիցը լուծը թոթուելով։

Յուսահատական է, սակայն հարկ է կրկնել որ տակաւին չենինք չէ թէ միայն ազգին յարմար ներկայ մը կազմելու տարրեր, այլ նոյն տարրերը գտնելու համար հատատուն սկզբունքներ և խորհուրդներ անգամ։ Ընդհանրական կարգադրութիւններ՝ ետ թէ ան կամ փատատուութիւն ցոյցեր են և չեն կրնար ազգային նիւն մարմնոր միրուանց։

Եւ ահա այս պատճառաւ այսպան տարիներէ վեր գայթ 'ի գայթ կը քալենք, ծանր հիւանդութիւններու ամբիչ գեղեր կ'գործածենք՝ ինքզինքիս խաբելու համար, և չէ թէ հիմնական գարմաններ, և մեր ազգային կենաց պէս խառն 'ի խառն է և մեր գրականութիւնն, ան-

նպատակ, առ օրին, բնաձին, ասէ՝ մեր թ այս նամակներին պէս։ Եթէ մարդկային կենդանն ամենց հասար հանելու է՞, ազգայինները կոչում մ՚ունին աշխարհիս մէջ որ ժամանակաց շրջանին մէջ կատարելու սահմանուած են եթէ շարժիլ գիտանան, եթէ մերինին պէս գրեթէ առեղծուած մը չգտանան։

Թող հայ օրէնսդիրներ օրէնքներ գրեն, բարեր գլուխներ թող վերէն թռին, թող Երևելի գիտուններ բնութիւնը վերլուծեն, նշանաւոր քաղաքագէտներ ազգութիւններ վարելու շատ նպատակներ լինին, բայց ասոնք ամենն ալ մեր ազգին հասար երկրորդական կարևորութիւն ունեցող բաներ կ՚դառնան՝ եթէ նոյն ազգին ներքը մտնելով վերջին ու անմիջական պիտույրը քննելով՝ պէտք եղած ազգու դարմաններ գործադրէս չնաստակարարութիւն։

Սակայն այս դարմաններն, այս միջոցներն ով պիտի խորհի և գանէ. ով պիտի շինէ վերջապէս նախ ազգին առնն։ Այս ասն բնիկը միանակ բնաստեղծ, ընկերին և Աստուծոյ հետ գործ չունի, այլև այն մարմնոյն հետ որ պետութիւն կ՚կոչուի։ Ընկերութեան մէջ մարդս բազմապատիկ է և բազմակիսի յարաբերութեանց տէր էակ մը։ Նախ՝ ասոր անոր հասատատուն գիրք մը, ապահովի գինքն որ իր ասն մէջ ազատ է՝ ըստ հաճոյս՝ աշխատութիւն մ՚ընտրելու և իր աշխատութեան պտուղը վայելելու, բայց անոր ասջև այն ամեն հաղորդակցութեան միջոցներն որ ընկերային ասոնցմանին մէջ զարգանալու հակամէտ և հետևապէս գանազան պիտույից ենթակայ մարդուն անհրաժեշտ են, բուն անոր որ ստոր ասք մ՚իր ապրելն ասնակոխ չպիտի լինի, յարգասակիր ձեռք մը իր քրտանց արդասիքը չպիտի թալէ, փարելով հասկցուր անոր որ մարդս և իր կարողութեանց արտադրած բաները նոր իրական լինելով՝ անոնց գէմ՝ շարժուղն արդարութեան արով պիտի պատժուի, մի կ խստրով ապահովցուր գինքն որ իր աշխատութեան, պաշտպանման, ամեն օրինաւոր շարժման մէջ ազատութեան և օրինաց ասջև հաստատութիւն վայելելու ասմանուած է, և անմիջապէս այս Ն-Ղ-Ն-Ն երաշխաւորութեանց հետևանքը պիտի լինի բարբարութիւն, որուն կ՚յաջորդեն մասային անդորրութիւն և հետևապէս միտք և սիրտ մշակելու դիւրութիւններ։

Ահա այն ասնն ասն այն մարդն, այս է Հայաստանի բնիկն, և անոր բարոյական ասն հետ մասայինն ալ զարգարէ՝ միշտ իր վիճակին և օգուտն հանդամանաց միտ դնելով։ Ուստեղ այս նախնական պայմանները մեր շինելիք շէնքն ասպի վրայ հիմ պիտի ունենան . . . .

Զմիւռնիա, 3 յունուար 1872։ Ա.

ՀԱՅԿԱԿԱՆ

ԾԱՄԱԿԱՆԻ

Ա.

Կ. Պոլիս, 9 Դեկտ. 1867.

Ազնիւ Տ-ղէ,

Իրաւունք ունիս. ես անգամ դժգոհ եմ լուութենէս. բայց ի՞նչ ընեմ, խոստմանս ակամայ անհաւատարիմ կ'գտնուիմ, ազգային լրեր քեզի հաղորդելու անկարևորութիւնն և դժուարութիւնը կ'զգամ։ Ահա քեզ Մ-ի, Վ-ի, Ժ-ն-ի, Մ-ի, Կ-ի, Մ-ն, Ա-ը-ը, և այլն, որոնք անդադար ազգային լրեր կ'հրատարակեն և եթէ չգտնեն, կ'ստեղծեն։ Մօտ օրերս ալ հայերէն պաշտօնական օրագիր մը պիտի լոյս տեսնէ, կ'ըսեն։ Ուստի երբ այսպիսի հմուտ, փորձառու և հին գրիչներ կ'խօսին՝ ալ ինձ խօսք չմնար, թէև դու, բարի պատուդ, կ'պնդես թէ մարդս ազատ է իր կարծիքը՝ հիմնաւոր կամ անհիմն՝ յայտնել, և Ժիրարտէնի Ի-ն-ի մ-ն-ն անուն գիրքն առջևս կ'նետես։

Տէգարդ ըսաւ. կ'մտածեմ, ուրեմն կամ։ Ժիրարտէն իրր եզրակացութիւն, կ'ըսէ. կ'մտածեմ, ուրեմն իրաւունք, պարտ է մտածել։ Բայց արի տես որ նոյն գիրքն իմ լուութեան դրութիւնս կ'հաստատէ, կարծեաց ազատութիւնն անօրէն, անստահման կ'ուզէ։ Մթթէ ունի՞ս այս ազատութիւնը։ Սուտն իրաւը, պարտաւն և գրպարտութիւնը,

մինչև անդամ Ճշմարտութիւնն անպատկառ և անտանձ գրիչը, պէտք է որ ներելի լինի, կ'ըսէ։ Մինչ ունիս այս թոյլատուութիւնն։ Եթէ ունիս՝ տրեմն Ծ–ՂԷԳ վերջին դատարման պատճառն ինչ է։ Եթէ չունիս՝ խորտակէ գրիչդ և ինձի պէս լուռ կաց, որպէս զի մտածման իրաւանց դէմ չդործես։ Վասն զի ինչ օգուտ ունի տրիչի համար մտածել և այն մտածութիւնն ինչ որ է, բացատրելու արտօնութիւն չունենալ։ Անին Ճերմակ կամ անոր մօտ բան մը, Ճերմակին սև կամ անոր մօտ բան մը բսելէն լուելն աւելի լաւ է։ Բայց Ա.Բ.Լ.Ը.Ը կ'ըսէ եղեր, բայց Մ.Է.Հ.–.–.Ն կ'գրէ եղեր, թող գրեն, իրենց պաշտօնը այնպէս կ'իմանան, ազատ են. սակայն գրելու ազատութեան մինակ մէկ անշահ մասը կ'վայելեն, այն մասն որմէ պէտք չունիմ։

Բայց մի կարծեր թէ Ծ–ՂԷԳ ալ մի և նոյն կարգը կ'դասեմ։ Ասոնց մէջ տարբերութիւնը զգալի է անշուշտ։ Որչափ որ Ա.Բ.Լ.Ը.Ը շողոքորթելու կամ փառն դատ մը պաշտպանելու, և Մ.Է.Հ.–.–.Ն Հայոց դէմ թշնամանք ժայթքելու համար բացէ ի բաց կ'գրեն, վասն զի գրելու արգելք չունին, նոյնչափ Ծ–ՂԷԳը Ճշմարտութեան մը նշոյլը բացատրելու համար ֆ–ղ-ի ֆ–ղ կ'գրէ, վասն զի արգելք ունի գրելու։ Ա.յս բաղդատութիւնն ըրի, չէ թէ այս կամ այն լրագիրը կորելու և կամ Ծ–ՂԷԳը գովելու, այլ միայն միտքս սա է հասկցնել որ շողոքորթելու, թշնամանելու, ազգին մէջ երկպառակութիւն յարուցանելու համար գրելու ազատութիւն կայ, բայց որ և է Ճշմարտութիւն պարզօրէն գրելու ազատութիւն չկայ։ Մէկ կ'արգիլէ այս ազատութիւնն. — Ասանք որոց վրայ խօսելու ազատութիւն չունիմ . . . վասն զի Թուրքաստան կ'գտնուիմ և քանի որ ատոր կ'գտնուիմ, և զա՛ալ միւս կողմէ կ'պնդէս որ գրեմ, ահա անդադար կանչ առնելու, կէտեր դնելու սիրոյ ատիպուիմ, որ սեռակ մը լռութիւն է։

Ուրեմն թող Տէգարդ որչափ ձայն ունի գոչէ. Կ'մտածեմ, ուրեմն կամ. դարձեալ անդին իր գոյութիւն ուրացող պիտի գտնուի։ Թող Ժիրարաէն, Կ'մտածեմ, ուստի մտածելու իրաւունք ունիմ, հեռանպէս խօսելու և գրելու, ըսէ. դարձեալ անդին օրէնքներ կան, որով գրիչները կապուած են։

Բայց այս արգելումը բաւական չէր, և ահա Ծ–ՂԷԳը քաջ կ'յիշէ, մանաւանդ թէ գրած է որ հայ քաղաքացի բժիշկ պէյերէն մէկն որ

մ՝ելյա։ Ազգը կառավարելու համար, տպագրական օրէնք կ՝ուզեմ, ըստ և ազգային պաշտօնէն թատրերգոր ընկալ։ Ինչ մեծ յաղթանակ։ բայց ասոր արդիւնքն ինչ եղաւ. — Ըստ իս՝ ոչ ինչ։ Արդէն տպագրական օրինաց անգիր շղթայ մը կար, առնենալու պէտք այն շղթային օղակ մ՝առելցընել առաջարկեց և առանց ժամանակիս ոգին նկատելու ժ—մ—ն՝ հանդէսն օգնութեան կանչեց։ Մէկ կողմէ տկար և երկչոտ բաղաքագիտի փորձ մը, միւս կողմէ լոկ ազգային կրքերը սնուցանելու մտոք տպագրական աղաստութեան յաղթանակ մը, որուն դէմ հիմա ալ կրօնական ժողովը կ՝մարտի կոնդակաւ։ Բայց նկատմամբ մը բոլորովին ապարդիւն հարկ չէ հրատարակել այս յաղթանակն, որ առիթ տուաւ թերևս շղթային նոր ձև մը, կերպարանք մը տալու, որ թերևս գրգիռ եղաւ տէրութեան տպագրական կանոնաց խմբագրութեան և մօտալուտ հաստատութեան, թէև երկաթին, ինչպէս որ գիտես, ինչ ձև տան՝ կլլոր, ձուակերպ, քառակուսի ընես, դարձեալ անունը չփոխեր։ Այլապէս կ՝ըսեմ որ նոր տպագրական օրէնք մ՝արդէն գրուած և Ա.Հ.Փաշա Ամբասին վաւերացման ներկայացած է, մանաւանդ կ՝ըսեն թէ աղաստական սկզբանց վրայ հիմնուած է, եթէ երբէք տպագրական կանոն մը աղաստութեան սկզբունքի հետ կարելի է ընտելացընել։

Ուրեմն չեմ յուսահատիր։ ես ալ գրելու պիտի սկսիմ, թէև բոլորովին ապատ երկրի, ապատ մթնոլորտի մէջ ընչել, մտածել և գրել կը սիրեմ, թէև չեմ սխալիր մէն մի բառս, մէն մի խօսքս կշռել, խմաստ ոճիս զգոնել, որպէս զի թշնամին անոր մէջ ամբաստանութեան և դատի կէտ մը չնշմարէ, թէև չեմ դժկամակիր եթէ Ծ—ն՝ առ ատի իմ գիրս մերժէ և օրէնքը, զոր կ՝յարդեմ երբ արդար է, գրելիքս պատժոյ արժանի դատէ։

Ուստի պատրաստուէ, բարեկամ, հետզհետէ նամակներ ընդունելու։ Այս ներածական գրութեամբս թերևս երևակայես թէ անուր և անասելի ճշմարտութիւններ պիտի յայտնեմ. ամէն տեսակ խնդիրներ պիտի յուզեմ, ամէն տեսակ քննադատութիւն պիտի ընեմ։ Ոչ, չէ, միամիտ եղիր, արդէն կերպով մ՝ակնարկեցի որ ոչ հալածուելու և ոչ իմ պատճառաւս Ծ—ն՝ հալածել տալու փափաք ունիմ. ոչ։ Նա համառանդ՝ նամակի մը շրջանն և ոճը չենն ներեր երկայնաբան և վիճա-

բանող լինել, և նամակագրիդ գլուխն աղծանը բաներու վրայ գրելը կարողութիւն չունի։

Իմ նամականիս էական նիւթը պիտի լինի ազգն, և գրչիս շարժումիթը՝ Ճշմարտութեան սէրն։ Ազգային կարևոր անցքերն և խնդիրները պիտի շօշափեմ անցնիմ քանի որ այժմ Կ. Պոլիս կ'գանուիմ։

Բ

Կ. Պոլիս, 16 Դեկտ. 1864։

Ազգային երևելի դէպքը սուրբ Երուսաղէմի Պատրիարքին Էջմիածնէն վերադարձն է։ Արդէն քաջ գիտես որ լոկ Երուսաղէմ բառը մարդկութեան և մանաւորապէս հայութեան կենաց նկատմամբ հիանալի և ահռելի յիշատակներ կ'յարուցանէ մեր մտքին մէջ։

Երուսաղէմ ծնաւ Աստուած մը, Երուսաղէմ զզրդեց բոլոր Եւրոպա, քանդեց նիւթապաշտութեան և մոլութեան արձանը, կանգնեց աղօտութեան և լուսաւորութեան դրօշակն. Երուսաղէմ նորոգեց, կենդանացուց աշխարհիս թէ բարոյական, թէ ընկերական և թէ քաղաքական դրութիւնն. Երուսաղէմ մեր օրովը կրօնիս, լեզուս և քաղաքականութեամբ տարբեր մեծամեծ ազդութիւններ Սէվասթոբոլի ամբարտակին առջևը միացուց և Եւրոպայի քաղաքական ապագան իրը թէ վճռեց։ Ի վերջէ Երուսաղէմ վերածնաւ ազգային Սահմանադրութիւնն և կ'երևի թէ տակաւին շատ բաներ ունի ծնելիք։ Մի ժպտիր ուրեմն երբ կ'ըսեն թէ Քրիստոսի գերեզմանը լոյս կ'ցոլանայ, հրաշքներ կ'գործէ։ Պատմութիւնը վկայ է այս սքանչելեաց։ Մի՞ չգիտեր որ եթէ Երուսաղեմի Պատրիարք մը դրսէն ընտրելու խնդիրը չյուզուէր, առջի Սահմանադրութիւնը գողունի ստայուածքի պէս պիտի գործածուէր. ՆՀ կ'ուրանայ որ՝ եթէ Սահակ եպիսկոպոս մը պատրիարքութեան աչք չունենար, Սահմանադրութիւնը մեծաղօր տէրութիւնէն արդի փայլն և դրօշմը պիտի չառնար. ՆՀ կ'գնդէ թէ Երուսաղէմի խնդիրը հայոց հոգւոյն թելերը շարեց, անոր կենսական տարերքը

չյուզեց, ազատութեան և յառաջդիմութեան շաւիղը մանելու գրգռիչ չեղաւ։ Բայց Սահմանադրութիւնը թերակատար է եղեր, բայց Երուսաղէմի պատրիարքը դարձեալ ներսէն ընտրուեր է եղեր, բայց սպասուած ծնունդը վիժեր է եղեր։ Ուրեմն ինչ օգուտ ունեցան այնչափ աղմուկ, փոթորիկ և արիւն քրտինք։

Ես ալ կ'հարցնեմ որ միթէ Սահմանադրութիւնը վերաքննելի և հետևապէս կատարելագործելի չէ. միթէ կ'կարծուի թէ Եսայի եպիսկոպոսին Միաբանութենէ ընտրութեամբը յաւիտեան Պատրիարք ընտրելու արդի դրութիւնն անարատ՝ և հանրածանօթ նզովքն անխախտ կեցած է։ Միթէ Ճշմարտութիւն մ'ապագային մէջ յաղթական կանգնեցընելու համար խաչ կրել մարդկային այժմեան իրերու կարգին մէջ չէ։ Ամեն մարդ որ քիչ մը խորհիլ գիտէ, ասոնց պատասխանը ինքնին կ'գտնէ։ Սակայն նամակիս գլխաւոր նիւթն այս չէ. ասի ժամանակին և պատմութեան կ'պատկանի լուսաբանել։

Բուն խնդիրը սա է. — Եսայի վարդապետն եպիսկոպոս եղաւ լարձաւ. բնականապէս պիտի երթայ այսօրերս դէպ 'ի Երուսաղէմ և աւուրբ Յակոբայ վանուց նոր կեանք պիտի տայ։ Բնաւ, ամենեին մի յուսար. կ'իմանամ որ Եսայի եպիսկոպոսը հակառակը կ'պնդէ և շատ լաւ կ'ընէ։ Դա կ'ըսէ եղեր. Իմ նախորդներս կ'ըսէին. Եկաք հաստատել ուսումնարան, տպարան, Թանգարան։ Ես կ'ըսեմ. չպիտի հաստատեմ ոչ ուսումնարան, ոչ Թանգարան և ոչինչ։ Թերևս չխոստանար որ կատարէ. բայց Սահմանադրութիւնը կ'հրամայէ որ Երուսաղէմ ունենայ ուսումնարան, Թանգարան, և այլն։ Գրչի ծայրովքիւրին է այս բաներս հիմնել Թղթի վրայ. բայց եթէ իրօք կ'ուզուի ուսումնարան մ'որ անբան միաբաններ բան ունին, Թանգարան մ'որ հին ու նոր գիրքեր պարունակէ և գլուխներու մնունդ տայ և ոչ ցեցերու, եթէ հարկ է տպարան մ'որ ընտիր և օգտակար գրեան 'ի լոյս ընծայէ, այն ժամանակ ստակ ալ հարկ է։ Արդ՝ սա միջոցիս վանքին գանձանակը ստակ մի, փուլ մի չկայ. մանաւանդ թէ պարտք կայ, ահագին պարտք. թէև քանի մը թուղթիկ և անզէտ գլուխներ կը կարծեն թէ հոն ոսկեհանք կայ, թէ ազգին վաստակը միաբանութեան կոկորդը կ'թափի, թէ բիւրաւոր ուխտաւորներ միանակ գարշապա տալու կ'գիմեն 'ի սուրբ գերեզման և մօրէ մերկ դուրս կ'ելնեն, թէ խ-

բարձունքի ը միաբան մէն մի Ասիլիա դարձած է։ Է՛հ, ցնորք են ա-
սանք։ Գիտցիք որ Երուսաղէմի գանձն աւեր ու տունը քանդ է. հա-
գիւ չոր հացի կտոր մի չարքաշ և կորովի միաբանից բերանը կ՚մտնէ.
վանքին եկամուտներն ասոր անոր քսակը կ՚հոսին. արդի տարեկան հա-
սոյթն ոչինչ բան է. կալուածոցը տէրը չէ և հողին բերանը կ՚գայ աղ-
գային պատրիարքարանի տարեկան հարիւր քսան հազարի չափ զու-
ռուշի տուրքը. զոր չորս տարիէ՝ի վեր վճարած չունի, տալու հա-
մար։

Այս դրամական կիսամեռ վիճակին մէջ թող Սահմանադրութիւնը
բան չունի նէ զոչէ որ Երուսաղէմ ուսմամբ զարգանայ և ազգին յա-
ռաջադիմութեան աջակից գտնուի, անհնարին բան։

Բարեկամ, այսպիսի փաստերու առջև արձաններն անդամ կ՚լռեն.
իսկ այն որ գլխին մէջ գիշ մը ըղեղունի ու դէպ՝ի անցեալն ակնարկ մը
կ՚նետէ, կրնայ գուշակել որ հին Սահմանադրութեան և նախորդ վար-
չութեան դէմ ահաւոր թումբ մը կանգնելու և ազգը տակն ու վրայ ը-
նելու խորհուրդն առանց ստակի չէր քալեր։ Երուսաղէմի գանձը պա-
րապ է եղեր, ոմ չհաւատար. զարմանալին այն է որ վանքը տեղը
կեցած է և ցաւալին որ գանձին բաժանումն ապօրինաւոր կերպով ե-
ղած է։ Ազգին շնորհածն ազգին դարձած է իրաւ, բայց չէ թէ ու-
սումնական վարդապետի, գիրքի և ուրիշ ազգօգուտ բաներու կերպա-
բանքով, այլ դարձեալ զուտ ոսկիի դէմքով։ Ընդհանրապէս կրօնա-
կանք այս մետաղին արժէքը գիտեն. զանի չեն նկատեր, չեն թաղեր
իբր հարստութիւն, այլ իբր գործիք կ՚գործածեն . . . նպատակի մը
համար։ Սէյ զաղղիացի տնտեսագէտն ալ ասկէ աւելի չպահանջեր։

Բայց միթէ այսչափ տնտեսութիւն և զոհ փոքր միութիւնն
եշոյլ՚ալ չունի։ Այո, ուրիշ գանձ մ՚ունի որ շատ սուղնստաւ մեղի,
այն է Նորընտիր Պատրիարքն, որ ազգային յեղափոխութեան ծնունդն
է, որ դատն յիշատակներ, աղէտալի պարագաներ պիտի մոցրնէ ազ-
գին, և մանաւանդ Երուսաղէմի միաբանութեան դարաւոր թմրութեան
աղտը պիտի սրբէ։ Այս ալ ընելու համար կարծեմ թէ կանխիկ դրամ
պէտք չէ. կամք, յարատեւութիւն և աշխատութիւն բաւական են, և
այս յատկութիւններն Եպայի եպիսկոպոսին վրայ կ՚տեսնուին։ Բաւա-
կան է որ նա վանքին գանձուց ծակերը գոցէ, եկամտից աղբիւրները

բանայ և թողու որ՝ ինչպէս ջրին աւազանն՝ անկորուստ լեցուի և հայ-
յութեան անջրդի դաշտն ոռոգելու գործածուի։

Ուրեմն Եսայի եպիսկոպոսը նոր թուական մը պիտի բանայ վանուց
համար, և օր ըստ օրէ ազգին համարումը պիտի արդարացնէ։ Մի-
նակ կ'ուզեմ գիտել որ Եսայի եպիսկոպոսն էապէս սուրբ Երուսաղէմի
վանուց ցկեանս վանահայրն է, և իբր այն՝ վանուց որ ազգինն է, մա-
նաւանդ ներքին կարգադրութեան և կանոնադրին գործադրութեան
ուղղակի պատասխանատու Վարչութեան։ Այժմ Սահմանադրութեան
տրամադրութեանց համեմատ՝ կարող վանքերը նոր կոչումմ՝ ունին. չէ
թէ լոկ միաբաններ պահել, որ պահպանեն, աղօթեն և ննջեն, այլ
ուսանին, գործեն և հոգեն։ Իսկ միւս կողմէ Եսայի եպիսկոպոսն
իբր Պատրիարք բոլոր հայոց պատկառանաց արժանի է, և թերևս
արդարան տեղեաց Ամենայն հոգևորապէս բարձր է, բայց քաղաքական
նկատմամբ Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքի իրաւասութիւնը բարձրագոյն է
և միտ՝ որ Բ. Դրան առջև Թուրքիոյ հայոց ներկայիչն է և համարա-
տու, որմէ կախում ունի իրաւ Երուսաղէմի վանահայրն։ Ուստի որ-
չափ տերտ մնայ վանահայրը Ս. Պատրիարքին և կեդրոնական վարչու-
թեան հետ, նոյնչափ ազգու կ'լինի իր խօսքն և արդիւնաւոր իր աշ-
խատանքը։

Բարեկամ, բայց ես միշտ կ'մտածեմ որ նամակ է գրածս և ոչ հատ.
նամակագրութիւնը խօսակցութեան մօտ բան մ'է, որու մէջ ամեն
խնդիր կ'յուզուի առանց խորունկը մտնելու. իսկ ես Երուսաղէմի
խնդրոյն վրայ ծանրացայ մեացի, թէև իրաւ ծանր է խնդիրն ալ և
կրնայ աւելի խօսք վերցնել, և այս ալ կենդանի լեզուի կարօտ է։

Գ.

Կ. Պոլիս, 23 Դեկտ. 1864.

Երուսաղէմի Պատրիարքը դեռ ես այս տեղ է և պիտի մնայ մինչև
որ Բ. Դուռէն պատրիարքական գէրեն եկնէ, մինչև որ ազգային Վար-

չութեան կողմէն Երուսաղէմի Կանոնագիրը շինուի։ Առջինը զուտ պաշտօնական ձև մ՚է. երկրորդը Սահմանադրութեան մի էական պահանջում, մանաւանդ պատրիարքական պաշտաման մէկ կարևոր կէտը։

Ըստ Սահմանադրութեան, ինչպէս որ գիտես, Կանոնագիրն առաջ և ապա Պատրիարքն, եթէ ներելի է ասել, պիտի շինուէր. որպէս զի այս՝ անոր գործադրութեան հսկէ։ Բայց անհիստ Ընդհանուր ժողով մը, թերևս կ՚յիշես թէ՝ ինչ կերպով Պատրիարքն առաջ կարգել որոշեց և կանոնն ետքի ձգեց։ Պատճառ. որպէս զի Սթոռն առելի ևս թափուր չմնայ։ Ասի անոտի նկատում մ՚էր, իսկ այն կիսատ ընդհանուր ժողովին կիսատ որոշումն ալ անսահմանադրական։ Նորընտիր Պատրիարքն՝ առանց ձեռքը Կանոնագիր մ՚ունենալու՝ անգործ պիտի նստի, որով Սթոռին արդի վիճակը փոխուած չլինիր։ Իսկ ընդհանուր ժողովին դիւանն այն ատեն կարուկ ճամբայ մը բռնելու ոչ, երբ տեսաւ որ երեսփոխանները մէկ տեղ դումարելու դժուարութիւն կայ։ Հետուէն գրով կարծիք հարցուց այս մասին, և կարծեմ յիսունի չափ ձայն գտնելուն պէս՝ նախապէս Պատրիարքն ընտրելու որոշում ըրաւ։ Դիւանին այս ոսկեզօծ հատը ժողովուրդը կլլեց և իր այս անտարբերութեամբը դեռ շատ բաներ ունի կլլելիք . . . ։

Այս պարագան, որ արդէն մոռցուած՝ և կարելի է անշան թուի, յիշելով՝ միտքս Պատրիարքին ընտրութիւնն ուրել և Կանոնագիրն առաջ շինել ըսել չէ բնաւ, այլ ապօրինաւորութիւն մը նշանակել, ապօրինաւորութիւն մ՚որ կրնայ ապագային մէջ նորանոր անպատեհութիւններ ծնիլ։ Վասն զի եթէ այսօր կուսակցութեան պարագլուխ մ՚ելնէ ըսէ, — Կ՚ուզեմ որ Պատրիարքն սթոռէն իջնէ կամ քաղաքական ժողովը հրաժեշտ տայ. հերիք է որ կերպով մ՚երեսփոխաններէն յիսուն քուէ հատքէ։ Այս քուէներն ընդհանուր ժողովին վճիռը կազմելու չափ ոյժ պիտի ունենան հարկաւ՝ վերագոյն յիշած օրինակիս համեմատ, և հետևապէս քաղաքական ժողովը պիտի լուծուի կամ անոր նախագահը գահավիժի։

Օրէն է որ ընդհանուր ժողով մը մեծ մասամբ գումարուի, ներկայացած խնդրոյն վրայ խորհի, խօսի, վիճաբանի և յետոյ քուէ տայ և որոշէ։ Եթէ մեր երեսփոխանները կանխաւ ազգային ամէն խնդիր-

ներս տեղեակ՝ և իրենց կարծիքը մաղէ անցած, զտուած և լաւ սաւորուած լինէին, թերևս ներելի լինէր նաև արտաքոյ կարգի պարագայի մէջ խնդրել որ իւրաքանչիւր երեսփոխան իր նստած տեղէն կարծիքը կամ քուէն դրկէ ուր որ անկ է. այն ատեն հարկ չէր լիներ նաև զատական երեսփոխանաց ներկայութիւնն այս տեղ, և եթէ (Աստուած գիտէ երբ) ընտրուին, թերևս հեռագրով բանակցին։

Բայց քանի որ փորձով գիտենք որ մեր երեսփոխաններէն շատերը շատ նիւթերու վրայ կարծիք մ՚առանձին երևնելու կարողութիւն չունին, քանի որ ընդհանուր ժողովին մէջ մէկ քանի վարպետ գլուխներ և խօսուն լեզուներ կան որ ըստ քմաց ամէն բան կ՚մեկնեն և ստէպ իրենց համոզման ուրիշները համոզելու տաղանդն ու զօրութիւնն ունին, 'ի հարկէ պարտ է որ երեսփոխանք իւրաքանչիւր խնդիր առանձինն ուսնելէն ետև՝ կանոնաւոր ատենի մէջ անոր վրայ ըստ կարի վիճին, որով Սահմանադրութեան պայմանը կատարելէն զատ՝ կարծեաց ընդհարումն համոզում մը ստացած՝ և ատոր վրայ օրինաւոր և հիմնական որոշում մ՚ըրած կ՚լինին։

Այլ Երուսաղէմի վանուց Կանոնագիրն, որով պիտի կառավարէ Պատրիարքը զմիաբանութիւնն, ով պիտի շինէ։ — Կեդրոնական վարչութեան խառն ժողովն, և պիտի վաւերէ զայն Ընդհանուրը։ Կ՚իմանամ որ արդէն այս Կանոնագրին խմբագրութեան կ՚պարապին և վանօրէից խորհուրդին, եթէ կայ, նոյնպէս Միաբանութեան կամ Պատրիարքին կարծիքը հարկաւ պիտի խնդրեն այս մասին։

Եթէ իմ կարծիքս հարցնող լինէր կամ եթէ ազգային ժողովներու մէջ, որոց մէջ օտար եմ, ձայն ունենայի, պիտի առաջարկէի որ Կանոնագիրը չշինուած Երուսաղէմի վանքին բարոյական և նիւթական վիճակը քննուի, մեր վանական հաստատութեանց դրութիւնն և ոգին, որ բոլորովին տարբեր է եւրոպականէն, լաւ մը հասկցուի և ապա գործադրելի մի բան յօրինուի և ոչ մտածին կամ Մխիթարեան։

Ազգային վարչութիւնն, որ այժմ մութին կ՚գործէ և շատ ու շատ կ՚գործէ, կ՚ըսեն, պէտք է որ յատուկ քննիչ մը դրկէ 'ի Ս. Երուսաղէմ. քննիչ մ՚որ ակէ առաջ լուսահոգի Յովհաննէս պատրիարքը հրաւիրելու, և սահմանադրասէս երեք պատրիարքցուներն ընտրել տալու համար դրկուած հրաւիրակաց և քննիչին նմանի, քննիչ մ՚որ

ոչ տէր Հիւնքեար պէյ և ոչ Գալատա պատուելի լինի, որ ինքը չքննուի և չփորձուի, իսա չհրապուրուի, և ինքն ալ միարան չդառնայ, քննիչ մ՚որ ազգին օգուտը սիրող, հմուտ, բանիրուն և ունեցող մէկը լինի, որ վանքին ամէն հանգամանքն անաչառ և անհաշտ աչօք քննէ, որ միարանից իլիկը ծլիկը գտնէ, որ վանքին ելքն ու մուտքը, թէ սրբազան և թէ անասուրբ իրերը, նիւթական արդի կարողութիւնը հեռաղօտէ, հաշուէ և բոլոր այս կարևոր կէտերուն վրայ զինքը ղրկողին տեղեկագիր մը տայ։ Այս քննութիւնն ոչ միայն շինուելիք Կանոնագրին հիմ պիտի բռնուի, այլև նորընտիր Պատրիարքին առաջին քայլն և առաջին փափաքը պէտք է որ լինի, եթէ իրօք կ՚փափաքի ցոյց տալ ազգին ինչ որ է վանքին արդի վիճակը, զոր կ՚ողբայ, և ինչ որ պիտի լինի յուսագիր վիճակը, զոր կ՚խոստանայ 'ի Հարկէ երբ Վարչութեան աջակցութիւնը ստանայ։ Այս աջակցութեան առաջին փորձը պիտի լինի առաջարկած քննութիւնս. քննութիւն մի, զոր Սահմանադրութիւնն իսկ կ՚պահանջէ։

Արդ՝ քանի որ Վարչութիւնն անոր ուժովն իրաւունք ստացած է հաշիւ պահանջել Միաբանութենէ երբ որ կամի, որուելիք հաշուին օրինաւորութիւնն և Ճշգրտութիւնն ի՞նչպէս կարող պիտի լինի վաւերել երբ վանքին ներսը դուրսն, ելածն ու մտածն 'ի մօտոյ քննած չլինի կանխաւ։

Այս առաջարկութիւնս իմս չէ, արդէն շատերն ըրած են, և հիմակ ես ընող կայ. այժմ այս ընողը չքարկածուիր, անհաւատ չկոչուիր, վանքին դանձն, որ արդէն պարապ է, թալլել տալու ամբաստանութեամբ չհալածուիր, դ-դ- բառն իրը Ճիւաղ աչքին չերևիր։ Վասն զի այժմ տուրք Յակոբայ վանքը Սահմանադրութեան առջև անառիկ և անհպելի դղեակ մը չէ, վասն զի այժմ վանահայրն Եսայի եպիսկոպոսն է, որուն խորհրդովը Վարչութեան կ՚պատկանի հիմնովին մաղել, շաղել, սրբել Միաբանութիւնը, վերականգնել տաճարն, անոր իրաւունքները ձեռք բերել և այնպիսի Կանոնագիր մը շինել որ Սահմանադրութեան համաձայն և վանուց վիճակին յարմար և արդիւնաւոր լինի։

Յ. Գ։ Երուսաղէմի փոխանորդ Սահակ եպիսկոպոսը պատահմամբ մը տեսայ. գունատ, նիհար և աչացը լոյսը մարեր էր. անպատում վշտով

մը ձակատը խորշումներ էր։ Ա՛հ, մեծ մարդ, այս վիճակին մէջ պիտի տեսնէի քեզ։ Առջի իրիկուն ալ անոր վրայ երազ մը տեսեր էի, զոր պիտի պատմէի անոր եթէ հնարը մտերմութիւն ունենայի։ Կ՚երազէի որ Սահակ եպիսկոպոսը մեծահատոր գիրք մը կ՚յօրինէ որուն նպատակը պիտի լինի ապացուցանել թէ՝ Ազգը սխալած է Երուսաղէմի պատրիարքի ընտրութեան մասին, և թէ ինքն այս պաշտօնին նախատահմանուած էր՝ ի վերուստ։ Այս գիրքն Էջմիածնի եպիսկոպոսին կ՚նուիրէ։ Էջմիածնի եպիսկոպոսը նուէրը սիրով կ՚ընդունի և փոխարէն անոր ձեռքը գիր մը կ՚տայ։ Սահակ եպիսկոպոսը գիրը կ՚բանայ և կ՚կարդայ սա խօսքն. — Ազգին ձայնը Նախախնամութեան ձայնն է որ զիս կոչեց։ Տո՛ր փոխանորդութեանդ ՓՈՓԲԻԿ հաշիւն և ձանրայ էլիր։

Եթէ երազագիտութիւն ունիս՝ մեկնէ այս երազս, խնդրեմ։

A-55175

Դ

Կ. Պոլիս, 23 Դեկտ. 1864։

Տեսայ, այո, հրաշագործ վարդապետն ալ տեսայ. նոր շնորհ, նոր լոյս, նոր եռանդ ղղալ կարծեցի։ Ա՛հ, ինչ սքանչելի դէմք, ինչ հանճարեղ գլուխ, ինչ հիանալի լեզու։ Ի՞նչպէս նկարագրեմ անոր աննկարելի յատկութիւններն, ինչպէս պատմեմ անոր անպատմելի գործերը։ Մանկութենէս՝ ի վեր այս հրաշագործին անունը կ՚լսէի և անզուսպ փափաք մը կ՚տածէի զանի տեսնելու։ Տեսածս լսածիս մօտ ոչինչ է։ Պէտք է, պէտք է տեսնել այս վեղարն, որուն շարժմամբը լեռները կ՚շարժին, տէրութիւնները կ՚վրդովին, ազգայինք կ՚փրփրին, ազգային ժողովներն իրար կ՚անցնին, լրագիրներն իրարու գլուխ կը պատուին, եպիսկոպոսներն անպամ իրենց տեղէն կ՚թնտան և ազգը կ՚ելնէ կ՚ելնէ կ՚նստի։

Կ՚հաւատա՞ս. այս պաշտելի մարդն երեք տարիէ՝ ի վեր կ՚հալածուի և այժմ դատափետ կ՚տառապի. յանդիմանութիւն, բանտ, աքսոր և մինչև անպամ մահ իր աչքին խաղալիկ կ՚երևին։ Փչած տեղն ալէկո-

ՀԱՅ ... ԳՐԱԴԱՐԱՆ

ծութիւն կ'հանէ։ Ազգային քաղաքական և կրօնական ժողովները, Պատրիարքը, Կաթողիկոսը, Բ. Դուռը շանթեր կ'արձակեն ասոր դէմ. նա կ'ժպտի. նա՝ սար, ձոր, անդունդ և ծով կ'անցնի. ամեն տեղ է, և միշտ նոյն տեղը կ'տեսնուի, միշտ թշնամիներն՝ որ մեծ մեծ կ'ջարդեն, ամօթասպարտ ձգելու, իր առաքինութիւններն արևուն պէս երևան հանելու պատրաստ կ'գտնուի։ Միթէ դրամ, սուր, վառօդ ունի՞ այս մարդն. — Ա՛չ, իր զէնքը հրաշագործութիւն է։

Հրաշագործը Կ. Պոլիս անվրդով կ'գայ, և մինչդեռ վարչութիւնը կ'խուովի, ահա որան ինքնին թակարդն ընկաւ, կ'ըսէ ու զայն 'ի դէ-դա-Ջ արգիլելու, ինչպէս որ Մ-ն-ն 'ի պաշտօնէ դրեր էր, կ'որոշէ, նա՝ նոյն միջոցին՝ Բ. Դուռն առօք փառօք նախարարաց հետ տեսութիւն կ'ընէ։ Պատրիարքն ահ ու դողով ու կէս բերան կ'հրաւիրէ հրաշագործն որ հրաշք գործելէ դադրի և պատրիարքարան գայ, այս է պատուաւոր բանտի մը մէջ մնանէ. նա միշտ ազատ ու սիգաձէմ կ'ՀԵՄ, և որու գուռն որ զարնէ՝ դռները կունակի վրայ կ'բացուին։ Դու ամբաստանութեան տակ ես, կ'փոփսան ականջին. ես ալ դատի համար եկայ, կ'պոռայ հրաշագործն, և այնպիսի անվեհեր Ճակատ մը կ'ցուցընէ որ կարծես թէ ինքը պաշտօն ունի իր դատաւորները դատապարտելու։

Իսկ կրօնական ժողովն այս փորձանքն իր վրայէն կ'թոթուէ կ'նետէ առանց անարատ մնալու։ Տասն անգամ յանձնաժողով կ'կազմուի որ հրաշագործը փորձեն, քննեն. տասն անգամ կ'փորձուին և զինուորի յետս կ'նկրկին։ Ա՛հ, միթէ սրբապղծութիւն չէ՞ հրաշագործ մը քննութեան տակ ձգել. միթէ հրաշք մը ստուգելու փորձ մ'անբարշտութիւն չէ՞ . . . . . ։ Ուրեմն ինչո՞ւ համար դեռ ասա՛ է և ոչ իր բնական վիճակին մէջ, որ է Քիւրտիստան։

Ա՛հա ասի ինձի հանելուկ մ'էր. հրաշագործ մը միշտ սուրբ է, հետևապէս միշտ ազատ և անպատժելի։ Այս հանելուկը լուծելու համար մանաւանդ՝ ահիւ և ակնածութեամբ հրաշագործին մօտ գացի, զանի ողջունեցի։ Իր ոսկրուտ ձեռքն երկրնցուց այնպէս որ պագնեմ։ Սոսկում մ'եկաւ վրաս. քայլ մ'եմ առի. չիշխեցի իմ անտուրբ շուրթերս անոր սրբանուէր մատներուն հպելու, որուն մաքուր և թափանցիկ եղունգներն անշուշտ օրին մէկը մատանի ոյժ պիտի ստանան։

— Զէ, ըսի, չեմ արժանի այդ շնորհաց, շատ է ինձ քեզ տեսնելս։ Իմ միակ հոգս է արդի վիճակդ իմանալ և աղէտիդդ նկարագիրը խնդրել։

— Ա՛ռ քեզ Հ–յլէ մը, ըսաւ, որուն մէջ պիտի տեսնես իմ սիրտս, միտքս և գործս, և որուն նոր յաւելուած մ՚ունիմ ընելիք։

Հ–յլէ ըսածը գիրք մ՚էր, սուրբին հեղինակութիւնը։ Բացի, թերթերը քրքրեցի ու շատ մ՚անուրջ՝ կտրուկ խօսքեր, Սուրբ Գրոց վկայութիւններ, առակներ, ածուխ, գիշերահաւ, թիթեռ, մուն և մեայլ գտայ խառն՚ի խուռն։ Այս հայլին շատ մրուտ և աղտոտ է մնացեցի, և Սանքօ–Բանքօն, Տօն Գիշօդի երանելի սպասաւորը յիշեցի, որ միշտ սովոր էր իր տիրոջը հետ առակով խօսիլ։ Ուստի դարձայ հրաշագործին ըսի.

— Կ՚աղաչեմ, Հ–յլէիդ աւելցնելիք մասդ քիչ մ՚աւելի պարզ գրէ՝ որ ինձի պէս տկարամիտ անձինք հասկնան։

— Հոգւոյն Սրբոյ շնորհը վայելողը զայն կ՚հասկնայ, պատասխանեց։ Միթէ մարգարէից գուշակութիւնները, Քրիստոսի ամեն առակներն ու առածները ժողովուրդը կ՚իմանա՞ր. միթէ Յովհաննու յայտնութիւնները Հ–յլէն աւելի իմանալի՞ են։ Օր մը պիտի գայ որ Հ–յլէն աշխարհ պիտի լուսաւորէ. այն օրն արդարներուն իշխանութեան օրը պիտի լինի։

Հրաշագործն իրաւունք ունէր, վասն զի գրածն ինքն ալ չէր հասկընար և Հ–յլէին վսեմութիւնն իր մտքութեանը մէջն էր։ Ուստի սուրբին հետ վիճելու սեղ՝ լռեցի, և խնդրեցի որ ինձի բացատրէ իր գործերուն վիճակը։

— Կ՚զարմանամ, ըսի, ինչո՞ւ հրաշքով մը չես ազատիր այս տաղտկալի դատէն. դիւահար ըրէ ժողովները, լուծէ կրօնական ժողովին վճիռը, գրգռէ ժողովուրդը . . . ։

— Կ՚երևի թէ դու նոր կ՚արթննաս, ըսաւ խոժոռ դիմօք հրաշագործն, և դեռ չես իմացած իմ գործած հրաշքս։ Գիտցիր որ ես անպարտ եմ, բայց կամաւ կ՚խոնարհիմ որ բարձրանամ. արդէն հրեշտակներն և ժողովուրդը զիս իրենց սրտին մէջ (եթէ հրեշտակ մը սիրտ ունի) և գլխին վրայ կ՚կրեն։ Կրօնական ժողովը վճիռ մ՚արձակած չէ ինձի դէմ, թէև կ՚պնդեմ որ արձակէ, և եթէ երբէք արձակած չէ

ձակէ՝ մեծ վիհ մը պիտի բացուի ազգին մէջ։ Արդէն քաղաքական ժողով մը, որուն առենապետէն քիչ մը տարբերայ, խօսքը մեր մէջը, իմ խնդրովս դիւահարեցի և անհետ ըրի։ Կրօնականն իրեն կաշառակեր ամրաստանեցի, այս բարը մարեց և դեռ երես ունի նիստ ընելու և կոնդակներ գրելու։ Քիւրտիստանէն ջատագովութեան գիրեր ուզեցի, և տարայ. Սարգիս և Գէորգ եպիսկոպոսներն ուզեցի որ դատս քննեն, ուզածս եղաւ. Կաթողիկոսէն ներման կոնդակ խնդրեցի, և կոնդակն եկաւ. անօրէն գիւանապետին նոր 'ի նորոյ գիւանատան ծակերէն հանած ամբաստանական գիրերն անվաւեր հրատարակեցի, և այնպէս պիտի լինին։ Այսօր ալ կ'պնդեմ որ կրօնական ժողովը զիս աղաչէ որ իմ կրկին հոգևոր առաջնորդական պաշտօնս վերստին վարեմ, և իր աղերսն՝ եթէ բանիս գայ, պիտի ընդունիմ։ Իսկ այնուհետև ես պատոյ դատ պիտի բանամ անոր դէմ։ Առանց փոքր բաներ կ'կարծես. որ եկեղեցականդ, որ քաղաքացէ՝ կարող է առջևս ելնել։ Եւ դեռ կան մարդիկ որ իմ զօրութեանս վրայ ՝կը թերահաւատին . . . ։

Բարեկամ, այս խօսքերը Հայելիէն առելի պայծառ գտայ և համոզիչ՝ եթէ ստուգուին։ Նկատեցի նաև որ հրաշագործը սքանչելի խաղ մը կ'խաղայ. մրցանակը պիտի տանի կարծեմ, ու եղի պէս ջրին երեսը պիտի ելնէ։

Ուրեմն յուսթիւն. նայինք այս հրաշալի կատակն ու՞ր պիտի յանգի. նայինք սա սրբագումար կրօնական ժողովն ինչ պատգամ պիտի տայ. թող գայ պատգամն որ ամեն մարդ գիտնայ թէ հրաշագործը բնական էակ մ'է թէ ոչ գերբնական։

Ան այժմ հրաշագործին աղօթից կ'յանձնեմ քեզ։

Ե

Կ. Պոլիս, 28 Դեկտ. 1864։

Քանի անհամբեր ես։ Միթէ կարելի է ժամանակիս ամեն ազգա-

յին խնդիրները մի քանի նամակի մէջ ամփոփել. միթէ հնար է Պօլսի պէս տեղ մը ամէն բան տեսնել, դիտել ու կշռել։ Ո՛չ, չէ, օտարական մը տաս քսան տարի անգամ նստի այս տեղ, դարձեալ օտար է, տգէտ և նորեկ, վասն զի երկիրս տարասեռ տարերաց օթևանն է։ Ատ Արկոս մը, Հերքիւլէս մը, Կրեստոս մը լինիս, դարձեալ աչքդ անորոշ և նեմ առարկաներ պիտի տեսնես, այժդ ընդունայն պիտի վատնի, ոսկիդ հովին պիտի ցրուի, վասն զի ատ հաղորդակցութիւնը դժուարին, ընկերական յարաբերութիւններն անկայուն, անհիմն և ուր ուրեք գաղտնի են. ազգային ոգի, հետաքրքրութիւն և մտաւոր բանակցութիւն հաղուագիւտ են. մինակ օրական շահ, կին, թուղթ, գինի, նարտ, սուրճ և ծխախոտ՝ բնակիչներուն մեծագոյն մասին զբաղմունքը կ'կազմեն։

Իսկ Զմիւռին ուրիշ դիրք, ուրիշ հեշտութիւններ ունի. մեր բնիկ փոքրիկ երկիրն ուրիշ համ հոտ ունի, որ թէև միակերպ կ'բուրէ, թէև մի և նոյն բաներու վրայ լոյսը կ'ծագի ամէն օր և նորանոր իրերէ զուրկ է, սակայն դարձեալ անոր օդը սիրտդ կ'բանայ, անոր ջուրն ուելի անուշ կ'գայ, անոր ծաղիկներն ուելի վայլուն և օրիորդներն ուելի հրապուրելի, թեթևաշարժ, շնորհալի են, և թող շատ գեղեցիկ չլինին։ Այդ տեղ քայլ մ'առնուս՝ բոլոր քաղաքը կ'բոլորես, ձայն մը հանես՝ մտերիմ և ուսումնական ակումբդ կ'կազմես, գեղջական զբօսանքի մը տենչը թէ սիրտդ գրաւէ՝ իսկոյն շոգիին ուժովը դէպ 'ի լեռ ու ձոր կ'թռիս և յանկարծ զմայլելի և գալար արտի մը մէջ կ'գտնուիս, ուր որ ընկեր և ընկերուհի թև թևի ուսած՝ ապին անդին կ'վազվզեն, օդին պայծառութիւնը կ'վայելեն և օրն է կ'անցընեն։

Եթէ սիրու հիդ տեսնել ուզես, որտիդ մէջ այս իզձն այն ինչ կ'ծնի, թէև այսպիսի իզձ մը մշտածին է, անոր կենդանի նկարն առջևդ կը տդնես։ Իսկ այս տեղ մղոններ կ'քալես կամ կ'նաւարկես, ու տակաւին նոյն տեղն ես. ծանօթ մը տեսնել ուզես, ամիսներ կ'անցընես և չփնտռած ծանօթդ կամ անծանօթդ, և նոր իրեր կ'տեսնես. արևելքը կոյս երթալ բաղձաս, ինքզինքդ հիւսիս կ'գտնես. զուարճութեան դիմես, թշուառութեան կ'հանդիպիս, և եթէ բնակարանէդ առտու մ'ելնելէդ ետև՝ քանի մ'օրէն տուն դառնաս, նա մանաւանդ

ձեռքդ, ոտքդ չկտրած և դիակի պէս դառնաս, դարձեալ ինքդինքդ պէտք է որ բարեբաղդ համարիս. ինչպէս որ քաջ դիտես, կեանքը խիստ աժան է այս կողմը։

Այդ տեղ քաղքիդ մէկ խորշը շշուկ մ'ելնէ, շուկան հակ մը պատուի, մարդու մ'ոտքը սահի, թաղական խորհուրդին մէջ պատահմամբ որոշում մը լինի, Մեսրոպեան վարժարանին աշակերտի մը քիթին արիւնի կամ վարժապետի մը քունը կոխէ դաս տալու առենը, խաչկալին գոյնը փոխուի, երկու բարեկամի մէջ անհաշտ վէճ մը պատահի, հարս ու փեսի մէջ փոփոխք մ'անցնի, սիրահար և սիրուհւոյ մէջ հառաչ մը յօդս ցնդի, օրիորդի մը մատը նոր մատնի մը փաթթի, պարտիզդիդ մէջ տերև մը շարժի կամ ծաղիկդ ծուռ բուսնի, այս և ասոր նման դէպքերն, որ ընդհանրապէս մեր քաղքին նշանաւոր դէպքերն են, երկու բոպէի մէջ դուն կ'իմանաս և հինգ բոպէ առաջ ժողովուրդն իմացած կամ զուշակած կ'լինի, և քանի մը շաբաթուան խօսքի նիւթ կ'տայ։

Իսկ ասոնք ամբողջ թաղեր կործանին, իրարու տուն փլին, մարդիկ խումբ խումբ ծովամահ կորնչին, ազգային ժողովներն ազգն առնեն ծախեն, Սահմանադրութիւնն ըստ քմաց գործադրեն, դպրոցներն աւերակ դառնան և եկեղեցիներն ամայի, մեծ մարդիկ լիաձեռն ոսկի թափեն, տպարաններդ՝ նոր նոր գիրքեր, և լրագիրներդ՝ հազարումէկ լուրեր, դարձեալ այսպիսի նշանաւոր բաներն, եթէ երբէք պատահին, օրեր անցնելէն ետև, հազիւ թէ քանի մ'անձերու հետաքրքրութիւնը կրնան շարժել և գրեթէ անտես կ'անցնին։

Ուստի ինչպէս զուարթ չունիս և կ'պահանջես որ մեր գրեմ քեզ թէ արդի ազգային ժողովներն ինչպէս կ'քալեն. — Էհ, մերթ կրթայի և մերթ կայծակի պէս։ — Թէ կեդրոնական վարչութեան Ճիւղերուն մէջ ծագած վէճն ինչ բանի վրայ հիմնեալ է։ — Բուհ, անձնական կրից վրայ։ — Թէ գաւառական վարչութիւններն երբ պիտի հաստատուին։ — Օրէ օր, երբ Սահմ. գործադիր յանձնաժողով ըստ ածն, որ գործ տեսած չունի, արթննայ։ — Թէ Մուշի խնդիրն ուր մնաց. — Հա, հա, ուր որ էր ասկէ երեք տարի առաջ։ — Թէ Ուլնիոյ խնդիրն ինչ լուծում առաւ. — Լռութիւն, դեռ պիտի առնու։ — Թէ ազգային ընդհանուր տուրքէն ոչչափ ստակ հաւաքուեցաւ. —

Վայ, վայ, դեռ ոչ ինչ։ — Թէ ազգին հիւանդանոցն ինչպէս կ'ապրի. — Տզրուկի պէս ազգին բոլոր եկամուտները ծծելէն ետև, դեռ անկուշտ է և չպիտի կշտանայ մինչև որ ազգին գլուխը չուտէ։ — Թէ Իւսկիւտարի գերեզմանատան դատն ինչ արդիւնք տուաւ. — Ողորմ վրայ տուաւ։ — Թէ Նոր Գիւղի եկեղեցւոյն -ը-ն, որ Ճէզայիրլիեանին վրայ էր և որուն կէսն իրը ՀԷՂԼԷ կ'պահանջուէր երեք տարիէ 'ի վեր՝ ոչ որ մնաց. — Իր առջի տեղը կեցած է, բայց տէրն անյայտ։ — Թէ Զարսանճախի հարստահարիչ գերեզմանները արժանաւոր պատիժ պիտի կրեն. — Այո, երբ նորէն հարստահարեն։ — Թէ Հաճինի հայերն ինչ ջրի մէջեն. — Արեան։ — Թէ Պօլսի մերազնէից բարքը, վարքն և ընթացքն՝ ընկերական և ազգային, ինչպէս են, թէ . . . . . թէ . . . . . բայց կ'երևի թէ այս հարցերուն վերջը պիտի չբերես։

Լաւ, ուրեմն բայէ 'ի բայ կ'կրկնեմ որ այսպիսի և ասկէ աւելի կարևոր ազգային նիւթերու վրայ խօսելու և խորհրդակցելու համար ժամանակ կ'ուզեմ։ Ըստ որում՝ եթէ բանս գործս ձգեմ և անմիջապէս մէկ գրով քու կամքդ, թէև ազգօգուտ, կատարելու փափաքիմ անգամ, դարձեալ չեմ յաջողիր։ Պէտք է շրջիլ, պաշտօնական մարդոց տպիլ, ընկերութիւններ յաճախել, արտաքին թղթակցութիւնները սպասել և հետզհետէ այսպէս թուղթ մրոտել։

2.

Կ. Պոլիս, 1 յունուար 1865,

Քանի որ անցաւոր մարդս անտահման ժամանակին սահման մը դրած է և առանց բաժանման, չկրնար որ և է բան մ'ըմբռնել, բնութեամբ ինքն ալ բաժանելի լինելուն, պէտք է որ մարդիկ, ինչպէս որ սովոր են, ամեն տարեգլխին գիրար ողջունեն շնորհաւոր նոր տարի մաղթելով ինչպէս որ նոյնը կ'մաղթեմ և քեզ։

Բարեկամ, անհուն էին առջև անհամար տարիներ, բիւր դարեր

իբր բոլէ մի, անցեալ, ներկայ և ապառնի իբր Հայլի կ'ընծային. մինակ շլամիտ մարդս կ'կարօտի քայլել և տեսնել ժամացոյց 'ի ձեռին և ակնոց աչքին։ Երանի թէ գտնէ այս զգուշութեամբ ուղիղ քայլէր։ Տակաւին կ'գտնուին շատ մարդիկ և ազինք որոնք տարիներ, դարեր անցուցած են, այլ դեռ տղայ են, որոց անցեալը մութ ու աղէտալի, ներկան վիրաւոր, ապագան անէութիւն է։ Ասոնք մարդկութեան հրէշներն են որ իրենց բնական ուղեցոյցէն զուրկ են և անդունդէ անդունդ կ'գլորին մինչև որ անհետանան կամ կատարեալ անասնային կեանց աստիճանին հասնին։

Այո, մարդիկ և ազինք շուքի պէս կ'սահին կ'անցնին և իրենց էութենէն լոկ ափ մի հող կ'թողուն երբ հոգեկան կեանքէն, երկնային շունչէն, որ է միայն յարատև և անմահ, զուրկ են։ Սակայն մարդկային հոգեշունչ մասը, սակայն ժամանակն անցողցող և անատան են։ Յաւիտենականութեան նկատմամբ ինչ է տարի մը, դար մը. ոչ ինչ. աննշան և անհետեթեթ չափ մը, սիսեղերական անդուլ շարժումն իրը Ճանկով կեցրնելու փորձ մը։ Փորձ մը, որ անզօր է դարձեալ մարդկային տկարութեան ակներև ցոյց տալ այն անդունդն որ էր և կայ պատմական ժամանակէն առաջ և ինչ որ պիտի լինի մեզ աներևոյթ աշխարհի մը մէջ։

Բայց ինչ կ'ըսեմ, նոյն իսկ արդի պատմութիւնն իր ժամանակագրական ձևը կ'փոխէ. պատմութիւնն որ դարաւոր սերնդոց այլ և այլ հանգամանաց համբարը կ'առանձէ մեզ, որ մեր տկարութեան նեցուկը պիտի լինի և մեր կենաց խնայական շրջանը պիտի ընդլայնէ, պատմութիւնը կ'սկսի ոչ միայն դէպք և անձնականութիւն շնանչել, այլև ժամ, ամիս, տարի, թէև այժմ մասուն ամենաչնչին իրողութիւն մը իսկոյն պատահած ժամին և վայրկենին կ'արձանագրէ։

Ինչ է այս զարմանալի յեղափոխութեան պատճառը. — Մարդկային ազգին խնայականութեան անընդհատ շարժումը դէպ յառաջ, իր անմահ Ճակատագրին, յաւիտենական Ճշմարտութեան, որ է անբաժան, դիմելու խղձն ու շարժումը, հոգեկան և մտային անասելոր լուսաւորութիւններէ նոր թռուցան, նոր ժամանակ փնտռելու հակումն, որով կ'բացատրուի, չէ թէ այս ինչ կամ այն ինչ դարու, այլ ՆԵՂԷ ՅԱՀԱՆԷՆ ոգւոյն հետևելու դրութեան իմաստը։

Բայց միտքս ժամանակս գերբնապէս լուծել չէ. գերբնականութեան մթնոլորտին մէջ թռչելու սովորութիւն չունիմ. շատ իմաստասէրներ ընկած են այն եթերական դաղաթէն, և գետնի վրայ ևս սկսեր են եռազել և վհուկի տեղ անցնիլ։ Այլ կ'ուզեմ պարզօրէն ըսել որ պատմութիւնը կ'սխալի երբ արդէն պատահած կամ պատահելիք որ և է բան իր ժամանակին յատուկ կարծելով նոյն ժամանակին թուականովը կ'յիշէ։ Օրինակի համար. կարդա՝ Պղատոն, քննէ Սոկրատէս, Պաքօն ու Քանդ։ Անշուշտ չես հետաքրքիր իսկոյն իմանալ թէ ասոնք երբ ծնան և երբ մեռան, այլ կ'գնայլիս որ ֆ-մանէլ հանճարներն ու հոգիներն են և անոնց անմահական ներգործութիւնը միտքդ և հոգիդ կ'զգայ, եթէ արդէն զգալու ընդունակ են։

Հետևապէս կան հին մարդիկ որ ներկային, ապագային մէջ, յաւիտեան կ'ապրին, ասոնք տիեզերական սեպհականութիւն են. ծննդեան և վախճանման վկայագիր չունին։ Կան նոր մարդիկ որ դիակներու հետ կ'ապրին, ասոնք դիշերասէր կենդանեաց ցեղէն են։ Ու մէկ ձեռքդ Սքէնէլ, և միւս ձեռքդ Եբէ-ի կամ Ուբլ-ոյ։ Չես փնտռեր թէ Պ. Ոսկանը քանի՞ տարեկան է, կամ Պ. Զամուրձին և Պ. Պալդազարը քանի՞ Ձերմակ մազ ունին իրենց գլխին վրայ։ Գիտես արդէն որ ամենքն ալ ժամանակակից են։ Սակայն բաղդատէ անոնց գրուածքը. հանճարի, գրչի, սկզբունքի ինչ ահագին անջրպետ կ'գտնես մէկ կողմէն Սքէնէլին և միւս կողմէն Եբէ-ին և Սքլ-ոյ-ին մէջ։ Ոսկանը քանի մը դար դէպ առաջ կ'ապրի, Զամուրձին միջին դարու մէջ, Պալդազարը քսանամեայ հնութեամբ կ'պարծի։ Արդ՝ արդի ժամանակը կամ պատմութիւնն այս տարբեր ժամանակի մարդիկն ինչպէս պիտի համաձայնեցնէ։

Ուսոի իրաւունք չունիմ ըսելու որ մարդիկն և ազգերը ներկայ թուականիս չափով չափելը յիմարութիւն է։ Անշուշտ օր մը պիտի գայ որ մարդկութեան կենաց թուականին հիմ պիտի բռնուի իրաքանչիւր ազգի բարոյականութեան, իմաստութեան և ազատութեան մէջ ըրած քայլերն։ Արդէն Ամերիկա իր ազգային անկախութեան վրայ հիմնած է իր կենաց թուականը, Գրանսա իր մեծ յեղաշրջումին մէջ, Իտալիա իր քաղաքային միութեան մէջ. հապա Հայերն ինչ բանի վրայ պիտի հիմնեն իրենց -գ-ֆ-ոյ թուականն. — Էջմիածնայ գահին վրայ։

Լ

Կ. Պոլիս, 1 Յունուար 1865։

Ընտիր Սէր։

Դեռ երէկ մտադիր էի որ 1864ի նոր տարուոյն սկիզբը զէպ ի հայրենեաց ծոյլը սրանամ, ահա այսօր ահաբեկ կ'դիտեմ որ նոր տարի մը վրայ հասած է։ Դեռ երէկ կ'ըսէի իրրովի. — Էհ, 1864ին մեռոտի բաներէ պիտի հրաժարիմ, նոր մարդ պիտի դառնամ, անձիս և սրտիս ամէն պիտի լինիմ. շահաւոր գործոց պիտի ձեռնարկեմ, ազգիս օգուտը պիտի մտածեմ. մինակ օգտակար, Ճշմարիտ, գեղեցիկ և վսեմ իրերու պիտի սիրահարիմ, և 1864 տարուոյն կամարէն զուարթագէմ պիտի մտնեմ, և ահա այսօր, նոր 1865 տարին հասած կը գտնեմ։ Ա՜հ, ինչ արագութիւն։ Եղբ՛ր. և ես տակաւին անցեալին փոշիին մէջ կ'գլգերիմ, դեռ հերուան խորհուրդներուս ստուերին հետ կ'խաղամ, դեռ ծիրանեգոյն յոյսերովս կ'օրօրիմ. բայց ինչ օգուտ։ Ժամանակը նոր տարի մ'ալ դրոշմեց աղէբեկ Ճակտիս վրայ, նոր վէր մ'ալ բացաւ սրտիս մէջ։ Անհրաժեշտ է մտնել այն դռնէն որուն Ճակատը 1865 գրուած է։ Բայց ինչ երեսով. ակնկոր, տրտում և տխուր։ Թող շնորհաւոր նոր տարի, շնորհաւոր նոր օր գոչեն բարեկամներս իմ ջրս դիս. ես որ կողմ նայիմ՝ միխիթարութեան նշոյլ մի չեմ նշմարեր։

Հոգւոյս խորը մտնեմ՝ անհնարին վիշտ, անսահման, այլ օրինաւոր բաղձանաց վիհ մը կ'տեսնեմ, վիհ մ'որ անշունչ կ'եռայ, կ'մրմնջէ զիս և էութիւնս պիտի մաշէ՝ եթէ յուսոյ և ազատութեան լոյս մը անդ չբեկբեկի։ Սկզբունքս և խորհուրդս զննեմ, կ'դիտեմ որ անընդունելի և վտանգաւոր կ'հանդիսանին, զի Ճշմարիտ և ազգօգուտ են։ Նիւթական վիճակս քննեմ՝ մատիս ծայրն այս անենչան գրիչս կ'տեսնեմ որ եթէ մրոտէ կ'շահիմ, եթէ գրէ կ'սահիմ, եթէ խօսի, ինչպէս այժմ, կ'քօղարկիմ։ Բնական անակս նայիմ՝ կ'դտնեմ որ օտարաշէն է, օտար հողի վրայ դրուեր, օտարին հոյակապ պալատին մօտ անշուք և իբր անհնար շիրիմ դարձեր է։

Հայրենեաց կենսատու արևը վնասեմ՝ կարմրագոյն և աղօտ մահիկը կ'տեսնեմ. Հայաստանի անուշ և մեղմ օդին փափաքիմ՝ Պօսֆորի կծու և սառնաշունչ քամին կ'ծծեմ։ Բարեկամի մը ղէմքն որոնեմ՝ այլադէմ և անկարեկիր երկոտանի կենդանեաց կ'հանդիպիմ. և եթէ երբեմն ինձ նման տարագիր Հայրենակցի մը սրտագին ձայնը լսեմ, սիրականի մը սիրուն ժպիտը մոլորեմ՝ սիրտս կ'պարզի յիրաւի, և պայծառ լոյս մը հոգւոյս մէջ կ'կսմթի. բայց, աւա՛ղ, այն ձայնն որ դադրի, այն ժպիտն որ անհետի՝ նորէն ամպ մը կ'պատէ աչքս, արտասուք մը կ'հոսի, և իմ տարկուիեանս դառնութիւնն և հայրենեացս տենչն աւելի ևս կ'սաստկանան։

Եթէ թափուր է հոգիս, ամայի է այս աշխարհս աչքիս, զէթ չկա՞ն ազգային վիճակ մ'որ այս գրկանքը փոխարինէ, որ մեր թշուառ սրտին սփոփում մ'ազդէ։ Այո՛, գարձեալ մնացող աչքը Հայաստանի սա ձիւնապատ լերան ստորոտն ուր կարծես թէ բնութիւնը քանի մը անակնկալներ նետեր է. բուն Հայաստանցիք կ'բնակին այն տեղ սրտմաշուք և քաղաքակրթութեան հոգերէ հեռի։ Այն տեղ կ'շարունակուի մեր նախնեաց կեանքն, այն տեղ մէն մի տան տէր իր տարեկան հաշիւն, որ մեծ չէ, բրած է, և իր կայտառ և կորովի զաւակաց և դրացեաց կ'աւետէ և կ'շնորհաւորէ նոր տարին՝ Մասեաց սարը ցոյց տալով. խաչը կ'հանէ, կ'հառաչէ և գործի կ'սկսի։ Այս մարդիկ՝ որ թերևս իրենց ապրուստին կէսը գայլերու և վայրագ գիւրաներու ձարակ տուած են, զրեթէ գոհ և ուրախ են։ Վասն զի Աստուծոյ նախախնամութեան, յաջորդ տարուան հունձին առատութեան կ'յուսան, վասն զի իրենց բնական հողին, թէև փշալից, իրենց բնական մթնոլորտին, ջրին և արօտին մէջն են։ Վասն զի իրենց հարց դամբանը քաջալերեն իրենց քրանաջան աշխատութեանց։ Ահա ասոնց համար է նոր տարին. վասն զի ասոնց սրտին մէջ կ'տիրէ և կ'զարգանայ Հայաստան։

Սակայն այսպիսի մասնակի օգուտներ բաւական են զմեզ բոլորովին գոհ ընելու. միթէ ընդհանուր ազգը համար չունի՞ տայու պատմութեան. միթէ նախորդ տարիներուն մէջ մերազգիք քայլ մ'առած չե՞ն բանի մը մէջ։

Մինչդեռ ուրիշ ազգեր՝ ի համար կ'առնուն իրենց բրած մեծագործութիւններն և իրաւամբ պարծենալով՝ նոր և բուռն եռանդով նոր

տարուան մէջ գլխիվայր կ'վազեն, մինչ հայերն ափ ի բերան պիտի նստին և քաղաքակրթութեան ասպարիզին մէջ ունայնաձեռն պիտի ներկայանան։ Մինչդեռ Անկիւրա կ'հպարտանայ որ իր վաճառքն աշխարհիս չորս կողմը կ'թափէ և ազգերու հարստութեանց կեդրոնն է, Ֆրանսա կ'գոչէ որ ինքը լուսաւորութեան ջահը մէկ ձեռքն և ազատութեան դրոշակը միւս ձեռքը բռնած՝ յառաջ կ'խիզախէ և առանց մարտի մտաւորապէս աշխարհիս կ'տիրէ, մինչդեռ Իտալիա իր հինգերեայ շղթաները խորտակելէն ետև՝ պապին աշխարհական իշխանութիւնն առաջուր կ'կոխէ, պապին, որ յուսահատական կոնդակ մը, Ճգնաժամի երևոյթ, արդի քաղաքակրթութեան երեսին կ'նետէ . . . . . : Մինչդեռ Թուրքիա երկաթուղիներ կ'շինէ, հեռագրական թելեր կ'կապէ, Սահմանադրութիւնը կ'տարածէ, արհեստ և Ճարտարութիւնը կ'քաջալերէ. Ամերիկա գերութեան աղտն իր երկրէն սրբելու համար արիւն, ստակ և խելք կ'թափէ առատ, և մահու ու կենաց պատերազմ կ'մղէ. մինչդեռ աշխարհիս ամէն կողմը, նոյն իսկ վայրագ ազգերը շարժման մէջ կ'գտնուին, սև մարդիկ անգամ, որոց Ճերմակ մարդիկ հոգի մը չէին ուզեր տալ, կ'բսէ Սօնթէրվիլէօ, կ'սկսին խորհիլ և շինել, հապա հայ ազգն ինչով պիտի փառաւորի, և ինչ արդիւնք յանդիմանն պիտի բերէ։

Մինչ Պոլսի հայը Սահմանադրութիւնը պիտի մէջ բերէ, զոր յանուն ազգին շինեց, տպեց և ծոցը դրաւ։ Սուրբ Փրկչի յիմարանոցը պիտի ցուցնէ, զոր նորոգեց, ընդարձակեց, (կարեւոր նախաձեռնութիւն) և կենդանիները ապաննեց որ յիմարներն ու մեռելները կերակրէ։ Մ—ի լրագրին մեծնալը պիտի ցուցնէ, որ մեծցաւ իրաւ՝ պաշտօնական լրագրի շուքն վախնալով։ Իզմիրի հայուն քարէ ու կիրէ շաղուած տաճարն՝ որուն մէջ փայտի կոյտ մը կանգնեց, ներկեց, ոսկեզօծեց և խաչկալի անուամբ օծեց։

Ռուսի հայն անդադար իր Լաղարեանց Ճեմարանը պիտի ցուցնէ, որ բուն ազգային չէ, իր Նալբանդեանցն՝ որ բանտի մէջ կ'հեծէ, և անոր բանտարկութեան անտարբեր կ'մնայ։ Իր Վ. Ալյմնը, որուն մասնաւոր ներկայութեան տակաւին կ'հանդուրժէ։ Թիֆլիզի հայն իր Ներսէսեան վարժարանն և Գ—ի ամսագիրը պիտի մէջ բերէ, որուն հայրենասէր ձայնին պահ մը ուշ դրաւ և տուգ խուլցաւ։

Էջմիածին իր Աթոռը պիտի ցուցնէ, որ դեռ Սահմանադրութեան ներքև չմտաւ, և անմիաբանութեան ու խառնակութեան բոյն դարձաւ։

Այս անկերպարան բաներն ինչ նշանակութիւն ունին, խնդրեմ, Ճշմարիտ յառաջադիմութեան մօտ, որով միայն կարելի է ըսել որ ազգ մ'իր ազգային սկզբանց համեմատ՝ արդի լուսաւորութեան շաւղին մէջ մտած կ'քայլէ։ Մինչ նամակիս շրջանը, մանաւանդ անկատար տեղեկութիւններս կ'ներեն հայոց այս վերջին ատեններս ըրած քայլերը, նոր տարուանս առթիւ, համբել։ Ասկից զատ՝ ինչպէս կարելի է մի տեսութեամբ ըմբռնել և օրինաւոր պատկեր մ'ընծայել այն ցիր ու ցան ու գոյնզգոյն մասերէն՝ որոնք հայկական կ'ըսուին. հայկական մասանց որ մասին յարաբերութեամբը պէտք է դատել ամբողջ մարմինն։ Ո՞ւր է անոր գլուխը, սիրտը, հոգին ո՞ւր են։ Կա՞յ արդեօք անոնց մէջ այնպիսի շնչերակ մ'որ մի և նոյն կենսական շունչն արտադրէ և բոլոր մասերը բարոյապէս մի և նոյն նպատակին դրդէ։

Ո՞ւր է այս շնչերակը. բաւէ, երևելին Պօսիւէ անդամ, որ արծուի ա՛լամբ տիեզերքը գրկել և երկու տողով մարդկային ազգի պատմութիւնը գրել կարծեց, (ըստ որում մինակ հրէիցը գրեց) եթէ արթընար և փորձ մը փորձէր արդի հայոց նշգեհ գիրքը նկարագրելու, կարծեմ թէ պիտի շփոթէր, և կութնելու կեդրոն մը 'ի զուր պիտի որոնէր։

Եւ արդարև մէկ կողմէն պօլսաբնակ հայերը կ'երևակայեն թէ մինակ իրենք կ'կազմեն հայոց ազգ բուսածը. պատճառ. Մայրաքաղաքի մը մէջ են և Եւրոպայի մօտ. միւս կողմէն Ռուսաստանի հայերը կրօնական ազգայնութեամբ կ'փքանան. պատճառ. վասն զի Էջմիածնայ մօտ են, թէև արտաքին Ճշմարիտ ազգասիրութենէ և իրենց սարաբնակ հայրենակիցներէն հեռի։ Այս կողմէն Եւրոպայի հայը կ'կարծէ թէ մինակ իրեն արուած է հայրենասիրութիւնը, պատճառ. վասն զի քանի մը գիրքերու մէջ հայու անունը կ'մրոտէ, առանց անոր ոչին, բարքը, վիճակը Ճանչնալու, այն կողմէն քանի մը գաւառաբնակ հայեր կ'պահանջեն որ հայ ըսուին, պատճառ. վասն զի կրօնափոխութեան միտում չունին և եկեղեցի ու վարժատուն մը կանգնած են։ Բայց Հայոց այն բազմահիմ մասն, այն մասն որ իր հայրենիք հաւատ-

քով բարբարական մրրիկներու Ճակատաւորեր և անշարժ ու կանգուն տեղը կեցեր է, այն մասն որ մարտիրոսաց արիւնով շաղուած հողին վրայ կ'գտնուի, այն մասն որ Հայկական հին պատմութեան, առանդութեանց, բարուց և վարուց մէջ կ'ապրի, այն մասն որ իր հարց ոսկորներուն մէջ կ'ապրի, արիւն արտասուք կ'թափէ, բայց կ'յուսայ, այն մասը վերջապէս որ Հայաստանի մէջ կ'թափառի և անոր ամայի և դամբանական վայրերն իր անապատելի հառաչքով և նահատակութեամբ կ'արդարացուցել, ահա այս հարիւրաւոր մասը բոլորովին օտար կ'երևի անոնց որոնք թէ հեռաւորութեամբ և թէ անտարբերութեամբ իրօք օտարացած են և օտար գոյներով կ'գտնեն այն աշխարհն որ իրենց ծնունդ տուած է։

Ուրեմն ուրիշ Ճար չկայ, բարեկամ, պէտք զատ զատ քննել հայ գաղթականութեանց վիճակն, և այս քննութիւնը Ճշդիւ ընելու համար, քանի որ հաղորդակցութիւն չկայ, պէտք է անձամբ պտտիլ և քննել ամեն բան։

Այս ալ առ այժմ անկարելի լինելուն կ'սկսիմ հարևանցի աչք մը նետել Պոլսի վրայ։ Արդէն գիտես որ եթէ պոլսաբնակ հայերը քանի մը դարէ 'ի վեր կենդանութեան նշան մը տուին, այս նշանն եղաւ ազգային Սահմանադրութեան հաստատութիւնը։ Շատ հայեր տոմարմամ կորան, շատերը գաղանաց հետ բնակեցան, բռնաւորներու ոտ ընկան, տարկութեան լեղի բաժակն ըմպեցին և դեռ կ'ըմպեն, հաւատքի համար նահատակ ընկան, հայրենեաց և գիտութեան կարօտ մեռան և դեռ կ'մեռնին, սակայն Պոլսի հայերը միայն ազգային Սահմանադրութիւն մը ծնան, բաւական մէՀ, կրիւ ու գոռում գոչում հանելէն ետքը։ Պոլսոյ տարաբնակ հայազգիք կանգ մ'առին լսելու համար Սահմանադրութեան ձայնն ու երգն։ Եւրոպա անգամ գովեց պոլսեցւոյն եռանդն, արիութիւնն և Ցէրութեան վերհանձնութիւնը։

Այս շքաղարդ ծնունդն, որուն վրայ նոյն իսկ ծնողը զարմացաւ և նոր ոսկեդար մ'առաջեց հայ մարդկութեան, լոյս տեսնելէն 'ի վեր ինչ ներգործութիւն ունեցաւ ազգային կենաց վրայ։

Ցաւ 'ի սիրտ կ'նկատեմ որ Սահմանադրութիւնն իր գործադրութեան շրջանին մէջ յուսալի փոփոխութիւն բերած չէ տակաւին նոյն իսկ այս տեղ։ Սահմանադրութիւնը յարգուելու ազգին տրուելէն ե-

ան՝ գործադիր յանձնաժողովը կազմուեցաւ, որ զարմանալի աշխատութեամբ թագաւորական խորհուրդներն և երեսփոխաններն ընտրել տուաւ, և իր տեղեկագիրը, զոր կարդացած ես անշուշտ, նորակազմ Ընդհանուր ժողովին ներկայացուց։ Յանձնաժողովը կ'յուսար որ իր պաշտօնը խիստ դժուարին չէ, վասն զի կ'կարծէր թէ Սահմանադրութիւնը ծնող եռանդն ու ոգին ժողովրդեան մէջ կ'տիրէին և իր անօրէնութեանց արագ դործադրութեան պիտի նպաստէին։ Սակայն փորձը ցցուց որ կ'սխալէր։ Ամէն թաղ՝ հին կուսակցութիւններ, հին ազդեցութիւններ կային, որոց զէմ մերթ հաշտարար ու մերթ սպառնական կերպով մաքառեցաւ յանձնաժողովն, և մանաւանդ անոր առնապետ Ստեփան պէյին և Մեծապատիւ Նէվրուզեան Յովակիմ էֆէնտիին հողին բերանին ելաւ մինչև որ գործն 'ի կատար հասնիցին. իսկ անմեղանելին այն է որ իրը ազգը ներկայացնող և իր Ճգանց պատգն եղող Ընդհանուր ժողովին յանձնաժողովը կէս բերան շնորհակալութիւն մը լսեց այն ժամանակ։

Ընդհանուր ժողովին առաջին գործն եղաւ կրօնական և քաղաքական Ժողովները կազմել և պատրիարքն ընտրել, որոնք Ազգին կատարեալ թեան ղեկը ձեռք առին իրենց Ճիղերը հաստատելով։

Բայց քաղաքական Ժողովն արդեամբ գործելու համար յարատեւութեան, սկզբունքի, և միաձայնութեան պէտք ունէր։ Քաղաքական Ժողովն այս պայմաններէն զուրկ էր։ Հետեւապէս առջի օրէն սկսաւ կռիւն 'ի կաղ դնալ, և թէև քանի մը կարեւոր անօրէնութիւններ ըրաւ, ինչպէս Սահմ. Ա. հրահանգը գաւառները ղրկեց, Ուլնիոյ խնդրոյն համար զողզողալով երեսփոխան մը հաստատեց, Պատրիարքարանը նորոգեց, Մուշի խնդիրը պարզեց, լրագիրները սանձել ուզեց, գաւառական եղծումներն ու երկպառակութիւններն և կրօնափոխութեան սխալը դադրեցնելու ջանաց, հրաշագործ վարդապետին հետ մաքառեցաւ, զատ զատ խնդիրներու համար մասնաժողովներ և յանձնաժողովներ կազմեց, ատպագրական կանոն, թաղական կանոն, առեւնական կանոն, ազգային տրոյց կանոն և հաշուեկշիռ պատրաստելու համար, սակայն այս որոշումներուն արդիւնքը չտեսաւ, և մէկ կողմէն իր ներքին տկարութիւնն և ազգային արդի պիտոյից և ոգւոյն անգիտութիւնը, մէս կողմէն ընդհանուր ժողովի դիւանին և Քաղա-

քանին մէջ տիրած հակառակութեան ոգին անոր կործանումը փութացուցին։ Ասոր յաջորդեց արդի քաղաքական ժողովն, որ իր նախորդին սկսածը շարունակելու և աւարտելու աշխատեցաւ և դեռ կ'աշխատի հինգ վեց ամսէ հետէ։ Այս ժողովը թէև նոր, համամիտ, եռանդուն, բայց կարծես թէ արքուն հասակին չհասած կ'ծերանայ։ իր ձիղերն իրարու կ'խառնուին, իրաւասութեան խնդիրներ։ գանձապահի խնդիր, Սահմանադրութեան անգործադրելի կէտերու խնդիր և, որ մեծն ու ահարկուն քան ամէն բան, դրամի խնդիրներ կ'ծագին և իր ընթացքը կ'վրդովեն անդադար։ Իսկ Ս. Պատրիարքն այս սահմանադրական նրբութեանց բուղին մէջ ինքզինքը փնտռելու սաեն կ'աշխատի նաև ազգին ղեկն անվրդով վարել։

Իսկ կրօնական դասն՝ այն ծոյլ ու թոյլ վիճակին մէջ կ'գտնուի որ կարծես թէ իրեն բնական և յատուկ եղած է. ժողովրդեան վրայ իր բարոյական ազդեցութիւնն օր օրի կ'նուազի, եկեղեցեաց բարեկարգութիւնն՝ որ կրօնական ժողովին միջոցաւ պիտի աեսնուէր, դեռ պիտի տեսնուի։ Ազգն՝ որ էապէս կրօնքին շնորհիւ իր ազգութիւնը պաշտպանած է և պարտաւոր է միշտ պաշտպանել, 'ի զուր կ'փնտռէ այնպիսի եկեղեցականներ որ Հայաստանեայց եկեղեցւոյ ոգւոյն և աւանդութեանց հմուտ լինին, կրօնական զգացումը սարածեն և լուսաւորեն, մեր սուրբ Հայրապետաց վարդապետութեանց Ճշմարիտ քարոզ և ուսուցիչ հանդիսանան։ Սակայն իրենց անձնական շահուն և փառասիրութեան վրայ չափազանց արթուն և հսկող են, սակայն իրենց հոգևոր հօտին մէջ կռիւ և երկպառակութիւն յարուցանելու յաջողակ. սակայն ամէն սաթիւ Սահմանադրութեան վրայ մուր քսելու գաղտնապէս տրամադիր։ Ուստի դեռ մեր կրօնականները դարուս և ժողովրդեան պիտոյքը չեն ճանչեր, դեռ իրենց սպասաւորած եկեղեցւոյն նուիրական իրաւունքը պաշտպանելու համար ոչ սրտի արիութիւն և ոչ հանճար ունին և շատ անգամ աշխարհականաց գրչին կ'կարօտին, և դեռ կ'երազին որ լուսաւորութիւնն և Սահմանադրութիւնն իրենց հոգևորական իշխանութեան թշնամի և կրօնական սկզբանց հետ անհաշտելի են։ Իսկ եթէ կրօնական դասուն այս թերութիւնը դատապարտելի, ևս առաւել դատապարտելի կ'գտնեմ այն ժողովուրդն որ իր եկեղեցւոյն արատ բերող պաշտօնեաներ եկեղեցականութեան կ'կո-

չէ, և իր ԱՆԸՆԴԷՐ ԸՆԴԵՐՁՈՒԹԻՒՆԸ և հաւանութեամբը ձեռնադրել կը տայ։

Այս երևոյթս ժողովրդեան տգիտութեան մի նշանաւոր պտուղն է։ Գէթ ժողովուրդը յաջորդ սերնդին դաստիարակութեան հոգ տարած ունի։ Գէթ սահմանադրական կեանք վարելու համար հետզհետէ պէտք եղած մտքի և սրտի հանգամանքները կ'ստանայ։ Ամենևին։ Կ. Պոլսի վարժարաններն, որ այս կրթութեան փորձաքարը պիտի լինին, ինչ որ էին ասկէ քսան տարի առաջ՝ նոյն վիճակին մէջն են և այսօր։ Այսինքն յետին ամլութեան և աղտեղութեան մէջ։ Այս տարբերութիւնը կ'տեսնուի միայն որ Ռ-ՍՍ-Ճ-Լ-Ն ԽՈՐՀՈՒՐԴ մը կայ, որ իր շինած կանոնագիրն ինք միայն կ'կարդայ։ Մի՛ կարծեր որ Պոլսի դպրոցները նիւթական միջոցներէ զուրկ են, ոչ. այլ ուղիղ տեսչութիւն և ուսմանց դիւրմբռնելի եղանակ չունին։ Արդարև մեծ ամօթ է պոլսեցոյն որ ոչ միայն այս թշուառ և խայտառակ վիճակին մէջ կ'թողու իր դպրոցները, քանի մը բայառութեամբ, այլև բարձրագոյն ուսմանց վարժարան մ'և գիշերօթիկ դպրոց մը չունի։ Ցակուին կ'զտնուին ամիրայանման անձինք որ իրենց զուտակաց դաստիարակութիւնը մասնաւոր դաստաուներու յանձնած են, կան նաև հայ մեծատուններ՝ որ իրենց որդիքն Եւրոպա կ'ղրկեն՝ հայութենէ և ուսմունքէ զատ՝ ամենքան ուսնելու։ Պոլսեցին կ'դողդողայ քանի յիշէ Իւսկիւտարի ՀԵՄարանն և Բարիզի իրը-ազգային վարժարանն, որ իրօք Այվազեան վարդապետին փառասիրութեան խարխուլ կոթողն եղաւ և վարդապետի մը սիրահարութեանց ասպարէզն և պատկն։ Ուստի ընկերութեամբ վարժարաններ հաստատելու երազն ազամ՝երը տեսնէ տեղւոյս հայը՝ կ'այլայլի և երեսը խաչ կ'հանէ։

Իսկ անոնք որ Պոլսի վրայ աչք տնկած կ'ապասէին լոյս, յառաջադիմութիւն և տառապանաց վախճան, անոնք որ Սահմանադրութեան հաստատութեամբը կ'յուսային որ իրենց բարոյական և նիւթական աղետից դարման պիտի գտնեն, գաւառաբնակ հայերն ի՞նչ օր տեսան։ Ցաւին գաւառաբնակ հայերն երեսփոխան մը չունին այն ժողովին մէջ որ Ընդհանուր կ'ըսուի, թէև իրօք պոլսական հայոցն է. դեռ հազիւ թէ տեղ տեղ քանի մը թաղական խորհուրդներ հաստատուեցան, Աստուած գիտէ ի՞նչ կերպով։ Դեռ հին իշխաններ, որ միշտ առաջնոր-

գայ հետ գաղանի յարաբերութիւն ունին, կոխ հանելու, կրօնափոխութեան և երկպառակութեան որոմ ձգելու եռեռ են, դեռ առաջնորդներն իրենց անձնական հանգստութեան և մինակ եպիսկոպոսութեան ատոնման ստանալու կ'խորհին, և այս պայմանաւ միայն շատերը յանձն կ'առնուն առաջնորդ լինելու. դեռ դրսի ժողովուրդն ազգային կրթութիւն ինչ է չգիտէ և մինակ առ այժմ սա միխիթարութիւնն ունի, որ երբ յան մը զգայ կ'բողոքէ և իր բողոքը մինչև հոս կ'հասնի, և հոս կ'գտրի շատ անգամ անարդիւն, մինչդեռ ատեն մ'իր ձայնը մինակ ինքը կամ վայրի գազանները կ'լսէին . . . . :

Գիտեմ որ անիրաւութիւն է չափազանց պահաջող լինելը: Պէտք չէ Սահմանադրութեան առաջին քայլերը խստիւ դատել և ամեն բան դեռնէ դեռին զարնել: Բարեկամդ այդպիսի վհատեցուցիչ դրութեան թշնամի է: Բայց չեմ կրնար նաև առանց նշանակելու անցնիլ այն անտարբերութեան ոգին որ կ'տիրէ ազգայնոց մէջ: Ըստ որում այս ոգին ոչ միայն Վարչութեան և Սահմանադրութեան գործը կ'ջլատէ, այլև առնով ամեն արդիւնաբեր խորհուրդ իր շեղած կ'վիժի: Ժողովուրդը կարծեց թէ ամեն բան կատարած է Վարչութեան ընտրութիւնը կատարելով՝ և սկսաւ հեռուէն դիտել թէ նա ինչ շնորհքով պիտի շարժի: Երբ տեսաւ որ իր ընտրած Երեսփոխանութիւնն իր պաշտօնն ըստ քմայ և դժկամակութեամբ կ'վարէ, և իրեն վերաբերող խնդիրները լուծելու համար տասն անգամ հրատիրուելէն եռեռ՝ մէկ երկու անգամ հազիւ կ'գումարուի մեծաւ մասամբ, երբ տեսաւ որ երեսփոխաններէն ոմանք մինակ անուամբ երեսփոխան են, և եթէ կամին կրնան բնաւ նիստ չկազմել տալ և Սահմանադրութեան գործադրութիւնը վտանգի մէջ դնել, երբ տեսաւ որ քաղաքական և կրօնական ժողովները կարծ 'ի կաղ կ'քալեն և ազգային գործերն ընդհանուր բարեկարգութեան մէջ մնած չեն, կռնակը դարձուց ու ըսաւ. «Էս այս Սահմանադրութենէն բան մը չհասկրցայ:» Հարկաւ չպիտի հասկրնաս, ով բիտամիտ հայդ, քանի որ կ'դժկամակիս քու պարտքդ ճանչել և Վարչութեան տկարութեան պատճառն իմանալ: Վարչութիւն մ'իր զօրութիւնը ժողովրդեան վստահութենէն կ'ստանայ, նա մանաւանդ առանց Վարչութիւն մ'որ բարոյապէս կ'իշխէ և որուն պաշտօնը լոկ անձնուիրութեան և պատուոյ վրայ հիմնեալ է: Եսկէ զատ՝ անհնար է ամեն բեռ

Վարչութեան ձգել։ Անհատական և ընկերական աղգօգուտ ձեռնարկութիւններ ալ պէտք են որ նպաստեն ընդհանուրին յառաջադիմութեան. վայ այն աղգին որ ապիկար աղու մը պէս կ'սպասէ որ Վարչութիւնն իր ձեռքէն բռնէ քալեցրնէ։ Այնպիսին միշտ անդամալոյծ պիտի մնայ եթէ իր բնական լոյսին և աղատ կամքին թելադրութեանցը հետևելու չսովորի։ Որդարև կան այս տեղ քանի մ'ընկերութիւններ՞ որ'զեռ հոգի կ'տան կ'առնուն, կան նաև քանի մը մեծատուններ և վաճառականներ, որոնք կ'բարձրանան, քանի որ հասարակ ժողովուրդը նիւթապէս վար կ'իջնէ, կան քանի մը պաշտօնական բարձր մարդիկ որ իրենց պաշտօնական զգուշաւոր ոճը չեն կրնար միշտ յարմարցընել աղգային պարզ ու ջերմ ոճին, քանի մը վարպետ բժիշկներ, որ աւելի կ'մտածեն նիւթական հիւանդութիւնները բուժելու, քան թէ աղգին բարոյական վէրքերը, քանի մը հանճարեղ վեղարներ, որ ժողովրդեան մէջ և տաճարին ամպիոնին վրայ իրենց հանճարներուն հանելու արիութիւնը չունին, կան քանի մը պարբերական թերթեր որ չծնած կ'մեռնին, ինչպէս ամեն թերթ. սակայն ո՞ւր գտնել պէտք է Հայաստանեայց եկեղեցւոյ պարծանք, աղգային դրականութեան, պատմութեան և դաստիարակութեան նոր նոր արդիւնքներ ծնող գլուխներ, ո՞ւր փնտռել պէտք է հայ քաղաքագէտներ որ Աղգին համար խորհին և անոր ապագայ անդորրութեան Ճանբայ մը յարդարեն, ո՞ւր, աղգասէրներ, որ աղգին համար զոհ չխնայեն . . . . ո՞ւր . . . . ո՞ւր . . . . ո՞ւր . . . . . :

Ահա այսպէս ո՞ւր, երբ, ինչպէս գոչելով մեր աղգային կենաց վերայ կ'ողբանք, և եթէ երբէք օր մը գայ որ աղգը Ճշմարիտ ցնծութիւն մ'զգայ, հաւատի եղիր, բարեկամ, որ այն օրը միայն նոր տարի և նոր գար մ'է աղգին համար։

Ը.

Կ. Պոլիս 186...

Ազնիւ Օրպել,

Անշուշտ պիտի գիտնաս որ ազգին մէջ Տիգրանեան Մկրտիչ անուն վարդապետ մը կայ, որ արդարև հրէշ մը և 'ի վեր քան զհրէշ հրեշ մ'է։

Այս վարդապետն, ինչպէս ասկէ մէկ քանի տարի առաջ, հիմա հիւանդին բուժ, անդամալուծին շարժում, կոյրին լոյս չտար, Քրիստոսի հետ բան գործ չունի, հոգևոր պաշտօն չկատարեր, այլ դևերու հետ կ'բանակցի և յանկարծ այս օրերս ազգային Քաղաքական ժողովը դիւահար ըրաւ և գրեթէ դէպ 'ի կործանում դահավիժեց։

Նա որ Քիւրտիստանի առաջնորդ և իր վիճակը լուսաւորելու համար քերական մը շինած էր, կ'ամբաստանուի իրը գող, կաշառակեր և ուխտադրուժ և խաւն ժողովին օրովը Կուսց անապատը վճռարար յաքսոր կ'գատապարտուի։ Այս վճիռը Բ. Դրան միջոցաւ 'ի գործ չդրուած՝ ինքը կ'վազէ դէպ 'ի Կովկաս, կ'աշխատի Կաթողիկոսէն եպիսկոպոսութեան աստիճան յափշտակել, ու երբ չյաջողիր՝ Կովկասու փոխարքային աղերս կ'մատուցանէ և կ'առաջարկէ որ Միջագետաց մէջ ռուսի հիւպատոսներ հաստատուին։ Եւ մինչդեռ Կաթողիկոսը Տիգրանեանի դէմ շանթեր կ'արձակէ և զանի պատժապարտ և առաջնորդութեան անարժան կ'հրատարակէ յատուկ կոնդակաւ, և ահա Տիգրանեանը կայծակի պէս Կարին կ'ինչնէ և գատնուկի անմեղութեամբ հարցում կ'ընէ կեդրոնական Վարչութեան թէ իր նկատմամբ ինչ որոշում ըրած է, և թէ իր ընթացքն որ կողմը դարձնել արժան կ'տեսնէ։

Ազգային արդի Վարչութիւնն առ ահի ինչ ընելիքը չգիտէ, կ'վարանի. այս փորձանքն իր գլխէն վանել կ'ուզէ, սակայն կ'տիպոսի Կարնոյ կուսակալին գրել որ զանի վար դնէ, արգիլէ։ Այս գիրը Կարին չհասած նոյն ինքն Տիգրանեան Կոստանդնուպօլիս կ'հասնի անվեհեր, գատաց կուսակալներէն առած յանձնարարական գիրերը կը

շալկէ և Հանկատոր բաց շիտակ Բ. Դուռը կ'երթայ և սիրալիր ընդունելութիւն մը կ'գտնէ։ Այս բաւական չէ, Բ. Դուռը կրկին կրկին պատուէր կ'գրէ Պատրիարքին որ Տիգրանեանին չէ թէ միայն մագին շղթին այլև պատոյ և փառաց հասցընեն։

Մէկ կողմէ ռամիկին իր հրաշագործ վարդապետը տեսնելուն կ'երկրի և իր հրաշագործութիւնները շարունակել կ'աղերսէ, միւս կողմէն պաշտպաններն անոր չորս դին ամուր շրջան մը կ'կազմեն և «Քաջացիր, վարդապետ, եթէ քեզ ինչ մը հասցընեն ամէնքս կոթողիկ կը լինինք» կ'ըսուան։ Տիգրանեանն անոնց պարզմտութեան վրայ կ'ժպտի և Ես դատ կ'ուզեմ, կ'ըսէ։ Իսկ կրօնական ժողովն, որ առաջին դատախազն էր, այնպիսի զօրաւոր պաշտպանութեան առարկայ եղող վարդապետի մը դատաւոր կանգնելու շյանդգնիր և ծիծաղելի դրութեան մը մէջ կ'գտնուի։ Մերթ կ'փրփրի, կ'բողոքէ որ Բ. Դուռն առաջնորդաց գործին կ'խառնուի, իր իրաւասութեան կ'դպչի, դատի տակ եղող վարդապետ մը կ'պաշտպանէ, մերթ վարդապետին դատը տեսնելու և բացարձակ վճիռ մը տալու կ'դողդողայ։

Ի վերջոյ Վարչութեան կողմէ կազմուած յանձնաժողովի մը Տիգրանեանն անպարտ կ'դատի. Վարչութիւնն այս դատաստանը թերի կը գտնէ. կրօնական համագումար ժողով կ'գումարուի, այս ալ քիւրտ վարդապետը Թրմիլ կոչուած վանքին խորշը վանահայրութեան դրկել կ'ուզուինէ։ Կ'ճնար վարդապետին քաղաքական գործերը քննել։

Ահա այս միջոցին Տիգրանեանին մէկ խաղն երեւան կ'ելնէ։ Բ. Դուռն ուշիկ իմանալով որ Տիգրանեան վարդապետ մը ռուսի հիւպատոսի խնդրոյն համար Կովկաս գացեր է, կ'հարցնէ Պատրիարքին թէ ո՞ր Տիգրանեանն է այն։ Պատասխանը յայտնի էր, և հետեւապէս Բ. Դուռն իր գրած յանձնարարական գիրերը կ'ղրէր։ Սակայն այս յետոյ կոչման վրայ քաղաքական ժողովին մէջ մեծ փոթորիկ մը կ'բրդի, ինչպէս որ ստոյգ աղբիւրէ իմացած եմ։ Մէկ մասն, որ 'ի բնէ անտի Տիգրանեանը՝ բոլոր ուժովը թէ ժողովին մէջ և թէ Բ. Դրան առջև կ'պաշտպանէր, կ'պնդէ որ այս վարդապետին 'ի քաջաս պատասխան մը շարուի, այսինքն պաշտօնական ստութեամբ գործը պարարկուի, և ըստ ոչ ալ կ'լինի որ [illegible] թէ որ Վարչութիւնը հաստատէ որ վարդապետն ինչպէս ազգին՝ նոյնպէս իր գործերովը Տէրութեան առ-

ջև կասկածաւոր մարդ է։ Միւս մասն, արդարութեան և ազգային իրաւանց թեկն կեցող մասը՝ պատեհ առիթ է կ'ըսէ ազգ առնել Բ. Դրան որ այսուհետև առաջնորդաց վրայ վճռական անօրէնութիւն մը չընէ առանց Պատրիարքարանի կարծիքը ստանալու, ինչպէս որ նոյն իսկ պատրիարքական հրովարտակն ալ կ'տրամադրէ, և թէ ինչպէս Տիգրանեանի գործին մէջ խարուած է, կրնայ նաև ուրիշ պարագաներու մէջ ալ խարուիլ, մի միայն կուսակալաց խօսքին հաւատ ընծայելով։

Բ. Դրան ի՞նչ տեսակ պատասխան տրուելու չգիտեմ, միայն սա գիտեմ որ այս վիճաբանութիւնը պատահած օրէն 'ի վեր ժողովին մէջ տիրած անհամաձայնութիւնը գժտութեան դարձաւ, հրաժարական հրաժարականի յաջորդեց և ըստ երևոյթին թէ Տիգրանեանի և թէ ուրիշ ծանր խնդիրներու պատճառաւ, զորս ուրիշանգամ պիտի յայտնեմ, քաղաքական ժողովին բանը պիտի բուանի։

Ժողովականաց մէջ սկզբունքի, կարծեաց տարբերութիւնն այս անգամ աւելի բացայայտ կերպով երևան ելաւ։ Մը ժողովականն ազգին օգտին, Սահմանադրութեան և արդարութեան, որն իր անձնական շահուն, որն արտաքին գաղտնի ազդեցութեանց ծառայելը զգալի եղաւ այս պարագայիս մէջ։ Արդէն ժողովին հիմն խարխուլ էր, զայն ընտրող ոգին մոլար, զանի կազմող տարերքն անհամաձայն և հարկաւ օրին մէկը պիտի փլիլէր։

Տիգրանեան վարդապետին խնդիրն՝ անոր շէնքին անկիւնաքարը տեղէն խախտեց և կ'սեսնես, բարեկամ, որ այս վարդապետը յանիրաւի ամբաստանուած չէ իրրև հրաժարած։

Թ.

Կ. Պոլիս, 7 յունուար 1865։

Աղնիւ Ծ-ին,

Այսօր ընակած Թաղիս Թաղական խորհրդէն նամակ մը ստացայ որով կ'հրաւիրուիմ քաղաքավարութեամբ՝ որոշել իմ կարողութեան

չափն և տալիք ազգային տրոյ դումարս տորագրել։ Դիտելի որ նա-մակին մէջ տաս աստիճան կայ, որուն մեծագոյնն է 500 դրուշ և տորնագոյնը 5 դրուշ։

Մէկ կողմէն Սահմանադրութեան 90դ յօդուածին համեմատ՝ պարտաւոր եմ, ըսի իւրովի, ազգային ընդհանուր ծախսոց տրօք մասնակցիլ։ Այս տուրքը չէ թէ իրր Դ-Ռ-Դ կամ ողորմութիւն պիտի տամ, ինչպէս որ Ժ-մ-Ն-ն հանդէսն և մինչև անգամ Մ-Ն-ն անգիտաբար կը գրեն, այլ իրր դ-ր-ի մնագիւր պիտի վճարեմ այն ընդհանուր ծառայութեան փոխարէն զոր ազգային Վարչութիւնը կ'հաստատեցանէ կամ կատարել կ'տայ իմ տեղս գիւանական գործոց, վարժարանաց բարեկարգութեան, հիւանդանոցի մաստակարարութեան համար։ Մինս կողմէն մնածելի և տեսայ որ առջևս կեցած տրոյ աստիճանաց ցուցակը զիս իմ պարտքէս կ'ազատէ և անկարողութեան վիճակի մէջ կ'ենթադրէ անդէս։

Եւ ինչ պատճառաւ։ Վասն զի թէ որ՝ Սահմանադրութեան 90դ յօդուածին համաձայն՝ բաշխման հիմ պիտի բռնուի իւրաքանչիւր անհատի կարողութեան չափն և ասոր վրայ տրոյ համեմատութիւնը պիտի հաստատուի, վասն զի թէ որ այսօր մէկ միլիոն դրուշ տարեկան եկամուտ ունեցող հայ մեծատուն մը՝ մեծագոյն աստիճանը՝ հինգ հարիւր դրուշ կ'վճարէ, այն որ քսան և հինգ հազար դրուշ եկամուտ ունի, պիտի վճարէ տասն երկու ու կէս դրուշ տուրք, իսկ ես որ խիստ փոքր վաստակ մ'ունիմ՝ ըստ արդարութեան՝ փուլ մ'անգամ չվճարելէն զատ, պէտք է որ Հ-Ռ-Հ-Դ-Ի Ի-Ր-Ա Դ-Ռ-Ն Վարչութենէն, հետևապէս այս բաշխումը թիւր, սահմանաւոր է, և արդարութենէ և համեմատութենէ, որ բաշխման առաջին պայմաններն են, զուրկ է։

Այս պարզ դիտողութեամբ Թաղական խորհրդին նամակն ետ ղրկեցի։ Թաղ. խորհուրդն իւրաքանչիւր աստիճանի առջև ֆ-ռնէ բառն, որ մուցուեր է եղեր՝ աւելցնելով՝ վերատին հրաւէր կարդաց որ տուրքս որոշեմ, այս անգամ ապատնալով որ եթէ հինգ տուր մէջ իմ որոշումս չյայտնեմ, ինքը վճռաբար իմ տեղս պիտի որոշէ։ Թայց, ըստ իս, ֆ-ռնէ բառը խնդիր չլուծեր, ֆ-ռնէին շնորհիւը հաստատելիք դրամն իրր Դ-Ռ-Դ պիտի համարուի։ Արդ ես նպատակ չեմ ուզեր տալ՝ այլ կ'ուզեմ ճշդիւ ինձ ընկած տրոյ բաժինս Սահմանադրութեան --

ՁՈՒԸ հասուցանել։ Թող ուրեմն իմ կարողութեանս չափովը պարտքս որոշելու համար օրինաւոր բաշխման ցուցակ մը ներկայացնեն ինձ։

Բայց Թաղ. խորհուրդին նամակը մէկի ձեռքով ազգային տրոց խնդրոյն վրայ խօսինք։

Ազգային ՀՈՒՐՔ ըսուածն իր սնտեսական իմաստին և գործադրութեան նկատմամբ զլխովին նոր բան մ'է ազգին համար։ Ամիրայական շնորհներ. կամաւոր նուէրներ, մասնական նպաստներ, զորս երբեմն ՀՈՒՐՔ դրութիւն կ'անուանէին, եղած են մանաւանդ ազգային հիւանդանոցի մատակարարութեան համար, սակայն այն լուման զոր մէն մի անհատ պարտաւոր է տալու ազգային Վարչութեան իր կարողութեան և վայելած պաշտպանութեան համեմատութեամբ, այն հանգանակութիւնն, որով միայն կարելի է ըսել թէ ժողովուրդ մը իր ընդհանուր պիտոյից հոգը կ'զգայ, Սահմանադրութեան հետ երևան եկաւ։ Վասն զի կառավարութեան ղեկը ժողովրդեան ձեռքն անցաւ։ Ուրիշ ազգեր դեռ իրենց ընկերական ապատութիւնը չգտած տաժանելի տրոց լծին տակ կ'հեծէին և շատ մը Եւրոպական, մանաւանդ Ամերիկեան քաղաքական յեղափոխութեան զլխաւոր շարժառիթը տրոց ծանրութիւնն և անիրաւ բաշխումն եղած է։ Գուեհիկը միտակ կ'վճարէր կառավարութեանց և իշխանաց շուայլութիւններն և յիմարութիւնները, կղերն և ազնուականութիւնը զերծ էին տուրքէ։

Ընդ հակառակն՝ մեր ազգն իր միապետական իշխանութեան ժամանակ աղաղ էր տալ կամ չտալ որ և է նպաստ. ըստ որում՝ ժամանակին ամիրապետը կամ իշխանապետն անոր վարչական պիտոյքը կ'հոգար այն պայմանաւ որ իրենց արձակած օրէնքն՝ որ բուռն և ստէպ ազգակործան էին, իրը պատգամ ընդունին ոսկիին վաւերելովը։ Բայց քանի որ հիմա ոսկին, որ զօրութիւն մ'է, չէ կառավարողն, այլ քուէն կը տիրէ, քանի որ ժողովուրդն իր իրաւանց տէր և երեսփոխանաբար իր ընդհանուր պիտոյիցը հսկող, մատակարար ու տնտեսն եղաւ, բնականապէս չկրնար այս ինչ ամիրայից, որ թէև արդէն սպառած են, և այն ինչ բարերարաց, որ լոկ անունն ունին, ձեռք կարկառել ու մուրալ։ Սահմանադրական ժողովուրդ մը, որ միշտ հարուստ է երբ կամի, շողոքորթել, շոյել և քծնիլ չգիտէ, իր իշխանութիւնն արժանաւոր վարելու համար իր քսակէն կ'հայթայթէ այն դրամական միջոց-

ներն որ Վարչութեան անհրաժեշտ կարևոր են, և չուզեր ու չկրնար ընտել իր իրաւունքն այն անձերու որ մէկ ձեռքով կ'շնորհեն՝ միւսով կը կապտեն, մէկ անգամ կ'շինեն, տաս անգամ կ'կործանեն և ժողովրդեան հատած նուաստութեան վրայ գաղտնի ցնծալով՝ Սահմանադրութեան իշխանութիւնը ծաղր ու ծանակ կ'ընեն։

Ուրեմն Սահմանադրութեան հաստատուելէն 'ի վեր՝ ազգային ելից ու մուտից վիճակը քննելու, տարեկան բացը գոցելու և նոր նոր պիտոյից դէմն առնելու համար կ'տեսնես որ ազգային ընդհանուր տրոց խնդիրը մնաւորապէս առաջին անգամ կ'ներկայանար, և օրինաւորապէս զայն լուծելն անհրաժեշտ էր։ Բայց արի տես որ տասն անգամ այս խնդիրը լուծելու ելան, տասն անգամ անլուծելի մնաց և վերջապէս ասկէ եօթն ութ ամիս առաջ՝ Ընդհանուր ժողովով եղած կրտալից որոշման համեմատ՝ ազգային Վարչութիւնը տուրք մը հաւաքելու վրայ է և դեռ պիտի հաւաքէ։

Արդէն գիտես որ տրոց յանձնաժողով մը, որուն անդամները հաշուապէտ, մնաւորապէտ և ձեռնհաս անձեր էին, այն ատեն տեղեկագիր մը շինեց։ Այս տեղեկագիրն 300,000 ղրուշի մօտ ազգային բաց պարարք կ'ցուցնէր, զոր գոցելու համար ալ քանի մը միջոցներ կ'ցուցնէր։ Նոյնպէս կ'ըսէր թէ՝ կեդրոնական մնաւուկը, հաստութիւն և ծախուց հաշուեկշռին նայելով տարեկան 350,648 ղրուշ բաց կ'ընծայէ միշտ, 322,004 ղրուշը հիւանդանոցին, և 28,614 ղրուշը պատարիարքարանի, և առ այժմ ասոնք ծախուց երկու աղբիւրներ են, կ'վերաբերին։ Այս հին դրութեան վրայ կեդրոնական մնաւուկին բացը գոցելու համար յանձնաժողովը՝ կծծի մարդու պէս՝ ազգային տուրք հաստատելու միջոցը ձեռք կ'առնու և կ'հաստատէ ենթադրութեամբ և շինած բաշխման ցուցակին համաձայն թէ 400,000 ընդհանուր տուրք բաւական է։ Քաղաքական ժողովն այս տեղեկագիրը, զոր հոս քննելու միտք չունիմ, ինչպէս որ է՝ Ընդհանուր ժողովին ներկայացուց։ Ընդհանուր ժողովը զայն թերի, անկատար, մնացին և անոր հաշուեկշիռը (budget) սահմանադրական պիտոյից անհամեմատ դատեց ու մերժեց։ Քաղաքական ժողովն ալ, որ մոռցեր էր թէ իր պարտքն է ըստ 92դ յօդուածոյ Սահմանադրութեան տրոց բաշխման և հաւաքման եղանակն որոշել և ուղղակի Ընդհանուր ժողովին վաե-

բացման ներկայացնել, իր կողմէն երկրորդ անգամ տեղեկագիր մը շինեց որ առաջնոյն կրկնապատկութիւնն էր։ Այս ալ մութ, զատ զատ պիտոյից և ծախուց վրայ պէտք եղած բացատրութիւններէ զուրկ, համառօտ և վճռական դատուեցաւ։ Ի վերջէ Ընդհանուր ժողովոյ դիւանը տրոյ հաստատութեան առաջարկութիւն մը մատոյց Տօքտոր Ռուսինեանի միջոցաւ, որուն այն ինչ մէկ մասն ընթերցաւ և ահա Ընդհանուր ժողովին մէջ փոթորիկ մ'էր բրդաւ։ Ցանձնաժողովն իր, Քաղաքական ժողովն իր տեղեկագրին ախոյեան կանգնեցան, տրոյ խնդիրն, ազգին օգուտը՝ կրից և հակառակութեան վայնասունին մէջ անհերևոյթ եղան և Ընդհանուր ժողովն ալ կարճ կապելու համար ընդունեց որ ազգային տուրքը 400,000 ղրուշ լինի։ Իսկ բաշխման և հաւաքման եղանակին վրայ, իսկ ազգային ծախոց և պիտոյից օրինաւորութեան կամ ապօրինաւորութեան վրայ ինչ որոշեց չգիտեմ։

Արդ՝ մէկ կողմէն ազգային տրոյ մասին եղած անորոշ որոշումները, միւս կողմէն հասարակութեան տուրք տալու մասին ունեցած վարկի անվարժութիւնն և փոքր ինչ դժկամակութիւնն և այս դժկամակութիւնն արդարացնելու համար պատրուակ մ'որոնելու ետանդն ազգային երևմտական գործերն անել վիճակի մը մէջ ընկղմեցին։ Իսկ Վ–ր–ֆ–ն տրոց խնդրոյն միտակ անձնական կողմը, միտակ երևոյթը նկատելով, անոնց դասման և հաւաքման մասին ծագած դժուարութեանց միտակ պատճառ կ'ըսնէ ազգային պարապ մնաց մը գանձապահին փծուն դատը։ Ճեռնարկան խորհրդոյ և երևմտից հոդաբարձութեան մէջ ծագած իրաւաբութեան խնդիրն և վերջնոյն վրայ եղած անվստահութիւնն։ Եւ այս նկատմամբ միայն թերևս հրամուի եթէ Վարչութիւնը ստակ չկարենայ հաւաքել, վասն զի իր նկատումը ստուգուած պիտի տեսնէ, թէև մոռցած է, կարծեմ, որ ինք՝ իրը ազգային երևոփոխան՝ բողոքած է Ժողովին մէջ որ տրոյ մասին եղած ապօրինաւոր որոշումն ինքնին անգործադրելի է։

Սակայն արդի երևմտից հոդաբարձութիւնն՝ որ միտակ պատասխանատու է Քաղաքական ժողովին՝ այսօր կայ վաղը չկայ։ Գանձապահին դատը կ'տեսնուի կ'անցնի։ արդի վարչութիւնն ալ քանի մը ամսէն կը դադրի և դարձեալ որոշուած 400,000 ղրուշէն հանուի թէ փոքր մաս մը մնալիք պիտի մնայ, քանի որ տրոց խնդիրն անլուծանելի մնայ և պիտի մնայ յաւիտեան եթէ այս բաղին մէջ անդադար մոլորի։

Ազգին մէջ կան մարդիկ որ սահմանադրական վարչութիւն վայելել չուզեն առանց անոր պահանջած պարտաւորութիւնները կրելու. կան այնպիսիներ որ կ'փափաքին Սահմանադրութեան գահակից հին ազնուապետութիւն մը տեսնել՝ որ ազգին դրամական նեղութեանց 'ի պահանջել հարկին օգնեն. կան նաև այնպիսիներ որ հին վարչական դրութեան նախապաշարումներով այնպէս տոգորուած են որ սահմանադրական դրօշակով միապետական հրամաններ, վճիռներ կ'արձակեն, անխորհուրդ անօրէնութիւններ կ'ընեն և ազատ վիճաբանութեան և քննադատութեան թշնամի են։ Այս վերջին դասէն ծնած է Ընդհանուր ժողովին մէկ մասն, որ մինչև անդամ այս պարագայիս մէջ ազգային տուրքը խարխուլ հիման վրայ հաստատեց. և թերևս ներքին նկատմամբ, որպէս զի դրամական դժուարութիւնները Սահմանադրութեան ընթացքը խանգարեն և իրաւունք մը տանեան ըսելու. «Սուտակ չկայ. Սահմանադրութիւնն ի՞նչ կ'արժէ։»

Այսպէս Ընդհանուր ժողովը տուրքն ըստ օրինի և արդարութեան հաստատելու վրիպեցաւ իր առաջին քայլին մէջ՝ այսպէս մինչդեռ ուրիշները գժկամակութենէ կամ խուվասիրութենէ տուրք չվճարելու համար դժուարութիւններ կ'հանեն, ես մինակ արդարութեան համար կ'խօսիմ և տրոց արդի դրութիւնն իմ վրաս փորձելով անբաւական, անիրաւ, անօգուտ և մոլորական կ'գտնեմ։

Սակայն ի՞նչ է ազգային տուրք, եկ ու մտիկ հաշուեկշիռ, իրաքանչիւր անհատի դրամական պարտաւորութիւնն ու ազգային Վարչութիւն, ուրիշ անդամ ատիճ պիտի ունենամ բացատրելու։

Ժ.

Կ. Պոլիս, 3 Դեկտեմբեր 1865.

Զարմանալի կարգայի իմ Ի. Նամակին տեղ սա Ծանօթութիւնդ.
— Լօմենեարդ Նամակը տպարանէն մերժուեցաւ։
Ի՞նչ, Լօմենեարդ Նամակս տպարանէն մերժուի՞, մէջը խաղայ։ Ե.

ինչ իրաւամբ. վասն զի տպարանը մերժեր է։ Գեղեցիկ պատճառ։ Բայց մամուլն ինքնին դատողութիւն չունի, կամք չունի, ձայն չունի, բայց մամուլը կարող չէ ասել, ինչպէս որ երբեմն Ծ-ԷՒՒՊ կ'սխորժի դիտել, թէ Վրոյրն այս ինչ կիտի մէջ կ'սխալի և թէ այս անգամեայ բոլոր նամակը սխալական է։ Տպարան բաւական անբան գործի մ'է, կը շարժի երբ շարժես, կ'տպէ երբ բանի մը տառերն իրարու մօտ շարես։ Ինչ որ է բերանը բանականին, նոյնն է և մամուլը գրաւոր բանին. մին կ'խօսի, միւսը կ'գրոշմէ մեքենապէս։ Եւ ասոր ապացոյցն է նոյն իսկ սա տողն որ Ծ-ԷՒՒՊ ասորատը գրուած է։ — Տպարանը պատասխանատու չէ հանդիսիս պարտականութեան։ — Ինչ հակասութիւն։ Եթէ տպարանը պատասխանատու չէ (և իրօք չէ կարող լինիլ) ինչո՞ւ կ'մերժէ տպել այն բանը զոր իր պաշտօնն է տպել. ինչո՞ւ մէկ կողմէ կ'մերժէ միւս կողմէ ես պատասխանատու չեմ, կ'ըսէ։ Մինթէ հնարին է համարատու ճանչել այն բանն որ զուտ նիւթ է։ Պատժել սուրն, որովհետև մարդ կ'սպաննէ. ծեծել այն քարն, որովհետև ոտքիս կ'զարնէ. խորտակել այս մամուլն, որովհետև Վրոյրին Ը նամակը կ'տպէ, լոկ յիմարութիւն է։

Նիւթին շարժումն ձև տուողը մարդս է։ Մարդս երբ կամի՝ պողպատը սուր կ'լինի, քարը՝ տուն, երկաթը՝ մամուլ, որոց իւրաքանչիւրն իր յատուկ պաշտօնն ունի։ Ընդ՝ երբ սուրը կ'վիրաւորէ՝ սուր շինողը չպատժուիր, այլ զայն գործածողն, երբ այս տունէն քար մը գլխիս ընկնի՝ քարհատը չպատժուիր, այլ ճարտարապետն. երբ մամուլը տպէ՝ տպողը չպատժուիր, այլ գրիչը։

Ուրեմն աւելի յարմար կ'թուի ըսել որ անխօս տպարանը մերժած չէ իմ Ը նամակս, իմ սիրական գոհարս, այլ նոյն իսկ տպագրիչը։ Սակայն տպագրիչն ինչ կանոնեց դատաւոր և քննիչ իմ գրչիս։ Ինչ է տպագրիչի գործը։ Մամուլին շարժման հսկել որ ուղիղ շարէ և տպէ այն գիրն որ ուրիշին գլխին ընտիր կամ վատ արտագրութիւնն է։ Այս պարագայիս մէջ տպագրիչը չզատուիր տպարանէն, տպագրիչ և տպարան գրեթէ համանշանակ են, տպագրութեան շնչաւոր և անշունչ տարրերն են։ Ուստի այն գլուխը միանակ դատապարտելի է որ իր գրչին կ'ներէ օրէնքին արգիլած բանը գրել։ Բայց բունէ թէ տպագրիչ մը քննութեան արտօնութիւն ունենայ։ Ինչ պայմաններու կարօտ է այս

պաշտօնը իրենի և արդարութեամբ 'ի գործ դնելու։ Պէտք է որ էա՜
պէս անվրիպելի լինի. աշխարհիս բոլոր ուսմանց, դիտութեանց և
արհեստից հմուտ գլուխ մի, և խնամատեսութեան ու առաքինութեան պսա-
կը լինի, պէտք է որ հին և նոր պատմութեան փոշին մաղած, համայն
ժողովրդոց բարքն ու վարքը խառնած, ամէն իրողութիւններու իլիկը
ծլիկը քննած՝ և ապագան արծուի սկամբ զուշակող անհասանելի
հեղինակութիւն մը լինի։ Եթէ այս պայմաններէն զուրկ է, անիրաւ
է անոր կարծիքն, ապօրինաւոր և վնասակար է անոր վճիռն, երկդիմի,
բռնական և անընդունելի է անոր պատգամը։ Վասն զի ուրիշի
պէս կրնայ նա ևս վրիպիլ։ Այսպիսի հեղինակութիւն մ՚անելուր և
անդիւտ բան մ՚է, այսպիսի հեղինակութիւն մը մարդկային ազգի կա-
տարելագործութեան սկզբունքին ուրացութիւնն է։

Ես կ՚պնդեմ թէ հայերը մինչև ցայսօր կ՚կարծեն թէ երկու երկու
պ՚երեք կ՚ընէ, կամ կարող եմ հաստատել թէ արևն արևմուտքէն կ՚ելնէ։ Տպագրիչն այս կարծիքս մոլար և յիմարական դատելով իր մամու-
լէն կ՚սրբէ կ՚նետէ առանց զիս համոզելու։ Ա՚յս ընելով տպագրիչը
դիտէ արդեօք ինչ կ՚ընէ։ Զիս և հայոց ազգը կ՚կողոպտէ, չէ թէ
ստակէս, չէ թէ տունէս, այլ աւելի մեծ և անգին դանձէ մը, այսինքն
Ճշմարտութենէ մը։ Ըստ որում՝ քանի որ իմ կարծիքս տրամաբանօրէն
մեկնելէն ետև՝ ջրող չեմ գտներ, ես զայն իբր Ճշմարտութիւն կ՚դատա-
նիմ։ Արդ՝ եթէ մի տպագրիչ կամ քննիչ այս դատաստութիւնս թղթին
վրայէն սրբելու կ՚ժպրհի, միթէ ունի՞ կարողութիւն զայն միտքէս ալ
սրբելու։ Թող զիս շղթայի զարնէ, գլխիս վրայ հրաշէկ պսակ մը
դնէ, լեղուս կտրէ, որ այն դատաստութիւնս եղծեմ, դարձեալ չյաջո-
ղիր։ Իմ վերջին շնչովս պիտի ասանդի այն բանն որ հոգւոյս կցորդ
է, և այս ասանդն օրին մէկը նորէն լոյս պիտի տեսնէ։ Բայց ինչ կ՚ը-
սեմ, նոյն իսկ Աստուած չունի իմ միտքս սեղմելու կարողութիւնն,
թէ ոչ Աստուծոյ կ՚դարձնեմ այն բանականութիւնն, այն ազատու-
թիւնն որ ինձ շնորհած է։ Կեանքս՝ որ ասանց խորհելու և կամելու
ազատութեան կոյր մեքենայ մը կ՚դառնայ, անասանելի շնորհ մ՚է, և
այսպիսի շնորհ մը շնորհաստին հաստատանելը միակ փրկութիւն։

Սակայն տպարան մը գրութեան մը հրատարակումը մերժելով՝ մի-
թէ նոյն գրութիւնն անհետ կ՚ընէ։ Ոչ երբէք։ Թէև անիրաւ, դիւրին

է արգիլել որ այս երկրիս մարդիկն այն երկրին պատուղը չճաշակեն, գիրին է պատուիրել որ այս վաճառքը մաքսն ներս չառնուն, կամ տուրքի ենթարկեն, որ տեսակ մը միջին և անտղղակի արգելում մ՝է, գիրին է հրամայել որ այս հեղինակին գործը մուտ չունենայ այս կողմը, սակայն անհնարին է արգիլել այս պատուին մշակութիւնն՝ որ այն ժողովրդեան սպրուստն ու հարստութիւնն է, որ այն վաճառքն ուրիշ տեղ, առէպ արգիլուած տեղը գաղտնի չքշուի, որ այն գործը չկարդացուի այն կողմն։ Արդեւական կանոններն անզօր են այսպիսի պարագաներու մէջ, վասն զի մարդկային ազգի ամենակարեւոր պիտոյից լրման, այս է բնական և ընկերական յարաբերութեանց դէմ կ՝մեղանչեն։ Ինչպէս նիւթական՝ նոյնպէս մտային առեւտուր մը կայ, այս առեւտուրը փոխանակութեան միջոցաւ կ՝կատարուի և ուր որ ազատ փոխանակութիւն չկայ, ընկերութիւնը մեծագոյն վիճակի մէջ կ՝գտնուի։ Մարդկային միտքն ալ ազատ փոխանակութեամբ կ՝սնանի, կ՝զարգանայ և կ՝արդիւնաւորի։ Վկայ են այս բանիս Ամերիկա, Անկլիա, Պէլժիա, Հէլվէտիա, ուր որ խորհելու և գրելու ազատութիւնն իր զէնիթը գտած է։

Ուրեմն քանի որ աշխարհիս այն լուսաւոր անկիւնները մասամբ ազատ է, ազատ են նաեւ գրիչներն այս կողմն արգիլուած կարծիքն այն կողմն փչել։ Սակայն ինչ հարկ կայ մեզ օտար աշխարհներու դիմել. ինչնոր բան կարելի է մեզ գրել որ արդէն հինցած և տգուած չլինի։ Օսմանեան տէրութիւնը քանի մը տպագրական կանոններ հրատարակելով՝ թոյլ տուած է որ լրագիր և գրագէտ գրեն իրենց պատասխանատուութեան ներքև ինչ որ կ՝ուզեն։ Կանխաւ գրաքննութիւնը, գրամական երաշխաւորութիւնը, բարոյական կերպ կերպ պայմաններն որ Եւրոպայի քանի մը կիրթ կառավարութեանց մէջ անգամ կ՝փնտռուին, Օսմանեան տէրութիւնը մերժած է իբր անօգուտ բաներ, և կարծեաց ազատութիւնը քանի մը ժամանակաւոր սահմաններով յարգած է։ Կարծես թէ հայուն տրուած է ոչ միայն անտարբեր մնալ այս և ասոր նման ազատութեանց, այլև այս պարագայիս մէջ վերանորոգել և դարձնել շղթայ մը որ տէրութեան օրինաց հակառակ է։ Ծ—ղ՝էր քննիչ կ՝կանգնի տպարան մ՝այդ տեղ, թէև կանոնը քննիչ չընդունիր տպարաններական թերթերու համար և ոչ տեղ մը. օրէնքը միօրինակ է

բոլոր Թուրքիայի համար և Իզմիր Թուրքիայի մէկ մասն է, որ լուսաւորեալ մասը կ'համարուի . . . թերևս լոկ անուամբ։

Ուստի կ'խնդրեմ որ Է. Նամակս Մեղու հանդիսին դրկես այս գրոյս հետ, եթէ այս ալ չընդունուի քննիչ ասպարանէն։

ԺԱ.

Կ. Պոլիս, 9 Դեկտեմբեր 1865։

Ո՜հ, ինչ սաղմակալի և սխուր է այս տարուան բարեկենդանն։ Օտարական մը կ'կարծէ թէ այս տեղ բարեկենդանը բնակչաց զանազանութեան գոյնզգոյն գրոշմը կ'կրէ։ Կ'սպասէ տեսնել մէն մի ազգայնութեան յատուկ դիմակներ։ Ամենեքեան։ Եւրոպացին, հայը, յոյնը, ամէնքը միօրինակ կ'ծպտին, ինչպէս նաև բայց երես ծպտեալ են միշտ։ Հանճարեղ դիմակ մը, խնամուալից զգեստ մը, խօսուն կերպարան մը, հեգնական գդակ մը, պատմական քիթ մը չեն տեսներ ուրեք։ Իսկ ոսկեթել, պերճ, ծանր լաթեր, սև սև սատանաներ, թուրքիկ շրջանակներ, թացիկ վարտիքներ, ձուաձև կերպեր, թոյլ պարեգօտ մը, կենդանի անդրիներ, թէ Պարոն Թ. . . ին սրահին, թէ Պարոն Կ. . . ին դրոհին մէջ կ'նշմարես։

Եւրոպական մարդը կ'զգենու Թուրքի հագուստ մը, որ վրայէն կը թափթփի, յոյնը շլիսի հրէայի գոյն կ'առնու, հայն իրը բարիզեան սրիկայ կ'ծպտի. կոմսուհին խենէշ կ'դառնայ, սպասուհիդ իշխանուհիի հովը կ'առնու կ'սայ։ Ամենքն իրենց դերն անշուշտ սորված են արդէն. բայց սրահին դռնէն այն ինչներս կ'մտնեն և ահա այն մարդկային կոհակներուն մէջ կ'սահին, կ'հոսին, աներևոյթ կ'լինին, կ'ելնեն կ'իջնեն, կ'պարեն կ'թռչին և ամէն հանդիսական ոչ միայն իր խաղալիք դերը կ'մոռնայ, փնտռածը չգտներ, այլև իր անձը կ'կորուսանէ։

Թէև սրահը լուսաւոր՝ ամէն բան երկդիմի և մութ գոյն մ'ունի։ Եւ ահա սա կինն էրկանը հետ, զոր իր սիրահարը կ'կարծէ, կ'կո-

տարուի, կ'մտրմտքի. քոյրն եղբօրը սիրտ կ'բանայ և այս ինչ տեղ դաղտնի ժամադիր կ'լինի. հայրն աղջկան սիրանիշ քսիտ մը կ'տայ. արքուն հասակի և կոյս զուտակի տէր մարդ՝ մը խոստակիցն իր դրացւոյն սիրուն և քնքուշ կնկան տեղ բռնելով՝ կարծես թէ պիտի կլլէ զայն և անոր դիմակին մէջ պիտի մտնէ, թէև այն դրացուհին իրօք իր օրինաւոր կինն է։ Իսկ սա պատանին, որ տաք տաք կ'խօսի, սրտին դաղտնիքն իր անհաշտ հեռատեսին կ'հաղորդէ։ Վաղուան օրն ինչ կրներ, զայրոյթ, յուսահատութիւն պիտի ծագին արդեօք այս զուարթադէմ հանդիսականաց մէջ։ Սակայն ամենէն երջանիկն և ամենուն վրայ յաղթանակը տանողը սա անդիմակ պարարտ ծերունին է որ երամ երամ աղջկանց մէջ թռչունի պէս կ'թռռի։ Ատոր բառ մը, անոր քար մը, միւսին աչք մը կ'նետէ. այս կ'հեգնէ, այն կ'ծաղրէ և չորս կողմէն եկած կանացի սլաքներուն դէմ կծու խօսք մը, հնար մը, խաղ մը, պատասխան մ'ունի պատրաստ, որով անհամ և անպատակ հանդիսականներուն ծիծաղը կ'շարժէ։

Եւ ես այս կարգէն լինելով՝ յանկարծ քահ քահ մ'է գիս առաւ։ Նոյն միջոցին իսկ — Մի՛ ժպտիր այդպէս, փսփսաց հեգնօրէն սպիտակ դիմակ մ'ականջէս 'ի վար։ Կ'վախենամ որ դիմակդ վար կ'իյնայ։ Այս դիմակը՝ ձայնին մեղմութենէն թէ ոչ ներքինի, օրիորդ մը պիտի լինի ըսի չըսի ինքնիրենս և իսկոյն — Կ'վրիպիս, սիրուն դիմակ, պատասխան տուի, սիրոյ կամ գինիի կաթիլ մը փարիզուն աչացդ մտայլ բերած է. թող սա ամպն անցնի այդ քու երկու աստղիկներէդ և պիտի տեսնես որ առջևդ գնայողը Ճակատը բաց անշարժ կեցած է։ — Միթէ Վրայր դիմակ չէ, մտմտաց սմսեղուկ օրիորդը քթիս տակը գալով և փայլակի պէս բաղմութեան մէջ մտաւ, բայց միւս կողմէն ուրիշ դիմակի հետ պար 'ի պար նորէն դէպ իմ կողմն թռաւ. — Ամենց դիմակը բնական է — ըստ ինձ ակնարկելով և անցաւ նորէն դառնալու համար . . . .

Մտմտաքը գիս առաւ. փուշի վրայ էի. պարը քանի կ'երթար կը տաքնար. հանգերութիւնս հատնելով շիտակ գացի սպիտակ դիմակն երկրորդ շրջանին համար իր պարակիցէն խնդրելու։ Խնդիրս ընդունեց։ Երբ սպիտակ դիմակը թևս ընկաւ — Միթէ պարելէն առելի խօսելու հեռաբրքրութիւնս չե՞ս դիտեր, ըսի։ — Է՛հ, ով կ'արգիլէ մեզ պա-

բերբ. ասեն նաև խօսիլ։ — Ընդհանրապէս չկայ. մանաւանդ պարն ամէն բանի նպաստաւոր է և շահաւէտ, սակայն սովորութիւն և թեթև սիրտ չունիմ ամէն բան թեթևակի վայելելու։ — Մինակ դիմակ դնելու չես թեթևիր, պատասխանեց։ Այդ դիմակդ ոչ միայն ես, այլ շատերը վար կ'առնուն։ Թէ հոս և թէ Իզմիր կ'բամբասուիս դու. կանայք միայն կ'ուտեն. օրիորդները հորդ կ'փորեն. ուշ դիր. լրագիրներն իրենց գրիչը կ'սրեն։ Մենք տարին մի անգամ դիմակ կ'առնունք, դու ամէն օր։ Եթէ խելք ունիս, ինչո՞ւ կ'ծածկես. եթէ գրիչ և ճշմարտութիւններ ունիս, ինչո՞ւ բացէ՛ի բաց չես գրեր։ Եթէ անուն ունիս, ինչո՞ւ չես յայտներ։ — Լաւ կ'պարես, լեզուանի ես, սիրուն դիմակ, բայց ծուռ կ'դատես. դու դիմակ ինչ է, չգիտես. դու կեղևը հիմիկ ուղղամիտ կ'յողնիս։ Դիմակն այն անուղղակի ազատութիւնն է, որով դերութեան մէջ կ'խօսի մարդ ճշմարիտը. դիմակն այն անմեղ զէնքն է՝ որով մատնտու և դատանի թշնամիդ զէմ լոկ անձնական անպորպութիւնդ կ'պահպանես։ Իմ անուական դիմակս երեսիս վրայ չէ, այլ ոտքիս տակ. իմ գրուածքիս մէջ չէ, այլ անոնց տորոսն։ Ինչ պէտք է դիտել —ԱՆ—ԱՆ, այս անօգուտ է հասարակութեան, քանի Ն—Ը. չեմ կրնար նոյնպէս սիրել և լուծել դիմակդ, այլ սիրտդ, որուն հայլին այդ անուշ աչերդ են։ Այդ վիզէդ կախուած մարդարիտը ծուէն հանող լուղակը չես փնտուեր այլ մարդարտին դինն։ Այս ինդիրը դու վրադ փորձէ։ Սիրահարիդ բաձկոնը չես ընտրեր, այլ քեզի համար եռացող ուղիղ սիրտը, վսեմ գլուխն։ Իսկ եթէ դու հիմա անդիմակ լինէիր, կրնայիր ասոր անոր թերութիւնն երեսին զարնել։ Եթէ երբէք յանդգնէիր, վայ քեզ, անկիրթ, անսիրտ աղջկան մը սեղ կ'անցնէիր. հիմա ազատ ես, վասն զի դիմակ ունիս։ Տուն դարձիր և բնական դիմակդ հագիր. այս բնական դիմակն, որ է կեղծաւորութիւնն, ընկերութիւնը կ'պարգևէ քեզ. անարժան և վատ պարգև։ Դու պիտի ըսես մարդ որ պարոն Վ. . . . չես սիրեր. սուտ է, դիմակ է այս. դիտեմ որ կ'սիրես, դիտեմ որ հիմա արտասուօք երդումը բրիր որ առաջին և վերջին սէրդ նա պիտի լինի։ — Դու ինչպէս իմացար։ — Այն դիմակս որով դու զիս ճանչցար։

Սպիտակ դիմակն երեսիս մեղմիկ թաթի մը տուաւ ու ես անձամբ Հ. . . . եմ փոփոխուիլ աներևոյթ եղա։

ԺԲ

Կ. Պոլիս, 20 Հոկտ. 1865.

Այս միջոցիս Ընդհանուր ժողովը Ս. Երուսաղէմի կանոնագիրը քննելու կ'զբաղի և բաւական աղմկալից առեւաններ ունի։ Ս. Պատրիարքն առաջ ընտրելէն և ապա կանոնագիրը շինելէն բան մը չեղներ բաղդ սրամիտ քաղաքագէտներ քիչ քիչ կ'հասնուին որ աղայօրէն և Սահմանադրութեան հակառակ վարուելյան։ Երուսաղէմի Պատրիարքն ազգային ժողովներուն դլխին վրայ մուրճի պէս կ'իջնէ և կ'բարձրանայ որ կանոնին այս ինչ կէտն ընդունելու կամ չընդունելու ազատ է։ Օրէնսդիր ժողովի մ'օրէնք տալու պէս կերպարանք կ'զգենու։ Կարծես թէ դեռ Ընդհանուր ժողովին բարձր հեղինակութիւնը, վանական հաստատութեանց ազգային սեպհականութիւն լինելը, զգացմանց և մտայ արդի վիճակը չդիտեր, հին դրութեան մթնոլորտին մէջ կ'ապրի, և իրայ եղք մը, նոր կանոնագիրը մերժելու ճար մը կ'փնտռէ . . . ի զիտէ որու դրդմամբը։ Վասն զի Երուսաղէմի խօսքն երբ յուղի՝ ամենց սրտին, խիղին և մտքին թելերն ևս կ'յուզին, կը թեղան և վրվրուկ մը հանելու համար կ'մեռնին . . . ի զիտէ ինչ զգացմամբ. կրօնի, շահասիրութեան թէ ոչ տիրապետութեան ոգով. . . թող Աստուած, որ հին վհուկ մ'է, այս հանելուկը մեկնէ։

Կ'հաստատ, Ս. Պատրիարքը, Միաբանութիւնը հին կանոններ ունի, նորը ինչ պիտի ընէ, կ'ըսէ, և Սահմ. 49դ յօդուածը կ'ուզէ ջրել տանկերէն թարգմանութեան ֆոֆէ բաղի մը վրայ կը թենելով. ու երբ չյաջողիր, մնաուելին բանալին իր մտաց ճեալու, եպիսկոպոսութեան վիճակագիրն ինքը միանակ տալու խնդրոյն վրայ կ'սիդէ, և վերջն որչափ որ ևս միանակ Սահմանադրութեան վրայ կ'ուխտեմ կ'ըսէ, իրը թէ նոյն ինք Պօղոս Պատրիարքն է, և ժողովէն առնելու բաներու փորձ կ'փորձէ, բայց ճարը հատած՝ 'ի վերջ կ'դիջանի, և մանաւանդ վիճակագրի խնդիրը միջին ճանրով մ'որոշուելով հանդիսապէս կ'ուխտէ կանոնագրին անթերի գործադրութեան համար և շաբաթէ մը ճանրայ պիտի ելնէ դէպ 'ի Երուսաղէմ դնալու։

Սահմանադրութեան դիմակաւոր թշնամիները թե ու ոչի առին ; գաղանի Խլրտիչներ՝ երբ Երուսաղէմի Պատրիարքին այս սարսափելի ընդդիմութիւնը տեսան, որպէս զի գլխի վայր կուտին մէջ մտնեն և փոթորիկ մը հանեն թերևս Սահմանադրական նաւն անոր մէջ ընկղմելու աղօս յուսով մը։

Զարմանալի և պատմական բան մ'է թէ՝ այն երեսփոխաններն որ նաղով ժողովի կ'երթան կամ անոնք որ քնաւ անոր երեսը տեսած չունին, լսելով որ կանոնագրին վերջին որոշումը պիտի տրուի, ներկայացեր կամ գիր գրեր են։ Կարծեմ թէ Ընդհանուր ժողովն իր մեծագոյն մասը միշտ կրնայ գտնել թէ որ 'ի պատիւ ՀՈՐԱՆՈՒՆ երեսփոխանաց Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարը գումարուի . . . ։

ԺԳ.

Կ. Պոլիս, 30 Հոկտ. 1865։

Մինչդեռ Պոլսի Հայը Քրիստոսի շիրմին առջև 'ի հեռուստ ծունր դրած՝ մօտակայ վանքի մը կանոնագիրը յօրինելու կ'սարսափի և երկնային Օրէնսդրին կարդած օրինաց վսեմութիւնն ու գեղեցկութիւնը շրմրունջող սև գլուխներ աշխարհային կանոններու ենթարկել կ'ձգնի, Իզմիրի Հայն՝ Ազգին սեղանին սպասարկու՝ կ'երդնու միշտ հլու պաշտպան մնալ պարահանդէսի մը մէջ փայլող կնոջին համաստեղութեան մը և ամենուն սրտին սիրոյ կանոններ ներշնչել։ Պոլսի Ընդհանուր ժողովն, այսպիսի տէրունական օրեր, Սինա լեռն ու Գողգոթան կ'յիշէ, ազգին նուիրական շահերուն և իրաւանց վրայ կ'խորհի և քրիստոնէական ու ազգասիրական պարտք մը կատարելու կ'ջանայ, Իզմիրի կնոջին ծերակոյտը բարեկենդանի և Պարոսի յիշատակներով մոլորած՝ փոխանակ սրտին, կանանց շպարը սրբելու կ'զբաղի և անոնց հալածին առջև ողջակէզ մը մորթելու համար 'ի խաչ հան զՔԻԼԻՆԳԻՐ կ'կոչէ։ Ա՛յս տեղ ոչ ոքի՝ այլ հնութիւնքը շքեղ եկեղեցիի մը մէջ՝ յատենի Ընդհանուր ժողովոյ՝ Ո՞ւ տենեան մ'իր ազգու ձայնովը

կ՚հրաւիրէ Ս. Երուսաղէմի Պատրիարքն որ աղջին հաւատարիմ և կա-
նոնագրին գործադրութեան արթուն հսկող լինելու ուխտ ընէ, այդ
տեղ կրօնաւոր աւագանի մը կ՚դասաւորէ, և նորընծայ սատար մը կ՚ար-
ձակէ շուկաներն՝ որ ահա ստորագրութիւն կ՚մուրայ հեալով որպէ-
զի բոլոր բառնան առ Կուսակալն հայ կանանց պատիւը պաշտպան-
լու Ծ–ԷՒ դէմ։ Ո՜հ, ինչ հակապատկեր։ Պօլսեցին այս պահուս,
ինչպէս ուրիշ պարագաներու մէջ, օրէնագրի վսեմ պաշտօնը կ՚վարէ,
Իզմիրցին Տօն–Քիշօթի գերը կ՚խաղայ։

Ո՞վ է այս դիւցազնական շահատակութեան շարժառիթը։ Ծ–ԷՒ դու, կ՚ըսեն։ Վասն զի նամակ մը հրատարակած ես որ պարահանդի-
սի մը նկարագիրն է։ Այս նկարագիրը կարդացեր էի մեծ անտարբե-
րութեամբ։ Ոճը վառվռուն, իմաստները սահուն, դիտողութիւններն
անշան և ակնարկութիւնները շատ մուտ գտայ։ Իսկ Վրոյրին դէմ
ուղղած նեղ բոլորովին աննպատակ, զոր քեզի պիտի դարձընէի ե-
թէ յանկարծ ուշադրութիւնս ԺԷՕՆ–Ժաններու վայնասունին չդառ-
նար։ Այս վայնասունն ինչ կ՚նշանակէ։ ԺԷՕՆ–Ժաններն (այս բառն
իմաստ չունի) սկսեր են վերլուծել, մաղել և կրկին մաղել այն նամակն
և անոր մէջ թոյն, անբարոյականութեան թոյն գտնել։

Այս իր կնոջ, այն իր քրոջ, միւսն իր սիրուհւոյն վրայ բիծ մը,
անիծ մը նշմարել կ՚կարծէ, և առանց նամակին վիճակաւոր և հանրա-
կան ձեր նկատելու, անբարոյական է, անտարակոյս անբարոյական
պէտք է լինի կ՚պռայ և Ծ–ԷՒն առաք փառաք բառնա կ՚մտնէ։

Այս բանտարկութեան առեղծը հաւատալի չեկաւ ինձ. չէի կրնար
երևակայել որ քաղաքակիցներս զքեզ այդչափ պատուոյ հասցընելու մի-
տում ունենան, չէի կրնար ըմբռնել որ աննշան գիր մը քու փառդ
կազմէ։ Ուստի՝ ինչպէս ուրիշներուն, նոյնպէս իմ հետաքրքրութիւնս
շարժեցաւ և այն Ճիւաղաղէմ նամակը, զոր արդէն գրատանս փոշիին
մէջ նետեր էի, ուշի ուշով փնտռեցի, մաքրեցի, Ն–ԷՒ կարդացի և
ծոցս դրի։ Իսկ երբ պատահմամբ ակումբի մ՚առջև, ուր կանանի ալ
կար, ծերակուտին կատաղութեան վրայ խօսք բացուեցաւ, նամակը
հանեցի ու ՆՈՐԻՆ կարդացի։

Մէկ կողմէն բանիրուն և ձեռնհաս անձինք, որ Բ. Դուռը ձայն,
գրիչ և ազդեցութիւն ունին, ըսին թէ՝ այս նամակին մէջ Իզմիրի կա-

նանց նկատմամբ չկայ դիտողութիւն մը, չկայ խորհրդածութիւն մը, չկայ բառ մը, վանկ մը՝ որ օրագրական կանոնաց համեմատ պատժելի համարուի։ Բայց Ծ–ՂԷՆ օրագիր չէ. Ծ–ՂԷՆը հանդէս է. և իբր այն՝ արդի օրագրական կանոնաց չէ կարելի ենթարկել։ Տէրութիւնը դեռ գրաւոր օրէնք չունի այս մասին։ Իսկ պարահանդիսին ներքին կարգադրութիւններուն պատմութիւնն, որոց ակնառաս չենք, կրնայ անհիմն և սխալ լինիլ։ Հեռևապէս պարահանդիսին ԴԷՐԵՆՆԵՐԸ կարող են բողոքել կրով ուղղակի Ծ–ՂԷ դէմ և անոր վրիպակները շտկել առանց դատ վարելու։ — Զարմանք են, ստուգիւ թոթովելց ծերունի մը, որ Իզմիրի լուսաւոր երիտասարդութիւնն, որ աղատասիրութիւնն ուրիշի չտար, որ դէմքով, քայլով, հագուստով և լեզուաւ եւրոպական քաղաքակրթութեան հոտտորը կ'հոչակուի և ընկերային քաղաքավարութեան վրայ մեզի երբեմն դաս տալու կ'ժպրհի, եկնէ այսօր և Ծ–ՂԷՆ խմբագիրը քարկոծէ, բանտէ. և ինչո՞ւ համար, վասն զի հրատարակեր էր թէ՝ երբ կին մը պարահանդէս կ'երթայ՝ վարդ մը, ժպիտ մը, համբոյր մը քաղելու կ'երթայ. երբ օրիորդ մը սեթևեթ կ'հագուի, կ'կապուի և պարակցին թեւին յենած՝ գայթ 'ի գայթ կ'սահի, աչքերէն շեշտակի կայծեր կ'արձակէ, և կուրծքին ելևէջը՝ սրտին այլայլութիւնը պատիր կամ –Ն–Դ–ԷԼ կ'յայտնէ, 'ի հարկէ կ'հրաւիրէ պատանին որ իր ծուղակին մէջ ընկնի. երբ յիսուն գարուն անցնող կին մը գարնան բոյսերով կ'զարդարի և պարահանդէս կ'թռի, անշուշտ վանդակէն փախած թռչուն մը վերտրսալու համար կ'զարդարի։ Այս բաներն իմ մտաւն անգամ դիտէ, և Ծ–ՂԷՆը կրկնելով նոր բան մ'ըսած չլինիր։ Ուրեմն Իզմիրի հայերն ինչո՞ւ համար կ'զայրանան, կ'փրփրին Ծ–ՂԷ դէմ։ Ծերութիւնն անգամ գրչի ազատութեան պաշտպան է, և այս պարագայիս մէջ գոնէ քաղաքիդ երիտասարդութենէն աւելի նոր ենք՝ թէև զմեզ կուռնտ և հին գլուխ կ'կոչեն հոս . . . »

Ընկերութիւնն ալևորին արդարացիցուսման վրայ հրաւերելու ատեն, միւս կողմէն՝ կանայք ակտան նամակը քննադատել։ «Իզմիրի հայ կանանց պատիւը մեր պատիւն է, ըսին ոմանք, անոնց արթուն համեստութիւնը, կայտառ և շնորհալի կերպերը նախանձելի են յիրաւի, տակայն կ'յաւելնք որ այս խնդրոյն մէջ այնպիսի տմարդի և թեթևամիտ փաստաբաններու հանդիպեցան, որոնք օտար ատեանի կ'դիմեն պահ-

պանելու ինչ որ արդէն անարատ է, հրապարակի և շուկայի մէջ կ'անբաստանեն պարահանդիսին քնքուշ բամբիշներն, որոց անուան և սրտին մաքրութիւնը նշանաւոր է։

«Ուստի, յարեց գեղանի և աշխոյժ օրիորդ մը՝ սիրապէս ինձ ակնարկելով, ես կ'երևակայեմ, Պ. Վ.բոյր, որ կանանց պատիւը պաշտպանող հայրենակիցներդ կնկան մը պատիւն ինչ է չգիտեն։ Զգիտեն որ այս ալ առեակ մը գողարիկ ծաղիկ է, որուն բարակ հոտանոյշ թերթերը քանի քրքրես կ'թափթփին և բոլոր մերկ կ'թողուն։ Ամէն տեղ կ'գտնուին քինաւոր մարդիկ՝ որոց համար կնկան մը պատուոյն հետ խաղ բանալ անհնարին զուարճութիւն մ'է։ Զուարճութիւն մը, որ թերևս հետաքրքիր վշտալից յիշատակի մը ստուերը կ'ամրէ և անուշաբոյր վրէժ կ'լուծէ։ Եթէ այսպիսիներու բերանը կնկան մը պատիւը ճարակ ընկնի՝ ոսկորի պէս կ'կրծեն զայն և իրարու ճիրանէ կ'քաշքշեն։ Արժանի կնկան մ'անունն՝ եթէ անարգող և մրոտող դաղան մը գտնուի, բոզբաղրով չմաքրուիր այն, այլ արեամբ։ Այս պարագայիս մէջ Ծ–ԷՆ անարգած չէ պարահանդիսին գեղանիներն՝ այլ անոնց իրը պաշտպան կանգնող անձինք, որ թերևս ուրիշ միջոցաւ հաճելի չլինելու յուսահատ՝ պատրուակ մը փնտռեցին Ծ–ԷՆ նամակին մէջ իրենց դժպհի արիութեամբ՝ թէ ոչ կանանց սիրոյ՝ գէթ աչքը մնանելու։ Հաւատի եմ, այնքեց սիրուն սանտնարանն՝ որուն սև ակունքը խօսքին հետ կ'վառէր քանի շարունակէր, հաւատի եմ որ մեր Եզմիրի տոհմուհիներն, որոց սեռին դիւրազգած տպաւորութեան 'ի բնէ հաղորդ կ'գտնուիմ, կ'անգոսնեն այն զէնքերն որ պաշտօնական յուրա և բռնական դրոշմ կ'կրեն և իրենց անունն անվայել վայրերու մէջ կ'հնչեցընեն։ Վատ գի՝ մեք ընդհանրապէս Ռուսոյին այս խօսքը քաջ կ'ըմբռնանք թէ՝ կին մը գոհ պէտք չէ լինի իր առաքինութեան և համեստութեան ներքին զգայմամբը միայն, այլ պէտք է որ հասարակաց կարծեաց յարգել և գովել տայ նոյն զգայումն։ Արդ՝ ինչ կ'ուզեմ այսօր. կ'դիտեմ որ Ծ–ԷՆ հանդիսին խմբագիրն իրաւամբ կ'փառաւորուի այս տեղ իրը կարծեաց ազատութեան նահատակ մը՝ իսկ պարահանդիսին կանանց անունը կ'խնայեցաք և հասարակութեան ուշադրութիւնը կը գրգռէ։ Եւ մեզի ամենեն ճշմարտութիւն մ'է, որ կին մը չախորժիր որ իր պատուոյն սրբավայրը մարդիկ գիտակով'ի մօտոյ գիտեն։ Ծ–ԷՆ

այն նամակն որ թագուն և սուր փուշ մ'է, առջի անգամ ուշի ուշով չկարդացի. բան որում պարահանդիսի նկարագիրներն արտաքին գոյներով միայն իրարմէ կ'տարբերին. իսկ իրեն ներքին նպատակը նոյն է։ այսինքն զբօսնուլ, ծիծաղիլ, լալ, պարել, հառաչել, նենդել, պատրել և երբեմն կռուիլ։ Այսպիսի նկարագիրներու ընտրելագոյնն, ինչպէս ես, նոյնպէս սիրուն հայրենակիցներդ, գաղղիական վէպերու մէջ կարդացած են անշուշտ։ Բայց երբ լսեցի որ գառասուռնական ասելանի մ'առջև նոյն նկարագիրն ամբաստանուեր է իբր անբարոյական և ապականակիր, ուզեցի գիտնալ թէ որն է անբարոյական մասն և մտաք շօշափել անոր առարկայ եղող էակներն։ Ի զուր ջանացի անուն մը, ուրուական մը դտնել և քիչ մը ժպտիլ. իսկ եթէ հետաքրքրութիւնս առաջ տանէի՝ կարելի է որ քանի մը չարամիտ պատանիներ քմածին մեկնութիւններ տալով՝ մէն մի անշնչան կէտն ունձի մը յատկացնէին։

Ուրեմն Ծ–ԷՒՆԸ գրեց նամակ մը. ԺԷՕՆ–ԺԱՆԸ զայն մեկնեց, թարգմանեց, անոր շրջածը հրատարակեց. հրատարակութիւնը ծիծաղեցաւ։ Ծ–ԷՒՆԸ կրկնեց ինչ որ պարահանդիսի մէջ այր ու կին կ'ղղայ ու կ'տեսնէ. ԺԷՕՆ–ԺԱՆԸ մատով ցոյց տուաւ անոնց տեսածն և զգացածն և ապիտակ թղթի պէս մաքուր անուններ նշանակ ըրաւ, գրեթէ մրոտեց. մօտաւոր և հեռաւոր հայն այս քսանեկի և ծիծաղաշարժ տեսարանին քահ քահ խնդաց։ Ուրեմն ինչ եղաւ այս իրարանցումին արդիւնքը։ Ազատութիւն մանաւորապէս Իզմիրի կանանց և ընդհանրապէս հայկական գեղեցիկ սեռին, փոքրոգութիւն Իզմիրի եռանդալիր ծերակուտին, վատաւորութիւն Ծ–ԷՒՆ։ Եւ սոյգն ըսելով եթէ ձեր կանանցին տեղը լինէի՝ կ'բողոքէի այն համբակ ԺԷՕՆ–ԺԱՆԻՆ դէմ և անոր այս գռեհիկ ընթացքը գառապարելով՝ արանցէն կը բռնէի և կ'հարցէի զանի որ մեր պատիւը պատերազմի դաշտին վրայ հրաշէնով պաշտպանէ, եթէ երբէք այս պատիւն անարգող կայ, և չէ թէ ոտիկանութեան և բռնութեան գառապանա, քանի որ կան այնպիսի պատանիներ ձեր քաղաքն որ մենամարտութեան արդէն վարժ՝ պատրաստ են, կ'ըսեն, ամենաշնչին առթիւ՝ սուրը պատենէն քաշել և խրոխտաբար սկսիլ։ Վասն զի, քաջ գիտցիք, որ չկայ բան մ'այնքան ատելի կնկան մը, ինչպէս այն մարդն որ շան պէս մեր բոլորը կ'քծնի,

կ'ընթէ և սրահէն դուրս իր ոտքին վրայ դուեհօրէն և պոչը կախած կ'յարձակի և անոր ոտքը կ'խածնէ . . . :»

Գեղագէմ օրիորդին այս պարզ և խնամասիրոյ խորհրդածութիւնները լսելով դեռնէ դեռին անցայ . մերթ կ'զմայլէի անոր անկեղծութեան և Իզմիրի կանայքը պաշտպանելու և երիտասարդութիւնը դատապարտելու երկայրի լեզուին վրայ , մերթ կ'սրտնուէի որ նորաբոյս կոյս մը մեզնէ աւելի ազատամիտ՝ մեզի կանայի բնութեան վրայ դաս տալու կ'յանդգնի , մանաւանդ երբ կ'նշմարէի որ բաղմականները ներքին ախորժ մը կ'զգային զիս անոր առջև շանթահար և ափ 'ի բերան ընկած տեսնելով :

Ի վերջէ կմկմալով լսի . «Ազնիւ օրիորդ , մեր քաղքին անցքերն ամառնային կարկուտի կ'նմանին որ առանց հետք թողլու կ'ցանքին կ'անցնին , թէ բարին և թէ չարը , թէ վարդն և թէ տատասկն արմատ կ'ձգեն այն տեղ , բայց անտես կ'մնան : Այսօր խաչկալ , վաղն արձան , միւս օր ժէօն–ժան . ասոնք վաղամեռիկ և երերուն բաներ են : Մինակ սրտիդ պէս սիրտերն արդիւնաբեր և ամուր են , որոց կը կարօտինք մեր ապագայ սերունդը դաստիարակելու համար : Իմ բնիկ երկրիս սիրասուն կանանց պատիւը զերծ և անփորձ պիտի մնայ այն մրրկալից փեղջրներէն՝ որոց մէջ ծրարուած գլուխները թէև բարեմիտ , բայց անոնց տէրերը ծեր աղաքներ են :»

Իսկ բոլոր ակումբը ձայնակից էր օրիորդին , որ յանկարծ մօտս գալով փսփսաց . «Ծ–ԷՂԷՆ 107 թիւը նշանաւոր թիւ մ'է , ոսկեզօծ կազմ ու սրահէ : ժէօն–ժանին թողը չպիտի հաւատայ օրին մէկն որ իր պատն այս թիւը հալածելու չափ մոլեգներ է , և այն խորագիրն աւրելով պիտի դրէ . «Հ , Լէ ՖԻԷՍԼ ԺՈՆ :» Եւ ես այս հեգնութիւնն ալ կլլելով՝ կ'պատասխանէի խնդիրը կարծեաց ազատութեան նկատմամբ քննել և այս մասին եղած բռնաբարութիւնները ծաղր ու ծանակ ընել՝ երբ իմացայ որ բանտէն ելեր ես : Այս ազատումն ոտքայդ դէմիրան առարկութիւն մը լինելուն՝ իմ փաստերս մէջ չբերի :

Մաղթեմ որ նորէն ծակը մտնես 'ի սէր կարծեաց ազատութեան :

ԺԴ

Գ. Պոլիս, 1 Մարտ 1865.

Ազգային տարբի կենսական խնդիրն Ընդհանուր ժողովին Յեռնհատութեան կ'պատկանի լուծել. բայց կ'երևի թէ այս մեր Ընդհանուր ժողովը չպիտի կարենայ այս լսփիւրինթոսէն դուրս ելնել. Արիանէին օգնութեան կ'կարօտի։ Այս օգնութիւնը կ'կարծէ ընծայել Ռուսինեան էֆէնտին իր Հանգանիրքն՝ որ այս օրերս տպեալ դուրս ելաւ։

Ռուսինեան էֆէնտին ամուր սկզբունքի, դիտութեան և ընտիր բնութեան տէր մարդ է։ Տէրութեան նախարարաց մէջ համարում և Պոլսոյ Հայոց մէջ անուն ունի։ Ազգային օրէնսդրական շարժմանց մէջ թէ ոչ երևելի՝ ազգու մասնակցութիւն ունեցած է։ Քաղաքակիրթ ազգերու օրինաց ոգւոյն և գրոյն հմուտ՝ հին և նոր Սահմանադրութեան խմբագիր ժողովներուն մէջ օգտակար խորհրդատու եղած է. ինքն է նաև Ռ-ԷՂ-Ի-ՐԻ-Ն անուն քերականութեան երևելի հեղինակներէն մին, որ երբեմն հայկական լեզուն այլակերպելու փորձ փորձեցին։

Ռուսինեան էֆէնտին բանականութեան և թուարանական ճշգրտութեանց սիրահար՝ սեռական աշխարհը կ'ընակի։ Իրեն համար միակ պաշտելին՝ սկզբունքն է, թէև անոր ծագրելի. միակ գործադրելին՝ իր խօսքը, թէև հայոց չիմանալի։ Իր տեսութեան շրջանէն, իր խօսքին պարբերութիւնէն կէս մ'անգամ՝ չուզեր շեղիլ։ Ինչպէս նոր լեզու մը ստեղծելու համար քերականութիւն մը կ'յօրինէ և ինքը միայն կանոնները կ'ըմբռնէ, թէև քերականութիւնը բնականաբար խօսուն լեզուէն կ'ըղխի, նոյնպէս ազգ մը կառավարելու համար նոյն ազգէն դուրս նոր օրէնք կ'շինէ, որոց ինքը կ'հեսանի, թէև օրէնքը պէտք է որ կառավարելոյ վարուց և սովորութեանց դրոշմը կրէ։

Ռուսինեան էֆէնտին կրնայ Թուրքիոյ Հայոց նոր Էրէ-Ն-ՆԵ ու նոր Սենէ-ը հանարուիլ։

Այս անգամ Ռուսինեան էֆէնտին իրը անտեսապէս կ'ներկայի ազգին իր Հանգանիրքն և այս յատկութիւնն ալ իրեն պէս քաղաքագէտ անձի մը յատուկ է և կարևոր։

Հանգանակը կարդայի։ Թէ որ այս խնդրոյն փորը 'ի շատէ տեղեկութիւն չունենայի, կ'ցաւիմ յայտնելու որ Ռուսինեան էֆէնտիին նկարագրած ոճովը չպիտի կարենայի հասկընալ։* Արդէն խնդիրն ինքնին ծանր է և հայոց համար նոր՝ և երբ հեղինակին յատուկ նորահնար, կրճատ և գրեթէ -ղբ-ի-ե-ն ոճով կ'բացատրուի, առելի ևս կ'ծանրանայ, կ'մթագնի և այն աղատութեան չուանը՝ զոր մեզի կարկառել կ'ուզէ մարդասիրաբար՝ մեր ձեռքէն կ'սահի. այն լոյսը զոր մեր աչաց առջև սփռել կ'ուզէ՝ կ'ամպոտի և դարձեալ զմեզ առելի խոր անդնդի մէջ կ'թողու։

Հեղինակին գրութեան ոճը նշանակելով՝ միտքս անոր ոգին դատապարտել չէ երբէք։ Նիւթին կողմէն Հանգանակը գրգռչն առաջինն է մեր ազգին մէջ, բայց ինչ օգուտ որ տուրքի խնդիրը բոլորովին չլուծեր։

Հեղինակը տնտեսական դիտութեան տեսութեամբ իրաւանց և պարտուց սկզբունքը բացատրելէն ետև՝ կ'ըսէ թէ՝ «Օրէնքը պարտք է հանգանակութիւնն և ոչ կամաւոր նուէր։» Այսինքն իշխանութիւնը հանգանակութենէն իւրաքանչիւր անհատի ընկած բաժինը սահմանելէն ետև՝ ըստ կարողութեան և արդարութեան, այն անհատը նոյն բաժինը իրը պարտք պիտի վճարէ և չէ թէ իրը ողորմութիւն։ Սակայն երբ բաշխման գործողութեան կ'հասնի, հեղինակն, ոչ միայն Սահմանադրութեան հակառակ դիրք մը կ'բռնէ, այլև իր առջի սկզբունքին դէմ կ'խօսի։

Բարոյական իշխանութիւն մը պատաւոր կ'ընտրէ, որ է մարդուս խիղճն, և անոր կ'թողու վճռել իւրաքանչիւր անհատի կարողութեան չափը։ Բայց քանի որ Սահմանադրութիւնը կ'որոշադրէ թէ՝ բաշխման հիմ պիտի բռնուի իւրաքանչիւրին կարողութեան չափը, քանի որ հեղինակը կ'ընդունի թէ հանգանակելի բաժինն օրէնքը պարտք է և

* Հեղինակը կրնայ առարկել թէ ով ոչ գրիչ և մանաւանդ գլուխ մ'ունի՝ աղատ է իր ուզած ոճովը գրել, քանի որ արդի աշխարհիկ լեզուն գեռ քերականական հաստատուն կանոններէ զուրկ է, բարբարեան խառնակութիւն մ'է։ Բայց ասի փաստ մը չէ։ և արտօնութիւն չտար լոկ անձի մը գլխէն վճռապարտ քերականութիւն մը հանել և անով խօսիլ երեսփոխանութեան մ'որ մինակ ընթացիկ լեզուին հմուտ է։

ոչ նուէր, հեռանալէս հարկ է՝ ըստ Սահմանադրութեան և ըստ իր սկզբան՝ որոշել հանդանակելու պայմանին մէջ գտնուող անձինքն, զանազանել անոնց կարողութեան չափն և ըստ այնմ դասաւորելով պահանջել հանդանակելի գումարն իրը դրդում։ Ապա թէ ոչ հանդանակութեան բաժինը պարզ չլինիր այլ նուէր, ողորմութիւն։ Ըստ որում երբ խղճիս կ'դիմես որ բան մը տամ, խղճէս բղխածն ողորմութիւն է. և այս ողորմութիւնս, թէև ամենաչնչին, պարտաւոր ես առանց մեմեալու ընդունիլ։

Միւս կողմէն Ռուսինեան էֆէնտին ըմբոստէ՝ այսինքն դժկամակողաց դէմ միայն օրէնք ունի։ Իսկ անոնց համար, որ կարող են 100 զուրուշ տարեկան դրել և միանակ 5 զուրուշ կ'դրեն, ինչ տրամադրութիւն կամ ինչ պատիժ ունի — ոչ ինչ։* Հեռանալէս հանդանակութիւնն՝ զանազանոր դրդում է խօսքն՝ ինքնին կ'ջրի։ Հանդանակութեան պարտքն զանազանոր կ'ըստի և զանազանորդէս կ'դահանջուի, երբ համեմատութեան և արդարութեան վրայ հիմնուած է. այս պարտքն որչափ կարելի է ճշգիւ գտնելու համար արտաքին իշխանութիւն մը պէտք է և ոչ ներքին։† Մարդկային բնութեան և շահասիրութեան կանոնաց հակառակ

*Արդարև զարմանալի կ'թուի ինձ որ Ռուսինեան էֆէնտիին պէս իրաւասէր անձ մը ըմբոստէ դէմ պատիժ կ'անօրինէ և զանոնք այլև այլ ազգային իրաւունքներէ կ'զրկէ, մինչդեռ զանոնք որ իրենց կարողութենէն խիստ վար հանդանակ մը տարեկան կ'նուիրեն, անպատիժ կ'թողու, ի՞նչ կ'ըսեմ, անոնց նուէրը կ'ընդունի պակաս բաժինն։ Օրինակի համար՝ այս դրութեամբ անձ մ'որ 100 զուրուշ դրուած է և առանց բանաւոր պատճառ ցուցնելու չվճարեր նոյն գումարն, իրը ըմբոստ պիտի համարուի և իր դիւանական յարաբերութիւններն ազգային պատրիարքարանի հետ գադարած պիտի հրատարակուին, իսկ այն՝ որուն 5000 զուրուշ տալու կարողութիւնն ակներև է և իր խղճէն խորհրդովը լոկ 50 զուրուշ կ'տարեկանդրէ, այն անձն իր բոլոր ազգային իրաւունքները պիտի վայելէ, որովհետև 50 զուրուշ զանազանորդ դրդումը վճարած է, և 4950 զուրուշ Ազգարդն ազգն անոր շնորհ ըրած է լռելեայն։ Այս ինչ անհամեմատ արդարութիւն։ Մինթէ ազքատին և հարուստին համար նոյն դիմը չունի՞ պատժելի օրէնքը։ Մինթէ այս դրութիւնը կերպով մ'ազգայինները տուութեան ճանապարհ չ'տանիր. այնպէս որ պատժելի օրէնքէ զերծ Ազգաս պատրաստի պատրուակ մը չը՞ցուցներ ամենափոքր գումար մը վճարելով՝ ըմբոստից կարգէն ազատ գնով ազատելու համար։

†Բայց հեղինակն ինչո՞ւ համար իր ընտրած դասաւորին խղճէն լուռ կեցած ասէն, (տես Հանդանակութեան երես 43) այսինքն երբ իր հանդանակը չորոշէ, կ'ասալիարկէ որ քաղաքական մարմնոյն [illegible] [illegible] [illegible]

է ենթադրել թէ՝ անձ մը, թէև նոյն ինքն Ալիսպիտէս լինի, ինքնայրդոր իր կարողութեան չափը՝ չեմ ըսեր ճշգիւ, այլ 10,000ին 1 համեմատութեամբ որոշէ, և կամ-ալ իր վրայ պարտուց բեռ մ'առնու։

Հեղինակն այս գժուարին դիրքէն ազատելու համար և մանաւանդ իր սկզբունքին անարդարութեան հետևանքը գուշակելով՝ հանդանակողին ազգասիրութեան և պատուոյ զգացմունքը կ'գրգռէ, ու կ'ըսէ. «Բարոյական այս միջոցով (խղճի) կրնանք ըսել թէ նուէր է տե» սակ մը զոր կ'ընէ ոչ թէ հանդանակողն ազգին այլ ազգը հանդանա» կողին, իրեն յանձնելով իր կարողութեան չափը կանոնաւորապէս ինք» որոշելն. անտարակոյս պահանջելի ճիշդ գումարէն որքան պակաս» իր հանդանակը խոնարհի ոգ առորոգրել, ազգին կողմէն այնպան խ» րեն իբր շնորհ թողված կրնայ համարուիլ։»

Իրաւ է որ այս խորհրդածութիւնն և մանաւանդ հեղինակին մեղմ գրութիւնն, որ փոքր ինչ ընկերակցութեան (socialisme) հոտ ունի, իր հոգւոյն մարդասիրական ազդիւնքն են, բայց իբր հիմնական և գործնական սկզբունք բաշխման՝ ցնորական է և անտեսական դիտութիւնը զայն չընդունիր։ Ըստ որում ակն յայտնի պիտի երևի գործադրութեան մէջ, եթէ երբէք գործադրուի այս կէտն, որ ազգը շարունակ հանգանակ նուէր ընելու պիտի բռնադատուի և 'ի վերջէ կեղրոնական անտուկը պարտի ինքնարուդիս գանձ մը դառնալ որ հանրական պիտոյից բաւելէն ետև՝ ազգին ալ շնորհներ բաշխէ։

Բայց Ռաւսինեան էֆէնտին դարձեալ կ'առարկէ թէ՝ տէրութիւն մը միայն կարող է իր ձեռքն ունեցած նիւթական միջոցներով հանդանակողաց կարողութեան չափը գտնել։ «Ո՞ր կ'մնայ հապա մեր ազգն որ» Տէրութենէն կախեալ ժողովուրդ մ'է, որոյ վարչութիւնը բարոյա» պէս միայն կրնայ գործել . . . և շունի ձեռնհասութիւն հանդանա-

սինեան էֆէնտին թէ այս լշնելու գործն ինչ կնշանակէ. միթէ իր գրութեան հակառակ չէ՞. միթէ ՀՇՄՊԷՍ պիտի գնէ թուանշանները գոց ժողովը, թէ ոչ հոմ և խուլ ինչ ունեցողանձի մը ակարութիւնն որ և իցէ կերպով մը ինչ պիտի լշնէ, եթէ ՀՇՄՊԷՍ որոշէ, հարատահարութիւն է որ 'ի հարկէ Ռաւսինեան էֆէնտին չընդունիր. եթէ քննութեամբ պիտի որոշէ՝ Ռաւսինեան էֆէնտին ակամայ ենդը մանելով՝ մեր սկզբունքը կ'գաւանի, այսինքն ոչ-ոքին ինչնուրիւմ ուսուցել՝ բաց կարելոյն՝ հանդանակողաց կարողութեան չափը։

» կութեան զայս հիմն նիթապէս փնտռելու։ Իսկ թէ զանի պիտի ար-
» գիլէ բարոյապէս փնտռելու զայս հիմն։»

Շատ աղէկ. ուրեմն կամ պէտք է Սահմ. 90դ յօդուածը սրբել, նոյնպէս հեղինակին էրէ-ր պ-ր-ա բառն, և ըսել թէ՝ ազգային հանգանակութիւնն ուրիշ բան չէ այլ կամաւոր ընդհ մը, զոր իւրաքանչիւր անհատ եթէ ինչ հը իրէ՞ն ինչ հը ի՞ն-իրէ ընդհ, թէ ոչ ընդհ ի՞ն-ր-ի ան-հ-ի, երբէ իրէ՞ն ը-ն և պարտքի տակ մնալ չուզեր, և կամ Սահմ. 90դ յօդ. հիմրոնել և իւրաքանչիւր անհատի պարտուց քանակութիւնն ըստ արդարութեան վճռել։

Արդ՝ Սահմանադրութեան վերաքննութեան ժամանակ այս 90դ յօդ. կարելի է սրբադրել՝ բայց քանի որ այժմ ինչպէս որ է պիտի գործադրուի և Տէրութենէն հրամայուած է որ գործադրուի և Տէրութեան օրինաց մէկ մասը կ՚հանարուի, հետևապէս Ռուսինեան էֆէնտիին առարկութիւնն այս պարագայիս մէջ արժէք չունի։

Ազգը Սահմանադրութիւնն ընդունեց. Տէրութիւնը զայն վաւերացուց. Սահմանադրութեան որ և է արամադրութեան հակառակողը պատժելի է։ Այս պատիժը թէ ազգային Վարչութեան և թէ Տէրութեան կողմէն գայ՝ իր անունը չփոխեր։ Վարչութիւնն ուղղակի բարոյապէս կ՚ի՞չխէ իրաւ, բայց անուղղակի նիթական իշխանութեան կերպարանքն ալ ունի և երբ տեսնի՝ այս իշխանութիւնը գործադրելու կ՚պարտաւորի։

Երբ Տէրութիւնն և Սահմանադրութիւնը կ՚ըսեն ազգին որ քու ընդհանրական ծախքդ դիմաւորելու համար ընդհանուր առքք հաւաքէ, և միանգամայն հանգանակութեան էական պայմանն անոր առջևը կ՚դնեն, 'ի հարկէ այս պայմանը գործադրելու համար պէտք եղած միջոցներն որոշելու արտօնութիւնն ալ շնորհած կ՚լինին. ապա թէ ոչ, եթէ գործադրելու հրաման տալէն ետև՝ գործադրութեան միջոցներն արգիլեն, Սահմանադրութիւնն օրէնսդրական հեղնութիւն մը կ՚դառնայ։ Ազգային վարչութիւնն իր շրջանին մէջ գտնուած միջոցներով կ՚ուզէ որոշել հանգանակողաց կարողութեան չափն. թէ կ՚արգիլէ զանի. եթէ Տէրութիւնն արգիլէ, որ յուսալի չէ, Սահմ. այն յօդուածը կ՚ջնջէ. եթէ հեղինակին ակնարկած դժուարութիւններն արգիլեն, կարողութեան չափն որոշելու սկզբան դէմ զօրաւոր առարկութիւն մը չեն։

Բայց նոյն իսկ հեղինակն իր գրքին ազգ. շէնքը հիմն 'ի վեր կը տապալէ, հանգանակութեան այլ և այլ մանրամասն պարագաներու համար ուշի ուշով շարած գեղեցիկ կանոններն աւազի վրայ կ'գրէ, երբ խիղճը դատաւոր կ'բռնէ հանգանակութեան բաշխման։ Այս դատաւորին շնորհն օրէնքի տակ չընկնիր. ինչպէս նոյն ինք Ռուսինեան էֆէնտին կ'խոստովանի,* վասն զի ողորմութիւնը՝ [illegible], չունի. ինքնաբուղխ է և կանոնի ենթարկելն անոր գրգիռ եղող զգացմանց ազնուութիւնը ջնջել է։ Մինչև յայսօր ազգային պատրիարքարանն ինչ կ'ընէ — խելքին փչած ժամանակը կ'մուրայ. կանոնի պէտք չունի. վասն զի կ'մուրայ։ Ռուսինեան էֆէնտին կ'ուզէ որ [illegible] մուրայ. մուրացկանութիւնն ազնուացընել կ'ուզէ անոր օրինաւորութեան կերպարանք մը տալով։ Մուրացկան կառավարութիւն մ'ազգին քակէն խաչ'ի ձեռին ոչ-ափ տակ կ'կողոպտէ, և ազգային գործերն ինչ յոռի վիճակի մէջ կ'ձգէ, արդէն գիտենք։ Արդէն գիտենք թէ Վարչութիւնը փորձ մը փորձեց ազգայնոց [illegible] գիմելու նախորդ տրոց յանձնաժողովին յառակագծին հետևելով։ Հազարէն քանի՞ հոգի ստորագրեցին [illegible] իրենց բաժինն, և մնացեալն ինչ մնաց — ոչ ինչ։

Ուրեմն քանի որ Տէրութիւնը, Սահմանադրութիւնը, Տնտեսական գիտութիւնն և մանաւանդ փորձառութիւնն և արդարութիւնը կ'հաստատեն որ խղճի դրամական արդիւնքն անբաւական են Վարչութեան մը ծախքը դոյելու, և հանգանակութիւնն ըստ կարողութեան բաշխելու սկզբունքը կ'հրամայեն, և չէ թէ մարդասիրական և ընկերականութեան թիւր սկզբունքով մը խղճի գիմելով կամ պէտք է իրաց արդի վիճակն ըստ առաջնոյն շարունակել, և ըսել։ «Ազգային պատրիարքարանը հայրական իշխանութիւն մ'է. իր օրէնքը մարդասիրութիւնն է. իր դատաւորը՝ խիղճը. հիւանդանոց մ'ունի, և մէկ քանի հատ ալ դրպիր, որոնք հայ կ'ուզեն։ Ահա անոր դրան վրայ սա գանձանակը կ'կախեմք. Ո՞վ որ կ'ուզէ իր սրտէն բղխածը թող բերէ նետէ հոն, և Աստուծոյ օրհնութիւնը վրան լինի։» Եւ կամ հրատարակել. «Ազգն ընդհանրական պիտոյքներ ունի, որոց հոգն ազգային պատրիարքարանի յանձնուած է, ազգային պատրիարքարանն իր բա-

* Տե՛ս Հանգանակութեան Ազգը։

բոյական աղեղութեան հետ արժանապատուութիւնն առելցընելու և ընդհանուր աղգին բարոյական, մտաւորական և նիւթական իրաւունքներն և շահերը պաշտպանելու և զարգացընելու համար կանոնաւոր և արդիւնաւոր ելից և մուտից հաշուեկշռի կարօտ է։»

Ռուսինեան էֆէնտին այս վերջին աղդարարութիւնը բանաւոր լեզուաւ կ'հրատարակէ, բայց երբ գործադրութեան կ'գայ՝ կ'թեթեւի և հին ֆ-Ն-Ն-Ը պատրիարքարանի դուռը կ'կախէ։

ԺԵ

Կ. Պոլիս, 27 Դեկ. 1865։

Աղնիւ Կիլիկիոյ,

Մ-Ի՝ իր 708 թուոյն մէջ Բ-Ը-Ի-Ն Ֆ-Ը-ՎԻՆ Գ-Ֆ-Ն-Ը խորագրով յօդուած մը հրատարակեր է որ նշանակութեան արժանի է։ Այն յօդուածին մէջ բուն խնդրէն դուրս եղած խորհրդածութիւնները բաց թողլով՝ անոր գլխաւոր կէտերն այս տեղ կ'ամփոփենք։ —) Քաղաքական ժողովներու նիստերը փոխանակ գործադիր իշխանութեան կեդրոնը լինելու՝ անոնց վիճաբանութեանց ասպարէզ դարձած և աղգին ներկայ տարտամ վիճակին և կեդրոնական անտուկին դատարկութեան պատճառ եղած են։ Բ) Քաղաքական ժողովոյ անդամոց հրաժարման պատճառը բոլոր անդամոց անհամաձայնութիւնն, և որպէս թէ մէկ քանի անձանուն յայտարարութեանց հետևութիւնն է։ Գ) Քաղաքական ժողովի համամտութիւնն, որ գործադիր իշխանութեան մը հարկաւոր է, ապահովելու համար, հարկ է պաշտօնէից գլուխ մը կամ առանձին պաշտօնեայ մ'ընտրել և անոր առաջարկութեամբը պաշտօնակալներ ընտրել. և կամ երկու կամ երեք վստահութեան արժանի անձինք ընտրել որ զատ զատ քննական ընտրելեաց ցանկեր պատրաստեն և Ընդհանուր ժողովին ընտրութեան ներկայացընեն։

Այս կէտերուն վրայ, ներսի մեզ մէկ քանի դիտողութիւններ ընել։ Դախ՝ մեր քաղաքական ժողովները գործադիր իշխանութիւն չեն,

և՝ ըստ արդի Սահմանադրութեան՝ չեն կրնար լինիլ։ Ազգային ժողովները միմիայն օրինաւոր ատեան կ'բանան, ատենական և դիւանական կանոնաց համաձայն, օրական կարգին մէջ գտնուած խնդիրները զատ զատ վիճաբանութեան տակ կ'ձգեն, կ'որոշեն, կ'վճռեն, կ'հրամայեն։ Կը ձգեն կ'երթան. Սահմ. 41դ յօդուածը համառօտիւ կ'ըսէ. Քաղաքական ժողովն ազգային քաղաքական գործոց ընդհանուր տեսչութեան, քննութեան և հաստատութեան պաշտօնն ունի . . . և ոչ գործակալութեան։ Ազգային գործադիր իշխանութեան գլուխը Ս. Պատրիարքն է որ ազգային ժողովներուն որոշումներն իրեն պատասխանատու գործակալաց միջոցաւ 'ի գործ դնելու պարտաւոր է։ Սահմ. առաջին յօդուածը կ'ըսէ. «Պատրիարքն ազգային ժողովոց գործադիր իշխանութիւնը կ'վարէ» այսինքն ժողովոց որոշումները գործադրել տալու պաշտօնն ունի. իսկ գործադիր իշխանութիւնը կը բաղկանայ Վարչութեան և անոր զանազան Ճիւղերուն պատասխանատու պաշտօնէից դասէն, որոց վերբերեալ պաշտօններն անմիջական, ընթացիկ և յարատև են և որոց գլուխ կ'կանգնի Ս. Պատրիարքն, ըստ Սահմանադրութեան։

Արդ՝ քանի որ քուէից արդեամբն ընտրեալ ժողով մը գործակալ կամ գործադրող չէ, որ լուելեայն և մեքենայապէս աշխատի, քանի որ իր ատեանն եղած խնդիրները լոկ քննելու և վճիռ տալու պաշտօնն ունի սահմանադրական սկզբանց համաձայն, հետևապէս խորհելու յատկութեան հետ վիճաբանութեան յատկութիւնն ալ պէտք է որ ունենայ։ Քննել, համեմատել և որոշել, վիճաբանել կ'ենթադրեն։ Այն խնդիրն որ առանց վիճաբանութեան կ'անցնի, կամ ակն յայտնի ճշմարտութիւն մ'է, կամ խիստ գուեհիկ նիւթ մը և կամ միապետական դէպք մը ծնունդն, որուն առջևը միւս գլուխներն 'ի քաստ ազդին կ'ծռին։ Ազգին հին դրութեան ժողովներուն ձայնը չէր երևեր, ինչ երջանիկ վիճակ, ըստ Մ—ի, վասն զի մութին և մէկ երկու հոգի առանց քննելու կ'վճռէին։ Հիմակ բուութեամբ գործ տեսնել ոչ միայն անհնար այլև վնասակար է։ Վասն զի Սահմանադրութիւնը նոր 'ի նորոյ խնդիրներ օր օրի երևան կ'հանէ, որ վիճաբանութեան կարօտ են. վասն զի նոր խնդիրներու ծագումները նոր կարծիքներ կ'ծագին մտաց մէջ, որոց ընդհարումն միայն ուղիղն և ճշմարիտը պիտի որոշի.

վան զի նոր Սահմ. Վարչութիւն մը քանի քայլ առնու Սահմանադրութեան մէջ՝ նոր նոր կէտեր կ'նշմարէ՝ որոց գործադրութեան ժամուն՝ բացատրութեան հետևապէս վիճաբանութեան կ'կարօտին. վասն զի ազգին մէջ այնպիսի բարեկարգութիւններ պիտի մտնեն ոչ երկրաչափական ճշմարտութիւններ չեն. ուստի մինչև որ ժողովականաց մեծագոյն մասին համոզումը չդրաւեն՝ չեն կրնար վճիռ մ'արտադրել և թէ երբէք ժողով մ'առանց համոզման և Սահմ. օրինաց նկատողութեան որոշում մ'ընէ, այն որոշումը՝ թէև միշտ գործադրելի և յարգելի, ժամանակին պաշտպանելու համար ոչ բառական լոյս և ոչ բաւական փաստ կ'ընծայէ և հետևապէս որոշումն անարդիւն, ժողովին վիճակը միշտ զրգռման և հատարակաց միտքը վրդովման և զայրացման մէջ կ'մնան։ Ուրեմն բուն իսկ ժողովներուն էութիւնը կ'ցուցնէ որ գործադիր իշխանութիւն չեն, այլ քննող, վիճաբանող, որոշող առեւաններ, այսինքն խոհուն և խօսուն հատարական էակներ, որոց վճիռները Ս. Պատրիարքին նախագահութեամբ կ'արձակուին և ազգային պաշտօնեաներն և գործակալներն առանց քննութեան և դիտողութեան այն վճիռները կ'գործադրեն։

Բայց միթէ սանդղ է որ մեր առաջին, երկրորդ և երրորդ ժողովները միշտ «Ոչ» վիճաբանութիւններ բրած են և կ'ընեն, ինչպէս որ զանոնք կ'ամբաստանէ Մ«Ոչ», և ազգին այս թշուառ վիճակին պատճառ եղած են, կ'ըսէ։

Արդարև ամէն մարդ չկրնար Պիկերան լինիլ, ամէն ժողովական Սահմ. Ձեռ. յօդուածին պահանջած բարոյական հանգամանքները չէ ունեցած, հետևապէս ամէն ժողովական մի և նոյն ազգային խնդիրները մի և նոյն լուսով չնկատեր և չմեկներ, ուստիպ կ'ծագի կարծեաց տարբերութիւն, անհամաձայնութիւն։ Սակայն բոլոր ժողովականները եթէ ազգին օգուտը կ'սիրեն և Սահմ. սկզբունքը կ'յարգեն, կրնան որ և է ազգային կարևոր խնդրոյ վրայ համաձայնիլ՝ բառական է որ օրինաւոր վիճաբանութեամբ համոզուին։ Այս համոզումն արտադրելու համար հարկաւ անտեղի վիճաբանութիւններ ալ կ'լինին, որոց առջևն առնելն Ատենապետին պարտքն է, և հատուն միտքերը կ'յոգնին. բայց քանի որ մեր ազգին պիտոյքը քաջաճանչող անձինք քիչ կան; և դեռ ևս պիտի ծնին. այն միտքերը պէտք է որ առանց բռնանալու

յոգնին ու այնչափ՝ որչափ որ օրինաւոր վիճաբանութիւնը կ՚ներէ, և խնդիրը կ՚տանի, մինչև որ կարևորն և սահմանագրականը շօշափել տան։

Մեր քաղաքական ժողովները հարկաւ այս վիճակին մէջ գտնուած են, այո, շատ խօսեր և շատ վիճաբաններ են, և երբէք այսպիսի վիճաբանութիւններ ՆԱԽ չեն համարուեր երբ համոզելու պէտքը զգացուեր է. բայց ըսել թէ՝ որովհետև ՆԱԽ վիճաբանութիւններ կ՚լինին, որովհետև գործադիր իշխանութիւն մը վիճաբանելու պէտք չունի, պէտք է նաև վիճաբանութեան իրաւունքը ջնջել, Սահմանադրութիւնը ջնջել է։ Դիւանները գործնէ՝ ատենական կանոնաց համաձայն՝ միշտ խնդրոյ մը վիճաբանութիւնն իր սահմանին մէջ պահել, երբ կ՚տեսնեն թէ անձնական կիրք, հակառակասիրութիւն, իշխանասիրութիւն և իմաստակութիւն տիրապետել կ՚ուզեն։ Ահա օրինակի համար Ս. Երուսաղէմի վանուց կանոնագիրն։ Ահա ընդհանուր տրոյ խնդիրն։ Առաջինը Խաչն ժողովին աչքէն հարևանցի անցնելէն ետև՝ Ընդհանուր ժողովին առջևն ելաւ և անոր վեց եօթն նիստերը գրաւեց, նշանաւոր և վիճաբանութեամբ լի նիստեր, բայց վերջապէս հաստատուեցաւ և օրինաւոր բան մ՚երևան ելաւ, որ եղած վիճաբանութեանց արդիւնքն է։ Իսկ միւս խնդիրն այս և այն յանձնաժողովին ձեռքէն անցնելէն ետև՝ թէ Քաղաքական ժողովին և թէ Ընդհանուրին մէջ առանց վիճաբանութեան ընդունուեցաւ, և արդիւնքն ինչ եղաւ — չգործադրուեցաւ։ Եւ ահա այս խնդրոյն անլուծանելի մնալն է, ըստ մեզ, որ գլխաւորապէս տեղի տուած է ազգային ներկայ վիճակին և կեդրոնական մնոտկին դատարկութեան։

Ուրեմն ամէն անգամուն որ ժողովոյ մէջ կամ մասնաժողովի մը միջոցաւ խնդիր մ՚օրինաւոր վիճաբանութեան բովէն անցած է, այն խնդիրը զտուած, լուծուած և գործադրուած է, միշտ այս առթիւ լուսաւորուած ժողովուրդի մը համակրութիւնն և պաշտպանութիւնը գտնելով։ Ուրեմն չմեղադրենք մեր Քաղաքական ժողովներն երբ սահմանադրապէս վիճաբանին և օրինաւոր որոշման գան։ Վասն զի անոնց մասնաւորական կարողութիւնն և ազդասիրութիւնը կասկածի տակ ձգել է ենթադրելը թէ՝ մէկին կամ միւսին խօսքովն՝ առանց համոզուելու՝ խնդիր մը կ՚որոշեն և կամ իրենց կիրքը յագեցնելու համար ստոսի վիճաբանութիւններ և արգելքներ կ՚յարուցանեն։

Այս մեր դիտողութիւնները Մ--ի-ին ըրած երկրորդ դիտողութեան կէտին ալ պատասխան են. ըստ որում՝ ամէն ժողովոց էական և անհրաժեշտ մէկ տարրը կարծեաց տարբերութիւնն կամ անհամանութիւնն է, որ վիճաբանութեամբ կ'սարքուի, ըստ որում՝ մեծագոյն մասին որոշումն, օրինաւոր կամ ապօրինաւոր, միշտ որոշում է և անհամաձիտ գտնուող ժողովականները չեն կրնար նոյն որոշման դէմ դնել, հետևապէս արդի ժողովականաց մեծագոյն մասին հրաժեշտն ալ չկրնար անհամանութեան արդիւնք համարուիլ։ Ուստի՝ ուրիշ պարագաներու մէջ, որ մեզի անյայտ են, պէտք է այս հրաժարմանց պատճառը փնտռել։ Դարձեալ չենք կրնար ենթադրել որ Ֆ--ը հայ-- մը և ժողովականի մը հրատարակած յայտարարութիւնները տեղի առած լինին հրաժարմանց, որովհետև՝ ոչ միայն հրաժարականի սկիզբը նոյն հրատարակութիւններէն առաջ եկած է, այլև Քաղ. ժողովն՝ անոնց հեղինակները՝ տպագրական կանոնաց համաձայն՝ կրնար դատապարտելի կոչել տալ, որով բնաւ իր արժանապատուութեան և համարման արատ մը բերած չէր լիներ, քանի որ՝ այս տպագրական ազատութեան գարուս մէջ՝ մամուլը մինչև անգամ մեր ժողովներէն աւելի բարձր իշխանութեանց գործերը դատապնութեան ներքև կ'ձգէ և երբ օրինաց սահմանէն շեղի, կ'պատժուի։ Ըստ մեզ, հրաժարման գլխաւոր շարժառիթն աւելի հաւանական է գտնել ազգային արոց խնդրոյն մէջ։

Վերջապէս երրորդ կէտն՝ որ ամենէ կարևորն է, չկրցանք ըմբռնել թէ Մ--ի- ազգային Սահմանադրութեան որ սկզբունքէն քաղած է։ Իր առաջարկութիւնը՝ լոկ առաջարկութիւն մ'է, զոր Մեծ. Սէր-Վիլլէն էֆէնտին արդէն ըրած և մերժուած է, և որ թերևս Սահմանադրութեան վերաքննութեան ժամանակ նկատողութեան առնուի, թէև գլխովին սահմանադրական տրամադրութեանց հակառակ է։ Սահմանադրական իշխանութեանց մէջ այն առաջարկած միջոցը կ'գործադրուի, կ'ըսէ Մ--ի-. այդ հաւատալի է, բայց չէ թէ քուէարկութեամբ ընտրելի պաշտօնատարներու համար, ինչպէս կ'ընէ Անգլիա, այլ գործադիր պաշտօնեաները հաստատելու համար, որոնք մեր Սահմանադրութեան գործական կանոնաց (organique) կ'վերաբերին։ Ճակատն այն վերջնական անձինքը, զորս Մ--ի- պաշտօնէից գլուխ կ'ա-

նատանէ , ով պիտի ընարէ : Ա.ին անձինքն Ընդհանուր ժողովէն առնլի Ձեռնհաս իշխանութեան տէր պէտք է լինին , որ իրենց հաստատած անձինքն իրրև ընարելի կացուցանեն և կերպով մ՝ազատ քուէարկութեան անդրանդարձելի իրաւունքը բռնադարձեն : Օսմանեան Տէրութիւնն՝ այս բարձր իշխանութիւնն անգամ՝ որ մեղի ազգային Սահմանադրութիւնը շնորհած է , երեսփոխանութեան սկզբունքը յսրգելով այն իրաւունքն իրեն չէ վերապահած , զոր Եթէ ուզէր կրնար ընել : Մ—ն՝ թերևս չգիտութեամբ՝ երեսփոխանութեան ընտիր իրաւունքը վտանգի մէջ կ՝ուզէ թողուլ՝ նոր սկզբունք մը քարոզելով և Ն—ն—ն—ն մը երևան հանելով : Ա.յսպիսի իշխանութիւն մ՝ուրիշ պարագայի և ուրիշ առթի մէջ Գրանսայի Կայսրը կ՝գործածէ ընտրողաց 'ի պաշտօնէ ընարելիներ ներկայացընելով : Բայց Մ—ն՝ բուն նպատակն ինչ է այս առաջարկութիւնն ընելով — կ՝ուզէ որ Գաղ . ժողովն անով համամտութիւն զանէ : Էհ , ինչ պէտք է համամտութիւն փնտռել այն ժողովին մէջ ուր Մ—ն՝ վիճաբանելու , այսինքն հանդուրելու պէտքը չզգար . ինչպէտք է համամտութիւն այն ժողովին մէջ , երբ Մ—ն՝ կարծէ թէ անի լոկ գործադրող ժողով մ՝է . և Եթէ այսպէս է և Եթէ գործադիր իշխանութեան համամտութիւն հարկաւոր է , միթէ առանց արամարանութեան մնացեալ չէ՞ որ գ—ր—գ—ի—ի ն—ն—ն—ն մ՝ան—ն—ն—ն ն—ն—ն—ն , —ս—ն—ն պ—ա—ր—ի—ր—ն հ—ա—մ—ա—ր լինին . հ—ա—ն—պ— —ա—ն—ն ա—ր—ն—ա—ա—ր ն—ա—ր—ն—ն ն—ա—ր—ն—ն ա—ն—ն—ն

պաշտօնի հանել համամտութիւն գտնելու պատրուակաւ։ Ա. յս համամտութիւնը ձեռք ձգելոյ միայն անկարելի այլև վնասակար է։ Երեսփոխանութիւնն արդէն զատ զատ կարծեաց արտայայտութիւնն է, որուն ծնունդն եղաղ-գաղ. ժողովը հարկաւ տարբեր տարբեր տարբերաք կ'բաղկանայ։ Ժողով մը ձնշման և կամ մտատրական թերութեան տակ գտնուած կ'սեպուի երբ շարժումի և կենդանութեան նշոյլ մը չցուցներ։ Ա. յս կենդանութեան նշաններն իր վիճաբանութեանց և խորհրդոց արդիւնքն են, որ վերջը գործ կ'գառնան։ Լռութիւնը, բնութիւնն և թմրութիւնը յառաջադիմութիւն չեն։ Աղց. ժողովները գեռ ևս շատ պիտի վիճաբանին մինչև որ խիստ կարևոր խնդիրները պարզուին և ձշմարտութիւններ գտնան։ Փափաքելին այն է միայն որ այս ձշմարտութեանց հասնելու համար անաչառմտադրական և բնական միջոցներու չձեռնարկուի և ժողովներուն անկայուն վիճակին բուն պատճառը քննելով՝ անոնց օրինաւոր գործոնն մը մտածուի՝ ըստ Սահմանադրութեան։

ԺԶ

Կ. Պոլիս, 12 հոկտ. 1865։

Ա. յս անգամ Մ--ն- տագնապեր է Փ-ը-ւ-ն Ֆ-ը-ի Գ-ն-դ-ն վրայ երկրորդ յօդուած մը հրատարակելով՝ իրր պատասխան մեր նախորդ նամակին։ Ա. յս երկրորդ յօդուածն առաջնոյն սխալ ու ձնապաղ կրկնութիւնն է, սա տարբերութեամբ որ Մ--ն-ին հակասութեանց նոր դուռ մը բացած է։ Մ--ն- գոհ է որ իր առաջին յօդուածը նշանակութեան արժանի գտաւելով՝ տարօրինակութեանը մասին, քննադատութեան առնուելը է մեր կողմէն, բայց շատ հեռի է զմեզ գոհ ընելէն մեր մէջ բերած առարկութեանց օրինաւոր, սահմանադրական և ուղղակի լուծում մը տալով կամ զանոնք ընդունելով։ Ա. յս լուծումն այնչափ իրաւունք ունինք պահանջելու, ոչ միայն մենք՝ այլև բոլոր հասարակութիւնն, որչափ որ ինքն իր չորս բառանանամեայ խմբագրա-

գրական հեղինակութեամբն ինքզինքը միշտ կազմ. պատրաստցուցուցած է և կ'ցուցնէ որ և է խրդրոյ մասին պատասխանելու, վիճելու և լուսաւորելու։ Սակայն զարմանալին այն է որ՝ մինչդեռ Մ--ն-զմեզ կ'ամբաստանէ թէ իր առաջին յօդուածէն մեր հանած հետևութիւնները սխալ են, իր երկրորդ յօդուածին մէջ նոյն հետևութեանց վրայ երկարօրէն կ'ճառէ և զանոնք հաստատելու կ'ձգնի. միանգամայն մեր առարկութիւնները կրճատելէն և այլակերպելէն ետև՝ անոնց ղլխաւոր կէտերն անպատասխան կ'թողու և մեզի այնպիսի հարցումներ կ'ուղղէ որոց պատասխաններն, եթէ ոչ ինքն, ուշիմ ընթերցողք կրնան ակներև տեսնել մեր նախորդ նամակին մէջ, սահմանադրական սկզբանց մէջ, ազգային գործոց ներկայ վիճակին մէջ։ Ըստ մեզ՝ Մ--ն-ին այս ընթացքը հասարակութեան կարծիքը լուսաւորելու միջոց մը չէ, ասի անկեղծ վիճաբանութեան ապացոյց մը չէ, այլ բանակռիվ յարուցանելու դրդիռ մը, Հ-ն--ն--Ն-ն -ի մը, որ երբ ժողովի մէջ պատահի՝ Ամենապետը կ'ուղղէ, երբ լրագրի մէջ՝ հասարակաց կարծիքն։ Ըստ որում՝ երբ Մ--ն- իր երկրորդ յօդուածին մէջ կ'ուրանայ ինչ որ ըսած էր առաջնոյն մէջ, երբ Մ--ն- մէյմը կ'ըսէ, «Սահմանադրութեան հաստատուելէն 'ի վեր Վարչութիւն Վարչութեան և ժողով ժողովի յաջորդեցին և դժբաղդաբար սնոտի վիճաբանութիւններէ և հրաժարականներէ զատ ուրիշ բան չտեսնուեցաւ» և դեռ այս տողերուն մեջտեղը չշորցած կ'դառնայ կ'ըսէ. «— Եթէ ասկէց առաջ կազմուած Քաղաքական ժողովները կրցան բան մը գործել՝ զուգութեամբ գործեցին» երբ Մ--ն-՝ առաջին յօդուածին մէջ — «Քաղաքական ժողովին պատասխատու դիրքին պատճառն իրեն անհամամտութիւնն է» կ'ըսէ, և երկրորդ յօդուածին մէջ «— . . . մեր ակնարկութիւնները չէ թէ վիճաբանութեան էութեան վրայ էին այլ հակառակութեան ոգւոյն դէմ էին» կ'ըսէ. իբր թէ անհամամտութիւն և վիճաբանութիւն տարբեր բաներ են։ Երբ Մ--ն-՝ մի և նոյն յօդուածին մէջ՝ ասդին կ'սրամտի և կ'գոչէ. «— Մէկ բան Վրոյրին . . . գործադիր իշխանութեան մը . . . վիճաբանութեան իրաւունքը ջնջուի. ասիկա Մ--ն-ի խմաստը չէ այլ Վրոյրին երևակայածն։» Եւ անդին կ'ըսէ. — «Կարծեաց տարբերութիւնը բնական է խոհուն մարդոց համար, ուստի և անհրաժեշտ է մանաւանդ խոր-

հող և որոշող բարձրագոյն ժողովներու համար, ինչպէս են Եր-
ն-ին կամ Երն-ին ժողովներն։» Եւ ասկից բնականապէս չ՚հե-
տևիր որ Բ-ղ-ին ընդ-ն-ն և ն-ն-ն ի-ն-ն մ՚է, ըստ Մ-
-ի։ Եւ Մ-ն- այս խնդրոյն կ՚շարունակէ այսպէս. — «Եթէ գոր-
ծադիր ժողովներն, ուր սկզբանց և գրութեանց վրայ վիճելու հարկ
չկայ. . .» այլ միայն մասնաւոր խնդիրներու վրայ կարծիք յայտնե-
լու հարկ կայ, ըստ Մ-ի, իբր թէ կարծեաց զանազանութիւնն
այլ և այլ սկզբանց արդասիքը չեն, իբր թէ Քաղաքական ժողով մը
դատապարտուած է միայն զուտ հիկ նիւթերով զբաղիլ և առանց որոշ
սկզբունքի գործել։ Երբ Մ-ի գրչէն՝ այս և ասոր նման անհեթեթ
բացատրութիւններ՝ սկզբունքի թիւրութենէ սեպէ, անզգուշութենէ
սեպէ, կ՚սպրդին, Վրոյր անոնց վրայ չուզեր ծանրանալ, վասն զի
Վրոյրի համար աւելի ծանր և կարևոր սկզբունքի կէտեր կան պար-
զելու և այս կէտերն են։ — ա) Քաղաքական ժողովին մեծագոյն
մասին հրաժարման պատճառն իրեն մէջ ծագած անհամաձայնութիւնը
կրնայ լինիլ, այո՛ կամ ոչ։ բ) Քաղաքական ժողովը սահմանադրա-
կան սկզբանց համեմատ գործադիր իշխանութիւն է, այո՛ կամ ոչ։
գ) Քաղաքական ժողովին համաձայնութեան համար ընտրելեաց ցու-
ցակ պատրաստելը Սահմանադրութիւնը կ՚ներէ, այո՛ կամ ոչ։ Մ-ի
այս հարցումներուն -ս՝ կ՚ըսէ, բայց ապացոյց չունի, կամ լաւ ևս ը-
սեմ՝ հեղնութիւններ ունի, որոնք ապացոյց չեն։ Մեք -ն կ՚ըսենք,
և՝ ինչպէս առաջ՝ հիմակ ալ մեր ըսածը հաստատելու համար Մ-ին
պէս Եւրոպա և Ամերիկա երթալու պէտքը չենք զգար անոնց կառա-
վարութեանց եղանակէն ապացոյցներ փնտռելու, այլ սահմանադրա-
կան սկզբանց, ազգային գործոց ընթացքին և փորձերու վրայ
կռթնելով կ՚ուզենք խօսիլ։

ա) Քաղաքական ժողովը միշտ մեծագոյն մասով աղէկ գէշ իր
պաշտօնը շարունակեց, երբ Ընդհանուր ժողով գումարուեցաւ և կեդ-
րոնական անատուկին նեղվիճակին դարման մը խնդրելու մտօք՝ առաջ-
արկութիւն եղաւ, Ընդհանուր ժողովը դարման մը ցցուց։ Քաղաքա-
կան ժողովին ըստ. Ըստ որում ազգային տրոց օրինաւոր բաշխման
և հաւասարման եղանակին հաստատութիւնը պիտի ուշանայ, երբ
տարուան անվճար մնացած 75 դրուշի թերհաշիւ տուրքը հաւաքէ

առ այժմ, զլխիդ ճարը տես և մի հրաժարիր։ Քաղաքական ժողովը գոհ եղաւ. այս որոշումն ընդունեց և մեծագոյն մասով գործադրութեան գրաղելու սկսեր էր, երբ յանկարծ Առենապետ էֆէնտիին հրաժարականը Մ--ի-ին մէջ երևան եկաւ։ Առենապետ էֆէնտին* ինչ կ'ըսէր. կ'ըսէր թէ ինք հ--ռ--դ չէ Քաղաքական ժողովին հետ արդի պարագաներով գործել և պատասխանատուութեան ներքև ընկնիլ։ Ասի պարզօրէն ըսել էր. Ես Ընդհանուր ժողովին որոշումը չեմ ընդունիր։ Եւ ինչո՞ւ համար. որովհետև՝ որոշ շրջաբերականի հեղինակութիւնն, որ Առենապետ էֆէնտիին էր, մէջ խաղացած էր և օրինաւոր փաստաբան մը չէր գտած Ընդհանուր ժողովոյ առենին մէջ, թէև անոր անյաջողութեան բուն պատճառն անգործադրելի լինիլն էր, ինչպէս որ Քաղաքական ժողովն ալ խոստովանեցաւ։ Միթէ Քաղաքական ժողովն Առենապետ էֆէնտիին հրաժարելովն անմիջապէս օրինաւոր թիւը կորցնա. ոչ, շարունակեց իր նիստերը քանի մը շաբաթ ևս, երբ յանկարծ հրաժարականները յանձնեցան և Քաղաքական ժողովն անդամալոյծ ըլլին։ Հետևապէս հրաժարականները չէ թէ վիճաբանութեան, չէ թէ անհամաձայնութեան արդիւնքն էին, այլ պարզապէս ազգային տրոց խնդրոյն անլուծանելի մնալուն արդասիքն էին, որով շատ մը եստիւններ վիրաւորեցան և դեռ պիտի վիրաւորուին՝ եթէ այս խնդիրն օրինաւոր վիճաբանութեամբ չլուծուի։ Բայց Մ--ի՝ Քաղաքական ժողովին բաժին կ'հանէ մասնաւոր գործեր միայն, չուզեր որ այնպիսի ժողով մ՝ օրինաւոր սկզբանց վրայ հիմնեալ բան մը արտադրէ։ Շատ աղէկ։ Ո՞ջի Քաղաքական ժողովը տարբի խնդիրը Մ--ի-ին ուզածին պէս թեթև բռնեց և գործը կախ մնաց։ Երեսփոխանական ժողովն ուրեմն թոյլ խորհի. Մ--ի- անտրամ միայն խորհրդածութեան իրաւունքը չդլանար։ Բայց երբ Ընդհանուր ժողովին մէջ ալ Թուտինեան էֆէնտին տրոց հաստատութեան համար առաջարկութիւն մը կ'ներկայացընէ և վիճաբանութեան տակ ձգել կ'ուզէ, Ընդհանուր ժողովը չուզեր մտիկ ընել և առանց վիճաբանութեան վերջ՝ի վերոյ որոշում մը կ'բնէ. որոշումն անգործադրելի կ'մնայ և այնուհետև փարձով համոզուելով որ եթէ ազգային տարբն օրինաւորա-

* Սեր—Գ.ի.չեն Էֆէնտի։

թեամբ չհասասաստի արդիւնք մը չպիտի բերէ, նոր յանձնաժողով մը կ՚կազմէ։ Դոյն միջոցին Քաղաքական ժողովն ալ տուրքի փոխարէն նոյէր հաւաքելու կ՚ելնէ, այս ալ չյաջողիր, ու դարձեալ Քաղաքական ժողովն Ընդհանուրին կ՚դիմէ, որ 75 դրուշ տուրքը հաւաքելու դիրքին որոշման դալով դլխացաւէ կ՚ազատի, ինչպէս որ ըսինք։ Քաղաքական ժողով չեղած տեղն Սահմանադրութեան առջի դործադիր յանձնաժողովն այս ընթացքը բռնեց և դալիք Քաղաքական ժողովին իրաւասութեան թողուց իրաւամբ արոց բաշխման և հաւաքման եղանակն որոշել։ Քաղաքական ժողովները հեռդհեռէ եկան և ըստ որում տուրքի բաշխման և հաւաքման եղանակ մ՚օրինաւորապէս չորոշեցին, հեռդհեռէ վիճաբանեցան կամ կործանեցան։ Ուրեմն արդի Քաղաքական ժողովին քայքայման բուն պատճառն անհամաձայնութիւն չէ, այլ համաձայնութիւնն է, կը բերէն համաձայնութիւն մը՝ որ վիճաբանութիւնը արոց խնդրոյն նկատմամբ, թէ Քաղաքական ժողովին և թէ Ընդհանուր ժողովին մէջէն արտաքսեց և ազդային դործերն այս յոռի վիճակին հասուց։ Մեք՝ մեր նախորդ դրով այս պատմական պարագաներուն մէջ չմոռնք և միևնակ հրաժարմանց պատճառը արոց խնդրոյն մէջ փնտռելու է ըսինք, կարծելով որ Մ—ի պէս խմբագրատեսակ մը ազդային դործոց մէջ կ՚ապրի, Սահմանադրութեան և վիճաբանութեան ոդին կ՚հասկընայ և մեր ամենապարզ ակնարկութիւնները — «Դ-ը-ի-ն հ-ը-ց-ա-կ մը լ-ե-ա-» չհամարիր։ Բայց իր երկրորդ յօդուածը համոզեց զմեզ որ Մ—ի իրաւունք ունի մեր լեզուն չհասկրնալու՝ քանի որ Քաղաքական ժողովի մը պաշտօնն ինչ է չդիտէ, և անոր ընթացից անհմուտ է։ Քանի որ անոր դլուխը կ՚կապէ սոսկ մատնաւոր դործերն և այս կարճ սեստեթամբ կ՚դատէ անոր վարմունքը։ Մ—ի կ՚մոռնայ որ Քաղաքական ժողովին ձեռքէն պիտի անցնին ազդային հանրական բարեկարդութեանց յատակագիծները, կ՚մոռնայ որ Քաղաքական ժողովին ձեռքէն պիտի անցնին այլ և այլ կանոնադրութեանց խմբագրութիւնը, կ՚մոռնայ որ Քաղաքական ժողովին հատուն ուշադրութեան արժանի են չորս միլիոն հայոց զանազան յարաբերութեանց մշակութիւնն, ազդային ընդհանուր շահուց և իրաւանց պաշտպանութիւն։ Եւ, ինչպէս չմոռնայ Մ—ի այս բաները քանի որ մեր ազդային ժողովներուն սահմանը՝ «գաւառի մը ջուրի» կ՚նմանցնէ, և «ինչ պէտք է անոր մէջ

փոխարինիկ յարուցանել» կ'ըսէ։ Ինչ գործելի և գեղեցիկ բաղդատութիւն ազգին համար։

Ընդհանրապէս Քաղաքական ժողովոյ երերուն վիճակին և մասնաւորապէս արդի Քաղաքական ժողովին հրաժարման պատճառը արդոյ խնդիրը լինիլը հաստատելէն ետև՝ կ'անցնինք երկրորդ կէտին։

Բ) Ինչ է գործադիր իշխանութիւն մը։ Գործադիր իշխանութիւն կ'կոչուի այն պաշտօնէից դասակարգութիւնն՝ որ կեդրոնական Վարչութենէ մը կամ ժողովէ մը բղխած որոշումներուն և անօրէնութեանց անմիջական գործադրութեան կ'զբաղի։ Հաստատեալ օրինաց կատարման կանոնաւորապէս և գործնապէս կ'հսկէ և իր գործողութեանց արդիւնքը կեդրոնական գլխին, որուն հետ անգուլ յարաբերութեան մէջ է, կ'հաղորդէ և անոր հրահանգաց համեմատ միշտ կ'շարժի։ միշտ կ'գործէ։ Այս գործադիր իշխանութիւնն իրապէս պատասխանատու է զինքն ընտրող ժողովին կամ լաւ ևս ըսեմ անուանող գլխին։ Ընդհանրապէս գործադիր պաշտօնական մարմին մը՝ որուն ճիւղերը կեդրոնէն սկսեալ կ'տարածին և կ'դադրին այն տեղ, ուր աղգային իրաւատութեան սահմանը կ'դադրի, քուէով չընտրուիր. որովհետև ընդհանուր օրէնք է որ գործադիր մարմնոյ մը անդամներն իրենց վերբերական պաշտօններուն ձեռնհաս ու յարմար՝ և կեդրոնական ներշնչութեանց համամիտ անձինք լինին։ Ուստի այս միահանուռ մարմնոյն յատուկ յատուկ յատկութիւններն որոշողը քննութիւնն ու յայտնի ընտրութիւնն են ամէն սահմանադրական դրութեանց մէջ։ Երդ՝ կը հարցնենք Մ—ն-ին թէ մեր Քաղաքական ժողովն այս վերոյիշեալ պայմաններն ունի. կ'հարցնենք թէ կարելի՞ բան է որ ժողով մը գործադիր մարմին լինի, որ իր որոշումը տալէն ետև՝ նոյնն իսկապէս գործադրէ։ Կ'հարցնենք Մ—ն-ին թէ՝ թոշակաւոր ժողով մ'անդամ խորհուրդ և որոշում տալու սահմանէն դուրս բան մ'ընելու արտօնութիւն կրնայ ունենալ, թող այն ժողովն որուն անդամները լոկ աղգային անձնուիրութեան և պատուոյ անդամներ են, և թէև բարոյապէս պատասխանատու Ընդհանուր ժողովին, բնաւ պարտաւոր չեն, և չեն կրնար գործադրել այն բաներն որոց վրայ միայն քննութեամբ որոշում և խորհուրդ տալու և ընդհանուր կերպով ու տեսապէս վերատեսչութիւն ընելու պաշտօնն ունի։ Բայց Մ—ն կ'պատասխանէ թէ Սահմա-

նադրութեան 42դ յօդուածին մէջ Քաղաքական ժողովին համար ՇՐՋԱՆԳՐՈՒԹԻՒՆ ձեւնարկել ըսուած է։ Մ—ն բառերու հետ կ'խաղայ։ Սահմանադրութեան սատն իրը զէնք կ'գործածէ անոր ոգւոյն և սկզբանց դէմ։ Թող Մ—ն նորէն կարդայ 42դ յօդուածին վարի տողերն ուր գրուած է թէ Քաղաքական ժողովն այս ինչ և այն ինչ խորհրդէն ՇՐՋ բացատրութիւն կ'ուզէ. միթէ ասկէց կ'հետևի թէ Քաղաքական ժողովին կնքով կ'լինին պաշտօնական բոլոր թղթակցութիւնները. միթէ արդէն հաստատուած և Սահմանադրութեան պահանջած մէկ կանոնը չէ՞ որ Ս. Դպրապահին կնքով և ստորագրութեամբ վաւերանան թղթակցութիւններն և թէ նա է գործադիր իշխանութեան կեդրոնն ու գլուխը։ Թող Մ—ն կարդայ Սահմանադրութեան 1ն յօդուածը. թող կարդայ 41դ և 43դ յօդուածներն և պիտի տեսնէ որ ամենուն մէջ քննութիւն, որոշում, լուծում, անօրէնութիւն պիտի ընէ ըսուած է Քաղաքական ժողովին համար և ամենուն մէջ գործադրութեան պաշտօնն ազգային ժողովոց Ս. Դպրապահին տրուած է։ Բայց Մ—ն երբ օրինաւոր փաստ չունի՝ կ'սկսի ծիծաղիլ կամ հեգնել։ Եւ ծիծաղիլ ինչ բանի համար, այնպիսի խնդրոյ մը համար որ Սահմանադրութեան դոյութեան և չդոյութեան խնդիր մը կ'դառնայ։ Այո, Մ—ն կ'ծաղրէ երբ կ'ըսէ, «— Վերոյիշեալ . . . խօսքէն կ'հասկցուի թէ ազգային գործադիր իշխանութիւնն բսելով պատրիարքարանի դրագիրներն, Է—ՆՀԷՆներն և ժամկոչներն և անոնց գլուխ Ս. Պատրիարքը կ'ուզէ իմանալ։» Մ—ն ծիծաղաշարժ կ'երևի և կամ նուաստութիւն կ'համարի որ ազգային գործակալ մը կամ դրագիր մը գործադիր իշխանութեան մէկ մասն ըսուի. վասն զի Մ—ն անդադար ժողով, վարչութիւն, գործադիր իշխանութիւն կամ մարմին իրարու հետ կ'շփոթէ։ Ժողովը կ'որոշէ, Վարչութեան մասը կ'հակէ կ'վարէ, իսկ գործադիր մարմինն իրագէս կ'գործէ։ Սահմանադրութեան գործադրութեան արդի վիճակին մէջ, քանի որ անոր ներքին կանոնադրութիւնները խմբագրուած և Ընդհանուր ժողովին կողմէն հաստատուած չեն, Քաղաքական ժողով մը կայ որ կ'որոշէ, Վարչութիւն մը կայ, որ տարուամ է, իսկ գործադիր մարմնոյն մինակ գլուխը կայ, որ է Ս. Դպրապահն, և մինակ ոտքն, որք են յետին գործակալներն։ Արդ՝ քանի որ Գլխէն սկսեալ մինչև ոտքը գալու հա-

մար օրինաւոր պաշտօնական դասակարգութիւն մը կազմուած չէ, շատ անգամ ժողովին որոշումն անգործադրելի կ'մնայ, Ս. Դախագահին հրամանը գործադրելու համար յարմար և կարևոր գործիքը կը պակսին և երբ ընտրութեանց ժամանակը հասնի անիշխանութիւնն ազգային գործոց մէջ կ'տիրէ։ Ազգային Սահմանադրութեան սկզբանց համաձայն այս պաշտօնէից դասակարգութիւնը դիւրին է յօրինել և մինչև ցայսօր յօրինուած պէտք էր լինէր որ Վարչութեան մեքենան միօրինակ շարժի։ Սակայն գրամի պակասութիւնը Սահմանադրութեան այս պահանջման կատարումն արգիլեց, թէև գրամն ալ օրինաւոր գործիքներու աշխատութեամբը միայն հնար է ձեռք ձգել։

Ուստի Քաղաքական ժողովն Երեսփոխանական ժողովին առջև լոկ իբր քննող և որոշող պատասխանատու կ'մնայ, բայց Ս. Դախագահին և իր առջև նիւթապէս պատասխանատու լինելու պայմանաւ գործադրող թոշակաւոր պաշտօնէից դասը կ'ընտրէ և Ս. Դախագահը զանոնք կ'անուանէ քաղաքական, դատաստանական, տնտեսական, երկրագործական, ուսումնական, վանական, և այլն գործոց համար։ Այս պաշտօնատարները Վարչութեան և անոր այլ և այլ ճիւղերուն վերաբերող գործերը դիւանական պաշտօնէից հետ կ'պատրաստեն, կ'կոկեն և անոր որոշման կ'ներկայացնեն։ Երբ որոշումները կ'լինին անմիջապէս գործադրութեան կ'սկսին՝ իւրաքանչիւրն իր սահմանին մէջ, և առանցմէ գործ, արդիւնք հանելու կ'աշխատին. եթէ գործադրութեան դժուարութիւններ առնեն, ժողովէն և խորհուրդներէն հրահանգ կ'ուզեն. եթէ պարտադանց գտնուին՝ կ'պատժուին։ Այս միջոցաւ, եթէ ժողովոց ընտրութեան ժամանակն ալ գայ, Վարչական մեքենան շդադրիր գործելէ, գործադիր պաշտօնատարները վճռուած գործերը կ'շարունակեն կարգադրել, և Դախագահին հրամանաւ ընթացիկ գործերը կ'տնօրինեն և նոր ժողովոց և խորհրդոց համար եկած գործերը կ'պատրաստեն, կ'զանն և պէտք եղած տեղեկութիւնները կ'յայտագրեն։ Ահա մեք այս կերպով կ'իմանանք գործադիր իշխանութեան մը պաշտօնն, որուն Քաղաքական ժողովին բնաւ վերաբերութիւն չունենալը հաստատեցինք, և կ'հրաւիրեմք Մ—ին որ այս կիտին վրայ լաւ խորհի։

÷) Ընդհանուր ժողովը կրնայ ընտրելեաց յանձնակ մը ընդունիլ Քա-

դաբաղանին ընտրութեան համար համամտութեան նպատակա։ Աշխարհ։ Թէպէտ Քաղաքական ժողովին գործադիր իշխանութիւն չունի՝ հասարակ խնդիրներ՝ համամտութեան խնդիրն ինքնին կ'ջրի և արժէք մը չունի, բայց ըստ որում Մ--ն- նոր դէպքով մը կ'ներկայանայ իր հակասահմանադրական առաջարկութիւնը պաշտպանելու համար՝ առանց մեր առջի անհերքելի առարկութեանց պատասխանելու, կ'ասիպտուինք քանի մը խօսք ընել։ Բայց նախ կ'ուզենք իմանալ թէ Մ--ն- ինչո՞ համար պաղ արեամբ մը կ'ուրանայ Եւրոպական կառավարութեանց պաշտօնէից գլուխներուն հեռանալու համար իր առաջին յօդուածին մէջ ցոյց տուած օրինակն, որ՝ իբրև անպատեհ մեր կողմէն հերքուելուն վրայ զմեզ սխալ կացութեան մէջ ինկած կ'երևակայէ։ Ինչ որ իր երկրորդ յօդուածով կ'ուրանայ իր առաջին յօդուածը կրնայ հաստատել որ --ր-ց-ջ է։ Թող Մ--ն- բաղդատէ այն կէտերն և ուրիշին վրայ մուր չքսէ։

Մ--ն- միշտ համամիտ, բարեկամ, համակիր, ներդաշնակ քաղաքական ժողով մը միակտուր ձուլելու համար Ազգիմ դէսին պէս կը ձգնի։ Ինչպէս ասեն մը հաստատութեան՝ նոյնպէս այժմ Հ--ՆՈՒ--ԹԻՒՆ մը կ'ուզէ կազմել, որպէս զի իմանայ թէ որ հայն՝ որուն բարեկամ և համամիտ, որն որին հակակիր ու հակամէտ է, որ գլուխը սևին ձերմակ կ'ըսէ, որը ձերմակին սև, այնպէս որ կարող չինի ձերմակ գլուխները սևերէն զատել, այս կամ այն խումբը (հարկաւ ըստ Մ--ն-ի ԱՆՀԱՆԱՆ և ԱՆՔԱՆ ԽՈՒՄՔ պիտի լինի) գործոց գլուխը կարգել և ուրիշ մը յաւիտենական ունայնութեան դատապարտել։ Կը հարցնեմ սահմանադրական Մ--ն-ին թէ ժողով մը կազմելու համար այսպիսի բան մը հնարաւոր է. միթէ ընկերականութեան ոգին, ժողովոց էութիւնը, կարծեաց ազատութիւնն, ազգային քաղաքականութիւնը, Սահմանադրութիւնը կ'խանարհին այսպիսի Հ--Ա--Ն--Ն մը գործելու, որ ապագային մէջ ծանր հետևանք կրնայ ունենալ։ Եթէ ոչ ամէն բան՝ գէթ Սահմանադրութիւնը կ'ներէ, կ'ըսէ Մ--ն-, և թաղական, երեսփոխանական ու պատրիարքական ընտրելեաց ցուցակներուն մէջ ապատէն մը կ'փնտռէ և անկէց կ'գոչէ. — ասոր ինչ կ'ըսէ Ազգայր։ Մ--ն- միթէ գիտէ թէ ընտրելեաց ցուցակի սկզբունքն ինչ է։ Չէ թէ համամտութիւն, սէր գտնելու ուղեցոյց մ'է, չէ թէ կա-

ռակցութիւն մը պաշտօնի հասցընելու գիւտ մ'է, ինչպէս որ ինքը կը կարծէ և այս նպատակաւ Քաղաքական ժողովին համար ընտրելեաց մէկ քանի ցուցակներ պատրաստելու գոյել և անոնցմէ մէկը ներքնաբար ընտրել կ'առաջարկէ, այլ ընտրելեաց լոկ մէ՛ ցուցակ մը ընտրողաց պարզապէս դիւրութիւն տալու համար է, և այս ալ միևնակ թաղական և մանաւանդ երեսփոխանական ընտրութեանց ժամանակ, այն պայմանաւ որ ընտրողք -ԸՆԴՈՒՐԷՆ անոր ՄԷՋԸ կամ ԴՐՈՒԷՆ ընտրեն։ Մ--Ի- այս ազատութիւնն ալ կ'մերժէ, որովհետև միտքը Սահմանադրութեան ներքակ միահաղոյն եփած և տոգորած համամտութիւն մը ձեռք ձգել է։ Երեսփոխանական ժողովմը բնաւ պէտք չունի ոչ զոց և ոչ բաց ընտրելեայ ցուցակի, քանի որ իր թիւն ամփոփ է և ազգային գործոց տեղեակ և ընտրելի անձինք ալ մասով ցոյց տալ կարելի է։

Ամփոփենք։ Ուրեմն ազգային տրոց մասին 'ի սկզբանէ անտի եղած վէճը 'ի վերոյ որոշումներն, ազգային խնդիր մը չլուսաւորուած լուծելն, սահմանական կանոնաց անուշադրութիւնն և զանցառութիւնը, Ի--ՐՕՐԷՆ ՀՈՒՄՈՒՐԷՆ մը գլխաւորապէս պատճառ տուած են Քաղաքական ժողովոց վրդովման և հրաժարման և ազգին ներկայ վիճակին։

Ուրեմն Քաղաքական ժողովին կազմութեան ազատ սկզբունքն և անոր բարոյական հանգամանքն, ազգային քաղաքական մասնաւոր և հանրական գործոց մասին ունեցած լոկ -ԴԵՐԱՅՈՒԹԻՒՆ գինքն իր ՀԻՄՔերովը հանգերձ ազգային Քաղաքական բարձր ԱՏԵԱՆ մը կ'կազմեն և չէ թէ ԲՐԵՆԴԷՐ ՀՐԴԷ մը, որ բոլորովին զատ բան մ'է և որուն գլուխը կ'կանգնի Ս. Պատրիարքը։

Ուրեմն որոշող Ատեանի մը խոհուն և խստուն անդամները վճռաբար համամիտ գործելու սկզբունքը անբնական է, թիւրէ, ազգակործան է, քանի որ երբ վիճաբանութիւն պատահի, որ ազգային կարեւոր խնդիրներու համար անհրաժեշտ պիտոյք մ'է, անոր արդիւնքը քուէից առաւելութեամբը կ'որոշուի ըստ Սահմանադրութեան։ Հետևապէս Մ--Ի-ին համամտութիւն դարբնելու մտոք առաջարկած ընտրելեաց ցուցակը դիմակ մ'է, որ Սահմանադրութեան և կարծեաց ազատութեան առջև վար կ'ինայ։

Թոյլ տուր Քաղաքական ժողովին ազատօրէն որոշելու սկզբունքդ, ինչպէս որ իր էութիւնը կ'պահանջէ, գործնական դրութեամբ լուծէ

և հաստատէ ազգային տրոց բաշխման և հաւաքման եղանակն, որ Վարչութեան շարժիչ զօրութիւնն է, կատարելագործէ գործադիր իշխանութեան անկատար մասունքն և արդի անզօր մեքենան՝ Սահմանադրութեան հիմնական սկզբանց վրայ հաստատուած ներքին կանոնադրութիւններով, և ահա այն ժամանակ ազգային Սահմանադրութիւնն իր խոստացած օգտակար արդիւնքը լիօրէն կ'թափէ ազգին վրայ։

ԺԷ

Կ. Պոլիս, 10 Դեկտ. 1865։

Աղնիւ Ծ–ԷՆ,

Ո՞ւր ես, ինչ եղար, ոչ ձայնդ կ'լսուի և ոչ անունդ։ Միթէ դո՞ւ ալ, ինչպէս ըսաւ երբեմն ուշիմ գրիչ մը, ապրիմ մնոնիմ ծաղկին չափ ապրեցար։ Միթէ դո՞ւ ալ ազգային գրականութեան անբերրի հողին վրայ ժամ մը ծլելու համար հոս առիր և հովահար մնաց. միթէ դո՞ւ ալ Հայոց մտաւորական նեսմ հորիզոնէն կայծի պէս սահեցար անցար, նման այն շողուն կէտին՝ որ սև ամպերու խորը դէս ու դէն կ'մոլորի ու դահավէժ կ'սուառնի կ'ընկնի, ո՞ւր, ոչ ոք գիտէ, և նոյն պահուն թերևս նորատի կոյս մը ակնապիշ կ'հառաչէ։ «Ա՛հ, որո՞ն ասաղիկն, որո՞ն բաղդն է այն արդեօք որ մարը մնաս։» Նոյնը կ'ըսեն նաև բարեկամներդ և ակնդէտ կ'գիտեն Զմիւռնիոյ ջուրերն՝ որպէսզի լուր մը առնուն։

Արդարև Ծ–ԷՆդ ոչ արև էր, ոչ արշալոյս և ոչ մոլորակ, Ծ–ԷՆդ ծաղկի պէս մարելու սահմանուած է այս աշխարհիս մէջ, ինչպէս որ կ'անցնին և հող կ'դառնան անկից աւելի հոյակապ հիմնարկութիւններ. սակայն ամէն բան պարտի իր շրջանը կատարել, պտղատու սերմ ձգել և այնպէս մեռնիլ։ Այս է բնութեան օրէնքը։ Նորածին սէր մը անմեղ սրտի մը մէջ սպաննելու, նոր ծլած բոյս մը բունէն կտրելու, նոր հարան ու փեսան առագաստէն բռնի բաժնելու, ազատութեան համար ծնող ազգ մը գերութեան տակ ձնշելու չափ ոճիր մ'է արդար սկզբունքի և ճշմարտութեան սաղմը վիժել տալը։

Բայց այս օրէնքը պահողը ով է, կ'հարցնես ինձի. ով արդիւնց Ծ–ԷՆԴ իր գարունը մոռնալու եթէ ոչ բռնութեան առն ձեռքը, բանաարկութեան մահարոյր շունչն։ Այո, գիտեմ Ծ–ԷՆԻՆ դաղարման շարժառիթը. բայց դու ալ քաջ գիտես որ ազատութեան թշնամին մրցանակ մը շնորհած կ'լինիս եթէ ծաղիկը նորէն չանկես։ Արդէն խաւարասէր միտքեր անոր դամբանականը կ'երգեն, և եթէ նա քանի մ'անգամ տերևաթափ լինելուն ինքզինք չորցած կ'համարի, կամ քանի մ'ուղիղ և Ճշմարիտ խօսքեր հրատարակելուն՝ հայերը բաւական լուսաորուած կ'սեպէ ու խոր վիրապը կամ դափնեայ պսակներու մէջ հանդչիլ կ'ուզէ, ՕՀ, շարաչար կ'մեղանչէ։ Այն որ անգամ մը Ճշմարտութեան վահանը կուրծքը դրած ասպարէզ կ'նետուի՝ պէտք է որ կամ յաղթէ կամ մեռնի։ Եթէ յաղթութիւնը դժուարին է արդի նախապաշարմանց ապառաժին դէմ և մոլութեանց տղմին մէջ, պէտք է մեռնիլ։ Մեռնիլ՝ չէ թէ կռնակէ վերք առնելով այլ Ճակատէ։ Ինչպէս հաւատքն՝ այնպէս սկզբունք մը նահատակուելով կ'վերածնի, և եթէ այս Ճշմարտութիւնն արեան գնով իրենց ընկերական և քաղաքական իրաւունքները ձեռք ձգող ազգերուն յայտնի անգամ չլինէր, հայերը պէտք էին քարոզել զայն անոնց, քանի որ իրենց հաւատքին կենդանի նահատակներն են և դարէ դար անոր շնչով կ'վերածնին։

Ինչ, կ'ուզէիր որ Ծ–ԷՆԸ՝ տեսակ մը թերթերու պէս՝ անոգի դաղափարներու պաղուկ և անոգոյն սրևին ներքև՝ շողմարարութեան և շահասիրութեան պղտոր և մեայուն ընկի մ'եղրը բուներ և տատասկի պէս յարատև մնար՝ թէև անհամ և անհոտ։ Չէ, ես չեմ կարծեր։ Ուրեմն շունչատ, վերածնէ այն հաւատքով զոր արդարութիւնը կ'ներշնչէ, Ծ–ԷՆԴ քիչ մը ազատութեան հով և պարարտ հող տուր, որպէս զի անոր կենսատու մասերն ոյժ և հիւթ առնելով կաղգուրին և նորէն ծաղկին, և ինչպէս արևադէտ ծաղիկը միշտ դէպ 'ի արեգակն կ'դառնայ, նոյնպէս զարձուր քուկդ դէպ 'ի Ճշմարտութեան։

Մի՛ զարմանար եթէ այս յորդորը կ'կարդամ ես, ես որ երբեմն լռութեան և յուսահատութեան մէջ բռնութեան դէմ ապառէն մը կ'փնտռէի և կ'խրատէի քեզ գրիչդ խորտակել քան թէ Ճշմարտութիւնը գուռնատրել։ Վասն զի կ'գիտեմ որ աղէկ դէշ գրիչը միշտ հզօր զէնք մի է, թէև բռնութեան և մոլորութեան գլուխը մէկ հարուածով չկարէ։

վան զի կ'նկատեմ որ գրելու անտաշման ազատութիւն մը դեռ անհնար է ձեռք ձգել ընկերական այս շինուած գրութեան և խրատու հանրական և անընական օրինաց մէջ։ Արդարութեան և բնութեան օրինաց շուրջն այնքան հեռացեր է, արտաքին տուտ ու մուտ կրօնական և քաղաքական պայմանագրութեամբ և ձեռքով իր ընդարձակ նպատակն այնքան սղլակերպեր և օրէնսդրական ու կանոնական բուրգի մը մէջ ինկեր է, որ եթէ մը գանելու համար զանազան ուղիներու մէջ մուտք կ'քալէ և երբ բարձրէն հանձար մը գոչէ, — «Ամ մարդ, ահա այս է փրկութեան ճանապարհ» չհաւատար. և ընկերութիւնը նոյն յուսի շրջանին մէջ կ'պտտի, կ'ընկնի, կ'ելնէ, արիւն քրտինք կ'թափէ, և երանի թէ անոր յաջորդ սերունդը բանական լոյսը գտնէ։

Ուրեմն ի՞նչ ընել պէտք է այս դժուարին վիճակին մէջ։ Լռութիւնը մահ կ'սպառնայ, ազատ հրատարակութիւնը՝ պատիժ։ Ահա երկայրի սուր մ'այն անձին համար որ չմոռաց ճշմարտութեան պատկը կ'ուզէ տեսնել։

Այո, խօսելու և գրելու ժամը հիմակ է, բարեկամ։ Ազգին կենսական շահերն և իրաւունքները վտանգի մէջն են։ Ազգային Սահմանադրութիւնը վէճի առակ ընկած է, Էջմիածնայ դահն, այս ազգային վերածնութեան կեդրոնը, սև ստոյի մէջ ընկղմած է։ Ալաշահեան հրէշ մը Սոյ ամիրան վրայ իր ձանկերը գրած՝ ազուաւ պէս առջի կաթողիկոսին դիակին կ'հոկէ. արիւնոտ սև Կաթողիկոս մը Վանայ բանտէն նոյնանուն ծոլին վրայ աչքը սևեռած՝ Աղթամարայ աթոռը կ'երազէ. Մուշի Գլակայ վանքը գիւղար վիճաբանութեան մը ձեռքը գինարան և աւազակայ որջ դարձած՝ Վարչութեան և Խրիմեանի դէմ շանթեր կ'արձակէ, մինչդեռ Կարնոյ ամէն Յակոբ գառնանն՝ էրեց . . . ծոցը հանգիստ կ'նիրհէ։ Ազգին շահերուն պաշտպան եկեղեցականները կ'բամբասուին, կ'հալածուին, անբնականալ և յանցաւոր կրօնականներն աւօք փառօք իրենց վիճակները կ'դառնան և անպատիժ կ'մնան . . . հաստատամտութեան և երկպառակութեան դժոխքներ այլ և այլ դատներէ կ'հանին։

Այն որ Հայկայ թոռն ու Հայաստանեայց զաւակը լինելուն կ'պարծի՝ չկրնար անպէս մնալ այս ապառնալիս դէպքերուն և ապականու-

թեան առջև, և ի հարկէ եթէ հիմա կ՚արանջայ և կ՚բողոքէ, ժամանակին ալ պիտի գործէ. սակայն այն որ ձայն ունի պէտք է որ կանխաւ ազգային իրաւունց վրայ լուսաւոր շահիլ մը գծէ, միարն արթուն պահէ և իր գրիչն իբրև արդարութեան և վրէժխնդրութեան սուր մը մեր հայրենի տան և եկեղեցւոյն յայտնի և անդայտ թշնամեաց դէմ շողցընէ։

Ինչ, թող մեր Գործադիր իշխանութեան գլուխը չէզոք դրութիւն մը պահէ, թող ազգային Վարչութիւնը Պիրակասի և Թորոսի գաւառ գրաղի, թող Ընդհանուր ժողովը յիսուն և մէկ հոգիանոց կազմէ, և բացակայ գանուող երեսփոխանները հանար չհարցընէ, թող մեր քանի մը բարձր հոգևորականներն իրենց փառասիրութեան ճարակ գտնելու հեռամուտ լինին, թող քանի մ՚ամիրաներ և պէյեր իրենց ապարանքին մէջ գաղտնի խորհուրդներ ընեն և ազգային գործոց արդեօք յարուցանելու ճգնին, թող հանմանութեան բարեկամներ՝ Ընդհանուր ժողովին դէմ քէն պահեն և իրենց սիրը մինչև Սահմանադրութեան վերաքննութեան օրը սնուցանեն և միահեծան ազգային կառավարութիւն մը հաստատելու յուսով միխիթարուին, թող մեր պաշտօնական ազգայինները նուրբ քաղաքականութեան սահմանները դեղերին և անուսարերութեան ու անտարբերութեան ճանկին մէջ լողան, փոյթ չէ, ազգային պատմութիւնն արդէն անուշց այս ընթացքն՝ ի դիր արձանագրած և դատապարտութեան վճիռն արձակած է։ Հասարակութիւնն արդէն կշռելու և դատելու սկսած է և ազգային մէջ իր ընելիքն որոշած . . . ։

Բարեկամ, այս կարևոր կէտերուն վրայէն առ այժմ թեթեւակի կ՚անցնիմ՝ բիշ անգամ մանր տեղեկութիւն հաղորդելու յուսով։ Մինակ կ՚ինդրեմ՝ որ օր առաջ Ծառայի հրատարակութեան տեսութիւնն ինձի իմաց տաս որպէս զի պատրաստեմ։

ԺԸ.

Կ. Պոլիս, 1 յունուար 1866։

Ինչ է ժամանակը։ Շարժուն չափ մ՚անշարժ յաւիտենականութեան, ըստ կարծեմ Ժան-Պ. Ռուսսօ բանաստեղծը։ Հասպա տարի ըստ ածն, այս չափին չափն ինչ նշանակութիւն ունի։ Էհ, ուշ ինչ. աննիւանելի կէտ մ՚է յաւիտենականութեան անհուն հորիզոնին վրայ։ Ուշքդ բաց ու դողէ և ահա անցաւ այն, և ահա նոր տարի մը հասաւ։ Սակայն բանական և անբան աշխարհն ինչ այլակերպութիւններ, ինչ յեղաշրջումներ կրեց արդեօք նոյն բոլորական շրջանին մէջ։ Շրջան մը՝ որ շատ շատ բոլորելովն՝ իր կեդրոնն ու շառաւիղն անտեսանելի կ՚դարձէ. շրջան մը՝ որ մեղմով և մեղի հետ կ՚հոլովի, այս շրջանը, բարեկամ, տակաւին չենք կարող իր լրութեան մէջ բմբռնել։ Վասն զի մարդկային աչքն ամէն բանի միայն մակերևոյթը կ՚նշմարէ, կ՚դիտէ միայն որ իր ոտանը տերևի պէս կ՚ծլի, կ՚ծաղկի ու կ՚փշրի։ Իսկ հոգին, այս երկնային շունչն, իսկ բնութիւնն, այս երկրային գաղտնիքն, ով կրնայ տեսնել և ամենց ներքին շրջանը չափել։

Եթէ հնար լինէր բարոյական մարդուն զուտ սրտութիւնն՝ ի դիր առնուլ. եթէ հնար լինէր, բարեկամ, անոր գոյութեան լոկ միատեսոյ շրջանին մէջ կրած միջոց, կսկիծը, խնդութիւնն, առ անին, ընկերական և քաղաքական յարաբերութիւններէ առացած տպաւորութիւններն և դիպուածները մի առ մի և բնագէտ նկարագրել, ոհ, այն ատեն նոր թատերաշար մարդիկ պիտի հանդիսանէին որ շարժուն մարմնոյն զարդարանքը, զոր քաղաքակրթութիւն կ՚անուանենք, փայլուն շղարշ մ՚է. օրէնսդրական դիրքն, որով անձիր. օրէնսդէտ և քաղաքագէտ բառած դասը կ՚անուանին, բնութեան օրինաց դէմ սրատուր մ՚են, և մարդկային ազգը մի միայն բանական մեքենայ մը յօրինելու գործիքներ։ Այո, այն ատեն մարդկի հանճարի և հոգւոյ անզուսպ ուժովն, ամէն կապէ ազատ՝ ուրիշ շատ պիտի դիմէին կամ՝ պիտի վերադառնային իրենց վսեմ նպատակին և քաղաքակրթութեան միակողմանի լապտերն իր ետին ահարկու սառեր մը չպիտի թողուր օրինական բռնութեան, դերութեան և թշուառութեան բրած անհամար նահատակներու և արիւնապիս մարդկային դիակներու վրայ։

Բայց ոչ գրած է և ոչ պիտի գրէ այսպիսի պատմութիւն մը։ Արիմէ այս երկրաչափական դարուս մէջ ամենէն նշանաւոր հանճարն՝ որ արծուի ակամբ իր և ընկերութեան հոգին և շարժումը կ'գիտէ, բնական ճշմարտութիւն մը բացէ՛ի բաց երևան հանելու ունակութիւնը կորուսած չէ։ Դարուս վարժ պատմագիրն անցամ ընկերութեան մէջ տիրած մէկ գեղծումը, մոլութիւնը նշանակելու համար՝ ինչպէս իր ոճը կը յոլկէ, խնամար կ'սրգէ, արձակելիք նեղը զգուշութեան ջրով կ'օծէ, և տակաւ միայնանական գոյներով կ'ներկայանայ։ Այժմ պատմարանը հիմնարի գէպք մը կ'պատմէ, և միամիտ կ'հաստատ. բանահիւսը ծագիի մը փունջը կ'երդէ և կոյսը գոյն կ'ընդունի. ատաղձագործը մարդակի մը հեռատեսութիւնը կ'չափէ և մարդս կ'ժպտի. խնամասէրն անդադար ամէն բանին ՇՈՒՇ կ'փնտռէ, կ'լուծէ ու կ'վերլուծէ, և մարդս իր շահուն կ'նայի. բայց մարդկային բնական իրաւունց կորուստը, ատրս կիներ ազէտքը, ատրագրին հաստաշանքը, հայրենասէրի թշուառին արտասուքն ոչ նկարագրած ունի և ոչ պիտի նկարագրէ։

Այո, շատ դիւրին է ըսել թէ հերուն՝ 1863 թուականը շնորհաւորելի Ծուռնդ Ակլէս գեղեցիկն եղաւ՝ և այս տարի ահա ուրախ զուարթ կ'դիմաւորեմ զանի Պոսֆորի ափանց վրայ, սակայն ոչ պիտի յայտնէ ինձ թէ Ծուռնդն՝ ի բանտի իրօք ինչ զգայ, ինչ մտածէ և ինչ երազէ։ Շատ գոհ եմ հարկաւ որ բարեկամդ այս շնորհաւորական գիրը կ'գրէ քեզ, սակայն ինչպէս ժամի իր հոգւոյն մէջ տիրած փոթորիկները բացատրել քեզի և մտայն երազները . . . ։

Այո, պատմարանը պիտի պատմէ քեզի թէ անմահն Լինքօլն իր նահատակութեամբն Ամերիկայի անկախութիւնը կնքեց գերութեան դէմ. թէ Բարմրագրին շքեղ բարձին վրայ հոգին փչեց, Անկլիոյ բաղդին անիւն իր վարպետ քաղաքականութեամբն ըստ հանձայս դարձուց և անար ընտրական իրաւունց հանար բրած խոստումներն իր հետ տարաւ. թէ Ֆրանսա գոհ է Նափոլէոնի գահակալութենէն, որուն շնորհիւր մնաս մնաս կ'վայելէ 93ին արեան գնով ստացած իրաւունքները. թէ Բրազիլա պիտանարգ մ'ունի, որ մեծին Ֆրէտերիկի տարի իշխանութիւնը կ'ուզէ վարել քաղաքականութեան դիմակով և Գերմանիայի մանրայոյցական դաշնակից պետերն իր ափին մէջ ամփոփել. թէ Աւստրիա մէկ աչքը դէպ 'ի Հիւսիս, միւսը դէպ 'ի Արևմուտք

դարձուցած՝ Մէթէրնիկի նուրբ խրատէն զուրկ՝ վիճի մը վրայ պար կ'խաղայ. թէ Խաղիա իր ներքին կազմութիւնը լիապէս գտնելու համար հին կռուք մը դեռին դլատրելու պէտքն օր օրի կ'ղղայ. թէ Հռոմ կ'կոչուի միշտ Հռոմին անվրիպելին և անոր միակ թնդանօթը պիտի մնայ Անթոնէլլին. թէ Ռուսիա՝ իր ուշադրութիւնն այժմ դէպ 'ի սառնապատ և վայրագ կողմերն ուղղած՝ մինչեւ մէկ կողմէն Խորասանի սահմանը կ'արշաւէ, միւս կողմէն հին ազգի մը փրկութեան միակ խարիսխը, կախողիկոսութեան հոյակապ դահը թափուր և ամուլի գործելու համար Լաղարէվի մը փառն և նկուն գրչով պատգամներ արձակելու կ'խոնարհի. թէ Թուրքիա՝ Ապտիլ-Ազիզ վեհագն վեհապետին արդարասէր ոգւոյն շնորհիւր՝ քաղաքակիրթ ազգաց շրջանին մէջ մնած է և Ճնշեալ ազգաց ազատասանարանը կ'հանդիսանայ. թէ Սպանիա դեռ ևս միջին դարու՝ և Ցունասան՝ վաղեմի երկպատակութեանց ընթացքին մէջ կ'յարատևեն. թէ մայրաքաղաքիս հայերը Սահմանադրութեան Բ շրջանը մնան, թէ բնական կամ անբնական մահը հետզհետէ գրաւեց Աղթամարայ, Իջմիածնայ և Սայ կաթողիկոսները. թէ համաճարակ հիւանդութիւն մը շատ մարդիկ անդունդը դահավիժեց և սոսկալի հրդեհ մը շատ տուներ մոխրի վրայ նստեցուց. թէ . . . այս և ասոր նման պարագաներ խմբագիր մը կամ պատմիչ մը պարզապէս պիտի պատմէ, սակայն, բարեկամ, այս պարագաներուն խակական շարժառիթը, նաև մանաւանդ ազգային կենաց միամեայ շրջանին ներքին շարժումներն ոչ պիտի պատմէ. թէև այս է ահա օգտակար պատմութիւնը մեզի համար, այս է այն ազգային թագուն վէրքը՝ զոր մեր աչքն անզօր է տեսնել և դարմանն հայթայթել, այս պիտի լինի այն դասն որմէ դարեբէ 'ի վեր զուրկ կ'մնանք. թէև այս դարս մոքի, բանի և կրօնի ազատութեան դար կ'անուանի։ Բարեկ, անուսի ձայն մ'է հայուն համար այն ազատութիւնը՝ քանի որ Արևելք՝ ոգիատութիւնն անոր միտքը պաշարած է. Հիւսիսի կողմը՝ բռնութիւնն անոր լեզուն պրկած է և ասորերկրեայ քաղաքականութիւն մ'անոր կրօնական էութեանը կ'սպառնայ. Արևմտեան կողմը՝ մտաքաղութեամբ և փառամոլութեամբ կուրցած՝ իր ազգային արտօնութիւնները վայելելու համար բաւական խելք և հայրենասիրութիւն չունի։

Մի կարծեր, բարեկամ, որ միմակ տարեգլխի առթիւ հոգիս կը ձմլի և կ'մաշի, երբ ազգին անցեալին և ապագային վրայ, հին արքունական գահին և արդի մահարձանին վրայ արտասուալից աչքս կ'դարձնեմ, ոչ, ամէն օր տոգի օր կ'գտնայ ինձի համար, վասն զի, թող անցեալը, ներկային մէջ ամէն օր նոր կորուստ մը կ'կրէ Հայն իր Ազգեն կենաց շրջանին մէջ։ Այսօր թշուառութեան և տարկութեան ապառաժին վրայ կ'ծնի Հայը, վաղը կորստեան անպտղը կ'գլորի և անոր տապանագիրն է՝ —ՂԷ—Ր—Ց—ՐԻՆ, —ՆԻՐ—ՐԻՆ, Յ—Ն—Ա—Ր—ՐԻՆ։

Յոյս մը միայն ունէր եղկելին, այն է Աբրահամեան Պատրիարքական ատոռն, որ այժմ անլոյս և սգոյից կ'արտասուէ և իր զաւակներն իր առաքելական ակնարկին և թեւին ներքև ամփոփելու համար կը տագնապի, որպէս զի անոնց գորովալի և հոգևորական սիրովը վերականգնի և փայլիլ։ Միխիթարութիւն մ'ունէր նա, այն է իր հոգեւոր հովուին ձայնն՝ որ երբեմն սպառերազմի գաշտին, հալածանաց և տարապրութեան մէջ իրեն խրախոյս և քաջալեր կ'կարդար, և այժմ միայն բարձ և աթոռ փնտռելու համար կ'լսուի։ Ակնկալութիւն մ'ունէր նա, այն է ազգային Սահմանադրութիւնն, որ իրրև խորանիկ և մեռած տառ մը կ'նկատուի։ . . .

— Այդ ինչ գաղտագարտելի յուսահատութիւն է, այդ ինչ անառաներելի վհատութիւն է, պիտի պատաս այժմ երևսս։ Ինչպէս կ'յանդգնիս այս նոր տարեցոյց սկիզբը չարագուշակ բուի պէս զուժելի ոգբեր արձակել և ազգին արևը բոլորովին մարած կարծել։ Մինչ կորան մեր տոհմային տունը, տաճարն և հոգին, մինչ ազգին վերաշինութեան յոյսն և ապագան կորան։ Մշերբէք։ Վասն զի, թէև Սահմանադրութիւնը գրեթէ անպտղաբերի կ'մնայ, բայց ազգը սահմանադրական է։ Լիմիտանայ աթոռն որբ ու այրի կ'մնայ, բայց ազգը Ս. Լուսաւորչի առաքելական գահն իր սրտին մէջ կ'կրէ և ուր որ կամի, ինչպէս որ կամի կ'վերականգնէ զայն։ այլ և այլ վանուց միաբաններ կ'ապաստանին, կրօնականներ կ'ապականին, բայց վանքերն ազգինն են և ազգն իր ծոցէն նոր նոր բանիբուն հոգևոր հովիւներ կրնայ հատնել։ ապիտութեան և թշուառութեան գահերն ամէն օր կը շատնան։ բայց ոչ ապիտութիւն և թշուառութիւն չկան։ ազգն ուռան ճաշակն առած՝ զարգանալու համակամ է և բոլոքելու ձայն ու-

նի։ Կրօնափոխութեան մոլութիւնը Հայկական միութեան հիմը կ'քանդէ, բայց ազգին կենդանական ուժը բուսական է այն նողկալի հրէշը հաշվելու, ոսկիի և նշանի տէր Հայեր օտար շահերու գերի են և ազգային իրաւանց անտարբեր, ու երբեմն մատնող, բայց գարձեալ ազգը կանգուն է և անոր մանկտին հայրենասիրութեամբ և լուսաւորութեամբ ապատագէն՝ վարժարաններէն գունդ գունդ դուրս պիտի թափին և վաստակներուն ոսկեփայլ Ճակատը Մերուժանի հրաշէկ պսակը պիտի կապէն . . . չէ, չէ, կ'գոչեմ անվեհեր, յոյսս և հաւատս մեծ են Նախախնամութեան վրայ և այն Աստուածն որ Հայկայ սերունդը Թիլորլանի և Ալբասլանի ձեռքէն ազատեց, անշուշտ զայն գեղեցիկ ապագայի մը սահմանած է . . . ։ —

Սրամտութեանդ կ'հաւանիմ, բարեկամ։ Արդարև Հայն աւելի սև և թշուառ օրեր անցուցած է։ Պարսկին դաշոյնն, Արաբացիին թուրը, Յոյնին ծուղակը տեսեր է, խորասկեր է իրօք այն գէնքերն իր հաւատքին զօրութիւնովը բարոյապէս յաղթական կանգնելով, մինչդեռ Հայաստան աշխարհն արեան, հրոյ, սրածութեան և շարժման մատնուած՝ նահատակաց ոսկորներու և փլատակներու կոյտ մը կ'դառնար։ Ասոյդ է որ հիմակ Հայն ազատ օդ կ'շնչէ, կ'ուտէ, ստակ կը շահի, Սահմանադրութիւն ունի. կ'երթի թէ կ'քալէ դէպ 'ի յառաջադիմութիւն և առ երեսս նիւթապէս երջանիկ է. սակայն արի համառօտիւ բաղդատանք արդի ընկերական և քաղաքական վիճակն առաջնոյն հետ։

Հին ատեն Հայուն կենդրոնն էր Հայաստան, Հայաստան էր իր նահատակութեան սեւաբանը, Հայաստանն էր իր գերեզմանն, և Հայաստանի եկեղեցին, փառաւոր յիշատակներն, աւանդութիւնները, տարբերութիւնները, թշուառութիւններն իր հողին միշտ վառ՝ իր առաքինութիւնը միշտ արիւն և պատրաստ կ'պահէին։ Հին ատեն Հայուն թշնամին յոյս յանդիման կ'երևէր։ Ցաղկերտ մ'անհամար բանակ մը ունէր. Վասակը Վասակ էր ամէն Հայու համար, Հայն իր արքունական գահը կ'գոհէր և իր եկեղեցական գահը քարայրի մը մէջ կը պատապարէր, և ազատ էր։ Իսկ եղիշէն անոր դիւցազնութիւնը կ'երգէր և կ'ազօթէր։ Հայը թէև սակաւ մարմնով՝ մեծ էր այն ատեն հոգւով, վասն զի աստուածային վստահութիւն ունէր։ Ահա անոր այս

վստահութիւնը հասոյց զինքը մինչև այս դարս, բայց քանի քանի փոփոխութեամբ, կարող ես երևակայել։ Վասն զի քաղաքակրթութեան ջահն անոր աչքը շլացուց, կրօնից ազատութեան, ազգային ազատութեան խօսքը զինքը խաբեց, հարատութեան անօրէնը միտքը յափշտակեց, հանգստութեան երևոյթը մարմինը թուլացուց և քաղաքականութեան տուած խոստումներուն վստահանալով՝ բոլորձակ ձգեց իր տան և եկեղեցւոյ դռներն և 'ի խոր ննջեց իրը ծաղկեայ մարդերու վրայ, մինչդեռ նոյն պահուն թշնամի ժեր՝ քաղաքախի, հայրենասիրի, Մխիթարեանի դիմակով՝ անոր ազգային և հոգևոր զօրութիւնը կ'թիւնաւորէին, կ'խայթէին, կ'կրծէին, և կ'կրծեն այնչափ որ Հայը չդիմանալով տակէ քանի մը տարի առաջերա քանի մը ազգային կանոններ շինեց և այս ժամուն աչքերը խոշոր խոշոր բացած՝ հիացմամբ կ'հարցնէ իւրովի թէ՝ ո՞ր է, թէ՝ ո՞վ հեռացոց զինքն այն գահէն որ այժմ ամայի է, ո՞վ այլակերպեց Հայաստանեայց եկեղեցւոյ աթոռն որմէ 'ի վաղուց հետէ յարաբերութիւնը գադրեցուցած է . . . ։

Ահա այս զարմանալի հարցման օրինաւոր պատասխան մը տալու պատրաստ եմ, պայմանաւ մը. այս պայմանն է ազատութիւն մը՝ զոր նամակս սկսելէն 'ի վեր կ'փնտռեմ, որպէս զի Հայոց ոչ միայն արդի կենաց ընթացքը նկարագրեմ, այլ և այլ քաղաքական պարագաներն և շարժառիթներն, որով նոյն կեանքն այս կողմը փոքր ինչ կ'շարժի, այն կողմը կ'բռնի և անոնց նշանակութիւն անգամ չունի։ Ահա այս ազատութենէն զուրկ եմ, բարեկամ, և կ'ցաւիմ որ այս գրկանքը նամակիս շփոթի ձևին առիթ տուաւ . . . ։

Երբ նոր տարուոյս հանդիսական ժամուն անցելոյն դառն յիշատակները, ներկային անատոմութիւնն, ապագային նոսմութիւնը սիրտդ կը վրդովեն և կ'դրդեն դէպ ի քանի մ'ապատ խօսք հեռատոր հայրենակցիդ հաղորդել և սփոփիլ, և երբ գրիչդ ձեռքդ կ'առնուս որ վստահութեամբ գրես, յանկարծ ստոմանայական ձայն մ'ականջիդ կը փափաց որ գրելու ազատութիւն չունիս. ՈՒՀ, այն առեն, բարեկամ, խորհուրդներդ և զգացումներդ կապարի պէս սիրտդ կ'ինջնեն, աչքերդ կ'ամլացուին, թաղթի ու գրիչ մէկդի կ'նետես. կ'հառաչես և կ'արտասուես . . . ինչ երջանկութիւն, լալու ազատութիւնը դեռ կ'վայելենք . . . ։

ԺԹ.

Կ. Պոլիս, 13 յունվար 1866.

Կաղանդն անցաւ և ահա բարեկենդան կ'մտնենայ. դասի ժամանակը գնաց, հանգստի ղանգակը կ'զարնէ։ Այսօր սուգ, վաղը խնդութիւն, միւս օր մահ, այս է մարդկային կեանքն։ Արդէն թռուցիկ պատանին հայրենին առջև ուսումնասիրելով պար, խաղ, սէր կ'երգէ և ոսկիէ օղակով մ'իր վիզը լծելու կ'պատրաստուի։ Սիրուն ու սմանդուկ օրիորդը՝ հօրը քսակն և եղբօրը թևը կ'շոյէ, որպէս զի անդամ մը պարահանդիսին ճանրան գանէ, և այնուհետև՝ հայր, եղբայր, աշխարհ մոռնալով տատրակի պէս թռթռայ, սիրտեր կոտրէ, ծակծկէ, մինչև որ ինքն ալ դաժան որսորդի մը հրայանին հանդիպի և քնքուշ փետուրները քաքսելով տուն դառնայ։ Նորահաս և գեղանի կինն՝ իր ծերուկ մարդուն կունտ ճակատը փայփայելով անդգայ աչք՝ բայց վառվռուն սրտով՝ աշխարհային բերկրութիւնները կ'նկարագրէ, և չէ թէ իրը դրօսալի, այլ իրը հեռապրբրական բաներ առանց մասնակցութեան տեսնելու արժանի և անմեղն, կ'ըսէ, և ամուսնոյն դէմքին դծերուն վրայ նախանձու և սրանեղութեան նշանները չտեսնելու կ'զարնէ։ Անզուսպ սիրահարը՝ կրակ ու բոց դարձած՝ սիրուհւոյն հետ ծիրանագոյն երազներ կ'տեսնէ և հեռուն՝ վարդեայ պսակ մը։ Աղջիկն՝ իր հին բարեկամն ճանաչցած՝ նոր մը գտնելու համար իր շրթերն և այտերը կ'գունաւորէ, և մարած աչերուն կայծեր արձակելու կ'վարժեցնէ։ Ամուրին՝ ամէն բարեկենդանի օրեր իր սրտին յարմար էակ մը շահելու տարանդիր՝ այս տարի ալ նոյն դիտաւորութիւնը կ'նորոգէ, հագուստին նոր ձև, կոճակին ու երեսին նոր գոյն կ'տայ և նորէն պար կ'սորվի։ Որբևարին՝ լուսահոգիին ըրած հատատարմութեան ուխտը մոռնալով՝ իր դուստրը մարապետներուն կ'դրկէ, և արիւն ազնիւ երիտասարդ մը, իսկ այրի մարդն ալ՝ նոր ու հարուստ իրը կոյս մը փնտռելու կ'պատրաստուին, եթէ արդէն չեն գտած, այնու բարեմիտ ոգւով որ իւրաքանչիւրն իրեն ողորմած հոգի ամուսնէն ունեցած զաւակը կրթելու կարող լինի . . . .

Սակայն մինչև մարդկային անափառութիւնը, յիմարութիւնը, ագնաստիրութիւնը, մոլութիւնն իրենց օրն օր ընելու միջոցներուն վրայ կ'խորհին, մանաւանդ երբ բարեկենդանի առթիւ կ'նշմարեմ մութ սենեկի մը մէջ քաշուած անձ մը՝ որ իր որդիքը չորս դին առած՝ չորաբեկ հայց մը կ'կարդէ, անոնց կ'բաժնէ ու բարեկենդան և ուրախութիւն ինչ է չգիտէ, կ'ըսեմ իւրովի, ուրախութիւնն անիրաւութիւն է։ Երբ կը դիտեմ այս էակն որ մանուշակի նման անտես կ'բուսնի, կամ վտիտ յասմիկի պէս առուս իրկուն ցօղ ծծելու համար կ'բացուի ու անդէն անլոյս ու անոյոյս կ'գոցուի, կ'ըսեմ, անարև և անսէր կեանքը մահ է։ Երբ կ'նկատեմ հեռուն փայփլուն լոյս մը՝ և հսկող գլուխ մը թղթի մը վրայ ծռած, կ'ըսեմ, հանճարն անմահութիւն է . . . ։

Այս անիրաւութիւնն, այս մահն, այս անմահութիւնը մեր ազգին մէջ ալ չէ թէ միայն բարեկենդանի, այլ ամէն առթիւ կրնանք դանել եթէ լաւ մը քննենք անոր ընկերական վիճակը։ Մէկ կողմէն սարսակ հայն արիւն քրտինքով վաստակած չոր հայն ու ամէն իր գերեզմանին մօտ կ'ուտէ, գեռնախշտի կ'ապրի, գաղտնիներու հետ կ'կենակցի, փափաք, ուրախութիւն, յոյս չունի, միւս կողմէն հայրենական գգացումէ զուրկ հայ կոչուող երիտասարդութիւն մը՝ թիթեռնիկի պէս եւրոպական քաղաքակրթութեան ճրագին չորս դին կ'թռթռի, անբարառաւան մեծատուններ՝ մարմարեայ պալատներու և ոսկեզոծ աթոռներու մէջ կ'խրոխտան և կ'օրօրին։ Մէկ կողմէն հայկական պարզութեան և ընտանեսիրութեան մէջ սնած օրիորդներ՝ իրենց ընտիր և սիրալիր որսին դանձերը Հայկայ Ճշմարիտ թոռներու նուիրելու յուսահատ՝ կը հալին ու կ'մաշին և ահ ու վահով իրենց սև օրը կ'անցընեն. միւս կողմէն ագնաստէր, օտարասէր հայ կիներ՝ եւրոպական հովեր կ'առնուն, Եւրոպացիի հետ կ'սեսնուին, քանի մ'եւրոպական բառեր կը թոթովեն, Եւրոպայի ընտիր շորեր կ'հագնին, եւրոպականին դիմակն ու շպարը միայն ունին, բայց հոսած սիրտեր, փտուն գլուխներ, անողի մարմիններ են։ Մէկ կողմէն Ճշմարիտ հայեր, թէև թուով սակաւ, թէև նիւթապէս աղքատ, այլ մտքով և սրտով մեծ ու հարուստ՝ օրն 'ի բուն ազգին վիճակին վրայ կ'խորհին, իրենց գլուխը, հոգին ու գրիչն անոր յառաջադիմութեան զոհելու պատրաստ են, միւս կողմէն հայ մարդիկ լոկ անձնական շահու, անձնական հանգստութեան և զուար-

Թուրքեան համար կ'ապրին և ազգային օգուտ, շահ, պարտք ինչ է չգիտեն. ազգին կործանումն իրենց փոյթը չէ, բաւական է որ օտարին առնը շէն ու կանգուն մնայ, որպէս զի անոր դրան առջև սողան ու սպրուտա, սատակ ու նշան մուրան։

Հայ մեծատունն իր անբարտաւանութեամբը զթշուառ և տրտում հայը կ'նախատէ. կիներն՝ ինքնահաւան և օտարասէր բնաւորութեամբը հաճատ ու զգայուն օրիորդին սիրտը կ'խոցէ. շահամոլն ու խմատակը հանճարին հսկումը կ'ծաղրեն և ոսկիի, խաղի և կանացի զբօսանաց համար ոգի կ'տան։

Բնական է որ մարդս զբօսնու։ Ինչպէս աշխատութիւնը նոյնպէս հանգիստն իր ժամն ունի։ Սակայն խաղ կայ խաղ ալ կայ։ Ամէն ժողովրդեան զբօսնելու եղանակն իրեն ազգային բնաւորութեան յատուկ է։ Հին ազգաց մէջ զբօսարանները միանգամայն կրթարաններ էին։ Ոլիմպիական, Թիթէեան, և այլն խաղերը մարմինը կ'մարզէին, միտքը կը կրթէին։ Սրընթաց ոտն մը, հուժկու ջիղեր, ամէնի նժոյգ մը, արագաթռիչ կառք մը, ներգաշնակ վիճ մ'ունեցողը պարծանք էր և մրցման ատեն մրցանակը կ'տանէր։ Զիարշաւը, նետաձգութիւնն ասիական ժողովրդոց մէջ նշանաւոր էին։ Բայց քանի որ մարդիկ բարակցան, նոր նոր խաղեր երևան եկան, որոց մէջ շահասիրութիւնը, սէրն, ապականութիւնն առաւ առաւ որսեր կ'գտնեն, և միւս կողմէն ալ բնական կարաւարութիւնները խաղամոլութեան եռանդը կ'արծարծեն։ Երբ ժողովուրդը կ'խաղայ, բնաւոր մը թոյլ հանգիստ խրկայ. բայց արի տես որ անխորհուրդ հայն, ինչպէս կ'ըսէ թուրքի առակն, «Սրնգին ձայներ չառած կ'խաղայ։» Կ'խաղայ չէ թէ իր ներքին հոգերն և կսկիծները մոռնալու, ինչպէս գինով մ'իր կորուստներն, այլ աշխարհիս յարմարելու համար, և բնաւ միտքէն չանցնիր որ Գաղղիացի մը խնդալու և խաղալու ատեն այսչափ մեծ մեծ գործեր կ'կատարէ, ինչպէս որ կ'վկայէ Մոնթէսքիէօ։ Կ'խաղայ նոր շղթայ մ'իր վիզէն անցընելու և ընտանիք, զաւակ, ազգ և հայրենիք մոռնալու համար։ Ազգային խաղ, երգ, տեսական զբօսանք, բանիբուն անձանց մտերմական և հրահանգիչ ընկերութիւնը, հայ օրիորդներու զմայլելի ձայնն և գաշնակի հնչիւնն իրեն համար հրապոյր չունին։ Աչքը գուրն է։ Աղմուկ, վայնասուն, գինի, շնորհաստ բամբիշը, բաղդի խաղեր կը

փնտռէ։ Դերասանուհիի մը ծեփուած երեսը, փրփրալից բաժակին տեսիլը, խաղամոլին սեղանն անասելի հեշտութիւններ կ՚ազդեն իրեն, և առողջութիւն, հարստութիւն, կեանք, ամէն բան կ՚զոհէ զանոնք վայելելու համար . . . ։

Չէ, այս տեսակ մոլի երիտասարդաց վրայ չէ ազդին յոյսն, որոնք դժբաղդաբար օրէ օր կ՚աւելնան։ Խոհական հայերը բարեկենդանը պարզ և անմեղ զբօսանաց օրեր կ՚համարին և չէ թէ յիմարութեանց և մոլութեանց ասպարէզ մը, գերեզման մը . . . ։

Ի

Կ. Պոլիս, 23 յունուար 1866։

Մայրաքաղաքիս մէջ առ այժմ, տեղական թղթատարութիւնը նորաձև գրասկցութեան ասպարէզ մը բացած՝ մանաւանդ ոմանց ձեռքը կիրք յաղեցընելու, վրէժ լուծելու գործիք մը դարձած է, փոխանակ մտերմական և ընկերական յարաբերութեանց մշակութեան համար օրինաւոր հաղորդակցութեան միջոց մը լինելու, ինչպէս որ է քաղաքակիրթ ազգաց մէջ։

Կ՚երևի թէ Արևելցիին սովորութիւնն է միշտ նոր և օգտակար հաստատութեան մը՝ նախ վատ կողմը գործածել՝ և ապա անոր արդասիքը փնտռել։ Ուրիշին փորձառութեան դասն իր վրայ ներգործութիւն չունի, մինչև որ ինքն ալ չփորձուի և երբեմն ալ չզոհուի։

Եթէ ըսես անոր թէ՝ գինին քիչ քիչ դեղի պէս խմուելով օգուտ և զուարճութիւն կ՚պատճառէ, իսկոյն Պաքոսին տակառին մէջ կ՚գլորի և իբր յիմարութեան կարմիր արձան մը կ՚կանգնի, կ՚երերայ ու նորէն անոր մէջ կ՚լողայ։ Եթէ ըսես անոր թէ՝ երկաթը դիմացկուն նիւթ մի է, ահա սուր ու շղթայ կ՚շինէ և իր նմանին դէմ կ՚գործածէ։ Մի ըսեր անոր թէ սէրն երկնային պարգև մ՚է, վասն զի ահա տարին տասն երկու ամիս կին կ՚առնու կ՚ձգէ։ Եթէ պնդես թէ դիտութիւնը լոյս է, մինակ Սբինոզա, Հէլվէտիոս, Թոմաս Բէյն կ՚կարդայ և

շրջմոլի հուր մը կ'դառնայ՝ որ դիերու արտաշնչութիւնն է։ Եթէ ըսես թէ հուրը լաւ բան է, խսկոյն իր տունը կ'ոչնչէ, իր մենեանը կ'լուսաւորէ և կրակ կ'պաշտէ։ Մի ըսեր անոր թէ ինքն Աստուծոյ մարդ կամ պաշտօնեայ է, վասն զի շուտ մ'ինքզինքը մարդաբէի կամ նոյն իսկ Աբրահամայ տեղն անցընելու կ'ձգնի։ Մի ըսեր անոր թէ՝ խաղը գրօսանք է, վասն զի ահա իր բանը գործը կ'ձգէ և Պօրսայի ծակէն այնչափ կ'կախուի որ վերջապէս անոր մէջ կ'գահավիժի։ Մի ըսեր անոր թէ՝ այս սեւադէմ մարդը մեղքեր գաւելու պաշտօն ունի 'ի վերուստ, վասն զի խսկոյն ամէն ոճիր կ'գործէ ամէն ժամ, և սեւադէմ դասը կ'սեղմանէ՝ երկնից անցագիրն ապահովելու համար։ Եթէ ակնարկես միայն թէ Եհովան փառաւոր մօրուս ունի, խսկոյն ալևոր ծերունիի մը պատկերը կ'շինէ և անոր առջև ծունր կ'կրկնէ . . . ։ Եթէ խմանայ որ այս փողոցին ծայրը թիթեղեայ տուփ մը կայ, որուն մէջ-թէ գիր մը նետես շուտ մ'իր նպատակին կ'հասնի, խսկոյն արևելեան ոճովնամակ մը կ'շարադրէ, զայն կ'ծալլէ և իրեն անծանօթ անձի մը կ'ուղղէ, ինչպէս որ ուղղուած է ինձ հետևեալ նամակը։

Պարոն Վ. Բոյր,

Արեգ սիրեմ. ինչպէս աղօր կ'լուսաս այն կիներն որ միանակ իրենց հաղուստն ու կապուտաը կ'մատնեն, իրենց տունին տեղին զարդն ու պակը չեն, հապա օտարներուն կրից խաղալիքն ու ծանակը։ Թէև ես տղէս կին մ'եմ, բայց բարեկենդանի տեսիլ գրածդ ուր կ'նայի կը հասկնամ և միանակ բանի մը համար քեզի դէմ գանգատ ունիմ։

Այս պատանին, այն աղջիկը կ'խայթեմ, բայց, պարոն, կ'երևի թէ բերանդ չերմար խել մը կարգուած մարդերու ալ քանի մը կծու խօսքեր ուղղելու։ Ասոնք երիտասարդներէն աւելի խենդ, աւելի մոլի են, և օրինակն իմ աչքիս առջև ունիմ։ Իմ էրիկս, պարոն, չոր հացը տունը կ'բերէ, և արդար եղն ու անուշ պատատը խենէ շին տունը կը կրէ։ Ա՛հ, թէ որ դիտնայիր ինչ կ'քաշեմ անոր ձեռքէն։ Տունը կատղած գազանի պէս կ'մտնէ, կռիւ կ'փնտռէ, կ'պոռայ կ'կանչէ, ինչ որ ձեռքը հանի կ'խորտակէ, գիս ծեծելը կ'մնայ և յիմարանոցէն փախած խելագարին պէս ինքզինքը տունէն դուրս կ'նետէ . . . և երբ իր սեւերես սիրուհին քովն երթայ՝ կատու կ'դառնայ, անոր աղտոտ ոտ-

ները կ'լլէ։ Տասն օրէ 'ի վեր երեսը տեսած չունիմ . . . Բէրա է, կ'ըսեն, ով գիտէ ինչ տղմի մէջ կ'թաւալի, թէև իմ մարդս անուն ունի, մեծ պաշտօն ունի, պատիւ ունի կ'ըսեն աշխարհիս մէջ, չեմ հասկնար թէ ինչպէս կրնայ պատուաւոր լինիլ այն մարդն որ ընտանիքը մոխրի վրայ կ'նստեցընէ, զաւակներն երեսի վրայ կ'ձգէ և կնիկներուն եռեւէն կ'վազէ։ Կ'երևի թէ հիմա պատիւ բառն ալ իր նշանակութիւնը փոխած է . . . . : Անօրէնը, թէև քանի մը զաւակի տէր եմ, բայց ինձի տարեկից աղջիկներ դեռ նոր փեսայ կ'փնտռեն։ Սիրող սիրտ մը և երկու հազար ոսկի օժիտ բերի անոր. ոսկին կերաւ, հիմա ալ սիրտս կ'կրծէ . . . :

Կրօնական օրէնքը միանակ անհաւատարիմ կինը կ'պատժէ. ուխտադրուժ մարդուն դէմ զէնք չունի։ Հարկաւ մարդիկ 'ի նպաստս կանանց երբէք օրէնք չպիտի շինեն Արևելքի մէջ, ուր՝ կինն ընդհանրապէս կարասի մ'է, կամ քրջի կտոր մը . . . :

Մերոյսն ալ օրինաց վրայ չէ, այլ արդարասէր դրիչներու վրայ, և եթէ անոնք ալ չօգնեն, բացէ 'ի բաց մեր ամուսիններուն զազրալի ընթացքին դէմ պէտք եղած տեղը պիտի բողոքենք և մեր գլխին ճարը պիտի նայինք. որովհետև մեր տնային երջանկութեան հետ ազգային առուն ալ փլելու վրայ է . . . :

Ա՛ռ այժմ բուն անուն սրտիս հետ պահելով կ'սարքեմ.

ԻԶԱՐ

Ի՜զ՛ր. ով կրնայ լինիլ այս կինն, ըսի իւրովի, և ինչպէս կ'համարձակի անծանօթ անձի մը գիր գրել այսպիսի փափուկ խնդրոյ մը վրայ։ Եթէ այս գիրը թագուն նպատակ մը չունի, սիրան այրած կնկան մը հառաչանքն է, և օրինաւոր վրէժխնդրութիւն մ'այն անսիրտ ամուսիններուն դէմ որ ամուսնական երջանկութենէն զուրս երջանկութիւն մը կ'փնտռեն ընդունայն։

Ուստի Իզար, ով որ է, ներելի է, բայց իր վերջն աւելի գիտաւ կ'բուժի եթէ գրելու տեղ օր առաջ իր ամուսինէն զատուի երբ տեսնէ որ նա անուղղելի է։

ԻԱ.

Կ. Պոլիս, 1 Փետրվար 1866։

Առանձին մը Կրօնական ժողովը լուիկ մենջիկ կ'աշխատէր և կարելի եղածին չափ Գիր. Ներքին եպիսկոպոսին առանձնապետութեամբը կ'գործէր։ Իր իրաւասութեան սահմանը կ'ճանչէր, Քաղաքական ժողովները ճարակող հիւանդութիւններէն զերծ էր, և իր սրբազնութեան առաջնին մէջէն անհամամտութեան, վիճաբանութեան, միապետութեան և կրից քամիները կ'սահէին կ'անցնէին առանց պատկառելի ճակատներու վրայ բօթ մը գրգռելու։ Կրօնական էր իր կոչումը, կրօնական էր իր իշխանութիւնը, կրօնական էր իր նպատակն և Քաղաքական ժողովին հետ հաշտ էր։

Երբ ՀՐԴԻՒՆ խնդիր մ'իր առջևը ներկայանար, կ'լուծէր. եթէ զայն իր ձեռնհասութենէն վեր դանէր, կրօնական համագումար ժողով կ'գումարէր. եթէ այս ալ անձեռնհաս դտնուէր, ընդհանրական կաթողիկոսին կ'դիմէր։ Երբ վիճակի մ'առաջնորդ պէտք լինէր, Քաղաքական ժողովին ընտրելեաց ցուցակ մը կ'մատուցանէր. երբ Քաղաքական ժողովը զինքը հրաւիրէր՝ Խառն ժողով կ'կազմուէր և Կրօնական ժողովն իր կարծիքը յայտնելէն ետև՝ վէճերը կ'հաղնէր կ'երթար։ Ուրիշ խնդիր է թէ Սահմ. 28դ յօդուածին տրամադրութիւնները գլխովին կ'գործադրէր թէ ոչ, ազգին կրօնական զգացումը կը զարգացընէր թէ ոչ, Հայաստանեայց եկեղեցւոյ դատանութիւնն ու առանձնութիւնները անխախտ կ'պահէր թէ ոչ. եկեղեցականաց բարեկարգութեան կ'հսկէր թէ ոչ. արժանաւոր և բանիբուն վարդապետներ և քահանաներ կ'հասցընէր թէ ոչ։ Այս հարցմանց ազգային արդի կրօնական վիճակը կրնայ պատասխանել։

Սակայն այժմեան Կրօնական ժողովն իր իրաւասութեան սահմանը շատ նեղ կ'դանէ, ազգային իշխանութիւնը ՀՐԴԻՒՆ է, կ'ըսէ. Քաղաքական ժողովին իրաւասութեան սահմանին մէջ կ'ուզէ արշաւել և կ'արշաւէ։ Ոչ միայն հոգիներու այլև մարմիններու վրայ կ'ուզէ տիրապետել. ոչ միայն խաչ այլև սուր կուզէ կրել։ Ինքն ինքնին առաջ-

նորդ կ'կարդէ, ինքն ինքնին տէրութիւնէն նշաններ կ'ուզէ այս ինչ եկեղեցականին համար. ինքն ինքնին քաղաքական յանցանքով անարատանալ եկեղեցական և աշխարհական մարդիկներ առանց քննութեան կ'արձակէ. ինքն ինքնին կ'դատէ, կ'վճռէ, կ'պատժէ, թէև պատժելին մասնիչ մը, գող մը, աւազակ մը լինի: Հեռուապէս հին և լուծուած խնդիր մը կ'ուզէ յարուցանել. մի և նոյն գլխի վրայ վեղար ու թագ կ'ուզէ դնել և աշխարհական վարչութիւնը կրօնական վարչութիւնէն զատ չկրնար ըմբռնել, թէև արդէն ապստամբութիւնը Կրօնական և Քաղաքական ժողովոց իրաւասութեանց սահմանները Հշգրիտ որոշած և տրամադրած է:

Բայց այնպիսի խնդիր մը ինչ առթիւ նորէն կ'յուզուի: Մի հարցը-ներ, բարեկամ: Պատրուակը Կարնոյ տէր Յակոբ դատաւորն է, նպատակը Քաղաքական ժողովին կործանումը: Կրօնական ժողովը՝ Քաղաքականն իմ իրաւունքս կ'յափշտակէ, տէր Յակոբը պատժել կ'ուզէ ըսելով՝ ոտք կ'ելնէ և իր իրաւասութիւնը պաշտպանելու մտոք դատաւորն մը կ'պաշտպանէ: Ինչ զեղեցիկ դատ. եթէ Կրօնական ժողովն իրաւունք ունենայ անդամ, քանի որ մէջ տեղը մասնիչ մը կայ, իր դատը կորուսած է: Բայց փոյթ չէ. վասն զի այս դատին շարժառիթը կրօնական իրաւասութեան նախանձախնդրութիւնը չէ, վասն զի ատոր պատճառն ապստամբին կրօնական իրաւանց պահպանութիւնը չէ, այլ Քաղաքական ժողովին դէմ, ոմն դիտէ որոց դրդմամբ, մաքառելու կիրք մ'է: Ա՛յս խաղին թելին մէկ ծայրն, այս անդամ չէ թէ յիսակիւտար, այլ ինչպէս որ համբաւը կ'ըսէ, Բերա է, միւս ծայրն ալ պատրիարքարանի մէջ և անոր եկեղեցական ժահահոտ հեղուկն է՝ յեղյեղուկ վեղար մ'որ առնն մը գլխարկ էր:

Իսկ Քաղաքական ժողովն ինչ վիճակի մէջ է: Կ'ըսեն թէ անշփոթ կ'քալէ, թէև իր գլուխն անշարժ է: Ազգի Քաղաքական ժողովոց հիւանդութիւնն անդամներուն մէջն էր, այժմայ Քաղաքական ժողովին ցաւը գլխէն է: Հեռուապէս երբ անդամները կ'շարժին այսոքին և գլուխը կ'շարժի այնոքին, մարմինը լուսնոտի մը կերպարանք կ'առնայ և իր ոյժն իր մէջը կ'սպառէ: Խնդիր Քաղաքական ժողով, հիմա որ եռանդ ունիս գործելու, Կրօնական ժողովն ախորժակ ունի քեզի հետ շփոթելու:

Բայց ինչ կ'նշանակէ այս ընթացքը, միթէ Կրօնական ժողովը Քաղաքականին հետ բարեկենդանի օրեր լինելուն զուարճանալու միտք ունի՞ իրաւ, միթէ բանը գործը հասած ազգին առջև իր զօրութիւնը ցոյց տալու միտում ունի։ Միթէ իր կրօնական իրաւասութիւնն և եռանդը գործածելու համար իրեն գործ կ'պակսի։ Դրսերը կրօնափոխութեան որոմն օր ըստ օրէ կ'տարածի և լեզուն բերնին մէջ դարձող վարդապետ չկայ որ մոլորեալ ոչխարները մայրենի եկեղեցւոյն փարախն ամփոփէ. և Կրօնական ժողովը գործ կ'փնտռէ։ Մեր վարժարաններուն մէջ աշակերտները քրիստոնէական դասերէ զուրկ են, քրիստոնէականի դաստատու և օրինաւոր դասագիրք չկայ. և Կրօնական ժողովը գործ կը փնտռէ։ Մեր եկեղեցականաց մեծ մասը թշուառութեան և չքաւորութեան մէջ կ'տառապին, անոնց ապագան անդորրելու հոգ տանող չկայ, և Կրօնական ժողովը գործ կ'փնտռէ։ Մեր եկեղեցական արարողութեանց և ժամերգութեանց մէջ անկարգութիւն և նորաձևութիւնները կ'աւելնան, և Կրօնական ժողովը գործ կ'փնտռէ. մեր վանքերն ապականութեան, աւազակութեան, մոլութեան և տգիտութեան ապաստանարաններ դարձած են, և Կրօնական ժողովը գործ կ'փնտռէ։ Պապականութեան սկզբունքը նոյն իսկ մեր Կրօնական ժողովին մէջ կը սպրդին, և Կրօնական ժողովը Հայաստանեայց եկեղեցւոյ անարատութիւնը պիտի պաշտպանէ . . . ։ Քանի մը միաբաններ Տարոնայ վիճակը հինգ վեց տարիէ 'ի վեր տակն ու վրայ կ'ընեն, Խրիմեան Մկրտիչ վարդապետը քանի քանի անգամ կ'մատնեն և այս անգամ՝ Հալածական կ'վանեն Կարնոյ տէր Յակոբին մատնութեան շնորհիւն. և Կրօնական ժողովը տէր Յակոբը կ'պաշտպանէ և անոր սիրոյն համար ամէն բան աչքն առած՝ Քաղաքական ժողովին հետ խաղ կ'բանայ։

Բայց այս խաղին ժամանակ շատ մը ազգային կրօնական և քաղաքական շահեր ալ մէջ կ'խաղան, հոգ չէ։ Կրօնական ժողովը Քաղաքականին յանդգնութիւնը կ'ուզէ պատժել տէր Յակոբի դէմ եղած անարատութիւնները քննելուն և զանի Լիմանապատան աբսորի դատապարտելու որոշում ընելուն համար։ Բայց երբ տէր Յակոբն իր մատնութիւնը գործեց Կարնոյ տեղական կառավարութեան առջև՝ Քաղաքական ժողով չկար. ինչու համար Կրօնական ժողովն այն առեն տէր Յա-

կորն ինքը չգասեց եթէ այս գործն իր պաշտօնն է, և անոր յանցանաց վրայ աչք գոցեց, թէև նոյն միջոցին Կարնոյ առաջնորդը ՀՆԷՆ և իր տեղը դարձուց։ Եւ եթէ հիմա Խառն ժողովով ծանր պատիժ մը անօրինաբար Կրօնական ժողովին որ իրաւասութեանը կ'դպչի։

Թէպէտ մեր կարծիքն այն է որ Կրօնական ժողովն այս մատնութեան գործին մէջ խօսք անգամ չկրնար ունենալ։ Միթէ մատնութիւնն, աւազակութիւնը, գողութիւնը, մարդասպանութիւնը կրօնական խնդիրներ են։ Միթէ եկեղեցական մը քաղաքական ատեանի մը առջև չընդառաջեր երբ քաղաքական ոճիր մը կ'գործէ։ Եւ Խրիմեանի դէմ եղած մատնութիւնը տեսակ մը ոճրագործութիւն չէ, զոր Քաղաքական ժողովը ձեռնհաս է քննելու, և իր որոշման գործադրութեան համար որու որ անկ է գրելու, ինչպէս որ յետ հատուն քննութեան վճռեր է։ Իսկ եթէ Կրօնական ժողովն ըսէ թէ այսպիսի մատնութիւն մը յանցանք չէ ազգին առջև, և եթէ յանցանք է, պէտք է որ Տէրութեան դատաստանական ատեանին առջև քննուի, թող այս կարծիքը յայտնէ և այն ատեն մեք աղ ոչխարի մորթին տակը պահուած գայլին պոչը պիտի ցուցնենք։ Թող յայտնէ թէ տէր Յակոբը զուտ կրօնական յանցանք գործած է, որուն դատաստանը Քաղաքական ժողովին չվերաբերիր, և մեք աղ սուրմակապետը մատով ցոյց պիտի տանք։

Բայց Խ... վարդապետը կ'ըսէ եղեր թէ Քաղաքական ժողովը ժամկոչի մը դատն անգամ տեսնելու իրաւունք չունի, եւ մնայ քահանայի մը, որ թէև մատնիչ, բայց կարգ ունի, և պ-հ-պ-ն-ի-ա-վ մը կրնայ ներուիլ։ Մեր խօսքը Խ... վարդապետի հետ չէ, Կրօնական ժողովը Խ... վարդապետը չէ։ Խ... վարդապետը դաշնակի ձայնին կրնայ ն-ե-ր-ք-ա-ն-ա-ն-ի-ն-ն-ե-ր յեղյեղել և բանահիւսել, և եթէ սիրտը ներանայ՝ Պօսֆորի ափերէն դէպ 'ի Պեսարապիա գտնուող իր բարեկամ վարդապետին մօտ երթալ և անոր վշտակից լինիլ, սակայն այսպիսի խնդիրներու համար ազգին մէջ հեղինակութիւն չունի և երբէք չպիտի ունենայ։ Մեր խօսքը Կրօնական ժողովոյ խոհական անդամոց ուղղեալ է և որոց չափ մենք աղ մեր կրօնական իրաւանց պաշտպան ենք, և առաքինի եկեղեցականաց անուան արատ բերող կրօնաւորներուն անհաշտ թշնամին։ Մեք չենք կարծեր որ Կրօնական ժողովը յամառի իր դիրքին մէջ և կարգէն անմիջապէս լուծուելու արժանի քահանայ մը պահպա-

նէ, և այս առթիւ Ընդհանուր ժողովին առեւանին առջեւը ներկայանայ։ Մասնութեան այնպիսի ծանր կէտ մը կայ այս խնդրոյն մէջ, որ հայ եղբոյրն արիւնը գլուխը կ'զարնէ և ամէն բան կ'զոհէ մասնիչը չարաչար պատժելու համար, եթէ ոչ Քաղաքական ժողովոյ միջոցաւ, նոյն իսկ Տէրութեան ձեռօք։ Վասն զի ազգին առնն ունելի մասնիչներու ձեռօք փլաւ քան թէ կրակէն ու սուրէն, վասն զի եթէ Վասակ մը կայ պատմութեան մէջ, բազմաթիւ սեւազգեստ Սուրմակներ ալ կը գտնուին մեր մէջն որոց դիմակները մէկիկ մէկիկ վար առնելու և անոնց Ճակատին վրայ դատապարտութեան սեւ դրոշմը կոխել տալու համար գրիչներն որոտալէն չպիտի դադրին։

ԻԲ

Կ. Պոլիս, 2 Փետրուար 1866։

Մէկ կ'ըսէ թէ ամէն նորահնար գիւտի մէջ, որ գիտութիւններու ծնունդն է, սատանային մասը կայ. Նիւման Էֆէնտին։ Մէկ կ'բանադրէ և կ'հալածէ դարուս գիտութիւններն, որ գիւտերու աղբիւրն են, Հռովմի Ս. Պապը. Նիւման Էֆէնտին Մէքքայի Ճանրան է, Ս. Պապն իր խարխուլ գահին վրայ։ Զարմանալի՛ հակասակեր. Եւրոպա, քաղաքակրթութեան կեդրոնն, իր լուսաւորութեան բանադրիչը կ'պահպանէ և կ'պաշտէ, Թուրքիա, սոյն լուսաւորութեան աշակերտն՝ անոր թշնամին կ'արտաքսէ։ Այս պարագայիս մէջ աշակերտն իր վարպետը կ'դերազանցէ և Վ. Ապտիւլ-Ազիզ քաղաքավարական դաս մը կ'ընծայէ Վ. Նափոլէոնի։

Բայց այս առաջին անգամը չէ որ Թուրքիա ազատամտութեան և կրօնական թոյլատուութեան օրինակ կ'տայ Եւրոպայի, որուն պատմութիւնը խանձած է հաւատաքննութեան խարոյկներով, որուն պատմութեան էջերը ներկուած են միլիոնաւոր անմեղներու արիւնով։ Դարերէ 'ի վեր պապական կղերը սատանան կ'կարծէ տեսնելերը բան, լոյս, հանճար, գիւտ և գիր տեսնէ։ Երբ հզօր է՝ այս սատանան կ'բռնէ

կ'այրէ, երբ տկար է՝ կ'բանադրէ. իսկ նոյն պահուն սատանան կրակ ու բոյ կ'փչէ և մինչև անգամ իր թշնամիները կ'լուսաւորէ, հոգ չէ, թշնամին աչքը կ'գոցէ ու նորէն կ'բանադրէ, այս է իր սկզբունքը։ Սակայն ցաւալին այն է որ 'ի վաղուց անտի Եւրոպայի քանի մը պետութիւնները սատանային ՀԷՐՈՒ հաղորդելու կ'աշխատին և քաղաքակրթութեան տեսարանին վրայ միմնական դեր մը կ'խաղան և տէպ ժողովուրդները խնդացնելով կ'սպասին։

. . . . . .

Բայց միջին դարու պատմութիւնը, կ'նայիս որ Ժան ա'Նրը Գաղղիա կ'ազատէ Անկլիոյ լուծէն և յետոյ վհուկի տեղ կ'անցնի և խարոյկի վրայ կ'այրի։ Ժան Հիւս, որովհետև կ'խորհի, սատանայ է, և իբրև մահապարտ կրակի կ'մատնուի։ Ինչ հակասութիւն. երբ Գորնէյլ իր Սէրը կ'ծրագրէ, Կրանտիէ, ըստ որում ազատամիտ է, Ռիշլիէօի հրամանաւ բոյերու մէջ ողջ ողջ կ'տապկուի իբրև սատանայի որդի։ Մինչդեռ Գլավիս՝ նաւուղիղը (boussole) կ'կատարելագործէ և Գոլոմպոս անոր շնորհիւը նոր աշխարհ մը կ'գտնէ, հաւատաքննութեան տեսանն իր գահնստեան Թորքմատայի ձեռքը երկու հազար սատանայի զաւակներ օր մը կրակին մէջ կ'տոչորէ։ Կութէմպէրկի գիւտը Լուտէրի ձեռքը տապար մը դարձած՝ անով Լեւոն Ժ., Ս. Պետրոսի բանալին նոր և հին աշխարհի դանձուց բանալին համարող զուարթադէմ Պապին ձեռնարկած հիանալի տաճարին հիմը խախտելէն ետև՝ Կալիլէ, երկրային շարժման հրեատրն, պապական իշխանութենէն կ'զրպարտուի իբրև սատանայ ու յիմար և բանտի մէջ կ'ձգնի։ Երբ Մօնթէյն բարոյական և քաղաքական տեսութիւնները կ'յօրինէ, Թասսո խաչակիրներուն արիութիւնը կ'երգէ, Պաքոն գործնական իմաստասիրութեան օրէնքը կ'հաստատէ, պապական Գրանսան Լուտէրի աշակերտները կը հալածէ, կ'բանտարկէ կամ կ'սպաննէ . . . ինչ հարկ կայ հեռուն երթալ։ Երբ հարիւր տարի առաջ ա'Ալամպէր և Տիտրօ գիտութեանց շուքմարան մը կ'պատրաստէին, Գոնտորսէ իր բանական արձանին հոգի տալու կ'աշխատէր, երբ Գանդ ՇՈՒ ԲՈՒՆ իրաւունքը կ'վերահաստատէր և Վոլթէր ազգայ ոգին կ'նկարագրէր, ահա Շուէտի զաւակ մը՝ Սվէտենպօրկ անուն՝ վհուկներու վարդապետութիւնը կ'քարոզէր և ուրուականներու հետ կ'բանակցէր . . . ։

Ուրեմն զարմանք չեն եթէ Նիւման էֆէնտին շոգին ստատնային շունչն և էլեկտրական հեղուկն անոր երակը համարի, քանի որ (թող Ս. Գիրքն և Ս. Թովմաս, որ տեղ մը կ'ըսէ թէ՝ «Ստատնաները կենդանիներու դէմքով կ'ներկայանան, կրնան անձրև, կարկուտ, հովու կայծակ բերել, և այլն» թող Ս. Պապն, որ ստատնային գէմ շանթեր կ'արձակէ, թող Պ. Զամուրէին որ ստատնայագուտն է, ինչպէս որ Շահրէդի գէմ կ'գնդէ։)* Ալլան Քարտէգ Ֆիւաղներու գիրքին մէջ քանի մը տարի առաջ կ'ըսէր. «Ստատնային ոգին բարոյական և նիւթական աշխարհին վրայ միշտ կ'ներգործէ, նիւթն և միտքը կ'ներշնչէ և բնութեան մէջ մեծ զօրութիւն մը կ'կազմէ։»

Ստատնայ և հրեշտակ, խաւար և լոյս, աւելորդապաշտութիւն և բանականութիւն, դերբնական և բնական, այս երկու բաները թէև 'ի բնէ իրարու հետ շուն ու կատու են, սակայն արդի քաղաքակրթութիւնը կ'ուզէ որ իրը եղբայր ու քոյր քովէ քով գահակալեն . . . ոքանչելի՛ քաղաքակրթութիւն։

ԻԳ.

Կ. Պոլիս, 4 Դեկտ. 1866։

Մինչդեռ անցած իրկուն կամրջին վրայ կեցած մեր գիւղին շոգենաւուն գալստեան կ'սպասէի և հիւսիսային կծու քամին ծծելով փայտ կ'կտրէի, հեռուէն յանկարծ պատանի մը տեսայ որ հեւալով դէպ 'ի Գալաթիոյ կողմը կ'վազէր և թաշկինակ 'ի ձեռին անդադար Ճակատը կ'սրբէր։ Սրբածը քրտինք էր, քրտնած էր խեղճ տղան, թէև նոյն պահուն ամէն մարդ ցրտէն կ'գողար։ Նորեկ օտարականի մը թնտուածքն ունէր նա. կոխելու տեղը կ'փնտռէր. երկայն երկայն քայլեր կ'առնէր և մէկ Պօսֆորի կողմը, մէկ նաւարանին կողմը նայելու ատեն՝ մերթ ուսն ուրիշին կ'զարնէր, մերթ ոտքը կ'ծռէր և այսպէս ոլորելով յառաջ կ'շտապէր։ Իսկ իր դէմքէն կ'երևէր որ սատիկ յոգնած, սատիկ նեղացած և սատիկ դժգոհ էր։

*Տես Մեղու թիւ 121—1861։

Այս պատանին պիտի ճանչեմ, ըսի իւրովի, Իզմիրցիի հովունի. և յիրաւի քիչ մը մտէն դիտեցի որ մեր բարեկամ Պ. Պարոյրն է։ Այո, նոյն ինքն էր։ բայց որչափ փոխուած էր։ Այն Պարոյրն՝ որ Զմիւռին գտնուած ժամանակ վրան դլուխը կ'ծփար, մանր ու փայլուն կօշիկ կը հագնէր և մատերուն վրայ կ'քայլէր, փեղոյրն իր գանդրահեր դլխին վրայ կ'թռէր և աչքով պատուհանները նստող սիրուն թռչուններու հետ կ'խօսէր և կարծես թէ ծովու և ցամաքի տէրն ինքն էր։ Հիմա հատա զրգլի մը կոնակը նետած, ճերմակ և դեղանի դէմքը բանջար դարձած, նորաբոյս մօրուսին թելերն, որոնք երբեմն կրնայիր համրել, այնքան ուշի ուշով սանտրուած էին, իրարու խառնուած, աղտոտ։ մրոտ կ'վազվզէր և կարծես թէ քաղքին դուռը կ'փնտռէր խոյս տալու համար։

Իսկոյն անոր ճանչան կտրելու դիտմամբ շարժումմ'ըրի, ու դէմառդէմ արձանի պէս կանգ առինք։ Աչքն ինձի դարձուց և յանկարծ պոռաց։ — Ծա՛, դուն ես, Պ. Վրոյր, որ ծակէն ելար։ — Այո, ես եմ, ու թէ որ չեմ վրիպիր դու ալ Պարոյրն ես, 'ի բաց առեալ կարմիր դիմակդ, ուղտավարի մոյկդ և վանականի շուրջառդ։ — Միթէ ծպտունն կ'պտրտիս. Իզմիրէն կ'դաս թէ տաք տունէն ելեր ես։ — Իմ բարկութիւնս ինձի հերիք չէ, դու ալ հիմա Պօլսեցիի ոճով մ-ՀԷՌ-ի ելեր ես։ Աղբեր, հոգիս բերանս եկաւ, այս ի՞նչ անտանելի քաղաք է. տասն օր կայ հոս եմ, տասս տարուան կեանքս մաշեցի ու վազելէն և անիծելէն զատ ուրիշ բան մ'ըրած չունիմ։ Առտու թրջած հաւ էի. հիմա ալ խաշած հաւ դարձած եմ։ Այսօր կանուխկէ Բերայէն հագուած սգուած վար իջայ Պօլսի շուկաները պտրտելու և չորս անգամ մազ մնայ որ մեռելս տունը տանին։ Առտու կամուրջը բաց գտայ. ոստրէի խեցի նման նաւակ մը բռնեցի դիմացի եզրն անցնելու. նաւակին մէջ այնքան մարդ լցաւ որ դեռ ճանրայ չելած նաւակն է շուրջ դարձաւ և մեր ալ ծովը թափեցանք։ Ճիշդ այն միջոցին որ շոդենաւ մ'ալ մեր վրայ կ'գար։ Հազիւ թէ պրծայ, դերձակի մը դրպակը մնայ, և այս հագած նորաձև լաթերս դնեցի ու դուրս ելայ, և ահա ձի մը իր սմբակովը կարկուտի պէս տիղմ ժայթքեց ու վրաս դլուխս ցեխով ծածկեց։ Ամօթէս դեռանին տակն անցայ, ուր էր թէ ծովին յատակը մնայի։ Զորս դիս նայեցայ որ աղջկի աչք մը դիս այս վիճա-

կիս մէջ չտեսնէ և ծակ մը փնտռելի որ մտքրուիմ։ Այն ինչ սկսեր էի սրբուիլ և ահա կռնակիս մէջտեղը սուր հարուած մ'էր զգայի և լեզուապատառ ետիս դարձայ։ Ի՞նչ տեսնեմ աղէկ։ Զորս հատ ահագին եղջիւր երկու ահագինցուլերու, որ հակերով լեցուն ահագին սայլ մը կ'քաշէին, և այնպէս մը կ'օրօրէին՝ որ եթէ չշարժէի՝ աղիքս գուրս պիտի թափէին։ Բայց որ կողմս շարժէի. Ճանբան նեղ էր. և նոյն պահուն իսկ դիմացէն շատ մը էշեր փրթան՝ որ գերան կ'կրէին, նոյնպէս երկնի կառք մը, որ հիանալի վրացի կին մը կ'կրէր։ Ա՛հ, ողորմած Աստուած, այս ի՞նչ փորձանք է, որ կողմը թնտամ վտանգ կ'ըսպառնայ։ Այսդին շարժիմ եղջիւր կայ, այնդին շարժիմ գերան կայ. մինակ կառքը կրնայ զիս ազատել եթէ դուռը բացուի և զիս ներս առնու պատսպարէ, կ'ըսէի մտովի և դէպ 'ի այն կողմը դարձած՝ աչքիս զարնող սև անդամանդի պէս փայլուն աչերէն մուրացկանի պէս գութ կ'հայցէի և կ'յուսայի։ Այս յուսով քիչ մը կռնակիս ցաւն և փափուկ դիրքս մոռցայ իրաւ, բայց երբ քերոբէական կառքին ետեր գանուող տափակ քթով, հատատ շրթերով սեւերես ձիաւոր մը տեսայ որ ծուռ ծուռ ինձի կ'նայէր և մտրակը ՝՝՝-ՅԾ-՝՝Ը, ես ալ կայծակի եկայ և կծիկը դնելու Ճարը սկսայ մտածել ակնկոր, թէև կարծեմ թէ Ճիշտ նոյն միջոցին յաւերժահարան ալ իր ոսկեթել շարգուրին տակէն ինձի կ'ակնարկէր և կ'ժպտէր . . . ընդունայն, որովհետև մտրակին տակն էի։

Ժամէ մը ետքը հազիւ երկ մը գտայ և առանց աջ և ահեակ նայելու պանդոկս դառնալու սկսայ, վասն զի ժամը տասնի հասեր էր և պէտք էր նորէն բան մը չտեսած Թերա երթալ, ուր բարեկամի մը հետ ժամն ինձին տեսնուելու ժամադիր եղեր էի։ Ես անմիտս կ'կարծէի թէ բարեկենդանին բարեկենդանը կայ այս տեղս, և երկայ Զմիրէն հոս եկայ որ այս առթիւ թէ նոր բան տեսնեմ և թէ զրօսնում։ Փափաքս փորս մնաց։ Այս է ուրեմն ձեր գոված Պիզանդիոնը. խերը տեսնես։ Աղրեր, կարծես թէ հոս հարուստ և աղքատ քար կ'կրեն։ Ուստու կ'երթնեն շտապա շուկայ կ'ինջնեն և գործ չտեսած իրկուն նորէն տաղնապելով տուն կ'դառնան ու դիակի պէս կ'լարուին կ'նստին, կ'ծխեն, կ'հայհոյեն և կ'-բ՝ՀԷՆ . . . ընկերութիւն, խօսակցութիւն, դիմակ, պար, խաղ որ կ'գտնուին։ Եթէ բարեկենդանն ասանկ է, հապա մեծ

պահքն ինչ պիտի լինի. պէտք է գերեզմաններդ փորէք ու մէջը մտնէք . . . դարձեալ կեցցէ՛ Զմիւռին. մարդս կեանք կ'անցընէ հոն . . . հոն, ա՜հ . . . թէ որ հիմա շոգենաւ մը գտնեմ մէկէն կ'դառնամ։

— Ահա մեր գիւղինն եկաւ, ըսի՝ անոր խօսքը կտրելով՝ որ լմընցնալիք չունէր, այս գիշեր մեզի եկու անցուր, կ'խօսինք կ'խնդանք և վաղը գիշեր՝ եթէ յաջող հով մը փչէ՝ քեզի հետ զրօսալի տեղ մը կ'երթանք։

Պ. Պարոյր հրաւէրս ընդունեց. շոգենաւը մտանք և վար սենեակն իջանք չմտելու համար, և որով շրջակայ գեղեցիկ տեսարաններէն զուրկ մնացինք։ Անիւը սկսաւ դառնալ, բայց շոգենաւը մատ մը յառաջ չէր քայլեր։ Ցանկարծ սոսկալի որոտմամբ բան մը կոտրեցաւ. վերէն կանայք սկսան վայ վայ պոռալ, ուղևորներուն երեսին գոյնը նետեց, և շատերը վազող վազողի վեր ելան Պ. Պարոյրն ալ մէկտեղ։ Ես տեղէս չշարժեցայ, այսպիսի պատահարներու վարժեր էի։ Իսկ անհամբեր Պարոյրն իրար անցած նորէն վար իջաւ։ — Ողբեր, դու հոգի չունիս, ըսաւ, շոգենաւուն ղեկը կամրջին զարկաւ ու կտոր կտոր եղաւ. ամէն մարդ նաւակ կ'բռնէ դուրս կ'ելնէ, դու անհոգ պապիս զտակին պէս նստեր ես։ Ինչ սև օր է այսօր. գլխիս ձիւն չմնաց որ չգայ. ելիր երթանք, նորէն ծովը չափելու ախորժակ չունիմ, շատ բան թէ որ ֆ---ն-ի չհանդիպիմ . . . ։ Այս ինչ նաւ, ինչ նաւապետ է . . . ։

— Դեռ նոր ես, կ'վարժիս, ըսի Պ. Պարոյրին. ինչպէս Եւրոպա արիւնէն ետքն ազատութիւն, նոյնպէս հոս վտանգէն ետքը բարեկարգութիւն կ'գայ. դեռ մարդ չմեռաւ, ոչ ոք ծովն ընկաւ. նստի՛ր, քիչ մը ուշ պիտի հասնինք տունը, բայց պիտի հասնինք։ Ժամանակը հոս շատ ժամն է. մարդս օրին կէսը ծովի կամ ցամաքի վրայ անցուած կ'անցընէ ու բարեբաղդ է թէ որ աւուր մը կեանք շահի։ Բայց այս կեանքն ալ իր զուարճութիւնն ունի. վտանգէն և այլայլութիւնէն ետքն օդն առելի սիրով կ'ծնէ մարդս . . . ։ — Ձե՛ս ըսեր որ գառնուկներու հօտ մ'են այս տեղի մարդիկ, որ բաղդին ձգեր են ամէն բան։ Հոյակապ պալատներ ու աղտոտ փողոցներ ունին, ոսկեզօծ այլանդակ նաւերու մէջ կ'նստին . . . բայց վիճելու ատեն չէ, ելիր։ — Ելնենք, ըսի, բայց գիւղը հասանք։ — Ինչպէս։ — Այո՛, նաւը ժամանակա-

ւար ղեկով մը մեր խօսակցութեան ատեն շարժման մէջ էր. ուստի կը տեսնես որ թէև կաղն 'ի կաղ կ'քայլեն այս տեղի բաները, սակայն իրենց նպատակին կ'հասնին։ — Մինչև որ ժամանակաւոր ղեկն ալ կոտրի, ըսաւ Պարոյր։» Եւ ժամը կէս էր երբ տունը մտանք։

ԻԴ.

Կ. Պոլիս, 4 Դեկտեմբեր 1866։

Պ. Պարոյր տան սեմէն ներս մտնելով — Ա՛ւհ, հիմա ոգի առի — մրմռաց և իսկոյն փեղջերը մէկդի նետեց, հայելին առջևը վազեց, մատները զանգուր և փայլուն մազերուն անցուց և ընկրկելով գոչեցյուսահատ. — Ա՛հ, մարդկութենէ ելեր եմ, երթամ ծոցը ընկնիմ. ես ինքզինքս չեմ ճանչեր ասոր մէջ, հապա թէ որ ՝ն ծակէ մը գիս դիտէր, անշուշտ այս ի՛նչ զազան է, պիտի ըսէր։ — Ես կարծեմ թէ աւելի պիտի հաճէր, ըսի, այդ բնական, անզարդ և առնացի կերպարանքդ, և մանաւանդ այդ թատերական նայուածքդ, որ հրապուրելի է, եթէ իրօք կ'սիրէ անձդ և սիրոդ քան նորաձև հագուստդ և օձանման փղոսկրէ ցուպդ։ Սիրահար մը՝ որ իր սիրուհւոյն միշտ փեսայի պէս հագուած կ'երևի, երբէք փեսայ լինելու միտք չունի, թող թէ ճշմարիտ այր մը։ Դեր մը կ'խաղայ անի, որուն վերջը պտակ չէ այլ պատրանք կամ ոգատանք . . . .

Պ. Պարոյր սկսաւ ժպտիլ, մեղմիկ հայելին հպիլ և անոր մէջ շեղակի նայելով ըսաւ. — Բայց կարելի՞ բան է այսպէս թափթփած պարահանդէս գնալ, միայն թէ գլուղիդ պարն ալ քաղքիդ դուպարին չնմանի։ — Ա՛սկից հանեցիր պարահանդէսն, այս տեղ պար մար չկայ։ Կ'մոռնաս որ այս իրկուն դու իմ հիւրս ես և մինակ ինձի հետ տեսնուելու համար եկեր ես։ Նորաձէն է մեր գլուղը, սիրուն և քանի մը հոյակապ տուներ ունի, որ ՅՅի հրդեհէն ետքը կանգնեցան և հետզհետէ կանգնելու վրայ են. բնակիչները հայ, յոյն, ֆրէնք ու թիւրք են, որոնք միայն ճեմելիքի ատեն կամ շրջենաւի վրայ իրար կը

տեսանեն, սակայն ինչպէս արաբացին անապատին մէջ ՀՈՒՆԸ, նոյնպէս գիւղիս բնիկն իր տունը կ'նկատէ մանաւանդ ձմեռը։ Գրէնքը գղեկի նման գմբեթաձև տաճար մ'ունի. հայը բաղնիքի նման իր գմբեթաւոր եկեղեցի մը՝ որուն բակը կանգնած շիրիմ մը մարդանման հիմնադրի մը մարմինը կ'սպասէ շնչառնելու. յոյնը հիմօրեայ մատուռ մը, թիւրքը ծովեզրեայ մզկիթ մը, իսկ բնութիւնը զմայլելի տեսարաններ։ Ուստի թատրոն, հանդէս և ուրիշ գիշերային զուարճութիւններ մի՛ փնտռեր այս տեղ, բաց 'ի գինետուններէ և նշանաւոր գինովատունէ մը՝ որ ՀՈՒՆԸ կ'անուանի, և ուր արբշիռն և խաղամոլը գիշեր ցերեկ կ'գեղերին։ — «Ուրեմն մենաստան մ'է այս չըսե՞ս» գոչեց սրամտելով Պ. Պարոյր և դէպ 'ի պատուհանն ելաւ։ — Այո՛, ատեն մ'աքսորի վայր էր, հիմա բաղդին, հիւանդութեան և աշխարհին երեսէն ընկած կամ տաղտկացած մարդերու ճոնարանն է այս, ինչպէս յունաց կայսրութեան ժամանակ շատ մը վեղարներու երեւելի ժողովատեղին եղած է։ Կ'տեսնե՞ս սա բլրակն, որուն վրայ քանի մը ցիր ու ցան տխուր ծառեր կան, կ'տեսնե՞ս լուսնկային անոնց անտերև ոստերուն բազմաճղի ստուերն՝ որ փոսի մէջ պառկած սիներու, քանդակներու և կիսամաշ անդրիներու վրայ կ'սողայ և կ'երերայ, ահա այն է հին Քաղկեդոնը . . . . . .։

Բայց Պ. Պարոյր մտիկ չէր ըներ. հիացմամբ շորս կողմը նկատելու ատեն յանկարծ պոռաց. — Աղբեր, այս ի՞նչ գրանցելի տեսարան է, այս ի՞նչ հմայական տեսիլ է։ Ա՛ւր ենք, ծովեզրն վրայ կ'տատանինք թէ օդին մէջ կ'սրանանք։ Ո՜հ, մարդս կ'մոռնայ հոս հող, վիշտ, երկիր, և թէ կ'ատնտ կ'թռի դէպ 'ի յաւիտենականութեան երդն։ Անհուն հորիզոն մը կայ առջեւս. նորել լուսնին նշոյլներն արծաթի պէս կը փարիլին այս միակատար ծովուն վրայ, որ Մարմարան է անշուշտ, և կ'սահին Ջմիւռնի ջրերուն ամպախառն մուգլին մէջ կ'անհետին։ Նոյն իսկ Մարմարայի նեղուցն աչքիս կ'երեւի. դիտաւոր մոլորակները մերթ կ'շոշան, մերթ կ'նստեմնան, արդեն թերեւս ձկնորսի նաւեր կամ լուսաթեւ ձիներ են։ Իսկ միւս կողմն ահա շքեղ ու ահաւոր Պիզանդիոնն, որ եռայարկ նաւի պէս կ'տատանի, կ'սուրայ դէպ 'ի ծովն և կարծես թէ աշխարհի կ'ուզէ հրամայել այն խոր մթութեան շնորհին՝ որ իր ստուերագիծը շրջապատած է և պայրատի առթիւ բոլորշի մզկիթներէ

ցայտած աղեղնաձև գոյնզգոյն լոյսերը պատկերին ներքին նսեմութիւնը չեն կրնար փարատել . . . բայց ասոնք ինչ պիտի լինին սա ամպի նման բլուրներն , որոց մէկ երեսը լուսինը թեթև մը կ'լուսաւորէ և միւս երեսը՝ թէև ստուերի մէջ , մանր մանր ու երերուն աստղիկներով կը բեկբեկի , և ծովային ուրուականներու կամ լոին ու ահարկու պահակներու պէս կ'սպասեն սացամաքի լեղուակէն անդին՝ որուն ծայրն ամայի աշտարակ մը կայ և անոր գագաթը ֆարոս մը , որ հաղիւ իր ստորոտը կ'լուսաւորէ : Վասն զի ահա կ'նշմարեմ նաւակ մը՝ որ հիմա աշտարակին չորս դին գանուող ժայռերուն զարնելով՝ փշոր փշոր պիտի լինի : Թշուառ ուղևորներ . շուտ օգնութեան հասնինք , նաւակը մեղի մօտ է : Եթէ ներելի չէ պարել , գոնէ օգնել սորվինք . . . :

— Հանդարտ կեցիր , բարեկամ , վայելէ այս տեսարանն և մի վրդովեր այն նաւակն , որ թերևս խոսրով ու Մարրուհի մը կ'պահէ : Այն նաւակը ներսէն կ'այրի , դրսէն վտանգէ ազատ է : Թեթև քամիով մը փոքրիկ առագաստը պարզած՝ կ'դիմէ դէպ 'ի Մարմարա , որ շատ անդամ օրինական բռնութիւններու լծէն խոյս տուող սիրահարներու դերեզմանն եղած է : Այն նաւակը , բարեկամ , ջրային ուրուականներէն փրթաւ , որոնք կղզիներն են , և աշտարակին մօտ գործ չունի , որ Գէնէր ըսուած փոքրիկ դալարաւէտ թերակղզին է :

Ո՞ դիտէ , կարելի է դատն ու տխուր յիշատակ մը կ'պահէ նաև սոյն կղզիներէն փոքրագոյնն՝ որ այժմ չոր ու փշալից է : Կարծես թէ կը տեսնեմ հեռուէն տարագիր թագաւորի մը ստուերն՝ որ լուսնկային բլրի մը սարը կեցած և դէմքը դէպ 'ի Ան դարձուցած՝ կ'լայ իր սիսիրական քաղաքին վրայ . մաշիկին հետ կ'խօսի , հովէն լուր կ'սպասէ , կոհակին ձայնէն կ'սարսռի և աղաստեթեան հրեշտակը կ'կանչէ . և երբ վերն անողոքելի երկին մը , վարն անսասա և անկարեկիր ծովն մը կ'տեսնէ , իր շղթան քաշքշելով լեռնակէն վար կ'իջնէ , վեստա Սարդիսը կ'անիծէ և այն հողն՝ որուն վրայ անկենդան մարմինը կ'շրջի , իսկ հողին՝ կ'սաստնի այն աւերակ և արիւնալից աշխարհի հորիզոնին վրայ որ Հայաստան կ'կոչուի . . . . . :

Սակայն ինչ հարկ կայ այս իրերուն վրայ խօսակցիլ : Վաղը լոյս աչքով կրնաս նկատել ինչ որ հիմա լուսնին լուսով աղօտ և անրջական երևոյթ մ'առած է : Յայտնի բան է որ մայրաքաղաքիս բնական գե-

ղեցկութիւնները տեսնելու համար եկող օտարական մը, մէկ քանի օրուան մէջ առելի բան կ'տեսնէ, կ'զգայ և կ'իմանայ քան բնիկ տեղացին, որ ժամանակ, ախորժակ կամ սիրտ չունի բնութեան հրաշալիքը զննելու, թէև յանդէպ կ'ծծէ ամէն օր օդ մը, որ 'ի բնէ թոյլ և հոգերով մաշած մարմնոյն ոյժ կ'ազդէ. կ'նայի ամէն օր ղմայլելի տեսարաններ, որոնք իր աչքին առջև հրապոյր և նշանակութիւն չունին։

Ուստի արի Ճաշի նստինք և քիչ մ'ալ ուրիշ մտերմական և ազգային իրերու վրայ խօսինք։

ԻԵ

Կ. Պոլիս, 6 Դեկտեմբեր 1866։

Գ. Պարոյր՝ աչքը խորհրդաւոր նաւակին վրայ սևեռած՝ ահ մը քաշեց։ Կարծեմ թէ կ'գժարէր հեռանալ այն տեսարանէն և խոր մտմտուք մը զինքն առեր ուրիշ աշխարհ մը տարեր էր։ Ցանկարծ սթափ դալով — Ասաղափայլ կամարի մը ներքև, փրփրուն ծովուն մէջ սեղմ՝ սիրաբոյր լուութեան ատեն՝ քանի այս նսեմ կէտն, այս մենաւոր առագաստիկը կ'գիտեմ որ ձկան պէս կ'սողսկի ալյսի և տուերի մէջէն, անմահութեան և մահու արահետէն՝ դառն յիշատակ մ'երևակայութիւնս կ'յուզէ, սիրտս կ'ճնշէ, լսա։ Կ'յիշեմ այն ամպրոպային սև գիշերն՝ երբ Ռոշ հետ թեթև ակատի մը մէջ նստած՝ Զմիւռնի նենգոտ խորշին փրփրագէզ ալիքներէն մղեալ՝ հոսանուտ Ճիւաղի պէս կ'քշէինք դէպ 'ի Գարաթաշ։ Ա՜հ, երկինք յստակ էր, լուսինը պայծառ և ծովը սիրահարները կ'հրաւիրէր իր ծոցն այն միջոցին որ Բունդայի ափերէն Ճանբայ ելեր էինք . . .։

Այն ինչ նաւը պարոյտ մ'ըրաւ և ահա գնդանման սև ամպ մը Պուրնապատի լեռին ետևէն ծայր տուաւ և իսկոյն մինչ'ի Թուզլա յանդող՝ նաւահանգստին հիւսիսային կողման ամայի և ազատի լեռնակներուն գագաթները ծածկեց և սկսաւ որոտալ և փայլակներ արձակել. քիչ քիչ երկինք իր աստղերը մարեց և ջրերու վրայ սև սաւան մ'ընկաւ։ Պուրն-

ապատի կողմէն հոսող ուժգին կ'ասլէր, անոր խորշակին ջրերը կարծես թէ եփ եղած կ'ժժժային, կ'եռային. իսկ մեր առջևը նաւահանգիստը կ'թնսար, կ'ուռէր և մրրիկ կ'սպառնար։ Մեր նաւակը՝ թէև նոյն պահուն թևը հովին տուած՝ մերթ բլրակի նման կոհակի մը սարը կ'ելնէր, մերթ փրփրալի հովտի մը մէջ կ'դլորէր և այսպէս ել և էջ՝ կայծակներու մէջէն կայծակի պէս կ'սուրար՝ բայց վտանգի մէջ էր։

Փայլակի մը դեղին լուսին դարձայ ՝ն՝ երեսը նայեցայ որ ինձի կը նայէր ժպտելով, հրեշտակային ժպիտ։ «Միթէ կ'վախնա՞ս, . . . հիս, ըսի անոր՝ սեղմելով այն քնքուշ ձեռքը զոր ծնկիս վրայ դրած էր։ — «Սիրտս հանգարտ է, հառաչեց նա միշտ ինձի նայելով, դու իմ քովս ես։ Իմ երկինքս աչերդ են և աչերդ պայծառ են. մինակ կ'ցաւիմ որ ինչպէս մարդիկ՝ նոյնպէս բնութիւնը մեզնէ երես կ'դարձնէ . . . »

Նոյն բոպէին Պարոյրին երկնագոյն աչացը մէջ արտասուք մը փրփրաց. վայրկեան մը կանգ առաւ և ապա շարունակեց. — Վրոյր, ՝ն՝ այս վերջին խօսքը հինգ տարուան պատմութիւն մը կ'պարունակէ, պատմութիւն մը, որ երկու դժբաղդ սրտերու քաշած վիշտերուն ծնունդն է իրա։, բայց իր մէջն աշխարհ մը կ'ամփոփէ, և ուրիշ առթիւ պիտի հաղորդեմ քեզ։ Այս ըսեմ միայն որ ՝ն՝ այն վսեմ զգայնան պատասխանեցի։ — Ուրեմն թող այս լինի մեր դերեզմանը քանի որ երկին և երկիր մեզի դէմ են և վստահ չենք անգամ որ մարդիկ մեր հրիտակը սուրբ պահելով՝ զմեզ մօտ առ մօտ թաղեն սև հողին մէջ, ինչպէս որ անդին մեր հողին իրարու փարած մշտատև երանութեան մէջ պիտի լողան իբր մի հոգի . . . »

Բայց, բարեկամ, մինչդեռ աղատութիւնն և երանութիւնն 'ի միասին մահու մէջ կ'փնտռէինք անձկօրէն, մահը նոյն ժամուն կայծակի ու կոհակի դէմքով մեզի հետ կ'խաղար և մեզի կ'խնայէր։ Ո՜հ, երանի՜ թէ չխնայէր, ուր էր թէ վերը գտնէի աղատութիւն մը զոր վարն 'ի նանիր կ'որոնեմ. . . . Կաթիլ մը ջուր կ'սպաննէ զմարդ, կ'ըսէ Բասքալ. միթէ իրա՞ւ է։ Ովկիանոսին մէջ մնայ և անվնաս ելայ ու հիմակ զգայում մը զիս կ'սպաննէ . . . »

— Զեմ հարցներ, ըսի Պարոյրին, թէ ո՞վ է այն էակն որ հոգիդ սարսելու զօրութիւնն ունի, որովհետև սիրային գաղանիք յուզելու ժամը չէ, այլ կ'հիանամ որ վառ ու խնդումներս Պարոյրդ այդպիսի զգայուն

սիրտ մը կրէ և իր ծաղիկ հասակին մէջ գժբաղդ սիրոյ գառն բաժակն ըմպած լինի։ Այս բաժակն ամէն մարդու բաժինը չէ։ Շատոյտ շրթեր անոր չեն կրնար մօտիլ, ոսկեղէն ձեռներ զայն չեն կրնար բռնել, նիւթասէր մարմիններ զայն չեն կրնար ըմբռնել։ Այն բաժակը մեծ հոգիներու կ'վայլէ. թշուառութեան մէջ երջանկութիւն զգալու, ձախորդութեան մէջ փառք, չքաւորութեան մէջ հանգար, անկման մէջ առաքինութիւն և վերանձնութիւն գտնելու կարող սրտերու խորանին վրան է այն։ Խորան մը, որ հէք՝ այլ վեհ էակներու հառաչանքը կ'ընդունի և կ'վերընծայէ այն Էին որ սիրոյ ակն է։

Քանի որ կ'սիրես՝ մեծ ես և դու Պարոյր, թէև կերպերդ թեթև են։ Սիրել, զօրել է. ուստի յուսահատութիւնդ անվայել։ Իրաւ է որ Պլուտարք սէրը վաղամեռիկ ցնցիւն է, կ'ըսէ, Պաքոն յիմարութեան զաւակը կ'անուանէ, Շէքսպիր շրջմոլի հուրի կ'նմանցընէ, սակայն երկնային ձայն մը սէրը նուիրական պարգև մ'է, կ'հրատարակէ, և մարդկային ազգին կատարելութիւնն անոր մէջ կ'տեսնէ։ Մին պատմաբանի ակնոցով միւսը վաճառականի նժարով, ուրիշ մը բանահիւսի գոյնով կ'նկարագրէ սէրն, և մինակ խաչն անոր էութիւնը կ'հաստատէ. . . . Իսկ դու խաչ կրած ես, Պարոյր. միթէ վաճառաշահ քաղքի մէջ այնպիսի ապրանք կ'գտնի, միթէ շոգին և նաւը մինակ արմտիք, բամբակ և կտաւ չեն բերեր Զմիւռ, միթէ շահագէտ հայն օրիորդին կուրծքին վրայ տեսած անդամանդեայ սիրան աւելի եռանդագին չընպագներ քան անոր զգայուն սիրտը. միթէ անոր սիրոյ նժարին մէջ ոսկին աւելի ծանր չընքաշեր քան անձնական արժանիքն, և ոսկեղէն կուրքն ատեն մը խնկելէն ետև՝ զայն 'ի սպառ չընխորտակեր . . . ։

— Զէ, չէ, գոչեց Պարոյր ոտքը գետին զարնելով, չէ, կ'սխալիս։ Եթէ մեր երկրին պատանիներն և օրիորդներն ազատ լինէին՝ իրենց առաջին զուտ սէրը պատկուած պիտի տեսնէին. թէև Պօլսեցիք կ'կարծեն թէ մեր տղաքը թեթևամիտ և մեր աղջիկները շատ բաց են և քմածին ընտրութիւններ կ'ընեն։ Այո, Աշխէնը կ'ճանչես, կ'կարծես թէ շատերուս ու թափանցիկ գոհար մ'է որ երբեն երբեն կ'փայլիլ և իրեն յատուկ գոյն մը չունի, պիւլպիւլի պէս կ'խօսի, մինչև ատոտ կ'պարէ, թեև թև կանցնի, հովի պէս թեթև է, սիրարկուներուն սիրտը կ'այրէ կ'մրկէ, և ամէնքը մատի վրայ կ'առնէ, ինչպէս որ գքեզ ալանդ-

գամ մը առած է. լաւ, այս Աշխէնը դաշնակին առջև, պարտաւ առնն, ուրախութեան և նուագարաններու հնչեցուցուր որոտման ժամանակ, ամէն կողմէն բօհ բօհ, ծաղիկ և խունկ ընդունելու պահուն՝ մէկ մնամուք, մէկ զգացում մ'ունի, այն է իր միակ սիրահարն, իր Հրանտն, որ թերևս իր հետը չէ։ Իր աղջիկը շորս պատի մէջ պահող թրքահայն այն ինչ լիսի է, իմ զաւկիս հարս չեմ առնուր, կ'ըսէ. թուրքին իմ բանիս կ'գայ այս ինչ գիւրին որս է կ'մրմռայ, բայց չգիտէն որ Աշխէն ներսէն իր Հրանտը կ'լայ։ Ուրեմն ինչո՞ւ չէր-ենթադրեր կ'հարցընես հիմա։ Վասն զի Հրանտ միակ սիրտ ունի, և շահամոլ հայր մը, արհնաւէր մայր մը, կամ վէս եղբայր մը անոր առջևը պատ քաշած են։ Այն պատն եթէ կործանեն, ինչպէս որ ամանք ըրած են, երջանիկ կ'լինին և Զմիռ մատ կ'խածնէ, իսկ եթէ չդօրեն՝ օրիորդն առաքինութիւնը կ'մոռնայ, իր սէրն՝ որ արտաքին յարձակումներու դէմ վահան մ'էր, կ'փշրի, և պատանին ալ խենդութեան կ'զարնէ, ինչպէս ես . . . »

— Պ. Պարոյր, սէր թերևս զգաս, բայց անոր վրայ տրամաբանել չգիտես։ Աշխէն և Հրանտ սիրոյ վկաներ չեն, այլ փառամոլութեան զոհ և իմկարծեացս կենդանի ապացոյցներ։ Ա՛ւր որ շահ կայ՝ հոն սէրը բան չունի։ Ա՛ւր որ Ճշմարիտ սէր կայ՝ հոն բռնութիւնն ինչ գէմ-քով որ երևան գայ պէտք է ետ քաշուի։ Ինչո՞ւ համար աղջիկներուն կրթութեան հետ ազատութեան համը կ'տաք և երբ զգալու, խօսելու և քալելու կ'սկսին՝ անոնց սիրտը, խօսքն և քայլը կ'կտրէք։ Անհեթեթ ընթացք։ Թիւրքերն աւելի տրամաբան են իրենց դրութեան մէջ։ Վանդակի մէջ կ'ծնին կիները, վանդակի մէջ կ'ապրին, վանդակի մէջ կ'մեռնին . . . »

Անշուշտ քու թուչունդ ալ հիմա վանդակի մէջ կամ ուրիշին թևը մնած է. ինչ շահեցար թուչուն լինելովը քանի որ փետուրները կտրած են։ Սակայն թող հիմակ այն սիրանուէր բաժակն և առ նայիմ սոյն գինիի բաժակն և ըսէ ինձի թէ ինչ կայ ինչ չկայ Զմիռ. գործերն ինչ ջրի մէջ են։

ԻԶ

Կ. Պոլիս, 7 Փետրուար 1866.

— Զմիւռին շարժման մէջէ, բան. Պարոյր՝ սեղան նստելով վերջապէս, Ոսկանեանը հոն է։ Ոսկան, այսինքն մտաց և գործոց մէջ յեղափոխութիւն։ Ո՛հ, ինչ գեղեցիկ օր էր այն՝ երբ նա այս անդամ հայրենի հողն ոտք կոխեց։ Հայերն ելան ելան նստան։

Փ. Ա. ոչ ինորդը մօրուքին թելերը համրելու ատեն, Քաղաքական ժողովն որոշում մ՚ընելու ատեն, Ուսումնական խորհուրդը ծրագիր մը պատրաստելու ատեն, իմաստակ դասատուն Ս. Մեսրոպի առջև անիմաստ դաս մը տալու ատեն, հարուստն ոսկիները կուտելու ատեն, վաճառականը բարթամ հակերը համրելու ատեն, կինն էրկանը համար սուտ մը պատրաստելու ատեն, օրիորդն իրենին համար ոսկեթել քսակ մը հիւսելու և մանչերուն մէկ շուտիկ զանգուրը մանիշակի մը հետ ականջին ետին խօթելու ատեն, և մանաւանդ Ս. Մեսրոպայ աչքը պաղելու ատեն՝ ահա Ոսկանն է երևան ելաւ։ Ղարդապետն իր մօրուքը, Քաղաքական ժողովն իր որոշումն, Ուսումնականն իր ծրագիրն, իմաստակն իր դասը, հարուստն իր ոսկին, վաճառականն իր առուտուրը, կինն իր ոսի մատնոցն, օրիորդն իր զանգուրը թողուցին և Ոսկանին վեհ ճակատն ամէն բանէ վեր դտան. իսկ Ս. Մեսրոպ իր թեւերն երկնցուց իր հարազատ զաւակը գրկելու և անոր ճակտին վրայ հայրական համբոյր մը դրոշմելու։ Մինակ ինքնասէրն և նախանձը դոյն առին ատին և իրենց քթին տակէն խօսք մ՚ըսին։

Եւ յիրաւի Ոսկանին գալուստը նշանաւոր դէպք մ՚է մեզի համար և անոր տրուած պատիւը թէև սղտիկ քաղքի մը շշուկը՝ բայց նշանակութեան արժանի. Զմիւռնեցիք քաջ չճանչեր զէթ ճանչել կ՚կեղծէ այն հանճարն որ օտար աշխարհի մէջ սնաւ և հայրենեաց համար հսկեց և հաղածում կրեց, որ օտարին ազատութեան սուրը քաշեց, ազգայնութեանց պաշտպան գրոշակիրը կանգնեցաւ անվեհեր և հայրենեաց համար գրեց ու հառաչեց, այն հանճարն՝ որ փառք ու նշան զոհեց, մեծատունին տուած ոսկին երեսին նետեց, մատնիչին ձեռքը կտրեց,

Հայ Ճիզվիդներու դիմակը խորտակեց և Հայրենեաց Համար լացաւ։ Իսկ Հայրենիք անոր անձնուիրութեան փոխարէն ինչ ըրաւ. անոգոյ կեցաւ, անբարոյական և կրակուս է այն գլուխն, ըսաւ, և կերպով մը թշնամիին ձեռքը դէնք տուաւ։ Ոսկան անենկոն՝ ուրիշ դէնքերով եկաւ մարտիկ մնալէն իր Հայրենեաց ծոյն և գնային տապալել այն թշնամին որուն անունն է ապիտութիւն։ Եւ Ոսկան՝ թէև Ա՛ր-Ի՛ր և Ա՛ր-Ի՛ր-ուրդ շարժեց, բայց այս վերջին շարժումը դեր 'ի վեր արժեց . . . ։ Կեցցէ՛ ուրեմն Ոսկան, անոր կենաց և նպաստակին յաջողութեան, գոչեց յանկարծ Պարոյր, և բաժակը բաժակիս դէնդ դէնդ զարնելն և գինին տնկելը մէկ ըրաւ։

— Բարեկամ, այդ ինչ լեզու է. համբերէ որ ես ալ բան մ՚ըսեմ՝ այն ընտիր յայտարարութեան վրայ, որով Ոսկան Ուսումնասէր ընկերութեան բեմին վրայ եղած՝ Զմիւռի Հայերն ողջունեց և իր հիմնադրուելը Քաղաքական ժողովը յաստարէգ կոչեց. և երբ Քաղաքական ժողովը գինեմեսի եկաւ ու ըսաւ, Պարոն, ինչա՞ կ՚գինիս և մեզի դէմ պատերազմի ultumatum մը կ՚արձակես. մեր նպաստակը նոյն է, թէև միջոցները տարբեր, գու գրիչ և լոյս ունիս, մեք մեքան և ոյժ, ուրեմն հաշտ ենք, Ոսկանը՝ բանակն, այն է ժողովուրդն ետ քաշեց և տուրբ Մեսրոպի տան դուռը զարկաւ . . . ։

— Աղբեր, հիմա ամէն բանի իլիկը ծլիկը քննելու առեն չէ. մարի յարիշտակութեան, սրտի վրդովմանն և գինիին հետ պէտք է որ ամէն բան շուտ շուտ գառնայ որ հրապոյր տայ։ Այս միջոցիս Ի՞ՇԽԸ ԴԷՆԴԷԿԸ Ե՞ՐԸ ԴԷՆԴ է, ինչպէս գիրն Ոսկանին և անոր թուղթն Ուսումնասէր ընկերութեան, վարդին կոկոնը թշուառին և փուշն երջանկին։ Պարոյրնը այս բաժակն ալ մեր ուսումնասէր Հայրենակիցներու լուսաւորութեան, օրիորդներու ազատութեան և կարգուած մարդերու զգաստութեան Համար։ Եթէ ամէն բանի մեկնութիւն տալու և բարակը փնտռելու լինինք՝ ոչ պուտ մը գինի և ոչ պատառ մը Հայ Ճաշակելու ժամանակ կ՚ունենանք։

Այդ ինչ Հանած վարած տղայ մը եղեր ես դու, Պարոյր, մէկ աչքդ լալու առեն միւսը կ՚խնդայ, լեզուդ թրթռալու առեն միտքդ կը խոկայ։ — Կ՚խնդամ, որովհետև արտասուեմ, պատասխանեց Պարոյր, լեզու կ՚կարեմ, որովհետև սիրտս լիր ու լրիւ է, և ահա մարդիկ են որ գիս

այսպէս կեղծ ու պատիր բրին։ Երթալով սեր Ներսակէն, գեղեցիկը տղեղէն, անուշը թթուէն չեմ կրնար զանազանել թէև կ'զգամ։ Ամէնքը մի և նոյն շպարը քսուեր են։ Ընկերութիւնը մոքիս և սրտիս ուղղութիւնն և բերնիս համը փոխեց։ Արդարութեան, Ճշմարտութեան, առաքինութեան և ազատութեան վրայ դպրոցը սորված դասերս ծրարած բ-ֆը դրած եմ։ Արդի բանուկ գրամը տատանայութիւն, շողոքորթութիւն, յանդգնութիւնն ու ոսկին է։ Եթէ ասոնք ունիս՝ մեծ մարդ ես և աշխարհին կոնակը կ'հեծնես, եթէ չունիս՝ կոմսականջ ես և վիրդ մինակ լծի յարմար։ Մէկ Ամերիկայեն, Անկլիայեն, Գաղղիացին, եթէ ոչ մարդիկ մեզի պէս։ Ինչո՞ւ մեծ ազգեր կ'բաւին, որովհետև իրենց արժանութիւնը կ'ճանչեն և ուրիշներու ալ յարգել կը տան։ Այն ոգին չկայ մեր մէջը. հայերը կ'ուզեն մինակ կուրօրէն պահել այս խրատն, երբ թշնամիէդ ապտակ մ'ուտես, դարձուր միւս երեսդ։ Աղբեր, հայը թշնամիին երես տալէն երեսը մաշեցաւ ու դեռ երես ունի ինքզինքը մարդ կոչելու։ Կարելի է հրեշտակ է, բայց հրեշտակը թևեր ունի, մինչդեռ մեր համեստը կ'սեսնուի։ Ան կոչտ է, թէև արդէն գիտես որ համեստն ու գինին շատ մարդավար ու նրբամիտ չեն . . . ։ Բայց դու ինչ կեանք կ'անցրնես այս տեղ, միթէ միայնակ ես գլխովին թէ ոչ բանի քեզի հեղինակի մը հետ, nun quàm minus solus quam cum solus . . .

— Հիմա աղատես բերնիդ եկածը գուրս տալու, երբ իմ կարգս գայ՝ ես ալ օրիսի խօսիմ, ըսի Պարոյրին, և մինչդեռ Ն-ը կենացը գինի մը կ'առաջարկէի տան գուռը զարկին և մեզի նամակ մը բերին։

ԻԷ

Գ. Պոլիս, 10 Դեկտ. 1866։

Ազգային թերթերն՝ իւրաքանչիւրն իր յատուկ տեսութեան և ուղղոյն համեմատ՝ մարտի 20ին պատահած վարչական պատահարը մեկնեցին և 'ի պաշտօնէ ալ հրատարակեցին, ինչպէս որ արդէն պատմե-

ցի։ Այս պատահարին մէջ ոմանք հին դրութեան արշալոյս մը, ոմանք փրկութիւն և ոմանք վտանգ տեսան։ Իսկ հասարակութիւնը լուռ կեցաւ։ Այս լռութիւնն, ըստ իս, առելի նշանակութիւն ունի քան թէ այն դիտողութիւններն՝ որոց շարժառիթը կամ պաշտօնական շուքն է, կամ անձնական շահը, կամ դրական շողոքորթութիւն մը և կամ ահմանադրական անհեթեթ եռանդ մը։ Վերին և ստորին յեղաշրջումի առեն ճշմարտութիւնն երեսը կ'պահէ, իր սովորական բնակարանը, հորը կիջնէ ու ասպարէզը բաց կ'թողու ենթադրութիւններու, կասկածներու և հնարագիտութեան։

Ահա ամէն բան նորէն առ ժամանակեայ, ամէն բան անկայուն (anormal) դրութեան մէջ ինկաւ։ Հայ ժողովուրդն, եթէ այլ ունի, ակնդէտ կ'սպասէ տեսնելու թէ մարտի 20ն ինչ արդիւնք պիտի բերէ։ Հայ պատմիչն, եթէ կայ մեր մէջն, գրիչ'ի ձեռին անոր ներքին պատճառները կ'ստորագրէ, և ՀԵՐՈՒ ՐՈՒՆ մը բաց կ'թողու անշուշտ ապագային համար։ Այս պարագայիս մէջ 'ի հարկէ նոյնը պիտի ընէ և ԾՈՒՆԻՆ, որ շինողի տաքութեան մը ներքև չկրնար բացուիլ . . .։

Եթէ «նպատակը կ'արդարացրնէն միջոցները» ըսուած դրութիւնն ընդունուի, կ'ընդունուի նաև 20ին պատահարը։ Ահմանադրական ազգերու պատմութեան փոքր 'ի շատէ տեղեակ եղող անձը շատով չզարմանար և չփրփրիր հակառահման ընթացքից վրայ, ինչպէս նաև չվրդովիր այն որ իրեն միակ ուղեցոյց ընտրած է տգիտութիւնը, կամ ինքնասիրութիւնն և կամ անտարբերութիւնը։

Շատ անդամ տեսնուած բան է որ ընդհանրութեան շինած օրէնքը մէկ, երկու, երեք հոգի արաթուր կոխէն, թոզ այն օրէնքն որ այս կ'օրինակէ ու այն կ'տրէ . . .։

Սակայն բնաւ տեսնուած իրողութիւն մը չէ որ օրէնքի մը հեղինակն իր շինած օրէնքը քանդէ, ըստ որում օրէնսդիրը կ'դադրի իր հեղինակութենէն այն օրէն որ օրինադիրն ընդհանրին հաւանութեան կնիքը կ'ստանայ, ըստ որում օրէնսդիրն անձնականութիւն չունի և օրինաց առջև իր էսը կ'ջնջուի։

Երբ Լուի ԺԴ կոշիկ յատան և մարակ 'ի ձեռին Բարիզի ժողովարանը կ'մտնէ և գոչէ, «Պետութիւն՝ ես եմ։» Երբ Գրոմվէլ Ամսարան 'ի ձեռին և մոլեռանդ բանակ մը քամակը ձգած՝ Վէսթմինդը կ'արշաւէ

և Անգլիոյ երեսփոխանները դանդաղ կ'արտասանեն, երբ նապոլէոն թիկնապահ զօրքն 'ի պահեստի դրած՝ Սէն-Դլոսի խորհրդարանը կ'կոխէ և ազգային երեսփոխանները արտաքսանելէն կ'փախչին, իսկոյն ՀԷՆ ԳՐԷՅԻՆ, ԼԷՆԱՐԴ ԳՐԱՆԻՆ, ՖՈՐԹԷՍՔՈՒ ՔՐԱՆԻՆ ոգին և նպատակը կ'թափանցեմ, և չեմ կրնար երևակայել որ, եթէ երբէք իրենց գործոց օրինաւորութեան գոյն մը տալու համար օրինագիր մը դարձնեն, այն օրինագիրն իրենց բռնական կամաց արտայայտութիւնը չլինի։ Երբ կ'դիտեմ որ Պիսմարգ մը ազգային ժողովարանը կ'փակէ, չեմ զարմանար, այլ եթէ նոյնհետայն իրրև ինքնընտիր օրէնսդիր օրէնք պատրաստէ այն ժողովրդեան համար, որուն սահմանադրական իրաւունքը կ'բռնաբարէ, խնդում կ'բռնէ։

Սակայն երբ կ'տեսնեմ որ արդարն Արիսդիտ իր հեղինակած և ժողովրդեան կամքը վաւերացած օրէնքին առաջին հարուածն ինքը կրելով, ստորէի կանոնին ոտքն Աթէնքէն կ'աքսորուի և լուսնայն կը հնազանդի, Արիսդիտին մեծ հոգւոյն առջև ծունր կ'դնեմ և կ'գուշակեմ որ ժողովուրդը, ժողովուրդը միայն պիտի մեղմէ այն ծանր օրէնքը։

Առարկել թէ՝ որ և է անձ մը կրնայ առ ոան կոխել բան օրինի վաւերացեալ օրէնք մը, պատճառելով որ գործադրութիւն, այժ կամ օգուտ չունի, անօրէնութեան և անիշխանութեան դառնալ է։

Որովհետև ազգային Սահմանադրութեան բոլոր արտաքսութիւնները չէին գործադրուեր մարտի 20ն անհրաժեշտ էր ըսելն այնքան ճշմարիտ է, օրչափ ճշմարիտ է ըսելը թէ՝ որովհետև 1860ին Սահմանադրութիւնը միանակ ազգովին վաւերացած էր, պէտք էր զայն կործանել, կամ որովհետև 1863ին ամբողջին վաւերացած Սահմանադրութիւնը ՊՈԼՍՐ հայոց երեսփոխանութեան կողմէն քննուած և վաւերացած չէր, իր գործադրութեան օրէն անվաւեր էր։ Այս տեսակ առարկութեամբ հոգելոյս Սարգիս սրբազանը կ'արդարանայ, ինչպէս կ'արդարանան նաև մարտի 20ն և անոր բոլոր հետևութիւններն։ Իսկ միտնելէ յայտնի Սահմանադրութեան անուամբ եղած բոլոր որոշումներն և ընտրութիւնները կ'ոչնչանան, և ազգին մէջ գտնուած զանազան կուսակցութիւնները թե և ոգի կ'առնուն ըստ հաճոյս մեկնելով այս պարագաները։

Արդ՝ այս յոռի շրջանէն ազատելու միակ ճար մը կայ, այն է հրատարակել բայց՝ ի բայ թէ ազգային Սահմանադրութիւնն՝ ի բնէ անոր վիճած մարմին մ՚էր և թէ ազգը յարգուն ուստ շնորհուած արտօնութիւնները վայելելու եղանակը չգիտէ։ Սակայն միւս կողմէն անուրանալի է որ Սահմանադրութիւնն՝ ի ծնէ հատուն և կատարուն օրինաց ներդաշնակութիւն մը գէթ չէր կրնար լինիլ։ Ամէն մարդկային գործ, ինչպէս նաև օրէնքը թերակատար կ՚լինին՝ ի սկզբան, հետևապէս փոփոխական, և ժամանակին ոգւոյն համեմատ կ՚կատարելագործին։

Երբեք չորս տարի հետէ Սահմանադրութեան քայլերը նկատող հայն այսօր համոզուած կ՚երևի թէ անոր [illegible] ոգին չտիրեր անոր մէջ, թէ շատ մը տրամադրութիւններ կ՚պարունակէ այն որ լոկ տեսական են և գործադրութեան պայմաններէ զուրկ, շատ մը կէտեր կ՚պարունակէ այն որ կամ մութ ու հակասական են և կամ ազգին անյարմար, կան յօդուածներ որ օրինաւոր դասակարգութեան կարօտ են։

Ահա ազգային Վարչութիւն մը՝ որ իր ժողովներուն և խորհուրդներուով ը հանդերձ՝ երբեք հարիւր հոգիէն աւելի ձրի անդամ կ՚պահանջէ։ Ահա ընդհանուր ժողով մը, որուն պատասխանատուութիւնն անտոյդ, հեղինակութիւնն անորոշ, իսկական պաշտօնը տարտամ, պարտաւորութիւնները քմածին և յարաբերութիւններն անձշգրիտ և անսահմ են։ Ահա կրօնական ժողով մը՝ որ գրեթէ եկեղեցականաց դասէն կ՚ընտրուի, անդադար իրաւասութեան խնդիրներ յարուցանելու վիճակին մէջ կ՚գտնուի, և որ մեծն է, մեր եկեղեցի ոչ կանոնաց հակառակ Էջմիածնայ մայր Աթոռին հետ յարատև հաղորդակցութիւն չունենալուն՝ Ցառկաստանի հայոց մէջ անկախ և անպատասխանատու մարմին մը կ՚կազմէ։ Ահա քաղաքական ժողով մը՝ որ ոչ օրէնադրական է, ոչ գործադիր իշխանութիւն մ՚է և ոչ էապէս ատեան մը կամ դատարան, այլ երեքին մէջ երերուած բան մը։ Ահա գործադիր իշխանութեան գլուխ մը՝ որ խաչը սուրին հետ կ՚գործածէ։ Ահա ազգային կրօնական և քաղաքական խնդիրներու ընդհարումը՝ որ այս կամ այն կողմին ձեռքը վէճ և դժուարութիւն յարուցանելու գործիք մ՚է, քանի որ քաղաքական և կրօնական իրաւասութեան սահմանները գործնապէս որոշուած չեն։ Ահա անհամար թաղական խորհուրդներ որ վարչութենէ գրեթէ

անկախ դիրք մը բռնած դիմողքս կ'կենան։ Ահա գաւառական վարչութեանց կազմութեան եղանակ մը, որ իրաւք բաւիղ մ'է, ուսկից վաթսունէն աւելի առաջնորդական վիճակներ չեն կարողեցեալ։ Այս և ասոր նման թերութիւններ, զորս մի առ մի բացատրելս աւելորդ է, Սահմանադրութեան մէջ կան և փորձառութիւնն օր օրի երևան կ'հանէր զանոնք պիտի ըսուի, սակայն կար նաև Սահմանադրութեան մէջ վերաքննութեան յօդուած մը։ Այս յօդուածն ապագային մէջ կատարելագործութիւն աւետող պահակ մ'էր, մարդկային օրինաց յառաջադիմութեան վաւերական վկայութիւն մ'էր և մանաւանդ յարմար կամ անյարմար օրինաց ցպայմանաժամն տրուելիք յարգանաց պահանջումը . . . ։

Սակայն Սահմանադրութիւնն աղէկ գէշ, ինչպէս երեք տարի առաջ՝ նոյնպէս մարտի 20էն առաջ կ'քալէր։

Սակայն ինչու մարտի 20ը, 1864ին, կամ 1865ին մարտի 20ին չպատահի և 1866 մարտի 20ին պատահի,

Սակայն եթէ Սահմանադրութիւնը թերի էր, միթէ նոյն թերութիւնները չունէր նաև ասկից քանի մը տարի առաջ և միթէ կարելի չէր տարի մը ևս համբերել . . . ։

Սակայն միթէ միայն այս թերութիւններն էին պատճառ Սահմանադրութեան թերի գործադրութեան. միթէ ժողովրդեան անտարբերութիւնն, ազգային երեսփոխանաց մէկ փոքր մասին տիրապետական հակումները, հակառակութեան և հեղինակութեան փափաքն, անձնական կիրքն և 'ի վերջէ Սահմանադրութեան անթերի գործադրութեան համար առաջի Աստուծոյ և ազգին հանդիսապէս ուխտ ընող ազգային պաշտօնէից ուխտադրժութիւնն և պատգանցութիւնն 'ի համար առնելու չէ։ Միթէ կրօնական իրաւասութեան խնդիրն, ինչպէս երբեմն սուրբ Էրուսաղէմի խնդիրը, դաւադրութիւն մ'էր Սահմանադրութիւնը գահավիժելու, թէ ոչ վերականգնելու . . . ։

Ժամանակն և պատմութիւնն այս հարցումներուն պատասխանը պիտի տան։

Այս իրաւ է որ մարտի 20ը չորս տարի յետոյ կ'լնկրկէ ազգն։ Ինչ որ 1862ին տեսայ՝ նոյնը կ'տեսնեմ և 1866ին, այս տարբերութեամբ որ անսահմանադրականը սկզբունք մը՝ աղէկ գէշ ունէր, սահմանա-

գրականը ցցուց որ չունի։ Սահմանադրականն իր ձեռքն անսահմանա-գրականը պատկեց։ Պարագաները նոյն, անձինք դեր փոխած են։ 1866ը 1862էն ազգային գործերու նկատմամբ մինակ այս զանազանութիւնը կ'ընծայէ որ նոյն միջոցին ազգային նոր նոր պիտոյքներ և խնդիրներ ծնան և գրեթէ անդարման և անլուծանելի մնացին և կը մնան. կաթողիկոսութեան կենսական խնդիրը ծնաւ և այն ինչ շունչ մը առաւ և անդէն անդամալոյծ դարձաւ. թէև այս անդամալոյծն՝ որ պահ մը Սահմանադրութեամբ ոգի առաւ, ազգն և Սահմանադրութիւնը պիտի ազատէ իր ներքին երկնային շնչովն, և զօրաւոր մդիչ մը պիտի լինի կոծանածը վերականգնելու, միայն թէ կաթողիկոսի ընտրութիւնն ըստ ամիրայական վաղեմի սովորութեան չորս պատի մէջ չարոշուի և առաջ չհատատուի այն կարծիքն ալ թէ՝ կաթողիկոսութեան խնդիրը սպաննելու համար Սահմանադրութիւնը կ'սպաննեն։

Իսկ մնաց մէջտեղակ մը վհատութիւն տիրեց և պօլսեցւոյն այս օրէնսդրական կատակը հեռաբնակ և դատաբնակ հայուն աչքին հանելուկ մ'երևցաւ, որուն բանալին ընդ ունայն փնտռելու վրայ է։

Որքան եռանդով և յոյսով որ 1863 մարտի 17ին կ'սպասէինք, նոյնչափ ահ ու դողով կ'սպասենք նոր թուականի մը։ Ասի այնչափ ստոյգ է որչափ ստոյգ է որ գրեթէ մի և նոյն անձերէ կ'կազմուի օրէնսդիր Մասնաժողովը։

Ազգին բաղդն այս օրէնսդիր Մասնաժողովին ձեռն է։ Զօրաւոր են այս ձեռները, և ինչպէս Սահմանադրութիւնը՝ շինելէն ետև կախել, (suspendre) անշուշտ վերաշինել ալ գիտեն։

ԻԸ

Կ. Պոլիս, 11 —դրել 1866։

Մովսէս Սինա լեռը կ'ելնէ, Աստուծոյ հետ կ'բանակցի և անկից օրինաց պատգամներ կ'արձակէ հրէից։

Մինաս և Դաւիթ քարայրը կ'իջնեն և մին կրէտացւոյ, միւսը Հռոմայեցւոյ օրէնք կ'հաղորդեն գիշուհիներու բերնով։

Ինքուրիոս նախ թագաւորութենէ կ'հրաժարի և ապա սպարապետի խնդրանքը օրէնսդիր կ'կանգնի։

Տրաքօն՝ իբր արքունիք՝ արիւնալի կանոններ կ'հաստատէ, Սոլոն՝ բարձր ու դաւազան կ'թողու և իբր քաղաքացի ամենացուց ընտիր օրէնսդրութիւնմը կ'աւանդէ և անոնց պահպանութեան երդումն առնելով կ'ձգէ իր հայրենիքը կ'մեկնի։

Իսկ Ֆրանսայի Սահմանադրական ժողովն 'ի լուր աշխարհի մարդուն իրաւունքը կ'հրատարակէ։

Տարբեր ժամանակ, տարբեր սովորութիւնք։

Աստուածպետութիւն, Միապետութիւն, Սահմանադրութիւն։

Այս երեք բառերուն մէջ դարեր կան . . . ։

Մեր դարու օրէնսդիրն ոչ երկնի, ոչ դիցուհիի և ոչ աստուծոյ հետ կ'ուզէ բռնակցիլ օրէնք հաստատելու համար, այլ ժողովրդեան ուղղոյն, բարուց և վարուցը հետ կ'խօսի և արդարութիւնն և բարոյականը հիմ բռնելով՝ ամէն մարդու, հետևապէս ազգային իրաւանց և պարտուց փոխադարձ յարաբերութիւններու օրէնքը կ'հաստատէ։

«Օրէնսդիր մը, կ'ըսէ Ռուսօ, պէտք է որ գերազոյն հանճար մը լինի որ մարդկան շարժիչ կիրքը տեսնէ անանց անհաղորդ մնալով, որ մեր բնութեան բնաւ յարակցութիւն չունենայ, բայց և այնպէս զայն քաջ ճանչէ, որ անկախ կացութեան տէր, դերմարդկային էակ մը, Աստուած մը լինի։»

Ռուսօյին այս կարծիքն ամենայն մասամբ չընդունուիր։ Չեմ կրնար ըմբռնել որ մարդկային ընկերութենէ դուրս և անոր ոգւոյն և բնութեան օտար անձ մը, հրեշտակ մը մարդերու օրէնք տալու կարող լինի։

Այս դրութիւնը բռնութեան և ապիրատութեան դարերու կ'տանի զմեզ։ Շատ օրէնսդիրներ ասեն մը Աստուծոյ կողմէն օրէնք տուին ազգերու. անհուն և գերազոյն Էին անոնք շատ անգամ բռնութեան դրշակին վրայ գրուելու, շատ անգամ խաչը մարդոց ձեռքը սուր դարձաւ և գեռ կ'դառնայ ցարդ . . . ։

Այս կ'ընդունիմ որ օրէնսդիրն ազատ, միտակ արդարութեան սիրով վառ, որ և է նախապաշարման և կուսակցութեան անմատն, օրինաց հմուտ, աւանդութեանց և սովորութեանց տեղեակ լինի. և անձնա-

կանութիւն, անուն, փառասիրութիւն զոհէ այն սրբազան իրաւանց և շահուց առջև որոց պահպանութիւնն օրինապէս ապահովելու և զարգացնելու պաշտօնն ազգովին իրեն աւանդուած է։ Այլ կ'ընդունիմ որ բուն մարդ լինի մարդերու օրէնք տուողն, և մարդիկ լինին մարդուն շինած օրէնքը հաստատողն, ինչպէս որ նոյն Ռուսսօն, որ շատ անգամ անուրջը Ճշմարտութեան և ուղիղ սկզբանց հետ կ'խառնէ, իրաւամբ կ'ըսէ. ՄԻՆԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐԻՆ ԿԱՄՔԸ Կ'ՊԱՐՏԱՒՈՐԷ ՄԱՍՆԱՒՈՐՆԵՐՆ ԵՒ ԿԱՐԵԼԻ ԶԷ ՍՏՈՒԳԵԼ ՈՐ ՄԱՍՆԱԿԱՆ ԿԱՄՔ ՄԸ ՀԱՆՐԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ Է, ՄԻՆՉԵՒ ՈՐ ԱՅՆ ՄԱՍՆԱԿԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԱԶԱՏ ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՆԹԱՐԿԻ։

ԻԹ

Կ. Պոլիս, 23 Մարտ 1866։

Ահա կ'գառնամ Պարոյրին։

Հետաքրքիր ես իմանալու թէ ինչ վերջ ունեցաւ մեր տեսութիւնը։ Պարագաներն այնպէս բերին որ պահ մը կորցիմ անոր հետ ունեցած խօսքիս թելն և ապագային քանի մը խնդիրներ շօշափիմ։ Սակայն մի կարծեր թէ Պարոյրն ալ խնդիր մը, վէպ մը, կամ դէպք մ'է, ինչպէս Ալիկիոր Հիւկօ կ'ըսէ Միրապոյին համար։ Պարոյրը զուտ Պարոյր մի է, որ բարեկենդանի առթիւ Պօլսի դիմակները տեսնելու և գբօսնելու յուսով մայրաքաղաքս կ'գիմէ և բան տրմելու փորձանքին հանդիպելով իր հետը տխուր յիշատակ մը կ'տանի հոգ մարդերու և հոգու գործերու վրայ։

Ռուսսօ Ճանրարգութիւնը գատարարութեան լրացուցիչ մասը կ'համարի։ Իր Էմիլը Սոֆիին հետ արտով կապելէն ետև՝ աշխարհիս մէջ կ'նետէ որ ժողովրդոց բարքը վարքը քննէ, գտնէ, նեղութիւն կրէ և ապա գտնայ Սոֆիին պատկին արժանաւոր. այն Սոֆիին՝ որ թէև գեղանի չէր, բայց գեղանի օրիորդներու նախանձը կ'շարժէր, այն Սոֆիին, որ իր սիրահարին տարակոյսներուն առին հաստատիմ մնաց։

Հայաստանի մէջ ալ կայ այս սովորութիւնը, թէև շարժառիթը տարբեր։ Երբ հայ պատանին հայրենի տանէն հեռանայ, չէ թէ կրթուելու, այլ աշխատելու Ճարելու մտօք, թէև սակայն ճախորդութիւն կ'զտնէ, ընտանեաց խորհրդովը կ'նշանուի օրիորդի մը հետ որ ՝ԸՆԷՍԻՆ ԷՍԻ. իր բնիկ երկրին օդը, ջուրն, երկինքը, ծաղկաւէտ հովիտները յիշելու առէն սասնոյ մէջ ծլած շուշանն ալ յիշէ և վերադառնալու փոփոխը հոգւոյն մէջ տածէ։ Բայց բայէ, շատ անգամ շուշաններ հոգմահար կ'չորնայ սիրահարը չտեսած, շատ անգամ վայրի քիւրան անմեղ ծաղիկն ատնահար կ'Ճզմէ և անոր տեղ տատասկ մը կ'թողու . . . շատ անգամ նաև տարագիր հայն իր սիրուհին կ'մոռնայ, իր հօրենական տնակը խիստ տարին և անշուք կ'զտնէ, և միտքն Ճոխութեան յոյսերով շլացած կ'օրօրի՝ յանկարծ թշուառութեան անդունդը գլորելով կ'յիշէ, բայց շատ ուշ, իր սիրական հայրենիքն և կ'հառաչէ լալագին . . . ։

Իսկ մեր կողմի հայերն իրենց զաւակներն Եւրոպա զրկելով կարծեա թէ այս պատուէրը կ'տանեն անոնց. «Ցղայ, ջան 'ի գործ դիր իրև սին և անօգուտ բաներ մոռնալ ինչ որ առհմային է. Ճնշէ, խորտակէ, Ճզմէ, թաղէ հայկական սովորութիւններդ, (իրր թէ մեծ մասամբ կորսուած չեն) բարակ, կիրթ և նրբամիտ եղիր ու Եւրոպական հագուստով հետ հաշտէ նաև անոր սիրտը, վարքը, բարքն, ոճը, լեզուն։»

Ա՛յս խրատը կէս առ կէս բռնելու կ'աշխատի տղան, եթէ անբան է, և 'ի գարձին՝ նախ իր հայրն ուրանալով հօրը տուած հրահանգն 'ի գործ կ'զնէ. իսկ եթէ սիրտ ունի և միտք՝ քանի Ճշմարիտ լուսաւորութեամբ զարդանայ, նոյնչափ պիտի կ'պահէ իր առհմային բնաւորը ընտիր հանգամանքն և նոյնչափ օտարներուն առջև իր յարգը կ'աւելցնէ զանոնք մշակելով։

Պարզը ալ այն հայ պատանիներէն է որ բաւական ժամանակ Եւրոպա շրջելով Ճիգ թափած է իր էութիւնն, այս է հայութիւնը մոռնալու, և այժմ զարմանալի երևոյթ մը կ'ընծայէ հայութեան ու Եւրոպականութեան մէջ։ Թէև 'ի բնէ ծանր և պարզասէր, վարքով համեստ և շարքաշ, նոր դատողութեամբը լեզուանի, պՃնասէր և թեթև դարձած կ'թռի, և կ'աշխատի երևիլ ինչ որ չէ, որով իր յատուկ ու-

գին կորուած է, նման այն նաւապետին որ կոմնոցոյի պակասութենէ ասողերը գիտելով կ՚ձգնի գտնել մեռոնոցէից և մոլար շուխը։

Պարոյր՝ երբ Հայրենասիրութեան եռանդը պատահմամբ գրգռի, Հայկ մ՚է և կարծես թէ նոր Հայաստան մը կանգնելու ձեռնհաս։

Երբ յուսահատութիւն, Եւրոպայի փայլն և մանաւանդ դժբաղդ սիրոյն յիշատակը գինքը գրաւէ, կ՚անիծէ ազգ և ընտանիք և ապաւանի թեռը կ՚գառնայ։ Սակայն Եւրոպացիի առջև ինքզինքն աշխարհիս քաղաքացի կ՚գասէ, ազգայնութիւնը՝ լոկ ստուեր մը կ՚նկատէ. իսկ հայու և մանաւանդ բարեկամի առջև սիրոյ շրթերուն վրայ կ՚թռի, անիծելու և ծիծաղելու ժամանակ յանկարծ կ՚լայ, երբ արտաշարժ զգացմամբ մը վրդովի։

Արդարև Պարոյր իր արտին հետ անկեղծ հայ մ՚է, սակայն մոլորեալ հետ ենոգաւոր Եւրոպացի մը . . . . Հայաստանի պատանին կ՚սարսրի և հարստութեան ստուերը կ՚որսայ, տարագիր հայը կ՚սարսրի և լուսաւորութեան ստուերը կ՚գտնայ։

Եւ արդի քարբառիկ լեզուս հայերն այս կրկնակի կորուստը հարստութիւն և զարգացում կ՚անուանեն . . . .։

Լ.

Կ. Պոլիս, 25 Դեկ. 1866։

Գիտես արդէն որ Թուսինեան էֆէնտին իրրև առնոգեան՝ առաջարկեց անգամ մը Ընդհանուր ժողովին որ խրատանոց ժողովի խորհուրդ ՊԷՏՈՒԹԻՒՆ ԴԵՊ մը բանայ և Սահմանադրութեան այն կարգերն որ դարձադրութեան ատեն գժուարութիւններու կ՚հանդիպին՝ դրի առնէ, վերաքննութեան ժամանակ Յանձնաժողովին ուշադրութեան ենթարկելու համար։ Կ՚ցիշեմ նաև որ ազգային երեսփոխան մը այս առաջարկութիւնը՝ խիստ սահմանադրական և բնական լինելուն, քուէի դնելն անգամ աւելորդ համարեց, որովհետև Սահմանադրութիւնը քուէի դնելու շափ անհեթեթ գտաւ։ Թուսինեան էֆէնտի

ոչն իրբ օրէնսդիր կ'մասնէր և Սահմանադրութիւնն իր բոլոր թերութիւններով կ'յարգէր ժամանակին զանոնք ուղղելու միջոցը ցոյց տալով, և չէր կրնար երևակայել որ օրէնք մը որոշեալ ժամանակէն առաջ կրնայ դադարման զատապարտիլ, նոյն իսկ այն երևսփոխանաց կողմէն՝ որոնք սահմանադրական առաջարկութիւն մը քուէի դնելու զաղափարն անգամ ծիծաղական կ'սեպէին։

Բայց ինչ կ'ենթադրէ ՀԷՐՈՆԷԼ, եթէ ոչ փորձառութեան դասերէն օգուտ քաղել և հիմնական դիտողութիւններու վրայ գործ մը ըստ կարի կատարելագործել։

Այս փորձառութեան դասերն արդի վերաբերութեան Ցանձնաժողովն 'ի բնէ անտի ունի, Սահմանադրութեան անդորձագրելի տրամադրութիւնները դիտէ, կ'ըսեն շատերը, ասկայն Սահմանադրութեան արդելման անբնական պարագաները քանի միտքս բերեմ կ'վարանիմ հաւատալու որ ասոնք Սահմանադրութեան վերաբերութեան վրայ ներդործեն։

Արդէն այլև այլ կարծիքներ՝ որ ազգային անկախութի իրաւանց և օրինաց պաշտպանն առջև լուռ կեցած էին, յերևան կ'ելնեն և կրնան այնպիսի ազդեցութիւն մ'ունենալ՝ որ փորձառութեան, բանականութեան, արդարութեան և օրինաւորութեան ներշնչութիւններն ապարդիւն ձգեն։

Կարծիք մը կայ՝ որ Սահմանադրութիւնը յեսին պարզութեան վերածել կ'ուզէ։ Այսինքն ժողով, խորհուրդ, դիւանատուն, արձանագրութիւն բառնալ, պատասխանատուութիւնն և քուէարկութեան իրաւունքը ջնջել, լոկ աղնուականաց ծերակոյտ մը հաստատել, ցկեանս Պատրիարքը մը կարգել որ լիազօր իշխանութեամբ ամէն ինչ անօրինէ իր խղճին և ծերակուտին առաջնորդութեամբն, և իր հանդարտ մի միայն Աստուծոյ ասայ։

Այս կարծիքն երկնային իրաւանց վրայ հիմնեալ է։

Կարծիք մ'ալ կայ որ կ'ուզէ աշխարհական միջամտութիւնն 'ի սպասս վերցընել վարչութեան մէջէն, լոկ կրօնական ժողովակ մը պահել կղերին կողմէն ընտրեալ, որ թէ կրօնական և թէ քաղաքական գործերն անխտիր նայի և իր հանդարտ մի միայն Ցէրութեան ասայ։

Այս կարծիքը կրօնական իրաւասութեան աղբիւրէն կ'բղխի։

Կարծիք մ՚ալ կայ որ կ՚ուզէ կրօնական գործոց գաւ և քաղաքական գործոց համար գաւ ժողովներ կարգել՝ մէկ մէկ կրօնական և աշխարհական նախագահի ներքև, որք իրարմէ անկախ լինին և մին ազգին, միւսը Տէրութեան պատասխանատու մնան։

Այս կարծիքը բաղդաքանութիւն կ՚հոսի։

Կարծիք մ՚ալ կայ որ կ՚ուզէ Տէրութեան մեզի շնորհած արտօնութիւնները վերադարձնել, ազգային պատրիարքարան զուտ մենաստանի վերածել, բոլոր պաշտօնեաները կրօնականաց դասէն կարգել և ազգային գործոց քաղաքական տեսչութիւնը Բ. Դրան կողմէն սահմանեալ պաշտօնէի մը յանձնել։

Այս կարծիքն ինչ տեսակ գլուխներու ծնունդ է յայտնի է։

Մեծազօր Տէրութեան օրէնքը, ժամանակիս ոգին, ազգին մեծագոյն մասին արդի տրամադրութիւններն և իրաւունքը չդիտցողներն այս անհեթեթ դրութիւնները կ՚պաշտպանեն։

Սակայն կարծիք մ՚ալ կայ որ կ՚ուզէ Սահմանադրութեան հիմնական սկզբունքն անխախտ, Տէրութեան շնորհած արտօնութիւնները հաստատուն պահել, ազգին ընտրական իրաւունքն ընդարձակել, անոր շահերը պաշտպանելու համար ապահովութիւններն աւելցնել, Ընդհանուր ժողովին թիւը 160ի հանել, անոր պատասխանատուութեան եղանակն որոշել։ Կրօնական ժողովին անդամոց թիւը 3ի և Քաղաքականին 9ի իջեցնել, տեսուչ խորհուրդները բառնալ և անոնց տեղ մէկ մէկ պաշտօնատար կարգել ազգային գործոց ամէն մէկ ճիւղին համար և 'ի վերջ Սահմանադրութիւնը գործադրել տալու երաշխաւորութիւն մը օրինակէս հաստատել։

Այս կարծիքն ալ, որ արդարութեան աւելի մօտ է, ազգին մէկ մեծ մասինն է։ Իսկ մեր կարծիքն ոնն է, ուրիշ անգամ կ՚բացատրեմ։

ԼԱ.

Կ. Պոլիս, 72 -դրել 1866.

Ընդունուած կ'լիշես որ վերջին անգամ Գ. Պարոյրին հետ սեղան նստած Պարսկին ջրով լը կ'տարնայինք։ Գինին բաժակը ձեռքս մնաց երբ գրաբերը ներս մտաւ։ — Ո՞ր կ'ընտրես, ըսի Պարոյրին, այս բաժակը թէ նամակը։ — Բաժակը խորհուրդ մ'է, նամակը գաղտնիք. սակայն ուսկից և որքա՞ն ուղղուած է այս. երկու սրի մէջ կ'գնես զիս. եթէ գինին ընտրեմ՝ արտիս հետ քաղաքը պիտի տամ, եթէ գիրը՝ գլուխս։ Գլուխս իմս չէ, մեծ կորուստ չեմ ըներ. ընտրութիւնս յայտնի է։ Նամակը բացի և ի՞նչ ստորագրութիւն գտնեմ աղէկ. ԳԻՄԱԿ ՄԸ։ — Ո՛, գաղտնիք գաղտնեաց, գոչեց Պարոյր զայրագին և գիրը ձեռքս կորզելով կարդայ.

«Եթէ վաղը (փետրուար 5) իրիկուն ժամն 3ին դու և հիւրդ Գ. » Պարոյրը Բերա մեծ փողոցը թիւ 0 հանդիսարանը գտնուիք՝ կրնաք » աւելի հետաքրքրական բաներ տեսնել քան թէ այդ սեղանին բոլորն, » որ գժբաղդաբար Խ...ալ չէ։ Բարեկենդանի այս վերջին օրերն եր- » կու Ճգնաւոր Ճգնաւորաց դատուն մէջ ալ անհնարին է գտնելն և չեմ » կարծեր որ դուք ղերբնական բացատրութիւն մը լինիք։ Եթէ հրեշ- » տակ էք՝ ձեր թեւերը կտրեցէք, եկէք. ձեր տեսնելիքն երկինքը չէ, » եթէ սատանայ՝ խաչը ձեր ծոցէն հանեցէք. եկէք. ձեր գտնելիքը » տանջար չէ։» «ԳԻՄԱԿ ՄԸ»

— Ահա քեզի հեգնական և դիւական հանելուկ մը, մրմնաց Պարոյր, որ մեր տաք տաք խօսքերուն վրայ պաղ ջուր կ'թափէ։ Աղրեր, կատակը մէկդի. տարնայը զիս կ'տանու։ Ո՞ւսկից ինկաւ այս նամակն, ով է գրողն, ի՞նչ հարկէ դու միայն կրնաս գիտնալ, քանի որ կամրջին վրայ ըսիր թէ ...ալ հաւ մը պիտի փչէ զմեզ գրօսալի վայր մը տանելու։ — Ցիրաւի ինչ որ դու գիտես, ես ալ նոյնչափ։ Ասի սատանայի մը շունչն է, այս գիտեմ. և կարելի է անհամ խաղ մը կ'պատրաստէ մեզի։ Ինչ և է, մեզք մը չենք գործեր եթէ հրաւէրն ընդունինք, մանաւանդ որ մահու չափ տաղտկալի է քեզի ընկերութիւնս։ Մեր երթալիք տեղն ոչ Շամիրամի պարտէզն է, ոչ Ցիսօնի քարոյրն է, ոչ Անյոյշ բերդն և ոչ Տէր... ին քառարանն, այլ պարզապէս հանդիսի մը վայրն, ուր իրենց գլուխն և սիրան ի՞նչ բանի կ'ծառայեն չգիտցող

մարդիկ կ'յանձնեն պարելու և խնդալու համար։ Ուրեմն, ինչո՞ւ կը տաղնապիս, դիմակ չկայ ըսելով քիչ մ'առաջ կ'գանդատէիր։ Ա՛ռ քեզի դիմակ մը որ դիմագրաւ կ'կենայ առջեդ։ Եթէ ծիծաղելու է՝ ի պայքար երթալու սխորժ ունիս՝ գօտիդ պինդ կապէ և պատրաստ կաց։

— Ես կազմ՞ս պատրաստ եմ, փրփրաց Պարոյր. ոչ թէ կ'ուզեմ և ոչ խաչ մենամարտելու համար։ Իմ զէնքս՝ լեզուս ու միտքս է։ Խօսքով մը կրնամ դիմակը դիմադրակ դարձնել։ Բայց խնդիրը մարտ չէ, այլ գաղտնի, որուն հետևանքներ չեմ ըմբռներ։ Զմիտ ասանկ խաղ չեն խաղար։ Պարահանդեսի մը մէջ երբ դիմակ մը առջիս երթայ և ակամայիս փոփաց, «Աշխէնը կ'իշխէ սրտիդ, բայց գլուխդ պիտի իշխէ Աշխէնիդ» այս վհուկին ետևէն այնչափ կ'վազեմ որ 'ի վերջէ Ճանկիս տակ կ'ձգեմ, դիմակին ինքնին վար կ'սահի և թերևս այն դիմակը նոյն իսկ Աշխէնը լինի։ Սակայն երբ դիմակը դիմակաւորներ նամակով մը կ'ներկայի՝ ես ետ ետ կ'քաշուիմ, որովհետև ուրուական մ'է այն . . . ։ Անկեղծ և կոյսաս դէմքի մը վրայ դիմակ մը, որչափ անճանաչ և կարծր լինի, միշտ անթափանցիկ է և զայն կրողը կ'մատնէ, ինչպէս կ'մատնէ արևուն շատ տիրն ամպերէն անդին գտնուած հովիտն և առուն։ Իսկ հոգի մը՝ որ արդէն ինքնին դարան մ'է, դէմք մը՝ որ արդէն ինքնին դիմակ մ'է, ինչ պէտք ունի նենգէ և դիմակէ։ Ա՛յսպիսի դէմք մը երբ դիմակ աղկրէ դժոխային երևոյթ մը կ'ստանայ, երևոյթ մը որ ահա այս նամակին մէջ կ'երևի . . . ։

— Վա՛յ, կնայիր խաղ'ը կ'ուզես, Պարոյր. դրնդրդի մը շրջանը միայն քու խնամատարեանդ և արիութեանդ սահման կ'ընտրես. միթէ քաջութեան մրցանակը վառանդին ծայրն և խնամատարեան պատկը բարիին և շարին ոստման մէջ չէ։ Կ'ուզես որ միշտ Աշխէնի մը դաշնակաւոր ձայնն ակամայիդ հնչէ։ Ա՛հ, քանի՞ քանի՞ Ոլիմպիոներ կան որ — Դոր ձայներ կ'սերտեն միամիտներն որսալու, քանի՞ քանի՞ խնամատարներ կան որ կիկերոնեան ամբարտաւանութիւն կ'դասեն և իրենց գողտրիկ գրուածքը կամ թարգմանութիւնն իրենց հեղինակութիւն տալէն զատ՝ անոր գլուխը, տակը, վերը վարն, ապիս անդին, ուր որ ծակ մը գտնեն կամ տիթ մը՝ իրենց անունը կ'տեղաւորեն անմիտները խաբելու համար։ Հանճարեան ձայնելու մէջէն բնականն, անաստղ զանազանելու ճարտն դրն է, Ճշմարիտ առաքինութեան և արիութեան փարա-

քարն նրն է։ Ահա Աշխէնոպ սիրան է, Պարոյր, և ոչ հօրդ հառնոյն, այլ աշխարհն, այլ գիտութիւնն, այլ փորձութիւնն, այլ թշուառութիւնը։ Սատկիս չէի կարծեր, Պարոյր, որ այդչափ վատ լինիս։ Ինչ, միթէ իրօք կ'սոսկաս այդ նամակէն, որ աչքիս նշանակութիւն անդամ չունի, և երևակայութեանդ զօր կ'տաս ձիներ ստեղծելու համար, թէ ոչ ձեզ հառաստրիմ շղանուելու փորձանք մը կ'սպասէ զքեզ։ Առաջին պարապային մէջ հայրենակիցս չես, շրջահայեաց է նա, բայց ոչ երբէք վատ. երկրորդին մէջ առաքինի չես, և արդէն Աշխէնը սիրելէն դադրած ես։ — Ինչ կ'ըսես, ազբեր։ — Այո, կ'ըսեմ, բան իս դիմակ մը ինչ ձև որ առնու դիմակ է, և միևնոյն սարքերութիւնը սևին և ճերմակին մէջն է։ Ինչպէս որ դիմակիր, արդարև ճերմակն ինքնին ակներև ու թափանցիկ է, սևն ահռելի։ Արդ՝ կ'նայիմ որ ճերմակին դէմ քաջ ես, սևին դէմ ակար։ Քաջութիւն է, խնդրեմ, գողդոջիւն և անմեղ կուսանի մը սառանը վար առնելը, քաջութիւն է, հրապուրելի և ազնիւ շարժմամբ քեզ դիմաւորող օրիորդի մը քօղը պատռելը. քաջութիւն է, նմանապէս բռնութեան և անիրաւութեան դէմ աներևոյթապէս կանգնողի մը ձայնը խեղդելու համար անոր անձը մատնել և լեղուն պրկելը. քաջութիւն է, մութ գնդանի մէջ գտնուող անձի մը բացած ծածուկ լուսամուտը գոցել և անոր ձեռքը կտրել, աչքը փորելը։ Եէ, Պարոյր, ասի ոչ միայն վատութիւն այլ սոսկալի ոճիր մ'է։ Իսկ միւս կողմէն սև դիմակը կորգելն է արիութիւնն։ Այս է արդարութեան, ազատութեան, անմեղութեան անհաշտ թշնամին։ Թէև մարդիկ շատ անգամ քու ըրածդ կ'ընեն։ Ճերմակ դիմակը կ'հալածեն և սևին ոխանոս կ'կարգան։ Բայց սևն ընտանիք, տուն, ազգ կ'կործանէ, նենգի է, որովհետև վարպետութեամբ կ'գործէ, որովհետև անմեղութեան և սիրոյ տուն նշանաւ կը գործէ։

Ուրեմն, Պարոյր, եթէ այս նամակն ալ սև դիմակի մը գործն է, մի շփոթիր. մեր ընելիքը յայտնի է, վազը դիշեր որոշեալ հանդէսը կ'երթանք և այն դիմակը կ'խլենք. եթէ ճերմակ անմեղ դիմակ մ'է, քիչ մը կ'խնդանք։ Կարելի է նոյն իսկ Աշխէնը գտնես, որուն կենաց կ'առաջարկեմ բաժակս։ — Սիրով կ'ընդունիմ, բան Պարոյր և սեղանէն ելան։

Կ. Պոլիս, 7 Հոկտ. 1866.

Միրասոյ՝ Ֆրանսայի առաջին յեղափոխութեան առաջին գործն հեղինակն և բռնակալութեան անհաշտ և Ճարտասան թշնամին, կ'գոչէ թէ՝ գերութեան շղթաները լղոշ և պաշտող ժողովուրդն աւելի կ'ատէ քան զանոնք դարձնող բռնաւորներն։ Այս արհամարհական վճիռն, որ մարդկային ազգի պատմութեան խորունկ դիտակցութիւն մը կ'ենթադրէ, շատ ժողովրդոց քաղաքական կենաց դատակնիքն է և մասնաւորապէս հայոց։

Արդարև հայը դարաւոր ծերասոյզ մ'է, որ Մասիս լերան վրայ քանի մը օր ազատ օդ շնչելէն ետև վար փոսը կ'իջնէ, բռնութեան և ստրկութեան լուծն իր վիզէն կ'կախէ և Արտաւազդայ կապանքն անդադար կ'նորոգէ։ «Անդ կացցես և զլոյս մի տեսցես։» Արտաշիսի այս սոսկալի անէծքը կարծես թէ հայուն Ճակտին վրայ երկաթի նշանակոխուած է, և թէև այժմ շղթան զօրացընելու համար դարբիններ տաշին վրայ կռանը բախելու սովորութիւն չունի, սակայն դատապարտութեան այն սև նշանն կայենին պէս ուր որ երթայ հետը կ'տանի հայը՝ մինչև որ կորստեան անդունդը գլորի . . .։

Միրասոյին հետ ասել թէ Խորենացիին հետ ողբալ պէտք է այն ժողովուրդն՝ որուն Ճակատագիրը կ'կրեմ և ես, և սև աղտը սրբելու համար կ'քրտնիմ . . . ընդունայն։

Վեր 'ի վերոյ ակնարկ մը նետէ հայ պատմութեան վրայ և ապա դարձիր մեր արդի վիճակին հետ համեմատելով խնամատարական հեռատեսութիւն մը հանէ . . . . . որ արդարութիւն կամ ատելութիւն չշարժէ։

Երբ կ'տեսնեմ Շարայի նման շատ մը դատարկապորտ նահապետներ և նախարարներ որ իրենց որոմայներ պարարտելու համար ուժիկ ժողովրդեան մը ծուծը կ'բամեն, և նոյն պահուն դեղջուկը լոկ հեղնութեամբ մը կ'շատանայ իր վրէժը լուծելու։* Երբ ժողովուրդ մը յաղթանակը տարած ատեն վարար կնիան մը առջև գլուխ կ'ծռէ և այնքան կոյր է որ Շամիրամին կանգնած արձանն իբր Աբրայի կենդանի պատկերը կ'պաշտէ, իր սուրը պատեանը կ'դարձընէ և կ'թողու որ օտար ազգեր զան Այրարատի աղտոտութեան արեամբ որոգուած կոյս հողը կոխեն,

*Եթէ քս Շարայի որկորն է՝ մեր Շէրակոյ ամբարքն չեն։

պղծեն, այն հողն՝ ուր Հայկ դեռ նոր կանգներ էր Տիտանեան անբարտուանութեան դէմ կոթող մը . . . : Երբ Արգար մը՝ խելքը միտքն Աստուծոյ մարդուն տուած՝ Հռոմի, Ասորիի և Պարսկի վեհապետներն անոր բանին կ'հրաւիրէ և դաստակ 'ի ձեռին առաքելութեան պաշտօն կ'վարէ, թագին և ժողովրդեան իրաւունքն և շահերը մէկդի թողլով և այսպէս կ'ցանէ այն կրօնական և արքայական կրկնակի հերձուածին որոմներն որ վերջն աղդաւէր արմատներ կ'ձգեն Հայաստանի մէջ և [illegible] հայը [illegible] հայուն դէմ կ'զինեն։ Երբ կ'նկատեմ Անանուն մը՝ որ մեհեանները կ'բանայ մէկ կողմէն՝ և Սոնատորուկ մը որ նոր եկեղեցիներ կ'շինէ միւս կողմէն՝ և Ադդէին վրէժն առնելու համար զօր կ'ժողվէ՝ որով [illegible] և [illegible] երկու թագաւորներու մէջ կռիւ մ'է կ'փրթի և այս խաղին մէջ ժողովուրդն արեան վտանգներ կ'թափէ։ Երբ կ'տեսնեմ Արտաշէս մը՝ որ Սմբատով և Արգամով յաղթողէ և շատ յաջողակ իր հօրենական գահը ձեռք ձգելու և Սաթինկին մէջքը ցուցընելու համար, այլ յիմար և վատ Տրդիանոսի առջև, և այս վատութիւնը ժողովուրդը հարկատու կ'ձգէ։ Շերկարեմ, երբ Մեծին Սահակի մօտ Սուրմակ մը, Սմբատին մօտ Մերուժան մը, Վարդանին մօտ Վասակ մը, Գագիկին քով Վեստ Սարգիս մը և Քրիստոսի արեամբը գրուած դաշնագիր մը կ'տեսնեմ որ Պետրոս եպիսկոպոսի մը կաշառակեր ձեռքն անլուր և դժոխային մատնութեան գործի մը դարձած է, կ'ողբամ այն թշուառ ժողովուրդն որ հետզհետէ ասորիին, պարսկին, մարին, հռոմէացիին, յոյնին, երբեմն աւազանիին և ատէպ քանի մը սեռդի և մատնտու կրօնաւորներու տնաւեր կրից դերի և խաղալիկ եղած՝ իր աղէտալի վիճակին զգացումն անգամ չունի, իր տառապանաց հեղինակները ճանչելու անգամ կարողութիւն չունի, և անպետ, անղեկ ու անառաջնորդ նաւու մը պէս՝ բռնութեան, կրօնամոլութեան, խորամանկութեան և անմիաբանութեան գրգռած հովերէն կ'տատանի անհուն ովկիանոսի մը մէջ, կ'տատանի իբր ճակատագրէն և նախախնամութենէն դատապարտեալ կարծելով ինքզինքն, առանց նպատակի և առանց հանգստեան . . . : Կ'ողբամ այս ժողովուրդը, բարեկամ։

Բայց միւս կողմէն քանի կ'տեսնեմ ժողովուրդ մը որ անհնարին նաւաբեկութենէ մը մաղապուր ազատելէն ետև՝ իր նաւին բեկորներէն

գոնէ պատասխան մը շինելու հոգ չտանիր այս օտարութեան, տրկութեան և դատնութեան հողին վրայ։ Երբ ժողովուրդ մը՝ իր անցելոյն մէջ կրած չարեաց և աղէտից բուն իսկ պատճառը հետազօտելով հայրենիքի դատաձաններէն, թշնամիներու հուրէն և սուրէն դաս մը չկրնար եզրակացնել իր ներկային մէջ, որ 19դ դարու ներկայութիւնն է, այլ մանաւանդ իր վէրքերը բուժելու տեղ անոնց ճարակ կ'տայ, այլ իր ծոցը կ'սնուցանէ, ինչ կ'լսեմ, կ'պատուէ և կ'զգուէ այն իժերն որ իր ազգային կեանքը թունաւորեր են և կ'թունաւորեն, այլ իր հին պատմութեան սև էջերն աւելցընելու կ'աշխատի, այլ չուզեր զարգանալ, մինչդեռ զարգանալու դիւրութիւն և միջոց ունի, այլ չուզեր 'ի լուր աշխարհի իր իրաւունքը պաշտպանել, մինչդեռ ամէն ազատութիւն ունի, Ամենի կուռքը կ'պաշտէ, իր մտաւոր յառաջադիմութեան բանտերները կ'հալածէ, կ'նահատակէ, այլ Մերուժաններն և և Շմուէլները կ'պսակէ, այլ Ներսէս կաթողիկոսին յիշատակը կ'դատապարտէ և Ջալալեան մը կ'բարեբանէ, նոր Ներսէս մը կ'մոռնայ և երբեմն հռոմէական փեղոյր մը կ'խնկարկէ, այլ կրօնական իրաւասութեան անիմաստ և չնչին խնդիր մը կ'յարուցանէ և ազգային կենսական խնդիրները բարձի թողի կ'ընէ, Խրիմեան մը դատաձաններու ձեռքը կ'մատնէ և տէր Յակոբ դատաձան մը կ'յարդէ, այլ Սահմանադրութիւն մը կ'հաստատէ և միապետութեան սկզբունքը կ'քարոզէ, այլ իր էութեան տարրական հիմունքը խախտող տապարը կ'պագնէ ու դլխին վրայ կ'դնէ, արդարութեան և իրաւանց սուրն ուղի տակ կ'առնու և կ'խորտակէ. իր կրօնական և ազգային շահերը պաշտպանելու համար 'ի բնէ անտի ազատութիւն, երաշխաւորութիւն և ապահովութիւն տուող Օսմանեան Տէրութեան շնորհած պարգևը սիրով ընդունելէն ետև՝ անտարբերութեամբ ետ կ'դարձընէ. նոյն իրաւունքներն 'ի սպառ անհետ ընելու համար դարան լարող Տէրութեան մը որոգայթին մէջ մտադիր ընկնելու կ'միտի . . . ։ Երբ ժողովուրդ մը դարուս լուսաւորութեան և քաղաքակրթութեան դէմ այս ոճիրները կամովին կ'գործէ, բարեկամ, այն ժողովուրդը կ'ատեմ և կ'գոչեմ հառաչելով. «Վատ դու, ապագայ չունիս. արժանի ես այդ վիճակին, և քու տանդ բռնաւորներն իրաւունք ունին գլուխդ ջախջախելու ։

«Անդ կացցես և զլոյս մի տեսցես ։»

ԼԳ

Կ. Պոլիս, 11 Մայիս 1866.

Պարոյր՝ որ արդէն նստած տեղը կ'եփէր, երբ ոտք ելաւ սկսաւ բոլորովին եռալ և արտորնեաք վեր վար քալելով սենեկին մէջ՝ մերթ մատովը ճակատը կ'շփէր, մերթ մօրուսը կ'շոյէր, մերթ փիթանատը բառիկոնին անթին կ'անցընէր և աչքն երբեմն ձեղունն և երբեմն գետինը տնկած՝ քանի անցնէր դառնար հայելիին ալ ակնարկ մը նետելու չէր մոռնար՝ միշտ մտայոյզ և խորհուն դէմքով։ Ես ալ անոր մտմտուքը շվրդովելու համար թերթ մ'առի և սկսայ կարդալ ու ժպտիլ։ Պահ մը ետքը Պարոյր՝ թերևս ինքզինքը մինակ կարծելով կիսկսաւ խօսքեր կ'մրմնջէր այսպէս.

— Միայն թէ թռուցած լինի. անհնարին բան է . . . հէր կամ Աշխէնը չէ այս դիմակը . . . կարելի է եղբօրը հետ իմ եանէս եկաւ Պօլիս . . . դիր դրել . . . ինչ յանդգնութիւն. թէև անանկ հոմեր ունի . . . բայց հետը քէն էի։ Արդեօք հօրը միտքն եղա՞ւ. կունա մարդ է. չեմ հաւատար . . . ոչ այս, ոչ այն. ասի Վրոյրին խաղն է անշուշտ. ուր էր թէ հարիւրամեայ պառաւ մը լինէր և մեր բարեկամին պաշ մ'ուզեր . . . հապա թէ որ հանած վարածի մը հանդիպիմ և հօրս վրայ նոր փոխանակիր մը քաշելու սխալուիմ. . . և ա՜խ՜ յիշատակն ալ աղտոտեմ . . . ուհ, էօֆ . . . ։

— Ինչ ունիս, հիւանդ ես, Պարոյր. արդեօք դինին դլխիդ զարկաւ. քիչ մը տրլիկ չունիս. ճաշէն անմիջապէս ետքն երթևեկութիւնն օգտակար չէ։

— Ինչպէս նստիմ որ դիմակը ճիւաղի պէս դիս կ'հալածէ. կարծես թէ ըղեղիս մէջ օձ մը կայ որ կ'դալարի անդադար և քունս պիտի ծակէ դուրս գալի . . . ինչպէս պիտի անցնի այս երկայն դիշերն . . . այս ինչ՞ս բարեկենդանն է։

Ամէն կողմ խոր լռութիւն մը պատեր է. հնա՞ն են այս տեղի մարդիկ որ արևուն հետ կ'ներիրեն . . . ուր ուրեմն դինովի խղդուկ ձայն մը կ'լսուի և տոկոց շունչերու հաջիւնն . . . էհ, մարդս անընդհատ

ծոմն և լուսինը չկրնար նայիլ. երևակայութիւնը կ'մոլորի և կ'յողնի բանի աչքն անեզր և անհպելի հորիզոն մը նկատէ։ Արդէն մոլորակի մը հետ բաւական խաղացի, կոյրցնուցոյն անոր եանէն ընկայ, ելայ, վերացայ, աստղը բռնել կարծեցի և երբ արթընցայ սու

մը գտայ որ դիւական ծիծաղ մ'ունէր։ Այժմ սիրտս իրական բան մը կ'փնտռէ որ քիչ մը հրճուի, թէև այն ալ վաղանցուկ և պատիր լինի... իսկ մահիկդ ալ արդէն մարը մտած է. աստղերը նսեմ նշոյլ մը կ'սփռեն. մութն ալ կոխեց։ Միթէ նոր լուսին մը չընդառաջիր այս կողմերը. շրա՜ռ որ մենաստանի բնակիչները բնականապէս ձգնաւոր և ձգնուհի կը լինին։ Ոչ պատուհաններն և աչդոնները հոգի, շունչ չփսփսար։ Աւր է Զմրոի շարժումն և կենդանութիւնը։ Կանանց հրայայդ աչքին բաւական են հոն մութին լոյս, տրտմութեան սփոփում ազդելու և ասդիս անդին խնդումներս ակումներ կազմելու հրաւէր ասդամ սիրտերը բռնալու և կարդալու, նման այն հրաթև ձձիներուն որ Ամերիկայի չդիտեմ որ կողմը կ'վխտան, կ'բսեն, դիշերներն և անանց լուսով մարդիկ դիր և օրագիր կ'կարդան... մինակ ձրագի նշոյլներ ասդիս անդին կ'շողան. իսկ ծոմէն անդին սա դիմացի լոյսն ինչ տխուր և միօրինակ լոյս է որ մէկ կ'երևի, մէկ կ'մարի, ձիշտ մարդկային կենաց երազին պէս, մէկ արթուն մէկ քուն, մէկ օր մէկ դիշեր։ Շէքսպիր և Կեօթէ, ո՞ր էք. մէկիդ ծրագն և միւսիդ լոյսն ալ մարեցան որ ձեր անմահութեան արևը վառի յաւիտեան... սակայն դո՞ք և ձեր նմանները միայն անմահ էք, դիտաւոր մոլորակներ էիր դո՞ք իրաւ. չկան անանկ մոլորակներ որ դեռ չերևցած կ'մարին. չկան աստղեր որ ուրիշ աշխարհի մը երկինքը կ'փայլին և մեր աչաութենէ հեռու են...։ Պարագայ մը, ազատութիւնը ձեր հանճարը դուրս ժայթքեցուց, պարագայ մը, բռնութիւնն Անտրէ Շենիէյի հանճարը կ'ծնրդի ասակը ձգեց, ինչպէս կ'ձգէ ամէն օր, ամէն վայրկեան հոգի մը որ փայտահատ է, և ուրիշ պարագայի մէջ կրնար Արաիս մը լինիլ, անձ մը որ բեռնակիր է, և ուրիշ պարագայի մը մէջ կրնար Թէլ մը լինիլ։ Դարձիր անդադար, յաւիտենականութեան արևին պէս, դարձիր և դու, և տրտում Գարօս, քու լոյսդ նաւարեկութեան դէմ նախատեսմանեալ դիշերային պահակ մ'է, բայց իր անվրիպելի շրջանը կատարելու համար յանդէտս կ'լուսաւորէ նաև ցամաքն, ինչպէս արեգակը կ'լուսաւորէ

այս աշխարհն, և ցանկին վրայ կեցող միօրեայ Ճանապարդներն, «Ա՛հ, մեզի համար միայն կ'լուսաւորէ արեգակը» կ'գոչեն . . . փոքր այլ հպարտ էակներ։ Երանի՛ անոնց որ թէ լուսին և թէ մութին, թէ յայնկոյս և թէ յայսկոյս էապէս կ'փայլին . . . դարձի՛ր . . . դու ալ թերթդ, դարձուր, Վրոյր, և մի ծիծաղիր. հարկաւ իմ վրաս կը խնդաս, գինով կամ խև եմ, այնպէս չէ. ուրեմն դու խելացի եղիր և այս տաղտկալի ժամերը սպաննելու Ճար մը գտիր . . . ։

— Աքանչելի է գինեխառն իմաստասիրութիւնդ, Պարոյր, բայց աւելի աքանչելին այն է որ, թէև ներկայ ենք այս տեղ, դու լուսնին մէջ կ'ապրիս ես Թիֆլիզի մէջ։ Ինչ բան է մարդուս միտքն որ սնդկի պէս կ'վազվզի և անբմբռնելի է . . . ։

— Ինչ ըսել կ'ուզես։ — Ծիլը Ա--ր-յրէն է քրքրածս։ — Այդ ինչ նորոշուք բառ է. որոնք ծիլն աւարի առին. ես չառի գիտեմ, իմ գիտցածս ծիլը կ'ջրի, աչք կ'գգուի, աւարի չառնուիր։ Ինչ անողորմ մարդ ես, աղբեր։ — Դու ալ ինչ թեթևսօլիկ շաղակրատ ես։ Ամէն բան շուտ շուտ կ'դատես, սովորութիւնդ է։ Այն բառին մէջ խորհուրդ կայ. բառը մեկնելով իրին վրայ վՃիռ մի տար։ Այս տեսակ մեկնութիւններ շատ անգամ արիւնալի կռիւներու առիթ տուած են։ Ատեն մը մինակ Եւրոպայի մէջ արիւն քաշեցուց։ Ընդհանրապէս ամէն խորհուրդ առ երևոյթս այնպիսի անխորհուրդ բառով մը մեկնած են մարդիկ որ կարծես թէ երեսը պաստառին չյարմարիր։ Հակառութիւններէ Ճշմարտութիւն մը հանելու գրութիւնը նոր չէ և օր օրի կ'ծաղկի։ Ինչպէս Ատուած և մարդ, երկու հակառակ եզր են, ուսկից կ'ծնի խորհուրդ մը որ է խաչն, ուսկից կ'ծնի սէր։ Այր և կին, երկու եզր են, ուսկից կ'ծնի խորհուրդ մը որ է սաղմն, ուսկից կ'ծնիս դու։ Հուր և ջուր, երկու եզր են, ուսկից կ'ծնի խորհուրդ մը որ է շոգին, որմէ կ'ծագի շարժումն։ Այ՛ և -՛ չ էլեկտրական հեղուկէն չէ որ չէ-՝ կ'խօսիս աշխարհիս ծագը դանուած մէկ բարեկամիդ հետ . . . որ մէկն ըսեմ։ Ուրեմն ինչո՞ կ'զարմանաս երբ Ռեբրի մը Ճակատը Ծիլը Ա--ր-յրէ կ'կարդաս։ Աւարայրը Հայաստանի այն դաշտն է, ուր ընկան շատ նահատակներ և իրենց արեան ցօղէն ծիլեր բուսան։ Այս ծիլերէն, կամ լաւ ևս ըսեմ, ծաղիկներէն մին ալ դու ես,

թէև շատ փշոտ ծաղիկ փրթար դու։ Այս է բառին խորհուրդն. իսկ ծնունդն ինն է, պատմական տարեգրութիւն մը, որ ապագայ պատմիչի մը մատուցանելիք ծառայութիւնն արդի մնայ ալ կրնար մատուցանել եթէ լեզուն փոքր ինչ. . . բայց առ կարդա այս ամսագիրն և դու ալ կարծիքդ յայտնէ, եթէ ունիս։

— Այս ի՞նչ տեսակ ոճ ու լեզու է, աղբեր, Ատուածդ սիրես, ասի Աւարայրացոց բնիկ բարբառն է թէ ոչնորահնար Kargon մը։ Աւարայրի մարդիկ ամէն բառի վերջն ում մասնիկը կ'դնեն արդեօք. այս ինչ շուտիկ մասնիկ է որ ամէն տեղ կ'մտնէ։ Իրաւ որ շատ բան չեմ հասկընար ասկից. կարելի է որ բառերն իմաստալից բան պարունակեն. բայց երբ գիրն և լեզուն անիմանալի են՝ նիւթը քանի՞ կ'առնես։ Պարզ, գողտրիկ, բնական այլ անշպար ձևի սիրահարն եմ, իսկ եթէ ձևն իր մէջն ոգի և իմաստ ալ ամփոփէ կ'խենդեցնամ։ Մանաւանդ թէ հայ մը երբ կ'գրէ, քանի որ լուսաւորութեան և քաղաքակրթութեան ատաղձանին յետին ոտքն է, ի՞նչ նոր բան կրնայ գրել որ արդէն գրուած չլինի օտար լեզուաւ։ Գէթ պէտք է որ հին բանն աղուր ու կոկիկ ոճով բացատրէ, որով ոչ միայն հրապոյր կարդալու, այլև դիւրութիւն կ'ընծայէ ուսնելու համար։ Ո՞ւր էր թէ Աւարայրի մարդ լինէի որպէս զի այս թերթէն զուրկ չմնայի։ Բայց Զմիւռ և այս տեղն ալ առ հասարակ իմ լեզուս կ'խօսին և այս լեզուաւ գրուած լրագիր և գիրք յօրանջելով կ'կարդան։ Հապա Ա—ր—յ—ն, որուն համար թարգման մը պէտք է, որ օրուան կ'պահեն. . . բարեկենդանի՞. . . շատ հաւանական է որ այս ամսագիրն ուրիշ աշխարհի, կամ քանի մը ընտրելիներու համար կ'տպուի կամ հեղինակն ինքն իրեն կամ ապագային համար կ'հրատարակէ և իր դրատան մէջ կ'շարէ, կ'պահէ. . . : Ինչ և է, շատ լեզու գիտնալն աղէկ բան է մէկ կողմէն մեզի համար. եթէ գիտնամ՝ նաև որ Ծէ՛ն ալ հանճար ունի և կրնայ ինձի նոր բան մը հաղորդել՝ անոր լեզուն կ'սորվիմ, ինչպէս քիչ շատ սորվեր եմ արպերէն, սանսգրիդ, և այլն լեզուներ. . . դու ի՞նչ կ'ըսես ասոր, աղբեր։

— Ի՞նչ ըսեմ, բայց եթէ միշտ չափազանցութեան մէջ գլորելու հակամէտ ես այդ գլխովդ։

Ոչ օտարոտի լեզու մ'է Ծէ՛ն և ոչ հին և թեթև ինդիր մ'է աշխարհիկ լեզուի մը ընտրութեան խնդիրն, ինչպէս որ կ'երևակայես։

Այլ և այլ բարբառներու մէջէն կամ գրէն աշխարհիկ բանուկ լեզուն մը որոշելու առաջարկութիւնն արդէն քանի մը բանասէրներ ըրած են և յաջողութենէ յուսահատ՝ լուծումը ժամանակին և յառաջադիմութեան վճռոյն ձգած են։ Հիմա առենը չէ այս նիւթիս վրայ խօսիլ, միայն եթէ կամք ունիս իմ կարծիքս ալ կ՚յայտնեմ։ — Խօսիր, բայց կ՚աղաչեմ կարճ կապելով։

ԼԴ

Կ. Պոլիս, 12 Հոյլ 1866։

Արդէն պիտի դիտնաս, Պարոյր, որ բարեկիրթ ազգերու մէջ անդամ՝ մի և նոյն լեզուն պէս պէս դոյն և արտասանութիւն կ՚առանոյ իւրաքանչիւր քաղքի բնակիչներուն բնութեան, սովորութեան հանձայն և ընդհանրապէս ընկերային կեանք, ուսումնք և դիտութիւնք ծաղկած տեղերն, որ մայրաքաղաքները կ՚լինին, ազգային լեզուն ալ նոր փայլ, նոր հարստութիւն և ներդաշնակութիւն կ՚առնու և տիրական լեզու մը դառնալու կ՚ենթրսի։ Եւս առաւել զգալի և մանաւանդ ցաւալի են լեզուի մը զանազանութիւններն այն երկիրներն, ուր խօսող ժողովուրդը ցիր ուցան է, գերի է և օտար ազդեցութիւններու և ապաւորութիւններու չափազանց ընդունակ։ Այս վիճակէն կ՚ծագի նաև տեղական նախապաշարում մ՚որ ամէն հիմնական վերանորոգում կ՚մերժէ և մէն մի գաւառական կամ քաղաքային բարբառ իբրև նախնական և մայր լեզու պաշտելու ալ կ՚ուզէ։ Իսկ արդէն վարրով բարքով զատուած ժողովրդեան մ՚անդամները լեզուա ալ կ՚զատէ, իրարու անհաշտ և անհաղորդ մարմինները կ՚կազմէ և հանրական յառաջադիմութեան մէկ գործնական ասարն 'ի սպառ կ՚կոտրտնէ։

Պօլսեցին իր տաճկախառն լեզուն կ՚պաշտէ, և ինչպէս առեն մը Յոյնն օտար ազգերը, նոյնպէս ինքը գաւառական բարբառները բարբարիկ կ՚անուանէ և իր բառգիրքէն, գոնէ ունենար, կ՚արտաքսէ։ Զմիրնցին իր նոր ջուղայական քանի մը ընտիր ասածները կ՚հաւքէ և

այնչափ օտար ու խորթ բառերով կ'խառնէ որ անոնց համար հասար կը փախցրնէ։ Թուրաստանցին անդադար նորամուտ բառերով և ոճերով հայ լեզուն կ'աղաւաղէ և այս աղաւաղման մէջ [illegible] կատարելագործութիւն մը գտնէ։ Թուրքիոյ գաւառարնակ հայերն, որ ոչ յառաջ և ոչ ետև կ'երթան, իրենց շրջանին մէջ, քանի մը բացառութեամբ, աւելի մեզի կ'մտնեն։

Այս զանազան բարբառներէն որն ընտրել և հանրացրնել, այս է խնդրոյն առաջին կէտը։ Փոքր մաս մը կ'ուզէ գրաբարը ծաղկեցրնել և իր նախկին գործածութեան վերածել։ Ասի ոչ միայն անրջական, այլ թիւր կարծիք մ'է։ Թիւր է, վասն զի մեր նախնիք անգամ՝ գրոց լեզուն, որ մեծաւ մասամբ թարգմանութիւն են, բնաւ խօսած չեն։ Ինչպէս որ Խորենացին և այլ մատենագիրներ, որ ժողովրդեան լեզուաւ վկայութիւններ ուր ուրեմն մէջ կ'բերեն, կ'հաստատեն։ Ուստի այս կարծիքը ճիշտ գրաբարին հետ մեռած համարելու է։ Ոմանք կ'պնդեն արդի աշխարհաբարը գրաբարով ճոխացրնել և մշակել, անոր քերականական անպոյ կանոնները պահելով։ Այս կարծիքը միանակ Պոլսի շրջանին կ'նայի և մեր խնդրէն դուրս է։ Գտնուեցան նաև քանի մը գրագէտներ որ նոր լեզու մը ստեղծելու փորձ փորձեցին նոր քերականութիւն կամ Ուղղախօսութիւն մը հրատարակելով։ Նոր եկան նաև մէկ քանի խմբագրութիւններ որ իրենց լեզուին Ա[illegible] անունը տալով՝ զուն կ'գործեն Ցանկասանի հայերն անոր վարժ ընել, որպէս թէ թերթ մը վերէն վար ընկնելով կրնայ ամբողջ ժողովրդեան մը լեզուն շրջել, կամ կարթիլ մ'անուշ ջուր ծովին համը փոխել։ Անուշ կ'անուանեմ բուն Արարատեան լեզուն, որովհետև հայրենի անունը սիրելի է ինձ, բայց ոչն է այն և ոչ կ'խօսուի։ Որչափ իմ լեզուս Արարատեան լեզուէն հեռի է նոյնչափ է նաև Ա[illegible]։ Երեք Վրաստանի և Հայաստանի մէջ գտնուող հայոց զատ զատ գոնէ երկիկ բարբառներն ի գիր առնուին՝ կ'կասկածիմ որ Արարատեան լեզուաւ պանծեցողները յինէ աւելի հասկրնան զանոնք։ Ոճի կողմէն ինչ որ է Մ[illegible] Հ[illegible]ն, նոյն է Հ[illegible]ը Հ[illegible], նոյն է Կ[illegible]ը Մ[illegible]։ Հ[illegible]։ Ասոնց մէջ արդի Արարատեան լեզուին նշոյլը չկայ։ Կը հաստատամ որ Սօս ու Վարդիթերի լեզուն Աշտարակի լեզուն լինի, կամ Մեղուխեչային լեզուն, Պոլսի ժողովրդեան լեզուն լինի, բայց

չեմ կրնար ընդունիլ որ Շանշեանցի քրիստոնէական Արարատեան լեզուն լինի։ Ամէն տեղի գրիչները գրականին և ժողովրդեան լեզուին մէջ իրենց յատուկ ոճ մը ստեղծեր են և այս տարբեր ոճերէն այն է ընդունելին որ հայկական ոգւոյն մօտ և համայն հայոց դիւրմբռնելի է։

Ուրեմն ինչ ընել պէտք է հայոց յառաջադիմութեան և հաղորդակցութեան ամենէն կարեւոր գործին ձեռք ձգելու համար։ Ահա այս է խնդրոյն կենսական մասն՝ որուն գործնական լուծումը միակ միջոցի մը մէջ կ'տեսնեմ։

Ամէն ազգի մէջ գրական և խօսուն լեզուներ կան, որոնք թէ ոճի և թէ գարձուածքի կողմէ իրարմէ կ'տարբերին։ Ժողովուրդը կ'տայ լեզուն, իսկ հմուտ և վարպետ գրիչներ ուսանելոյ և դիտութեանց յառաջադիմութեան համեմատ կ'կոկեն, կ'ճոխացրնեն նոյն լեզուն և ժողովրդեան կ'գարձրնեն, թէև միշտ ուսումնական բաժինն է այն անդրական գարձուածոց և խօսքից հեղինակութիւնն որ իր հանճարին, կամ բնութեան գրոշմը կ'կրեն և բառարաններն ընդունայն կ'աշխատին անոնց իմաստն արդարացրնելու և արտայայտելու։ Հիմա հայերէն շատ բարբառներ կան որ իրենց տեղւոյն կնիքը կ'կրեն, այլ ոչ ժողովրդեան ոգին, որովհետև ժողովուրդը շատ տեղ բարբ, վարք և ոգի չունի։ Այս կնիքը տաճկական, ռուսական ու եւրոպական է ընդհանրապէս։ Ուր որ գրիչ կայ և ճաշակ, լեզուն կ'զտուի և 'ի լոյս կ'ընծայուի. ուր որ չկայ, լեզուն կ'վատթարի օր ըստ օրէ, մանաւանդ երբ օտար հաղորդակցութիւնը կ'աւելնայ և ազգային դատարակութիւնը կ'պակսի լիովին։

Հայ աշխարհիս երեսը Հայաբնակ վայր մը ուր օտարին ստրը մուտ ունեցած չլինի, ուրեմն չկայ անկիւն մը ուր հայ լեզուն իր նախնական դուտ, բնատիր և բնական յատկութիւնները պահած լինի, ենթադրելով որ 'ի բնէ անաղ պարսիկը, յոյնը, վրացին, և այլն մեզի նոր բառեր և ոճեր տուած չեն։ Սակայն ամէն տեղ, մանաւանդ Հայաստանի կողմերը կ'գտնուին, իր ստերջագոյն բնիկներուն պէս, Հայկական կամ Արարատեան լեզուին նշխարներն, իբրև մարգարիտ ստոյգ և փոշիի հետ խառն։ Ահա այս մարգարիտները գտանել, ամփոփել և շարել են է մեծ գործը։

Ուրեմն այսպիսի պարագայի մը մէջ կ՚մնայ մեզ ամէն գլխաւոր բարբառներէն ընտրել առանց մոռնալու բարբառ մ՚ընտրելու և այնպիսի լեզու մը բնականապէս բաղադրել որ ընդհանրապէս ամենուն հասկանալի դառնայ։ Այս աշխատանքը ծանր է և հարկաւ իր դժուարութիւններն ունի։ Մեծ մասամբ կ՚գիւրանայ այն՝ եթէ մոռնանք Հայաստանի, Տաճկաստանի և Ռուսաստանի քաջ և ներհուն գրագէտներէն համարեալներուն նման բան մը կազմելի՝ որ պաշտօն ունենայ այս խնդիրը քննել, պարզել և միշտ գրաբարին ոգին և քերականական հանրական սկզբունքն իրեն հիմ՝ և հոլովներու և լծորդութիւններու պարզութեան վերածումն՝ առանց կրճատման և ժլատ ըմբռնողութեան, իր տրամաբանութիւն բռնելով՝ քերականութիւն մը յօրինել։ Նոյնպէս և բառգիրք մը, որ պարունակէ այն ամէն բառերն, ձևերն և դարձուածներն որ հայկական են և անոնք որ գործածութեամբ հայացած են։ Եւ կամ պէտք է այնպիսի երևելի հանճար մը յերևան գայ որ ճանչէ հիմնովին բոլոր հայ բարբառներն իր տաղանդին զօրութեամբն և անպիտա բնատանք մաղէ, զսէ զանոնք և նշանաւոր հեղինակութիւններ հանէ ամէն տեսակ նիւթի վրայ, որպէս զի անկիւց ծակի նաև քերականական կանոն մը՝ որուն պակաութենէ ապէտ և գրագէտ՝ գրիչ՝ ի ձեռին՝ կ՚գրեն ըստ քմաց և անել բառի մը մէջ կը ձգեն հայ ժողովուրդն և անոր աշխարհիկ գրականութիւնն, եթէ գրականութիւն կրնայ կոչուիլ պարբերական անոճ և անոգի թերթեր և բառական թարգմանութիւններ։

Ահա այսպէս կ՚խնամեմ հայերէն լեզուի մ՚ընտրութիւնն, և անիրաւ, ապէտ, ինքնահաւան կ՚անուանեմ այն հայն որ իմն, իմն միայն է Ճշմարիտ աշխարհիկ հայ լեզուն՝ և այս պէտք է լինի բոլոր հայոց լեզուն, կ՚ոչէ . . . ։

Ուստի դու ալ մեծապէս կ՚սխալիս, Պարոյր, սնդելով թէ հայ լեզուն միանակ Թուրքիայինն է, թէ Կովկասի հայոց լեզուն բոլորովին օտար է, թէ . . . ։ — Ա՛հ, վերջը պլսոի բերե՛ս, ազգեր, զանգ ըսելով մեր ցաւը չքսի։ Ես այս գիտեմ որ Թուրքիայի ժողովուրդը գպրոց չկրնար երթալ Թիֆլիսի լեզուն, որ ըստ իս հայ չէ, սորվելու, և Ծ՚ԷՆՆ՝ որ Թիֆլիսի լեզու ալ չէ, կարդալու. և ոչ Ռուսի հայերը, կրնան ճեմարան գալ (գժբաղդաբար այն ալ գոց է) մեր ժողովրդային

լեզուն սարսափելու, որ գրականէն արդարև տարբեր է։ Այս գիտեմ որ, բան որում առհմնադրական ենք, ձայնից առաջելութիւնն աւելի մեծ կշիռ ունի, և հետևապէս Կովկասի հայերը շնորհ կ'ընեն անշուշտ, եթէ ոչ մնատորական յառաջադիմութեան, գէթ լեզուի մասին մեր եռանէն գալու։ Այս ալ գիտեմ որ Հայաստանի գաւառներն անուշ և կենդանի առածներ կան, ժողովրդեան սրտէն բղխած երգեր կան, առանին գաղարիկ ոճեր և բացատրութիւններ կան, զոր հայու սիրտ մը գուրգուրալով կ'ընդունի երբ լսէ, և թող առաջարկած համալսարանդ կամ հանձարդ զանոնք ընտելացնէ բոլոր հայոց, բայց թող նաև որ ես ալ իմ լեզուս կապած չնստիմ։ Ես ալ լեզու մ'ունիմ, ազգեր, որ սրտիս քիչ շատ հաւատարիմ թարգմանն է, թէև երբեմն կ'կմկմայ երբ մտքիս շարժումները բացատրել ուզէ։ Ես ալ լեզու մ'ունիմ, որ . . . հիլ- շատ զգալի և ազգու է . . . ։ — Միշտ ՀՈ-Ր նժարով կ'գատես ամէն բան, Պարոյր. այս փափուկ և ծանր խնդրոյն մէջ սէրդ գործ մը չունի, նա մանաւանդ երբ սիրտը կ'խօսի՝ լեզուդ կրնայ լռել. . . ։ — Ի՞նչ։ — Այո, չեմ ուրանար որ կանայք, ինչպէս մարդկային ամէն իրերու, նոյնպէս լեզուի մը յառաջադիմութեան վրայ արդիւնաւոր ազդեցութիւն ունին։ Եթէ մեր մէջն ալ մարդս ձայն մը հանէ և կիներն անոր շեշտ տայ. մարդս գաղափար մը հնարէ և կիներն անոր ձև տայ, մարդս պատկեր մը յօրինէ և կիներն անոր շէն շնորհ տայ, այն ատեն կ'ընդունիմ որ սէրդ խօսի։ Բայց քանի որ նիւթը պակաս է, ժողովրդեան լեզու մը պէտք է, քիքոշ Ճարտարապետան ինչ ընէ։ Արդարև կան մեր ազգին մէջ երկու սեռէն ալ քանի մը ընտրեալ հոգիներ որ բնութենէ կամ ուսմամբ ստացած են վայելչապէս և Ճաշակով խօսելու ձիրքը, բայց գարձեալ այս չբաւեր։ Ոչ միայն նոր նոր գիւտերու և գիտութիւններու լեզուն չունինք, այլ նաև ընտանեկանն, ընկերականն և գրականը։ Թէև դու կ'կարծես թէ մեր գրականը շինուած է և ամէն գրագէտ բան այնմ կ'մրոտէ։ Ոչ, բարեկամ, կ'ուզես համոզուիլ, սա Մ-ԼՆ ու ԵՐԼ-ԼԸ, ՍԼԷՆ և ՑԷՆ, ԱՐԼ-ԼՅՈՆ և ԾՕ-ԶԷՆ, ԱՐԼԷԼՆ և ԵՐԼՐ-ԲԷ-ՆԴՆ և ասանց՝ 'ի բաց առեալ խնամտները, լոկ առանձին ոճը բաղդատէ, իսկոյն մեծ զանազանութիւն մը պիտի նշմարես Թ-Բ-Ի-Ն ԲՐ-Ի-Ն լեզուին մէջ, եթէ Ճաշակ և քիչ մը հմտութիւն ունիս . . . ։

— Էհ, ժամանակ չունիմ. ուստիներութիւնդ նորէն բռնեց, իմ աղանհամբերութիւնս։ Ես Աչքս կ'սիրեմ. այն ալ փեթակին ամբոյ ձգեց ու թռաւ գնաց, թերևս ոսկեգոյն ծաղիկներով սնանելու համար և զմեզ Մանկասարին հարմիրէն զրկեց։ Ինչ գեղեցիկ գիմակներ ունէր բարեկենդանի համար . . . . — Պարոյր, խնդրեմ թող որ խօսքս լմընցնեմ, քիչ մնաց։ — Խօսիր, աղբեր, խօսիր. Ասուած լեզուիդ ոյժ տայ . . . .

Լ Ե

Ս. Պօղոս, 12 Հատ.

— Ուրեմն մտիկ ըրէ, Պարոյր։ Լեզուի մը կազմութիւնն և արտադրութիւնն երկու էական պայման ունին, ով չգիտեր. այս է քերականական և տրամաբանական։ Սակայն մինակ մեր գրող կարդացողներէն շատերը չգիտեն որ երբ այս պայմաններէն մին զանց առնեն՝ լեզուին սխալ, անշնորհ, մութ, կամ թիւր ու անհեթեթ կերպարանք մը կ'տան։

Մեր արդի հայ գրիչներուն այն տարբերութիւնները, որ աշխարհիկ լեզուին քերականական հաստատուն կանոնաց չդոյութեան կ'պատկանին, խստիս գատելու չեմ համարձակիր, որովհետև ամէն գրող է նաև քերական կրող մը՝ որ ուզածին պէս իր լեզուն կ'կարէ, կ'ձևէ ու կը թափէ, և եթէ դու բան գործ չունիս անոր գրչին թափթփուքը հատ քէ և անկիցը իմաստ մը հանէ։ Այս բաւական չէ, ահա նոր Զօիլ մ'ականջէս վար կ'առարկէ թէ՝ ինչ իրաւամբ որ դու գրական ոճի մը կ'հետևիս՝ նոյն իրաւամբ կ'հետևիմ և ես ուրիշ ոճի մը։ Այդ՝ քանի որ չունիս քերականական կշիռ մը՝ որով իմ լեզուս չափելու ձեռնհաս պանուիս, չունիս նաև իրաւունք մը նոյնը վերը վար զարնելու։

— Ասոր ըսելիք չկայ։ — Ինչպէս, բայց չես մտածեր որ մինչեռ ինքնակոչ գրագէտը քերականական օրինաւոր պայմանը մեր արդի գրութեան մէջ քմածին բան մը կ'համարի և քննադատութեան իրաւունքը

կ'ջրէ, կ'մոռնայ բանականութեան իրաւունքն որ ամէն իրաւունքէ և կանոնէ վեր է և հին, կ'մոռնայ որ անոր ուժովը տրամաբանօրէն խորհելու և տրամաբանօրէն իր խորհուրդն արտադրելու պարտաւոր է։ Այս պայմանն ամէն լեզուի գրաւոր և տանդական կանոններուն մէջ յայտնի կամ անյայտ կերպով կ'տիրէ։ Այս պայմանն է որ ատոնն անատանէն կ'որոշէ, բանականն անբանէն կ'զատէ։ Ջնջէ այս բանն և կ'ջնջես մարդս, ջնջէ ամէն կանոն և իսկոյն բանաւոր մարդուն տրամաբանական հակումը նոր մը կ'ստեղծէ լուսելոյն՝ լեզուին կամ գրչին շարժում տալու առն։ Իսկ երբ բանական կանոնին կ'միանայ նաև մտքի և սրտի նուրբ ներշնչութիւններն և հետեւապէս օդտակարին, գեղեցկին և վսեմին ձաչակն, այն ատեն ոճի ուղղութիւնն ալ կ'միանայ վայելուչ, բնաիր և ներդաշնակ արտադրութեան։

Այս իսկական պայմաններէն զատ՝ ոճ մը կ'կրէ նաև գրող հանճարին յատուկ դրոշմն։ Այս դրոշմն է որ մի և նոյն կանոնաւոր լեզուին բացատրութիւններն անհունս կ'զանազանէ, զանազանութիւն մը որ մարդկայինն մտքի և բնաւորութեան պէս անսահմանելի է և անստուգելի։ Զգիտեմ որ հեղինակն ըսած է թէ աշխարհիս մէջ շրջող հիմնական գաղափարներդ սահմանափակ են։ Թերևս այս գիտողութիւնն իրաւացի լինի։ Սակայն ինչո՞ւ համար մի և նոյն գաղափարը կամ զգացումն երբ տարբեր գրիչներ կ'բացատրեն տարբեր կերպով կը ներգործեն մեր վրայ։ Ինչո՞ւ համար, կ'բանիք, այս տեսիլը մեզի ընտանի է, այլ ինչ բնական, անոյշ, վաւերուն, ինչ շնորհալի, ազդու և վսեմ գրուած է։ Ահա այս տարբերութեան շարժառիթը գրողին հոգին է, սիրան է, երևակայութիւնն է, կամ իր բնաւոր սուր և հզօր ըմբռնման, առացած հմտութեան և պարագայից արդասիքն է, որը կ'ուզես սեպէ միշտ հոգւոյդ որ և է կարողութեան վրայ ըրած տպաւորութեան միտ դնելով։ Եթէ հոգիդ կարողութիւն ունի զգալու և ըմբռնելու։

Ոճն մը երբեմն երբեմն զոյներն, որ միևնոյն բնաիր հոգւոյ կամ կիրթ մտքի հիանալի ցոլացումն է, ոչ քերականութիւնները կրնան առանձել մեզի և ոչ բառարանները։ Քերականը թերևս անխախտ գրէ, բառագէտը բառեր շարէ, բայց մեծ հանճարի բաժինն է թզթի կտորի մը շունչ և ոգի տալ, լեզուն գործիք ընել և բանն անանհայրենել։

Հիմակ կանգ մ՚առ, Պարոյր, և լսածիս համեմատութեամբ նկատէ թէ մեր գրական լեզուն որչափ հեռու է սոյն փոփոխելի յատկութիւններէն. ինչ չոր ու անբերի հողի վրայ կ՚բուսնի այն բազմաճղի առնին, ինչպէս քանի մը բողբոջներ կ՚արձակէ որ չբացուած կ՚թափին, ինչպէս քանի մը վտիտ ու նիհար պտուղներու սնունդ կ՚տայ որ չհասած փուշերու մէջ կ՚խեղդուին։

Բայց պիտի ըսես թէ մեր փնտռածը գրական լեզուին զարդն ու նրբութիւնները չեն, երևակայութեան և հանճարի թռիչները չեն, այլ պարզապէս ուղիղ, յստակ և հասկանալի շարադրութիւն մը։ Շատ աղէկ։ Այս շարադրութեան քերականական սկզբունքն՝ որ կողմը դառնանք, հայկական լեզուէն պէտք է քաղենք, աշխարհիկ լեզուին չունեցած բառերն, երբ նեղը մնանք, գրաբառէն պիտի ընդունինք։ Այս աղբիւրը հարուստ ու առատ է ատուդիս, բայց արի տես որ ընտրութեան արդի եղանակին մէջ ճաշակ և կանոն չկայ։ Կ՚ճանչնամ գրաբէտ մ՚որ պարզ և խմանալի գրիչ մ՚ունի, ասկայն ուր ուրեմն այնպիսի խրթին բառ մը, հոմանշ մը կ՚նետէ մէջտեղն որ իր խօսքին ձեր կը մթագնի։ Ուրիշ մը՝ ատրիակ, թացիկ ոճ մ՚ունի, որ ատէպ գրաբառին հոլովն և կերպն առնելով՝ բոլորովին անհամ, անլի և լղրձուկ ապուր մը կ՚դառնայ։ Միւսը՝ բնական, սիրուն ու եփուն ձև մ՚ունի, ասկայն այնպիսի օտարոտի դարձուած մը, պատ՚ի պատ շրջան մը կը գործածէ որ լեղուն և խմաստը կ՚այլայլին։ Ասկայն ամենէն անասելի ոճն որն է գիտես. այն ոճն որ ոչ գրաբառ է, ոչ աշխարհաբառ, ոչ եւրոպական է և ոչ ասիական, այլ բաբելոնեան խառնուրդ մը, որով հայ մարդը հայ մարդուն լեղուն կարող չլինիր հասկընալ։

Անտանելի է որ աշխարհիկ լեզուն օրէ օր իր ոգին կ՚յայանէ և հաստատութիւն կ՚գտնէ։ Բանիբուն գրիչն՝ եթէ ասիպտի անդամ գրաբառէն անտեղեր բառ մը, օտարէն ատատար մը, իր գլխէն հնար մը քաղել, կ՚աշխատի այնպիսի նորաբոլոր բայատարութիւններ մեղմել, աշխարհիկ ոգին յարմարցնել և այնպէս գրի առնուլ, որպէսզի թէ ուսեալ և թէ անուս հայուն գիրին լինի խմանալ և ոչոք չխրտնի . . . ։

— Երթալով դու ալ կ՚մթնաս, ադրեր, և քունս կ՚բերես։ Քիչ շատ հասկընցայ որ մեր արդի գրական լեզուն ոչ միայն գեռ օրինաւոր ուղղութիւն մ՚առած չէ այլ արատաբանութիւնէ ալ գլուրկ է։ Խօսքդ

Ի՛հետևի նաև թէ՝ Մ—ն՛ը՝ առաջիերէն և ֆրանսերէն կ'խորհի ու հայերէն կ'գրէ։ Եր՛—ն՛ը պատասխան մը պէտ կ'տեսնայ և խառն ու փնթի խմբասանները հայերէն բառերով կ'ծամծմէ։ Յ—ը՝ հայերէն սորվելու յոյս ունի և առաջին փորձը մեր մօրուսին վրայ կ'ընէ։ Սէ՛ն՛ը՝ դեռ գրիչ չունի և աղջին հայերէնի դաս տալու ելեր է։ Ար՛—ը՝ պատգամի պէս կ'խօսի։ Ծ—ն՛ի՛ը՝ թէև հոս այլ փուշ ունի։ Ար՛—ն՛ն՝ արևմտեան անուշ հով կ'բուրէ։ Եր՛ի՛—ֆ—ն՛ն՝ իբր թէ Արարատի ատորոտը կ'քերէ։ Ի վերջէ ամէն գրիչ իր եղովը կ'տապկուի։

Ուստի եթէ հիմա երկու բառ դիտցողը թռղթ կ'մրուռէ, մեղադրելի չէ՝ բառ իս, քանի որ ազգն ալ դեռ այր ու բեն կ'հեղէ, մանաւանդ արդի մրատոշներն անգամ անոր համար շատ են, վասն զի գարին ընտրելու և մարգարիտը մէկդի նետելու վիճակին մէջ կ'գտնուի ապուշ այլ գոռոզ հատին պէս։

Իսկ ես այս խոստակցութեան տեղ քունը կ'ընտրեմ և քեզի գիշեր բարի կ'մաղթեմ, վասն զի վաղը գիշեր աչքերս չորս բանալու պէտք ունիմ . . . ։

ԼԶ

Կ. Պոլիս, 29 Հոլ. 1866։

Սահմանադրութեան վերանորոգութեան մասին կ'ուզես որ օր առաջ ես ալ բառ խոստանամ իմ կարծիքս յայտնեմ։ Բայց նախ այս կ'ուզեմ յայտնել որ այսօր Հայ Երիտասարդաց Սահմանադրութեան (յուզարկաւորութիւնը պիտի լսես, ոչ) — վեցերորդ տարեդարձը կ'տօնէ Ի Հիւնքեար խաչէլէսի։ Ճիշտ նոյնը կ'ընէր և 1863ին երբ Սահմանադրութիւնը քննութեան բոմբ ընկած էր։ Ինչ գեղեցիկ յոսի շրջան։ Կ'դառնանք, կ'դառնանք և միշտ նոյն վայրն ենք։ Է՛հ, Հայ երիտասարդութիւնը սահմանադրական սիգբունքը կ'սիրէ, կ'հուչակէ և գոհ է։ Իսկ երբ անոր գործադրութեան համար պարապ մը, ստակ մը, գործ մը վճարել հարկ լինի՝ տաս մղոն հեռու կ'փախչի։ Ինչ կ'ուզես

որ ընէ։ Ինչպէս պլատոնական սէրը, նոյնպէս սահմանադրականն ան-
նուշ բան է։ Ունիս և չունիս, կ'վայելես և չես վայելեր։ Աշխարհիս
որ մէկ բանն այսպէս չէ։ Այսօր հարուստ կ'ննջես, վաղն աղքատ
կ'արթննաս։ Ցերեկը սահմանադրական ես, գիշերը միապետական։
Այսօր փառք պատիւ կ'երգես, վաղը սև հողին տակ կ'պառկիս, և
Աստուած գիտէ թէ որ անդին երազիդ պիտի հասնիս։

Սակայն երբ սահմանադրասէր հայը կ'տեսնեմ այժմ, կ'յիշեմ այն
մուրացկանն որ մեղրի գոց ամանին վրայ հայոյը կ'քսէր կ'ուտէր, և կը
կարծէր թէ մեղը է կերածն։ Ա՛հ, ինչ երջանիկ մարդ. գեռ պատա-
ռանքի անուշութիւնը կ'վայելէ, և հիւթը ձեռք ձգելու անկարող՝ ան-
նոր հոտովը կ'կշտանայ։ Սահմանադրութեան հոտն ու յիշատակը
Հիւնքեարի մարդագետնին, ծառերուն և հովին մէջ կան, գոնէ տա-
րին անգամ մը այս հոտն և յիշատակը շնչել սովորութիւն և սիրանք
չէ՞ մի . . . .

Բայց կատակը մէկդի, թող հայ երիտասարդութիւնը սիրի, անմեղ
և խորհրդաւոր է իր զուարճութիւնն, և թող քաղաքագէտ հայը ծաղ-
բական ժպիտ մը չցոյցնէ։ Եթէ ոչ այսօր՝ վաղը սկզբունք մը, գա-
ղափար մը կ'իրանայ։ Ի՞նչ են քանի մ'օր և տարի ազգի մը ապագային
առջև։ Ընթնիլ և երթալ, շարժիլ կ'ենթադրէ, այս շարժումը քանի որ
մտայ մէջ կայ՝ գործոյ մէջալ պիտի տեսնուի վաղ կամ անպան. փա-
փաքելին այն է որ այս շարժումն ընդարձակի օրինաւոր դաստիարա-
կութեամբ։ Թէև ծիւլ Սիմոն մարդս ազատ կ'ծնի կ'ըսէ, սակայն եթէ
իմ տեղս լինէր՝ մարդս ոչ ազատ և ոչ ստրուկ կ'ծնի պիտի ըսէր։ Ըստ
իս՝ մարդս թէ ազատութեան և թէ գերութեան հաւասարապէս ընդ-
ունակ կ'ծնի, գոնուած միջոցը (milieu) կ'որոշէ թէ որ կողմը պիտի
դիմէ։ Ժողովուրդներն ալ տեսակ մը երեխաներ են։ Ինչ որ են, էին
և պիտի լինին։ Իրենց առած և առնելիք դաստիարակութիւնը կ'ցու-
ցնէ։ Այս ինչանձն ազատական է Անգղիա, որ ֆրքիր մը կ'լինէր
'ի Հնդկաստան, և մարդակեր Յովկիանիա . . . ։

ԼԷ

Կ. Պոլիս, 29 յունվար 1866.

Անհամբերն Պարոյր՝ աչքը կէս բաց կէս գոց ելաւ և շիտակ Մորֆէոսի ծոցը նետուելու վազեց։ Նոյնն ըրի և ես։ Առաջին քունս, ահ, որչափ անուշ էր, այն ինչ առեր տարեր էր զիս Փասիֆաէյի տաճարն, և ահա ձայն մը՝ սոսկալի ձայն մը, որ դեռ ականջիս մէջ կը հնչէ, ձայն մը, որ ոչ կատուի մլաւելն էր, ոչ շան հաչելն, ոչ ձիու խխնջելն, ոչ խոզի խանչելն, այլ աւելի եղան բառաչման կ՚նմանէր, կարծես թէ հորէ մը երնելով՝ եկաւ հանգիստս վրդովեց։ Այսպիս, այնպէս դարձայ անկողնիս մէջ առանց աչքս բանալու՝ կարծելով թէ շփոթ երազի մը արդիւնքն է այն, բայց երբ ձայնը նորէն հոոո

ռակ Պարոյրին խուցը գայի և նոյն պահուն ես ինքս առաջակի մը կերպարանքն ունէի։

Պարոյր անշուշտ կ'երազէր. մերթ ակռաները կ'կրճտէր, մերթ երեսը կ'խորշոմէր, մերթ անիմաստ բառեր կ'փչէր... յանկարծ բերանը սաստիկ բացաւ... լոյսը մօտեցուցի որ աղէկ մը նայիմ... գէշ լրի։ Վասն զի Պարոյր բերանը զոյեց կոկորդային խոնչիւն մը արձակելով և աչքը բացաւ... ապուշ ապուշ նայեցաւ ինձի և գլուխն անդին դարձուց...։ Մինչդեռ դէպ 'ի ետև շարժումը կ'ընէի կամացուկ մը, Պարոյր լեղապատառ ելաւ անկողնին մէջ արձանի պէս կեցաւ և բոլոր ուժովը սկսաւ պոռալ. «Չէ, երազ չէ եղեր... օգնութիւն, հասէր, հասէր... Վրոյր, Վրոյր...։ — Մի, մի վախնար, Պարոյր, ես եմ...։ — Ինչ դուն... ինչ կ'ուզես հրացանովդ իզմէ... զիս հոս բերիր որ մորթես... ինչ կ'ուզես, աղբեր, փախուցեր ես, թէ դիշերաշրջիկ ես։ Միթէ Պօլսի սովորութիւնն է դիշերային այցելութեան ելնել սպառազէն. այդ ինչ դիւահարի կերպարանք է քուկդ։ Ցերեկը գաղտար չկայ, դիշերը քուն...։ Արդէն սոսկալի երազով մը կ'տանջուէի... հրէշ մը իր ճանկերովը կոկորդս բռներ կ'սեղմէր... հազիս պիտի հանէր։ — Ահա, Պարոյր, այդ երազդ զիս արթընցուց, ըսի, և եղելութիւնը համառօտիւ պատմեցի։

Սկսանք միասին քահ քահ խնդալ։ Եթէ նոյն միջոցին աչք մը գմեղ ծակէ մը տեսնէր, անշուշտ յիմարանոցէն փախչող խենդեր են պիտի ըսէր։

— Քունս փախաւ, յարեց Պարոյր, սակայն այս դիշերուան տագնապս, մանաւանդ չարաշուք երազիս տպաւորութիւնն երբէք մոռնալս եղելիք չունին։ Դեռ սիրտս սաստիկ կ'զարնէ. ճիւաղ մ'աւելի կը ներգործէ եղեր մարդկային կենաց վրայ քան թէ իրական պատահար մը։ Քանի ես ես եմ՝ առաջին անգամն է որ այսպիսի երազ մը կ'տեսնեմ։ Ժամու մը մէջ բիւրաւոր մղձաններով հեռի աշխարհ մը մեզ եկայ, նոր մարդիկ, նոր երեսներ տեսայ՝ ես որ մինչև ցայսօր քունիս մէջ Սաթինեան պարեզօտը, Շամիրամայ հերարձակ գլուխն և Յակոբ նահապետին ծիր ծիր հրեշտակները տեսած էի։ Աւասի է այս փոփոխութիւնն և ինչ յարաբերութիւն ունին ինձի հետ Զինաստանի Շէ-ին

(դենպետ) և ԳԷՌ–ՄՈՒՆԸ (կոյս)։ Միթէ Պօլսի ջրէն է այս, բարակ և թեթև ջուր մը զոր միշտ պիտի փնտռեմ, թէ ոչ ստամոքսիս վիճակէն, որմէ միշտ դժգոհ եմ, թէ ոչ վաղն իրկուն իմ տեսնելիք սև դիմակէն։ Մեծ մասն կ'ըսէր թէ փորին վրայ պառկողը սև սև, և կռնակին վրայ պառկողը կարմիր կարմիր երազներ կ'տեսնէ և Ատոծոյ առատն խաչ հանելով՝ բարին ընէ, երազ տեսայ կ'ըսէր, և մարդ կ'փնտռէր որ պատմէր, բարին ընէ ըսելով։ Զարմանք չեն որ գարնան ժամանակ՝ երբ արեան շրջանն ուելի ուժգին կ'ներգործէ ջղային գրութեան վրայ՝ ծաղկահաս օրիորդներ զոյնզգոյն երազներ և հրեշտակի թևեր տեսնեն, սակայն պառաւները, պառաւներն ինչ գործ ունին երազի հետ, արդեօք սիպիլներու պէս ափիոն կ'կլլեն, ո գիտէ, . . . ։ Ինչ և է, երազ ըսուածը բնութեան զարմանալի մէկ երևոյթն է։ Ես երազի կ'հաւատամ, ապրեր, ինչ մեղքս պահեմ։ Մեր ապառնիին խորհուրդն անոր մէջն է, խորհուրդ մը որ, թէև ինչպէս ուրիշ գաղտնիքներ, անմեկնելի է, բայց շատ մը հին մարդարէներ ջանացին մեկնել և նորերը մեկնութեանց մեկնութիւնը դեռ կ'գրեն։ Երբ մարդուս արտաքին գործարաններուն շարժումը կ'դադրի՝ ուրիշ մարդ մ'ասոր մէջ կ'սկսի գործել և անոր արեան փրփուրը կամ ելեկտրական հոսանուտը հոգւոյ պաշտօնը կ'վարէ մարմնոյն գործակցութիւնը կեղծելով։ Թերևս ասկից կ'հետևին Ալան–Գարտէքի ԳԷՌ–ՈՒՆԵՐԸ (medium)։ Բասգալ՝ որ շատ անգամ ՀՈՒՆԷՆ տեղ կ'երազէ, կ'ըսէ թէ երազն իրականութենէ տարբերութիւն մը չէր ընծայեր թէ որ մարդս շարունակ ամէն գիշեր մի և նոյն երազը տեսնէր. եթէ երազն անուշ է՝ երջանիկ կ'լինէր, եթէ լեղի՝ թշուառ։ Ուրեմն երանի՛ անոնց որ միշտ վարդագոյն երազներ կ'տեսնեն։ Երազել և երազ մեկնել մեծ արհեստ մի էր հին ատենն և ամէն մարդու բաժին չէր երազատես և երազահան լինիլ։ Ասոր համար մոգերը, տաճարներ պէտք էին 'ի վերուստ հաստատուած, ինչպէս այժմ արտօնագիր կ'տրուի այս ինչ կամ այն ինչ արհեստը բանելու։ Ա՛հ, ինչպէս ամէն գեղեցիկ բան կ'եղծանի այս աշխարհիս մէջ։ Հիմակ ամէն մարդ երազ տեսնելու ազատութիւն ունի և այս սուտ մարդարէներուն շնորհիւն ամէն բան ծուռ կ'բռնի։ Դէթ հինները մութին և տոթերկրեայ տեղեր կ'երազէին, հիմակ լոյս աչքով աչերազներ կ'տեսնենք և ճիւաղներու առջև ծունր կ'դնենք։ Կան մար-

դիկ որ եթէ ցերեկն երազ չտեսնեն գիշերը կ'մեռնին։ Ասոնց համար երազն աւելի իրական է քան թէ կեանքը . . . ։

Ինչ կ'լինէր Հայաստան թէ որ Աշդահակ երազ մը չտեսնէր։ Մը աշխարհէն երևան պիտի գային Մովսէս և Քրիստոս թէ որ Յովսէփ Փարաւոնի մը երազը չմեկնէր։ Մեր կ'երթար մեր բանը թէ որ սուրբ Մեսրոպ իր տեսլին մէջ հայերէն տառերուն ձևը չգծէր . . . ։

Ուրեմն մի ըսեր, աղբեր, որ երազը պարապ բան է։ Հիպոկրատ մեծ բժիշկն անգամ իր հիւանդը բուժելու համար նախ անոր տեսած երազը մտիկ կ'ընէր և ապա հիւանդութեան տեսակը հոգւոյ կրած հեշտ կամ դառն տպաւորութիւններէն կ'գուշակէր։

— Արդեաք աւելի լաւ չլինիր, ըսի Պարոյրին, որ այդ քնէած խորհրդածութեանց տեղ սա տեսած երազդ պարզօրէն պատմես՝ որպէս զի ես ալ քու ըղեղիդ ծանրութիւնը կշռեմ։

— Եթէ հաւատ ունիս և Պէյ +ը+ը կարդացեր ես՝ կ'ըսեմ, թէ ոչ ծաղր ու ծանակ լինելու միտք չունիմ . . . ուստի բարին ընէ, ըսէ, և միտ դիր . . . ։

ԼԸ

Կ. Պոլիս, 5 յունիս 1866։

Երբ անկողին մտայ՝ լալու փափաք մ'ունէի, յարեց Պարոյր։ Թէև գլուխս ծանր էր և դինիդ կ'ներգործէր, սակայն սիրտս այնքան թեթև էր և արթուն որ թև կ'առնուր թռչելու համար։ գիտես ուր, ու կ'փղձկէր քանի կ'գիտէի այն նեղ աշխարհն որուն սահմանն առաջաստս էր։ Ճրագին նսեմ ու փրփլուն նշոյլն, որ առաջաստիս զարկեր էր, հիւսիսայգի երևոյթ մ'ունէր և կարծես թէ կ'յորդորէր զիս արևուն ծագմանն սպասել քան նիրհել։ Ա՛հ, նիրհել՝ մեռնիլ է իրաք։ մահ մը՝ որ վերածնութիւն կամ յարութիւն կ'ենթադրէ իրաւ։ և ասոր նշանն է այն լոյսն որ կ'փլփլի մարդուս մտարին վերի դին՝ երբ հրեշտակի մը թևին ներքև կ'ննջէ. այն սպաղի մութն որ կ'վառի մեռելին վերևն՝ երբ սև հողին մէջն է և հոգին թերևս քերոբէից դասուն հետ կ'հսկէ . . . ։ Իսկ ես նոյն ժամուն չէի կարող մեռնիլ և անբթիթ

հսկելու մոգք՝ ելայ ձեռքս գիրը մ՚առի, Ճրագը բարձիս մօտ դրի և պատանդին մէջ պարուրեալ՝ իր վրայ կարդացողութեան Պարոյրի մը կերպարանն առի։

Պատահմամբ Նարեկացին ընկեր էր ձեռքս և աչքս ԺԲ բանին Գ հատուածին վրայ ընկաւ . . . «Կայցուցցես շրջափակ զպար զօրդ երկնայնոյ . . .» ասղին հասայ չհասայ և ահա աչքս սկսաւ մթանալ և գրքին տառերը սև մանրէներու պէս ոստոստել։ Պատյտ մ՚առաւ գլուխս, բոլոր տունը շուրջ կ՚դառնար, կ՚օրորէի, կ՚վերանայի մինչև որ չգիտեմ երբ՝ Նարեկացին ձեռքէս թռաւ, հոգիս մարմնէս ելաւ և անեզր անջրպետի մը մէջ սրացաւ . . . ։

Երկիրս ոսքիս տակ իբր ամպապատ գնտակ մը կ՚թռուչէր, Պօլիս անհշմարելի տղմի կոյտ մ՚էր, Քաղկեդոնդ աւազի հատ մը . . . ։ Շողուն ու նօսր մթնոլորտ մը կ՚պատէր համասփիւռ. մանր մանր լուսաւոր կէտեր կ՚նշմարէի ու երկնաձեմ հիւսեր, որ դիտես թէ հրեշներ էին և դէս ու դէն զեգերելով կ՚ուզէին տարածուիլ, երկրիս յիմարութիւններու վրայ սաւան մը ծածկել և ջրհեղեղ մը սպառնալ։ Եւ արդարև երկին յանկարծ իր պարզ գոյնը կ՚փոխէ, հիւսերը գունդագունդ կ՚սուրան, կ՚սեղմուին, կ՚որոտան։ Հրէշներէն մին հրաշէկ դէմքով մը վրաս կ՚վազէ, դիս կ՚կլլէ ու կ՚սկսի գլորիլ։ Ճանբան ուրիշ հրէշի մը շփուելով փայլակ կ՚արձակէ ու փայլակն երկնային սեւաթոյր կամարին վրայ սողոսկելու տեղն կարծես թէ Աշխէն անունը կ՚գրէ . . . անհետ կ՚լինի . . . և նորէն երեւան գալով լեռնաձև ամպի մը տարէն դար վար կ՚սահի շանթելով ու սիրաս թռունդ կ՚հանէ . . . ։

— Ա՛հ, դու ես, Աշխէն, ըսի շրսի և ինքզինքս նոյն լերան վրայ դտայ, թէև ինքզինքս մի և նոյն անձը չդտայ . . . ։ Շանթէն սեղեր էր բոլոր մարմինս և մազերս այրեր . . . ։ Ո՞ւր ես, անողորմ՚օրիորդ, արի դիակս ալ կեր, գոշեցի և հազիւ ողբագին ձայնս առի. ձայնս մարեր էր և անհնարին սոսկում մը պաշարեց զիս։ Լերան վրայ շրջան մ՚ըրի. մէկ կողմէն ձիւնապատ ովկիանոս մը, միւս կողմէն հրեղէն կոհակներ, առջևս գահավէժ լեռներ, ետիս անհուն կապոյտ դաշտ մը տեսայ։ Ո՞ւր էի, ո՞ դիտէ . . . ։

Ցանկարծ ահագին շառաչիւնով մը իմ լեռս կ՚սկսի վառիլ ու շուրջանակի կրակ ու բոց արձակել։ Բոցերուն մէջէն սպիտակ ամպի ե-

ոիվար մը կ'վազէր, վրան ծիրանի օրիորդ մը նստած՝ որ ծիածան աշ
չեր ունէր ու դրոշակ 'ի ձեռին . . . . Դրոշակին մէկ երեսը գրուած
էր ՖՐԱՆՍԷՍ (սէր), միւս երեսը ՍԱՀՄԱՆԻՆ։ Որչափ ձայնս կ'զօ-
րէր գոչեցի. Սէրդ շեմ ուզեր, սուր, մահ սուր ազատութեան զաւա-
կի մը և զիս այս դեհենէն ազատէ . . . . Նապէլի օրիորդը ճախրե-
լով մօտեցաւ ինձ, Աշխէնին դէմքն ունէր, ու ըսաւ. — Վատ ու ա-
պիրատ սողուն դու, ուսկից բնկար այս լեռն, որ Ալիա մահու լեռն
է, որ հիւսիսէն Սիպիր, հարաւէն մեր երկնային չինական պետու-
թիւնն, արևելքէն Ովկիանոսն, արևմուտքէն ՀԷՆԱՅ աշխարհը կ'նա-
յի։ Ա՛հ, դու իմ սէրս կ'մերժես, իմ լուծս կ'թոթուես, որովհետև
մեր Շիասը զաղանի սպաննելու միտք ունիս. սակայն ես անոր պահ-
պան հրեշտակն եմ և թշնամիներն անդունդն կ'դահավիժեմ։ Շուտ
կորիր և դուռ, անօրէն ու անսիրտ օտարականդ, որ զիս ուրացար, ու
դեռանին տակն անցիր . . .» այս ըսաւ, դրոշակին նիզակը լերան զար-
կաւ, լեռն է ճեղք բացաւ ու զիս կլլեց։ Ոսմի պէս գլխի վեր սահե-
ցայ, սուզայ խոր ու խոր ինքայ . . . շունչս հատաւ ու կիսամեռ անդ-
ունդին յատակը գտայ, ինչպէս երբեմն Արիստոմէն։ Կարծէի թէ
մարմնոյս վրայ լոյրծուն իժեր, զալարուն օձեր ու կարիճներ կ'զոր-
տէին։ Ոլոր ոլոր կ'գայի, կ'փրփրէի, կ'մռնչէի . . . և կ'երևի թէ նոյն
միջոցին էր որ վայնասունս արթընցուց քեզ, Վրոյ։ Սակայն Արիստո-
մէնն ազատող ազուէն, որ ՖՐԱՆՍԷՍ-ՍԱՀՄԱՆԻՆ տեսի գութ ունէր, չկար որ
գոչէն բռնելով ելք մը գտնէի։ Դեռ ևս քաշելիք ունէի։ Աչքս բացի
գոցեցի և ինչ տեսնեմ ազէկ։ Զորս մարմնեղ սատանաներ խարոյկի մը
բոլորն առած՝ կ'փչէին ու կ'փչէին ուժգին։ Զորսին դէմքն աղ ահռե-
լի, սառաբ, անձակաս։ Ասպակիի նման անլոյս ու կլոր աչեր, կարճ
թուշեր ունէին և ուռած այտեր, որ արիւն քիրտով լի՝ բոցին առջև
քստմնելի լոյս մը կ'ցոլանային։ Լայնաշուրթ բերաններ, տափակ քիթ-
երու մօտ՝ խորշակի նման հով մը կ'բուրէին և կենդանի փքոցներու
պէս շարժուն՝ կրակին չորս դին ճիշդ դեհենին զաւակներն էին։

Թէև խարոյկին երերուն ու տմոյն նշոյլը բաւական չէր այս տար-
տարոսին մութն ու մութը փարատելով՝ չորս դևերուն բոլոր կերպա-
բանն երևան հանել, սակայն ուր ուրեմն թռչող կայծերէն նկատեցի
որ մէկին գլուխը սրամէտ սև խոյր մը կար, միւսին կուրծքն երևակի

ենչան մը, ասոր դդակին վրայ բանալի ու բոժոժ մը, անոր ձեռքը դաշոյն մը . . . :

Երբոր խարոյկը հնոցի պէս բռնկիլ սկսաւ, սատանաներն առին զիս ու դագաղի մը մէջ դնելով ատրուշանի մը առջև տարին : Ատրուշանին վերի դին սեղան մը կար ու վրան գահ մը : Գահը նստեր էր արձանի պէս ալեւոր ու պատկառելի ծերունի մը : Արծուի պէս սուր աչեր ունէր, թէև կարծես թէ կ'ներհէր. ժպտուն շուրթեր ունէր, թէև կարծես թէ կ'աղօթէր, այս տեսարանին առջև անտարբեր կերպարան մը առեր էր, թէև կարծես թէ դևերուն ոգին ինքն էր . . . :

Երևակի սատանան գահակալին դառնալով ըսաւ խեղդուկ ձայնիւ մը, — Ալեհդ վերհազանց, այս օտարականը դատաճան է կենացդ, ապստամբ է տէրութեան, թշնամի է Զրուանին (Էն լուսոյ) և որ մեծն է, հերետիկոս կ'հոտի և իրը այն մանաւանդ՝ ողջակէզ պիտի նուիրուի վերհիդ . . . : — Օրհնեալ է կամք Ռէյ-ֆուանին (որդին լուսոյ), մրմնջեց ծերունին . . . : Ամէն, ըսին միւս դևերն և ծափ զարնելով ճաղիս բոլորը պարել սկսան : Ալերջը սրամէտ խոյրը վառ փայտ մ'առաւ և անոր լուսովը վրաս գիրք մը և յորդոր կարդաց որ խոստովանիմ. . . . : Ճիկ, շունչ չէի հաներ . . . : Նեռեցէք, կրակը նետեցէք այդ գէշը, պոռաց գինակիր դևը, կորած է հոգին արդէն : Իսկոյն շալակ առին զիս և հուրին մէջ նետեցին . . . : Լեղապատառ կանգ առի և սոսկալի աղաղակ մը ձգելով խարոյկէն դուրս ընկայ . . . : Անշուշտ այս աղաղակն է որ վերի աշխարհն ալ ականջիդ հասած է, Ալբոյր . . . : Սատանաներն, որ միշտ մարդէ կ'վախնան, Նէհ-ֆէ-նէր, Լինֆ-նէ ֆէր է գոչելով կծիկը դրին և մինակ բոժոժաւոր այն ակռաները կրճտելով, — Ես ուրիշ տեղ պիտի բռնեմ զքեզ, մռմռաց . . . :

Արիւնս գրեթէ սառած էր, թէև կրակէն ելեր էի, շարժիլ չէի կարող և ոչ ազատուելու հնար մը գտնել . . . :

— Է՛հ, կարծէի թէ երազդ լմընցաւ, ըսի Պարոյրին. կ'երևի թէ այս գիշեր քնանալու միտք չունիս, թէև իմ աչքէս քունը կ'վազի և մինակ գահավէժ երևակայութեանդ հրէշներն, վիշապները, խարոյկներն ու սատանաները քիչ մը շարժ տուին զլխիս : Բայց ոմ պիտի մեկնէ այդ երազդ. բաւական տաղտկալի է և կաղանդի իրիկունները

աղաղը զուարճացընելու յարմար . . . : — Բայց երբ գիս կրակը նե-
տելու ելան՝ իմ վիճակս զուարճալի չէր, բարեկամ, և ոչ կատակ մը։
Ճակատս թափած սպաղ քրտինքը . . . : Նայէ դեռ բոլոր թրջած է։
Երազ մը գաշնակաւոր հիւս մը չկրնար լինիլ. մեկնութիւնն իր մէջն
է։ Կ՚ուզէիր որ շինծու ու զարդարուն պատմութիւն մը հիւսէի։ Մ-
ԸՐ-Ի-ՆԻ վէպի մը շնորհիր այն, թէ որ կամք ունիս ըսէ, թէ ոչ կը
լռեմ . . . :

— Շարունակէ . . . :

ԼԹ

Կ. Պոլիս, 7 Յունիս 1866։

Հաշմու ապիկար մարդու մը պէս ոտք ելայ, շարունակեց Պարոյր։
Ձեռքս ջահ մ՚առի ու ծանր ծանր սկսայ քալել խոր վիրապին մէջ։
Կամաքակաց ատորերկրեայ բաղմուղի բուիղ մը կամ դերեզման մ՚էր
այն, ուր տեղ տեղ բազմութիւններ, մարդու ոսկրներ, գանկեր, տափօրներ
ու շիրիմներ կային . . . : Պատոյտս մ՚ըրի ու երկայն սրահ մը մտայ։
Սրահին երկու կողմը շար շար կիսատ սիւներ տեսայ, որոց վրայ կու-
ժեր դրուած էին և մէն մի կուժի վրայ արձանագիր մը։ Դէմն ահա-
գին գմբեթաձև խորան մը, խորանին մէջտեղը հսկայ արձան մը բիւ-
րեղեայ, ուսկից բարակ լոյս մը կ՚ցոլտէր։ Դէպ՚ի խորանը քայլ առի
որ լաւ դիտեմ։ Արձանը կորովի կնիկան մը կերպարանն ունէր, մէկ
ձեռքը գաւազան մը, միւսն՝ երկրագունա մը բռնած։ Ճակատն ՀԱ-
ՊՈՒՆ, լանջն ԻՐԱՒՈՒՆ գրուած էր։ Իսկ պատուանդանին վրայ
հեշտօրէն երկրնցած կոյս մը կ՚նիրհէր և իր պաշտելի երեսն՝ որ սև
սև մազերուն մէջ կ՚ողողար, թեթև մը սպիտակ ու կլոր թեւին յենած
էր։ Նոսր շարդոյր մը ոսկեթել՝ պարուրեր էր անոր ձիւնի պէս մար-
մինն և կ՚թռթռար քանի օրիորդը շունչ կ՚առար ու սիրտի թռէր կար-
ծես, թէ որ երկու վարդի կոկոն երկու ճերմակ նարնջի վրայ բուսած՝
արդեւք չէ՞ մնէին։ Անուշ ճակտին վրայ յոյս, սէր, հաւատ կ՚փայլէր։
Կիսաբաց նուրբ ու կարմրուն շուրթերն, որ մարդարտի շար մը կ՚պա-
հէին, ժպիտ, համբոյր ու անմահական հոտ կ՚բուրէին և առեն առեն

փափուք մը . . . : Ալ մատունքը սրտին վրայ դրած էր, այնպէս որ կարծես թէ նեամ մը կ'ուզէր պահպանել, թէև իրաք արիւնալի սպի մը կար անոր վրայ և նուռի պէս կայլակներ կ'հոսէր շարդուրին վրայ . . . : Ահն ու դողը զիս առին. անրջական երազ մը կ'թուէր ինձ այս տեսիլը, թէև իրական նոր բան մը տեսնելով սթափեցայ . . . : Օրիորդին ոտքին մէկը, զողորիկ, շնորհալի ու թափանցիկ ոտք մը, ոտք մը՝ որ սիրտեր ոտնահար ընելու արժանի էր, ոսկի օղակէ մ'անցած պատուանդանին կապուած էր . . . : Խսկոյն վազել ու օղակը կտրել էր փափաքս, երբ կոյսն 'ի քուն սկսաւ ժպտիլ ու մնջել այսպէս.

— «Կայսաւ թոշուն մ'էի ես երբեմն և զայլայլիկս բնութեան ներդաշնակութիւնն . . . : Արևն էր իմ մայրս, լոյսն՝ իմ սնունդս, արփին՝ իմ բնակարանս, անմահութիւնն՝ իմ Ճակատագիրս . . . : Ուր որ թռէի՝ վեհ ու սիրասուն սիրտեր առ իս կ'թռէին, որ որ դադարէի՝ լոյս, ազատութիւն, գարուն ու առատութիւն կ'բերէի . . . : Նեանք կ'ներշնչէի ազգերու, կենդանութիւն սարուկներու, ապագայ մը թշուառներու, սիրտ կ'շնորհէի աղջիկներու և դիւցազուններ մայրերու . . . : Ա՛հ, հիմակ ուր եմ, դերեզմանի մը մէջ. ոգէաբ՝ բռնաւորին ու քուրին ընկերն, 'ի բնէ անտի հալածական կ'վանէ զիս, թևերս կ'կտրէ, կ'կապէ զիս. սակայն շեմ անյոյս. օր մը թևերս կ'բուսնին, վերքս կ'դարմանի ու կ'թռիմ, պիտի թռիմ միշտ, անցած տեղերէս կայծեր պիտի ցանեմ. ամէն մէկ կաթիլէս դիւցազն մը պիտի ծնի, ամէն մէկ կայծէս Պրոմեթէ մը պիտի ծնի և երկրային ոսկեկուռ կուռքերը պիտի կործանեն անյարիր . . . :»

Կոյսը հառաչեց սրտագին և արտասուքի կաթիլներ արտանին ծայրերը փլփլելով մի առ մի վարսին վրայ կ'սահէին և կարծես թէ փրփրալի սև ամպի մը երեսն աղամանդներ կ'շողային և նոր փայլ մը կ'շնորհէին իր հրեշտակային դէմքին։

Իսկ ես բոլոր վիշտս մոռցայ, ու թէև կարող չէի մեկնել այս երևոյթս, նոր լոյս և այժ կ'առնուի քանի ազատութեան վշտակիր հրեշտակին երեսը կ'նայէի։ Ի վերջ շիրնալով եռանդս զսպել՝ ելայ բերանս անոր ոտիցը դրոշմելի . . . : Աչքը բացաւ, երկնագոյն հնշտալի աչքեր, որոց վեհ ակնարկը սիրտս այրեց ու դիմեց . . . : «Ա՛հ, նմանավիշտ կ'տառապիմ և ես. վեհգ հոգի, դուշեղի, կենացս մէջ միշտ

սէր ու ազատութիւն փնտռեցի ու միշտ պատիր, նենգ ու շղար գտայ, և ահա մահու անդունդն ընկայ . . . : Տուր, կ'աղաչեմ, սիրտդ տուր ինձ և ես դեռ յուսալու կ'յանդգնիմ, լոյսն, որու կենդանի աղբիւրն ես, նորէն վայելելու կ'յուսամ . . . թոյլ տուր մանաւանդ խորտակել օղակդ և քեզի զինուոր դրուիլ . . . :

— «Մի, անփորձ պատանի, մի այդչափ արտորար, ըսաւ օրիորդը հանդարտ ոգի ելնելով, մեծ ու ծանր է կրելիք խաչդ եթէ զիս ընդունիս, ու դատն ժպիտ մը, մուայլ մը իր ջինջ ճակատը նսեմցուց : Ազատութիւնն 'ի բնէ անտի շատ սիրահարներ, այլ քիչ շահատակներ ունի, յարեց նա, ազատութեան բառն ամենուն բերանն է և ոչ ոք անոր զօրութիւնն և ոգին գիտէ ու կ'զգայ . . . : Հագուստ մ'է այժմ նորաձև՝ զոր ամէն մարդ ազատութենէ զատ նպատակի մը հասնելու համար կ'հագնի, դրոշակ մ'է այն անգոյն՝ որ կրողին սրտին կանաչ, գեղին, կարմիր, կապոյտ և մինչև անգամ սև գոյնը կ'առնու և միատիտ հոգիները կ'որսայ, տուներ կ'փլէ, ապցեր կ'կործանէ, աշխարհներ աւեր ու քանդ կ'ընէ . . . : Ազատութիւնն աւելի սև օրեր կրեց իր տուտ և գիմակաւոր ստատարկուներուն երեսէն, քան բռնաւորներէն . . . : Եւ սակայն ազատութիւնը, նորահաս պատանի, ոչ Պետրոսի բանալին է, ոչ Պօղոսի փողն, ոչ Քրոմվէլի աւետարանն, ոչ Մարատի կարմիր դդակն, ոչ բանականութեան քրմուհիին ամիտոն, ոչ Նապոլէոնի հրաշէկ ռումբն, այլ Սոկրատի լեղի բաժակը, Նազովրեցիին խաչը, Վարդանայ արիւնը, Պրուտոսի դաշոյնը, Թելի նետը, Տանդօնի որոտընդոստ ձայնը, Ֆրանկլինի գրիչը, Վաշինկդընի և Դարիպալտիի դրոշակն . . . և որ մէկն ըսեմ : Խորաններ ունի նա, ուր բռնակալներ անմեղին արիւնը կ'թափեն և անոր դիակովը կ'սնանին, սպասդաններ ունի նա, որ մամուլի շնորհիւր գահեր կ'տարսեն, քաղաքական փոթորիկներ կ'յուզեն և թնդանօթի վրայ կոթնած սէրութիւններն անդամ կ'տապալեն . . . : Վայ այն իշխանութեան որ այս հեղեղատին դէմ թումբ կ'կանգնէ . . . :

«Իրաւ է որ ազատութիւնը ատէպ կ'վիրաւորի ինձի պէս բայց չմեռնիր. մի զարմանար եթէ անոր անմահութիւնը կ'հռչակեմ, և ես ինքս վիրաւոր գերի մ'եմ : Հիմակ վերը չէ լոյսն այլ վարը, գահերու վրայ չէ ազատութիւնն այլ գերեզմանի մէջ : Դարձուր աչքդ և տես

շիրիմներն ու սիները նկատէ, ասոնք մարդկային ազգի բարեբարքներն ու ազատութեան Ճշմարիտ նահատակները կ'ամփոփեն, և որոց հոգին դեռ շատ ազգեր ու ժողովուրդներ կ'հոսիւէ։ Ահա այս դամբանական վայրս են Մոսկէս, Սօլոն, Հայկ, Սոկրատ, Ներսէս, Լուսաւոր, 89ի դիւցազուններն, Իտալիոյ շահատակներն, և ամէն անոնք որ թէ մարդկութեան և թէ մասնաւորապէս իրենց ազգին սկզբունք մը, բեղմնաւոր խորհուրդ մը աւանդած են. ահա ասոնք են իմ ընկերներս, որ վշտաբեկ սրտիս փոքր ինչ սփոփում կ'ազդեն և յոյս . . . ։ Սակայն դեռ վերը գերին աւելի շատ է քան թէ ազատը, խաւարն աւելի շատ որս ունի քան լոյսը զաւակ . . . ։

— Բայց ատանանները ինչ բան ունին այս սրբանուէր վայրս, ըսի զողղողալով։

— Անոնք գերութեան գործակատարներն են, պատասխանեց կայսն, և ամէն ազատ շունչ կ'խեղդեն . . . ։ Վասն զի Երբ-ոյն ըստուած պետութիւնն ալ որ երկրիս վրայ կ'սողայ, Լ— կայսեր լծին տակ կ'հեծէր. իր դարաւոր թշուառութեան բեռը հազիւ զգալով յաւահատութեան Ճիկ մը հանեց, Ի զէն վազեց և իր բռնաւորներուն գլուխը խորտակեց։ Իր վսեմ կոչումը լսեցի, օգնութեան հասայ։ ԳէՀՀի ու ԿոՀՀ-ՀՀոի ազատ և արդար օրէնքն, որ իր Ը-ՀՀ (մեծ գիտութիւն) մատեանին մէջ գրուած են, վերահաստատեցի։ Բայց Գ-ՀՀերը զայրացան, դարան դրին, օտար տէրութիւնք զօրք խնդրեցին, ժողովուրդը ջարդ ու բարդ ըրին ու գիակներու վրայ իրենց իշխանութիւնը վերականգնելով բոլոր ազատութեան գիւտերը թրէ անցուցին։ Այն ատեն այս ազատութեան արձանն ալ, որուն առուերին տակ կ'նիրհէի, թաւալգլոր ըներին և ամէն կողմն լրտեսներ կարգեցին, որոց պարագլուխը ԳՀ—Մ—ն է, որպէս զի ՃանՃ մ'անգամ երկնային սիստութեանս դունէն ներս չմնանք։ Ուստի քանի մեծին Շիլլերի հակառակ մէկը բռնեն՝ այս քարայրս կ'բերեն կ'այրեն . . . ։

Նոյն պահուն իսկ հեռուէն սոսկալի ձայն մը փրթաւ, օրհասական անձի մը աղաղակն էր այն . . . գոյնս նետեց և սկսաւ զողզողալ, մտածելով որ թերեւս նոր որս մը խարոյկին վրայ կ'տաշտրի . . . ։ Իսկ օրիորդն անվրդով ըսաւ. — Ֆակէ սա օղակս, արիութեանդ առաջին փորձը ցոյց տուր և ետևէս եկար . . . ։

1866 —

Ամէն մարդ գիտէ թէ՝ երբ առաջին անգամ Սահմանադրութեան խնդիրն ազգին մէջ յուզուեցաւ, այլ և այլ դասի մարդիկ սկսան այլ և այլ կերպով մտածել, խօսիլ և գրել այս կարևոր խնդրոյն վրայ։

Վեղարն ամբարշտութեան նշան մը տեսաւ անոր մէջ, ամիրան՝ ապստամբութեան, ողջամիտն՝ արդարութեան և օրինաւորութեան երաշխաւորութիւն մը, ուսմիկն՝ արքայութեան դուռն, Իսկ Եւրոպացեալ Հայը՝ ծաղու առարկայ մը։

Կրօնական դասը կ'ըսէր. — Սահմանադրութիւնը գործի մէջ որ երեսփխանութեան միջոցաւ խել մը անխորհուրդ և անկրօն պատանիներ ազգային կառավարութեան ղեկը ձեռք պիտի առնուն, որպէս զի մեր հոգևոր իրաւասութիւնն ու իշխանութիւնը կործանեն և Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ նորոգութիւն և հերետութիւն մուծանեն։ Եւ այս դասուն բերանն էր աստուածաբան Եղեռնն և ծանծաղամիտ Ա-բ-ե-լ-ա-ն գ-ը-ը։

Ամիրայից դասը կ'ըսէր. — Օսմանեան կառավարութիւնը միապետական է, միապետական կառավարութեան մը մէջ սահմանադրական հասարակութիւն մը հակասական է և սէրութեան օրինաց հակառակ. ուրեմն ազգային Սահմանադրութիւնն ապստամբութեան դրոշակ մ'է, սէրութեան մէջ սէրութիւն մ'է, մեր զօրութեան քանդումն է։ Եւ այս դասուն բերանն էր քաղաքագէտ Եղեռնը։

Ողջամիտ մասը կ'ըսէր. — Ի վաղուց անտի Օսմանեան պետութիւնը մանաւոր արատութեամբ ամէն հպատակ հասարակութեան առանին և ազգային գործերու ուսուցութիւնը նոյն հասարակութեան յանձնած է. Հայոց մէջ այս վարչութեան գլուխը կ'գտնուէր մերթ պատրիարք մը, մերթ հոյ բռնաւոր մը, որոց կամքը, կիրքն, անձնական շահն օրէնք էր։ Հետևապէս պատրիարքարանի վարչութիւնն անկատեան, շփոթ և ազգաւեր էր. ուրեմն կանոնադրութեան մը պէտք կար, որպէս զի ազգային գործերն արդար, օրինաւոր և հրապարակային ուղղութիւն մ'առնուն, ինչպէս որ Խ-ռ-ի-մ Հ-ա-յ-ա-ն ալ կ'տրամա-

գրէ, և այս օրէնքը Սահմանադրութիւնն է։ Եւ այս կարգ մարդոց բերանն էր Մ—ոյ, Մ—ը—, Մ—ն—ի, Սէր ու Ծ—ղ—։

Ռամիկը կ'ըսէր. — Դարերէ 'ի վեր զերութեան և թշուառութեան լուծը կ'ձնշէ վիզս, ոչ հայ ունիմ, ոչ լոյս, ոչ սիրտ։ Կրօնականը հոգիս ու քսակս կ'քամէ, իշխանը գլուխս կ'ճզմէ և ես կրկնակի ստրուկ դարձած եմ և կամք չունիմ և ոչ կարողութիւն իմանական և ազգային գործերս անօրինելու։ Սահմանադրութիւնը մեր բոլորցաւերուն դարմանը պիտի լինի, մեզի առատութիւն, բարօրութիւն ու երջանկութիւն պիտի բերէ և ուղղակի եղեմական դրախտը պիտի տանի, ուր առանց աշխատանքի ամէն բան պիտի վայելենք։ Եւ ռամիկը յոյսեր ունէր և ոչ հրապարակական գործ և բերան։

Իսկ Եւրոպացեալ Հայը կ'ըսէր. — Եթէ կապիկը մարդու հագուստ հագնելով մարդու կարգ կ'անցնի, նոյնպէս Հայը Սահմանադրութեամբ պարուրուելով սահմանադրական կրնայ համարուիլ։ Որչափ հեռի է կապիկը կենդանեաց դասուն մէջ բանական էակէն, նոյնչափ զուրկ է Հայը սահմանադրական դրութենէ, որ ազգի մը մէջ հիմնուելու համար զանազան անհրաժեշտ պայմաններու կ'կարօտի։ Արդ՝ այս պայմաններն, որ սեղական կայութեան, ժողովրդեան բարուց ու վարուց, օրտի և մտքի կրթութեան կ'վերաբերին, Հայը չունի. ուրեմն Սահմանադրութիւնը, մանաւանդ Հայուն հաստատելիք Սահմանադրութիւնը պաշտօնական կատակ մ'է, խայծ մը՝ որով ազգը պիտի պատրի, մինչև որ անդունդը գլորի։ Եւ այս կարգի մարդոց բերանն էր Մ—ն—ա և Ա—ն—ի։

Այս կարծիքներէն ոմն է Ճշմարիտն. ըստ իս, և ոչ մէկն առանձին, իսկ ամէնը քիչ շատ։

Եւ արդարև եթէ Սահմանադրութեան հաստատութենէ մինչև կործանումն, անոր գործադրութեան կերպն, ազգին մէջ պատահած յուզմունքը, դէպքերը, վարչութեանց և ժողովրդեան ընթացքն և պէս պէս հանգամանքը նկատենք, եթէ նկատենք որ կրօնականը՝ կիրքերն ամրցելու, սէր ու միաբանութիւն քարոզելու տեղ զանոնք դրդուեց ու բորբոքեց, Սահմանադրութեան անիւին առջև քարեր նետելով՝ և մերթ Հաննէի նղովքն, և մերթ իրաւասութեան խնդիրը ծնցուց, որ ազնուականը՝ միշտ իր վաղեմի իշխանութեան կորուսան ոչ-

բալով՝ պաշտօնական դռները զարկաւ, ազատ հրատարակութիւնը հալածեց, կրօնական ոխակալութեան կրակը փչեց արծարծեց, մատնութեամբ դարաններ լարեց, օրինաւոր իշխանութենէ դուրս իշխանութիւն մը կարդեց, անդուլ հակառակութիւն մը յարոյց ամէն տեսակ օրինաւոր որոշումներու դէմ և ասով ժողովրդեան զայրոյթը բորբոքեց, այնչափ որ նախ ազգովին հաստատուած Սահմանադրութիւնը կործանելու դաղտնի շարժառիթն եղաւ։ Եթէ նկատենք որ, ինչպէս կրօնականը քրիստոնէական սէրն, և ամիրան քաղաքական իսոհեմութիւնը մոռցաւ, ժողովուրդն ալ՝ Սահմանադրութեան նախորդ դադարման վրայ տեսնելի ևս զայրացած՝ մոռցաւ չափաւորութիւնը, մոռցաւ քաղաքական դիրքը, մոռցաւ արդարութիւնն և օրինաւորութիւնն և ամէն բան ոտնհար ընելով՝ ազգային պատրիարքարանին դռները դոցեց և ահ ու սարսափ ու կասկածներ ազդեց։ Եթէ նկատենք որ՝ Սահմանադրութեան տիրովին հաստատութիւնը հին կրից և դաղտնի դժտութեան հետքը չջնջեց, ժողովրդին և ազնուական սեպուած դասուն մէջ բացուած սկզբունքի և դրութեան կռիւը չլուծեց, որովհոր Սահմանադրութիւնն ալ երերուն ընթացք մ՚ունեցաւ, թէ պաշտօնական մարմինները մեծագոյն մաս կազմելով՝ ներսէն սկսան քանդել Սահմանադրութիւնն, ազգային պաշտօնեաներն իրենց բարոյական պատասխանատուութիւնն ու երդումը, լաւ ևս ըսեմ, իրենց խիղճը մոռցան, անհատներն իրենց պարտքն և իրաւունքը զանց ըրին։ Նոր նոր և անպատեհ խնդիրներ, որ ազգին և եկեղեցւոյն կ՚վերաբերէին և որոց լուծումը թերևս ապագան ցոյց տար։ յուզուեցան, և ահա այն ատեն ազգն ու եկեղեցին վտանգի մէջ է ընելով՝ միապետական դրութեան բարեկամներն և կրօնական դասը նորէն միացան հրապարակաւ, և Սահմանադրութիւնը վէճի տակ ձգելով՝ հանամտութեան խնդիր մը բացին՝ որուն հետևեցաւ, իբր պարտութեան հետևութիւն մը՝ իրաւաստութեան խնդիրն, որ պատրուակ մ՚էր քաղաքական ժողովին կործանումը պատրաստելու համար։ և 'ի վերջէ Սահմանադրութիւնը թակարդն ընկաւ. . . .։

Այո, եթէ այս պարագաներն այսպէս վեր 'ի վերոյ նկատենք՝ պիտի ըսենք որ՝ թէ կրօնաւորը, թէ ազնուականն և թէ ժողովուրդն իրաւունք ունին. բայց միթէ այս ըսելով կարող ենք նաև պնդել թէ՝

այլ և այլ մարի և կուսակցութեան տէր անձինք քաջ ըմբռնած էին թէ Սահմանադրութիւնն ինչ է և մեր ինչ եղաւակի պիտի ծառայէր։ — Ոչ։

Ըստ որում եթէ ընդհանրապէս ազգը քաջ համոզուած լինէր որ Սահմանադրութիւնն ուրիշ բան չէ բայց միայն ազգային գործերու օրինաւոր տեսչութիւն մը, եթէ գիտնար որ իր եկեղեցական գրութեան մէկ բնական արդիւնքն է, եթէ իր ազգային և կրօնական շահուց և ինքնօրինական իրաւանցն ու պարտուցը վրայ լուսաւորուած լինէր, եթէ իր ազգայնութեամբը, լեզուաւն, եկեղեցիովն և պատմութեամբն իր բարոյական կշիռն, ոյժն և արժանապատուութիւնն և տէրութեան տուած արտօնութեանց արժէքը ճանչցած լինէր, եթէ առ Օսմանեան պետութիւնն ունեցած հաւատարմութեան կապն որքան պինդ և անկեղծ՝ և իր յառաջադիմութեան պայմանները նոյն տէրութեան բարօրութեան պայմաններուն հետ որքան սերտիւ կապուած լինելը զգացած լինի չափ բայսարէր, ոչ 62ին յունիսի դէպքը կ'պատահէր, և ոչ 66ին մարտի 20ին վարչական պատահարը։

Եւ ինչ էր առջի եռանդին և վերջի վարանման պատճառը։ Պատճառն՝ ոչ հանրական տգիտութիւն մ'էր, ըստ որում Սահմանադրութեան խորհուրդն ու պէտքը քանի տարիէ 'ի վեր ամէն միտք, լեզու և լրագիր կ'յուզէին և մեր կրօնական գրութեան միջական հետևութիւնն էր. ոչ ազգային բարուց և վարուց անյարմարութիւնն, ըստ որում իր եկեղեցական ապատուներն որոշելու և ընտրելու իրաւունքը վայելող ազգ մը կ'ենթադրէ որ քուէարկութեամբ իր աշխարհական պաշտօնակալներն ալ սահմանել գիտէ, ոչ անմիտութեան ոգին, ըստ որում անցուր հալածանաց դիմադրաւ կենալով՝ մինչև այսօր ապրող ժողովուրդ մը՝ պատմութիւն 'ի ձեռին կրնայ ցոյց տալ որ արդար և օրինաւոր գաղափար մը համար պատրաստ է մի սիրտ և մի հոգի կրելայլ էական պատճառն էր անհիմն երկիւղ մը, արհամարք մը՝ գարաւոր գերութեան և թշուառութեան իբր հետևութիւն՝ ներքին բարոյական ազատութեան կամաւոր ուրացութիւն մը։

Այս բարոյական ներքին զօրութիւնն 'ի սկզբան ազգը յանձնեց այնպիսի անձերու, որոց հայրենասէր ոգւոյն, հանճարին և քաղաքական փորձառութեան վրայ համարում ունէր, որպէս զի Տէրութեան շնոր-

հած արտօնութեանց, իր սեպհական իրաւանց և ժամանակին ոգիին համեմատ՝ ազգային կառավարութեան գլխը դէպ 'ի յառաջադիմութիւն ուղղեն։ Այս յանձնառարութեան ուժովը Սահմանադրութեան հեղինակներն իրենց պաշտօնն առարկին և գործադրութիւնն ազգին յանձնեցին։ Սահմանադրութեան յայտնի և թագուն թշնամիներն այս հանրական և լուն շարժումը տեսնելով ապ 'ի բերան կկոյան և ազգին կամքը յարգելու դիտմամբ՝ նոր Սահմանադրութիւնն ալ յարգել կեղծեցին։ Ժողովուրդն այս կեղծաւորութենէն խաբուեցաւ և միամտաբար իր կամքն և Սահմանադրութեան գործադրութիւնը յանձնեց իր զաղտնի թշնամիներուն ձեռքը . . . ։ Սահմանադրութիւնն առջի օրէն սկսաւ կաղն 'ի կաղ գնալ, անդուսալի արգելքներ օր ըստ օրէ երևան կ'ելնէին, շատ մը խնդիրներ, մանաւանդ առաջի խնդիրն, որուն որոշմանը Սահմանադրութիւնը պիտի քալէր, կամաւ անուծանելի կ'մնային։ Քաղաք, աղաղակ, յայտարարութիւններ ելան ժողովրդեան կողմէն, նոյն ինքն ժողովուրդն ուզեցաւ և իր Սահմանադրութիւնը պաշտպանեց, սակայն երբ տեսաւ որ անլուր զրպարտութիւններ կ'աեղան իր վրայ, երբ տեսաւ որ բանտարկութիւնն իր ամենէն անմեղ զաւակներն իրեւ ապստամբութեան հանդէս կ'ներկայացնէ Տէրութեան առջև, երբ տեսաւ որ նոյն իսկ Սահմանադրութեան հեղինակներն իրենց պաշտօնական գիրքը փոխելով՝ փոխած են նաև իրենց հանգամանքն և հայրենասէր ոգին, անհնարին վնասութեան մէջ ընկաւ, երկիւղը գինքը պաշարեց, առ Տէրութիւնն ունեցած հաւատարմութիւնը ցոյց տալու համար իր գոյութիւնը զրեթէ մոռցաւ և իր իրաւունքը պաշտպանելու համար բաց դուռ մը չգտաւ։ Իր թշնամիները պաշարեր բռներ էին ամէն պաշտօնական դուռ և ակռանջ, իսկ Ճարտասան և անվեհեր ձայն մը չկար որ պաշտօնական մթին մթնոլորտը պատռէ և Ճշմարտութիւնը լսելի ընէ . . . ։

Մեծ յատկութիւններ որ կարևոր են նոր հիմնարկութիւն մը սահմանելու, նոյն յատկութիւնները հարկաւոր են ժողովուրդի մը, կ'ըսէ Սգուրրդ Միլ, զայն պաշտպանելու համար։ Հայ ժողովուրդը Սահմանադրութիւն մը հաստատելու արիութիւնն ունեցաւ, սակայն զայն պաշտպանելու արիութեանը մէջ չյարատևեց։ Թէև այս արիութիւնն ոչ հուր, ոչ սուր և ոչ արիւն կ'պահանջէր, այլ միայն փաստաբան լեզու

մը, աղքին օգուտն իր անձնական շահէն վեր դասող առաքինի մարդ մը . . . մասնութեան դարանները կործանելու ձեռնհաս քաղաքագէտ մը։ Վասն զի ազգ մը, մանաւանդ հայերուն դիրքն ունեցող ժողովուրդ մը՝ որչափ մեծ և բուռն լինի ուղելու եռանդն՝ երբ այս եռանդն ուղղող հանճար մը չգտնուի, կ՚փարատի, կ՚մարի այն ապարդիւն. վասն զի երբ ժողովուրդ մ՚իր կամքը յայտնելու համար կ՚ընտրէ կամ կ՚գտնէ ակամայ՝ այնպիսի գործի մը, որ գաղտնի իրեն դէմ կը գործէ, այն ժողովուրդը տիտանական զօրութիւն ունենայ անպամ կը յաղթահարի։ Ասոնցպէս յաղթահարեցաւ վերջէն հայ ժողովուրդն ալ երբ տեսաւ որ իր ղղացմանց և փափաքանաց թարգմաններն են իր թշնամիները։

Սակայն ի՞նչ ընել պէտք է այսպիսի պարագայի մը մէջ, ուղղակի դիմել անոր որ Ճշմարտութիւնը լսելու տրամադիր և արդար դատաստան մ՚ընելու պարտաւոր է։ Այս մեր դատաւորը Տէրութիւնն է և մեր դատն արդար . . . ։

ԽԱ.

. . . 1866

Ինչպէս որ նախորդ դրոյն մէջ տեսանք, անտարբերութիւնը կործանեց վերջին անպամ Սահմանադրութիւնն, անտարբերութիւն մը, որուն աղբիւրն էր երկիւղը, Տէրութեան անհաստատութիւնը երևելու երկիւղ մը։ Այս անպամ Սահմանադրութեան ոտքերը խելացի և վարպետ փրթան։ Ի՞նչ ըսին ժողովրդեան. — Աշխարհ բաց, Սահմանադրութիւնը քեզի այնպիսի քաղաքական խնդիրներ յուզելու կ՚գրդէ, որոց լուծումը քու ձեռնհասութենէդ վեր է և պետութեան կ՚պատկանի, այնպիսի գործերու ձեռնարկել կ՚ստիպէ, որոց անօրէնութիւնը կրծնական ժողովին կ՚վերաբերի, այնպիսի խորհուրդներ յղանալ կ՚յորդորէ, որ միմակ քաղաքական դիրք ունեցող ժողովուրդ մը կրնայ յղանալ։ Զգոյշ եղիր, թերևս տէրութեան կասկածելի թուիս այս ընթացքովդ և անակնկալելի աղէտից դուռ մը բանաս։ Քաջ գիտէ որ

այժմ վայելած արտաքին թիւններդ, տունդ, տեղդ, պատիւդ և անձնական շահերդ ալ վտանգի մէջ չձգես Սահմանադրութեամբդ և Թուսիայէն գաղթող Վրացիներուն պէս դու ալ տար աշխարհներ գաղթելու չբռնադատուիս . . . : Ինչ ըսին Տէրութեան : — Հայ ժողովուրդը զարմանալի (անայլայլ) ժողովուրդ մը դարձեր է . Սահմանադրութիւնը գործադրել չգիտէ, անոր էական արտաքին թիւններն անգործադրելի կ'մնան, Վարչութեան դլուխը խել մ'անոյշաան անձեր անցեր՝ ՀԱՆ ԲԱՆ ԽՈՒՆՈՒԼԸ ԿՅԱՆՔՆԻՆ . կրօնական ժողովը քաղաքականին դէմ կ'դանդաղի և Ս. Պատրիարքը կ'հրաժարի . գաղտնի ընկերութիւններ կան որ Զէյթունի անցեալ մէջ մեռա ունին . . . : Պէտք է նոր ձև մը տալ Սահմանադրութեան :

Եւ իսկոյն Բ. Դոնէն հրամանագիր մը կ'հանի որ ազգային պատրիարքարանը քաղաքական գործերու չխառնուի . ուրիշ հրաման մ'ալ կ'ելնէ որ Սահմանադրութեան դաղարումը կ'մնէ . ուրիշ մ'ալ, որով քանի մը հայեր իրար խառնարար և ապատամբ կ'բանտարկուին նոյն միջոցին իսկ . . . :

Ժողովուրդն ահ ու դողով կ'լսէ այս դիտողութիւնները, կ'դիտէ այն դէպքերն, և անոնց յարակից բռնական և պատրաստուած պարագաները . բարդիները, մանաւանդ անոնք որ Համիտեան ինդրոյն հաստատիս էին և մանաւորապէս Մ-ան, այս վարչական պատասխանն իրրև ազգին փրկութեան նոր թռուցիկը կ'ասեն և գեղեցիկ օրեր յուսալով նոր կուռ առջև ծունր կ'դնեն . . . :

Սակայն եթէ ժողովուրդը դիտար որ Սահմանադրութիւնը պաշտպանելով ազգին օգտին հետ Տէրութեան օգուտը պաշտպանած պիտի լինէր, միջոցները միանգամ իրենց անձնական կիրքը, փառամոլութիւնն և շահը յագեցնելու համար կատ կատ կ'լինէին, եթէ դիտար որ դիտմամբ կամ անդիտութեամբ թիւր կ'ըմբռնեն Սահմանադրութիւնն անոնք՝ որ կ'կարծեն թէ անով անհատասիրութիւն էրեւին Տէրութեան, քանի որ Տէրութիւնն իսկ սահմանադրական սկզբունքն ընդունելով՝ օր ըստ օրէ անոր գործադրութեան կ'դրաղի Ֆէլիչիանի նոր գաղափարի բաժանմամբ, այն ատեն իր անհիմն երկիւղը կ'փարատէր և օրինաւոր կերպով կ'ցուցնէր Տէրութեան թէ ոչք անոր հաստատիս են, և ոչք թշնամի և փառամոլ . . . :

Զեմ ուրանար որ ազգին մէջ պեռ կ'գտնուին այնպիսի միտքեր անձեր որ Սահմանադրութեան բառէն անդամ կ'վախնան՝ կարծելով թէ՝ անհաւասարութեան հանանուն է, վերին իմաստութիւն է, պարպեա մ'է մինակ Եւրոպայի յատուկ, յեղափոխութիւններու դրդիռ է և աբեան ծարաւի . . . և կ'երթան Սահմանադրութեան դիտուն, այլ անհաշտ թշնամիներուն դունդը կ'սատարեցնեն և բարութեան գործ մ'ընելու երազով անձնական շահու և փառասիրութեան ձեռքն անհոգի գործիներ կ'դառնան։ Եւ սակայն ազգի մը մէջ այժմ սահմանադրական սկզբունք մը մուտ ունենալու համար ոչ խռովութեան, ոչ աբեան կ'կարօտի, որովհետև արդարութեան և իրաւանց վրայ հիմնեալ հշմարտութիւն մը լինելը շորս տարեկան տղան աղ դիտէ, որովհետև ամենուրեք լուելեայն յաղթանակներ կ'տանի, որովհետև ազատութեան անթիւ մարտիրոսներու արեան դիմն է, որովհետև այժմ թնդանօթը կ'լռէ անոր առջև։

Եւ իրաք ինչ է Սահմանադրութիւնը, բայց եթէ՝ [illegible] մը՝ որուն [illegible] է պարտը. [illegible] մը՝ որուն [illegible] է իրաւունք. կամ առելի պարզ խօսելով՝ բնական, կրօնական և ընկերական իրաւանց վրայ հիմնուած քաղաքական օրինաց արդար անօրէնութիւնը։

Ամէն քաղաքական իշխանութիւն երկու դլխաւոր մասս կ'բաժնուի. [illegible] և [illegible]։ Օրէնադրականն է օրէնք շինող իշխանութիւնը, գործադիրը՝ նոյն օրէնքը գործադրողը։

Երբ այս կրկնակի իշխանութիւնները մէկ անձ կ'վարէ, վարիչը կ'բաղի թագաւոր, վեհապետ, կայսր, բռնաւոր, այսինքն Արշակ մը, Նէրոն մը, Լուի ԺԴ մը։ Երբ այն իշխանութիւնները կրօնականները կ'վարեն յանուն Աստուծոյ, կառավարութիւնն աստուածպետական կ'անուանի և անոր դլուխը կ'լինի Մովսէս մը, Պապ մը, Պրահման մը, մեծն Պետրոս մը. երբ ժողովուրդն ուղղակի կամ անուղղակի կերպիւ կ'մասնակցի իշխանութեան, այս կերպ կառավարութիւնը կ'կոչուի ռամկապետութիւն կամ հասարակապետութիւն, որոյ դլուխը կ'կանդնին Թէմիստոկլէս մը, Արիստիդես մը, Պրուտոս մը, Մարիոս մը, Տանդոն մը, Վաշինկդրն մը։ Սակայն երբ այս զանազան կառավարութեան ձևերը կ'բարեխառնին, երբ թագաւոր, աշնուական, կրօնականական և ժողովրդ. սահմանեալ օրինաց շինութեան մասնակցելով երկու իշ-

խանութիւնները կ'վարեն, այս վաճառութիւնը կ'կոչուի Ս-հմ-ն-դ-ի-ն կամ Էջ-ֆ-ֆ-ն-ի-ն։

Բայց ըստ որում ամէն ազգի մէջ միապետական և հասարակապետական կառավարութիւնները մի և նոյնը չեն, նոյնը չեն նաև սահմանադրական դրութիւնները գործադրութեան եղանակը։

Եթէ հին և նոր աշխարհի սահմանադրական դրութիւնները գործադրութեան եղանակը քննենք՝ պիտի տեսնենք որ ամէնքը քիչ շատ միապետական, հասարակապետական և աղնուապետական տարրեր իրենց մէջ կ'պարունակեն։

Լիկուրգոսի օրէնադրութիւնն՝ որ հիմնուած էր ռազմավարական էր, երկու թագաւոր կ'ընդունէր և վերջէն եղան էֆորներն՝ որ մէն մի բռնաւորներ դարձան։ Սպարտի հասարակապետութեան մէջ Արէոպագոսի ատեանը կար, որուն որոշումներն, երբեմն ազդար, պատգամի զօրութիւն ստացան։ Հռոմի հասարակապետութեան մէջ դրէքները կային, որ շատ անդամ ծերակոյտը, հիւպատոսներն ու ժողովուրդն իրենց անձնական շահերուն և կրից խաղալիկ կ'ընէին։

Արդի քաղաքակիրթ ազգերէն շատերն, որոնք Սահմանադրութեամբ կ'պարծին՝ իրենց գլուխն ունին, մերթ կայսր մը, ինչպէս Գաղղիա, մերթ թագուհի մը, ինչպէս Անգղիա, մերթ թագաւոր մը, ինչպէս Բրուսիա և Խաչիա, մերթ նախագահ մը, ինչպէս Ամերիկայի Միացեալ Նահանգն և Հէլվէտիա։ Իսկ թէ Եւրոպայի և թէ Ամերիկայի սահմանադրական իշխանութիւններուն ներքին բաժանումն և գործադրութեան կերպն աւելի զգալի տարբերութիւններ կ'ընծայեն։

Սակայն ինչ որ լինին այս տարբերութիւնները սահմանադրական սկզբունքը չեն զեղծեր. սկզբունք մը՝ որ օր ըստ օրէ բռնական կառավարութիւնները մէջ անդամ կ'սպրդի և որուն նշանակական և զգալի արդիւնքն է, օրէնադրական և գործադիր իշխանութիւնները բաժնել, ժողովուրդն՝ իր մասին, բարոյական և նիւթական յառաջադիմութեան չափովը՝ նոյն իշխանութեանց կազմութեան հաղորդ և մասնակից կանդնել և պաշտօնական մարմինները ժողովրդեան և ժողովուրդը կառավարութեան առջև պատասխանատու ընել, իրարանցիր մասը փոխադարձ իրաւանց և պարտուց յարաբերութեամբ իրարու հետ կապելով։

ԽԲ

. . . 1866

Արդ՝ այս սահմանադրական սկզբունքն, իր նախնական պարզութեան մէջ, ոչ յատուկ աշխարհի մը սեպհական արտօնութիւնն եղաւ, ոչ մանաւոր երկրի մը մէջ բնակաւ. ոչ՝ ի վերուստ ընկաւ իբր երկնային ընդհանրական մը, ոչ իբր նոր հաղուստ մը ձևելով այս կամ այն ժողովուրդին տրուելու որ հագնի, այլ մարդկային ազգին հետ ծնաւ, բանականութեան, դատողականութեան և ազգային ներքին հիմնադրութեանց (institutions) հետ ոյժ առաւ, բարուց ու վարուց հետ զարգացաւ ու արմատ բռնեց։

Եւրոպայի քաղաքագէտները կ՚ուզեն որ սահմանադրական սկզբունքը Գերմանիոյ անտառներէն ծագած, Անգղիա անցած ու անկից բոլոր Եւրոպա տարածուած լինի։ Սակայն ստէպ Գերմանիա արշաւող ժողովուրդներն ուսկից եկած են և սերած՝ ոչ ապաքէն այն Կովկասեան ազգերէն որոց որորանն Արարատեան աշխարհն էր։

Հայկազանց իշխանութեան նահապետական կառավարութիւնն ինչ էր, բայց եթէ սահմանադրական դրութիւն մը իր ամենապարզ վիճակին մէջ։ Եւ արդարև Հայկազն նահապետը, ժառանգական գործադիր իշխանութիւնը, թէև ժողովուրդին կողմէն հաստատուած դրաւոր օրինաց համեմաս չէր վարեր իր պաշտօնն, ինչպէս կ՚ընեն արդի սահմանադրական իշխանները, սակայն՝ ի պահանջել հարկին, երբ արտաքին պատերազմի, տոհմային վէճի, հանրական խնդրոյ մը վրայ որոշում մ՚ընել և ըստ այնմ գործելու կարևորութիւն մը տեսնուէր, նահապետն ինքն իր գլխին չէր որոշեր և շարժեր, այլ ժողովուրդին վստահութիւնն և համարումը վայելող՝ և հետևապէս ընդհանրութեանը տոհմանուած՝ տանուտէր, աւագանի, ծերունի կ՚կոչէր, կը խորհրդակցէր և անոնց հաւանութեամբն ու աջակցութեամբը Հայոց աշխարհին օգտակար դատուած բանը կ՚կատարէր։ Եւ ահա այս խորհուրդն ու գործակցութիւնն օրէնսդրական իշխանութիւնը կ՚կազմէին։

Պատմութիւնը Հայկազն նահապետներէն շատերն իրրև անգործ և աննշան մարդիկ կ՚ներկայէ մեզ։ Եւ ինչո՞ւ համար, որովհետև սահմանադրական դրութեան մէջ գործողն իշխանը չէ, այլ ժողովուրդն ուղղակի կամ անուղղակի կերպով. և ժողովուրդ մը իր այս դրութեամբն աւելի հակամէտ է ու ջանադիր իր ներքին անդորրութիւնն և

բարօրութիւնն ապահովել, քան փառաւոր ու վսանդալի ձեռնարկութիւններու մէջ մտնել. որովհետև արևելեան պատմագիրներն աւելի օրինաւոր կ՚դատեն իշխանի մը գործերը՝ թէև վատ՝ պատմել, քան ժողովուրդի մը ապարրը, բարքը վարքը, թէև ամենակարևոր։

Եւ սակայն ազգային այս նահապետական վիճակն երկայն կեանք չունեցաւ. ինչպէս ամէն ընտիր և ճշմարիտ սկզբունք, որ մարդկային սեռին հետ ծնած է և ապա կրից բռնութեան ներքև ճնշուած՝ մնաւանդ Արևելքի մէջ՝ որ անհնարին քաղաքական և կրօնական յեղափոխութիւններու թատր եղած է, նոյնպէս Հայկազնեան իշխանութիւնն առ հարկի փոխեց իր բնիկ յատկութիւններն և մարական, պարթեւական, պարսկական օտարոտի տարրերու խառնուրդ մը դարձաւ, մինչև որ քրիստոնէութիւնը զալով՝ սահմանադրական սկզբունքն՝ աւելի կենսատու ու լուսաւոր գոյներով՝ տուր Լուսաւորչի գահը նստեցուց։ Այս, հայոց համար նոր սահմանադրական թուական մը բացուեցաւ երբ սկսան իրենց հայրապետներն ընտրել։ Այս կրօնական յեղափոխութիւնը քաղաքական իշխանութեան վրայ ալ ներգործեց և հայ թագաւորներ ու նախարարներ տէր ջանացին ժողովուրդը գգուել ու շահիլ, որպէս զի իրենց գահէն չտահին. մանաւանդ եկաւ ժամ մ՚որ Հայաստան այս սկզբունքով իբր մի մարդ դարձաւ և բոլոր հայրապետներն և իշխանները յառաջմղելով՝ իր կրօնական և քաղաքական ազատութիւնը պաշտպանելու համար Պարսից տէրութեան դէմ ճակատ բռնաւ։

Իսկ երբ Հայաստան իր քաղաքական դիրքը կորոյս և հայկական գաղթականութիւնները սկսան՝ եկեղեցին պահեց այն սկզբունքն, որ հայերուն, թէև ցիր ու ցան, բարոյական միութեան, կենդանութեան և յարատևութեան մէկ էական պատճառն է։

Բայց երբ մէկ կողմէն եկեղեցականներն, որ Հայ ազգին առջև բարոյապէս ու այլ և այլ պետութիւններու առջև քաղաքականապէս պատասխանատու հովիւներ էին, օգ ու երկիր փոխելով՝ սիրտ ու հոգի փոխեցին, երբ հայրենի երկրէն հեռանալով՝ իրենց իրաւատութեան սահմանն և իշխանութեան ծաղ ու մը մուցան, երբ մուցան նաև որ, դատն տարկութեան մը մէջ մնաւանդ՝ իրենց նոր իրական պարտաւորութիւնն էր ժողովուրդն եկեղեցիին հովանաւորութեան ներքև պահելու

ջանալ և իրենք ժողովրդեան շուքին ներքև պահուիլ, երբ կեղրոնա-
կան իրաւասութիւնէ խառնելով՝ իրբ ինքնուրոյն հեղինակութիւններ՝
եկեղեցոյ խնդիրներ առանց ժողովուրդի սկսան յուզել, երբեմն ալ
լուծել և անոյշապես պապականութեան հոգեապան թոյնը ծծել Մխի-
թարեանց քարոյրէն եկած գրեան մէջ, երբ հայ իշխաններու և ազ-
դապետներու թեկն ածելով՝ օտար բռնաւորներու հայրենի եղ քսելին և
ազգային կրօնական իրաւունք, օրէնք, իրաւասութիւն անոնց ձեռքը
մատնելին, որպէս զի իրենց անարգական իշխանութեան հեռ
փառք, սասկ ու նշան տեսնան և մոլութեան տղմին մէջ անարգել
թաւալին. երբ մեզ կոչին ժողովուրդն օտարոտի բարոյ շատ հեշ-
տիւ յարմարելու արամադրութեամբը, մինակ իր անձնական ու ընտա-
նեկան ներքին հանդստութիւնն ապահովելու, մինակ սասկ շահելու և
դիզելու փափաքովն, ամէն անսակ բռնութիւններու դլուխ ծռեց, ա-
մէն անսակ ապօրինաւոր և անարդար գործերու վրայ աչք գոցեց,
այնչափ որ ասանն մը անմեղներու և դասելու կարողութիւնը կորաւ, երբ
իր եկեղեցոյ պաշտօնէից կրթութիւնն և ընտրութիւնը բռնութեան ու
բաղդին թողուց և հետևապէս անոր անասնձ աղաստութիւն մը տուած
եղաւ ըստ հաճոյս անօրինելու ազգին կենսական խնդիրներն, ահա այն
ատեն սահմանադրական սկզբունքն ալ մեծ հարուած մը կրեց և անու-
նը վերնալով մնաց սասերն, ինչպէս մնացած էր Ցանկարնակ Հայոց
վրայ Արարատեան մոյր Աթոռոյ իշխանութեան լոկ անունը։

Կամ ոչինչ, պատրիարք, իշխան, ազդապետ այսօր գահը կ'ելնէ-
ին, վաղը կ'իջնէին ինչպէս որ եկան անշշուկ, և ժողովուրդը միակ ա-
նոնց ՇՈՒՐՋԵՆ, կամ լաւ ևս ըսեմ, ամրարձման ու անկման լուրը
կ'առնուր, երբեմն մի և նոյն օրն, և հանդիսաւոր կ'կենար, որովհե-
տև զգալու, հասարակաց բարիքն և իրաւունքը ճանչնալու անձեռնհաս
էր կամ անզօր։ Ազդային եկեղեցի, ատենաւոր, վարժարան, հիւանդանոց
կ'կանգնեին, կ'աւերեին. ազդային կալուած, երբ ու մեռա ու եկա-
մուտ, կասկ ու վանք կ'շինեին, կ'ծախեին, կ'ուտեին, կ'խորտկեին, և
ժողովուրդը միակ ամիրաներ, իշխաններ, պաշտօնական ձիեր, շքա-
նշաններ կ'ուտեր հեռուէն, և անոնց բարերարութիւնները կ'հռչակ-
էր։ Այս՝ բանտ, այն՝ աքսոր, միւսը գժոխք կ'դրկուէր. օրէրը կ'լար,
մանկտին փաղոյները կ'մաբար, պանդուխտը պատրիարքարանին դռնէն

խաչ հանելով կ'մնէր, ժողովուրդը միայակ հրամաններ կ'լսէր և այս բարձր քաղաքականութեան գործերուն վրայ կ'զմայլէր . . . : Ընդհանրապէս գաւառներն անլուր հարստահարութիւններու ասպարէզ եղեր, վանքերն աւատական սեպհականութիւններ և մոլութիւններու գուբեր դարձեր էին, եկեղեցիները՝ վաճառատեղիներ, դպրոցներն՝ ախոռներ, և գաւառական խեղճ հայերը կ'հեծեծէին և ասոնք իրը երկնաւոր պատիժներ կարծելով՝ հոգին բերանը գալու չափ կ'տրնէին, կ'նեղէին ու լուռ ու մունջ կ'կենային. և մեր կողմի Հայ ժողովուրդն այս մեռելի հանդարտութիւնն իրը բարօրութեան նշան կ'փառաբանէր ու ծափ կ'զարնէր :

Իրաց այս վիճակը դարեր տևեց, այնպիսի դարեր որ կարող էին, չէ թէ Հայերուն պէս անպաշտպան և թշուառ ժողովուրդ մը, այլ աւելի արթուն, հուժկու և մեծ ազգ մ'անհետ ընել, ինչպէս եղան Իսպանիոյ, Լեհաստանի, Ռուսիոյ մէկ մասին Հայերն, իրենց սահմանադրական կեդրոնէն, Էջմիածնայ գահէն քակուելով, եթէ Օսմանեան պետութեան կրօնական և քաղաքական դիրքը՝ քրիստոնէից նկատմամբ՝ այն կորստեան վիճին եզրը թումբ չկանգնէր :

Իրաւ է որ ազգային բռնաւորները միշտ ծայրն և միօրինակ բռնաւոր չէին. մանաւանդ երբ իրենց մէջը գժտութիւն կ'ծագէր. վասն զի այն ատեն ժողովուրդն իրենց անձնական կրից, շահուն և հակառակութեան գործիք ընելու համար ընդհանուր ֆոլով կ'գումարէին, արքեպիսկոպոսներ դասերէն պատգամաւորներ կ'կանչէին, և իւրաքանչիւր կուսակցութեան պարագլուխ անոնց մէջէն կ'որոշէր և հրաւիրելու արժանի կ'դատէր այն մարդիկն, որոց լեզուն ու դլուխն արդէն ծախու առած էր, և կանխաւ գիտէր թէ՝ այն լեզուէն ինչ ձայն և դլխէն ինչ հով պիտի փչէ : Իրաւ է որ երբեմն անիրաւ և վատ գործերու օրինաւորութեան գոյն տալու համար, ամիրայ, պէյ, էֆէնտի խորհուրդ կ'կազմէին, ազգին տունը կ'առնէին կ'ծախէին, կ'կտրէին կը թափէին և ապա Ռ. Դուռը կ'երթային ու կ'ըսէին. — «Ազգին կամքն այս է :» Իրաւ է որ ուրեմն հանձարեղ պատրիարքներ և հայրենասէր իշխաններ երևան գալով՝ ժողովրդեան կամքը կ'յարդէին և ասոնք օգուտը կ'մտածէին, սակայն այս եղելութիւնները բաւական չէին սահմանադրական սկզբունքին, որ գրեթէ մեռած էր, կեանք տալու :

ԽԳ.

. . . 1866

Ազգային Սահմանադրութիւնն ինչ է՝— և ինչ էր, բացատրելէն առաջ՝ կ'ուզեայ մեզ փնտռել թէ ինչ դէպքեր։ Ըստ որում՝ քանի որ սահմանադրական սկզբունքն ու գիրն անգամ մը վերածնան, քանի որ ազգային պարտուց և իրաւանց հարցերը մարմին առաւ, քանի որ Օսմանեան պետութիւնն այս մարմիները կիրքց արքունական հրովարտակով, անհնար կ'թուի մեզի այստեղեւ յետոյ կոչել այս հրովարտակը, յետոյ կորզել այս իրաւունքը, միով բանիւ ատակել Սահմանադրութիւնն, որ ըսել է ուրանալ Հայ ազգին (Էրմենեան միլլէթի) գոյութիւնն։ Ազգ մը՝ որ Օսմանեան պետութեան հպատակներուն պատկանելի, գործունեայ, ուշիմ և հաւատարիմ մը կ'կազմէ։ Ուրեմն ազգային Սահմանադրութիւնն, եթէ ոչ ինչ որ էր 1863ին, դէթ ինչ բան մը 1866ին, կամ թէ որ կ'ուզես, ապագային մէջ։

Ազգային յեղափոխական շրջումները միանակ դրի, թղթի և հրովարտակի վրայ չեն կայանար։ Գիրը, թուղթն ու հրովարտակը կ'հետեւին և երբեմն բռնի կ'ծնին այն անհրաժեշտ պարագաներէն, զոր Նախախնամութիւնը կ'պատրաստատ, և որոց աղբիւրն է մարդկային բանականութեան, դատողութեան պիտոյին, իրաւանց և պարտուց Ճանաչումն և 'ի վերջէ օրինաւոր ազատութեան հակումը։ Պաշտօնական օրէնք, հրաման, յայտարարութիւն իրարու համաձայն կամ հակառակ հետզհետէ կ'արուին ու կ'առնուին, այսօր ազատութեան հանդէսը, վաղն անոր յուղարկաւորութիւնն 'ի պաշտօնէ կ'կատարուի. այսօր ազատական կրօնավարութիւն տեսակ մը բռնակալի կ'փոխուի և բռնութեան գործակալներ նոր նոր շղթաներ ու կոթողներ դարձնելու կ'ձգտին, վաղն այս կոթողներն ու շղթաները կ'խորտակին և նոր տեսակ վարչութիւն մ'իր արքանեակներովն երևան կ'ելնէ, սակայն այս արտաքին յեղաշրջումներու մէջ կայ բան մը, խորհրդաւոր զօրութիւն մը, ոյժ մը կայ մարդկային բնութեան յատուկ՝ որ երբ անգամ մը շարժման մէջ մտնէ, կ'նկրտի, լուելեայն կ'աշխատի, կ'տրնի և փնտռած

արահետը գտնելով՝ այնուհետև կ'քալէ միշտ, միշտ կ'յառաջադիմէ, և այս յառաջադիմութիւնն, որ մարդկային կատարելագործութեան մէջ ունի իր օրէնքն և շարժառիթը, յարատև ու անսասան է, այն յայտնի կամ թաղուն ճշմարտութիւններուն պէս, որոց գահը մարդուս հոգիին ու մտքին մէջ է։

Ահա այս գահն է զոր աշխարհիս բոլոր զօրութիւնները չեն կարող խախտել, այս գահն է որ՝ թէ շղթայի, թէ բանտի և թէ աքսորի մատնուած՝ կ'տիրապետէ արքայական սակեղծ գահերու վրայ, որովհետև բարոյական է, մտաւորական է, որովհետև ժամանակին պէս յառաջադէմ ու յարատևական է . . . ։

Այս յառաջադիմական օրինաց պատուղն էր նաև ազգային Սահմանադրութիւնն, որուն գիրը շղթոյնուած՝ ոգին կար մտաց ու բարուց մէջ։ Երկու անգամ գիրը ապանեցաւ, երկու անգամ մատնութեան և անտարբերութեան զոհ ընկաւ Սահմանադրութիւնը, սակայն անոր ոգին ու սկզբունքը չմեռան, որովհետև ազգին հոգին ու խելքը չկորան, Ուստի առաջին անգամ նորէն կեանք առաւ և այս երկրորդ անգամն ալ անշուշտ պիտի առնու նոր ձև մը, ազգային ներկայ վիճակին յարմարագոյն ձև մը, առանց իր ներքին հիմնական սկզբունքը փոխելու, զորս փոխելու նոյն իսկ ազգն իրաւունք չունի, ուր մնաց ուրիշ որ և է պաշտօնական իշխանութիւն մը։

Սակայն ինչ պիտի լինի այս նոր ձևն, ինչ նոր կերպարանք պիտի առնու Սահմանադրութիւնն, ահաւասիկ խնդիր մ'որ ամէն բանասէրի ու ազգասէրի միտքը կ'գրաւէ և լուծում մը տալու կ'աշխատի։

Եթէ մեր ստացած տեղեկութիւնները ստոյգ են, ինչպէս որ կ'հաւատանք, վերաքննիչ Ցանձնաժողովն ասկից վեց ամիս առաջ Սահմանադրութեան վերաքննութիւնն առաջարկ՝ և Բ. Դուռը զրկելու։ բաստութիւններ տեսնելով՝ պիտի առաջարկէ եղեր որ անգամ մ'ազգային Ընդհանուր ժողովին յանձնուի 'ի գիտողութիւն։ Սակայն վերաքննեալ Սահմանադրութիւնը քանի մը հիմնական կէտերու մէջ փոփոխութիւններ կրած է և աղնուապետական հոտ կ'բուրէ։

Ահաւասիկ նոր Սահմանադրութեան էական տրամադրութիւնները։ Պեղրոնական Ընդհանուր ժողովն 70 անդամ ունէր, որոյմէ 50ը (10 եկեղեցական) Պոլսէն ու 20ը գաւառներէն։ Եկեղեցական ան-

դամոց ընտրութիւնը ցուցակի մը սահմանէն՝ զոր բոլոր թաղական Ա-տենապետները Պատրիարքին նախագահութեամբն և Ժողովոյ հետ մէկտեղ գալով պիտի պատրաստեն, անդին չպիտի անցնի։

Քաղաքական Ժողովին 7 հոգիէ բաղկացած դէպ ի լինի. չորս խորհրդոյն անդամ և երեք պաշտօնական, որ են Տնտեսապետ, Գանձապետ, Ուսումնապետ, որոնք պիտի կրնան ըստ քմաց ընտրել և վաւերել տալ Ժողովին ամբողջութեան՝ որ լիաքանչիւր պիտի կոչուի։ Դատաստանական խորհուրդը պիտի մնայ, և քանի մը ինամակալներ (հոգաբարձութիւն), ինչպէս կտակայ, և այլն։ Ընտրող և ընտրելի դէպ ի լինի միայն գէթ 150 դրուշ տուրք տուող և 30 տարին լրացուցած ազգային. իսկ օտար տէրութեան հպատակներն ալ քուէարկութեան մասնակցելու իրաւունք պիտի ունենան։

Ինչպէս որ կ'երևի, այս դէպ ի լինի գալիք նոր Սահմանադրութիւնն, որուն մէջ իրաւամբ վարչական մարմնոյն պարզուած է, և առանձին մը պաշտօնական (ministère) կազմուած է իբր քրիստոնէական, փոխանակ Քաղաքական Ժողովի, որ լոկ անունը կ'պահէ անցեալ տեղ կերպով, սակայն ազգային ընտրական իրաւունքը զգալի կերպով սեղմուած, դատական երեսփոխանաց թիւը նուազած է, անշուշտ հեռատեսութեան դժուարութիւններու յաղթելու մտօք՝ 'ի թնաս դատաբանակ հայոց իրաւանց, և այս նոր շէնքը վերջապէս օլիգարքիք (oligarchique) դրութեան և համարձակ ոսկրուտքին բեկորներուն վրայ բարձրացած է. շէնք մը՝ զոր մեր եկեղեցական դրութեան հետ դժուարանալ պէտք էին մեր օրէնսդիրները։

ԽԴ.

Կ. Պոլիս, 9 յունիս 1866։

— Խակոյն Հրամանը կատարեցի, շարունակեց լեզուանի Պարոյը։ Նաղելի կոյսը կարմիր դրպլեակ մը հագաւ, ծիրանի գօտի մը մէջքը կապեց, մազերն ամփոփեց վարսակալի մը մէջ. մէկ ձեռքը վահան՝

միտը դաշոյն մ՚առաւ և իրր նոր Աբէս մը յառաջ անցաւ անվեհեր։ Եռանէն դայլի ակնկոր. թէև մ�թ՚ կ՚տեսնէի, թէև քարուտ ու փշալի էր շուխը՝ շիտակ կ՚քալէի, թէև անորոշ և անյայտ էր նպատակս՝ կարծէի թէ ապագային մէջ լուսաւոր ատաղ մը կ՚նշմարեմ . . . ։

Ցանկարծ կանկ առաւ նա հոյակապ տաճարի մ՚առջև, որուն ճակատը գրուած էր ՁԷ, այսինքն ԷՌ։ Բոլորակի քարկիր շէնք մ՚էր այն սիւնազարդ և հովանոցի նման գմբեթով մը։ Պատերը սև, վրան կարմիր, կանաչ փիղեր, առիւծներ ու վիշապներ նկարուած էին։ Գմբեթէն ճար մը կախուած էր, որ սև լոյս մը կ՚սփռէր։ Վերի կողմն ոսկեզօծ գահ մը կար, երկու դին վեցական աթոռներ, մէջտեղը սեղան մը ձուաձև և բաց մատեան մը անոր վրան։

— «Գիտե՞ս ինչ է այս, ըսաւ հրեշտակս։ Ատեան մը՝ որուն ատեանակալները գահիճներ են և ամէն օր անմեղ հոգիներ տանդարամտ կ՚գրկեն ՓԷՐ-ՓԷՆ ԷՐ ՇՈՒՐՆ ՆԷՐՍԷ։ Այս գիշեր խորհուրդ կայ, կայ անշուշտ նահատակ մ՚ալ, որմէ փրթիտ այն ահռելի աղաղակը . . . նեղս մտնենք. այնչափ խաւարին է վայրս որ լոյսն անտեսանելի է և սեղրեաս դատաւորներուն աչքն ու հոգին կուրցած են . . . նեղս մտիր . . . ։»

Ան ու դաղով քանի մը քայլ առի և երբ սեղանէն վար նորատի սիրուն պատանի մը տեսայ, որուն ձեռքն ոտքը կապած կ՚հեաբ և ՓԷՐ-Մ՚ԷՆ անոր սիրտը հրաշէկ սուր մը կ՚խօթէր, այլ յայլմէ եղած հրեշտակիս թեւին տակը մտայ . . . ։

— Սիրտ առ և գիտէ, ըսաւ նա, հիմակ ատեանը պիտի բացուի։

Եւ իրաք գաղանի դունէ մը կապիկի նման մարդ մ՚երեւցաւ և սեղանին վրայ թեթև ցատկեց ու պոչը անկեց։ Եռանէն ալեզարդ ծերունի մ՚եկաւ ու իր գահը նստաւ. հետզհետէ աթոռները լցան և չորս սեւադէմ ատատանները, որոց դէմքը քաջ ճանչցայ, գահին բոլորն առին կեցան լուռ ու մունջ . . . ։ Ինքզինքս գերեզմանի մը մէջ կ՚հանարէի. կ՚տեսնէի կենդանի մեռել մը մէջտեղ կանգուն, որ էր թշուառ ու աբիւնլուսայ պատանին, և չորս կողմը, չէ թէ դաղաններ, որդեր, առղուններ՝ որ գէթ հոգին տակ դիակ մը կ՚կրծեն ու կ՚կրծեն լուելեայն և հոգիի հետ գործ չունին, այլ կ՚տեսնէի մարդու կերպարան ունեցող ճիւաղներ, որոց շարժումը գոյժ մ՚էր, նայուածքը՝ մահու գո-

շակ, տեսքը՝ գժոխային և որ հում հում կ'ուզէին ուտել մարդու մը սիրտն, որուն մեծագոյն մեղքն էր, ինչպէս որ եղբէն խնայել, զղջալ, խորհիլ և ապաստրէն խօսիլ . . . :

Դասիկն առեանը բացու և սկսաւ խօսիլ, ինչպէս խօսեցաւ երբեմն օձն Եւային, ու էշը Բալաամին, հեռեապէս շատ բան չհասկրցայ . . . : Իսկ հրեշտակս — «Ընչքդ չորս բաց ու լաւ դիտէ, ըսաւ. նկատէ անգամ մը թէ ազատութիւնն ինչ անհաշտ և անողորմ թշնամիներ, հրէշներ ունի իրեն դէմ մարդու դիմակով : Եթէ ըսեմ որ Զինական մեծ պետութիւնն այժ առեանին վրայն համեմատ կ'կառավարուի, պիտի ըսես և դու անշուշտ որ այս առեանը ծանրակշիռ և փափուկ խնդիրներով կ'պարապի, որոց լուծումը տէրութեան օգուտ ու բարօրութիւն պիտի բերէ. ոչ երբէք : Այս հրէշներն արդարութեան և իրաւանց նշոյլն անգամ չունին. թաղեր են ազգային շահն ու ապագան իրենց կրից մէջ, դատապարտեր են ժողովուրդը տգիտութեան ու թշուառութեան, մատներ են զանի գայլերու բերանն, ուրացեր են իրենց հաւատքն ու Աստուածն և միանակ ազատութեան սերմը նորաբոյս սիրտերու մէջ այսպիսի հրաշէկ սուրերով չորցընելու կ'աշխատին . . . ամէն ժամ իրենց իշխանութիւնը, փառքը, հարստութիւնը մարդկային դիակներու, տերականներու վրայ հիմնելու կ'աշխատին, մարդկութենէ զուրս՝ մարդիկը հովուելու յիմարութիւնն ունին : Պէտք ու Մանաւանդ թէ թեւի տուած անգամ կը ծծեն ողորմելի ժողովուրդին արիւնն ը-դ-գ-ը-ջ ըսելով ջուրի տեղ արիւն կ'խմեն, հացի տեղ մարդու միս կ'ուտեն, անկողնի տեղ՝ արիւնալի դիակներու վրայ կ'պառկին և ժողովուրդն որ կ'սպասէ, ինչպէս կ'սպասեն գառնուկները ապանդարանին դուռն, այս գառնուկներուն չափ չկան, որ քանի գահ՝ին մերկ ու շողուն դանակը տեսնեն՝ աչքերնին կ'գառնայ, կ'ցասկրտեն, կ'գալարին և մարդու դէմքով ներկայացող անբնական մահուան դէմ խեթկելով կ'մաքառին . . . . :

«Կ'տեսնեմ սա կասիկն, որ քիչ մը միտս է, և չորս դին կ'նայի ապայէլի քմծիծաղով, թէև իրաք ոսկի, որս մը յափշտակելու կը նայի, այս պետութեան սիւնն է և սատանային առջևի ոտքը . . . : Միւս սատանաներն իր ոտին մէջն են, ամէն խնդրոյ լուծումն իր

» շրթերուն վրայ , ազատութեան բաղդն իր գրչին ծայրն . . . : Իր
» շարժումը հրաման մ՚է , շունչը՝ վճիռ մը , խօսքը՝ պատգամ , թէև
» շարժումը նոյնպէս շունչն ու խօսքը ֆանդոքէ առաջին ազդեցութիւնն
» ունին , փոյթ չէ . . . : Իրաւունքը խմոր մ՚է , որուն ուզած ձևը կը
» տայ , արդարութիւնը՝ բառ մը՝ զոր ամէն ոք կ՚հնչէ , ազատութիւնը՝
» ձայն մը՝ որ միանակ ականջին կ՚զարնէ . . . : Իսկ գահակալը՝ Ճիաճն
» է . կ՚տեսնե՞ս ինչպէս կ՚ննջէ , թէև իր քունը նապաստակի քունն է :
» Երկրիս վրայ միակ փառասիրութիւն մ՚ունի , այն է երևիլ ինչ որ
» չէ , խօսիլ ինչ որ չհաւատար , քարոզել ինչ որ կ՚ծաղրէ , գործել ինչ
» որ գործ չէ , պահել ինչ որ պահելի չէ : Իր ներքին հանդուրմն ա-
» փին մէջն է , կարծիքն՝ օդին մէջ , ձայնն՝ ամենուն ձայնն : Ի քուն՝
» յեսին խնամատարն է , արթուն՝ յեսին յիմարն ու ապուշն : Երբէք
» չվճռեր , վասն զի ճշմարտութեան և արդարութեան հաւատ չունի ,
» երբէք չհրամայեր , քանզի սրատեսութեան գլուխ չունի ,
» երբէք սիրտ չբանար , քանզի սիրտ չունի և առաքինութեան վրայ
» կարծիք մը . . . : Իր նաւին կողմնացոյցն անձնական շահն է , որուն
» վրայ կ՚դառնան իր գլուխն ու մարմինն , ինչպէս կ՚դառնայ անդամ
» բևեռաձևակ մարդուն ատուերն իր բոլորտիքը . . . :

«Սակայն ունի նաև թևեր ու ոտքեր որ իրեն տեղը կ՚շարժին : Ահա
» բոժոժաւոր սատանան որ ազատութեան ծակն ու ծուկը գիտէ , լրտես-
» ներ ունի և ամէն տուն ինչ կ՚անցնի , ինչ կ՚խօսուի , կիներն երկան հետ
» ինչ կ՚ընէ , սիրահարն որ գունէն կամ պատուհանէն ներս կ՚մտնէ ,
» կայսրը գիշերն որ կողմին վրայ կ՚պառկի , արքունի գանձն ով կ՚կո-
» ղոպտէ գիտէ , գիտէ թէ վաղն ով պիտի մեռնի , միւս օր ով պիտի
» աքսորուի . . . : Իր գրասենեակն առանձին , ազգային ու վարչական
» գործերու օրագրութեան դարան մ՚է և գլուխը սև սև խորհուրդնե-
» րու պահարան մը . . . : Ահա երևակի նշանով մերոբական հրէշն ալ ,
» որուն միակ պաշտօնն է գրպարտել , ու դարձեալ գրպարտել . . . իր
» լեզուն իմ մ՚է , գրիչը՝ պիծակ մը , իր տիրական կիրքը՝ կրծոք մը՝ ո-
» րուն վարձկանն է , իր գործին՝ թուղթ մը , որ մեռելի փառութիւնն
» ունի , իր լոյսը մոգական լապտեր մը՝ որով պատմութեան գերեզման-
» ներն մէջ սատակներ ու դիակներ կ՚վեռուէ , հաւատաքննութեան խա-
» բոյկներու մեխերը կ՚խառնէ որ կայծ մը գանէ և բոլոր աշխարհը

» կրակի տայ, ինչպէս կ'ջանայ կենդանի այրել այն աղաստաէր երի-
» տասարդութիւնն որ Զինաստանի ապագան է։ Ահա սրամէտ խոյր
» մը, որ երեւակին արբանեակն է և անոր շուրջը կ'դառնայ. ինքնին
» անոյշ մարմին մ'է և դէշերէ գոյացած ժահահոտ շրջմոլիկ շողը
» կ'առնու և անով ժողովուրդը լուսաորել կ'կարծէ։ Իսկ սա խոժոռա-
» դէմ մարդը կ'տեսնե՞ս որ դաշոյն 'ի ձեռին ապաստանելու հոգի մը կը
» փնտռէ, այս ատենին դահճապետն է . . . և . . . ։»

Նոյն պահուն կապկանման մարդը պոչն օրեց, որուն ծայրը զանգակ մը կար և քանի մը ծիծաղաշարժ շարժումներ ընելէն ետեւ՝ Ֆին–Մունին աչք ըրաւ։ Ֆին–Մունը սեղանին վրայի մատեանն առաւ ու կարդաց այսպէս.

«Ըստ որում Զինի կայսրն երկրի և երկնի տէրն է և աշխարհիս վե-
» հապետն, ըստ որում Ալթա լեռէն սատանայի զաւակ մ'ընկնելով և
» կրակէն խոյս տալով՝ ժողովուրդը կայսեր դէմ գրգռելու և աղաստա-
» թիւն թունալից որոմն անոր մէջ ցանելու ելաւ և հազիւ ձերբակալ
» եղաւ, ըստ որում այս չար սատանան իր մեղքը կ'ուրանայ, այս
» սուրբ ատեանս որոշեց որ հրաշէկ սուր մը քիչ քիչ սիրտը մղուի,
» տանջուի մինչև որ յանցանքը խոստովանի . . . ։

— Խոստովանեցա՛ իր յանցանքը, գոչեց դաշունի մարդը, թէ ոչ դեռ կ'յամառի . . . ։

— Ա՛յ, պատասխանեց Ֆին–Մունն, անսարան եմ, կ'ըսէ ու կ'դիմանայ ։

— Ուրեմն խարոյկը նետեցէք, ըստ կապիկն, այս հրէշը քանի շնչէ տէրութիւնը հանդիսաս պիտի չդանէ և արդէն դուրսը խլրատմ մը կայ, շո՛ւտ, խարոյկը . . . ։

— Թերևս նարէն փախչի, կարճ ճանրան դաշոյնի հարուած մ'է, ըստ սատանային մէկն և պատանիին վրան վազեց որ զարնէ . . . ։

Կայծակի պէս արացայ, թռայ և դահիճին թևը բռնելով՝ գոչեցի.
— Իրաւ անմեղ է այս պատանին, ես եմ յանցաւորն, եթէ յանցանք է աղաստութիւնը պաշտել, ահա իմ կուրծքս, զսպէ՛ . . . ։

Բոլոր ատենակալները զարհուրեցան։ Կապիկը բարձր տեղ մ'ելաւ և սկսաւ ակռաները ցուցնել և պոչին վրայ դառնալ. Շիամի մարեցաւ, սատանաները ծակէ ծակ փախան . . . իսկ ես մինչդեռ թշուառ

պատանիին շղթան կ'քակէի, ժողովրդեան մէկ մասն ազատութիւն, լոյս կոչելով՝ ներս մտաւ ջահերով. . . : Ինոր գլուխն էր հրեշտակս, որուն վահանը գոյնզգոյն կ'բեկբեկէր, աչքերէն կրակ ու բոց կ'ելնէր և արդարացի զայրոյթով մը գիմագրող գերիները թատրոնը կ'երէր և կ'սասակէր: Բոլոր տաճարն արիւնլուայ եղաւ, բռնակալութեան գաղտնի մեքենաները ջարդ ու բուրդ ըրին և առ օր փառ օր ազատութեան արձանը քարայրէն հանեցին և քաղքին մեծ հրապարակը անկեցին: Յաղթանակս վայելելու վրայ էի երբ իմ անհաշտ թշնամիս, բոժոժաւոր մարդը՝ վաշտ մը զօրքով գիս պաշարեց, բռնեց և ձեռքն ահագին լախտ մ'առած՝ գլխիս վրայ կեցաւ ու գոչեց.

— Կ'ճանչնա՞ս գիս անշուշտ, Աստուած անդամ, եթէ կայ, իմ ձեռքէս չազատիր, ուր մնայ դո՛ւ: Արդ՝ ուրացիր գաւանանքդ, ուրացիր ազատութիւնդ և մեղի դարձիր թէ ոչ այս լախտը գլուխդ պիտի ճզմէ:

— Ազատութիւնն իմ կեանքս ու հաւատս է, կ'անպտանեմ զէնքդ, ըսի անվեհեր, մինչդեռ հրեշտակս սիրտս առ կ'գոչէր . . . լախտն իջաւ, ըղեղս գուրս թափեց . . . : Ահա այն ատեն կոկորդէս խռնչիւն մ'ելաւ . . . աչքս բացի և երբ զքեզ հրացանով առջևս տեսայ, Վրոյր, կարծեցի թէ երազ է տեսածս, այլ իմ անհաշտ թշնամիս . . . :

— Է՛հ, աժան ազատեր ես, ըսի Պարոյրին յօրանջելով, ազատութեան զոհ ընկար քունիդ մէջ, իսկ եթէ արթուն լինէիր գիտեմ որ մաղիդ մէկ թելն անդամ չէիր զոհեր: Ազատութեան համար տքնող մեր ժամանակի երիտասարդութիւնը ձիշտ քեզի կ'նմանի: Ամէն տեսակ ազատութիւն, հայրենիք, սէր, նահատակութիւն կ'ելլ-է, մեծ մեծ կ'ջարդէ ու արիւն կ'թափէ իր անկողնին մէջ, իսկ երբ բաց աչք աշխարհիս դահավէժ լեռան վրայ գործելու ժամը գայ՝ կծիկը կ'գնէ ու կ'երթայ վառօրէն բռնակալներու ոտքը կ'լզէ . . . :

— Քեզի հետ խօսիլ շատ դժուար է եղեր, ազբեր. երազէ անդամ դաս մը կ'հանես . . . :

— Բայց խօսելու ատեն չէ, մի մոռնար որ վաղը գիշեր մեր տեսնելիքն երազ չէ:

— Աստուած միայն գիս այս Պօլիսէն օր առաջ ազատէ. ոչ գլուխս իմն է և ոչ սիրտս . . . :

Խե

Ի. Պոլիս, 14 յունիս 1866։

. . . Եւ դու կարծես թէ ուրախ զուարթ եմ ու կ'ժպտիմ, որովհետև Պարոյրին պոչը բռներ կ'երթամ, անլի և այլանդակ երազներ պատմելու ախորժ ունիմ և կունակս ազգային խնդիրներուն առաջ՝ անտարբեր նստեր եմ . . . ։ Ա՛հ, կ'ժպտիմ, ինչպէս կ'ժպտի երկրագործ մը՝ տեսնելով որ իր Ճակտի արիւն քրտինքով մշակած արտը ժամու մը մէջ խորշակահար կ'չորնայ . կ'ժպտիմ, ինչպէս ժպտեցաւ Արտաշէս երբ մահուան անկողնին մէջ Արտաւազդայ դանդատը լսեց, երբ Կեսար Պրուտոսին դաշոյնը կերաւ, երբ Ներսէս թիւնալիցի բաժակն ըմպեց . կ'ժպտիմ, ինչպէս ժպտեցաւ Թագրատունի վերջին Գագիկն երբ Անիին բանալիները Կոստանդին կայսեր ձեռքը տեսաւ . այո, կը ժպտիմ և այս ժպիտն՝ եթէ ոչ մահու, յուսահատութեան գառն ժպիտ մ'է, ժպիտ մը՝ որ ազատութիւնը, սէրն, առաքինութիւնն և Ճշմարտութիւնը կ'հեգնէ և Աստուած կամ Սատանան յանեան կ'կոչէ որ անլուր անիրաւութիւններու վրայ համար տան . . . ։

Ա. յապիսի վիճակի մը մէջ ինչ կարող ես լնել, բայց եթէ լալ կամ յիմարական խնդութեան մը զարնել . . . կարծես թէ բաժին ինկաւ ինձ յիմարութիւնն, որուն Ճարակ կ'տայ Պարոյր իր թեթև և վառվռուն երևակայութեամբն և կանխաւ այլաբանօրէն երազած է այն ներքին յուզմունքն, որոց դրդիռ եղան ազգային վերջին պատահարները ։

Ա՛հ, սիրել և չարաչար պատրիլ, քար քաշել բաղդի համար և մէկ վայրկենի մէջ մարդու մը շունչը կտրելով՝ մեխրի վրայ նստիլ, օրինաւոր փառասիրութեամբ մը վառիլ և ապա լոկ ստուեր մը դրկել, ազատութեան համար ապրիլ և գերութեան լուծը շոյելու ստիպուիլ, Ճշմարտութեան համար շունչ տալ և հալածանք կրել, հայրենեաց համար հսկել և անխնայ պատժուիլ, անգութ փոխարներ տաժել, օգտակար խորհուրդներ երկնել և անգործադրելի ու անիմանալի մնալ, կա՛ն ասկից աւելի գառն և տաժանելի վիճակ մը։

Տակաւին նոր կ'համոզուիմ, բարեկամ, որ մեր տեսածը Պարոյրին տեսած երազն էր արդարև, ասող մ'էր՝ որ թերևս մեր կենաց հորիզոնէն անդին պիտի նորէն վառի . . . :

Երանի՛ անոնց որ տակաւին կրնան արթուն երազել, որ այն ասողն, որ մարած է, կրնան նշմարել. երանի՛ նաև անոնց որ Պարոյրին պէս կեանքը հեղնական պարզև մը կ'համարին և աշխարհիս տեսարանին վրայ 'ի մանկութենէ ուսած դեր մը կ'խաղան. երանի՛ անոնց որ տգիտութեան ասհմանէն դուրս ելած չեն և գերեզմանական գոյութիւն մը ունին : Ահա ասոնք կրնան սրտի մուռք ապրիլ, վասն զի հող էին և հող պիտի դառնան . . . :

Իսկ մեք ո՞ր դնենք մեր գլուխը, բարեկամ, ամէն քարի տակէն Վասակ մը կ'ելնէ, ամէն ծակէ Մերուժան մը, ամէն փիլոնի տակէն Կիրակոս մը, որ այս անգամ չէ թէ քաղքի մը բանալիներն, այլ մեր հոգւոյ իրաւունքը, մեր ազգութիւնը, մեր կրօնքը, մեր պատիւը, մեր Սահմանադրութիւնը թշնամիներու կ'մատնեն : Է՛հ, Կայէններու մէջ Կայէնի կեանք կ'վարէ նոյն իսկ անմեղև հայրենասէր հայն և կարծես թէ իր պատմական և ազգական ժառանգութիւններն եղած է աղէտից և անիծից կտակ մը . . . :

Ո՞ւր դնենք մեր գլուխը, մեք որ սիրոյ, Ճշմարտութեան և Աստուծոյ կ'հաւատանք. ո՞ր և ո՞վ է մեր ապաւէնը : Միթէ մեր եկեղեցի՞ն է. ա՛հ, Աստուծոյ տաճարն աւազակներու գուբ դարձեր է. միթէ մեր ազգն, ա՛հ, Հայերն իրենց հոգին ու խիղճն այլազգեն բռնաւորներու ծախեր մատներ են. միթէ Հայաստանն, ա՛հ, Հայաստան և իր աւերակներն իրը փոգիրներ կ'արտոգսէ իր զաւակները. միթէ յիմարանոցն, այո՛, յիմարանոցն, ուր՝ մեր բռնաւորները մեզի շղթայ մը պատրաստած են, կամ՝ եթէ կ'ուզես, գերեզմանն, որմէ անդին կայ անշուշտ լոյս մը և պատկ մը . . . :

ԽԶ

Կ. Պոլիս, 15 Յունվար 1866.

Պարոյրին հետ այն երազային քնհատ դիշերն անցնելէն ետև՝ միւս առաւտ՝ բարեկենդանին շաբաթ օրը (փետրուար 5) ելանք և շիտակ ծովեզրն իջանք քիչ մը հով առնելու ու մեր դլխին շոդին և յնորական տեսիլները փարատելու համար։ Թէև հիւսիսային ցրտակեզ քամի մը, որ քաղքիս կենսատու հոմն է, կ'փչէր և մեր մարմնին սարսուռ մը կ'ազդէր, սակայն ինչպէս տակաւ կ'տեսնուի այս ձմեռային եղանակիս մէջ, օդը պարզ ու երկին պայծառ էր։ Մինչդեռ ես ծովը կ'նայէի ակնդէտ՝ որ դէմառ դէմ տեսակ մը լայն ու հեզասահ գետի մը երեսն առած՝ կ'հոսէր դէպ 'ի Մարմարա անդիէն, և դէպ 'ի Պոսֆոր ասդիէն և յոլովակի կոհակ առ կոհակ յուզելով՝ սպիտակ փրփուրներ կ'հանէր ու ծփար. մանր նաւակներ՝ ցկոր ու ցան և իրր ինքնաշարժ՝ թեթեւակի կ'սահէին՝ այս՝ Գում-գափուի, այն՝ Եէտի-գուլէի, միւսը՝ Նիքսանար, Բրինքիբօ ու Քաղքի կղզիներուն կողմն, և կարծես թէ այս նենգատոր և յորձանուտ կապուտակ դաշտին վրայ սողսակելով՝ անդնդային մահուան վրայ կ'ծիծաղէին, Պարոյր անելեալթ եղեր էր։ Աչքս շորս դին դարձուցի, դիտեցի սրճարաններուն առջեր նստող անձերն, որ շոդենաւին կ'սպասէին Պոլիս իջնելու համար, և զանի չդտայ։ Ա՛ւր դացած կրնայ լինիլ, ըսի մտովի, այս մեր անհանդարտ բարեկամը, գիւղին ծակ ու ծուկը չդիտէ, ոչ եկեղեցիին Հանբան, որ այսօր բոլորովին թափուր է բարեկենդանի առթիւ, և ոչ Ընթառամ առաւտուն տունն՝ որուն՝ երբ խորանները ֆ-ֆ-ֆ, դոնները կ'բացուին ու վարդերը։ Ա՛վախնամ որ նորէն ձիուն մը չդայ դլխին, ինչ անհամբեր զաւակ է . . . .։

Ժամէ մ'ետրը նայիմ որ մեր Պարոյրն օրօրելով և ակնկոր կ'դառնայ հաղուստին մէկ ծայրը պատռած։ — Նշան որ պտոյտ մ'ընեմ դիւղն, բան սրտմտելով, և բնիկ --ՀՊՆԷԼ--ն աչք մը նետեմ, Ձերմակ երես ու սև աչք մը տեսնեմ, սակայն մինակ պատ տեսայ ու շուն, և զգեստէս կտոր մը շան մը բերանին մէջ թողուցի, թէև փափաքս էր

սիրաս թողուլ օրիորդի մը ՀԷՐ-ԷՆ մէջ։ Ստուգիւ գեղեցիկ հիւրընկալութիւն կ'ընեն աղջիկներն օտարներուն, եթէ իրենց տան դռնապանները շուներ են, տունուորներն ինչ տեսակ վայրի կատուներ են արդեօք . . . ։ Է՛հ, կարծ կապեմ, աղբեր, ինչպէս կ'ընակիս այս անապատն։ Ա՛չ, ոչ, ցամաքէն յոյս չկայ, ծովը նետուինք, դիմացի կողմն անցնինք, քեզի լինի տունդ ալ՝ ուր մարդս անդադար կ'երազէ, գիւղդ ալ՝ ուր սեղմելու քնքուշ ձեռք մը 'ի զուր կ'փնտռէ։ Օ՛ն, երթանք . . . (և Պարոյր գրպանէն թուղթ մը հանելով գոչեց,) Ելիր երթանք, գոնէ սա ՇԷՀ-ԷՆ հրաւիրագրին անձամբ պատասխան մը տանք, այն պայմանաւ որ շոգենաւ չմտնենք և ոչնառակ . աչքս վախցաւ, ընդ օդ թռինք 'ի լուղ դառնանք, գետնին տակէն անցնինք, ինչ որ կ'ուզես ընենք, բայց շոգենաւ չմտնենք, վասն զի նորէն վտանգներու հանդիպելու և էշ նահատակ լինելու ախորժակ չունիմ։

— Դեռ քունդ գլուխդ է, կարծեմ, Պարոյր, և սէգութիւնդ բռներ է։ Հանդարտէ, հոգդ հատեր էր որ առատ կանուխ, նոր տեսակ որսի մը ելնես . . . ։ Այս կողմի սև աչերը միշտ առ ահի սև աչերու սիրահար եղող անձերու համար չեն փոյլիր . պատուհանն ու դուռը չեն երևիր . սակայն ասկից մի հեռացրներ որ ամէնքն ալ Լուկրէսիաներ ու Պէնէլոպէներ են։ Ա՛ռ հասարակ խաւարին տեղեր կը փնտռեն, թռնիրին շուրջը խաղեր կ'խաղան, տէր պապային խաչը կը գողնան, խոհարարին հետ ձուկ կ'տապկեն, վարժապետին հետ թուղթ կ'բանան, ՇՇԷՀ-ին հետ տուն կ'շտկեն, կատապանին հետ տապալի կ'խաղան և սիրոյ յաւաջաբանն ու վերջաբանը մէկ կ'ընեն։ Իսկ դու ամէն բանի մէջ վիպական դէպք կ'փնտռես, սիրելէն առաջ սիրաբանել կ'ուզես, սիրաբանելէն առաջ անձրև, ձիւն, կարկուտ ուսել կ'ուզես սիրուհի մ'որսալու և անոր ակնարկը կամ ժպիտը վայելելու համար։ Է՛հ, այդպիսի բաներ չկան այս քաղաքս, ամէն բան մութի ու դիմակի ներքև կ'շարժի, ամէն ինչ խորհրդաւոր և համեստ գոյն մը ունի . ամէն շղարշ դաւակից լրտես մը կամ ներքինի մը . . . ։ Բայց լուութիւն . կան բաներ որոց վրայ Ճշմարտութեան լոյսը կ'ամչնայ իր նշոյլն արձակելու . . . և այս տեղ Պօլսի ՇՇԷՀ-ը պատմելու միտք չունիմ։ Ելիր, երթանք, պատրաստ եմ ես . երկու Ճանրայ կայ մեր առջևը Պօլիս դնալու համար . ծով ու ցամաք և դարձեալ ծով . նաւ,

ձի ու դարձեալ նաւ. ալ ընտրէ։ Եթէ Լէանարի չափ լուղակ ես, կամ երկնային մարդուն պէս հրաշագործ՝ լողայ կամ քալէ ծովուն մէջ, այդ ուրիշ խնդիր է, մինակ ես չպիտի կարենամ հետևիլ քեզի. սակայն եթէ դու խրատիս հետևիլ կ'ուզես, արի նաւակ մը բռնենք և ծովն 'ի մնաս վայելելով սահինք իջնենք . . . ։

Այս ըսելով մարմինս հաւասարակշիռ բռնած՝ նաւակ մը մտայ, նոյնն ըրաւ և բարեկամս՝ սրտագողի մէջ։ Պօլսի նաւավարներն անանման են. թիակը կ'գործածեն, ինչպէս կ'գործածես փետուրդ, թէև այն ալեաց և գլուխդ մրրկալից խորհուրդներու մէջ սատանի ու օրորի։ Արդէն Քաղկեդոնի փոքրիկ խորշին ափունքը գրեթէ քերելով Հայտար փաշայի հրուանդանն, որ Օսմանեան զօրուն Արէսեան դաշտն է, հասեր ու զինուորական հիւանդանոցին կից Անգղիացւոց գերեզմաններուն և հրեշտակաբարձ կոթողը կ'գիտէինք, որ կանգնած է 'ի յիշատակ այն դիւցազուններու որ Խրիմի պատերազմի մէջ ընկան։ Քիչ մը ևս և ահա Հարէմի նաւամատոյցը կ'երևի, և հեռուն Իսկիւտարի ծայրին դէմ, Պօսֆորի բերանը՝ Լէանարի աշտարակն՝ իբր լոին պահակ մը, որուն գլուխը ֆարոս մը կայ։ Այս տեղ որ հասնիս և աչքդ շորս կողմը դարձընես՝ անշուշտ կ'գոչես հիացմամբ, ինչպէս գոչեց Պարոյր. — Զէ, չկայ աշխարհիս մէջ այսպիսի տեսարան մը։ Մէկ կողմդ Պօսֆորի նեղուցն է, որուն երկու եզրներն, այս է Եւրոպայի և Ասիայի, հոյակապ տուներ կան և հիանալի բնական դիրքեր, մեծ, վսեմ և ահարկու երևոյթով. արևմտեան կողմը բուն Ստամբօլի եռանկիւնաձև ցամաքն, որուն վրայի մզկիթները, պաշտօնատուններն և պարտէզներն ու բարձր ծառերը կարծես թէ ծովը պիտի թափին և ծովեզրեայ պալատի մը աւերակներուն հետ նշանակելի հակադատակեր մը կ'ընծայեն։ Դիմացդ Բէրա ու Գալաթիա. և զանազան բարձրադիր գիւղերու ու տուներու ովկիանոս մը։ Ի վերջէ Գալաթիան Պօլսի կապող կամուրջը հասնելով դուրս ելնելու տրամադիր էի, երբ բարեկամս — Օն, յառաջ քշենք, միշտ ջրին, ջրին վրայ կենանք, ըսաւ, ցամաքը շատ աղմուտ է . . . ։ Ուստի կամուրջին կամարէն մտանք և ելանք ոչ այնչափ գեղաձիծաղ նեղուց մը, որուն մէկ կողմը կ'գտնուի Գէնէր, Պալատ, Յունաստան, Այվասար, Էյիպ, Հին Տաճկաստան։ Միւս կողմը Դասըմ փաշա, ուր կ'գտնուի նաւարանը, Բիրի փա-

շա, Հրէանոց, Խաս գիւղ, երբեմն Հայ ամիրաներու կայանն, ամէնամ խարխուլ, տխուր ու անշուք տեղեր . . . :

Սակայն մեր ձկնաձև նաւակը ձուկի պէս կ'սողար պղտոր ջուրի մը վրայ, և նաւերու ու մակոյկներու մէջէն կայծակի պէս կ'սահէր անվտանգ : Երկրորդ կամուրջ մը, որ Ուն-գափանը կ'միացնէ Բէրայի վարի ճիւղին, անցեր ու երկրորդի մը բեկորներն, որ ՃԷզայիրլեան կամրջին բեկորներն էին, հասեր էինք, երբ նոր տեսարան մը մեր առջևը պարզեցաւ : Հիմակ երևակայէ գետի նման նեղուց մը՝ որ աղեղնաձև կ'տարածի ժամ մը հանդիսաւ : Նեղուցին երկու կողմերը մեծկակ ամայի բլուրներ, ստորոտները՝ մարգագետիններ անդաստար, և ասդիս անդին ցիր ու ցան, լեռներու զայր 'ի վայրերը՝ անտակներ ու խրճիթներ. ծովափը տեղ տեղ անտերև ծառերու շարք մը, որոց տխուր շուքը ջրին մէջ կ'դողդողայ : Ա՛յառաջանաս ու կ'ըսես. Ահա հասանք. վայ, ջրի նոր խորշ մը. քառորդ մը կ'երթաս և նորէն կ'ըսես. Հասանք ալ, ասկից անդին ջուր չկայ, աղբիւրը հոս է . . . չէ, բարեկամ, կ'սխալիս, նոր շինուած մը կ'դառնաս, նոր շաւիղ մը : Ինչի կ'նմանի գիտես, այս հմայական նեղուցը, սիրականիդ սրտին, եթէ ունիս : Ահա գոյայ անոր սիրոյ աղբիւրը կ'ըսես, և քանի ճանչես, նոր նոր սիրահոս խորշեր կ'տեսնես ու կ'զմայլիս : Այս ջրի շաւիղն, որ ծանծաղ է իրաւ, քանի երթայ կ'նեղնայ առջևդ և տեսակ մը վտակ կ'դառնայ : Տեղ տեղ կղզեակներու կ'հանդիպիս, որ կարծես թէ ջրին մէջ կ'լողան, կ'սահին, կ'քալեն և զիրար պիտի գրկեն : Ահա վայր մը կ'հասնիս՝ որուն երկու ափերը կ'երևի թէ իրարու համբոյր տալ կ'ուզեն, այնչափ մօտ են որ հազիւ երեք նաւակ կրնան քովէ քով անցնիլ : Սակայն երևակայէ նաև որ եթէ բիւրաւոր նաւակներ այս ջուրերը դիմեն և բիւրաւոր այր ու կին ծովեզրի կողմերն, ինչպէս կ'պատահի մանաւանդ ապրիլ ու մայիս ամսեան մէջ, և ծառերու շուքին տակ վխտան, ոմանք երգեն, ոմանք նուագեն, ոմանք հետի, ոմանք ձիով ու կառքով վազեն ու արշաւեն, պոռան ու գոռան, ինչ աղմկալից վայր, ինչ աննկարագրելի թատր մը կ'դառնայ այս տեղս : Բայց մեր մարդիկ գիտելու համար եկած չէինք՝ այլ բնութիւնն, որուն վրայ արհեստը շատ քիչ բան աւելցուցած է և ձմեռն ալ փորը ինչ զայն այլագունած է : Բայց տակաւին չհասար : Կամրջի մը տակէն կ'անցնիս

ծանր ծանր որ չորս կողմը նկատես, քիչ մը անդին ուրիշ կամրջէ մը և շիտակ կ'գիմես ծայր մը, ուր ջուրը սահման մը կ'գտնէ, որուն վերի դին կանգուն է արքայական բուրաստանն ու պարզ բնակարանն։ Ահա այս շաւիղն է նշանաւոր ՓԷ-ՀԷ-ՐՀԷՆԷ կամ ԱՆ-ՇԷ-ՐԷՐ բառածը։

Նաւակէն կ'ելնես պարոյր մ'ընելու մարդին վրայ, կամ թեթեւ զառ'ի վեր մը կ'բռնես, ուր շորս հինգ կանգուն լայն ու քարեզր առուակ մը կայ, երկու կողմը շիտակ ու մօտ առ մօտ ծառեր՝ որ գրեթէ քառորդի չափ կ'տեւեն և ամառը սոյն առուակն իրենց տերեւալից ճիւղերով կ'ծածկեն։ Պարոյր այս ջրին գլուխը նստաւ և քանի մը վայրկեան դիտելէն ետև՝ բաւ. — Զմեռը գեղեցկութիւն ունեցող այս վայրն, ամառն ի՞նչ զմայլելի կերպարանք կ'առնու, գիւրին է երեւակայել, սակայն թէ ամառ ու թէ ձմեռ ցուրտ է այս վայրս ինձի համար, որովհետև հայրենի յիշատակ մը, ձայն մը, արձագանք մը, հառաչ մը չխօսիր իմ սրտիս։ Ա՛յս տեղի բնութիւնն ալ հրապոյր չունի իմ առջեւս։ Էս իմ Պուճայի փոքրիկ արտս, և վճիտ ջուրս աւելի կ'սիրեմ. . . որովհետև այն արտին մէջ Աշխէնին հետ պարտեր եմ, այն ջուրէն Աշխէնին հետ խմեր եմ . . . դառնանք. աւելի տաք տեղ մը տար գիս, արդէն սիրտս կ'սարտի, հորիզոնին վրայ սև ամպեր կը տեսնեմ, ձմեռային գեղեցիկ օդը նենգաւոր է։

Իսկոյն դարձանք և Գասըմ-փաշայէն Բէրա եկանք։

ԽԷ

Կ. Պոլիս, 17 յունիս 1866։

Ճշդիւ, բաւ Պարոյր՝ երբ Բէրայի մեծ փողոցը հասանք, ոչ ոք կրնայ զուշակել մայրաքաղաքիս զանազան առաններն տեսնելէն ետև՝ որ այսպիսի շքեղ ու փայլուն կողմ մ'ունի։ Մեր Զմիրի կ'նմանի, եթէ ոչ գիրքով, գէթ շէնութեան։ արտաքին եւրոպական գոյնին ու շարժումին կողմէն։

— Էհ, դու ալ ամէն բանի մէջ Զմիր կ'տեսնես, ինչպէս կ'տեսնէ

սիրահար մը իր սիրուհին ամէն հայլի մէջ։ Այս երկու քաղաքներուն մէջ անհուն տարբերութիւն կայ։ Տեսար որ Բէրա բաձրիկէկ բլրի մը վրայ շինուած՝ լայնանիստ և հոյակապ քաղաք մ'է, թէև Պօլսի արուարձաններէն մէկը կ'համարուի։ Տաճկաստանի Բարիզն է, արևելեան և արևմտեան քաղաքակրթութեան վիճաձ զուգակն է։ Այս տեղ կ'բնակին օտար տէրութիւններու դեսպաններ, եւրոպացի գաղթականներ, բաղդախնդիր օտարականներ, աշխարհի քաղաքացիներ, քաղաքական փախստականներ, բարեկիրթ տաղանդներ։ Այս տեղ կայան ունին Արևելքի Լօշիլանները, թատերական խումբերը, քաղաքական և առևտրական ակումբները, հաղուստի ու կապուտի համբարները, մոլութեան ու ապականութեան գոբերն։ Այս տեղ կ'թափին թէ մաստնաւոր և թէ արբուռնական զանձեր քանի մը փայլուն կամ կարասի, քանի մը բարակ շորեր ու քուրջեր գնելու համար։ Ստամբոլ ու Գալաթա առուտուրի, փոխանակութեան, գործունէութեան ու շարժումի կեդրոններ են, Բէրա, մանաւանդ ձմեռը, շուայլութեան, շուայտութեան և նորասիրութեան տեսարան մ'է։ Տեսարան մը՝ ուր զանազան այլազգ տարբերու խառնուրդէն նոր սերունդ մը, նոր բարք, նոր լեզու, նորելուկ քաղաքականութիւն մը կ'ծնի, որ ամէն ազգի գրոշմունի, այլ ոչ մէկու մը առանձին։ Ա'թողում քեզի երևակայել թէ Բէրայի բազմազիմի երեսը բարեկենդանի կարօտ չէ իր կերպարանքը փոխելու ու դիմակ հագնելու։

Արդէն ամէն օր բարեկենդան է հոս, եթէ բարեկենդանը դիմակի վրայ կ'կայանայ։ Աստերուն վրայ քաղաղ կամ պարոյ գաղղիացիի մը ձեռքը կ'ուզես և գաղղիացին թիւրք կ'ելնէ. խոշոր ու հաստ երկաստանի մարմին մը կ'տեսնես և կարծես թէ լեռնէն նոր իջեր է, և այս լեռնցին մանաւ փախստական մը կամ յոյն մը կ'գտնես, որ լոկ կրօնն ու հագուստը փոխեր է, այլ ոչ սիրան ու բարքը։ Հնատի ու եղուտ գդակով անձի մը կ'հանդիպիս և անոր ձեռքը ստակ տալու կ'յորդորուիս, երբ այն անձը Լօշիլտի թղթակիցը կ'գտնես. Բ--ն հայ մը տեսնել կարծես՝ և ՆԲ--ն հայ մը կ'գտնես. լատինի մը հետ կ'բանակցիս և դիմակին տակէն Էօնկիւրցի մը կ'նշմարես. կոմտուհիի մը քիթ քթի կ'հանդիպիս և խէնէշի մը բերնին հոտը կ'առնուս. քաղաքագէտի մը հետ խօսիլ կարծես և լրտեսի մը ականջը կ'տեսնես. բնիկ

Եւրոպացիի մը հետ է գործդ կ'երևակայես և վրացիի մը զաւակը կը դանես. կրօնաւորի մը հետ բանակցելու կ'ելնես և գայլի մը պոչը կը տեսնես, սեղանաւորի մը հետ տեսակցելու բաղդիդ վրայ կ'ուրախանաս և ժամացոյցդ գրպանէդ գողցուած կ'գտնես . . . »

Մինչդեռ այսպէս հարևանցի ու կէս մը կատակով կ'նկարագրէի Թէրայի աշխարհն, երեկոյեան դէմ Լուքսէնպուրկի սրճարանը մտանք ու վերի սրահն ելանք ճաշ ընելու։ Շատ մը հայ պատանիներ կային, որ գաղղիերէն կ'խօսակցէին ուրախ զուարթ, որովհետև այն գիշերը մեծ կորուստներ ունէին ընելու։ Արդէն սրահին վրայ նայող այլ և այլ սենեակներու մէջ զոյգ զոյգ դիմակներ առանձին նստած՝ ինքզինքնին կերուխումի տուեր էին և մեծ պարահանդիսին կ'պատրաստուէին։

Նոյն պահուն սև փէշնէ մը սրահին դռնէն ներս կ'մտնէ ու շիտակ Պարոյրին գալով՝ անոր ձեռքը նամակ մը կ'տայ ու կ'ըսէ. — Ցուսամ որ այս գիշեր հանդիսարանը կ'գտնուիք . . . » Հետաքրքիր աչքով դիտեցի այս փէշնէն որ կանաչ մետաքսէ հիւսուած դիմակ մը դրեր էր, այրական էր շարժումը, կնային՝ ձայնին հնչիւնը. մարմնին ձևն ու կերպերը շնորհալի էին, իսկ հասակը բարձր ու քալուածքը փոքր ինչ անշնորհ։ Անկարող եղայ որոշել թէ այր է կամ կին։ — Ա՞ւր է բոյնդ, ո՞ւր է ընկերդ կամ ընկերուհիդ, հարցուցի անոր, մինչդեռ Պարոյր աչքը չորս բացած՝ հիանալով կ'կարդար նամակն։ — Ա՞չ բոյն ունիմ և ոչ թև, թափառիկ ու անտէր էակ մ'եմ ու սիրահարներու բանտերն — ըսելով՝ Պարոյրին ակնարկեց, որ յանկարծ ոտք ելնելով, — Բայց անկարելի՛ բան է, գոչեց. Աշխէնը Պօլի՞ս գայ այսօր. չէ, սուտ է . . . սակայն բարեկամն է գրողը, սատրագրութիւնը կ'ճանչեմ։ Ա՞վ սուտ, ռասկից գտար այս գիրը, շարունակեց նա դիմակին դառնալով. դու ռվ ես, գրաբեր ես, սատանայ ես, հրեշտակ ես, ինչ ես, խօսի՛ր, երևան ելի՛ր . . . ո՞ւր է հիմակ Աշխէնը։ Դիմակը կամացուկ մը կ'ելնէ և մատովը յանդիմանական նշմար մ'ընելով՝ կ'հեռանայ։ Իսկ ես ալ չէի զօրեր լուծել այս նոր հանելուկն և կարծէի թէ նոր խաղ մը կ'պատրաստուի մեզի դէմ։ Անհամբեր առի նամակն, որ այսպէս գրուած էր։

Սիրելի Պարոյր,

Աշխէնն երէկ Ճանբայ ելաւ ծածուկ Պոլիս գալու։ Այս անլուր յանդգնութեան շարժառիթը սէրն է, և իր ծնողացն ընդդիմութիւնը . . . ։ Նա ձայն հանեց հոս թէ Պուրնապատ գիւղն իր քրոջը տունը պիտի անցընէ բարեկենդանը տրտում ու տխուր, թէև հիմակ կարելի է քովդ է ուրախ զուարթ և ձեր ապագայ ընթացքին վրայ խորհուրդ կ'ընէք։ Երջանիկ ես, բարեկամ։ Նորոգոյս, անփորձ ու վեհերտ օրիորդ մը հով, ծով, ձիւն ու կարկուտ և մինչև մահն ալ քեզ կ'առնու իր սիրահարը գտնելու, և այս սիրահարը դու ես, դու, որու հեռաւորութիւնն անտարբերութեան նշան կ'համարուէր Աշխէնին կողմէն և տերևի պէս կ'դողդողար որ քեզ ձեռքէն չփախցրնէ։ Ասպետական ժամանակները կ'նորոգուին։ Աշքդ չորս բաց որ գանձդ չգողնան։

Զմիր, 6 փետրուար 1866։ Բարեկամդ ՏԻՐԱՑՐ

Անուրանալի է, ըսի Պարոյրին, որ Աշխէնը Պոլիս է. մինակ դժուարին կէտը զանի գտնելն է։ Մի վհատիր։ Օ՛ն հանդիսարանն երթանք, թերևս այն թռչունն ալ բռնենք միւս անծանօթ դիմակին հետ։

ԽԸ

Կ. Պոլիս, 19 յունվար 1867։

Արդէն ժամը տասն կար երբ մտանք հանդիսարանն, որ տաճարի մը կ'նմանէր քան թատերական ասպարանի մը, թէև այս համբաւն ունէր, այլ ոչ ձևը։ Լայն ու դրեթէ կլորակերպ սրահ մը, ուր հանդիսականները կ'ձեռնէին խառն 'ի խառն. վերը՝ կէս գմբեթի նման ձեղուն մը, վեց գունաւոր սիւնի վրայ նստած՝ որ մարմարէ չէին. շուրջը՝ զատ զատ օթեակներ, վերնատուններու պէս, ուր միայնասէր դիմակներու ու դէմքերու խմբակներ կ'տեսնուէին. դիմացի կողմը՝ բոլո-

բակի տասան մը, որու վրայ պարոցները գունդ գունդ իրարու հետ կ'դառնային և որու առջևը նուագարանները կ'որոտային որոտընդոստ. գմբեթէն կախուած էր Ճար մը երփնագոյն, և պատին շորս դին կազերը վառ՝ շէնքին վերին մասն, օթեակները կ'լուսաւորէին, իսկ ստորին աշխարհն, որ այլ և այլ դիմակներու, հագուստներու և երեսներու հանդէս մ'էր, գրեթէ մութին մէջ կ'մնար։ Պարավայրը, թեև որ հրեշտակներու դասն, օրիորդներու դրախտն, ամուսիններու դեհէնը, բիւր ու բիւր լուսի Ճառագայթներով կ'շողար, ամէն կողմէն կրակ ու բոց կ'ցայտէր գոյնզգոյն, այնպէս որ կարծես թէ պարու դերերը հրեղէն ովկիանոսի մը մէջ կ'լողային և կամ դրկախառն կ'թռէին օդին մէջ, հեռզհեռէ շաանալով պատերուն վրայ փակած երկոյն հայելիներուն ցոլացումով։ Այս էր ահա տեսարանին արտաքին երևոյթը։

Պարոյրին հետ շորս կողմը հետաքնին աչք մը նետելով, — Այս սրահս քաւարանը պիտի լինի, ըսի, ուր մեղի պէս մեղաւորներ կ'դեղերին՝ մինչև որ սիրարոյր շնչով մը սրբուին և վերի արդարներուն կամ վերագոյն քէրուբէներուն դասն անցնին։ Սակայն որ սրբուին պիտի բարեխօսի մեղի պէս նշանեհ և վաստակեղի անձարակներու համար, որ առարկան կարող է մեր ուշը դրաւել և մեղի հրճիւ տալ այս հանդիսիս մէջ, ուր անշուշտ ամէն հոգի նպատակ մ'ունի, ամէն ձայն՝ արձագանք մը, ամէն նշմար՝ ակնարկ մը, ամէն սիրտ՝ սրտակիցի մը, ամէն դատ՝ դատակիցի մը։ Ուր ծածուկ, ո՞ գիտէ, ինչ հոգեր կ'փորեն, ինչ թելեր կ'կտրեն, ինչ խաղեր կ'խաղան, ինչ վրէժ կ'լուծեն։ Իրաւ է որ դիմակ մը վար առնելու համար եկանք, բայց քանի քանի դիմակներ կան այս տեղ, և մեր փնտռածն ոչն է արդեօք։ Եկու բան մը ընենք, այս քաւարանին մէկ անկիւնը կայ առնուք ու դիտենք։ Հեռուէն դիտել ըստ իս աւելի հեշտալի է քան արշաւել ու պարել։ Ի բնէ սոփորութիւնս է աղմուկ, ձայն, պար ու նուագարան եղած տեղը մեկուսի կենալ ու դիտել. վասն զի բան խմնալու միակ միջոցն է շատ անդամ կանգ առնալ, երբ ուրիշները կ'բարձրանն ու կ'շտապին. ջուր ըմպել, երբ ուրիշները գինի կ'ուզեն. արիւն հսկել, երբ ուրիշներն 'ի քուն են ու կ'երազեն. չափել, երբ ուրիշներն Աշխէնին հետ կը պարեն . . . : — Ինչ, միթէ պատեհիս Աշխէնին սատերն աչքիդ զարկաւ, դոչեց Պարոյր սիրան 'ի դող. կարելի է որ Աշխէնը պարե-

լու համար Պօլիս եկած լինի, աղբեր, ինչ այլանդակ անսիրեր ունիս։ — Ամէն ինչ կարելի է կնկան մը համար, չսիրելէն զատ . . . ։ — Ուրեմն դիս կ'սիրէ որ Պօլիս եկեր է։ — Ո՛ դիտէ . . . ։

— Ես դիտեմ, ըսաւ նոյն պահուն դիմակ մը և յանկարծ մեր առջևը կանգ առաւ։ — Դու վհուկի մը երեսն ունիս, պատասխանեց Պարոյր։ արի ըսէ ինձի թէ ինչ դիտես . . . ։

Ես ալ սկսայ այս վհուկին կերպարանքը զննել։ Ցաձկի հաշմ մ'էր. հագեր էր ծիրանի կերպասէ լայն վարտիք մը, մինչև ոտներն իջած՝ որոց ծայրերը կ'երևէին. երկնագոյն պարեզօտ մը, որուն տուանքերն ետևէն գետինը կ'քսուէին. թեթև ոսկեհուռ բաձկոն մը, ձիւնի պէս սպիտակ թրթռուր շապիկ մը, թևերը կէս բաց. մէջքն ոսկի գօտի մը կապեր էր, կապը զմրուխտ քար. գլուխը հովի պէս թեթև շղարշ մը նետեր էր, կանաչ նիշերով, երկայն սև մազերն ոլոր ոլոր ուսին վրայ ձգեր էր ծփալի. իսկ ոսկեղէն վարսակալ մը՝ մազերովը բոլորակի փաթթեր, պսակի պէս գլուխը դրեր էր և Ճակտին կողմն անդամանդէ մատիկ մը երփն երփն կ'փայլիր։ Կուրծքին վրայ դրոշակի ձևով կանաչ կիսուռած ասեղ մ'ունէր սեւաձիր, որ կարծես թէ մանր մանր դիրերով անուն մը՝ կամ յուռութ մը կ'պարուրէր. թէև արդէն անդիտ գանձերու քեզուշ պահակը լինելն ակներև կ'երևէր։ Իսկ նօսր սև վառ մ'երեսը դոյներ էր կիսովին, բայց թողլով անուշ այլ արտասալի բերան մը ու գողտրիկ թուշ մը։

— Տուր ձեռքդ, ըսաւ արևելեան վհուկը Պարոյրին, տուր ձեռքդ որ բաղդդ նայիմ, կ'դիտեմ որ Ճակտիդ վրայ սև սև ամպեր կ'պարտին. քու ապագայիդ փոթորիկ մը կ'սպառնան, թէ որ հրեշտակի մը շունչն այդ մռայլը չվանէ։ Սրտիդ մէջ ստգնապ մը, կրակ մը կայ, որ բոլոր զգայութիւններդ եռ ու եփ կ'հանէ և հոգիդ պիտի պայթէ թէ որ կասկածդ չփարատի։ Դու սէր ունիս, պատանի, ասկայն հաւատ չունիս, վասն զի պատրանք չունիս. դու էակ մը կ'փնտռես, որուն հասնելու համար թշնամի մ'ընտրեր ես. այդ թշնամիդ այս տեղ է, այն էակը քեզի կ'տեսնէ . . . ։ Ափիդ սա դիծն երջանկութեան նշան է։ Տուր հիմակ սա մատանիդ որ քեզի կարևոր պաղատիք մ'ալ յայտնեմ. . . ։ — Բայց արդէն բոլոր ըսածներդ ինձի համար հանելուկ են, առաջ անոնք մեկնէ։ — Գործը պիտի մեկնէ բանը, տուր մատանիդ . ։

։ ։ Երբ մատնին առաւ՝ վհուկը շարունակեց. — Այս դիշեր այս հանդէսին մէջ պիտի գտնես սրտիդ դանձը կամ դերեզմանը, պիտի գտնես հրեշտակ մը կամ դև մը։ Հրեշտակին անունն Աշխէն է, դևինը Խէնէշ. . . . ։ — Դու ճանկից գիտես որ Աշխէն է, գոչեց Պարոյր և հաճելին թևը բռնեց։ — Գիտեմ, վասն զի վհուկ եմ. իսկ այս բարեկամդ, յարեց նա ժպտելով, իր բաղդը նայել տալու փափաք չունի արդեօք։ — Իմ փափաքս քեզ նայիլ է, ըսի անոր, վասն զի Ճշմարիտ գիւթիչ մ'ես։ — Ո՜հ, պատասխանեց վհուկը քահ քահ խնդալով և կտրտուելով, Ա՛ոյր տա ալ կ'խօսի եղեր։ Քու մարմնիդ աչքը միայն ինձի կ'նայի, սակայն հոգիիդ աչքը կ'նայի էակի մ'որ կեանքիդ ալէծուփ նաւուն բևեռային աստղն է. հովերն ու մրրիկները կ'հալածեն քեզ նպատակէդ հեռի՝ սակայն քու աչքդ այն աստղին է, այն սև ու փայլփլուն աչքին վրայ է. իբր փիլիսոփայ ծանր ես ու միևնակ ոտքիդ տակ անդունդներ կ'տեսնես, սակայն հոգիդ թև ունի և միշտ դէպ այն էակին կ'թռի. մարմարի պէս պաղ կ'երևիս ու կարծր, սակայն հոգիդ զգայուն է ու եռանդուն և անոր նշոյլը միևնակ ---- կ'բեկրեկի. հոգ, ցաւ, վիշտ կ'մաշեն քեզ և կարծես թէ ակնկոր ու յուսաբեկ սև հողը կ'փնտռես. սակայն յոյսդ ---- է, այն անուշ նկարին վրայ է, զոր սրտիդ ներքնագոյն խորշը պահեր ես . . . ։ Մի՛ ուշանար, ալ գնա, եթէ ծոմն ալեկոծ՝ դէթ հովը յաջող է, գնա դու այս տեղ գործ չունիս, թող Պարոյրն որ երթայ իր շրջմոլիկ հուրը փնտռէ և Զմիռին գնալէն առաջ ---- մը սորվի . . . ։» Այս ըսաւ և վհուկը սահեցաւ գնաց ու բազմութեան մէջ անհետացաւ։ Պարոյր ետևէն վազեց և քանի մը վայրկենէն դարձով, — Ո՛ր ծակը մտաւ չգիտեմ, ըսաւ, ոմէր այն գեղեցիկ սատանան. մատնիս ալ վրայ գնաց . . . Աշխէնին էր։ Եթէ մէջը խաղայ, ձեռքէն ազատելիք չունիմ։ Միթէ այսպէս դիմակներուն նշանակ պիտի մնանք, աղբեր, փոխանակ ուրիշները նշանակ ընելու, ինչպէս որ կ'երևակայէիր։ Աստուած խելք տայ քեզի. մեր քիթէն կ'բռնեն ու դեռ կարծես թէ արթուն ես և սրամիտ։ Բայց առաջայդպէս չէիր, հիմակ Պօլսեցիի պէս յոյլ, Թիւրքի պէս դանդաղ եղեր ես, թէև կ'խոստովանիմ որ Պօլսի կիները շատիկ են, մարդուս ձեռքէն մատնին կ'գողնան հմայելով, այն մատնին որ ուխտ ըրեր էի մինչև դերեզմանը մատէս չհանել. ես ալ կովի պէս

հանեցի տուի։ Եթէ այսպէս երթայ շապիկս ալ պիտի տամ և բան մը հասկրնալիք չունիմ, թէև առ այժմ կարևոր գաղտնիք մ'իմացայ, զոր յինէ անդամ կ'պահէիր։ Եթէ վհուկը հաւատալի է, դու ալ կը սիրես։ Ո՞վ է սիրուհիդ, էհ, քու որ մէկ բանդ ծածուկ չէ . . չես խօսիր։

Մինչդեռ այսպէս Պարոյր բերնին եկածը դուրս կ'թափէր՝ մեզի ծանօթ կանաչ դիմակը մեղմիկ մ'անոր մօտեցաւ ու ականջին փսփսաց. — Դու սիրադրուժ մատնիչ մ'ես, դարձիր Զմիւ թէ ոչ գլխիդ ձիւն մը պիտի գայ։ — Ալ այս անդամ չեմ բռնուիր, գոչեց Պարոյր, և դիմակին թևը բռնի քաշեց թևին անցուց և հրամայեց որ դիմակը վար առնու։ — Միթէ այդպէս կ'ընեն ձեր քաղաքն. այդ ինչ յանդգնութիւն է։ — Այո՛, այսպէս, երբ բան մը չեն կարող շինել՝ կ'կոտրեն. գաղտնիքին տուփը քու քովդ է, մինչև որ չբանաս չպիտի թողում։ — Թոյլ տուր թեւս. տէր ունիմ, ահարկու տէր մը, զինուորական մը որ արիւն կ'շնչէ։ — Եթէ նոյն ինքն Շամիլը լինի չպիտի թողում։ — Դու կ'թողուս, լաւ տղայ ես՝ ըսաւ ձայն մը և սուր մը անոնց թեւին մէջտեղն երևցաւ։ Պարոյր թևը քակեց ահ ու դողով և գառնալով տեսաւ ետևը կանգուն՝ բարձրահասակ գեղեցիկ վրացի մը։ — Եթէ արիասիրտ էիր մատիդ մատնին պաշտպանէիր, ըսաւ այն նորելուկ Շամիլը, սուրը պատեանը դրաւ և ձեռքը կանաչ դիմակին տալով անոր հետ հեռացաւ գնաց։

— Այս ինչ է, բոլոր աշխարհ մեր գաղտնիքը գիտէ, իսկ մենք ոչ ինչ, գոչեց Պարոյր բարկութեամբ և հագուստին կոճակները դնելով գրոհին մէջնետուեցաւ որ գաղտնիք, օրս, մահ . . . Աշխէնը փնտռէ։

Խթ.

Կ. Պոլիս, 20 յունվար 1867։

Ազնիւ Արնէվան Մուրալ,

Երբ Պարոյր այսպէս նետի պէս նետուեցաւ սոյն պարահանդիսին

մրրկին մէջ՝ իր Աշխէնին 'ի խնդիր, ես քարի պէս կեցայ և քայլ մը անգամ առնելու չէի զօրեր։ Երկրակամը մերթ ծիծաղականին կ'մտայ։ Իմ անտարձ, միամիտ բարեկամիս դիրքը կարեկցութիւնս ու ծիծաղս շարժեց իրարի. Աշխէնին հետն ոտնելու միջոցին՝ սրի ծայր մը տեսաւ և անհնարին բարկութեան բրդաւ։

Որչափ որ անշարժ մնայի, հանդիսաւոր չէի. կարծէի թէ դիմակաւոր հանդէսներու մէջ ստէպ պատահած խաղի կամ որոգայթի մը կոյր նահատակն է Պարոյր, և զանի գտնելու միակ միջոց համարեցի տեղէս չշարժիլ և թողուլ որ ալէծուփ ամբոխը նորէն ինձի բերէ զանի . . . ։

Ժամ մ'այս մտատանջութեան մէջ կ'գտնուէի՝ երբ եւեթէս ձայն մը առի որ կ'ըսէր. — Պ. Ա.բոյր, դո այս աշխարհէն չես. երկինքը կ'ապրիս . . . ։» Իսկոյն դարձայ և ինչ տեսնեմ նորէն. նշանաւոր կանաչ դիմակը։ — Համբ հոտը փախուցիր ալ, ինչ խրատիլակի պէս մեր եւեթէն ընկեր ես, հարցի անոր, ինչ կ'ինդրես, ոչ ես, ինչ ըսել կ'ուզես։ — Ըսել կ'ուզեմ թէ ամէն բան իր ժամանակն ունի. պարահանդէս մ'ուր հաղարաւոր դիմակներ վեր վայր՝ իրար կ'անցնին, կը պարեն, կ'նուագեն, կ'երգեն, դարաններ կ'լարեն, Ճգնարան մը չէ, մենաստան մը չէ։ Այս տեղ ծանրագլուխ մարդիկ, պաշտօնական մարդիկ, շորս հինգ զանկի տէր մարդիկ, իմաստասէր մարդիկ, բոլոր տարին կնկան մ'երեսը չնայելու ուխտող մարդիկ, մինչև անգամ վարդապետներ կ'գտնուին . . . Ծպտեալ։ Ամէն ազգի մէջ ներելի է որ ամէն դատ մարդիկ օր մը խենդանան։ Դու շատ ծանր, շատ անխօսուն, շատ դիտող, շատ անհամ ես և լրտեսի մը հոմն ունիս. ամէն օր քեզի համար առագ ուրբաթ է, գնա ուրեմն լեռ մը քաշուէ և խոտ կեր . . . թէև ամէն թերութիւններուդ վրայ աչք գոցելով ես ալ քեզի կ'հետեւէի, Ճգնուհի կ'լինէի եթէ ազատ լինէի . . . ։

— Բայց կատակը մէկդի, ո՞ր է Պարոյրը։ հարցի դիմակին. այն քու եւեթէդ ընկաւ որ գանէ. քեզմով կ'յուսար գտնել նաև իր Աշխէնն, իր նշանածին մատնին, զոր տաճկի հաճար մը, վհուկ մը խաղով մը մատէն առաւ . . . ։

— Եթէ գործ չունի, թող գիս փնտռէ — պատասխանեց կանաչ դիմակն, ու զարմանալի արագութեամբ գլուխը դարձընելէն՝ ու կարմիր նոր դիմակ մը դնելով ինձ երեսելէն ետեւ՝ յարեց. — Հիմակ վախ

չկայ. Պարոյր զիս չկրնար ճանչել, և ոչ իմ վրացիս պաշտպանել զիս։ զու ես իմ պաշտպանս, ես քու աղախինդ, հրամայէ, ինչ կ'ուզես։

— Դու չես կրնար զոհ ընել զիս. ես ուրիշ բան կ'փնտռեմ, զու ուրիշ, մեր բռնած տարբեր ճանբաներդ չեն կրնար նոյն նպատակին տանիլ մեզ։ Ես լուռ ու մունջ կենալով կ'սորվիմ, մանաւանդ թէ կը հրճուիմ, երբ ուրիշները կ'պոռան, կ'պարեն, աշխարհ կ'մռնան։ Դու զոռումզոչումի մէջ սիրոփանք, կատակի մէջ զուարճութիւն, ծուղակներու մէջ խնդութիւն կ'փնտռես. մոլորեալ ասաղ մը կ'երթիս ամպոռ երկնի մ'երեսն, ասուպ մ'ես վաղամեռիկ. կ'երթիս և ընդ հուպ կ'անհետիս, մեր ապականակիր մթնոլորտը քեզ կ'խղդէ, երկին 'ի վեր սլանալու տեղ՝ երկիրն 'ի վար կ'սուրաս և վէրի մը բոլորտիքը կ'պարես . . . ։

— Կ'սխալիս, պարոն — մրմնջեց զայրալիր կարմիր գիմակը — քիչ մը խօսքդ կշռէ։ Ես քեզ ասելի սրատաղէտ, ասելի սրամիտ կարծէի . . . ։ Կ'լսեմ այս որոտալիր երաժշտութիւնը, կ'տեսնեմ այս հիանալի, հրապայլ տեսարանն, այս խնդագին գիմակները, թռուցիկ պատանիները, կ'տեսնեմ, լա՛ւ, այս ամէնն ինձի համար անձայն են, մութ են, շուք են, անտեսանելի են. ինչ կ'ըսեմ, աշխարհս անգամ ինձի համար զնդան մ'է, բայց պատիւս, պարտաւորութիւնս կ'ճանչեմ։ Թշուառութիւն, աղէտք կ'ծանրանան գլխիս վրայ, և իմ աղէտիցս ասելի խորը թափանցելու համար այս հանդիսարանս եկայ։ Ես որովհետև կրող կարդացողի անունն ունիս, քեզի հետ ատաութիւն ընել ուզեցի որ նոր գաս մ'ալ սորվիս։ Կ'գիտես հեռուն սա հագուած շքուած ու հերաս գլխով մարդն, որ գիմակ ալ չունի, քանի որ բնականն իրեն հերիք է, կ'նայիս ինչպէս բերան բերնի կ'խօսի կնկան մը հետ որ չորցած կրասած բան մ'է, ու մինակ երկու սև ու կլոր աչեր ունի որով մարդ կ'թռվէ, կ'տեսնես ինչպէս կ'կոտրտուի, կ'քծնի, կ'աղերսէ, կ'պնդէ այն մարդն և քիչ մ'ետ կնկան ոտքը պիտի ընկնի որ խնդիրն ինչ որ է կատարէ, ահա այս հերաս մարդը քանի մը զուակի տէր, իմ ամուսինս է, որու երեսն երբեմն ամիսներով չեմ տեսներ. այս մարդն՝ եթէ մարդկութեան զգացում ունի, խնդենալով առաւ զիս, իմ ունեցածս, զաւակներուս հացը կերաւ և սոյն անել ճանբուն մէջ կ'գեզերի . . . ։ Իսկ ես աչքի լոյս թափելով ասեղն օրն 'ի բուն

շաբաթելով անմեղ դառնությունները պարէնը կ՚ճարեմ, և եթէ կ՚յիշես, քեզ անձանօթ չեմ։ Երբէք չպիտի յայտնէի ինքզինքս քեզի, եթէ պատիւս չվիրաւորէիր, և այս կեղծ յիմարութեանս մէջ ցաւերս մոռացումը, կամ լաւ ևս, յուսահատութիւն գտնելու համար ըրած փորձս՝ թերեւսօրէկ անձի մը գործ չհամարէիր։ Դու քաջ պիտի դիտնաս որ շատ անգամ կնկան մը շրթունքը ժպտելու առեն սիրտը կ՚արիւնի, այսպէս կ՚պահանջէ ընկերութիւնը։ Թէև օրերս սև սուգի մէջ կ՚անցընէի, յոյսս չէի կտրած. այս գիշեր այս ալ կորուսի, իմ չամուսնոյս անուանարկ և վատ ընթացքին ակնատես եղայ, մահ՝ ի սիրտս առն պիտի դառնամ, և վշտացս մէջ պիտի թաղուիմ։ Սակայն պարտ մ՚ունիմ կատարելու, այս է շնորհակալ լինիլ քեզ որ երկու տողով պաշտպան կեցար իմ դատիս գրոյդ մէջ. բայց այս դատն՝ որ թերևս ինձի պէս շատ մ՚անբաղդ կիներու դատն է, երկու տողով չպաշտպանուիր. գիրքեր, հարատատ բերաններ, ենկեղցիէն դուրս քարոզներ պէտք են իգական սեռին յարգը, պատիւն, անունն ու իրաւունքը վերականգնելու համար. . . :»

Կարմիր գիմակին, որ նոյն ինքն Իզարն էր, յուսակտուր ձայնն և արտասուր մ՚որ արտեւանունքին վրայ թռթռաց՝ սիրտս սառեցին։ — Խնդրեմ, մի շտապիր գնալու. քու ողբալի վիճակդ կ՚յարգեմ և ներում կ՚խնդրեմ որ անդէտս արդէն երած սիրտդ վշտացուցի իմ դիտողութեանս։ Մի վհատիր, տարաբնութեանդ և զատկներուդ մէջ վնասէ այժ և արիութիւն և թող որ վատշուէր ու ապաշնորհ մարդդ՝ ի կորուստ դիմէ։ Անպատեհ է վայրս այսպիսի քարոզ կարդալու. խօսքս կարճ կ՚կապեմ զարմանալով որ՝ ինչպէս շարութիւնը, նոյնպէս բարութիւնն երբեմն կ՚դատապարտուի դիմակով խօսելու՝ որպէս զի սկէպտիկեան լեզուներու ծաղր ու ծանակ չլինի։ Քանի՛ քանի՛ ծիծաղաշէմ դիմակներու ներքև արատ ք կ՚թաքնին արդեօք և անտես կը մնան քեզի պէս, քանի՛ քանի նկուն ու աղէտաբեկ սրտեր ուրուականի պէս կ՚թափառին արդեօք այս ուրախութեան անապատին մէջ և մոլորեալը կ՚փնտռեն։ Ահա մեր Պարոյրն ալ իրը կ՚փնտռէ, և ինչպէս պիտի գտնէ չգիտեմ։ Դու միայն կարող ես այս հանելուկը մեկնելու, քանի որ մատ ունիս անշուշտ անոր մէջ։ Ուսի ապատուդ սրբէ, մուցիր պահ մը սառասպանդդ, և բացատրէ թէ ովէ այն տաճկի հա-

նրանց որ Պարոյրին մատնին առաւ, իմ բաղդս ալ նայեցաւ, ոչ է այն վրային, որ քեզ Պարոյրէն բաժնեց սուր 'ի ձեռին։ Նոյնպէս կը խնդրեմ քեզնէ ցոյց տալ ինձ մարդ մ'որ ճանչէ և պատմէ թէ ո՞ր են այն բարձրագիր, այն իմաստասէր մարդիկ, մինչև վարդապետներ որ այն պարահանդիսին մէջ կ'գտնուին, ինչպէս որ դու իրաւի կամ կատակով ակնարկեցիր արդէն, երբ դերդ խաղալու ելեր էիր, և կ'խոստովանիմ որ շատ լաւ կ'խաղայիր այդ դերդ։ Այս խնդիրս քեզի կ'առաջարկեմ, ինչպէս որ հրաման տուիր որ ընեմ։ Իմ նպատակս մարդ ճանչել է, նոյն իսկ պարահանդիսի մը մէջ, և եթէ դու չես կարող կ'աղաչեմ Կ'ԷԷԸ-ն մը գտիր ինձ։

— Ես ոչէտ ու ապիկար Իզարս, անկարող եմ, Պ. Վրոյր, փափագդ կատարելու։ Ահա քեզ Կ'ԷԷԸ-ն մը, յարեց նա՝ ցոյց տալով հեռուն վրայի մը զոր արդէն տեսեր և Շամիլի նմանցուցեր էի, իմ եղբայրս է նա և քիչ շատ հմուտ. նա միայն կարող է քեզ գոհ ընել։ Իսկ Պ. Պարոյրը չկարտուիր և քիչ առենէն դառնալով քեզ հանելուկը կը մեկնէ։

Այս լսելով Իզար՝ Շամիլի ներկայեց գիս, որ նոյն պահուն օթեկի մը մէջ նստեր չորս դին կ'գիտէր դիմակովն։ Երբ խնդիրս խնացաւ, — Ես ալ ներկայ գտնուող քանի մ'երևելի աղգայիններ մտովին կ'գտէի, ըսաւ. Ծանրութիւն մը չպիտի լինի ինձ գատողութիւններս բարձրաձայն ընելովս, ուստի նստիր և մտիկ ըրէ . . . ։

Ը

Կ. Պոլիս, 23 յունվար 1867։

Երբ օթեկին մէջ՝ դիմակաւոր Շամիլի մօտ նստայ՝ անհամբեր անոր ականջ տուի։ Որքա՞ն սիրեմ նկարագիրս, ըսաւ նա, ահա շատ մ'երևելի և անանուն Հայ գլուխներ կ'տատանին անդուլ սա վարի շէն սրահին մէջ և մեզի որքան փոքր կ'երևին այն բարձրութիւնք։ Ցեղ, կարգ, դաս չկան այս պարահանդիսիս մէջ, ամէնքն արտաքուստ հա-

ւասար են, ամէնքը նոյն նպատակն ունին, այս է զբօսնալ, ամէնքը սփոփու

նէր, յԱնկլիա՝ Բիդ մը, Գրանսա՝ Թալէյրան մը, իսկ Թուրքիոյ մէջ պարզապէս ազատարան Եղեռոս մ'է. տիտղոս մ'որով տաճկաց քթէն կ'բռնէ և անոնց թերութիւնները կ'հեղնէ։ Մի կարծեր թէ ուրիշներուն պէս արտաքին շուք, նշան, փայլ ունի նա, ոչ. սակայն շքանշան, դիրք, մեծութիւն ունեցող նախարարներն անդամանորմէ կ'դողան, անոր բարեկամութիւնը կ'փառասիրեն, ակնարկին կ'կարօտին, վասն զի գիտեն անոր թագուն այլ ազդու զօրութիւնն։ Իր յատուկ արհեստին բերմամբն՝ ոչ միայն աւագանիին, այլ նոյն իսկ վեհապետին կրնայ մօտիլ անվներ՝ իբր առ ընկերն, և եթէ իր արհեստին պէտքն անդամ դադրի, իրեն յատուկ հրապուրելի տաղանդով, տեսակ մը բնատիպ հանդամանք (originalité) իր ներկայութեան պէտքը չդադրիր։ Ամէն անձի, տեղի, պարագայի յարմար բառ մը, զրոյց մը, մանր վէպ մը ունի շրթերուն վրայ, որոց իմաստասիրական գոյն մը կ'տայ։ Ամէն ինդիր կ'շօշափէ կ'անցնի, ամէն կրճիմ լուծելու հնար մ'ունի, ամէն վէրք բուժելու դարման մը, ամէն մարդու և բանի մէջ ինքզինք պետու ձեռնհաս կ'նկատէ, սակայն մինչ ցարդ՝ հաստատ սկզբունքի մը, լիովին կատարած մեծ գործի մը, զուտ հայրենասիրութեան մ'արդիւնքը ցոյց տուած չունի. կէս դարմաններ, կէս որոշումներ, կէս խորհուրդներ, կէս խօսքեր, ահա իր բոլոր վարդապետութիւնը. լոկ բանի մը մէջ կարուկ է, այս է անձնական շահուն. լոկ կուռք մը կը պաշտէ, այս է ոսկին. լոկ քաղաքականութիւն մ'ունի, այս է նորը հինին հետ կարկաղ։

Բռնութեան թշնամի՝ երբ անոր դէմ շանթէ կարծես թէ շրթանները պիտի քակուին, բայց բռնասէր է իր մտերիմներու հետ և մերթ քու. ամէն ազատական կարծեաց քարոզ՝ բայց կ'հալածէ նա, մինչև անդամ Ճղմելու կ'ձգնի օձապտոյտ ճանրով՝ իր դրութեան դիմադրող միամիտը։ Փառասէր և գահասէր՝ իր նպատակին հասնելու, ժողովրդականութիւն շահելու համար՝ մինչև անդամ բարիք կ'ընէ։ Հայոց Սահմանադրութիւն մը տրուելու ջանադիր կ'գտնուի, նոյն իսկ զայն կ'ծրագրէ, կ'հաստատէ, կ'փայլի, կ'պաշտուի, ժողովրդեան սրտին վրայ կ'տիրէ, սակայն մէկ ձեռքով տուածը միւսով ետ առնելու կ'աշխատի՝ երբ կ'դիտէ որ իր ատոմն ուրիշ արևներու առջև պիտի մարի. . . ։ Ներևոյթ թելերը կ'շարժէ, սահմանադրութիւնը քանիցս արա-

թուր կ'կոխէ, իշխանապետ (dictateur) կ'կանգնի, և այն որ երբեմն ամիրայական բռնակալութեան դէմ թուն մ'էր, անսահմանադրապէս պատրիարքի մը տարածին, և ժողովրդեան տրիբունն, ակնթարթի մը մէջ իր բանակը կ'թողու և Էրէուան քաղաքաց կարգը կ'անցնի։ Եւ իբր բռնաւոր՝ պէտք էր իր կարեվէր ինքնասիրութեան անմերձեր զոհէր։ ազգին մէջ ապստամբական ոգի նշմարէր և ապա՝ իբր օտար և անմասն աղէտալի անցեալ՝ մէկդի քաշուէր և Գամիլոսի պէս գոչէր. «Տար երկին որ հայերն իմ պէտքս զգային»։ Սակայն տարիներ անցան, և տակաւին այս պէտքն զգացող մը չեղաւ, վասն զի ժամանակիս պէտքը փառամոլի մ'ետութիւնը զգուել չէր, այլ ժողովրդեան մարմնոյն վրայ բացուած վէրքերը դարմանել։ Այս մեծ գործը Տրագիպուլ մը կատարելու վրայ է։

Եւ ահա այն մեծ հանճարն որ գրեթէ քսան տարի՝ մերթ իբր վերանորոգիչ (réformateur), մերթ իբր օրէնսդիր, ազատութեան և Սահմանադրութեան կարապետ՝ այլ վերջէն իբր բռնակալ և պետական պատասխարներու պարագլուխ՝ ազգային կատաղութեան դեկը վարեր էր, այսօր կ'գանգատի ազգին ապերախտութեան վրայ, կ'ողբայ որ իր մատուցած ծառայութիւնները չեն ճանչցուիր, և տարակոյս չունի՝ որ այս պահուս խակ քանի մը հինգարեայ մանրիմներու՝ որ երբեմն իր ոտքներն էին, կ'հաղորդէ ազգին վերաշինութեան համար նորէն երկնած խորհուրդներն և ապագայ յաջակցիներն՝ որով լի են իր թղթակաղն. ինչ հայրենասէր մարդ . . . :

ԾԱ.

Կ. Պոլիս, 25 յունիս 1867։

Այս տեղ Շամիլ իր խօսքը կարեց, մինչդեռ ես՝ Պարոյր, վհուկ, հանգէս, ամէն ինչ մոռնալով՝ անոր բերանէն կախուեր էի անմունջ։ Ցանկարծ ուշաբերեցայ և ըսի. — Գեղեցիկ է նկարագիրդ, այլ քիչ մը մթին և ծայրայեղ կ'գանեմ։ Մեղք, այնչափ հանճարի և ազդեցու-

թեան տէր անձ մ՚ունենայ հայ ազգն և անոր կարողութենէն չօգտի։ Բայց ի՞նչ է այդ հայրենասէր Ազրունիք անունը։

— Է՛հ, բուն անունը շորս հոմերուն և մանաւանդ սա երեքուն և աշխոյժ անձին հարցուր, որ ձեռքը Սահմանադրութեան տեսոր մը բռնած՝ անոր ունկն կ՚դնէ, անոր աչքին մէջ կ՚նայի և բերնէն չելածը կ՚գուշակէ, ելածն առ ոչ ինչ գրելով։ Ճշմարիտ սատան մ՚է նա, յեղափոխական մ՚է նա, ջերմ սահմանադրասէր մ՚է նա, վերէն ժողովրդեան ծոցն ընկած Պրուդոս մ՚է նա։ Դիտէ անգամ մը թէ ինչպէս կ՚ելլայ, կ՚ելլի, ինչպէս նաւը քամիծաղ մը միշտ իր հեգնալի շրթերուն վրայ կ՚սահի, և շեղակի սենարկ մը կ՚նետէ իր քովի բարեկամին, որուն ըսել կ՚ուզէ թէ սատանային խօսքը լոկ խօսք է, թերևս ծուղակ մը, դատ մ՚է, և չէ թէ սկզբունք։ Եւ արդարև սկզբունքի խենդ է այս մարդը, քաղաքականութեան պատ՚ի պատ ուղիները չգիտէ, սկզբունքի համար հոգի կ՚տայ, անոր հասնելու համար կ՚թռի, կ՚երթայ, փոյթը չէ թէ ճակատը քարի զարնէ. սկզբունքի համար, օրէնքի համար, կացութիւն, հարստութիւն, բարեկամ, սէր, կեանքն իսկ կ՚զոհէ։

Մի ծուռ դատեր զինքն երևոյթի վրայ. իր միջակ, վատոյժ, գրեթէ հալումաշ և անհանգարտ մարմնոյն մէջ՝ անգրդուելի հոգի մը, անձնական աղէտից տակուն և օտարի վշտաց կարեկիր սիրտ մը, սլաքի պէս սուր միտք կ՚կրէ, որով կ՚շեշտէ, կ՚կծէ, կ՚ծակէ ամէն դէմք որ դիմակ է, ամէն ձև որ դարան է։ Երեսը գեղջուկի, կերպարն անհամեղ, լեզուն թրթռակ, ձայնը խեղդուկ են, բայց իր բարոյական արիութիւնը, կամասիրութիւնը, վեհանձնութիւնն ու խորագիտութիւնը կ՚փայլին իր խաշոր սև աչերուն մէջ որ՝ երբ մերթ ընդ մերթ՝ վիճաբանութեան խանդով վառին՝ ամենէն հեռու դիմաբանին համեղում, բարեկամի հրապոյր, ոսկին ան ու հեռ կ՚ազդեն։

Հնամի և ազնիւ գերդաստանի մը զաւակ՝ ցաւակիր հօրէ որը կ՚մնայ և ընկերային անիրաւութեան թէև կանուխ զոհ, չվհատիր և իր տան փայլն ու անունն անվթար պահելու կ՚նկրտի և կ՚յաջողի պահ մը։ Սակայն մեր կողմերը բաղդն անիւը շուտով կ՚գառնայ, այսօր փառաց գնդին եղողը, վաղն անդունդ կ՚գլորի. փորձառութեան և գիտութեան դասերն անզօր կ՚լինին կնճռոտ գործեր պարզելու. և այն

որ՝ եթէ փոքր ինչ խոնարհէր՝ եղէգնին պէս՝ ներհակ հովերու առջև՝ թերևս վերականգնէր՝ թաւալելոյ կ'ընկնի իր փառասիրութեան մէջ, բայց անմեղուն կ'մնայ իր սկզբանց և բնատիպ բնաւորութեան մէջ։ Արբունին հակառնեայն՝ որուն վերջէն ոտքը դարձաւ և մեծ կուսակցութեան մը հզօր պարագլուխը, պաշտօնական յարաբերութիւններու փոշին կ'թոթուէ և ազգային գործոց ասպարէզը հոգւով սրտով կ'նետուի, իր սիրական սկզբունքն և փոքր ինչ մնափառութիւնն՝ որմէ զուրկ չէ, զոհ ընելու համար։

Ա՛հ, կարելի չէ նկարագրել թէ ինչ եռանդով կ'վառի հոգին երբ ազգային խնդիր մը յուզուի։ Հայ, ջուր, քուն, անձնական գործ, ընտանիք կ'մոռնայ, ինչ կ'ըսեմ, իր անձն իսկ կ'մոռնայ, գրեթէ գիշերը ցերեկ կ'ընէ, մարդ կ'փնտռէ, բանիբուն անձերով կ'շրջապատուի, և Սահմանադրութիւն 'ի ձեռին, մութ տրամադրութիւններ մեկնելու և ողղելու կ'սկսի, անոր մէն մի կէտն 'ի գործ դնելու խորհուրդներ կ'երկնէ, յատակագիծներ կ'պատրաստէ, կանոններ կ'յօրինէ. թէև Ճարտասան չէ, լեզու կ'թափէ անդուլ և փրփրի. վէճ, կռիւ, փաստ կ'գրգռէ, և այսպէս տեսական և գործական դաղափարներով զինեալ՝ ազգային ժողովարանը կ'ինջնէ և իր կուսակցութեան գլուխը կ'անցնի կը նստի։ Ժողովին մէջ խօսք մը, բառ մը չփախցներ, սահմանադրական վրիպակ մ'ուղղելու կազմ ու պատրաստ է, նոյն ինքն ԼԵՆՔՈՆ Սահմանադրիչն է և իր Ճշդիւռ դիտողութիւններով և արմատական հակումներով միապետականաց սարսափ, սահմանադրականաց հուր, երկչոտներուն սիրտ կ'տայ։

Իր պատգամն, իր Աւետարանն՝ Օրինադիրն է։ Երբ Արբուն կամ Արբակ երևնեն ժողովի մէջ՝ երկդիմի Ճառ մը հիւսեն, բազմաձգի դաւ մը նիթեն, պաշտօնական խրատիլակ մը ցոյց տան որպէս զի այս յեղափոխականն ահաբեկի, իսկոյն ոտք կ'ելնէ սա, ապրատոր նետի պէս հատու պատասխան մը կ'արձակէ անոնց դէմ, և մէկ բոպէի մէջ՝ անոնց բազմօրեայ դաղանի Ճգանց արդիւնքը փոշի կ'դարձնէ, կարծիքները կ'դրաւէ։ Իսկ եթէ խօսքն, որ անմշակ է, իր մտքին բացատրութեան չօդնէ, Սահմանադրութիւնը կ'հանէ իր ծոցէն և այս ինչ յօդուածը կ'կարդայ կամ դոց կ'ըսէ՝ 'ի հաստատութիւն իր դիտողութեան։ Ցարտամ որոշումներու, անհատն քննութիւններու, հաշտա-

բար, սուտ ու պատիր պաշտօնական ձևերու անհաշտ թշնամի՝ անդադար կ'մաքառի՝ իբր ժողովական, իբր երեսփոխան, զեղծումներ ջնջելու, սովորական գոնեցիկ արահետները գոյելու, ազգային պաշտօնատուններեր հիմն 'ի վեր նորոգելու, ազգային օրինաւոր տուրք կամաւոր նուէրի տեղ անցնելու, կղերին իրաւատութեան սահմանն որոշելու, առաջնորդական վիճակները բարեկարգելու, և ամէն կարևոր խնդրոյ համար նոր հիմնադիր, նոր ծրագիր պատրաստելու։ Իր զէնքն ոչ պաշտօնական տուր կամ'նշան, ոչ օձուտ միջոցներ, ոչ բարձր խնայականութիւն մը, ոչ գիտութիւն են, այլ պարտուց գիտակցութիւն մը, անյողդողդ կամք մը, ուղիղ և ուշիմ խելք մը։ Ամէն բան փլել, ըստ Սահմանադրութեան՝ վերաշինելու համար, այս է իր միակ փափաքն, իր փառասիրութիւնը։ Ծայրայեղ և անդարձադրելի փափաք, և առոր համար ստէպ պատրանք կ'կրէ։ Ասոր համար՝ երբ իր կարծեաց յամառութիւնն, իր աղաւաղոս և մերթ անզգոյշ ոգին՝ նոր նոր հակառակորդներ կ'յարուցանեն իրեն դէմ, արդարացի զայրոյթով մը կը զրդռի, ազգին պաշտած հինաւուրց մեկ [illegible] տապալելու համար հոգի շունչ կ'ապառէ, իր խորհրդոց ուղղութիւնն անբասիր հանելու համար կ'խօսի, կ'գրէ, ժողովրդասիրութիւնն և օրինաւորութիւնն իբր լծակ կ'գործածէ, բռնաբէր կուսակցութեան մը գլուխները կ'սասանէ, կ'կործանէ, և Սահմանադրութիւնը պահ մը վտանգէ կ'ազատէ . . . ։ Բայց այն առեն թշնամին զէնք կ'փոխէ, պաշտօնական գոնները ձեռք կ'առնու, իբր ապստամբ կ'ամբաստանուի այս արիասիրտ մարդը։ գրպարտութիւններ անոր գլխին վրայ կ'աեղան . . . ։ Կ'սարսուի նա, կ'գիտէ հեռուէն Բանտերի տուփը, կ'զգայ գալիք փոթորիկը, մինակ կ'մնայ և Միրապոյի պէս կ'ըսէ. «Հայ ժողովուրդ, արժանի ես այդ շղթայ կրելու . . . ։» Եւ ապա վհատութեամբ կ'պաշարուի . . . ։ ձայնը կ'մարի, ազգային տեսարանէն կ'քաշուի, և ապա մարտի պետական պատահարը կ'հասնի և ժողովներուն հետ Սահմանադրութիւնը կ'տապալի։ Իր վերջին հառաչն այս եղաւ. «Պակիդ կ'պատրաստուի . . . ։

ԾԲ.

Կ. Պոլիս, 27 Յունիս 1867.

— Մերուժան — պիտի ըսէր թերևս, ըսի Շամիլին՝ խօսքը կտրելով։ Իրաւի այս [illegible] մեծ մարդ կ'երևի իր գլխովը, թէև վատ և ապիկար մարմնով։ Յեղափոխական ժամանակներ՝ այսպիսի յանդուգն և խիզախ մարդիկ կարևոր են, զէթ շարահնար և փառամոլ անձերու մեքենայութիւններն երևան կ'հանեն և առնոց կրից սանձ մը կ'դնեն։ Մարա, Տանդօն, Ռոսպէսպիէր պատուհասներ էին, շատ անմեղներու արիւնը մուան՝ անիրաւութեան զէմ մարտնչելու ատեն՝ սակայն ժամանակին ծնունդներն էին։ Իրենք ընկան, իրաւ, բայց շատ բաներ կանոնեցին։ Ցաւալին այն է որ մեր մէջ Ճշմարտասէր և ժողովրդ շահասէրներ դահճին սակրին ներքև չեն ընկնիր, այլ մասնութեան Ճանկին տակ կ'թալթալին։ Քանի երջանիկ էին այն օրերն երբ եկեղեցի և աստուշան, խաչ և միտր, հայրենասէր և մասնաստ զէմ առ զէմ կ'կռուէին Զմիւռնոյ զետին եղերքն, Ուսարայրի դաշտը։ Հիմակ դատաստանը դիմակ ունի, անպատկառ մեր տունը, մեր եկեղեցին կ'մտնէ, մեր բարեկամը կ'ձեռնադայ։ Հիմակ դատաստանը քաղաքապետութեան նոր սրաքներով կ'մաքառի, և չէ թէ սրով և վահանով. հիմակ թշնամին գիրքն մ'է, հանքը մ'է, կանոն մ'է, որ մերթ արծուին ու մերթ մահկին ատուերին տակ կ'շնթեն, կ'խածնեն, կ'մասնեն մուրթին՝ և ասոր աքսորման, անոր արդերման վճիռը կ'տուանան։ Այսպիսի որոգայթներու մէջ միթէ գործել հնարին է։ Քանի քանի հայեր կան արդեօք որ ոսիտաններ դատնալու համար միանակ ազատ օդ, ազատ հող, ազատ շունչ կ'փափաքին, և սակայն եթէ իրենց սրտին խանդէն շարժեալ՝ քիչ մը խօսին, քիչ մը գրեն, քիչ մը գործեն գոնէ հիկ ընթացքին տարրեր կերպով, խսկոյն անարեւոյթ ձեռքէ թաւալգլոր կ'ընկնին 'ի խոր վիրապ։ Ուստի չեմ զարմանար, բարեկամ, եթէ նկարագրած յեղափոխականդ ալ 'ի կենդանոյն գերեզմանն է, չեմ զարմանար եթէ շորս կողմը լրտեսներով պաշարուած է,

* Այս յետագայ գիրերն՝ որ տակաւին ազատած չէին, արժան դատեցինք ապն հաւաքածոյն մէջ գետեղել։

վասն զի այս է Ֆշմ-բրոնէ հայուն վիճակը ներկայ դարուս մէջ. . . .

— Բայց այդ տխուր խորհրդածութիւնները քեզի պահէ, ըսաւ ինձ Շամիլ, և աչքդ դարձուր սա մարդուն որ Ալբրունին խմբակին կը մտնէնայ։ Զոր ու ցամաք հսկայ մ'է, արդէն Սահնաւորեան ձայնը հեռուէն կ'լսեմ, երկայն ու ոսկրուտ դէմքը կ'ճանչնամ, կլոր ու անոյշ աչերը սակայն նկատեր և անոնց մէջ կայծ մը չեմ տեսներ։ Ահա ֆէսը գլխին վրայ կ'թռի, սրունքը՝ քալելու ատենն իրարու կ'խառնուին, քիթը մարմնէն առաջ կ'վազի, ձեռները մինչև ծնկերը կ'ինջնեն և երկու օգահերձ թիւերու պէս կ'շարժին։ Բայց քանի մեծ է հասակին պէս համբաւն, իբրև նրբամիտ գրիչ, իբրև խորագէտ ատենախօս, իբրև բազմահնար պարագլուխ խաւարասէր կուսակցութեան մը որ սահմանադրական հոսանքին դէմ քսան տարիէ վեր թմբեր կանգնելու կ'ձգնի։ Սահմանադրասէրն իր լեզուէն կ'վախնայ, և զանի շահելու անյոյս՝ կ'զգուէ, յետադէմն իր խօսքը պատգամի տեղ կ'բռնէ, և դժուարին պարագաներու մէջ՝ զանի յառաջ կ'մղէ։ Ո՞վ չճանչեր հայ ազգին այս Սրէնդրը՝ որ եթէ ոչ խելքով՝ իր ահարկու ձայնովն ամենուն ահ ու սարսափ կ'ազդէ և ականջներ կ'համոզէ։

Եւ արդարև՝ Շամիլի ըսածին պէս՝ երբ Սրէնդրը խմբակին մտեցաւ, ամենէն առաջ հայ Մէրէրանի քայլ մ'ընդ առաջ գնաց, անոր ձեռքը քանի մը կանգուն հեռուէն բռնեց թոթուեց, մինչդեռ միւսները յարգանաք բարևներ տուին, յեղափոխանին զատ, որ՝ ըստ սովորութեան՝ հեգնալի ժպիտով մ'անոր հասակը վերէն վար չափեց և կունակը դարձուց մեկնելու կերպով։ Այս ընթացքը դիտելով Սրէնդրը։

— Գնա, երաժիշտներուն ըսէ, պարոն Պրոգրոս, գուցայ նա այնպէս որ ձայնը մինչև մեր օթեակը հասաւ, գնա ըսէ որ «Սահմանադրութիւն նոր բարև մը դնէ» երգը նուագեն, քանի որ մեզի բարև չկայ։

Այս կծու հեգնութենէ՝ Պրոգրոսի արիւնը դարձաւ, բարկութենէն կակազել սկսաւ և 'ի վերջէ յետին ձիգ մ'ընելով պոռաց.

— Դու կ'անցնիս, գու որ կարծես թէ Սահմանադրութիւնը տապալող երէնին մին ես, բայց սահմանադրութիւնը չմեռնիր, և միշտ մեր ու ապագայնին բարը պիտի ընդունի։

— Ինչ կ'ըսես ասոր, վրայ բերաւ Սէնտոր Մէտերինկին ուղղելով խօսքը, Սահմանադրութեան այս պրոպոզիցիոնը բնաւ խելք չպիտի գնեն, արթուն կ'երազեն և շինելու տեղ կ'աւրեն։ Զգիտեն որ ազրութիւնը . . . ։

— Մինուրէյի ալան ֆուէնֆենը հոգը էր, ըսաւ Մէտերինկի, և սկսաւ երկայն ատենաբանութիւն մ'ընել, որուն խնամատը չիմացայ։ Այս միայն գիտցի որ Սէնտոր նոյն պահուն չորս գին պարտող կինեբուն խօսք կ'նետէր և կ'ըսէր, — Հիմակ Սահմանադրութեան երդը պիտի լսենք։ Յանկարծ դիմակաւոր մ'որ կին կ'երևէր, Սէնտորի մօտ եկաւ և բաւական բարձր ըսաւ.

— Էֆէնտի, դու ուր որ երթաս խառնակութիւնը հետդ կ'տանիս։ Երբ փասատ պակսի՝ կ'պոռաս, կ'հայհոյես, երբ շունդ հատնի՝ ձեռքով ու ոտքով կ'խօսիս, երբ ձեռքդ ու ոտքդ յոգնին՝ աչքով և ունքով մասնելու կ'ելնես։ Գոնէ լեցուն գլուխ մ'ունենայիր, գոնէ պաշտպանած անշահ դատիդ ամբը լինէիր։ Քու խորհրդատուդ Պ. Զ . . . . նն է, նեցուկդ ամիրան, զէնքդ՝ բանտարկութիւնը։ Ճարտասանի անուն ունիս, և լոկ ձայնատան ես, քաղաքագէտ կ'կարծուիս, և տեղեկութիւններդ փաշաներու դռանը օտ-դրանը կ'առնուս, երևելի կուսակցութեան մը գլուխ կ'սեպուիս, և ոտքն անդամ չես։ Մը ժողովին գանուեր ես և այն ժողովը չես խանգարեր, որ ազգային խնդիրը յուզուեր է, և անոր օտարոտի գոյն չես տուեր։ Հիմակ ալ եկեր ես այս պարահանդէսը վրէժխնդրութեան ասպարէզ մը դարձընել, կապ ու կռիւ դրդռել։ Դու և քեզպէսները հիմակ գլուխ կ'բռնէք, բայց մեծապէս կ'սխալիք . . . ։

— Այս ինչ սատանայ է — պոռաց Սէնտոր և ուզեց դիմակաւորին ձեռքէն բռնել։ Բայց նա խոյս տուաւ և անհետ եղաւ։

— Անպատճառ Պրոպոն սիրուհին է, յարեց նա, և քահ քահ խնդալով և լուսատի այնպէս երալով, ահա այս տեսակէն են Սահմանադրութեան ջատագովները, հնամարդիներ, վատեր՝ որ կ'նախատեն, կը պոռան և կծիկը կ'գնեն . . . ինչ կ'ըսես Մէտերինկի Էֆէնտի . . . ։

Մէտերինկի «Ասոնք խաղեր են» ըսաւ, և քթախոտ մը քաշեց։ Իսկ ես Շամիլին դառնալով հարցուցի թէ ով է այն կինը։

— Չեմ ճանչեր այս կինը, բայց կ'երևի թէ սմեղուկ բան մ'է և

Սրէնդրէն ներսը դուրսը գիտէ, վասն զի ըսածները քիչ շատ իրաւացի են։

Սրէնդրէ առանցք մ'է որուն շուրջը կ'դառնան մելեռանդ սէիտներ, վարձկան պաշտօնատարներ, փողրոզի հարուստներ՝ որ ինքնին արժէք մը չունենալով՝ այս մեծարանին վրայ կ'կոթնին նպատակի մը հասնելու։ Սրէնդրէ որ և է կարգեալ իշխանութեան խոնարհ ծառան է, յատուկ սկզբունք մը, աղէկ գէշ՝ չունի, այսօր թիւրք է, և թրքաց շահերը կ'պաշտպանէ, վաղը ռուս է, և ռուսաց քաղաքականութեան հետևիլ կ'յորդորէ, ուրիշօր մը կրնայ թաթար լինիլ, և թաթարներու Խանին առջև ծունր դնել։ Եթէ կապիկը, գայլն, աղուէսն իսկ իշխանական սրով կամ գաւազանով իր առջևն ելնէ, Սրէնդրէ անոնց երկրպագութիւն կ'ընէ, վասն զի երկրի վրայ արքունական իշխանութիւն երկնատուր ձիրք մ'է իրեն համար։ Ուստի որ և է շարժում կամ հակում մ'որ այս իշխանութեան ներհակ կ'գտնէ ապստամբական ցոյց կ'համարի և իսկոյն անոր դէմ այնքան կ'գոռայ որ ձայնը տէրութեան ականջը կ'հասնի։ Կոյր հնազանդութիւն, անշարժութիւն է իր քաղաքականութիւնը։ Սա համոզումն ունի որ հայերն 'ի վերուստ դատապարտեալ են յաւիտեան գերի մնալ և Աստուծոյ խրատը բառ առ բառ գործադրել ամէն տիրապետող ազգերու մէջ, այնպէս որ եթէ օտարն իրեն ապտակ մը տայ՝ միւս երեսն ալ կ'դարձնէ, և այս դրութեամբ կ'յորդորէ որ երբ քիւրտը հայուն մէկ ոչխարը գողնայ՝ հանէ իր կոթն ալ տայ, երբ կինը անպատուէ՝ հանէ իր աղջիկն ալ ընծայէ, երբ գլուխը կտրէ՝ կտրող ձեռքը համբուրէ։ Հաւատարմութիւն, անսասան անձնուրացութիւն առ մեծն, առ զօրաւորն, այս է ահա իր քարոզը թէ տան, թէ եկեղեցւոյ, թէ շուկայի, թէ ժողովի մէջ։ Հետևապէս ամէն խօսք, ընթացք և գործ որ այս իր սկզբունքին ներհակ է, ինքնակար կ'համարի նաև ազգին և զայն տէրութեան ականջը ձգելու կ'ձգնի խղճի հանդարտութեամբ, ըստ որում բարիք մը ընել կ'յուսայ։ Բայց ինչո՞ւ կ'ծանրանամ այս վատազգի մարդուն վրայ, որ ոչ միայն մականունով այլև հոգւով մարմնով հայութենէ օտար է։

Սրէնդրէ մանկութենէ վեր կ'աշխատի տէրութեան մէկ պաշտօնատան մէջ պզտիկ անկիւն մը առնալ, և եթէ տէրութիւնն այս դաստիարդական մասնութիւններու կարևորութիւն տար՝ թերևս ցարդ փաշա

մը կ'լինէր, սակայն արի տես որ դեռ այս օրերս Հաղիւ ուրեմն կարող եղաւ անդամ լինիլ Ա. . . . ժողովին, և ինքը՝ թէև երիտասարդի հովեր կ'առնու, վաթսուն հինգ տարեկան է . . . և կնասէր։ Տես անդամ մ'ինչպէս ակնարկներ կ'նետէ շորս կողմը թռթռող կիներուն՝ որ իր քթէն կ'բռնեն և իրմէ կ'խորշին, վասն զի իր խոշոր ձայնէն, որ տեսակ մը Ճեղքած փողար է, կ'վախնան . . . ։

ԾԳ

Կ. Պոլիս, 28 յուլիս 1867։

Մինչդեռ Շամիլ այս մարդուն նկարագիրը կ'ընէր շատ անորոշ գոյներով, թերևս դիտմամբ, Սոֆէոթ հայ Մէջլիսին հետ բերան առ բերան և իրը կամացուկ կ'խօսէր, թէև ձայնն ամէն մարդ կ'լսէր, իսկ շարժումներն այլանդակ կ'երևէին և կարծես թէ մեծ խնդութիւն մը կ'յայտնէին։

— Թուլիդին։ դամբանականը քեզի կ'ընկնի ընել, կ'ըսէր նա իր խօսակցին։

— 1862ին ալ կարծեցինք որ մեռաւ, պատասխանեց Մէջլիսին։ և գիտես որ դագաղը տանելու տանն Նասրատինին պէս գլուխը վերցուց և ըսաւ՝ մինչդեռ մենք մեր բռնելիք Ճանապարհը որոշելու մասին կը խորհրդակցէինք. Իմ կենդանութեանս դէն ես ճամբէն կ'երթայ։ Եւ արդարև 1863ին շունչ առաւ և իր շարիղը շարունակեց, մինչև որ վերատին փոսն ընկաւ։ Բայց զզոյշ եղիր նորէն կրնայ կանգ առնուլ, և այն ատեն ուրախութիւնդ քեզի պիսի մնայ։ Ժողովուրդ ըսածդ այն գեսերուն կ'նմանի որուն ջրերն մերթ կ'դաշտանան և հանդարտ երես մը կ'առնուն, մերթ աներևոյթ կ'լինին և գետնափոր անձաւներէ անտես անցնելով յանկարծ կ'պայթին, հեղեղատի պէս լեռներէն կ'գահավիժին որոտընդոստ, և քար ու ժայռ թաւալցնելով կ'բերեն։ Նոյնպէս և մեք ժողովրդեան կեդրոնացեալ կրից թափէն թերևս թաւալգլոր լինինք անյարիր . . . ։

— Տարակոյս չկայ, ըսաւ նոյն պահուն՝ բաւական բարձր ձայնով՝ Գոմէս մ'որ սեղեւեղեր կ'անցնէր անոնց քովէն՝ թեւին տակ գրքոյը մ'առած։

— Զէվզէքն է, ըսաւ Սոֆոքոս, խօսքին սկանչ մը կախեր, և իր խօսքը շարունակեց Մէրէրնիկին հետ։

Սակայն սև գոմէսն Սոֆոքոսի առջև կանգ առաւ և երեսը բանալով,

— Միթէ հիմակ ճանչցար զիս — հարցուց նա։ Եթէ ես զէվզէքն եմ, որովհետև քու կարծիդ կ'անդրանեմ, դու ալ զէվզէքին հայրն ես։

Սոֆոքոս սոսկալի աղաղակ մ'արձակեց և հանդիսականներուն մէջէն հեռացաւ դնաց, թէև որչափ անհետ լինիլ կ'փափաքէր, դարձեալ իր բարձր հասակը հեռուէն աչքի կ'զարնէր, տեսակ մը կաղնիի պէս, որուն չորթաթեկ ոտտերը չարաշուք հակապատկեր մը կ'ընծայեն բոլորտիքն երևցող թարմուէտ ծառերուն վրայ։

— Ինչ կ'նշանակեն այս փախուստն և սև գոմէսին խօսքը, հարցուցի Շամիլին։

Շամիլ պահ մը մտածեց և ասաց ըսաւ.

— Սոֆոքոսի և սև գոմէսին ընթացքը Հայ ընկերութեան մէկ այլանդակ պատկերը կրնայ ընծայել։ Իրօք զէվզէքը Սոֆոքոսին որդին է ըստ ծննդեան, այլ թշնամին՝ ըստ զգացման, հետևապէս խորթ զաւակ մը։ Դիտէ անդամ մը թէ մինչև ո՞ր կ'հասնի ատելութիւնը հօր և որդւոյ մէջ՝ երբ մէկ կողմէ տգիտութիւն և միւս կողմէ ծայրայեղ ազատասիրութիւն իրարու կ'հանդիպին։ Սոֆոքոս՝ ակամայ իր որդին Բարիզ կ'դրկէ որ կրթուի և որդին Վ.օրդէրի, Գուրիէի, Գապէտի դասերով մնած՝ կ'գտնայ իր հայրենի տունն անփորձ և համրակ, ու կ'սկսի հաւասարութիւն, ազատութիւն քարոզել։ Հայրն՝ որ ազատութեան բառէն խակ կ'սոսկար՝ կ'կարծէ թէ որդին խելագարեր է և ամէն ճիգը կ'թափէ որ անոր հիւանդ գլուխը բուժէ։ Նոյն պահուն ժողովրդեան մէջ սահմանադրական կուսակցութիւն մ'որուն պարագլուխներէն մին Սոֆոքոս էր՝ կ'տքնէր անդուլ որ Սահմանադրութիւնը կործանէ։ Ընդ առեն սև գոմէսն՝ որ Հոգոն անուամբ ամենուն ծանօթ է, գիշերցերեկ հօրը գէմ կ'մակարուի, և՝ ինչպէս քահանայ մ'ի զարձ կ'աշխատի բերել մեղաւոր մը։

նոյնպէս Հոփոն իր հայրը համոզելու համար ոչ միայն կ'խօսի, կարդացած գիրքերէն վկայութիւններ կ'բերէ, այլև անդադար յօդուածներ կ'գրէ և անոր կ'կարդայ։ Մինչդեռ հայրն օր ըստ օրէ կ'համոզուի թէ որդին յիմար է, որդին ամէն օր կ'կրկնէ որ հօրը գլուխն ողորմելի վիճակի մէջ է։ Սակայն այս ընտանի կռիւն երկար չէր կրնար տևել, և ծաղրելի կամ եղերական վախճան մը պիտի առնուր։ Օր մը Հոփոն հօրը սենեակը կ'մտնէ ու կ'ըսէ. «Կամ նախապաշարումներդ պիտի թողուս, Սահմանադրութիւնն ինձի հետ պաշտպանես, արդի պաշտօնդ՝ որ տարկութիւն է, պիտի թողուս. իմ սիրդուդս պիտի ընդունիս, որ է ամէն ինչ, ստակ, կեանք, աղջին համար զոհել, վարժատուններ բանալ, օրագիրներ հաստատել, եկեղեցիներու ոսկին ու արծաթը ծախել և Հայաստանի ժողովրդոց մէջ լուսաւորութիւն տարածելու գործածել, կատարեալ հաւասարութիւն մտցնել, կամ սատուրն առնուլ և դիս սպաննել։»

Եւ այս ըսելով՝ Հոփոն՝ սաստիկ բորբոքած՝ իր թիկնոցին տակէն սուր մը կ'հանէ ու սեղանին վրայ կ'դնէ։ Սոֆէոբ՝ որ այս ամէն լսածն ու տեսածն երազ կ'կարծէր, փորձ կ'փորձէ իր որդին անուշութեամբ զգաստութեան բերելու, բայց երբ կ'նայի որ անուշ լեզու, յորդոր և ազաչանք չեն զօրեր, բերանը կ'փոխէ և կ'սպառնայ զանի ժառանգութենէ զրկել, տունէն վռնտել, և մինչև անգամ ոստիկանութեան ձեռքը մատնել՝ իբրև վտանգաւոր մարդ՝ եթէ իր այս յիմարական գաղափարներու մէջ յարատևէ։

Հոփոն՝ այս լսելով սաստիկ կ'կատղի, աչերը կ'գառնան, սուրը կ'առնու և հօրը վրայ կ'յարձակի։ Սոֆէոբ ինքզինքը սենեկէն դուրս կ'նետէ պոռալով, և շիտակ ոստիկանին կ'երթայ և որդին ձերբակալ ընել տալով՝ բանտ կ'դնէ վերջապէս։ Հոփոն կ'պնդէ թէ՝ ինքն անմեղ է, թէ իր միտքը նախ իր հայրն և ապա ինքզինքը սպաննել էր, թէ այստեղև գործ չունի անոր հետ և թէ ցմահ անոր գաղափարաց դէմ պիտի կռուի։ Բայց այս խօսքերն անօգուտ կ'լինին, Հոփոն քանի մ'ամիս բանտին մէջ կ'ապաշխարէ և ազատութիւնը գտնելուն գիրք մը կ'յօրինէ։ Այս գրքին անունը Հոփոնէ հայր մ'է, և ահա թեին տակն առած կ'պտրտի։ Եթէ հարցնես թէ նիւթն ինչ է, ահա ըսեմ.

Հատուն կ'պնդէ թէ Հայոց մէջ իր հօր պէս կոյր, օտարասէր, ազգատեաց մարդիկ շատ կան՝ որ ուխտած են ազգին դէմ չարիք նիւթել, թէ այսպիսի մարդիկ մինչև որ անդին չերթան, և նոր սերունդ մ'իր ունեցած գաղափարներով անոնց չյաջողիր՝ կարելի է լուսաւորութիւն և յառաջադիմութիւն յուսալ, թէ անոնց վստահիլ յիմարութիւն է, թէ ազգը քանի մը տակի կամ շքանշանի համար ծախելու պատրաստ են, և թէ պէտք է համբերել որ նոր արև մը ծագի հայ երիտասարդութեան վրայ։

— Հիմակ, յարեց Շամիլ, կ'թողում քեզ երևակայել, թէ Հատունին հանած գործն ինչ տխուր տպաւորութիւն բրաւ առ հասարակ ամէն հայոց վրայ, ինչպէս հին և նոր մարդոց մէջ արդէն տիրած անվստահութիւնն աւելցուց, ինչպէս անհեթեթ կերպով պաշտպանել ուզած գաղափարն ինքնանց և նոյն իսկ Ճշմարիտ ազատասէրները վհատեցուց։ Սէնոսը՝ քանի որդին տեսնել կարծէ առուանան տեսնել, ուստի երբ Հատուն անոր առջևը կանգ առնելով երեսը ցցուց՝ Սէնոսը կծիկը դրաւ։

— Այս Հատուն տեսակ մը խենդ է ուրեմն, ըսի Շամիլին, և եթէ զանի թողլով ուրիշ կարևորագոյն անձի մը անցնինք, դիս շնորհ հապարտ պիտի ընես։

ԾԴ

Կ. Պոլիս, 30 Յունիս 1867։

— Կարևոր մարդիկ, փառք Աստուծոյ, պակաս չեն այս պարահանդիսիս մէջ։ Անոնք որ քիչ մը մեքան լսել, քիչ մը լրագիր կարդալ, քիչ մ'ուսանաւոր դրել, քիչ մը խօսիլ գիտեն, գրագէտ, քաղաքագէտ, պուէտ, Ճարտարախօս, փիլիսոփոս կ'անուանին և Հայոց աշխարհին մէջ կարևոր մարդիկ կ'ուսպուին։

Դիտէ մի անգամ սա պատանին՝ որուն չորս կողմը՝ ծիրանի գօտիի պէս՝ պատեր են գոյնզգոյն տիկիններ և օրիորդներ։ Ամէնքն անոր վը-

բայց կ'զնայլին, զանի կ'փայփայեն, անոր ակնարկին կ'կարօտին, հագուստը, ձեռքը, հասակը կ'գովեն, լեզուն կ'սիրեն և վերջապէս ամէն ձիգ կ'թափեն որ անոր համարում գրաւեն։ Եւ ինչո՞ւ, թովիչ մ'է նա, ձեռքը քնար մ'ունի, որով համբաւ կ'բաշխէ լիաձայն երբ աւիւնը բռնէ և հոլաթեւ Պեղասոսի վրայ հեծած երկին կ'սլանայ՝ անմահիկ կարգը դասելով իր մուսային առաջին։ . . . ՈՒ, ինչ կարեւոր մարդ, ինչ պիտանի, անհրաժեշտ անձ մ'է նա, թէև էս բոպիկ է, պատատուն լաթեր հագեր է և անօթութենէ բերանը կ'հոտի. . . :

Այս է մեծ բանահիւսներու բաժին, այսպէս կ'կարծէ և մեր Մ---ՆԻՆ՝ որ կ'մխիթարուի կարդալով անոնց ազէտից նկարագիրը, կ'պարծի որ ինքն ալ անոնց պէս հէք և չքաւոր գոյութիւն մ'ունի, կ'գնդէ որ իր բանահիւսական հանճարին յայտնի ապացոյցն է իր կարօտութիւնն, որ իրրև անմահութեան գրական՝ չուզեր թողուլ, և՝ ապանիայի Քամօէնսին պէս՝ իր յեսին շունչը հիւանդանոցի մէջ աւանդելու կ'փափաքի։ Այո, քանի կիսէ Մ---ՆԻՆ բանաստեղծներու վարքը, գիտէ թէ Հոմեր կ'մուրար, և՝ ինչպէս կ'ըսէ Կօլսամիթ՝ բերանն աւելի ոտանաւորով լի էր քան թէ հացով, թէ կատակերգակ Բլօսոյեսան կ'գարձնէր իր պարէնը ճարելու, թէ Դէրանս ստրուկ մ'էր, և Դասս անանկ մ'որ իր կատուին տաղը գրած է՝ աղաչելով զայն որ աչքերը վառէ, որպէս զի՝ առ 'ի չգոյէ ճրագի՝ կարող լինի անոնց լուսաւորելու։ Գիտէ թէ Զօժլաս գաղղիացին ---- մանանոնը ստացեր էր, վասն զի ցերեկը պարտապահանջից երեսէն դուրս ելնելու կ'վախնար, և մեռնելու ատեն կատակ ըրեր էր որ իր դիակը վիրաբոյժներու ծախուի և գոյացած դրամով կարելի եղածին չափ իր պարտքը վճարուի։ Քանի կ'յիշէր նաև այն բանաստեղծներն որ անօթութենէ մեռան և շատեր անթաղ մնացին. բայց ինչ պէտք ունի թաղուելու Մ---ՆԻՆ՝ քանի որ իր հոգւոյն բնակարանը Հ---Ղ---Ի ---Ի---Ը պիտի լինի։»

Մինչդեռ Շամիլ հայ Մ---ՆԻ ըսածը կ'նկարագրէր, ես բոլոր ձիգս կ'թափէի որ զանի նշմարեմ և կանայի ակումբը կ'գիտէի ակնապիշ։ Բայց անտեսանելի էր ինձ, և չէի կարող երևակայել թէ ինչպէս հայ Հոմերին ճակատն աչքիս չզարներ։ Ցանկարծ օրիորդի նման գիմակ մ'այն ակմբէն զատուեցաւ՝ թևէն քաշելով թղուկ մ'որ առ 'ի շեղ կ'քալէր, գլուխը սեխի ձև ունէր, և գագաթը՝ կղմինդրի գոյն

պղտիկ գրասկ մ՚որուն մէջ ամեղ քանի մը թելեր կային իրը ծոպ։ Հագուստը հնոտի, թիկնոցին թելերն արմատկէն վար չէին իջներ, շապկին վիզնոցն ապտուտ, և լայն փողպատ մ՚անկապ կ՚ծածկէր կուրծքն որ ուռած կ՚երևէր, ինչպէս նաև կունակը։ Տախտակին վարի ծայրերը գրեթէ մինչև ծունկը կ՚հասնէին, և պատառուն գուլպաները մաշած մուճակներուն վրայ բնկնելով սրունքը կիսամերկ բայց կ՚թողուին։ Դէմքը՝ թէև բայց՝ մոմ.օծ գիմակի մը գոյնն ունէր, և շատ նիհար կ՚երևէր մարմնոյն մնա՝ որ բառական լեցուն էր։ Աչքերը մանր էին և խորունկ, իսկ նորարոյս մօրուս մ՚որ ծնօտին կողմէն աւելի երկար էր ու նօսր թէ պատանեկութեան և թէ ծերութեան նշան կ՚ընծայէր։

— Ա՞յս է արդեօք Մ----ին կոչած անձդ, հարցուցի Շամիլին։

— Նոյն ինքն է։

— Ինչպէս այս անշնարելի հուլէն կարևոր անձ կ՚համարիս։ Մինթ Պօլիս ուրիշ երևելի բանահիւսներ չունի։ Աւելի հաւանական է որ ծպտեալ լինի այս Մ----ին և իր հասակն իսկ կրճատելու դաղանիք մը գիտէ այսպիսի պարագայի մէջ, ինչպէս որ կրճատեր է իր բոլոր հագուստը։

— Այդպէս չէ, բարեկամ, Մ----ին ---էն չէ, և ոչ շինծու հանճար մը։ Զինքն իր բնիկ վիճակին և կերպարանին մէջ կ՚տեսնես, և արդէն ըսի քեզ որ այս շլխոի և թափթփած ընթացքն իրեն պարծանք կ՚համարի։ Իր հանգուցեալ այն է թէ բանահիւս մ՚է, վասն զի ուր ուրեմն ոտանաւորներ կ՚շարադրէ և լրագիրներու մէջ տպել կ՚տայ։ Երբ հանդէս մը, հարանիք մը, ուրն մը կատարուի, երբ մարդու մը զաւակը մեռնի կամ ծնի, երբ տապանագիր մը գրելու պէտք լինի, Մ----ին ինքնայորդոր կ՚նստի գրասեղանին առջև և օրն՝ ի բուն աշխատելով՝ ապրիս անգիէն իմաստ և ոճ փոխ առնելով՝ նուագ մը, տաղ մը, շէր մը, գեղջն մը, եղերգ մը կ՚յօրինէ, խիստ մաքուր կ՚օրինակէ և ծոցը դնելով գրածը՝ ճամբայ կ՚ելնէ և իր գիմացն ելնող ծանօթ և անծանօթ հայուն իր քերթուածը կարդալով՝ կ՚իմացնէ թէ բնաւ հանգիստ չունի, մէկ կողմէ՝ իր բանահիւսական աշխոյժը՝ սիրան ու հոգին կ՚մաշէ, միւս կողմէ՝ ապերասպիրներ գլուխը կ՚ուղան և իրեն զանազան տաղեր կ՚ապտպրեն, ինչպէս որ կարդացածն ապտպրած են, և այս պատճառաւ չէ կարող՝ի կատար հանելգիւցաք-

հական մէկ մեծ քերթուածն՝ որ զՀայկը պիտի նսեմացնէ և զինքը Ալիրգիլիոսի համապատիւ պիտի ընէ։

Մ---ոյին իր Տէ-ընէն ունի, այնպէս որ երբ իր մեծ գործէն փոքր ինչ ափոփելու պէտքն զգայ, անոր պիրերգներ կ'ուղղէ և եթէ օրապիրները մերժեն՝ ամէն շաբաթ զատ զատ թղթի վրայ տպել տալով՝ ձրի կ'բաժնէ յատուկ պահարանի մէջ դնելով, ամէն բանասէրներուն։ Իր ծոցն այսպիսի թղթերու չափը չկայ, մինակ կ'զարմանայ որ լայ շարժելու դիտմամբ յօրինած ոտանաւորն ընթերցողին ծիծաղը կ'շարժէ, հետևապէս կ'նկատէ որ տակաւին ազգին մէջ բանահիւսի արժէքը չեն ճանչեր և մեծ փափաք ունի մեռնելու որպէս զի անմահ վերածնի և իր յարգը ճանչցի . . . ։ Ինչափ համոզուած է Մ---ոյին որ բանահիւս մ'է, և չբաւարարեցաւ ապրելու նախատահմանուած՝ որ իր ծնողաց առաջարկութիւնն ուրիշ պաշտօն մ'ընտրելու մասին՝ կ'մերժէ միշտ և անոնց միայն սա պատասխանը կ'տայ. «Դուք զեռ չէք ճանչեր զիս, ես ապագայի համար կ'աշխատիմ . . . ։»

— Զրա՞ս որ այս ևս Հ---ոնն մէկ տեսակն է, ըսի Շամիլին։ Դարձեմ թէ այս պատանին՝ որ թերևս լաւ դրագիր, գործունեայ արհեստաւոր, 'ի վերջէ ընկերութեան օգտակար մէկ անդամը կ'լինէր եթէ իրեն բուն կոչման հետևէր, մեր դպրոցական դրութեան զոհ եղած է։ Արձակ գրելու չվարժած՝ ոտանաւորներ յերիւրելու կ'յորդորեն տղաքն, ու երբ քանի մը բառ ու յանգ իրարու մօտ կցկցեն՝ ինքզինքին բանահիւս կ'հրատարակեն։ Հիմակ կ'իմանամ թէ ինչ պատճառաւ այն յիմարին շորս կրղմն տաներ են կինեն՝ որոց զուարճութիւն պէտք է՝ և անտարակոյս Մ---ոյին իր մնացած քիչ մը խելքն ալ այս տեղ պիտի թողու և այնպէս տուն պիտի դառնայ . . . ։

ԾԵ

Կ. Պոլիս, 30 յուլիս 1867,

— Բայց մի յուսահատիր և մի կարծեր, բարեկամ, ըստ ինձ Շա-

միլ՝ որ մեր Պարնասի բնիկները միայն Մ----ՅԻՆԵՐ են, որ իրաք Պէ-գասի թրիքով կ'սաքնան քան Պրոմեթէի կրակով։ Ամէն արուեստ, գիտութիւն և Ճարտարութիւն իր պատուարոյծներն ունի և Մ----ՅԻՆ ալ մեր քանի մ'անուանի բանահիւսներու սեղանին փշրունքէն կը սնանի։ Եթէ դուք Ռ-ԷՆ ՔՈՐ մ'ունիք, մենք ևս ունինք այնպիսի հրաշակերտ քերթողներ, որ ժողովրդեան սրտին Ճշմարիտ քնարներն են, և երբ թրթռին՝ միասին կ'թրթռան ամենուն հոգւոյն թելերն, երբ երգեն՝ հեռ ու ատելութիւն կ'գադրին, երբ գրեն՝ ապագայ սերունդին անմահութեան դրատակներ կ'ատանգեն։ Բանահիւս մ'որ գիտէ թարգմանել բնութիւնը, մարդկութեան դայեակը կ'գառնայ և դիր կարդն անցնելու արժանի է։»

Շամիլ այսպէս խօսելու ատեն՝ մեր օթեակէն ներս մտաւ անձ մ'որ ծերունիի երես ունէր։ Այս ծերունին գլուխն օրեց բարև տալու կերպով, աթոռ մ'առաւ և՝ այս տեղ շատ հանգարտ է մրմռալով՝ նստաւ մտախոհ։ Քիչ մ'ետքը ծոցէն թուղթ մը հանեց և մատիտ մը, և սկսաւ գրել։ Նոյն պահուն ակնդէտ անոր կ'նայէի և քանի նայէի զարմանքս կ'աւելնար նորեկ հիւրին կերպարանին այլափոխութիւնը տեսնելով։ Այն որ 'ի սկզբան տարեւոր, նիհար և գունատ երեսներ էր ինձ՝ քանի գրիչը շարժէր՝ մերթ ընդ մերթ փօթալի Ճակատը շփելով, և դէպ 'ի վեր նայելով, նոր գոյն, նոր եռանդ և աշխոյժ կ'ստանար և կարծես թէ կ'առոյգանար։ Իր խոր այլ խնամատարեալ աչքերը՝ թաւ ունքերուն ներքև՝ փայլակներ կ'արձակէին, իր գրեթէ փոսուտ դէմքը կը պարզէր և կայտառ զուարթութիւն և փափկութիւն կ'ստանար. Ճակատն՝ որ նսեմ ու տրտում էր, կ'փայլէր կ'վառէր և իբր թէ վեհ տեսիլներու հնոց մ'էր. նոյն իսկ արծուի քիթն՝ որ իր այտերը կ'ստուերէր՝ կ'նեղնար, ունգունքը կ'սարսռէին և երկայն ծնօտն ու թուշն՝ որ ցանցատ մօրուսովը ծածկուած էին՝ գեղափայլ երեսոյթ մը կ'առնուին։

Ոչ էր այս պատանին, ինչ կ'գրէր, միթէ անմահից աւիշն ունէր իր ծոցը թէ ոչ սիրահարի խանդ կ'սաձէր և իր նենգոտ սիրուհւոյն բարեպիր մը տաղելու կ'պարապէր վշտաբեկ . . . ։

Շամիլ՝ իմ երկմտութիւնս դիտելով՝ նշմայր մ'ըրաւ ինձ որ լռիկ համբերեմ, և մեղմաձայն ըսաւ.

— Թող որ գրէ Ապոլոնի այս հարազատ զաւակն որ բանահիւսա-

կան երկանց մէջ է։ numine afflatur, Օրֆէոսի ոգիէն կ'ներշնչուի նա, և անտարակոյս նոր հրաշակերտով մը պիտի օժտէ աղջն, իրեն համար փառաց նոր պսակ մը կ'պատրաստէ, մեր սիրոյ յարատեւ փղձկելու կամ՝ ի խնդ սփոփելու համար տաղ մը կ'շինէ։ Այո, համբերէ փոքր ինչ ես, և իր գործը պիտի աւարտէ։ Լռութիւն, յարգենք իր նուիրական հուրը կամ տաղանը։ Մեզի հետ չէ նա այժմ, այլ երկինքը։»

Կէս ժամէն՝ այս զարմանալի անձն՝ որ պարահանդիսի մը զոռն ու գոչումին մէջ անգամ, իր հանճարին տէրը կ'երևէր, ոտք ելաւ, գրած թուղթը ծալլեց և դուրս ելնելու կ'պատրաստուէր, երբ Շամիլ անոր ձանրան կարեց և ըսաւ.

— Թաշման, նորէն աւիւնդ բռներ է, բայց ամէն տեղ նոյն ես դու, թէ թփուտ անտառի մը խորը, թէ աւուտկի մ'եղրը, թէ ձիւնապատ բլրի մը ստորոտը կամ՝ ասրը, թէ անշուք սենեակդ, թէ վարդերու և թէ պարահանդիսի մէջ։ Հոգւոյդ ցոլացումնդը կ'սփռես ամենուրեք և անով միայն կ'կենդանցնես անտես, և ստէպ անուշադիր այն բարեկամներու՝ որ քու անունդ կ'օրհնեն և կ'փառաբանեն։ Միտքս արգիլել չէ քեզ այս օթեկին մէջ, դու միշտ կ'սլանաս վերերն։ այլ միայն պիտի աղաչեմ՝ որ՝ եթէ հնար է՝ գրածդ մի անգամ կարդայիր մեր այս բարեկամին։

— Դիմակաւոր պարահանդիսի մը մէջ մարդկան ներելի է վատնել մինչև անգամ գովեստներ՝ որ այս տեղ պիտի մեռան հարկաւ, պատասխանեց Թաշման, բայց կ'ցաւիմ միայն որ խնդիրդ չպիտի կարենամ կատարել, վասն զի գրածս ինձի համար է և լոյս տեսնելու անարժան։»

Այս ըսելով Թաշման դուրս սահեցաւ գնաց։

— Ցեսար, ըսաւ Շամիլ, Ճշմարիտ հանճարդ, Ճշմարիտ բանաստեղծն՝ որ տակաւին իր արժանեաց վրայ կ'տարակուսի։ որ բոմբիւն ու գովասան չսիրեր, որ իրեն յատուկ աշխարհ մ'ունի, ուր իր սրտին գանձերն անարգել կ'թափէ, ատեն ատեն մեզի, ժողովրդական քանի մը գոհարներ տալով սիրտս 'ի դող։ Այսպէս Թաշման՝ որ պարզասէր, հանճարտ և ընտիր բնաւորութիւն մ'ունի, Թուրքիոյ հայոց Պէրանժէն է, և Սայատներու հետ կրնայ մրցիլ։ Հանճարտ գերդաստանի որդի՝ կրօնամոլութեան մէջ՝ թոյլատուութեան ոգին ուստ, բռնութեան մէջ՝ ազա-

ութեան աշակերտ եղաւ, չքաւորութեան մէջ՝ հարստութեան նախանձը շարժեց և իր բնաւորութեամբ ինքն իրեն աշխարհիս փշալից և սուտ ու պատիր ասպարէզին մէջ միշտ սիրեց և կ՚սիրէ Ճշմարիտը, գեղեցիկն ու արդարն։ Ընտանի աղէտից մէջ՝ ազգային տառապանաց փորձն առնելով՝ իր հոգին երջանկագոյն ապագայի մը վարագոյրը բանալու կ՚ուզեր, և մինչդեռ մէկ կողմէ՝ իր նիւթական վիճակը յարդարելու համար մատաղաշ միտքերու ուսումնական մեռնող կը ջամբէ, թէև ակամայ, ըստ որում նիւթը կ՚ասէ և լոկ հոգի է, միւս կողմէ՝ բոլոր զօրութիւնը դարերու բերած տերմնդէն ու միութեան խնդրոտներն ազգին մէջէն բառնալու օրն ՝ի բուն կ՚խորհի և իր քերթողական աշխոյժը վեհ և մեծ նպատակի մը, ազգային կատարեալ սիրոյ և աղաստութեան խորանին կ՚նուիրէ։ Այս դիտմամբ՝ երբ իր անուշ և հեշտալուր քնարը կ՚նուագէ, հայոց սիրտեր, անհաշտ կարծուած եղբայրներ իրարու կ՚փարին և նոր ճակատագրի մը դիմելու հնարաւորութիւնը կ՚տեսնեն՝ մարդասէր բանահիւսին հզօր և սրտաշարժ ձայնին։ Ինչպէս հայ գրական աշխարհը՝ նոյնպէս հայութիւնը նոր և արդիւնաբեր ճանապարհ մը մտաւ Թաշմանի շնորհիւ, որ ևս քան զևս իր դրոշակին ներքև ամփոփելու կ՚ձգտի՝ համարիւն այլ տարաբնոյն հայեր և Հայաստանի մուտ երկիրքն՝ ազատութեան և սիրոյ ճառագայթներով լուսաւորուած կ՚պարզէ անոնց առջև։

Բայց մի կարծեր թէ Թաշման միայն իր ժողովրդային երգերով որ ամենուն բերանն ու սիրտն են, կ՚սիրասլանէ մեր վրայ, այլ նաև իմ վսեմ ճարտասանութեամբ, և սքանչելի թատերգութիւններով։ Թէև իր մարմինը սկսաւ, հզօր է հոգին և ձայնը յստակ, քաջահնչիւն, այնպէս որ երբ խօսի՝ ամէն սիրտ կ՚թնաւոյ և արձագանք կ՚գտնէ։ Զկոյս սիրայոյզ հանդէս մը, մտերմական խնճոյք մը, ուսումնական կամաւոր մը, ազգօգուտ ընկերութիւն մ՚որոյ մէջ Թաշման իր ներկայութիւնն զգալի և անհրաժեշտ չընէ և անոնց փայլ չտայ։ Ամենքին վրայ՝ իր խօսքն ոգեկան աշխարհը կ՚ելնէ կ՚թռի, մարդկութիւնը կ՚ընդգրկէ և սէր կ՚բուրէ, թէ քաղաքի և թէ գիւղային խրախճանութեան մէջ՝ երաժիշտն անոր անպատրաստից յօրինած երգին ապդնապով եղանակ մը կ՚շինէ և որսարնդաս կ՚հետևի, մինչդեռ այր, կին, օրիորդ և պատանի՝ անոր խնամին վրայ կ՚զմայլին և մէկ ան-

գամ լսելով երգը կ'սովրին։ Տեսարանի վրայ՝ իր թատերգութիւնները հայ և օտար սիրտերու իսկ սրանչացում կ'սրտառնան, Հայաստանի հին շքեղութիւններն ու թշուառութիւններն արդի լուսաւորութեան ոգւով կ'պարզեն և հանդիսականաց մերթ վեմ և ահեղ ու մերթ անուշ և սրտաշարժ զգացումներ ազդելով անոնց ուշը կ'գրաւեն և արտասուք կ'գրգռեն։

Ա՛յս է՝ վեր 'ի վերոյ՝ Թաշմանի նկարագիրը։ Բայց, տեսա՛ղ, Թաշմանի հոգը սպառիչ է, և թերևս օրին մէկը գինքը տոչորէ, ինչպէս կ'տոչորին այն հոգիներն որ իրական աշխարհէն վեր կ'ապրին, և գերագոյն լոյս, գերագոյն ազատութիւն, գերագոյն երանութիւն կը փնտռեն . . . ։

ԾԶ

Կ. Պոլիս, 30 յունվարի 1867։

Շամիլ պահ մը լռեց, այլայլած կ'երևէր, ինչպէս որ էի և ես։ Կարծես թէ ազգային բանահիւսին ոգին կ'զգար, այլ նկարագրելու անկարող լինելուն կ'վշտանար։

— Ա՛յդ նկարագիրդ միտքս կ'բերէ, ըսի, Պէթհովէնի՝ Կէօթէի նկատմամբ բռած խօսքն։ «Ո՞վ կարող է ըստ բաւականին շնորհապարտ լինիլ մեծ բանահիւսի մ'որ ազգին ամենէն թանկագին գոհարն է։»

Նոյն խօսքը կ'ըսեմ և ես Թաշմանի համար։

— Հապիւ թէթև դաղտիար մը կրցայ տալ քեզի անոր վրայ, պատասխանեց Շամիլ։ Բայց կ'զարմանամ որ Թաշմանի քերթուածները տակաւին չես կարդացած, քերթուածներ որ ժողովրդեան սրտին մէջ դրոշմեալ են՝ քան թէ թղթի վրայ, և մեղի պէս հէր տարագիրներու վշտալի ժամերը կ'սփոփեն։ Ինչպէս մեծատան սպարանին նոյնպէս աղքատին յարկին ներքև կ'երգուին անոր հրապուրելի երգերն՝ որ մերթ թափառ անուտուի մը խորը՝ կուսանի մը լալագին ու սիրաբէս աշաց ներքև շինուած են, մերթ վշիտ աղբերակի մ'ափունքն՝ երկու

սրտակից բարեկամներու մէջ գծուած, մերթ մտածին աղաղակութիւն լերան մը վրայ՝ որդեկորոյս մօր մ'առջև գրի առնուած։ Սակայն ինչ որ ծնի այն ոսկի գրչէն՝ իր հոգւոյն անուշութիւնն, վսեմութիւնն և սաստիկութիւնն գրոշմը կ'կրէ, որոնք իրեն երկնային ցոլացմունք իրենց աղբիւրն՝ երկինք կ'վերադառնան։

— Բոլորովին անտեղեակ չեմ, բարեկամ, այս ազնիւ բանահիւսին ոգւոյն, դիտեմ անոր արժէքը՝ թէև քերթող չեմ, սակայն խօսքէդ առ և ս կ'խնդամ որ իր հանճարին սրբավայրը մեզի պէս անտարբ էակներ մուտ չունին և հեռուէն միայն զանի պաշտելու պարտաւոր են։

— Ճշմարիտ է, և Թաշման՝ որչափ ժողովրդային է զգացմամբ, նոյնքան ազնուապետական կ'երևի բարքով, որչափ մարդասէր և ընտանի է խորհրդով, այնքան մարդավար ու վեհերոտ ոճով, և ամէն յանդուգն ու գունդիկ բայաստրութիւնէ ազատ։ Վասն զի՝ քաջ գիտէ բանահիւսի բարձր պաշտօնն, որ է ժողովրդեան դիրքին ապրիլ՝ առանց նուաստութեան, անոր սիրտը շարժել, դատոհարսկել՝ առանց ակնառութեան։ Քանի մ'ընտիր մտերիմներ ունի նա, որոց հոգին է, և այն մտերիմները քանիսն երջանիկ են՝ որ անոր ներշնչութեանց հաղորդ կ'գտնուին։

Ահա արդէն սրահին մէջ անկիւն մը քաշուած՝ խնդագին պաշարեր են Թաշմանն ու զմայլելով անոր թրթռուն ձայնը մոռիկ կ'ընեն, որուն ընդառաջ երաժշտութեան գեղաձիծաղ կոյսերուն անուշաղիր, և թերևս այն ձայնն արդէն մեր օթեկին մէջ շարադրած մէկ տաղը կ'արտայայտէ։

Այս խմբակին մէջ կ'գտնուի նոսն անձ մ'որուն նկարագիրն ընել քեզ կ'արժէ, սակայն կ'վախնամ որ բաւական լեզու և տաղանդ չունիմ՝ ինչպէս որ է՝ զանի ներկայացընել քեզի։

Իրաւի՝ կան մարդիկ որոց բարձր ճակատագիրն անյայտ կ'մնայ ուսմանցին, եթէ միայն անոնց արտաքին պատկերը նկատէ։ Այսպէս պատկերներ ուրուագրել դիւրին է։ Աչքը կ'տեսնէ, կ'զմայլի՝ եթէ սիրուն և ազնիւ է, միտքը կ'գտնէ ու կ'հանի, եթէ պատկերը բնագրին նմանութիւնը կ'բերէ, և գոյներն ու ստուերներն իրենց յատուկ տեղը բռնած են, սակայն հոգին ինչ կ'ըսուի, ոչ ինչ։ Ներքին մարդը ջոկանք, չգիտեր որ այն պատկերը Ս. Մեսրոպ մը, այս է լուսաւո-

թիւն կ'ներկայէ. Վարդան մը, այս է հայրենեաց անկախութիւն կը նշանակէ. Լուսեր մը, այս է կրօնական ազատ քննութիւն և խղճամտութիւն կ'յայտնէ. Միրապ մը, այս է քաղաքական ազատութիւն կ'ուրուագծէ, և կ'կարծէ թէ պարզ անձնական ազատութեան մ'առջև կը գտնուի, հողեղէն արարածի մը շուքը կ'տեսնէ, անցաւոր մարմնոյ մը սահերը կ'նշմարէ։ Սակայն բնկերութեան սարին և վերին սահմանները մէջ կ'գտնուին այնպիսի հոգիներ որ ետութիւն մը, անուն մը, դիպուած մը չեն, որ երևիւն ու անցնին, այլ, եթէ ներելի է ասել, համաշխարհային մշտատև էութիւններ՝ որ իրենց մասին և բարոյական զօրութեամբ ներկային և ապագային վրայ կ'գործեն և մարդկութեան բարերարներն են։

Ա յսպիսի էակներ թէև քիչ կան մեր մէջ՝ սակայն գտնուած ընթանալ և բան ոյժ ապագային դէպքերը դատող անձեր նուազագոյն են։ Հետևապէս շատ մը պատմական և խնամատարական դասերէ զուրկ կ'մնայ ժողովուրդն ու ասէպ մի և նոյն սխալանաց մէջ կ'գլորի կամ ետ ետ կ'ընկրկի։ Ուստի կ'մարանիմ և ես փափաքս կատարելու և ամենարկած անձս քեզի ծանօթացնելու, բան որում՝ Ազգիս մը նկարագրելու համար Հոմեր մը պէտք է, ազգին երևելի հոգիները գծագրելու համար Պլութարքոս մը պէտք է։ Արդ՝ ես այդ կարողութիւնը չունիմ և բաւական կ'համարիմ ցոյց տալ քեզ այն անձն ու ասել. «Ահա մեծ հանճար մը, նայէ ու դատէ» քան թէ կիսկատար պատկեր մը յորինել . . . »

Ճամբի այս վերջաբանին չէի ուզեր։ Կամ խօսելէ ծանձրացեր էր և ինձի պէս տաղտկալի բնկերէ մ'ազատիլ կ'ուզէր, կամ ուշադրութիւնս տելի և ես դրուելու համար դրած նոր բնաբանը ձև մի էր։ Ուստի մարդասիրութեամբ ըսի.

— Անծանօթս շնորհակալ եմ որ ինձ քանի մ'ապագայինները նկարագրեցիր։ Անուն չտուիր, փոյթ չէ, մասն դի միայն բնդհանուր դատափարմ'ունենալ է մայրաքաղաքս նշանաւոր մարդկան վրայ։ Գիտեմ որ ինձի պէս գրասէրն մը չէիր սպասեր, գիտեմ որ խնդալու և պարելու համար պարահանդէս եկար և չէ թէ ճառելու, և թերևս դու ինձի պէս այս բազմութեան մէջ միայնակ չես, և սիրտ մը քեզի կ'բաղասէ, սակայն կ'ապաչեմ. կիսկատար մի թողուր խօսքդ, վերջին

շնորհ մ՞ալ լրէ և ցոյց տուր ինձ ակնարկած անձդ՝ որ յեսին ծոյլ հեռաքրքրութիւնս շարժեց քու քանի մը դիտողութիւններէդ։ Եթէ կարող չես, թէև բոլորովին չեմ հաւատար, ի հարկէ պարտաւոր ալ չես Թէոփրաստոսի և Լապրիյէրի ոճը բռնել և ինձի մանր նկարագիրներ ընել այս աղմկալի հանդիսին մէջ։ Բաւական է ամէն ինչ շօշափել անցնիլ։

— Ես ալ առանձին եմ, բատ. Շամիլ, և արդէն տեսար որ այս օթեկիս մէջ քաշուեր նստեր էի։ Ուստի բնաւ ծանրութիւն չէ ինձ համար, նա մանաւանդ դիմակաւոր ենք և կրնանք քիչ մ՞ալ կծել։

Քանի որ քիչալ գոհ կ՚լինիս և շատ պահանջող չես, ես ալ իմ խօսքս պիտի շարունակեմ յօժարակամ։

ԾԼ

Կ. Պոլիս, 3 Հոկտեմբեր 1866։

— Ականջս քեզի է — ըսի Շամիլին, որ պահ մը լաւ կենալէն ետև՝

— Ընտարակոյս Կեսարին պէս՝ Ռուպիկոնը պիտի անցնի այս հայը — դոչեց նա — շատ անձուկ կ՚դանէ աշխարհս, շատ աղմկալի՝ իր կեանքը . . . ։

— Մը հայը։

— Այս պարահանդիսիս մէջ մէկ հատ կայ, և այն է Ղուբսան։ Գեղեցիկ հոգի, մեծ հանճար, զգայուն սիրտ, այլ ինչ օգուտ, անիրաւ բաղդը կապեր կաշկանդեր է անոր թևերն՝ որ եթէ արձակ ձգուէին, թերևս արծուին պէս անսահման հորիզոնն իր սուր աչերով չափէր և Հայաստան ոչ միայն կորուսեալներ այլ բաղաքագէտ Հայկ մը տեսնէր։

— Բայց որտե՞ղ կ՚ակնարկես, բարեկամ։

— Դարձուր աչքդ Թաշճանի կողմը՝ տես սա Թիկնաւէտ պատանին, Թիւրք էֆէնտի մը, պէյ մը կ՚Թուի, իր կարմիր գդակովը, բոլորտանէ

մօրուսովը, շլիսի հապուստովը, դոյդն ինչ անտաշ կերպերովը, սակայն քաջ գիտէ նաև գլուխն՝ որ Միրապոյի գլխէն վար չմնար, նկատէ սև աչերն՝ որ անդադար փայլակներ կ'արձակեն, ու իր վառ հոգւոյն ցոլացմունքն են, եթէ սուր են ականջներդ, մոտիկ ըրէ անոր քաջահնչիւն ձայնն՝ որուն մէն մի շեշտը լուսատու նոր գաղափար մը կ'արտայայտէ և ոչ միայն ունկնդիրը կ'դիւթէ այլև կ'հմտցնէ, և այն ատեն պիտի խոստովանիս ինձի հետ որ Նուրհան արդարև հասարակ մարդ չէ։

Ալինի զերդաստանի մ'ազնուագոյն շառաւիղն՝ 'ի մանկութենէ ցոյց տուաւ Նուրհան որ մեծ ապագայի մը սահմանեալ է։ Ոչ վարժարան, ոչ համալսարան, ոչ Եւրոպա ստացած է իր դաստիարակութիւնն, այլ իր զերդաստանին ծոցն, այլ խնամատուն և շնաշխարհիկ հօր մը թևին ներքև, իսկ իր ուսմունքը կարծես թէ առնլի իր մտաց բնիկ ծնունդն են քան դասատուներու արդիւնք։ Ի բնէ աշխոյժ և սուր իմացողութեան տէր՝ չտեսածը կ'երևակայէր Նուրհան, չլսածը կ'երկնէր, չեղածը կ'հնարէր։ Թեղմնաւոր միտք՝ իր դասատուներու հրահանգները կ'կանխէր և անասնձ կ'արշաւէր այնպիսի հրատապ խնդիրներու մէջ՝ որոց լուծումը չէ թէ դիւրքերու, չէ թէ ուսուցչին խոհական լեզուին, չէ թէ ընկերութեան, այլ իր իմացականութեան մէջ կ'գտնէր, կ'գտնէր, կ'ստաստղինէր՝ որպէս թէ դուշակէր այն անդուլ մեծ պատերազմն՝ զոր հին դրութիւններու, մարդերու և իրերու դէմ պիտի մղէր անվեհեր։

Արդէն վեշտասանամեայ հասակին մէջ ընկերական կարգին բոլոր մոլութիւնները դիտեր, մանաւանդ մերազնէից յուի կացութեան շարժառիթն ու վախճանը նկատեր էր և ինքնուրոյն կ'սրամտէր ու կը փրփրէր թէ ինչպէս դարաւոր ստութիւններ իրրև ճշմարտութիւններ մարդկային սրտին և մտքին վրայ կ'տիրապետեն, ինչպէս ազատութեան շունչը չարքեր չառնիր այն շինովի թումբերն որ արդարութեան և իրաւանց դէմ կանգնուեր են բռնաւորներու կողմէ։ Վատօղի շահամարան մ'էր Նուրհանի միտքը, փայլակ ու որոտում ապառնայող երկին մ'էր անոր հոգին, և միայն կայծ մը, պարապայ մը, խօսք մը, շունչ մը բաւական պիտի լինէր հրդեհ մ'արտադրելու, և եթէ ոչ աշխարհի, հայոց նոր Դայիոս մ'առնելու։ Դիւրահաղորդ՝ երբ իր ոգին խ-

մացող լինէր, լուակաց, մենուէր և արտում՝ երբ նենդալի երեսներու մէջ գտնուէր, Դուրհանի վառվռուն բնաւորութեան, թագուն վիշտերուն, հայրենասէրնչ սրտին, անհուն փափաքներուն միակ սանձ, սպեղանի, ապաւէն, սիրոփում էր՝ հօրենական գորովալիր ակնարկը, գգուելի յորդորը, սիրաէտ սասը, Դեստորեան խրատն՝ որ լսել կ'ուզէր,

— Որդեակ, կ'զգամ և ես ասիւնդ, տաժեր ու սեր եմ փափաքներդ, սակայն՝ ազատութիւն եթէ ունինք, մեր տան սրբավայրին մէջ է, գուցը շատ մոթ կ'երևի տակաւին, . . .

Եւ սակայն աննենդ երիտասարդութեան հուրը, սակայն անտաս սկզբանց թափը, սակայն՝ ի՞նչ է ծաւալուն լոյս մը չէ կարելի շարունակ ամփոփեալ պահել գրատան մը շորս պատին մէջ, բնաբեալ բնակրութեան մը շրջանին մէջ, և առ հարկի այէսպ է որ սփռին, ծաւալին, հուշակին և աշակերտներ շահին որպէս զի անոր ենթական շառաջրին, իսկ եթէ բռնադատուին իսկ, Սարա թագուհիներ կրնան գտնել և արեւելեան մոգեր իրրև խնկարկու։

Եւ արդարև՝ մինչդեռ Դուրհան՝ իր ալէգարդ հօրը հրամանին հլու՝ իր անշանքը կ'ստահմանէր և ընտիր ուսումնական անձերու դումարի մը մէջ առանձնական կ'փայլէր, իր անունն արդէն հայ ժողովրդեան մէջ հուշակ առեր էր, և ամէն բերան նոր Վահանը կ'գովէր։ Եւ ինչ տեսեր էին այս անձէն, այս պատանիէն, որ դեռ այն ինչ ծանօթ էր մատերիմներու, դեռ այն ինչ խօսելու սկսեր էր ընդ երկար խորհելէն ետև՝ և ահա իր տեսքը խնդութիւն և խօսքը զարմանք կը պատճառէին, այնչափ մեծ է Ճշմարտութեան և անկեղծութեան ներգործութիւնը նոյն իսկ այն մարդկան վրայ որ Ճշմարտութեան և անկեղծութեան չեն հաւատար։

Դուրհան՝ թէև անփարձ՝ փորձառուներու խորհրդատու, թէև նորատի, ծերունիներու մէնասր կ'կանգնէր, թէև ապպային գործերու դեռ ևս անմատն, իր ձայնը մեծ կշիռ առնլու սկսեր էր, ծնունդ առնլով նաև իր սրտին մէջ փառասիրութեան կայծ մ'որ երբ իրեն նպատակ կ'ընտրէ իրաւունք, արդարութիւն ու հայրենեաց վերաշինութիւն, սրբանուէր, պաշտելի և մարդկային կրից ամենէն յարատեւ ու զօրեղը կ'գտնայ։

Ա՛յլ, ասաց, որ ասոպարիզին մէջ Ճարակ պիտի գտնէր այս փառասիրութիւնն, որ պիտի գործադրէր իր սիրելեաց խորհուրդներն անձ մը որուն միակ մտմտուքը Հայրենեաց, մտածին Հայրենեաց շահն ու աղատութիւնն էր։ Ո՛ւր էին Հայաստանի քաղաքագէտները, սպարապետները, ժողովները ու զահն։ Օտարին ոտքը կամ գիրկն ընկած՝ երկու Ճանբայ կայ մեր առջև, կամ ստոյգ Ճշմն երթալ շատի, կամ կանգնիլ պատուով՝ յարգելու շատ։ Ժողովուրդն իր ազգական իրաւունքն արդէն կորուսած, իր էութիւնը մոռցած՝ անապատէն ձայնի մը կ'ըսասէր որ իր թմբիրը փարատէ։ Այս ձայնը էն մին եղաւ Ղուրհան՝ և իր բնիկ զօրութեան թերևս պաշտօնական կշիռ մ՚ուզէր տալ և գէթ յաղթողը մտապէս յաղթահարելու մտաք Ր. Դուն ընկ—։ Ծանր ու միանգամայն փափուկ քայլ։ Ծանր անոր համար որ անձնական աղատութիւնը ստիպելով՝ Ղուրհան ժողովրդեան վրայ ակնկալեալ օգտաէտ ներգործութիւնը կրնար շունենալ, փափուկ, անոր համար որ անհնարին խորագիտութիւն և արթնութիւն պէտք էր պետութեան իրաւանց հետ ազգայինները միաբանել։ Արդարև պայքարը մեծ պիտի լինէր շահասիրութեան և հայրենասիրութեան մէջ, և հայրենասիրութիւնը յաղթանակը տարաւ։ Ղուրհան պաշտօնին պատիւ բերաւ քան պաշտօնն իրեն, և շահն երկրորդական պարագայ մը համարելով՝ ասէր ազգին օգուտը պահանջածէն աւելի ազգին կողմը հակեցաւ, առանց լիովին ասոնցմէ վատնելու այնպիսի ժամանակ մ՚որ լրիվ ազգութիւնը պաշտօնական յառաջադիմութեան գրգիռներէն մին էր . . . ։

— Ղուրհանի հոգին իրեն անդամանդ կ'փայլիր և կ'փայլի միշտ փափուկ պարագաներու մէջ անդամ։ Ազգասիրութիւնը բան մ՚էր մեր մէջ, նա առաւ անոր խնամաս մը՝ երբ ազգային իրաւանց գրոշակը ձեռքը՝ նոյն իսկ պետութեան սոյն իրաւունքը յարգել տալու եկաւ 'ի միաս իր անձին, շահն և տարաբնիկ մեծութեան մը։ Ճիշտ այն տեսնելն էր որ քանի մ՚ընտրեալ հոգիներ ազգային իշխանութեան նախկին բռնակալութիւնը խորտակելու համար՝ հայրենի աւանդութեանց համեմատ՝ Սահմանադրութիւն մը հաստատել կ'խորհէին։ Երբ մարմին առաւ այս խորհուրդը 1860ին, թէև Ղուրհան անշափահաս՝ նոր Սահմանադրութեան հոգին դարձաւ և առաջինն ինք նշանարեց անոր մէջ ազ-

գին ապրողան։ Պատմական աշխոյժ, ընտիր զգացումներ, ազատական տեսիլներ, վսեմ խորհուրդներ՝ և ամէն ինչ որ քանանոնի հոգի մը կը վառեն՝ ապրին նուիրելու ու խտեց Նուրհան, և պատիւ, փառք միայն անարմէ ապասերով՝ հինգ վեց տարուան միջոցի մէջ Թուրքիոյ հայոց պատահած ամէն յեղափոխական շարժումներու, եթէ ոչ միշտ յայտնի, ապէս թագուն հեղինակն ու մղիչն եղաւ նա։ Ուր որ իրաւունք մը կար հաստատելու, արդար սկզբունք մը պաշտպանելու, ազգային արտաքնութիւն մ՝անվթար պահելու, ան էր և Նուրհան, եթէ ոչ միշտ անձամբ, սրտով մտքով և գործով։ Հայ ժողովուրդը հիացմամբ նկատեց այս նոր աստղն և ինքզինք մեծ և բաղդաւոր համարեց անոր տեսքով. զգաց նա որ եթէ Հայաստան այսպիսի հոգի մ՝ունենար՝ թերևս իր աղէտից բեռն այնքան չէր ծանրանար, դիտեց նա որ Թել մը, Գրանքլին մը, Լաֆայէդ մը, Վաշինկդրն մը, Կարիպալտի մը ուրիշ բան չեն եթէ ոչ պարագայից ծնունդներ և թէ նոյնգունակ պարագաներ կարող պիտի լինէին Նուրհանն անոնց դասակից ընել . . . ։

Շատ չանցաւ Նուրհան անհուն ժողովրդականութիւն ստացաւ, իր ապին մէջն էր ժողովրդեան սիրան ու Ճակատագիրը, կարող էր գրգռել մարդկային գունդեր դէպ՝ի ազգօգուտ նպատակ մը, կարող էր պատրիարք, ժողով և բարձրագոյն մարդիկ ստանել, ասկայն իր այս բարոյական մեծ զօրութիւնն խնամատարութեամբ վարել գիտէր, և արդարութիւն ու ազատութիւն իրեն միակ նպատակ ունէր։ Բանիբուն քաղաքագէտ, բնազանց ազատասէր, համոզակեր բերան, հանակրական բնաւորութիւն՝ իր խորհուրդը, ձայնը, ներկայութիւնն իսկ շատ վտանգներէ դիմայերն ազատեր և անոր թշնամիներն ընկերաներ են։ Նրիտասարդութեան սէրը կ՝վայելէր նա, ծերունիներու յարգանքն և նոյն իսկ իր երևմտերը նսեմացող ստոյներու ակնածութիւնը, թէև աստք անոր քաղաքական գիրքն ազգային ընթացքին հետ անդարմարդոյց ամբոխ գաղանի կ՝նկրտէին։ Հետևապէս այն որ սէրութեան դահլիճին մէջ մեծ անուն, կշիռ և ազդեցութիւն ունէր, այն որ իր մատուցած մեծ ծառայութիւններու փոխարէն մեծագոյն ասոյնանի արժանի էր, կասկածելի դարձաւ, իր ջերմ ազգասիրութիւնն իրեն մեղք համարուեցաւ և պաշտօնական ասպարիզին մէջ յաստիճանաբար քարոզան մը եղաւ . . . ։ Նուրհան կրնար կամ այն քարը ձգել, կամ բոլորովին

ժողովրդեան ծոցը նետուիլ, սակայն մէկ կողմէ մեղք համարուածն իր սիրտը գաղտնի խնդութեամբ կ'տրոփէր, միւս կողմէ հայոց մէջ իր տաղանդին յարմար տեղ մը չէր տեսներ։ Հետևապէս մնաց նա ուր որ էր, թողուց պատմութեան իր գաղտնիքը, թէև թշնամին զինք հանդարտ չթողուց։ Պաշտօնին բերումը, կամ յատուկ դիտումը հեռացուցին զինքն այն միջավայրէն որ շատ տաք էր, և իր տարակայութիւնը պատեհ առիթ մ'էր Սահմանադրութիւնը տապալելու . . . և Սահմանադրութիւնն իրաք թաւալգլոր եկաւ։

Սակայն Նուրհան՝ թէև հեռի՝ ժողովրդեան սրտին մէջ կ'տիրէր, և անոր վերադարձը Սահմանադրութեան վերջնութեան գործը փութացուց, և վերստին ազատութեան օր ունեցաւ։ Դարձեալ գոհ չէ նա, ապրիլն եռանդը մարած կամ անկանան կ'դանէ նա, և անոր ունի արդիւնաւոր ուղղութիւնմը տարու կ'մտադրէ իրաւ, բայց այժմ ունի կաշկանդեալ է, և իր թռիչքն առնելու համար պարապայիս կ'սպասէ . . . ։ Այո, Ռուսիոն պիտի անցնի այս մարդն, եթէ վերստին գինքը նեղեն, եթէ հոգին, սրտը մարմնէն զատեն . . . ։ Այն ատեն իր հանճարեղ հակումն վրայ պիտի փայլի ազգային զուտ փայլմը, այն ատեն պիտի կարենայ քակել այն շղթաներն որ իր անդուսպ և ազատութեան սիրահար հոգին կ'կաշկանդեն, այն ատեն պիտի տեսանենք Նուրհանն իր մտային և բարոյական զօրութեան լիութեան մէջ և պիտի ըսենք.

— Պէտք չէ կասկածիլ Կեսարայ հայրենասիրութեան վրայ։

ԾԸ

Ղ. Պոլիս, 4 Սեպտեմբեր 1866։

Շատիկ կանգ առաւ, կարծես թէ դիտումը իր նկարագիրը կ'փոխէր, և շատ մտաբ տատերի մէջ կ'թողուր։ Բայց դարձեալ հոյակապ էր նկարած պատկերն, ուստի ըսի.

— Մինչ աչքիս առջև, փարը գտնուող անձին պատկերն էր բրածդ թէ ոչ իսկական Նուրհանի մը։

— Կարծեմ թէ Ցիմանթէան է որ Ակամեմոնի անհնարին վիշտ նկարելու անկարող գանուելուն՝ անոր դէմքին վրայ քօղ մը ձգեց Ագամեմնոնի մարտարուեստամբ։ Նոյն հնարը գործածեցի ես, բարեկամ, Դուրհանի նկատմամբ։ Խիստ մութ յատակի վրայ նկարեցի դէմք մ՝որ պատմութեան մէջ փառաւորապէս պիտի փայլի։

— Ասել կ՝ուզես որ դեռ իրականէն հեռու ես։

— Այո՛, հեռու։ Հոգոր անձնականութիւն մը դրչի հարուածով մը պատկերելու սապանդը չունենալէս զատ՝ Դուրհան հոգի մ՝է, որ կրկնակի կեանք ունի, ազգային ու քաղաքական։ Առաջինը քաջ ըմբռնելու համար ոչ միայն իրողութիւններ մէջ բերել պէտք է, այլև երկրորդին տեսութեամբ մեկնել, և ահա այս դժուարին ու միանգամայն փափուկ պաշտօնը չուզեցի կատարել . . . ։

— Եւ ի՞նչ պատճառու։

— Վասն զի ես պատմութեան չեմ՝, վասն զի գիմակաւորներու, այժ է լրտեսներու մէջ ենք, վասն զի անկողմնապահ լինելու համար նախ ազատ լինիլ պէտք է, վասն զի դեռ շատ անձեր քեզի ծանօթացընելու փափաք ունիմ։»

Ուզի ես պնդել չուզեցի, այլ օթեկէս վար իջայ Շամբլին հրամանաւ, աչքս Դուրհանի վրայ սևեռած՝ անոր շարժումները, դէմքը, քալուածքը կ՝դիտէի։ Դանդաղ դնացք մ՝ունէր, ամէն բանի անտարբեր կ՝ներկէր և քաջ տեսածը չտեսնելու կ՝ձևանէր, թէև կարծեցի թէ միշտ բան մը կ՝փնտռէր և չէր գտներ . . . ։ Մերթ տրտում, մերթ ծիծաղելու էր, այլ բնաւ զուարթ չէր և ուր ուրեմն Մէրէրիէր շեղակի կ՝նայէր և դառնապէս կ՝ժպտէր . . . ։ Յանկարծ դէպ՝ի սրահին դուռը վազեց Թաշմանէն հեռանալով, և գեղատեսիլ օրիորդի մը՝ որ ներս կ՝մտնէր, թեր մնաս և բաս։ «Ո՞ւր մնայիր . . . ։» Օրիորդը լռիկ մէջիկ այլ խնդալին՝ Դուրհանի երեսէն վեր որ նայեցաւ, Դուրհան՝ իբր թէ իժի մը փարեր էր, անոր թևը թողուց և ներեցէք ըսելով՝ դարձաւ զօրականի կերպարանքով մարդու մ՝ըստ պարզօրէն։ «Քու թեդ մտնելու տեղ սխալմամբ օրիորդիներ մտեր եմ։»

— Այս տեղ ամէնքը բարեկամներ — պատասխանեց զօրականը հանդարտակ — այդպիսի անուշ սխալմունքներ ներելի են նոյն իսկ օրիորդներու կողմէ, երբ մանաւանդ սխալողը Դուրհան մ՝է։

— Իրաւունք ունի, Արդամ, բան օրիորդն անդիէն՝ զօրականին ակնարկելով, ես ալ սխալեր եմ. կարծէի թէ պարահանդիսիս նոր փայլ մը տալու համար Նուրհանը տեսուչ կարգեր են, և թէ եռանդագին պաշտօնը կ'կատարէ իսկական սիրոյ ընդունելութիւն մ'ընելով։ Երբ քովէս խոյս տուաւ՝ մտածեցի որ իրեն սպասած անձը չլինելուս էր և քիչ մը դժկամակեցայ։ Սակայն իր փնտուածը դու ես եղեր, Արդամ, և դու երջանիկ ես։»

Այս լեզուանի ամենազգակ օրիորդը խօսելու առնն՝ Նուրհան պատասխան մը տալու համար բան մը չգտաւ։ Այլ երկչոտութենէ կամ սրամտութենէ կաս կարմիր եղաւ և աչքն անհնարին փայլութիւն մը առին։ Ի վերջ,

— Այդ լեզուդ շատ սուր է, սիրուն օրիորդ, բան անոր, և այս տեղ ամէն առաւելութիւն, նոյն իսկ իմ սիրական բարեկամս քու կողմդ են։

— Արդարև մեծ փառք պիտի համարէի ազգային և քաղաքական աշխարհի մէջ միշտ յաղթական կանգնող անձի մը դէմ վայրկեան մը յաղթել, սակայն ընդ հակառակն, իմ պարտութիւնս կ'զգամ ճիշտ այն միջոցին որ ինձ առաւելութիւն մը կ'ընծայես։

— Եւ ինչո՞ւ, օրիորդ։

— Վասն զի մեր յաղթութեան առարկան սիրա է, և ձեր սիրոյը . . . »

Եւ օրիորդն իր խօսքը չկրցաւ առաջարկել, վասն զի պարտող խումբ մը խօսակիցներուն մէջէն յանկարծ անցնելով՝ օրիորդը մէկ կողմ ճնայց և Նուրհան Արդամի հետ սրահին միւս ծայրը գտաւ ինքզինք՝ այնպէս որ զիրար կորուսին։ Դիտեցի միայն որ օրիորդը Նուրհանի առջի կեցած տեղը ծռելով գնանէն բան մ'ասաւ. առաջը թաշկինակ մը էր, և խոյնն ծոցը դրաւ։ Իսկ երկու բարեկամներ նորէն մտեցան և ամէն բան մոռնալով սկսան բերան 'ի բերան խօսակցիլ, որպէս թէ կը խոստովանին կամ սակարան մը կ'գտնուին։

Հետաքրքիր էի իմանալ թէ Արդամ ով էր։ Բաղմութիւնը ձեղքելով քանի մը շրջան ըրի անոնց բոլորտիքը, բայց շատ մտանալու կը վախնայի բաց դէմքով, վասն զի Արդամ քովընտի երկայն սուր մը կախեր էր և ատեն ատեն ձեռքը դաստակին կ'տանէր ու սրին ծայրը

գեսին կ'զարնէր։ Դոյն պահուն գիմնկի կարևորութիւնը զգայի. առնով կրնայի դեր մը խաղալ և շատ բան իմանալ, բայց առանն ուշէր։ Ասաի՝ հեռուէն սիմնակի մը մօտ կեցած՝ նկատել ակայ Արգամը, ինչպէս կ'նկատէ հեռեակ մ'իր զօրապետն։ Եւ իրաւի՝ Արգամ թիւրք կամ եթովպացի զօրապետի մը կերպարանն ունէր. թխագոյն, մեծ, հատ և թերևս գոնէիկ երես, վառվռուն աչեր, կորովի կազմած, բայց լանջ, անհանգարտ խրոխտ կերպեր, վէս և փորր ինչ ինքնահաւան քալուած, հրամայական ձայն և հատու, լակոնական խօսք։ Բայց այս բաւական չէր, կ'ուզէի իմանալ ներքին մարդը։ Հայ էր նա, պարզ, անկեղծ, արձակ գէմքէն յայտնի էր, այլ ով և ինչ էր։ Օտարին ծառայ, թէ ազգին հաւատարիմ, վարձկան գինուոր, թէ պատուաւոր ասպետաւոր, բան որում իր համազգեստէն կ'գուշակէի որ Օսմանեան բանակին մէջ պաշտօն մը, գիրք մը պիտի ունենայ։

Բարեբաղդօրէն՝ Դուրհան և Արգամ շարժիլ սկսան, և թե թեի տուած՝ վեր վար քալել։ Ի վերջէ եկան և անդէաս իմ կեցած սիմնակիս մօտ կողմը կանգ առին, այնպէս որ՝ առանց երևելու՝ կրնայի իրենց խօսակցութիւնը մտիկ ընել։

— Էհ, ժողովն ես եմ, բան Արգամ՝ շարունակելով թերևս խօսակցութիւն մ'որուն նիւթն ինձ անյայտ էր։

— Ուրեմն գործէ, պատասխանեց Դուրհան։

— Եւ կարծե՞ս թէ սահմանադրական ժողով մ'ինձի չափ ազգային գործեր անօրինած է։ Պատ'ի պատ ձևեր, վիճաբանութիւն, խորհուրդ, արձանագրութիւն կ'առնեմ. ես շիտակ՝ գնդակի պէս՝ նպատակիս կ'դիմեմ, և մէկ ժամու մէջ հարիւր որոշում կ'տամ։

— Այդ բաւական չէ, բարեկամ։ Դուրան ազնուկ ու շփոթ կ'ուզէնան, ժողովուրդը դադարեալ Սահմանադրութիւնը կ'պահանջէ։ Այս անիշխանութիւնը յարխուան չկրնար տևել։ Հեռուէն փոթորիկ կը նշմարեմ։ Վատնգի ատեն կորուկ տուր մ'ելար, բայց այսուհետև բռնատրի երես պիտի առնուս։ Զգոյշ եղիր . . . ։

— Ինչ ընեմ, միթէ իշնէ կախեալ է Սահմանադրութեան վերակենդանութիւնը։

— Հրաժարէ։

— Հրաժարիլ, գործել չէ։

— Այս պարագայիս մէջ գործել է։

— Ինչպէս։

— Քանի առ ժամանակեայ ժողովը, կամ դու պաշտօն շարունակէք, Բ. Դուռը պատրիարքարանի գործերն իրը կանոնաւոր դատերով անհոգ պիտի մնայ ազգային Օրինագիրը մեզի տալու։ Մանաւանդ գաղտնի ազդեցութիւններ անոր կ'հակառակին։

— Ուրեմն . . . ։

— Ուրեմն պէտք է դիմել Բ. Դուռն և կամ Սահմանադրութեան վերադարձը պահանջել, կամ հրաժարիլ։

— Այս ընթացքէն արդիւնք մը կ'յուսա։ Տէրութիւնք տրամադիր չէ Սահմանադրութիւնը տալու . . . ։

— Պարագաները պիտի տրամադրեն զանի։

— Հետևապէս պիտի հրաժարինք, և մեր տեղն ուրիշները պիտի բռնեն։

— Ոչ ոք պիտի ժամ անսահմանադրապէս պաշտօն վարել'ի պատրիարքարան։ Ամէն կողմը կապած եմ։

— Ուրեմն պատրիարքարանը գոցել պէտք է։

— Այո, 'ի հարկին գոցել պէտք է, գոչեց Ղուրման եռանդագին, գոցել՝ որպէս զի Սահմանադրութեամբ բացուի։

— Քաջ կշռեցիր առաջարկութեանդ հետևանքը, հարցուց Արդամ փոքր առ փոքր տարակոյսով։

— Ամէն բան՝ ոչ միայն կշռած՝ այլ պատրաստած եմ, պատասխանեց Ղուրման։ Միթէ կ'տարակուսի՞ս իմ վրայ, բարեկամ։

— Արդէն զօրութեանդ փորձն առած եմ։ Բայց դու ինչ պատճառաւ ուղղակի չես գործեր։

— Վասն զի, բացէ 'ի բաց կ'ըսեմ, դու հզօր բազուկ մ'ես, զինուոր մ'ես, իսկ ես քու խորհուրդդ։

— Թողէ ունի՞ս քովդ և մատիս, հարցուց Արդամ։

Ղուրման իսկոյն խնդրածը տուաւ բարեկամին, որ ձեռքին վրայ շուտ մը հինգ վեց տող բան գրեց և կարդաց։ Այս՝ Բ. Դրան ուղղելիք յայտագրի մը ուրուագիծն էր, սա խնամատով թէ ժողովը պիտի հրաժարի եթէ Սահմանադրութիւնն անմիջապէս չտրուի ազգին։

— Քաջ է, ըսաւ Ղուրման, հիմակ կրնանք զուարճանալ։

Իմ արմանքս զարմանքս կ'տանէր քանի այս երկու անձերու խօսակցութիւնը մտիկ կ'ընէի, և կ'հարցնէի իրարմէ, թէ ինչպէս պարահանդիսին ընդհանուր ուրախութեան ժամանակ իսկ՝ աղգային ծանր խնդիրներու վրայ մտածողներ կ'գտնուին։

Շամիլի մտաբերթալ և անորոշ այս դարձուածներու վրայ տեղեկութիւն խնդրելու մտադիր էի, քանի որ Նուրհան ալ հեռանալու կը պատրաստուէր, երբ ուրիշ անձ մ'որ միջահասակ, աղուոր, նազելի էր և սեթևեթ կ'քալէր՝ յանկարծ անոնց միացաւ և որպէս թէ խօսակցութեան տեղեակ լինէր, ըսաւ,

— Յաղթանակը մերն է։

— Ինչ յաղթանակ, հարցուց Արզամ։

— Հաւատի եմ որ մութին քար կ'նետէ մեր Սպարը բարեկամը, որպէս զի՝ ըստ դիպուածոյ՝ թռչուն մը զարնէ, յարեց Նուրհան։

— Կ'ցաւիմ որ միշտ կասկածելի կ'երևիմ ձեր առջևն, ըսաւ Սալար, թէև ձեր կողմնակցութեան կ'ծառայեմ։

— Մենք մտնտաւոր կողմ չունինք, ըսաւ Նուրհան, մեր կողմն ազգն է, և ով որ ազգէն չէ, մեզնէ չէ։»

Այս ըսաւ և Նուրհան գլուխն առաւ գնաց։ Էս ալ անոր ետևէն գացի քայլառ քայլ։ Նոյն պահուն իր դիմացն ելաւ այլանդակ դիմակով անձ մ'որ ---- մը փաթթեր էր շորս կողմն ու կարծես թէ Ֆէլլահ մ'էր։ Ֆէլլահը Նուրհանին ձեռքը բռնեց և անոր ականջին փսփսաց.

— Կ'զարմանամ թէ ինքզինքդ ինչպէս մոռցեր ես։ Եթէ թաշկինակիդ պէս սիրտդ ալ այս տեղ ձգես, ---- պիտի դառնաս առնդ։»

Նուրհան գրպանը տարաւ ձեռքն ու իր թաշկինակը չգտնելով,

— Այս տեղ, ըսաւ, ամէն բանի գող կայ, բաց 'ի սրտի գողէ։ Ինչ փոյթս եթէ թաշկինակս գողնան, բաւական է որ սիրտս իմն է։

— Բայց այն թաշկինակը, նոյնպէս այն յայտագիրը՝ զոր քու թելադրութեամբդ Արզամ շարադրեց, ըսաւ Ֆէլլահն, իբրև զէնք կրնան գործածել քեզի դէմ։»

Նուրհան յայտագրի խօսքին ոստումմ'ըրաւ, աչքը շորս դին ածեց և ապա պլինդ պլինդ իր ժանտերես խօսակցին նայեցաւ։ Այսպէս քանի մը բոպէ կենալէն ետև՝

— Ամէն դիմակ լրտես մ՚է, բան, բայց ինչպէս լրտեսները, նոյնպէս բանտարկուներն ալ ինձ համար դիմակ եմ, և քեզ, ով որ ես, պիտի ճանչնամ։

Գէլլանը սարսուռ մ՚զգաց և շոյտ մեզ փոյթ խոյս տուաւ։ Իսկ ես օթեւակս եկայ։

— Ա՛ր ճնայիր, հարցուց ինձ Շամիլ, միթէ դո՞ւ ալ որս փնտռելու եկար։ Տարակոյս չունիմ որ նոր նոր բաներ ունիս ինձ հարցրնելու։

— Քաջ գուշակեցիր, ըսի Շամիլին, ի՛սկայապէս ըսէ ինձ թէ ով է Արզամ, ով Սալար։ Երկու հակապատկեր կ՚երևին այս մարդիկ։ Ա-հա վարը, սա սիւնակին մօտ կ՚խօսակցին։ Երկուքն ալ զինուորական հագուստ հագեր են, երկուքն ալ համազգեստ ունին, սակայն մին յաղթանդամ, միւսը վախտ է։ մին խրոխտ։ միւսը հեզ և հանդարտ, մին երկաթի պէս կարծր, միւսը կապարի պէս կակուղ։ Արդեօք բարոյապէս ալ նոյն խորութիւնները ունին։

ԾԹ

Կ. Պոլիս, 5 օգոստոս 1866։

— Երկու հակոտնեայք են, բարեկամ, պատասխանեց Շամիլ։ Ա՛ր դայիր դուռը այս մարդիկն։ Երկուքն ալ երևելի են ազգին մէջ, երկուքն ալ մեծ դեր կ՚խաղան ազգային գործերու մէջ, երկուքն ալ քնաւ թեան արժանի են, սակայն ուշադիր հակակշիռ իրարու՝ զանազան նկատմամբ։ Դու արդէն մեծաւ մասամբ դիտեր, իմացեր ես այս երկու անձերը, բայց մի կարծեր թէ Սալարը լիովին հաակընալ, ուր մեռոյ նկարագրելը՝ դիւրին գործ է։

Արզամ՝ իր խստիշիկ կերպարանին, սառուցեալ լանջին, զինուորական համազգեստին ներքև հրատապ սիրտ մ՚ունի, սա երևոյթս գուցէ, վէս, դաժան՝ ի մօտուստ, և մանաւանդ մտերիմներու հետ՝ համբոյր, հիւրասէր և համակիր է։ Սալար մանրուկ, դիւրաշարժ, աշխոյժ է։ կ՚տեսնես, վայելուչ տեսք, ազնուատիպ երես ունի և միշտ կ՚ժպտի։

կ'բծնի, սակայն ինքնահաւան, պարծուկ ձև մը, նենգապիր մերձում մը (abord) որ վստահութիւն չպղեր, և հիւսօրեայ բարեկամն իսկ կասկածի կ'տանի։ Արդամ երկու խօսք բաներուն՝ իր սիրոյ հայրիի պէս կ'տեսնես, և եթէ մի անգամ և եթ ակնարկէ քեզի որ բարեկամդ է, իսկոյն կ'հաւատաս և խօսքէն զատ գրաւական մը չես պահանջեր. Սալարի հետ տարիներ անցրնես, հետն ուղեորիս, սեղանակից լինիս, գինովնաս, ծերանաս, դարձեալ չես կարող զանի ըմբռնել, և եթէ հազար անգամ կրկնէ քեզի թէ բարեկամդ է, կ'տարակուսիս և նոր փորձեր կ'փնտռես ընդ ունայն։ Արդամին հոգին բաց, անստուեր, ջերմ, մանաւանդ շափէն աւելի շիտակ է, զգայուն մը շրթերուն վրայ կ'թրթռի, պրոզիլ, շեղիլ չգիտէ, եթէ հարկ լինի՝ զԱստուած իսկ կ'ամբաստանէ. մինչդեռ Սալարի հոգին հարի պէս խոր է, պատ 'ի պատ, խառարին. լեզուն, նուրբ, երկդիմի, կծու, փաղաքուշ, այնպէս որ անհաշտ ճանչած թշնամին իսկ կ'շոյէ, ակն յայտնի ճշմարտութիւն մը գտնատրել և վարագուրելն արհեստն է։ Այն պողպատիկ ատպարի պէս կարծր, ամուր՝ երբ զարնէ կ'կարէ, այս երկսայրի նշտարի պէս նրբին, շարժուն, շողուն է և կ'ծակծկէ առանց սպանանելու։

Թէև նոյն ատպարէզը կ'արշաւեն, նոյն պաշտօնը կ'վարեն, սակայն երկուսին ճանրուն գիծը նոյն չէ. Արդամինը ուղիղն է, Սալարինն օձաւոր. այն կ'դատակէ երբ փոս մը տեսնէ իր առջեր, կ'ճզմէ՝ երբ քար մը տեսնէ իր ոտքին տակ, այս կ'սահի՝ երբ գարի մը հանի, նիրհել կ'կեղծէ՝ երբ թշնամի մը նշմարէ։ Երկուքն ալ գինուոր են, երկուքն ալ մի և նոյն ուսումնարանը վարժ և ուսումնաւոր են, սակայն Արդամ՝ Սարիոսի մը բանակին զլուխ կանգնելու, և Սալար՝ Պրէտորեան գնդի մը հրամանատար լինելու արժանի են։ Այն՝ ուղիղ բանի տէր է, այս՝ հմտութեան, խնամքականութեան. այն կ'գործադրէ, այս կը դրէ, անոր արժանիքն անկեղծութիւնն, սորը քաղաքացիութիւնն է։

Ժողովրդեան զաւակ, Արդամ անպաշտպան և իր յատուկ ճարտարութեամբ սրբունի տան մէջ պաշտօն կ'ստանայ, բանակին մէջ ընդ երկար կ'ծառայէ, տաճկական պարզ և միանգամայն անշահ կերպեր կ'տարվի, Սալար ազնուազարմութեան հակամէտ՝ պաշտպանութեամբ և խելքով կ'բարձրանայ, և գողտրիկ մարդավարութեամբ կ'փայլի։

Այս՝ կարևորութիւն կ՚ստանայ ազգին մէջ՝ իբրև ժողովրդական, գործնական, անվեհեր և վստահելի ասենն ազգանուէր գինուորմը, այն՝ մեծ անուն կ՚առնու իբրև բանիբուն քաղաքագէտ, փափուկ կնճիռներ պարզող ուշիմ միտք մը։

Միահեծան կառավարութեան սիրահար՝ երբ 60ին ազգային Սահմանադրութիւնը վար կ՚իջնայ, Արգամ՝ ազգին գլուխը ձեռք կ՚առնու և, մրրկալից ժամանակներ՝ թէև ըստ հաճոյս շատ բան կ՚անօրինէ, սակայն շատերի և անհամբերութեան քան խոհեմութեան արդիւնք եկող որոշումներ կ՚տայ, սակայն դարձեալ ժողովրդեան իրաւունքը կը յարգէ, հարստահարեալին գանգատը, աղքատին տրտունջը, սահմանադրական ձայնը կ՚լսէ, իր իշխանութեան ժամանակ՝ Սահմանադրութեան կ՚վերադառնայ, բռնաւորներու յոյսն՝ իր գէնքն՝ ի վերջ անոնց դէմ կ՚դարձնէ, և երբ Սահմանադրութիւնը ձեռք ձգելու համար ժողովուրդը գինքն իր աթոռէն վար կ՚առնու, պատրիարքարանը կ՚գոցէ ու բանտիները դրսեր կ՚դնէ։ Արգամ՝ փոխանակ սրամտելու՝ յեղափոխականաց գլուխ կ՚անցնի, և՝ իր համանուն նահապետին պէս՝ օրինաւորութեան կողմը կ՚անցնի, մնացեալ իր իշխանական գաւազանը վար կ՚նետէ և զօրացեալ Սահմանադրութեան վերահաստատութեան կ՚օգնէ։ Կրթուած բնաւորութեան հետ՝ հանճարի կայծեր ունի Արգամ, ինչպէս հակիրճ, առնական ոճ, և երբ մի անգամ արդարն ու ճշմարիտը տեսնէ համոզուի, տար և հար չեն կարող գինքն անոնցմէ բաժնել։ Թարեկամութեան ձայնին զգայուն, անոր խորհուրդները չմերժեր եթէ ազգօգուտ են, և ինչպէս փորձով ցուցուց, իր պաշտօնական կացութիւնը վտանգելու չափ կ՚նետուի ազգը պաշտպանելու և անոր թշնամիները հարուածելու . . . ։

Սալարի ազգային կեանքն այլ է։ Երբեմն ազնուականութեան և յեղափոխութեան հակակայ՝ երբ գիտէց որ ժողովրդեան անկախութեան ժամը կ՚հնչէ՝ շրջան մ՚ըրաւ, և քանալէօնի պէս յեղյեղուկ՝ ժողովրդականութիւն շահելու և թերևս անձնական ոսոխութիւն մը գոհ ընելու համար, ազնուականներու դասակէն հեռացաւ և ժողովուրդին գիրկն ընկաւ։

Ներքսմիտ գլուխ, խօսուն լեզու, վարժ գրիչ, անխոնջ աշխատող, արդէն իր քանի մը գրուածներով ազգային զեղծումներ վեր հաներ և

Հարատարամտութիւնը ցոյց տալով՝ ժողովրդեան ուշադրութիւնը գրաւելու սկսեր էր։ 1863ին նոր ասպարէզ մը բացուեցաւ իր առջև։ Սալար սանձարձակ մնաց անոր մէջ և զգալի ծառայութիւններ մատոյց սահմանադրական նոր իշխանութեան։ Անհնարին գործունէութեամբ կազմեց, հաստատեց սուղ ժամանակի մէջ թաղական և երեսփոխանական խորհուրդներն ու ժողովները, մէկ կողմէ հակառակ կուսակցութեան, միւս կողմէ հին նախապաշարումներու դէմ անդուլ մաքառելով։ Սակայն՝ ինչ օգուտ, գործը մինչև ծայրը չքշեց, հաշտարար միջոցներ, կէս–որոշումներ, դժպատեհ վարանումներ, որ անհաստատ համոզումի և սկզբունքի արդիւնք էին, իր վրայ կասկածներ հրաւիրեցին 'ի վերջէ, և թերևս վաղեմի կապակցութիւններ, ազնուապետական ներքին հակումներ, անձնական միտումներ իր մտքին մէջ արթընցնալով, շնորհեցին իրեն ազգը յուզող նոր խանդն ու ազատութեան ոգին ըմբռնելու և անոր մէկ զօրեղ վերանորոգիչը լինելու։ Ի բնէ վեհերոտ լինելուն Սալար, թէև զօրական, ժողովրդային խլրտում մը, ազատ հրատարակութիւն մը, բողոքոյ ձայն մ'իր հոգին սիրար կ'վրդովէին, և՝ անոնց առաջն առնելու համար՝ չէ թէ սահմանադրական դարմաններ, այլ բուռն զեղեր գործածելու գինքը կ'յորդորէին, որով ոչ միայն ժողովրդեան սիրար շահելու փառասիրութեան մէջ վրխպեցաւ, ոչ միայն լուսամիտ մասին վստահութիւնը, զոր 'ի սկզբանէ անոնի լիովին չէր վայելեր, կորսնցուց, այլև ցոյց տուաւ որ անզօր է ազգային յառաջադիմութեան մեծ գործին գլուխ կանգնիլ և առաջնորդել, ուստի և ընկաւ . . . .։

Ա. յալէս, կ'տեսնես, բարեկամ, Արդամ'ի բնէ բռնասէր՝ սահմանադրական դարձաւ։ Ինչպէս այն պահուն որ անսահման իշխանութեամբ կ'կառավարէր ժողովուրդը, Սալար՝ ուսմամբ և փառասիրութենէ սահմանադրասէր՝ Սահմանադրութենէ կասկցաւ, երբ դիտեց որ իր ներքին համոզումը սասսիկ կ'ընդարարի։

Կ. Պոլիս, 7 Փետրվար 1866.

— Նկարագրէդ սա կ'իմանամ, շարունակեց Համիլ, որ Սալար երկու կողմն ալ շահիմ ըսելով և ոչ մի կողմն է շահեր և իր բոլոր քաղաքագիտութիւնն 'ի գործ է դրեր անքաղաքագիտութիւնն երևան հանելու։

— Շատ ճիշտ է դիտողութիւնդ, Վրոյր, և 'ի սկզբանէ անտի ազգային գործերու տարտամ ընթացքին շարժառիթն այդ խառնակ դրութեան մէջ է։ Բարեխառնել կարծիքները, միաբանել հին և նոր տարրերը, կարկտել սեր ճերմակին հետ, ահա այս եղեր է մեր քաղաքագէտներու մեծ մտային հոգն, և ահա այս պատճառաւ քայլ մ'ընդ առաջ չէին գայիր։ Աշխարհիս չափ հին է լուսոյ և խաւարին ներհակ հակումներու կռիւն, և մեր Սալարն՝ իբրև նոր Ալքիմեդէս՝ երկու կողմն ալ գգուելու ժամանակ անցնելով՝ կարծեց այս կռուին վերջատալ, և կենսական խնդիրներ բարձի թողի ըրաւ։ Ուստի մերթ սրտոտ աղաղակներ՝ ամիրաներու դէմ կ'գոռար, մերթ երկչոտ ստրուկ՝ անոնց ստրը կ'քաշէր, և մատուցի բերանը կարկելու կ'ելնէր՝ ստպագրական կանոններ հաստատելու առաջարկելով։

— Հիմակ կ'իմանամ նաև թէ ինչու համար Դուրհան կասկածոտ և պաղ երեսով պատասխան տուաւ անոր քիչ մ'առաջ, հիմակ . . .։

— Դեռ շատ բաներ պիտի իմանաս եթէ այդ մենտորիդ անցաս, ըսաւ յանկարծ ձայն մը մեր ետեւէն։

Դարձանք, և ինչ տեսնենք աղէկ. նոյն ինք արդէն տեսած Գէլլահս, որ թեւը գեղանի կին մ'առած մեր օթեւակը մտաւ և իր ընկերուհին հետ մեր քովը նստաւ։

— Ես արդէն տեսայ վարն այս մարդն — ըսի Համիլին, ինչ չարագուշակ երես ունի։

— Այս սեռակը՝ նոյն ինք Թոմիվիլն է, ըսաւ Համիլ՝ պահ մը զանի աչքովը վերէն վար չափելէն ետև։ Ինչ գոյն, ձև և հայդուստ որ առնու՝ դարձեալ կ'մատնուի. դիմակ դիմակի վրայ դնէ, դէմքը մրուռէ, հնչիւնը կեղծէ, Կարիպ անգամ գառնայ՝ անօգուտ է. քալուածքին,

շունչին, խօսքին մէջ ժամ մը կայ որմէ կ'իմացուի որ չհայ լրտես մի է, և թերևս եկած է մեր խօսակցութիւնը մտիկ ընելու, միայն թէ . . . .

— Ինչ կ'ըսես, Համիլ, ըսի անոր՝ որ կարծես թէ նորեկ մարդուն տեսքէն հետաքրքրուիր, կ'սրամտէր՝ անոր ընկերուհին առջև անգամ ամէն պատշաճութիւն մոռնալով, նա որ մինչ ցայն կէտ մարդավայր էր, խնդրեմ մեղմէ ձայնդ, Գէլլահին ականջը հոս է։

— Ես ալ կամաց կ'պոռամ որ լսէ, ըսաւ Համիլ աւելի բարձր ձայնով։ Իր դրած դիմակն իրրև վահան պիտի գործածեմ անոր դէմ. ծանր ծանր բաներ պիտի ըսեմ անոր, և պիտի ցոյց տամ քեզի այն մարդուն սև սիրտն։ Այսպիսի առիթ 'ի վաղուց կ'փնտռէի, ուրուն եկաւ։ Եթէ Թոմիվիկը չէ Գէլլահը՝ թող դիմակը վար առնու և ես պատրաստ եմ անոր ոտքն ընկնիլ և ներում խնդրել ըրած նախատանաց համար։

— Այս նախատինքն — ըսաւ Գէլլահն ընդհատ ձայնով մը, այդ նախատինքն ներումով չարդարուիր այլ արիւնով, և ես անշուշտ բերնիդ և թերևս կեանքիդ չափը պիտի տամ։

— Թէև վատ՝ կ'մեծարանէ պարոնը. թէև իր շուքէն կ'երկնչի լրտեսն, և սակայն կ'խրոխտայ։ Զգիտէ որ ոչ միայն իր իլիկը ծլիկը գիտեմ, այլև այս գիշեր գործած ոճիրները գիտեր եմ. չգիտէ որ հրաշէկ շամփուր մը պատրաստեր եմ, Սմբատին պէս՝ գինքը պսակելու։ Եթէ սուտ եմ՝ բաց ուրեմն երեսդ, շարայարեց Համիլ Գէլլահին դառնալով։

— Ինչ իրաւամբ իմանձնական աղաստութիւնս բռնաբարելու կ'ելնես դու, գոչեց Գէլլահն. ոչ կարդեց քեզ տեսուչ այս պարահանդիսիս, որ յանդգնիս պահանջել որ դիմակս վար առնում։

— Ես չեմ պահանջեր որ դիմակդ վար առնուս, այլ դու խօսքերս վրադ կ'առնուս, և հետևապէս վրիժ պիտի լուծես. լսա, ուրեմն Թոմիվիկն ես, այն որ տար տէրութեան թոշակով կ'ապրի, պաշտօնն է ամէն տուն մտնել, ամէն ժողովի ներկայ գտնուիլ, հայոց մէջ անցած դարձածն եթէ ոչ անձամբ, իր հրամանին ներքև գտնուող արբանեակներու միջոցաւ իմանալ, և ամէն շաբաթ իր լրտեսութեան արդիւնքն առ որ անկ է հաղորդել։

— Ես չեմ այդ մարդը։

— Ուրեմն խոսելու իրաւունքս ինչո՞ւ կ՚բռնաբարես։ Երեսդ գոյ պահէ, փոյթս չէ, բայց թողոր ես ալ աղաւաւորէն խոսիմ, թողոր ըսեմ թէ՝ Թոմիվիկ անուն հրէշն՝ իր բնտանիքն, ազգն ուրացաւ և հոգւով մարմնով ինքզինքն ՀԱՐԻՆ ծախեց։ Նախ Թոմիվիկ ազգասիրութիւն դասեց, իր կեղծ ու պատիր կերպերով ազգին կարծել տուաւ թէ իրօք ազգասէր է, ուստի պատրիարքարանի, ընդհանուր ժողովի մէջ պաշտօն ունեցաւ, մինչդեռ միւս կողմէ՝ ինքզինքն օտար տիրոջն աչքին՝ ազգին մէջ կարևոր անձ ցուցընելով՝ անոր կռնակէն ապրուստը հոգալու համար գործ կ՚ընդրէր։ Թէև սրամիտ այլ թոմոմ, թէև անխօս՝ այլ դիտող, թէև ատէպ անտես՝ այլ ապրդող, Թոմիվիկ իր փառասիրութեան հատաւ՝ և բաւական ժամանակ իրրև իժ ազգին ծոցն ապրելէն, ազգային խորհուրդներ՝ մեր թշնամիներուն հաղորդելէն և անդադար երկպառակութեան և դժտութեան որոմներ ժողովներու մէջ ցանելէն ետև՝ իր փառասիրութեան հատաւ, լրտեսութեան արտօնագիր ստացաւ։ Մարմնով ցաւագար, նիհար, ապիկար իրաւ, սակայն բնութեամբ հնարագէտ, անհանգարտ և շարժող մարդ, միտք, քուէ որսալու անմեան վարպետութիւն մ՚ունէր, մերթ մարդասէր, մերթ աղքատասէր, մերթ ազատասէր ցոյց տալով ինքզինքն։ Ատէպ խուժանին, մանաւանդ անոր պարագլուխներուն հետ մտերմօրէն կ՚տեսակցէր. զանոնք կ՚շոյէր, կ՚մեծարէր, և ձեռքի տակէ իր խաղը կ՚խաղար։

Սակայն եթէ երբեմն Թոմիվիկ լրտես մ՚էր անցեալ, այսօր յայտնի է և տեսակ մը սև պատիւ կ՚վայելէ. որչափ երբեմն տաք, այժմ պաղ է ազգայիններու հետ, վասն զի ՀԱՅՈՒԹԻՒՆ ազգին շահերը մատնելու պաշտօն ունի յարատեւաւոր, վասն զի տաս տարուան աշխատութեան իրրև վարձք դեսպանատան մը դոնապանութեան բարձր տիտղոսը ձեռք ձգեց։ Հետևապէս դիմակն արդէն խղուած է և այս պարտականութիւնս մէջ ալ կրնայ ճակատը բաց մնալ, ճակատ մ՚որուն վրայ մատնութեան աղտը գրոշմուած է և ուր որ երթայ հետը պիտի տանի։

— Ինչ գիւտական գործ, լսի Շամիլին, հայ մ՚ազգին դէմ շարժի՛, անոր տունը քանդելու պաշտօն ունենայ։

— Ինչո՞ւ կ'զարմանաս, և մենք ինչո՞ւ զանգատինք օտարէն, քանի որ օտարը մեր ազգին տգիտութեան, անափառութեան, ներքին երկպառակութեանց և տարկական ոգւոյն վրայ յենլով՝ միշտ մեր մէջէն կը գտնէ մեզ տպաւանելու զէնքեր։ Թոմիվիկի նման քանի քանի Դոյէր կան որ օձի պէս ազգին ծոցը կ'սողոսկին և անոր ծուծը կ'քամեն։ Թող Գէլլահն ալ իր գիտցածներէն մին քեզի ծանօթացընէ՝ դիմակը հանելով։

Գէլլահն՝ որ Շամիլի խօսակցութեան ժամանակ անդադար կ'շարժէր, կ'կծկէր և կարծես թէ խոյս տալու համար ծակ մը կ'փնտռէր, յանկարծ սարսռելով Շամիլի խօսքէն, ըսաւ.

— Ես Գէլլահ մ'եմ. այս տեղ զուարճանալու եմ եկեր և չէ թէ այս այն բամբասելու։»

Այս ստութեան չկրցայ հանդուրժել և ըսի.

— Հապա ինչո՞ւ յատուկ դիտմամբ Նուրհանին շորս կողմը կ'դառնայիր և անոր թաշկինակին և դրուած յայտագրի մը վրայ կ'խօսէիր։

Թոմիվիկ որ վարը չէր տեսած զիս՝ երբ Նուրհանի հետ կ'խօսէր, այս հարցումէս շուարեցաւ և քարն ինձի դարձընելով՝ Թոմիվիկց.

— Իսկ դո՛ւ, պարոն, կ'երևի թէ լրտես մ'ես այս տեղ՝ քանի որ ասոր անոր խօսածն ու ըրածը կ'լսես և կ'գիտես։

Նոյն պահուն ուրիշ անձ մը ներս օթեակը կ'մտնէր, մինչդեռ Գէլլահին ընկերուհին կամացուկ մը դուրս կ'ելնէր. եկողն էր Նուրհան՝ որ խօսքը շիտակ Շամիլին ուղղելով,

— Եթէ գրպանդ բան մ'ունիս լաւ պահէ, ըսաւ, վասն զի կ'նայիմ որ քովդ սեւակ լրտես-գող մը նստած է, և կին մ'որ անտարակոյս ասոր դողակցութիւն է, հիմակ դուրս ելաւ։

— Այդ խօսքիդ հաշիւը պիտի տաս ինձի, պատասխանեց Գէլլահն ոտք ելնելով, բայց նախ պէտք է որ սա կեղծ վրացի Շամիլին հետ տեսնամ։

Շամիլ ձեռքը դաշոյնին տանելով՝ տեղէն ցատկեց և ըսաւ.

— Ես վաղուց պատրաստ եմ. քեզ հաւի պէս պիտի մորթեմ։

Շամիլ և Գէլլահ միասին դուրս ելան։ Իրաւի, ես շատ բան չէի հասկընար այս դարձուածներէն և շուարեր մնացեր էի, երբ Նուրհան Շամիլի ամիսը նստաւ և իմ շփոթութիւնս նշմարելով,

— Փոյթ մի ըներ, բարեկամդ քիչէն պիտի դառնայ՝ Գէլլահին պզտիկ դաս մը տալով։

— Եթէ ոչ բարեկամ, ազնիւ ընկեր էր ինձ Շամիլ, վասն զի պարահանդիսիս երկայն ժամերն՝ ինձ հայ երևելիները նկարագրելովը կ՚անցընէինք։ Եւ արդէն պատիւ ունիմ քեզ ճանչելու։

— Ի՞նչպէս։

— Շամիլի նկարագրութեան վրայ։

— Բարեկամն է Շամիլ, և բարեկամի մը դատողութիւնը կողմնապահութենէ ազատ չկրնար լինիլ։

— Համոզմամբ կ՚խօսէր վրադ Շամիլ։

— Միթէ գիտես թէ նա ո՞վ է։

— Ոչ։

— Սակայն արժանի է ծանօթութեանդ։

— Այդ շնորհը քեզնէ կ՚սպասեմ։

— Մինչև գալը պիտի փորձ մը փորձեմ։

ԿԱ.

Կ. Պոլիս, 7 օգոստոս 1866։

— Հաւատի եմ որ պիտի յաջողիս, ըսի Նուրհանի։

— Մեր այս Շամիլն, ըսաւ Նուրհան, շնմանիր այն միւս Շամիլին որ Կովկասու լեռներու վրայ շահէնի պէս կ՚սրանար և անկախութեան համար սպառազէն՝ կ՚բեկանէր բռնասէր արծուին Ճիրաններն ու աշխարհս իր արիութեան համբաւով կ՚լեցրնէր, ոչ, այս սուտանուն հայ Շամիլն ամենապարզ, անզէտ, ուամկին անենշան մարդ մը կ՚երևի, և կարծես թէ համբաւէ կ՚խորշի, սակայն ինքն իր հոգւոյն մէջ այնպիսի աշխարհ մը ստեղծեր է, ուր կ՚վարին, կ՚եռան այն վսեմ զգացումները, վեհ սեսիլներն որ հայրենի սիրոյ, Ճշմարտութեան և ազատութեան կ՚նուիրուին։ Բարքով Կատօն մը, ազատութեան տենչով Պրուտոս մը՝ Շամիլ տարագիր, բաղդախնդիր Անուշաւան մ՚է իր կացու-

թեամբ։ Թնութիւնը մեծ բաներու սահմաններ էր զանի, սիրան անհուն ըղձից վառարան մ՚է, գլուխը գեղեցիկ խորհուրդներու շաւիմարան մը, բայց, աւաղ, անագորոյն բաղդը կարեր է Ճամիլի թեւերն որ թիւառնելու համար թերևս ընդունայն կ՚ապասէ անողոք բաղդին ժպտին . . . ։ Ճամիլնի թին առջև թղուկ մ՚է, իմացականութեան առջև շղթայակերծ Ալատաւադ, անպարտելի հսկայ մը։

Դիտեցիր անշուշտ որ՝ առաջին տեսքով՝ հասարակ մարդ մը կը թուի, սակայն իր աղնուատիպ կերպարանքին վրայ անկեղծութիւն կը փայլի, իր լայն ջինջ ճակտին վրայ հանճարի նշոյլներ կ՚շողան, իր կապտագոյն աչերուն մէջ հրատապ և սիրատենչ հոգին կ՚բեկբեկի։ Թէև վայելուչ, մարդավար, քանի՛ պաղ են, վեհերոտ և գրեթէ մարդատեաց իր կերպերը։ Ճամիլ հայերը կ՚ատէ, այլ հայութիւնը կը սիրէ, մարդիկներէ կ՚շրջանու, այլ մարդկութեան սիրահար է, և երբ իր սիրան, իր ներքին էութիւնը գուշակող էակ մը գտնէ՝ իրրև անգիւտ գանձ անոր կ՚փարի, ինչպէս կ՚փարի զաւակ մ՚իր մօրը։

Եւ մի կարծեր թէ Ճամիլ իրը լեռներու կամ անութեան մէջ սնելով՝ մարդկային ընկերութեան, ճոխութեան, գիտութեան և քաղաքակրթութեան հետ անհաղորդ է գտնուեր, ընդհակառակն՝ քանի՛ ընկերասէր, պարզամիտ, համարձակ և վստահ էր, բաղդին, խաբէութեան, սուտ բարեկամութեան, սուտ սիրոյ զոհ ընկնելէն առաջ։ Մայրն անոր անուշ սիրտ, հայրը լոկ անուն մը ատին, և ընտանեկան աղէտներ՝ վրան կանխահաս պարտաւորութիւններ բերին։ Ճամիլ՝ կենաց անուշութիւնները չվայելած՝ դառնութիւնները տեսաւ, սակայն միշտ խնդագին, միշտ վստահ արդարութեան վրայ, անտրտունջ կրեց բաղդին հարուածներն և ինքն իր գործունէութեան և տաղանդին ծնունդը լինելու ելաւ։ Զմայլելի էր և վսեմ այն քանանմնի պատանին՝ որ նիւթական հոգերով բեռնաւորեալ՝ մտային աշխարհը կ՚արշաւէր և արդէն Բարիզ ստացած գեղեցիկ գաղափարներն իրացընելու համար իր բնիկ հողը շատ նեղ կ՚գտնէր և մայրաքաղաքս կ՚նետուէր։ Սէրն արդէն խոցեր էր իր սիրտը, բաղդն՝ որ զինքն արդէն բոլոր Եւրոպա 'ի պատոյտ հաներ էր, զինքը մատներ, իր քրտանց արդիւնքը մոխիր էր դարձուցեր, և այնու հետև իր սիրան, իր միտքն, իր բոլոր փափաքներն ապրելի վերաշինութեան գործին նուիրեր էր։ Սահմանա-

գրութիւնը նոր շունչ առեր էր, ժողովրդեան մէջ եղէկտրական հուր մը կ'քալէր, երևելի գլուխներ նոր թուական մը կ'առնուէին, և Շամիլ թէև 'ի սկզբան անծանօթ, գրեթէ անանուն նոյն գլուխներուն աներևոյթ սասարներէն մին եղաւ։ Սակայն լուսաց, մենասէր, սրտում, Շամիլ երբ կենսական խնդիր մը յուզուէր՝ կ'բորբոքէր, կը գործէր, կ'գրէր քան կ'խօսէր։ Փոքր առ փոքր այն օտար պատանին՝ որ միշտ պահելի կ'սիրէր, կ'սկսի ուշադրութիւն գրգռել, ես ինքս առաջինն գնհատեցի անոր արժէքն ու անոր իմանաւոր բարեկամութիւնս նուիրեցի։ Ամիրայն՝ այս անխօս այլ կենդանի կերպարանին ներքև՝ ահարկու մարդ մը տեսաւ, կրօնաւորն՝ ազգային իրաւանց անձանձիր ախոյեան մը, ապագայ վերանորոգիչ մը, իսկ ազատասէր մարդիկ՝ թագուն նեցուկ մը։ Շամիլ թէև ամէն յեղափոխական շարժումներու մէջ անտես՝ իր գրչովը կ'մասնուէր, յատակ, եփուն, հեգնալի, ազդեցիկ և ազատական գրիչ մը. իր համբաւն իրմէ առաջ կ'քալէր և ոչ թէ ինքն համբաւէն առաջ, և ամենէն ներքսմիտ և վարժ քաղաքագէտը Շամիլի խուզարկու ակնարկէն կ'ակնածէր։ Շամիլ՝ Սահմանադրութեան մրրկալից օրերը՝ լուսատու փարոս մ'էր, վասնզի մասնանիշ ցոյց կ'տար, թշնամիին դաղտնի դարանները վեր կ'հանէր, ժողովի, ատենապետի, պատրիարքի ահ ու սարսափ կ'ազդէր իր կորովի գրչովն երբ անոնք օրինաւորութենէ շեղէին՝ ժողովուրդն, երիտասարդութիւնն իսկ չէր խնայեր՝ երբ անոնք խուսութեան կամ անտարբերութեան մէջ ազատութիւն կ'փնտռէին։

Ջերմասահմանադրասէր, երբէք բերնէն կեղծկէ Սահմանադրութիւն խօսքը չհաներ, հայրենասէր՝ երբէք իր հայրենասիրութեան վրայ գովեստ չընդունիր, բանիրուն և հմուտ միտք՝ երբէք իր գիտութեան չվստահիր և կ'զարմանայ թէ ինչպէս իրեն արժէք մը կ'ընծայեն։ Եւ եթէ այժմ իմանայ այս իմ գովեստս, իր համեստութիւնը պիտի վիրաւորի և ինձի դէմ պիտի սրտմտի, վասն զի բոմբիւն և թմբուկ չսիրեր Շամիլ և լաւ ևս կ'համարի ապագայ սերունդին վճիռն քան վաղամեռիկ ժողովրդականութիւն մը։ Եւ արդարև՝ Շամիլ թէև պարզասէր և համեստ, Ճշմարիտ փառք կ'սիրէ, և անոր արժանի դառնալու կը ձգտի։

Բայց դժբաղդ է Շամիլ, բայց դժգոհ է նա, իր բոլոր յոյսերը, մի

առ մի ընկան ասուպներու պէս, իր բոլորտիքը խաւար կ'տեսնէ, իր ոտից ներքև դերեզման մը։ Հայրենիք, ազատութիւն և սէր, որոց համար հոգի կ'տար Շամիլ, իր աչաց առջևէն իրրև երազ անցան, մարեցան, և ընդ ունայն կ'փնտռէ փրկութեան խարխոխ մը գրկելու համար։ Սկզբունք, խնայականութիւն, գիտութիւն անզօր գործիքներ կ'գտնէ բուռն զօրութեան դէմ որ հայկական մարմինը կ'ճզմէ և անոր հոգին 'ի սպառ ջնջելու կ'սպառնայ։ Շամիլ մարած հրաբխի կ'նմանի, ներսէն կ'եռայ, ուր ուրեմն երկիրը կ'երերի, մութ ամպեր իր շորս դին կ'գիշերին, մերթ ընդ մերթ կայծեր կ'երևին, սակայն ներքին հուրը զինքը կ'սպառէ, կ'մաշէ . . . . Շատ անգամ յուսահատօրէն կ'գոչէ. «Նուրհան, լծակ մը տուր ինձ, այս է ոսկի, և Հայաստանը կ'գրգռեմ, անոր դերեզմաններէն գիւցազուններ կ'հանեմ սպառազէն . . . .»

— Գիւցազուն չէ, վատ մ'է Թոթմիկն, ըսաւ յանկարծ Շամիլ ներս մտնելով և Նուրհանի խօսքն ընդհատելով։

— Նոր բան մը չես յայտներ ինձ, բարեկամ, ըսաւ Նուրհան, անշուշտ Թոթմիկ պիտի գայ գիս ես հրատիրելու։

— Երես չունի գալու. արիս ծայրը կուրծքին մատուտ նշան մ'ըրաւ և ինք գողցած թուղթն ինձ յանձնելով, խոստովանեցաւ որ Մէջէր-Նէյի դրդմամբը քեզ և Արզամը լրտեսելու է։ Ձեր, այսինքն ազգին թշնամիներն այսպէս պիտի պատժեմ միշտ։»

Այս ըսելով Շամիլ Արզամին գրած թուղթը Նուրհանի յանձնեց։ Նուրհան՝ այս տեսակ ծառայութիւններ ընդունելու վարժած անձի պէս՝ երկար բարակ շնորհակալութեան ցոյցեր չըրաւ, այլ միայն ըսաւ.

— Շամիլ, ես արդէն փոխարէնը վճարեցի Ալբոյրին, քիչ մը քեզ բամբասելով։

Թողբաման քարոզչի նման անձ մը գլուխը նոյն միջոցին մեր նստած օթեակին դռնէն ներս խօթեց և Նուրհանին նշմայր ըրաւ որ դուրս ելնէ։ Նուրհան իսկոյն ձգեց գնաց։

ԿԲ

Կ. Պոլիս, 8 Օգոստոս 1866։

— Ո՞վ էր այն ազնիւ երիտասարդը կամ դեղեցիկը, հարցուցի Շամիլին։ Հայ է թէ օտարազգի։

— Հայ, օրէնսդիր, քերական, տնտեսագէտ, հռետոր և երեսփոխան է, պատասխանեց ինձ Շամիլ։

— Շատ հպարտ կ'երևի, և ոչ բարև մը տուաւ։

— Սովորութիւնը չէ. կ'վախնայ որ բարևին ազնիւները չես ըմբռներ, և մինչև որ իրի մը, գործողութեան մ'սկիզբը կ'մեկնէ, գործողութիւնը չսկսիր։

— Զըսե՞ս որ ազնիւ մ'է (original) և անոր հետ որ և է գործ տեսնել դժուարին, քանի որ եթէ ամէն սովորական բաներու նախնական գաղափարները փնտռելու ելնէ՝ տարիներ պիտի անցնի։

— Ի՞նչ վնաս ունի, ասոնք օգտակար դասեր են։

— Բայց, բարեկամ, կատակը մէկդի, ամէն տեղ և ամէն պարագայի մէջ կարելի է դաս տալ և մտիկ ընել։

— Ինչո՞ւ չէ. Եռանկիւնը՝ կենաց առաջին պիտոյք, մոքի մտունդ կը համարի սկզբունքն, և ինչպէս Սահմանագրութիւնը չկրնար ըմբռնել առանց հիմնական սկզբունքի, նոյնպէս հայ չուտեր մինչև որ ցորենին տարերքը չքննէ, ջուր չխմեր՝ մինչև որ կազերու բնութիւնը չվերլուծէ, չքայլեր՝ մինչև որ հաւասարակշռութեան օրէնքը չկշռէ, չնայիր՝ մինչև որ տեսութեան և լուսոյ յարաբերութիւնները չհասկրնայ, չխրեր՝ մինչև որ սերային յարակցութիւններն (élective affinities)* չգիտնէ, և այլն ըստ կարգի։

— Տարօրինակ բան։

— Բայց ես շատ բնական կ'գտնեմ, և ամէն բանի պարզագոյն իմաստը գտնելու դրութեամբ է որ մարդիկ պիտի աղատին այն մոլութիւններէն և թշուառութիւններէն որոց մէջ այժմ կ'տառապին։

— Քիչ քիչ պիտի համոզես զիս։

— Այս համոզման մէջ է մարդկային փրկութիւնն, այսինքն գործել միշտ վերլուծական և համադրական եղանակաւ։

*Էլեկտիֆ մակ վիսպասանական գործին անունն է։

— Լաւ չեմ ըմբռներ միտքդ։ Թերևս ըսել կ'ուզես թէ մարդիկ քակելով ու վերաշինելով կ'յառաջանան . . . ։

— Ճի՛շտ է, և Եանսինուր անուանի վերլուծիչ մ'է։ Նա չշատանար իր բնիկ գաղափարին համեմատ ազգ մը ձուլել, կ'ուզէ նաև որ նոյն ազգն իր վրայ անսահման վստահութիւն ունենայ և կուրօրէն ընդունի բերնէն և գրչէն ելածն իբրև Աւետարան։ Եանսինուր ինքզինք բանականութեան պատգամախօս կ'սեպէ. խօսածը խօսած, գրածը գրած, բրածն բրած է. եթէ կարող ես, ելիր, ձայն մը, նշան մը, կէտ մը փոխէ իր հեղինակութենէ, խակոյն կ'սրամտի և քեզնէ կ'յուսահատի, քեզ խորխորատն ընկած կ'կարծէ և կ'արդարանի։ Բայց իր ոճն՝ որ նորաձև է, իր ձայնն՝ որ նորալուր է, իր կերպերն՝ որ սարսռելի են, անխմանալի կ'երևին իր ազգին, զոր հրահանգելու համար 'ի վերուստ ինքզինք սահմանեալ կ'դատէ, հոգ չէ, «Եթէ ոչ այժմ, օրին մէկը պիտի դառնան խօսքիս» կ'ըսէ ու իր ճանապարհն կ'քալէ անսայթաք, ուղիղ և դերանի պէս ձիգ, և իբր թէ սկզբունքի սերմեր կ'ցանէ անջրդի և քարուտ հողի մը վրայ ապագային մէջ բողբոջներ տեսնելու մտօք։ Յաստակագիծներ կ'յօրինէ ազգային տունը կանգնելու, այնպէս որ՝ թէև այն տունն՝ իր հոյակապ և թերևս այլանդակ ու փոխնոմի ճարտարապետութեամբը՝ սահմանած ազգին համար անբնակելի, կ'ելնէ կը պնդէ թէ կրնայ բնակուիլ դարերէ ետքն, և թէ մինչև այն տունն ժողովուրդն եթէ կամի, ազատ է դաշտերն ու լեռները դեղերիլ և ապա փոքր առ փոքր նորաշէն տունը բնակելու վարժիլ։

Եղական մարդ է Եանսինուր, և անյողդողդ սկզբունք, անդամանդի պէս սիրա, երկայրի սուրի պէս լեզու ունի, երբ այս լեզուն չատենախօսէր, այլ կ'պատճառաբանէ։ Բարոյական աշխարհին մէջ՝ երկրաչափական ճշտութեամբ քալել կ'սիրէ, քանոնով զգացում և տեսիլ կ'չափէ, ինչպէս մարդուս մարմինը՝ նոյնպէս հոգւոյ գահը մկրատով կ'յօշատէ, կ'ջնէ և՝ թէպէտ նիւթական խնամատարէր, ոգւոյ սիրահար է քան ձևի։ Ձևն առանց ոգւոյ չկրնար ըմբռնել, և ստէպ, զարմանալի հակասութիւն, ոգին կ'զոհէ ձևին։ Այս տրամադրութեամբ՝ Եանսինուր օրին մէկն ելաւ ազգը ձևելու և անոր ներքին կենսական տարրերն անտես առնելով՝ նորահնար լեզու, քերականութիւն, դպրութիւն, օրէնք ստեղծեց, և թերևս նոր կրօն, նոր եկեղեցի մը կազմե-

լու համար իրեն յատուկ խորհուրդներն ունի, զոր հապիւ ուրեմն քանի մը սրտակից բարեկամներու կ'յայտնէ իր գահլիճին մթութեան մէջ։ Թէև մարդասէր քան ազգասէր, Լանսինուր հայոց ուշը գրաւեց իր արտակերգրան բնաւորութեամբ և տաղանդովը, տէրութեան մէկ քանի բարձր նախարարաց անպաշտօն խորհրդատուն եղաւ, և թէև՝ ոչ ազգային և ոչ քաղաքական տեսարանին վրայ փառք ստանալու համար երևելու փոյթ մը չէր յայտներ, եթէ ոչ համաստութենէ, թերևս արհամարհանքէ, սակայն դարձեալ ՀԻՆԳՆԱՄԵԼ մարդը կիսատուերի մէջ կ'երևէր մերթ ընդ մերթ, և ուսմիկն իսկ կ'գուշակէր որ անոր դրդմամբ դերասանները կ'խօսին և կ'շարժին։ Զգօն, պաղ և անդիմադրելի թէ տան, թէ ժողովի, թէ հրապարակի, թէ լրագրի մէջ, ուր որ պարտք մը կար կատարելու կ'շտապէր, և իրաւունք մը պատեհ կամ անպատեհ գործադրելէն ետև՝ մէկդի կ'քաշուէր և կ'դիտէր՝ իրրև անտարբեր։ Պահմանադրութեան խմբագիր, անթիւ խորհուրդներու և առաջարկութիւններու հեղինակ՝ իր սև բաղդէն՝ դեռ ևս չտեսաւ և ոչ իր մէկ խորհրդին անթերի գործադրութիւնը։ Տեսական աշխարհը կ'դեղերի Լանսինուր, և զարմանքս կ'տանի թէ ինչպէս այս ասոյիկեանը խոնարհեր է այս պարահանդեսիս գալ իր անպայմն ՀԻՆԳՆԱՄԵԼ թողլով։

— Քու խօսքէդ սա կ'հետևցնեմ, ըսի Զամիլի, որ այդ մարդը կամ շատ բարձր է և մեր աշխարհին մէջ անիմանալի, կամ շատ խորհրդաւոր։

— Ընդարձ՝ եթէ միջին դարու մէջ ապրէր Ժան Հիւս մը կ'դառնար, եթէ Ֆրանսայի յեղափոխութեան ժամանակ՝ Սիէյէս մը, սակայն ոչ Լուտեր, ոչ Տանդօն, ոչ Քրոնվէլ լինելու արդարացի կիրք, յանդգնութիւն և սուտ կրօնամոլութիւն ունի։ Թէև մարդ՝ մարդոց սիրան ու կիրքը յուզողներին շարժառիթները չգիտեր, օրէնսդիր՝ իր մտքին մէջ շինած էակներու համար օրէնք կ'հաստատէ, ժողովրդասէր՝ ժողովրդեան մէջ ապրելու կ'երկնչի, ազատասէր՝ ազատութեան վերնապատառները կ'թռի, պարզասէր՝ ազնուապետական միտումներ կը տածէ։ Բայց ինչ որ է՝ պատմութիւնը չպիտի մոռնայ այս մարդն որ առնուանի է իր սկզբունքի ճշտութեան, հաստիչ հանճարին, նորօրինակ ընթացքին, ազատասիրան լեզուին կողմէ, քան իրական ազգային ծառայութեանցը համար։

ԿԳ.

Կ. Պոլիս, 9 Հոկտեմբեր 1866.

Շամիլ յանկարծ իր նկարագիրն՝ որ ինձ թերակատար կ'երևէր, կարեց և ըսաւ.

— Ականջդ տուեր ես ինձի, բայց աչքդ դուրսն է, վարն է. թերևս հետաքրքիր ես Եանսինտուրը մի անգամ ես տեսնելու։ Ի զուր մի փնտուեր զանի, գիտաւորմ՝է, կ'գայ կ'անցնի. ամայութիւն, լռութիւն կ'սիրէ և գունուրէք իր ներկայութեամբը կ'պատուէ աշխարհս, որուն կազմութիւնն՝ իրեն անկատար կ'թուի, իսկ բնիկները գանգատներ՝ որ շորս ոտքի վրայ կ'քալեն տակաւին։ Ուստի՝ Եանսինտուր՝ որ երկու ոտքի վրայ կ'քալէ, ատէպ դուրս չերներ, վասն զի շորքոտանիներու մէջ եղական արարած, անդրջրհեղեղեան հրէշմը կ'համարուի։ Իր տունն, իր գրասունն, իր քանի մ'ընտրելագոյն մտերիմներու սահմանափակ շրջանն է իր բուն աշխարհն, և երբ հարկը պահանջէ, անկից կ'արձակէ հայկական սեռը կրթելու նպատակ ունեցող հրահանգներ, օրէնքներ՝ որ առ այժմ անընթեռնելի կ'մնան։ Քանի զարմանք են որ այս պարահանդէս է եկեր այս գիշեր։ Ընտարակոյս ծանրակշիռ բան մը կ'դառնայ և իր սիրական բարեկամին հետ՝ տես ահա, սա վարի որմնածակին մէջ բերան բերնի կ'խօսակցի։ Ա՜հ, կենդանի, անձնատուրեալ սկզբունք։ Դիտէ՞ մի անգամ իրատացի չէր իմ նկարագիրս. ահա սկզբունքով հագուեր է. զգեստը համեմատական կանոնով կտրուած է և անկար. սկզբունքով իր մօրուան է կարեր, թելերը հարթ հատուած են, սկզբունքով իր աչերը կ'բանայ կ'գոցէ և արևուն լոյսն իր բիբերուն շարժմամբը կ'ընդունի. սկզբունքով իր շրթերը կ'շարժէ, բառերը կ'հնչէ։ Ա՞դիտե՞ս արդեօք ինչպէս ուղիղ գծի վրայ կ'քալէ. մազով չափ չշեղիր, կարծես թէ բանականութեան շոգիով ուռուած մեքենայ մ'է՝ որ կ'շարժի և իր ճանապարհն վրայ գտած քարտանը կ'ձգէ վայրենաբար կ'անցնի. սլաքի պէս կ'օրանայ կ'երթայ իր նպատակին, աւերակներ, ողբ, կոծ թողլով իր ետին։

— Թէև արտառոց, բայց նշանակական և օգտակար կ'համարիմ

այդպիսի բնութիւններ ընկերութեան մէջ։ Ընդօրինակութիւնը մեզ կ'ապաննէ, աւանդութիւնը մեզ կ'փսատէ, գուեհկութիւնը մեզ կ'վատթարէ, ուստի Եռանսինուրի պէս մարդիկ կարեւոր են որ մեզ քիչ մը յուզեն։

— Երկու ծայրեր իրարու կ'դպին կ'ըսեն, Վրոյը, և իրաւ է։ Մարդիկ զուտ ակներև սուտեենէ որչափ որ վախնան, այնչափ կ'վախնան զուտ ճշմարտութենէ. նա մանաւանդ երբ սա եռանկիւնաչափական զօրութեամբ կ'աւանդուի, առանց զգացումի, առանց կրակի, առանց սրտի, առանց աղի, որ՝ ինչպէս կ'ըսէ կարծեմ Պաքօն, ճշմարտութեան հաճն է։ Հաւատս, անհաշտ զուգաչափութիւն, համեմատութիւն, ուղիղ գիծեր, հարթ մարմիններ, յղկուն երեսներ նոյնչափ զզուանք և տաղտուկ կ'պատճառեն աչքի և մտքի, որչափ կոշտ աւերդրդապաշտութիւններ։ Մերթ ընդ մերթ երևակայութիւնը կ'սիրէ ճախրել՝ խորտուբորտ տեղուանք, կախուիլ՝ անդունդներու բերանը, սաւառնիլ՝ լեռներու սարերն, և բնութեան որոտընդոստ ահարկու տարերայց հետ բանակցիլ, վասն զի մարդս զուտ բ—ն չէ, այլև ԷՐ։

— Կ'հաւանիմ, բայց ըսէ ինձի, կ'աղաչեմ, ինչպէս Նուրհան և Եռանսինուր մտերմայոյր են, քանի որ առաջինը վատ գլուխ, երկրորդը՝ սատ գանկ մ'է, քանի որ այս՝ Գաւուրի, այն՝ Նէլատաճնի գպրոցն է դաս առեր։ Մին՝ աղգ մը վերակազմելու ձեռնհաս, միսը՝ ԷՐ—ՆԷՐ— հասարակութիւն մը հասատատելու, այս՝ մարդկային կրից միջոցաւ դիցաղուններ հանելու տրամադիր, այն՝ բանականութեան ծնունդ ՀԷՆԷՐ։

— Բայց միթէ չգիտէս որ սոէպ իրարու վրայ ներդործելով՝ ներհակ տարրեր ներդաշնակութիւն կ'արտադրեն։ Երկու քին ալ նպատակը նոյն է, իրաւանց յաղթանակն, երկու քին ալ մեկնակէտը նոյն է, սկզբունք, սակայն կ'տարբերին միջոցներու մէջ, հեռաւորէս ուղևորութեան ժամանակ տեղ տեղ կ'խոտորին, տեղ տեղ ալ կ'միանան, սակայն դարձեալ պիտի գայ ժամ մ'որ քաղաքագէտը պիտի անցանէ զանցանէ զմիսիոնարն, որ իր ոտքովը ծուղակի մէջ պիտի ընկնի . . .։

— Հաներլուկ կամ մարգարէութիւն մ'է բաւական և ես զուտ մարգարէութեան չեմ հաւատար։ Սակայն, չըսիր, Շամիլ, թէ ինչ եղաւ ուներցաւ Թոմմիլիին հետ կռիւդ։

— Դուշակածիս պէս. Թոմիլիկ՝ առանց սուրը պատնէշ քաշելու՝ անձնատուր եղաւ ինձ և խոստովանեցաւ որ փառամոլ մարդու մը կողմէն եկեր է Նուրհանի խաղ մը խաղալու։ Խաղն էր ազգային ծանր գաղանիք մը գողնալ, յայտագիրը ձեռք ձգել և Բ. Դուռը տանիլ յանձնել, Արպաին և Նուրհանը կասկածելի ցոյց տալու համար։

— Եւ միթէ ձեռքէն առիր այն յայտագիրը։

— Մոռցար որ Նուրհանի տուի։

— Շատ անուշ վարուեր ես լրտեսին հետ, ըսի Շամիլին։ Ես քու տեղդ լինէի՝ իրաք կ՚ատակէի զանի. աղա մը պակաս կ՚լինէր ազգին վրայէն։ Մեր մէջ երբ անզգամ հայ մ՚իր տեսն, իր փառասիրութիւնն օրինաւորապէս չէ կարող գոհ ընել, օտարին դուռը կ՚զարնէ և իր եղբայրը կ՚մատնէ։ Այս մատնութեան երկիւղն ամէն վանմ խորհուրդներ կ՚տոչորէ։ Ըստ որում մատնեալը շատ ապիր միայն, այլև ամէն ատենք որ ազգօգուտ սկզբունք, ընտիր գաղափար մը լոյս հանելու անհնարութիւնը կ՚տեսնեն։ Կ՚երևի թէ Վասակի ձեռը դեռ տեղ տեղ կը խլրտի մութին, և մեր թշնամին մեր ծոցէն մատնում զէնք կ՚գտնէ և մեզ անով կ՚սպաննէ։ Օրէնքը կախաղանը կ՚հանէ մատնիչ մը, հայերն ինչ կ՚ընեն, առէջ զանի կ՚պատուեն, կ՚վարձատրեն և կամ քեզի պէս կ՚ներեն անոր։ Վատ դրութիւն . . .։

ԿԴ

Ս. Պետ., 10 [illegible] 1866։

Նոյն միջոցին ուրիշ անձ մ՚եկաւ Նուրհանի և Եանսինուրի միացաւ։ Հիւսիսէն սև հօսր դիմակի ձև շղարշ մը պատեր էր բոլոր երեսն և գլուխն, և կիսամին ծպտեալ էր։ Թեին ներքև փոքրիկ, շնորհալի, թեթևաշարժ էակ մ՚առեր էր, նոյնպէս դիմակաւոր։ Շամիլ աչքերը շորս բացաւ և գիտեց, ասաւ,

— Արդեօք սոյն է, մրմնաց։ Բայց չէ, չէ։

— Ինչ կայ, ինձի ալ յայտնէ կասկածդ։

— Կեցիր, զարմանալի դիւա։

Այս ըսելով դիտակն աչքին տարաւ ու հինգ բոպէի չափ նորատնս անձին շարժումներն՝ որ նայելի էին և վատշուէր, դիտելէն ետև,

— Այո, այն է, գոչեց։

— Բայց ով է։

— Այն է, անտարակոյս այն է։ Իր քովի փոքրիկ օրիորդն իմ կարծիքս կ'հաստատէ, եթէ կասկածի նշոյլ մ'անգամ մնար։

— Բայց ինչ կայ, հոգիս բերանս բերիր, բարեկամ, միթէ հրէշ մ'է, հրեշտակ մ'է տեսածդ։

— Վայ, անօրէն, մրմնջեց նորէն Շամիլ, առանց պատասխանելու հարցմանս։ Ինքզինք Ս. Մարիամի հրապարակը կ'կարծէ, Պայրնի պէրբոյի գերը խաղալու եկած է։ Եւ ինչո՞ւ չէ։ Ո՞ւր մներ, ամեր, կրթուեր է, ոչ ասպաբէն Ս. Ղազարու դրախտին մէջ, Լոյոլայի քարայրը . . . ։ Մեղք օրիորդին։ Ռօտէնի աշակերտին ձիրանն է ընկեր, և . . . ։

— Այդ ինչ հայ ու վայեր են, Շամիլ, պարահանդէսը տուգի տուն պիտի դարձնես արդեօք։

— Ցիմար եմ որ կ'զարմանամ և կ'վայեմ, պատասխանեց վերջապէս Շամիլ ինձ նայելով։

— Ուրեմն ինչ ունիս, ինչ տեսար, ով է բոյսդ անչուխեանդ շարժառիթը։

Շամիլ պահ մը լուռ կեցաւ, և ապա որպէս թէ փնտռածը գտաւ,

— Աղա՛ որ խնդալ մը, դա՛ մը նիւթեցի, ըսաւ նա. այսուհետև մեր կարգն է զուարճանալու. պարահանդէս գալդ պիտի արժէ։

— Բայց ինչո՞ւ։

— Վասն զի վարդապետ մը կայ այս տեղ որ իր բնական դիմակը բաւական չհամարելով նոր մ'ալ երեսը դրեր է, և տատրակներ ու թիթևաս ուրիշ բաներ ալ որսալու ելեր է այս հանդիսիս մէջ։ Աղուէսին պոչը պիտի երևան հանեմ։ Քիչ մը սպասէ, հիմակ կ'գամ։

Եւ Շամիլ օթեակէն դուրս ելաւ արտաքնոց ու վազեց գնաց։

ԿԵ

Կ. Պոլիս, 9 օգոստոս 1866։

Կէս ժամէն Շամիլ դարձաւ ինդալին և իր տեղը նստելով,

— Քիչ մը համբերութիւն պէտք է, բարեկամ։ Ամէն բան կարգի դրի, վարդապետին ծուղակ մը պատրաստեցի։ Հետաքրքրութիւնդ գոհ պիտի ընեմ, ըսաւ, և նորէն աչքը սև դիմակին վրայ սևեռեց։

— Կարծես թէ սիրուհիդ է այն սև դիմակին, ըսի անոր։ Աչքդ շարունակ անոր կ'վազի, և եթէ չըսէիր որ մարդ է, իր ծամածուռ շարժումները տեսնելով՝ պիտի պնդէի որ կտրող կապող օրիորդ մ'է։ Ուստի մեկնէ ինձ այս հանելուկը։

— Է՛հ, դարձեալ չես սխալիր, ըսաւ Շամիլ, եթէ ոչ մարդ՝ կնամարդի մ'է Նուշպան՝ որ սիրամարդի պէս կ'հագուի, աղջնիկի պէս կ'գուրգուրայ, սամոյրի պէս կ'սպրդի, կ'քծնի, կ'շոյէ և համբարուի պէս կ'պարէ։

Բնութիւնը զանի այր ստեղծելով՝ առաջին սխալմունք մ'ըրեր է, եկեղեցին զանի վարդապետ ընելով՝ երկրորդ սխալմունք մ'ըրեր է։ Վասն զի, Նուշպան՝ գեղանի կնկան մը գէմքն ունի՝ 'ի բաց առեալ մօրուան ու պեխերը՝ զորս սատէպ իւղով օծելով՝ կարծրութիւնը մեղմելու կ'ջանայ, և սիրտ մ'որ հարիւր կտոր կ'լինի և մէն մի կտոր կնկան կամ օրիորդի մը յիշատակը կ'բերէ։

Այո, աբաղայի պէս կ'սիպայ, դերասանուհիի պէս կ'քալէ, Սաֆիյէ պէս կ'երգէ նա։ Իր պաշտպան սուրբը հայրին կամ սաղանն է՝ որուն օրը քսան անգամ խորհուրդ կ'հարցընէ. իր աղօթագիրքը Փսալմանն է, որուն մէջ հրապուրելու համար հնարներ կ'փնտռէ. իր միակ հոգը սէր ու մեղկան փառասիրութիւն մ'է, զոր ստանալու համար ինչ չուաններ ու նուշեր կ'կարէ Նուշպան։ Հեզ գառնուկ մը միամիտներու և պառաւներու մէջ՝ մեղրահոս լեզուով, ակնկոր երեսով, սրբազին ձևերով՝ հաւատ, յոյս, սէր կ'քարոզէ, Ներսէս մը կրօնաւորներու մէջ՝ Հայաստանեայց եկեղեցւոյ ջերմ ախոյեան կ'կանգնի, ինքզինք ա-

նոր անարատութեան և պայծառութեան համար ողջակէզ կ'ընծայէ։ Զահան մը՝ ժողովներու մէջ՝ աղդասիրութեան և արիութեան տիպար կ'դառնայ և խաչի տեղ՝ ի հարկին աղդին համար ձեռքը տուր առնու կամ՝ ու պատրաստ կ'երևի։ Թէև իրաք երկպառակութեան որոմներ լիաձեռն կ'ցանէ։ Պիրակոս մ'օտարներու մոտ՝ Ընդին բանալին ամենէն տուղ գնողին ծախելու համար օրը տասն անգամ կ'դառապրէ։ Շահէն մը կիներու մէջ՝ իր սև զօշուտ աչքերը չորս դին ածելով՝ անմեղ տատրակ մը կ'փնտռէ որ յափշտակէ։ Յոշատէ և լափէ։ Մեծ մարդ և բանահիւս իր գրասան մէջ՝ ազատաշունչ յօդուածներ։ Սիրոյն քերթուածներ կ'թափէ պարբերական թերթերու մէջ։ Ինքնինքն անձանձիր հովիւ։ անեանն հայրենասէր կ'հռչակէ։ Ոսկերեան մը՝ եկեղեցւոյ բեմին վրայ՝ արքայութեան դռներն առջևդ կ'բանայ։ Լուսաձաձանչ քերոբէներ և սերոբէներ վար կ'իջեցնէ և եթէ յանկարծ իր լաչակին աչայ Եւայի շարդոյրն երևի։ Նոյն դռնէն ներս մտնելու ինք կ'զդուշանայ և հուրիներու կամարը կ'յափշտակուի։ կ'թռի։ կ'երթայ։ . . .

— Բայց այդպիսի վարդապետ մ'երևակայութեանդ մէջ զոյութիւն ունի անշուշտ։ ըսի Շամիլին՝ խօսքն ընդմիջելով։ Ու հասարակ հայ քահանաներ ապէս։ ինքնահաւան։ ծոյլ կրնան լինիլ։ բայց երբէք խրենց ծոյլը ղուշպանի սեսակէն չունին։

— Արդարև բուն հայ քահանայ չէ նա։ օտարին ծոցէն ընկած պարզև մ'է նա։ որ դէպ՝ ի մեզ գլորելով եկաւ։ միտակ զգեստ փոխեց. տանց հոգին փոխելու և հայկական ձևեր առաւ՝ մեզ լաւ ևս պատրելու համար։ Հայերը մանաւանդ մեծատուններն որ միշտ պարզամիտ են և օտարներ կ'սիրեն։ աղուէսին պոչը չտեսան և իրրև երկնաւոր հրեշտակ ղուշպանը գրկելով առին տարին և մինչև անգամ անոր պատիւ։ սիթոս և բարձ տուին։ ղուշպանին կերպարանքը։ լեզուն ու սատանքը անոր էին։ հոնձքն առատ էր և մշակ չկար։ ղուշպան մեծերուն սիրականքը։ փայլ սիրող շլամիանների խորհրդատուն և օրիորդներու խոստովանահայրն ու «գլխաչին» եղաւ։ Փոքր առ փոքր իր ճարտար լեզուով։ իր ուռուցիկ գրչով։ իր նենդ ու պատիր կերպերով ապրային գործերու մէջ կշիռ առաւ։ օձուտ ճանրով սիրաներու և ժողովներու մէջ մտաւ։ և այն որ ապրին դռնէն իրրև ապաշխարող ներս ընկեր էր։

իրրև դահակալ անոր վրայ կ'խրոխտայ, պատգամներ արձակելու կը յանդգնի և մեր գլխին նոր նոր ձիւներ բերելու կ'պատրաստուի....

— Ինչո՞ւ դուք ալ անոր դիմակը չէք բանար։

— Հոգ մը ըներ, արդէն շատերուն ծանօթ է Ղուշպան, և դատաստանի ժամը մօտալուտ։ Հիմակ դու ես անձամբ պիտի ճանչնաս զանի։

Ղոյն միջոցին սրահին մէկ կողմնակի դռնէն մեծ արդէն ծանօթ Խզար դուրս ելաւ և դնաց մեղմիկ Ղուշպանին թեր զարնելով՝ ականջին բան մը փսփսաց։ Ղուշպան՝ որպէս թէ օձ մը խայթեց զինքը, քանի մը քայլ ետ ետ դնաց, ապա թեան առած օրիորդը թողլով Խզարին մատեցաւ։ Խզար դէպ՝ ի մեր օթեակը դառնալով՝ անզգայի կերպով իր եղբօրը նշմարը մ՚ըրաւ ձեռքովն և Ղուշպանին հետ սկսաւ կարտուելով խօսիլ։

— Վա՛ր իջնենք, ըսաւ Շամիլ, զուարճալի մը պիտի խաղան, երթանք հանդիսատես լինինք։

Շամիլ՝ որ պարահանդէսին ծակը ծուկը գիտէր՝ քանի մը սենեակներէ և նրբապատիներէ անցնելէն ետև՝ զարդարան (boudoir) մը մտաւ, որ կարծես թէ առանձնասէր հանդիսականներու կամ սիրահարներու համար յատկացած էր։ Ղոյն զարդարանին կից ուրիշ անձուկ խուց մը կար, որ բարակ միջնորմով մը զատուած էր։ Ահա այն խուցը տարաւ գիս Շամիլ, լոյսերը մարեց և ըսաւ.

— Դիտէ հիմակ դռնէն թէ զարդարանն ով պիտի մտնէ։

Մութին անտես՝ ակնապիշ կ'դիտէի դուրը։ Ցանկարծ հեռուէն երեցան Խզար՝ միշտ կարմիր դիմակն երեսն, և Ղուշպան՝ միշտ սեւերես, որ թեկն՝ ի թեկին ընդ առաջ գալով շիտակ զարդարան մտաւ և իր ընկերուհին ներս հրաւիրեց։

— Ա՛յս անապատիս մէջ՝ ասիս մ՚է ասա սիրահրաւէր սենեակն, ըսաւ Ղուշպան, մտիր, ներս մտիր, այս տեղ կարող ենք ազատ խօսիլ քու բերանէ և հետաքրքիր աչքերէ հեռի։ Բայց նախ կ'ուզեմ որ այն ըսած գիրդ անգամ մ՚ինձ ցոյց տաս։ Ա՛յնչափ թշնամիներ ունիմ որ սիրագրեր, անհիմն զրոյցներ կ'հնարեն և իմ վրաս կ'նետեն։

— Բայց իմ քովի սիրագիրդ քու ատոյգրութիւնդ ունի. միթէ հրնամս ուրանալ։

— Եթէ քեզի ուղղած եմ զայն՝ մեղք մը գործած չեմ, մարդ եմ, պապին պէս անխաբելական չեմ, և դու պաշտելի էակ մ՚ես։

— Դեռ առաջին անգամ կ՚տեսնես զիս, և արդէն խանդդ կ՚վառի, Նուշան, արդարև անսպառելի սիրոյ աղբիւր մ՚է սիրտդ, սակայն ինձի պէս ողորմելի էակէ մ՚ինչ պիտի խնդաս, դու պալատներու, դրախտներու մէջ՝ սոխակի և դաշնակի ձայնին՝ սիրոս կ՚փնտռես, վարդ ու շուշան կ՚քաղես և փուշ ինչէ չդիտես, վասն զի վեղարդ ամէն դուռ կ՚բանայ, ամէն բերան կ՚գոչէ, ամենամուտ անցագիր մ՚է։ Ես պարահանդիսիս մէջ միայն կ՚պահուիս, գիմակ կ՚դնես, վասն զի վեղարդ հաներ ես։ Եւ սակայն ինչա՞ թողտուիր քիչ մ՚առաջեկդ եղող օրիորդն ու խօսք մ՚ըսելուս իմ ետևէս ընկար։

— Օրիորդ չէր այն այլ պատանի մ՚որ վարդապետութեան կոչում ունի։

— Մինթէ առաջին դասն այս տեղ կ՚առնու. և սակայն օրիորդ Ն... է այն։

— Ուստի գիտես։

— Ինչպէս որ գիտեմթէ այս նամակը քու ձեռագիրդ է, պատասխանեց Իզար, և ոսկեծիր ու ծաղկանկար թղթի մը ցոյց անոր։ Մինթէ կ՚յիշես որ այս սիրագիրն՝ տենդալին գիշեր մ՚անցնելէն ետև՝ առտու կանուխ երեր և գրեր ես առ. . . .։

— Ինչ կ՚ըսես, գոչեց Նուշան այլ յայլմէ եղած, միթէ վշտակ մի ես դու։

— Ուրեմն կ՚խոստովանիս։

— Ընել կ՚ուզեմթէ զրպարտութեան կ՚հաստաս, սուրբ նայիմ այդ գիրն, և հաստատի եղիր որ եթէ միանգամ գիմակդ վար առնուս և դեղահրաշնակարդ իմ սիրաբոյր աչացս պարզես՝ ամէն ինչ պիտի զոհեմ քեզի համար։

— Է՛հ, ամէն տեղ բանահիւս ես, մանուանդ աւիւն մը քեզ կ՚յափշտակէ կ՚սանի միշտ կարդէդ անդին, և մեղադրելի չես։ Երկու կրակի մէջ կ՚ապրիս, Նուշան, իբրև զևատցի՝ փառասիրութեան անկուշտ տենդդ զոհ ընել կ՚ուզես, իբրև Ասպկան խենկարիս՝ հոգւոյդ խանդն արծարծելու Ճարակ կ՚փնտռես, ինչ ընես, երկին շատ բարձր է քեզի համար, երկիրը շատ ցած և յարաշրջիկ կ՚թառալիս տաճարէն աշխարհ և աշխարհէն տաճարը։

— Ա՜հ, քանի պաշտելի է լեզուդ. եթէ առաջին անգամ քեզ տեսնէի, եթէ դիտայի որ երաշխաւոր էակը կենդանի է, եթէ երեւակայութեան թեւերով մերթ խոր անդունդներ, մերթ վերնաշաւառներ սրանալու առնոյ զգայի որ վնասուած նկարս 'ի քեզ կ'ապրի, անտարակոյս վեղար և խորան կ'թողուի և քու ոտիցդ ներքև իմ օրերս կ'անցընէի։ Բայց, աւա՜ղ, չորս պատի և խաւարաղէմ սրտուկներու մէջ մեծնալով՝ իմ վառ հոգիս, իմ աննկուն հանճարս, իմ կորովի մարմինս մարելու, նուաճելու, սպաննելու աշխատ եղայ և երբ 'ի վերջէ կարծելով որ սպանեալ է արտիւր՝ աշխարհ ընկայ որպէս զի մարդիկն առաքինութեան և խաղաղութեան յորդորելու պաշտօնս վարեմ, դիտեցի որ ինքս հրաշունչ անդունդի մը վրայ եմ ննջեր, ես ինքս առաքինութենէ և խաղաղութենէ շատ հեռու եմ և չունեցածս ուրիշին տալու անկարող։ Ահա այն առեն թուեղ ելան արտիս մէջ իմ ճնշեալ կիրքս ու աշխարհ թատրան մ'երևցաւ աչքիս, անոր մէկ դերասանը լինելու որոշեցի և կարդս ինձ ապաւէն դանելով՝ սանձարձակ աշխարհային գրգռանաց դաշտին մէջ արշաւեցի, միշտ սրբութեան և պարկեշտութեան համբաւս՝ որ արդէն սկսեր էր յարձակումներ կրել, լեզուով, գրչով, գաւով պաշտպանելու աշխատելով։ Սակայն դեռ ուշ չէ, կրնամ զգաստանալ, կրնամ ուղիղ շաւիղը դանել, եթէ դու՝ որ ինձի համար ստեղծուած կ'երևիս, ձեռքս բռնես և առաջնորդես դէպ 'ի սիրոյ գահդ, սիրուդ։ Կ'խոստանամ քեզ ամէն յարարերութենէ հրաժարիլ և 'ի քեզ սրբիլ և ապրիլ։ Հոգի մը պիտի ազատես դու, դու որ կարմիր ոլիմակիդ ներքև Տէպորա մը կ'երևիս և բոլոր մարմնաւոր թշնամիներս լոկ շնչովդ կ'յաղթահարես, հապա եթէ չքնաղ դէմքդ բանաս, եթէ սիրաւէտ շրթունքդ շարժես, հապա եթէ հրավառ աչերուդ արևով իմ էութիւնս լուսաւորես, ինչ երանութիւն պիտի զգամ ես, ինչ մարդ պիտի լինիմ. . . ։ Երկու պաշտօն պիտի ունենամ միայն, խորանն ու քու հոգիդ, առաջնոյն առջև պիտի աղօթեմ՝ ապացոյց առջև քեզ պատկերելով, երկրորդին առջև երկրպագութիւն պիտի ընեմ քեզմով վերականգնելով։ Մի մերժեր խնդիրս, ազնիւ էակ, պատուէ այն գիրս զոր քեզի կ'զրկեմ առարկային հետ և տուր ինձ հոգիդ. խօսքը, կեանքս շրթերդդ կախուած է, եթէ այո՝ ասես՝ պիտի վերածնիմ, եթէ ոչ՝ պիտի մեռնիմ։

Ես ըսելով Նուշան մեղմիկ Իզարին մօտեցաւ, անոր ձեռքը բռնեց և իր շրթերուն պիտի տանէր, երբ Իզար,

— Շատ կ'շտապիս, բատ անոր, և չեմ կրնար երևակայել թէ ինչպէս մէկ վայրկենի մէջ կ'մոռնաս այն ազգակցութիւնները որոց առջև նոյն լեզուն կ'բանեցրինես, ինչպէս որ ձեռքի դիրս կ'վկայէ։ Կարծես թէ, Նուշան, դոց բրեր ես այդ սիրոյ յայտարարութիւնդ և ամէն անգամուն որ կ'ին մը տեսնես կ'արտասանես այնպէս որպէս թէ առաջին անգամ կ'ին կ'տեսնես։ Ո՛չ, ես այդչափ դիւրահաճ չեմ, խօսքէ աւելի զօրաւոր ապրանքներ կ'ուզեմ որ իմ երեսս ու սիրտս քեզի բանամ . . . ։

— Խօսէ՛ր, ի՞նչ կ'ուզես, կ'ուզե՞ս որ քեզի համար դեղձն մը յօրինեմ, կ'ուզե՞ս որ քեզի գաղղիարէն դաս տամ, կ'ուզե՞ս որ պատկերդ քաշեմ, կ'ուզե՞ս որ անունդ բոլոր աշխարհի հռչակեմ, կ'ուզե՞ս որ ազգը տակն ու վրայ ընեմ։

— Ո՛չ, ինչ մեծ զոհողութիւններ։ Ես կ'ուզեմ որ վեղարդ, կարգդ մէկդի նետես և ինձի հետ միանաս։

— Կարգս, վեղարս, բայց տասնք պէտք են ինձի, և միանգամայն քեզի։ Օրին մէկը պատրիարք, մինչև անգամ կաթողիկոս կրնամ լինիլ և դու ես իմ անցայտ գահակիցս։ Գաղտնի սէրը միշտ նոր ու առուշ'գայ, քանի դեռ հիկ է ամուսնութիւնը։ Մեծ մարդիկ չեն կարդուիր, ազգին, մարդկութեան համար կ'ապրին։

— Ուրեմն դու դիս այսօր պիտի սիրես վաղը պատարելու համար, ուրեմն մարդասիրական և հայրենասիրական զգացումներդ սիրոյդ պէս առատ են։ Սէր մը միայն կ'զգաս դու, ինչպէս որ կ'դիտեմ, այն է անձնական, իսկ սիրուհիներ՝ ունիս անբաւ, որովհետև կարծես թէ կարդոմդ ամենուն վրայ իրաւունք մ'ունիս։ Գնա, գնա, Նուշան, և մ'երևակայեր թէ ամէն կին քու ծուղակդ կրնայ ընկնիլ, ես քեզի հետ գործ չունիմ։

— Է՛հ, ինչ քարտիրտ էակ, թէև այդպէս չէ քու սեռդ մարմնաւորներու հետ. ձայն, հռչակ կ'սիրէ, դայթակղութիւն կ'փնտռէ, և սադանը սիրելի է իրեն, իսկ տարբն՝ ատելի։ Մեր հոգին միշտ տարբ է և անոր հետ հաղորդողը կ'սրբուի։ Ձեզ մտածեր որ կրօնաւոր մը տարիներու գաղանեաց անթափանցելի գարան մ'է. քու պատիւդ ու

գաղանիքդ անապատ անցայտ կ'մնայ անոր մէջ, և բան որում արձակելու արտօնութիւն ունիմ աշխարհիս վրայ, մեղք մը, եթէ առաջարկածս մեղք կ'համարուի, չգործած՝ կրնամ ներողութիւն տալ։ Ուստի մի դողար, բռնէ թէ եղբայրդ եմ և սուրբ սիրով կ'վառիմ . . . »

— Բայց ինչ ըսել կ'ուզես, Նուշան։

— Ըսել կ'ուզեմ՝ որ զէթ երեսդ բանաս և ինձ համբոյր մը շնորհես եղբայրութեան։

— Միթէ այդչափ վնաս ընկար, դու որ եօթնեւրորդ երկինքը կ'թռէիր քիչ մ'առաջ։ Ա՛հ, բաւած է, ապիրատ մ'ես։

Նուշան այս խօսքիս զայրացաւ և Իզաբի վրայ վազելով,

— Որովհետև անուշութեամբ չես գիջանիր, բռնի կրնամ առանց ուզածս — բան ու անոր փարելով իր ձեռքն երկրնցուց որ Իզաբին գիմակը խլէ և իր կամքը կատարէ։

Իզար ձիկ մը հանեց։ Իսկոյն Շամիլ՝ — ժամ է — բան և սուրը պատենէն հանելով,

— Անօրէն, մէկդի քաշուէ, գոչեց, թէ ոչ առ սուրս փորդ կ'խոթեմ։

Կարելի չէ նկարագրել թէ ինչ ահ ու սոսկում զգաց Նուշան երբ այս յարձակումը տեսաւ։ Երեսն 'ի վար գետին ընկաւ և սկսաւ աղաչել պաղատիլ որ իր կեանքը խնայէ։

— Ո՛հ, ես յանցանք չունիմ, կ'ըսէր նա, Եւայի այս ազջիկը զիս գլխէ հանեց, զիս փորձեց և իմ սուրբ կոչումս բաժնելու ջանաց։ Ապաւաճ զրկեց ձեզ իմ օգնութեան։

— Կ'նայիս ինչ նենգաւոր է, ըսաւ Շամիլ ինձ դառնալով։ Բայց ձեռքս ապաստամ չունի։ Բայց երեսդ, նայիմ ով ես։

Նուշան սկսաւ չորս գին նայիլ և խոյս տալու ելք մը փնտռել։ Յանկարծ ոտք ելաւ և դէպ 'ի դուռը վազեց պոռալով, «Օգնութեան հասէք, մարդասպան մը կայ այս տեղ։» Այս աղաղակէն քանի մը հանդիսականներ, որ այն կողմերը կ'շրջէին, վազեցին եկան։ Իզար մութ սենեակը քաշուեցաւ։ Եկողներն էին Սուէնաօր, Արզամ և ուրիշ քանի մը դիմակաւորներ։ Նուշան ամօթի մը վրայ ելաւ և սկսաւ ատենաբանելով յայտնել որ իրեն պոռոյթի մը լարեր են և վրայիկ երեսամարդն իր ժամացոյցը գողնալու համար զինքը սպաննելուզեր է,

ուսոյ՝ ըստ մարդկային իրաւանց՝ այս ընթացքը պատժոյ արժանի համարելով՝ յորդորեց որ Շամիլն ոտիկանութեան ձեռքը մատնեն։ Շամիլ խնդիրը բացատրեց, Արդամ իր կողմը հակեցաւ, Ստէնսոր, ջերմաբար Նուշպանը պաշտպանեց և կուսակիցներ դտաւ, այնպէս որ՝ Շամիլի պատմութիւնը զուտ զրպարտութիւն համարելով՝ Նուշպանը դրկեցին և յաղթանակաւ դուրս սրահը տարին։

— Կ՚տեսնե՞ս, բաւ Շամիլ, մեր ապուշ հայերը։ Գիտեն որ Նուշպանն է նա, սուրբի, Ճգնաւորի, լուսաւորչի տեղ դրեր են զանի, և ինչպէս Օրկօն՝ Դ-ՐԴԻ-ՖԻՆ, անունը ալ Նուշպանին կողմը կ՚բռնեն։ Իսկ դու կարծեմ թէ իմացար թէ ինչ է Նուշպան, այս բաւ է . . . ։

— Ինչ յանդգնութիւն, ըսի Շամիլին։ Հաւրերութեանդ վրայ զարմացայ արդարև։ Յարմար առիթ մ՚էր սրտիդ անոր Ճակտին վրայ նշան մ՚ընելու։

— Ա՜հ, այն նշանէն ալ օգուտ քաղելու կերպը պիտի գտնէր։ Ազգին իրաւունքը պաշտպանելու ատենս այն վէրքը ստացայ, պիտի ըսէր։ Եթէ դու գործ չունիս պտուայ որ վատութեան նշան մ՚է այն, ոչ որ պիտի հաւատայ քեզ։

Նոյն պահուն Իզար մութի սենեկէն դուրս ելաւ և իր եղբօրը Շամիլին ըսաւ.

— Մեզք որ անպատիժ մնայ Նուշպան։ Ինչ բանի ծառայեց մեր խաղը։

— Նախ՝ սա օգուտն ունեցաւ որ եթէ կասկածներ կային՝ բոլորովին փարատեցան. երկրորդ՝ դիւրախաբ և միամիտ կիներու խրատ պիտի լինի այս դիշերուան դէպքն, երբ բերնէ բերան վաղը բոլոր քաղքին մէջ պատմուի, մինչդեռ Նուշպան այնպէս կարծէ թէ մութին մէջ գործածը ծածուկ կ՚մնայ . . . ։

49

Կ. Պոլիս, 10 [illegible] 1866։

— Շատ տաք և անախորժ եկաւ ինձ այս տեղս, ըսի Շամիլին, ապրի մեր օթեւանն երթանք և եթէ կ'հաճիս նորէն մեր քնոթիւնը վերէն լինինք։

— Շատ լաւ, ըսաւ Շամիլ, և թեւս մտնելով դուրս ելանք։

Մեր անցած անեւանիներուն մէկուն մէջ խումբ մը մարդիկ տեսանք որ բարձր, նիհար, անդիմակ մարդու մը բոլորը պար բռներ ուշի ուշով մտիկ կ'ընէին։ Ի սկզբան կարծեցինք թէ ձեռնածու մ'է այն մարդն և հանդիսատեսներուն մօտեցանք, սակայն սխալեր էինք, ձեռնածուն առնեաբան մ'էր և օտարազգիներու առջև ֆրանսերէն կը խօսէր՝ օդի, ջրի, ազատութեան, հայրենասիրութեան և իրարու անյարմար բաներու վրայ։ Բոլոր մարմինը խօսելու առեն կ'օրօրէր, մերթ այս մերթ այն կողմը կ'ծռէր, դլխարկը դէպ ետին նետեր՝ ձակատը բացուեր էր՝ աչերուն մէջ, երեսին վրայ խօլական բան մը կար։

— Գաղղիացի ձառատակ մ'է անշուշտ, ըսի Շամիլին։

— Կ'սխալիս, հայ մարդ մ'է, Բարիզէն նոր եկաւ և իր դիտութեան վրայ կ'պարծի։ Մօտեցիր, արտառոց էակ մ'է այն։

Ուզելի ազէկ դիտելու համար առնեաբանին մօտ գացի. այն ինչ մեզ տեսաւ որ յանկարծ ունկնդիրները թողուց և կորաքամակ դուրս վազեց անհետ եղաւ։

— Ինչո՞ւ փախաւ այս մարդը, հարցուցի Շամիլին։

— Վասն զի փախուկ է, պատասխանեց Շամիլ, վասն զի մեզ տեսաւ։

— Մենք ի՞նչ ըրինք անոր։

— Մինթ հայ չենք։

— Ինքն ալ հայ է ըսիր։

— Այո, հայ է, բայց հայերուն թշնամին, մինչև առն մը կը գրէր հեռուէն թերթի մը մէջ թէ՝ մինակ ինքն է Հայաստանի զաւակ, մինակ ինքն է հայոց մէջ պատուասէր, լուսասէր, բանասէր, գրա-

սէր, խնամասէր, մարդասէր, Աշխարհասէր, աղատասէր, և տրիշ-
ներուն հետ ես ապուշ այս երաշխիրին խօսքին կ'հաւատայի, և վրան
մեծ համարում ունէի։ Հնուտոր տարրը զօրաւոր կ'լինի, կ'ըսեն, ի-
րաւ է, այս մարդը մօտէն տեսանք և հասկրցանք որ հովով լեցուն
փամփուշտ մ'է եղեր. եսութեան, ամբարտաւանութեան, ինքնահա-
ւանութեան կենդանի պատկեր մ'է եղեր և իր հոչակած շահասակու-
թիւնները լոկ անապարծուկ և անարդ սրտի մը բարբանջներ։

— Արդեօք անուն լսած եմ։

— Է՛հ, ով չանչնար մայրաքաղքիս մէջ Լուսանեանն։ Իր բոլոր գի-
տութիւնն, և պէտք է խոստովանիլ որ լիովին ապէտ չէ, Հայհոյու-
թեան մէջ կ'կայանայ։ Ինչպէս ինքն Հայերէն՝ նոյնպէս Հայն իրմէ՝
ժանտախտի պէս՝ խոյս կ'տայ։ Վասն զի՝ իր այսօր սիրած, սպաշտած,
բարիքը սեսած բարեկամը վաղը գեռնէ գեռին կ'զարնէ, աղտեղի
բերանը նորանէ անքուր լուսանք կ'հնարէ, բարեկամութիւն, սպա-
տիս, սէր, ընտանիք, հայրենիք ինչ է չգիտէ, և միտակ ոսկին կ'պաշ-
տէ և ոսկիին համար իր անձն, իր սկզբունքը, թէն բնաւ չունի, կը
զոհէ։ Եւ սակայն օր մը հայոց ազգը յուսայ որ Լուսանեանն իր մէկ
նոր լուսաւորիչը պիտի լինի, օր մ'ազգն երևակայեց որ Լուսանեանն
իր տգիտութեան խաւարը պիտի փարատէ, իր աղէտքը պիտի թեթևա-
ցընէ, լուսաւորութեան և աղատութեան նոր դար մը պիտի տեսէ։
Քանի՛ մեծ եղաւ իր պատրանքն երբ անձին խօսքը բուն անձին ոգւոյն
և վարմունքին հետ բաղդատեց։ Պարզապէս Տօն-Քիշոտ մ'էր նա,
երբ հեռու էր, Դրէքսն, Սահուռ, Վասակ երևցաւ՝ երբ 'ի մօ-
տուստ կերպարանքը ցցուց։ Անհաւատալի կ'թուի թերևս քեզ բաւծս,
բայց այս այսպէս է։ Հայ եմ ըսելու կ'ամչնայ նա, վասն զի Հայու-
թեան ամենէն ընտիր և նշանաւոր անուններուն մեր մը քսելու ջանա-
գիր է նա, մարդ եմ ըսելու չհամարձակիր նա, վասն զի մարդկային
ամենէն ազնիւ զգացումներն առ ոչ ինչ կ'գրէ նա երբ յիմարական երա-
կը բռնէ, բարեկամ ունիմ ըսելու ճակատ չունի նա, վասն զի բարե-
կամութեան գէմ'ի վաղուց անոի կ'մեղանչէ, ընտանեսէր եմ ըսելու ե-
րես չունի նա, վասն զի ծնող, ազգական, բոլորն անբան կենդանիներ-
ու տեղ դրած է նա։ Մը մէկ յատկութիւնը գովեմ։ Բայց կ'սխալիմ,
ձիրք մ'ունի, այս է գրիչն, որ ազգի մէջ կ'թափիկ և ապիս անդին

կ'սրակէ, այս գրիչն իր ապրուստն է, և չկայ վատութիւն, մեղանչութիւն, անօրէնութիւն որ չգործէ նոյն իսկ իր ազգին դէմ երբ անոնց մէջ քանի մը սասկ կ'տեսնէ։

— Զրոնս որ հրէշ մ'է այդ մարդը։

— Այլանդակ յիմար մ'է, ըստ իս։ Եւ ասով քիչ մը կ'արդարանայ, սա պայմանաւ միայն որ իրեն սահմանուած բնակարանը դատնայ։

Այսպէս խօսակցելով անցգայօրէն հասեր էինք մեր օթեւանին, ուր առանձին մէկը նստեր՝ վարի հանդիսականները կ'դիտէր։

ԿԷ

Դ. Պոլիս, 12 [illegible] 1866.

Շամիլ դէպ անոր դիմելով,

— Ա, բարև, Պ. Եղում, ըստ, դո՛ւ, թոթոռն, անհանդարտ, ծաղկէ ծաղիկ թոռող թռչուն, ինչպէս եկեր այս հաւնոցն ես թռուեր։ Անտարակոյս խաղ մ'ունիս, որս մը կ'լրտեսես։

— Ուրիշներու խաղերը կ'դիտեմ, միայն պաշար կ'հաւաքեմ, փառք Աստուծոյ, հունձքն առատ է այս գիշեր։ Արդէն Հուրիկ քանի մը տարուան գրելու նիւթ հայթայթեց ինձ։ Ա՜հ, ինչ շնաշխարհիկ կրօնաւոր է Հուրիկ։ Գիտե՞ս թեմին ով է. Օ... մարտարդին տասնչորս տարու անուշ օրիորդն՝ որուն սիրոյ տեսակներու վրայ դաս կ'տայ ասոր։ Ճշմարիտն՝ իմ ինձատն տարեկան պատառ հանիս չէի հաւատար Հուրիկի...։

Եղումի այս խօսքին ինդուքս բռնեց։ Անիսպիշ անոր երեսէն վեր կ'նայէի։ Դենդանի երես, ապրատուր լեղու ունէր, վատմուն աչեր որ իրենց ծիրին մէջ կ'խաղային անդուլ և փոյլանիներ կ'արձակէին։ Աջի մնրուս մ'որ այն ինչ ծնօտը կ'ծածկէր, տուր նայատած մ'որ քիզ կը դիմէր, և ամէն բանի ծուռ և թիւր կողմը նշանարելու հակամէտ էր։ Հեղնալի ժպիտ մ'որ ամենէն զգօն մարդն ինքզինքը կշռելու կ'յարդարէր։

— Պոլսեցի չես երևիր ինձ դու, բան յանկարծ Եղում խոսքն ինձ ուղղելով, քիչ մը մարդ կ'ճանչեմ, և Շամիլի մարդավարութիւնը կը գտնեմ։

— Նայէ, Եղում, որ մէկէն Վրոյը քեզ չներկայացուցի, բան Շամիլ։ Սխալմունքս կ'խմնամ, սակայն քեզ մեր բարեկամին ճանչցընելու համար ինչ կրնամ ըսել բայց եթէ Հայոց Դիմնկրիտն է։ Բայց չէ թէ անցեալ, մարդասէրց Դիմնկրիտն, այլ հրահանգիչ, մարդասէր անձ մ'որու հոգին հայերու վշտաց վրայ լալու ատեն՝ շրթունքն անոնց թերութեանց վրայ կ'ծիծաղին, գրիչը մոլութիւններ կ'հարուածէ և մոլիները սարսարուս կ'դրկէ։ Սակայն ամենէն կծու և անդութ ծիծաղդ դաս մ'ունի, ամենէն թունաւոր սլաքդ ապեղանի մ'ունի, ամենէն մահատու ուսմդ լոյս մ'ունի։ Ինչ որ գիրքեր, ճառեր, քարոզներ չեն կրցած ընել՝ դու մի քանի համեղ, հաստ և հրատապ դրատոր խօսքով կատարած ես։ Ժողովրդեան զաւակ և աղէտիցդ թարցման, բռնութեան թշնամի և ազատութեան լուսամիտ և անմեղներ կուսակից, դուն շատ ծանրակշիռ, դատն ու փարուկ ժամանակներ՝ խնդալով խօսելով՝ Սահմանադրութեան դրօշակներն ես եղեր, կենտրոն խնդիրներ ես լուծեր, երկչոտ սիրտերու քաջալեր ես տուեր, ազգային յառաջադիմութեան նոր թռիչ մը, վարչութեան հրահանգ ու տարապ։

— Կ'գիտե՞ս, Վրոյը, բան Եղում, բարեկամդ Շամիլը կարծէ թէ հոս չեմ և դիս կ'բամբասէ։ Գոնէ դիմակդ դնելով խօսէիր, թերևս հատուցի քեզի, Շամիլ, բայց վրէժս պիտի լուծեմ, այդ ճառդ պիտի հրատարակեմ որ վրադ ծիծաղին։

— Ինչ որ կ'ուզես ըրէ. բայց դեռ շլմընցուցի. բանաս գործերուդ լաւ կողմն է, վատ կողմն ալ մոռի ըրէ։ Դու, քու պայքարդ մոլութեանց դէմ շատ արտեցիր. գործդ կիսկատար թողուցիր. ատարէզէն շրջեմ իրրև դասալիք, այլ իրրև յաղթական խոյս տուիր։ Հայոց աշխարհին մոգական լապտերն էիր, ամենուն աչքն ու սիրտը քու վրադ էր, նոյն իսկ նեստահար բրած մարդիկդ մահուան անկողնին մէջ քմծիծաղով քեզի կ'նայէին, և դու՝ երբեմն յանդուգն, դիմադրա՝ լապտերդ մարեցիր և գայիր ուր մնար չդիտեմ. . . ։ Մինչ փեթակդ նորէն շինելու կ'աշխատիս։ Բայց դիտէ մի անդամ պիծակներն ալ ազգին

պարտէզն են իջեր և զայն փուշ ու տատասկ դարձնելու կ'աշխատին։ Միթէ սուտ եմ։

— Այդ իրաւ է, պատասխանեց Եղում, և այդ վերջապէս ալ սիրտի դրեմ։ Մինակ սա կայ որ, ինչպէս մեղուներն իրենց թագուհին կը պաշտեն, ես ալ պարտաւոր եմ իմ հոգիս պաշտել։ Բաւական մեղր գործեցի, հիմակ կ'ապաշխարեմ ծերութեանս տարին և անդին շահելու համար կ'ճգնեմ։ Ամէն մէկ ժամանակ իր յատուկ բանն ունի, բանն անընդհատ կ'շարունակուի երկրիս վրայ, հին բանը կ'ընկնի, և անոր նորը կ'յաջորդէ։ Նորերն անպիտան են եղեր, ինչ փոյթս է, թող ազգը պիտանիներ դարձնէ։

ԿԸ

Կ. Պոլիս, 13 [illegible] 1866։

— Բայց թողունք այդ կէտն որ անհնարն է, շարունակեց Եղում, և վարն անցած դարձածը դիտենք։ Իրաւի կ'նայիմ որ այս դիշեր կրօնաւորներու օրն է բացուեր։ Հին տարին մի անդամ իմաստուններն իսկ կ'խենային, վկայ Պաքոսի տաճարն։ Ինչ ճեաս ունի եթէ մեր կղերն ալ բարեկենդանի այսպիսի դիշեր մը ստանային հետ տեսնուի։ Ինչո՞ւ մեղադրենք Նուշպանն՝ որ մեր մէջ հիւր մ'է, այսօր հոս վաղն ուրիշ տեղ է, որ առոյգ, սիրուն, հրապուրելի մարդ է և 'ի հարկէ սխալական, քանի որ տուրքի անուն ունեցող մի քանի բարձր եկեղեցականներ իսկ այս սրահիս մէջ կ'գտնուին։ Տես, մին [illegible] մ'է հագեր եղջիւրաւոր և պոչով։ Գիտէք ով է, երևելի վիճակի մ'առաջնորդն է, շափաղանց հարուստ։ Երբ տակաւին տարկաւագ մ'էր՝ ազատասէր, խոնարհ, հեղ էր, ժողովրդեան մէջ կ'ապրէր, անորցառերը կ'ամրէր, աղքատները կ'մխիթարէր, հիւանդներուն ապաստան էր, այն ինչ վարդապետ եղաւ, էմինենտներու հետ տեսնուիլ սկսաւ, եպիսկոպոս դարձաւ բոլոր աշխարհ մոռցաւ, պէյերը զգուելն իր բանին առելի յարմար եկաւ, և ազգին իրաւունքն ոտնակոխ ըրաւ։ Օր մը ըսի ա-

նար. «Հայր սուրբ, այդ ինչ փոփոխութիւն է։ — Որդեակ, պատասխանեց նա, մեր արհեստն այսպէս կ'վերջնէ. եթէ չփոխուինք, մեզ մերիններն, ողջողջ կ'ուտեն։ Ահա ուրիշ մ'ալ։ Սահէլ վարդապետն է. երեք անգամ իր եկեղեցին տրացու, տասն անգամ դատի կոչուեցաւ, մէկ քանի վանուց կալուածները ծախեց կերաւ և քանի մ'օրէն եպիսկոպոս լինելու վկայագիր պիտի ստանայ։ Ճարպիկ է. առ հասարակ մեր կրօնականներն իրենց վաղեմի պարզասիրութիւնն օր ըստ օրէ կ'կորուսանեն, և աշխարհային փառայ եռեռ են։ Սակայն Դատան այնպէս չէ. իր ազգին շահերը պաշտպանել, եկեղեցիին թշնամիները շանթահարել, բեմն ազատութեան և հայրենասիրութեան շեշտեր արձակել գիտէ և վատնդալի ժամանակներ անվեհեր Ճակատ մը ցուցնել։ Դատան՝ ազգին փրկութիւնը լուսամիտ և ազատ կրօնաւորութեան մէջ կ'տեսնէ և փոփոխութեան կարօտ կ'դանէ հին դրութիւնն, ես ալ միտք ունիմ, Շամիլ, Ճգնաւոր լինելու։ Քանի քանի վանքեր ունինք Հայաստան որ ամայի, անբնակ ու թափուր են, վարչութենէ պիտի խնդրեմ որ ինձի վանք մը տայ որ երթամ այն տեղ փեթակս շինեմ։

— Շատ պանչելի խորհուրդ մ'է այդ, բարեկամ, ըստ Շամիլ, մինակ դործադրութեան մէջ դժուարութիւն կ'տեսնեմ։ Քեզ կրօնաւոր չեն ըներ, ըստ որում երդիծարան ես, և կ'վախնամ որ շատ մը պակասութիւններ անպատկառ վեր չհանես։

— Երթամ մի անդամ՝ այս խնդրոյն վրայ Դատանին հետ խօսիմ, կարելի է հանդիպիմ, մանաւանդ որ յաջողութեան վրայ վստահ եմ, վասն զի այսպիսի վայր մը ամենէն խստակրօն կրօնաւորը ներողամիտ կ'լինի և շուտով կ'հաւանի։

— Պատրուակ մը կ'փնտռես անշուշտ մեր տաղտկալի ընկերութենէ հեռանալու, Եղում, ազատ ես, գնա, անհանդարտ Էակ։

ԿԹ.

Կ. Պոլիս, 14 Սեպտեմբեր 1866.

Շամիլի հետ նորէն միանակ մնայի. կէս գիշեր անցեր էր. փոքր առ փոքր հանդիսականները կ'քաշուէին։ Պարոյր անհետ եղեր էր։ Ո՞ւր էր արդեօք։ Շամիլին յայտնեցի իմ մտատանջութիւնս։

— Հոգ մի՛ ըներ, ըսաւ Շամիլ, Պարոյր աղայ չէ, թերևս իր փնտռածը գտաւ. քեզի պէս շոր ու ցամաք խօսքով չշատանար նա անտարակոյս։ Նպատակ մ'ունէր պարահանդէս գալու, հարկաւ իր նպատակին հասնելու կ'աշխատի։ Եթէ կ'հաճիս քիչ մը վար իջնենք պարտէզը։

Վար իջանք։ Հանդիսականներէն մէկ մասը մեկնելու կ'պատրաստուէր, մաս մ'առելի բաց ասպարէզ գտնելով կատաղօրէն կ'պարէր։ ոմանք յոգնած գաղրած թղթի սենեակը քաշուեր էին և ոսկիներ տալով առնելով ժամանակ կ'անցընէին։ Ուստեան դէմ այլատեսիլ երեւոյթ մ'առաւ հանդէսն։ Ո՞ւր էին այն շքեղ, փայլուն, մանրաբ զգեստներն ու գիմակները։ Շատերուն հագուստը խանգարեր, դէմքը գունատեր, գիմակները պատռեր էին, և ոչ միայն նիւթական այլ բարոյական նաւաբեկութեան մը բեկորներն ու աւերումները կ'ընծայէին։ Երաժշտութեան ձայնն առելի թոյլ և նուազ էր։ Ի վերջէ թղթի սենեակը մնանք։ Այս տեղերեսներն առելի այլանդակ և տարբեր տարբեր աղդեցութեան ներքև կ'երևէին։ Այս՝ աչքերը տնկած սեղանին միւս կողմն, կորուսած ոսկիները կ'դիտէր, այն՝ ընկերին հետ կրիւ մը կ'փնտռէր, միւսն՝ ըրած շահուն վրայ ուրախ՝ սեղանէն ելնելու բարոյ մը կ'փնտռէր։ Նոյն միջոցին սենեկին մէկ անկիւնը մարդ մը տեսայ որ թղթի կտորի մը վրայ բան մը կ'գրէր։ Նիհար, ոսկրուտ, պաղ դէմքով անձ մ'էր։ Կ'փափաքէի մօտաւտ տեսնել անոր գրածն և քայլ մ'առի դէպ 'ի այն կողմը։

— Մի՛, մի՛ շարժիր դէպ այն կողմն, ըսաւ Շամիլ։ Այն մարդը յօդուած մը կ'գրէ մեծ լրաթերթի մը համար։ Կարծէ թէ բոլոր աշխարհ լոյս պիտի տեսնէ իր գրուածով։ Մեծամիտ և իմաստակ՝ գրի-

չը լուսաորութեան ջահ կ՚հանարի և եթէ օր մը միայն չդրէ՝ երկրագունաս խաւարին անդունդի մէջ պիտի ընկղմի։ Ուստի ամէն օր պէտք է որ գրէ չէ թէ վաստակի համար, վաստակը կ՚անցանէ, չէ թէ համբաւի համար, համբաւը մոխ է, չէ թէ ներքին գոհունակութեան մը համար, ինքն արդէն ուրիշ շատ բաներով գոհ է, այլ միայն հայոց օգտին համար։ Ապշէնի գրչովը կ՚գտնայ Հայոց աշխարհն, եթէ գրիչը գրելէ դադրի, կ՚դադրի նաև բոլոր հայութեան կեանքը։ Վաղն իր յօդուածէն պիտի իմանաս թէ պարահանդիսիս մէջ քանի հանդիսական, քանի մամ կայրն, մանրակրկիտ լրաբեր է և ամէն բան կ՚համրէ։ Պիտի լսես թէ քանի անգամ շրջպար, քանի քստրիլ, քանի չգիտեմ ինչ խաղայրն, թէ մեծարանքն ինչպէս էր, խմորեղէնը լաւ էր թէ ոչ շաքարեղէնն։ Ապշէն՝ ոքանչելի գրիչ ունի, գրածն ինքզինքը չհասկրնար և շատ անգամ ոմանց անուշութիւնն և Հատած նիւթերուն վսեմութիւնը կ՚գոմէ։ Փառասէր չէ, ըսի, Ապշէն, բայց կ՚խնայ որ անունը լրագրի մէջ կարդացուի, հեղինակ չէ Ապշէն՝ բայց գլխին մէջ զանազան վէպերու և պատմութիւններու նիւթեր համբարած է և մինակ պատեհ առթի մը կ՚սպասէ որ զանոնք դուրս թափէ։

. . .

Ա՛յսպէս խօսելու առեն Շամիլ, երիտասարդ մ՚իր քովն Եկաւ, գլխարկը վար առաւ, և գրպանէն թուղթ մը հանելով անոր ականջին բան մը փսփսաց։

— Կ՚նայիս որ առենը չէ հիմակ, պատասխանեց Շամիլ։ Ուրիշ անգամ կրնանք կարդալ գործդ։

— Շնորհակալ եմ, ըսաւ երիտասարդն ու հեռացաւ։

— Ինչ կ՚նշանակէ այդ խորհրդաւոր տեսութիւնը, հարցուցի Շամիլին։

— Մի՛ հարցներ, ըսաւ նա։ Ականջիս խօսողը Փառնոլին է, նորելգրագէտ մ՚որ իր որ և է գրածը, մինչև անգամ հրատարակիր մը ամենրիմն՝ իրրև նշանաւոր հեղինակութիւն ստոր ստոր կարդալ և իր վրայ գովեստներ հրատարելու մեծ, անզուսպ տենչ մ՚ունի։ Ուստի Եկաւ աղաչեց որ իր գրած չորս տող սիրահարական ոտանաւորն ինձի կարդայ։ Խեղճ տղան, հիւանդութիւն մ՚է այս, բայց ինչ օգուտ, քոյժը գժուարին է։ Օրն ի բուն՝ ուր որ ծանօթ մը գտնէ, թէ շա-

կան, թէ տուն, թէ ցամաքի, թէ ծովու վրայ, թէ օդին մէջ՝ իսկոյն դրպանէն թուղթ մը կ'հանէ, և շատ անգամ առանց ազդարարութեան կ'սկսի կարդալ, և ինք դրածն՝ ինչ որ է՝ կ'վերլուծէ քու առջեդ, այսինքն կ'գովէ։ Եթէ լրագրի մը մէջ ծանուցում մը, ազդ մ'անգամ ունենայ կամ յօդուած մը՝ լրագիրը ձեռքը կ'առնու և մարդ կ'փնտռէ որ զայն կարդայ. ահ, որչափ երջանիկ կ'լինի, եթէ համբերատար ունկնդիր մը գտնէ։ Վերջապէս արգահատութեան արժանի էակ մ'է Փառնակ, որ իր ցաւալի վիճակը չզգար . . . ։

— Մէկդի կեցիր, ըսաւ յանկարծ Շամիլ, դիմացէն մեծ մարդ մը կ'գայ. պէտք չէ որ շուքին անգամ հանդիպիս։ Տես, ինչպէս կ'շփէ ճակատը, տես ինչ խրոխտ քալուած ունի։ Կարծես թէ ինքն է ծովու և ցամաքի տէրը, քթէն ընկնողը տաս կաղր կ'լինի։

— Ով է, ինչ մեծ գործեր ըրած է այս մարդը։

— Գիտեմ թէ Եսուին է, բայց Ճշմարիտն՝ ըրածը չգիտեմ։ Անգաղար կ'աւետեն, կ'հռչակեն որ ազգին օգտակար, նպաստաւոր մեծ խորհուրդներ երկնած է և կ'գործադրէ, սակայն իմ գիտցածս փոքրիկ սետրակի մը հեղինակն է, որով կ'աշխատի ապացուցանել թէ Եւրոպա տեսլի լուսաւորեալ է այժմ քան Ասիա, թէ հայոց յառաջդիմութեան միակ միջոց երաժշտութիւնն է։ Թէև շատ տարիներ Եւրոպա կեցեր է, սակայն շատ շատ երկու երեք հատ գաղափարներ ստացեր է, զոր իբրև անդիւտ բաներ անգադար մեզի կ'ծախէ։

Նոյն միջոցին Եսուկ մեր առջևէն անցաւ վեսորէն, գլուխն ողջունի ձևով օրեց և վազեց անցաւ. սակայն որչափ մեծ եղաւ զարմանքս երբ յանկարծ դառնալով մեր քովն եկաւ և Շամիլին ըսաւ.

— Հաւանեցար հիմնարկութիւնս. ես եմ անոր հիմնադիրը, թէև ետութիւն չունիմ, և ոչ համբաւ վաստակելու փափաք։

— Ի՞նչ հիմնարկութիւն։

— Վայ, միթէ չգիտես որ Ալէմ-Տաղը թատրոն մը բացի և գերասանները խումբ մը դրկեցի որ խաղան և գեղացին կրթեն։

— Իրաւ որ չէի գիտեր, ըսաւ Շամիլ, բայց աւելի լաւ կ'լինէր եթէ արօր, խոփ, բահ, բրիշ դրկէիր այն աղքատիկ գեղը։

— Ահա, դուք այդպէս էք, ըսաւ Եսուկ բարկութեամբ, ձեր չբրածը չէք ուզեր որ ուրիշ մ'ընելու նախապատուութիւնն ունենայ։

Ո՜հ, նախանձ, նախանձ, ինչպէս ամէն բան կ՚խանձես։ Ափսո՛ս, մեր կործանումը մեզ է։ Տաս տարի սիրելի ազգիս համար ընտիր ընտիր խորհուրդներ երկնեցի, և հիմակ որ զանոնք գործադրելու կ՚ելնեմ՝ իմ առջև առարկութիւններ կ՚հանեն, և հաստատի եմ որ ուրիշներ ալ պիտի գրգռէք որ այն հիմնած թատրոնս տապալեն։ Ափսո՛ս, ափսո՛ս . . .։

Հ

Կ. Պոլիս, 14 Սեպտեմբեր 1866։

Այսպէս վայելով՝ մեղնէ հեռացաւ Եսուկ։ Իսկ ես Շամիլի հետ մեր Ճանապարհը շարունակելով՝ նորէն մեծ սրահը դարձանք։ Լամպարներն ու մոմերն արդէն սկսեր էին հեղձնել մարել, մեղի պէս քանի մը յետամնաց հանդիսականներ ասդիս անդին կ՚թափառէին և սառներու մէջ կ՚երևէին։ Այն աղմկալի և շէն սրահը դրեթէ անայի և ախուր դարձեր էր։ Մարդկային կոհակներ գայլը էին թերևս վերսին չդառնալու համար այն վայրն՝ ուրկից հեռանալու փափաք ունէի։ Ըստի Շամիլի ըսի.

— Կարծեմ թէ իրարմէ բաժնուելու ժամը հասաւ։ Ախորժելի դիշեր մ՚անցուցի քու շնորհիդ, Շամիլ։ Շատ բան ուսայ այս տեղ, և շնորհակալ եմ։ Յուսամ որ դուրսը վերսին կ՚տեսնուինք իրարու հետ և մեր սկսած բարեկամական յարաբերութիւնը կ՚մշակենք։

— Անտարակոյս, պատասխանեց Շամիլ, միմակ իմ բաժնես իրրև պատգամ մ՚ընդունիր։ Կարելի է սխալած, կարելի է ծուռ դատողութիւններ ըրած լինիմ։ Ամէն բան չըսի, ամէն դիմակ անկարող եղայ Ճանչել։ Ինչ և է, պարահանդէսի մը մէջ՝ մարդ պարտաւոր չէ գիծ առ գիծ նկարել ամէն ինչ, նա մանաւանդ երբ նկարիչն ապիկար է ինձի պէս և առէջ երևակայութեան մէջ էակներ կ՚ստեղծէ։ Բայց կարեւոր բան մը կ՚մոռնաս, շարունակեց Շամիլ ժպտելով, միթէ Պարոյրն այս տեղ պիտի թողուս, դու որ քիչ մ՚առաջ հոգ կ՚ընէիր չերևելուն վրայ։

— Անոյշ եմ զինքը գանելու. թերևս տուն դարձած է իր Աշխէնը չգանելուն. և Իզար, քու շնորհալի քոյրդ՝ որ զիս քեզի ներկայացուց, անպիտանէն կ'սահէ դաղանիքն ու զիս կասկածի մէջ կ'թողու։

Դոյն պահուն խակ Իզար, Պարոյր և վհուկի դէմքով Հ—Ն—ը միասին գիմացէն բրթան և շիտակ մեզի եկան։ Պարոյր ուրախութենէ կ'թռէր և իր սովորական աշխուժութեամբ,

— Վերջապէս դասդ մատանիս և վհուկն, բատ նա, վհուկ և Աշխէն նոյն անձն է, զոր քեզի կ'ներկայեմ, Վրոյր, և չէ թէ Շամիլի՝ որուն սուրը դեռ աչքիս առջև կ'շողայ . . .։

Շամիլ սկսաւ ծիծաղիլ։

— Վերջապէս մեր դատը վեր հանեցիր, Պարոյր, բատ անոր։ Գիտեմ որ քաջ ես, և այս գիշեր ամենէն շահաւորը դուն ելար։ Իզարի հետ քեզի խաղ մը խաղալու որոշեցինք, և մեր նպատակին հասանք։

— Բայց ես դեռ մութ կ'տեսնեմ, ըսի Շամիլին, արդեօք ես ալ խաբուեր եմ։

— Ատ ես մութ է, պատասխանեց Շամիլ, չէ թէ զատ զատ այլ միասին Ճանբայ ելնենք և մեր տունն երթանք։ Բնթեկամ, Իզար, և ես եղբայրը քեզի օտար չենք։ Դու քու հայրենակիցներդ և ազգականներդ մոռցեր ես։ Աւելի երկար խօսելու տեղ չէ այս, երթանք։

Եւ 'ի միասին Շամիլի տունը գացինք։ Շամիլ բացատրեց ինձ ամէն բան։

Շամիլ տաս տարի է վեր հայրենիքէն ելեր Կ. Պոլիս կ'բնակէր ընտանեօք. իմ հօրեղբօրորդիս էր։ Իր քոյրն՝ Իզարը՝ կարգեր էր պարկեշտ, ունեւոր, գործունեայ անուն ունեցող անձի մը հետ, սակայն, ինչպէս որ արդէն պատմեցինք, դժբաղդ եղեր էր։ Աշխէն Իզարի մօրաքեռ աղջիկն էր, որ բարեկենդանի պատրուակաւ, բայց իրաք Պարոյրի սիրոյն համար մայրաքաղաքս եկեր էր, և ընտանեօք խորհուրդ են ըրեր մեզի տուտանուն նամակներ գրել, պարահանդէս հրաւիրել, և Պարոյրին զանազան խաղեր խաղալէն ետև յայտնուիլ, ինչպէս որ արդէն ըսինք։

Պարոյր շատթ մ'ետև մայրաքաղաքս մնալէն ետև Շամիլի և Աշխէնի հետ իր բնիկ երկիրն Զմիւռնիա դարձաւ։

— Պիտի մոռնամ, ըստ նա հրաժարական բարև տալու առեն, իմ ուղևորութեանս յիշատակները։ Շատ նեղութիւն և հոգ կրեցի իրա, սակայն բաղդը կ'ժպտի ինձ, և ամէն դժպատեհ արկածներս կը մոռցնէ, վասն զի Աշխէնի հետ կ'վերադառնամ և երջանիկ լինիլ կը յուսամ, առանց քեզ մոռնալու։

— Ա'փսոս էի ուղեկցիլ քեզի, պատասխանեցի Պարոյրին, բայց քանի որ այժմ դժուարին է, պիտի սփոփիմ ուր ուրեմն գրելով մեր տեսակցութեան յիշատակները։

Ահա ես խօսքս բռնեցի։

Բայց Պարոյր զիս մոռցաւ, վասն զի երջանիկ էր։

ՎԵՐՋ

ՆԻՒԹ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻՈՅՆ

Երես

Յառաջաբան 3

Ա. Դրեալս ազգասէրին կոչ — ճշմարիտը սէօզլէ, սուտը հրապարակել — տանի մը լրագիրներու գրուելու — ժիրարդին — ազգային պատերազմ օրէնք — Սարեֆան ոչ — ամէն պատերազմ օրէնք չունայ մ'ալ — ընտանեաց տէր դրեալս խոսքում 7

Բ. Երուսաղէմ, քաղաքի իմաստը, հրաշալեաց կիրառ — Եապէ պարիզ — Ս. Յակոբեանց վանքի վիճակ 10

Գ. Երուսաղէմի կանոնագիրն սուտ Պարիզի ընդարձակեան եղը — կիսուտ ընդհանուր ժողովին օգտակար նիւթը — անխարդախ երեսփոխաններ — կանոնագիրը չէին սուտ մինչ գիրք է — մեքան գրոյց տեղիներ — վանքն արմատն է — Սահակ եպիսկոպոսին ձեռքին հաւելուածը 13

Դ. Հրաշալեաց վարդապետը — քարոյն մ'ալ — իր նկարագիրը — հայկ 17

Ե. Նամակ մ'ամէն իմաստը չէին որ ամփոփել — Պօլսոյ և Զմիւռնիոյ, փարիզեցիներ — ցանկ անվճար իմաստոց 20

Զ. Անահիտ ժամանակ՝ որուն ալիքն է խմբագրութիւնը — գրիչ-մարդիկ և կինոներ-մարդիկ 23

Է. 1865 տարին — ո՛չ բարեկամ, ոչնչութիւն սքանչելի — Հայաստանի գնումները — հայն անոյշնայեան է տարաբերութիւն ասպարէզին մէջ — մեր ազգերն մինչ՝ ընկեր և հայերն մինչ — մը թե բան հայ — պարտեցեր Սահմանագրութիւն մը ունեն — քաղաքական ժողով — անհամար իրաւունքներ չգործադրելու համար — կրթական գաղը — կրթութիւն վիճակը — քաղաքացոց վիճակը — անպարբերութիւն — վա՛յ այն ազգին որ ազնիւր պէտք մ'ալ — գանձնական մարդիկ 26

Ը. Տիգրանեան Մկրտիչ վարդապետ, հրաշալեաց հրէշ — ամէն տեղ է և ոչ տեղ մը, գաղտնարար տան գաղտնագրեր — իր

պուլպուլները — թռչունները կ'ելնեն իր շնչէն 36

Թ. Աշխարհի գոյութիւն հիւր նոյնպէս — նորայն բարեւ — հին գրութիւն — մեկ յեղափոխ գալ մեռեալ առնուլ — սահմանագրական թագաւորութիւն մը ստեղծուիլ — անարգանքի խնդիր — իրաւունք տուող պարգեւաց — Սահմանագրութիւնն անարգելի բնութիւն 38

Ժ. Ինչո՞ւ է նամակը պարտական մերթեալ — նիւթեն է պարապիանապես ըն հարգ — գրուածներ պարտիրիլ — ցնորքներուն գոլ և գոլալիս — նոյն իսկ Աստուած գրուածներ ստիպեալ լինիլ — Օսմանեան պետութիւնը խորհեցաւ սարսուռներուն պարտական 43

ԺԱ. Տիւր բարեկենդան — անգիտակ գիտակներ — սիրուհի տիկնոջ մը — ընտրան թերուն — Վերոյ կ'հարցնուի — ազգակ գիտակ մը 47

ԺԲ. Ս. Երուսաղէմի կանանոցին տնուրենը — նորընտիր Պարտիարտը թագուհին առնել տալիս կ'ուզէ — Անուանական երեսփոխան 50

ԺԳ. Պոլսի հայն 'ի Գուզելիս , Զմիւռնի հայը հալածեալ ըսելքը — ժիրտ-խաններու պարհանգիսը — Ծուղիկը բանալը , ինչ՞ — արքայական յուղարկաւորին վրայ յիշատակ անյիշատակ խրթին 54

ԺԴ. Աշխարհի գոյութ — Ուսմունքներ նիգինակ , ազգասիրութեան , օրինաւորներ , գնդեսութիւն — իր հանգանակութիւնը , ազգարարութեան նիւ պարտ — Իմ՛ցը գրագրոյր բարեհան , նիւ արդարին իշխանութեան մը — կանոնակ հիւր կանոնակ . 57

ԺԵ. Մեր թռչունները անոյշ վիճաբանութենոնց կիսքրոնեն — վիճաբանութեան պէտ — հրաբարոյներու պարտաս — համարձակութեան 63

ԺԶ. Մասնի հանգանութիւնները — Փալաթիան թռչունին հրաբարման պարտաս ինչ է — Փաղ. թռչունը գերթագիր իշխանութեան է — համարձակութեան համար ընդարձակաց ցուցանին ինչ է 69

ԺԷ. Ծուղիկը թռչի՞ մ'է — ո՞վ արդեւնից գերանը հանելու — գրի-

ԼԸ. Չէի՞ մ՚է — Գրելու ժամ է — Ուզիմ կենալու լուսերն
՝ի վառիլ 79
ԺԸ. 1866 թուին — Ինչ է ժամանակը — Բանալու և անբան ալ-
խարհ — Հայոց բարեկամաց ալիարանը պատմիչ լուսոյ — Լին-
տոնի, Բալմորբրի, Նափոլիի, Պիսարի, Մէրիրինի, Ան-
թոնելլի, Վ. Ապտ իւլ Ազիզ, Էմիրիի և Սիս — ալ-
պատրիարք, անոր յոյն հայուն համար, իր պատանութիւնը,
լարաքուլուկ քու — յոյներ — Հայասանի հին և նոր
ընտանին — լալու ալարարութիւն 83
ԺԹ. Բարեկենդան — սմենալու երիտասարդ — քեռանի կին, թերու-
այր — կրակ ու բոց սիրահար — սմուրի — արքնարի —
հանճարն անմահութիւն — հայ երիտասարդներ — քնալու է ար
մարդ զբօսնու, բայց — 89
Ի. Տեղւոյն ընդարարութիւն — արևելքի մէջ ինչու կիրթա-
ծին — ծայրայեղութիւն — Իսլամի դէրը — գրքերէ
կին, անպարկեշտ սմուրի 92
ԻԱ. Կրճալու ժամանակ ինչ է և հիմա — իրարանցութիւն ինդիր
— Կարնոյ պէր Յովսէփ — վիճաբանի՞ որ տարի մը գլխարկ էր
— կրճալու ժամանակը գորգ կ՚ինարուի — պահպանիչ պար-
ժանքն երկնի — Ի . . . վարդապետին արարարը . . 95
ԻԲ. Գիպարութիւններու մէջ սարանոյի մարը — Վ. Ապտ-իւլ-Ա-
զիզ իսկի պատը՝ Վ. Նափոլիին — Թարգիս ալարարը
տան Եարպա — Պարսկան գրարութիւն — իսարար ու լայ,
լուսն և խարար 99
ԻԳ. Պարոյր, իր նիարարները — Վարոյր — Պարոյրին գլխին նիոյ
յիշողները Պոլսի մէջ — Բրիջաք հար — վարոյ կին — ամեն
մարդ տար կ՚ելլէ — Պարոյր՝ ի ընթերցում, արան անիները
կ՚պատանայ այլ նարը նուլեր — գարանարութիւնու հարը —
Պարոյր՝ ի Գարը գնալ 101
ԻԴ. Պարոյր հայկին ալարը — Գարը գնալի նիարարներ — Մարմա-
ր — Պիսանիկեան ալիարիս կ՚ուզէ հրամայել — Ցինի-
ի հրանանքանը — գարարներ Նափարի մը ապարերը . . 105
ԻԵ. Գարմաղ — գարարիկ մը Պարնապարի ժողովուրդին մէջ —

[illegible] — [illegible] — [illegible] — [illegible] — [illegible] — [illegible] 108

ԻԶ. Զվիրոյին շարժման մասին — Ոսկան — արքայի փափաքը — [illegible] — [illegible] . . 112

ԻԷ. Մարտի 20ի վարչական պատահարը — [illegible] հարկ է, [illegible] — պետրոսեան, [illegible] — Բրունվիլ նավապետ — Պիտերբուրգ — Արքիպատրիարք — Ս. Սարգիս պատրիարք — յոյսի շրջան — Ռուսի Սահմանադրութեան — պարտա՞ւ մ՚ էր էլ արքայը — պարտքերը նոյն, անյիշատակելի է — վերադարձան 114

ԻԸ. Հին օրինակներեն Առաջադրութիւն — պարքեր խոհանոց, պարքեր սովորութիւններ — ըստ Ուսուցչի, ինչպէս էին օրինակները մը 119

ԻԹ. Պարսկին գահանոյ — նշանի պարտք — [illegible] հայը — Պարսկահայ է և չէ 121

Լ. Գիտութեան տեսար — [illegible] Սահմանադրութեան մասին 123

ԼԱ. Աս Վարդապետ Գիտուն սարքադրութեամբ նամակ մը — սարքանոյ է ինչ հրեշտակ — [illegible] Սարգիսեան [illegible] ինչ է — [illegible] 126

ԼԲ. Մէրտոյ — Արքայի անձնը — [illegible] — Հայոց [illegible] — հայապատմիչներեն, Շարայ, Արայ, Շամիրամ — Աբգար, Անանուն, Սանատրուկ — Արքայեն Սինին [illegible] — Սահակ, Սարգիս, և այլն — [illegible] 129

ԼԳ. Պարսկ — հանելուկ — Զվիրի կիները — [illegible] — [illegible] — [illegible] — Ծիլն Աստուծոյ — հայասիրութեան [illegible] — [illegible] 132

ԼԴ. Լեզու — հայերն մրցած [illegible] — մրն ընտրել — [illegible] — [illegible] — [illegible] — [illegible] — [illegible] — [illegible] . . 136

Լ.Ե. Լեզու, ուրկն գրոց նաև գերութեան — բանն է սուրբ գրոց գրելոյն — ո՞ր գրոցն գրելն կ'ելն — գրաբար, ուղիղ հին լեզուին ուղիղն — ո՞ր պարբերութիւններ — ինչպէս գրելիներն լեն հարցեր 141
Լ.Զ. Սահմանագրութիւն պարբերոյ — ուղղութեան, գրոյ բնաւ — գրելոյ սահմանը — գրելի հարցս ապա՞ւ է 144
Լ.Է. Պարոյր — սոխուկ յոն մը — Պարոյր կ'երգէր — ինչ է երգը — հին երգ, նոր երգ — երգոյ ազգեցութիւնը. 146
Լ.Ը. Պարոյրին երգը — նիրհել գեղեցիկ է — Պարոյր օրին գիշերը թոյլ — Աղիին գիրացը կ'ելնի — անդուռնը կ'ելնէր — սոգանիներս բնակարանը — ետրս գեներս նկարագիրը — Պարոյր իբրեւ գաւառաց ազնվագոյն ինելու կ'գաղտագրուի 149
Լ.Թ. Պարոյր հնոցին կ'ուղղի — սարդերկրեայ բուսիկը — ազգատոհմերուն ծրյանը — նիրհող կոյս մը — իր երգը — Պարոյր ազգատոհմերուն սիրանոր — ոչ ինչ ազգատոհմերուն բան շահագրգիռները — հիմակ լոյսն մոր է — Լոս կոյսը — Պանդեր 153
Խ. Սահմանագրութիւնն կ'ելնէ — այլ՝ այլ կարգիներ անոր ձեռնարկուն վրայ — ինչպես մարդուն ընկաւ — ընդհանրներ — անդարբերութիւն — Ս. Սիլի խօսքը 157
ԽԱ. Սահմանագրութիւնն կ'ելնէ, և անոր սահմանները կ'ելնին ամբողջանալու — արհամարհ — պեսակ պեսակ կառավարութիւններ — հին և նոր սահմանագրոյն գրութիւնները . . 162
ԽԲ. Սահմանագրոյն սկզբունքն ազգի մը սեպհական արտաքնութիւնը չէ — Հայոցանց իշխանութիւնը — սահմանագրոյն գրութիւն 'ի Հայաստան — փոփոխութիւն վարչական և իրանական — բանութիւն օրէր — սիրոյ, պէս, եղբնոյ . 166
ԽԳ. Ազգ. Ս.Հ. ինչպիսի լինի — Տերութիւնը յետոյ չէր նայեր իր հրամանները — կառավարչին փոփոխութիւններուն կոյ բան մ'ար երթայ չփոխուիր — կառավարութիւն օրէնք 170
ԽԴ. Պարոյրին երգին շարունակութիւնը — գահիճներս ապեր մը — նահապետ մը — կոպիտ հարց — ազգատոհմերուն ընդհանրը — իրաւունքը խնդք մի — բարեխառնոր սարան 35

— Երևելի մարդուն հրեշը — Խարույկը — Սեղանավորութիւն — Երգչի մեջ հանգստութիւն 172
Խե. Գառն քաղաք — մրն է ամենին պատանելի վիճակը — պարարան — յուսահատութեան հառաչանք մը 178
Խզ. Պարոյր — յոյնաձոյ գալաք — Պարոյրի պատմութը — տանի մը ու ալեր արդ հարար կ'գայլին — վիպասան ուր — հաստատուն ուսանողութիւն — հիանալի պատարան — Պալքի նիստրութիւր — գիմաւորուն վայր — Բնահանգնոնի . . . 180
Խի. Աբեսալոն և արհամարհան տաղանդաւորութեան վիճակը — պարտութեան բնկնիր — Լուսաւորչաբերի արձարան — պարոնց — Աշխարհն ի կ. Պոլիս — Տիրոյրի գիրը 184
Խլ. Պարոյր պարահանգիս կ'երգեր — Հիստրիր — գիմաղիներու խաղերը — Տաճկի հանար մը — բաղդ կ'նայի — Վրայրի գաղանիքը — հարնին մեջ կ'խաղայ — կանաչ գիմակը — Շարքի նման գիմակ մը 187
Խթ. Պարոյրի արշաւանքը պարահանգիսին մեջ — կանաչ գիմակը Վրայրի օգնեցին կ'բառնի — կարծիր գիմակ կ'գտանայ — իր խոստովանութիւնը — նոյն ինքն Իշարն է — Վրայրին խնդիրը 191
Ծ. Շարել կ'ուզի Հիստրիրը պարահանգիսին մեջ գտնուած երեսի աղջիկները — գեղեցիկ մարդը — Սերմերնիկ է ըն Եղբար — իր գեղը, տիրոջը, խեղճը — իր գենը . . . 195
ԾԱ. Պրոպոս մը — ուղեցուցի խնդիրը — կնդրանի Սահմանագրութիւն — անյանկիր ուղղութիւն 198
ԾԲ. Ցեղափոխական ժամանակներ ինչ պէտ են — հիմակ գաղանն մէջ է — հայ պիտաններ — պիբլիսմա մը — Սպանուած է — Պրոպոսի հետ վիճը — ինչ մարդ է — ամեն իլիանութեան գրուած ապրելը — իր ուղեցուցը . . . 202
ԾԳ. Սահմանագրութեան ընելու հանգիսը — զինվորները — մի է — Սպանուածին արդին — հայր ու արդի ջան ու կապը — Հարուածին նիստրիրը 206
ԾԴ. Կարևոր մարդիկ — Մասայի, հայ բանաստեղծ — ապառարդեան հարցերի բերան — հանձարեալ ընելը — ինչ նայող բանանիս 209

ԾԵ. Ճշմարիտ քահանայութիւն — Թերութիւն երէցութեան — Հիմ է — Աստուծոյ կ'ընծայեցուցանէ զքեզ — Թուլանան է — Իր նկարագիրը 212
ԾԶ. Թուլանալ սուղերը — Հարիւրմեակները — արտաքին և ներքին պատիներ — սովին մէջը կ'ապրիլ — Դեռ մարդ մը — գործարանին անոր նկարագիրը պալատ 216
ԾԷ. Հայ մը — Նստրման — Հիմ է — Իր նկարագիրը . . . 219
ԾԸ. Նստրման — Արքա՞ — զբօսնան մը — երիտասարդի մը հետ խօսակցութիւն — Նստրմանի թուլութիւնը — Արքայի արտաքին տեսքը — Նստրմանի և Արքայի խօսակցութիւնը — սրէնանի մը — Սալոր — Գեղեցիկ մը 224
ԾԹ. Արքա՞ հիմ, Սալոր հիմ է — զատիկներ 230
Կ. Գեղեցիկը — Թուղթերի է — հայ լրտես մը — Իր նկարագիրը — պալատը — Շուքի և Գեղեցիկի վիճակը — դիմադրութիւն 234
ԿԱ. Շուքի — հիմ է — Իր նկարագիրը 238
ԿԲ. Եանիսոր — անուանի վերլուծիչ — Իր պատիները — սիրեցեալ 242
ԿԳ. Նորին Եանիսոր — երկու ծայրեր — Դէմ և դէպ — զատիկներ Նստրմանի հետ 245
ԿԴ. Նոր անդ մը — հիմ է — վարդապետ մը 247
ԿԵ. Նուագան — Եղանակ մարդ — գոս մը — սիրոյ յաւտրութիւն — Իսար — Շուքի սոր ի յեռին — Նուագանի յաղթանակը 249
ԿԶ. Զեռնանա է ըն ապինաբան — Լապանան — Իր նկարագիրը — հրեշ մը 257
ԿԷ. Եսա՞ — հիմ է — Դիմադրիր մը — գերեվարք 259
ԿԸ. Հարուստ Եղիազարեան — Սանել վարդապետ — Նոսան վարդապետ 261
ԿԹ. Աստուծոյն գի՞ պարանոցները — Ազգին — անարժէքը գրքեր — Փոնոյ — Նորել գրքեր — Եսայ — մեր մարդ — բարդն, Ալի՞-Տալը — Ափսոս. . . . 263
Հ. Մոռցը կ'մարի — Շուքի և Վրայ բանիսեանը կ'պարապուն — Անոնք նկարագիր պարծա՞ չէ — Պարոյր, Ճնայ, Ալիին և Իսար — Խալը — Անոնց իրարու ծանոթ են — հրաքեր 266